Աշխարհամարտի տարիներին իր կրած մարդկային և նյութական գոհողությունների դիմաց Միացյալ Նահանգների կառավարությունը «արդար վոխհատուցում» էր պահանջում Եռյակ համածայնության գծով իր դաշնակիցներից: Այդ վոխհատուցման գոտու մեջ ամերիկյան կառավարությունը մտցրել էր նաև Մերձավոր Արևելքը, որտեղ փոխհատուցողի դերում պետք է հանդես գար Օսմանյան կայսրությունը: ԱՄՆ-ի քաղաքական կյանքի աչքի ընկնող դեմքերը այդ առթիվ հանդես էին եկել մի շարք հայտարարություններով: Այսպես, պրեզիդենտ Վուդրո Վիլսո-

ցր հայտարարել էր. «թուրքերը, քրիստոնյաների այդ մարդասպանները, պետք է վռնդվեն Եվրոպայից»[4]: Իսկ հանրապետական կոնգրեսմեն, ԱՄՆ-ի նախկին պրեզիդենտ Թեոդոր Ռուզվելտը 1918թ. սեպտեմբերին 6-ին կոնգրեսում հայտարարել էր. «Օսմանյան կայսրությունը պետք է տապալվի. բոլոր սուբյեկտ ժողովուրդները պետք է ազատություն ստանան. թուրքը պետք է քշվի Եվրոպայից. Հայաստանը պետք է ազատ լինի»[5]:

1918թ. հունվարի 8-ին Վուդրո Վիլսոնը ոտերծով դիմեց կոնգրեսին, այդ ուսյտնի է Վիլսոնի «14 կետեր», կամ վիլսոնյան խաղաղության ծրագիր անունով: Այն հետպատերազմյան շրջանում նոր աշխարհակարգի ստեղծման վերաբերյալ մի ծավալուն ծրագիր էր: Ամերիկացի պատմաբան Ու.Վիլյամսի կարծիքով. «14 կետերը» նպատակ ունեին «վերակառուցել միջազգային հարաբերությունների համակարգը ամերիկյան սկզբունքներին համապատասխան և դրանով իսկ հնարավոր դարձնել Միացյալ նահանգների տիրապետող դերը աշխարհի քաղաքական ու տնտեսական կյանքում, չլիմելով մեծ պատերազմների»[6]:

Վիլսոնի ծրագրի 12-րդ կետը վերաբերում էր Թուրքիային. «Օսմանյան կայսրության թուրքական մասերը. իրենց ներկա կազմով, պետք է ստանան ապահովված և հաստատուն ինքնիշխանություն, սակայն ներկայիս թուրքերի իշխանության ներքո գտնվող մյուս ազգությունները պետք է ստանան իրենց գոյության աներկբա երաշխիք և ինքնուրույն զարգացման բացարձակորեն անխոչընդոտելի պայմաններ: Դարդանելը պետք է միջազգային երաշխիքների ներքո մշտապես բաց լինի նավերի ազատ անցման և բոլոր ազգերի առևտրի համար»[7]:

«Համրնդհանուր հաշտության մասին» կոնգրեսում արտասանած իր ճառում Վուդրո Վիլսոնը հատուկ անդրադարձավ նաև հայկական հարցին, այն դիտարկելով նոր աշխարհակարգի ստեղծման տեսանկյունից: Այդ հարցի արծարծումով պրեզիդենտը անշուշտ արտահայտում էր Ամերիկայում տոկա հասարակական կարծիքը: Սակայն կասկածից վեր է. որ քաղաքականության մեջ իդեոլոգիզմը չբացառող այդ գործիչը դրսևորում էր նաև իր սուբյեկտիվ, անձնական հակումները: Դա անթաքույց երևում է այդ հարցի վերաբերյալ նրա կատարած բոլոր հայտարարություններում: Այսպես, 1918թ. ապրիլի 22-ին նա ասել էր. «Դուք կարող եք հավատացած լինել, որ ես խոր հետաքրքրություն եմ տածում Հայաստանի ճակատագրի նկատմամբ»: Իսկ 1918թ. նոյեմբերի 18-ին պրեզիդենտը գրում էր պետական քարտուղար Ռոբերտ Լանսինգին. «Իմ հետաքրքրությունը հայերի նկատմամբ խորն է և իմ համակրանքը նրանց նկատմամբ իրոք մեծ է»[8]: Թերևս պրեզիդենտի այդ դիրքորոշման պատճառով 1918թ. սեպտեմբերի 21-ին Վիլսոնին ներկայացված ծավալուն հուշագրի մեջ շոշափվում էր նաև Հայաստանի ապագա ստատուսի վերաբերյալ հարցը: Ըստ պետական քարտուղարի առաջարկի, այն պետք

Թուրքիայի վարեմի «քարեկամ», իսկ պատերազմի ժամանակ ռխերիմ թշնամի դարձած Անգլիան և Իրանսիան: Սակայն միջազգային ասպարեզում ավելի ու ավելի ազդու ձևով էր հնչում նաև Ամերիկայի ձայնը, որը հանճինս իր «նոր առաքյալի»՝ պրեզիդենտ Վուդրո Վիլսոնի «14 կետերի» ավետում էր միջազգային հարաբերություններում նոր այդարացի կարգեր հաստատելու դարուշրջան բացվելու մասին: Քնական է, որ դա Թուրքիայում անխուսափելիորեն արթնացնելու էր ոչ միայն նոր հույսեր, այլև հաղթանակած պետությունների հակասությունների վրուս խաղալու թուրքական վարպետ դիվանագիտության համար բացելու էր վիթխարի հնարավորություններ որոշակի քաղաքական խնդիրներ լուծելու համար:

1919թ. հունվարի 18-ին վոխադարձ մրցակցության, բախումների, հակասական ծրագրերի և բացահայտ պայքարի պայմաններում բացվեց Փարիզի խաղաղության կոնֆերանսը: Նրա բացման պահին Եռյակ համաձայնության բոլոր երկրները արդեն հստակեցրել էին իրենց դիրքորոշումները «թուրքական ժառանգության» հարցի վերաբերյալ: Սակայն հասկանալի է, որ սպասվում էր համառ և անզիջում դիվանագիտական պայքար, քանի որ կողմերից ոչ մեկը չէր պատրաստվում առանց մարտի հրաժարվել իր հավակնություններից այն տարածքների նկատմամբ, որոնց տիրապետումը նրանց խոստանում էր կարևորագույն տնտեսական և ստրատեգիական օգուտներ:

Չնկանորեն խաղաղության պայմանագիրը կառուցվում էր Վիլսոնի «14 կետերի» հիմքի վրա: ԱՄՆ-ի պրեզիդենտը վստահ էր, որ իրեն հնարավորություն է տրված անմիջականորեն դիմելու ժողովուրդներին, նրանց կառավարությունների գլխի վրայով[10]: Սակայն Անգլիայի և Իրանսիայի վարչապետները ու արտաքին գործերի մինիստրները Վիլսոնի առաքելությանը նայում էին միանգամայն այլ աչքով: «Ծեր վագր» Ժորժ Կլեմանսոն, օրինակ, «14 կետերը» դիտում էր որպես քարոզչական կարգախոսներ, իսկ ԱՄՆ-ի պրեզիդենտի կողմից գովաբանվող «ժողովուրդների դաշինքը» նա համարում էր գրքային մարդու միամիտ երազանք: Նշելով, որ անձամբ ինքը քարձր է գնահատում Վիլսոնի գաղափարները, Կլեմանսոն անմիջապես ավելացնում էր, որ սակայն այդեն երկու հազար տարի առաջ «Քրիստոսը ևս քարոզում էր գաղափարներ, գործնականում ցույց չտալով, թե հնչպես կարելի է դրանք կյանքում իրագործել»:

1919թ. մարտի 20-ի գաղտնի նիստում Վիլսոնը առաջին անգամ տեղեկանում է Թուրքիայի քաժանման վերաբերյալ գաղտնի պայմանագրերի, մասնավորապես 1916թ. Սայքս – Պիկոյի պայմանագրի, գոյության մասին: «Սայքս – Պիկո,- հետագայում ոչ առանց սարկազմի նշել է նա,- դա հնչում է որպես թեյի վաճառքի նոր ընկերություն, գաղտնի դիվանագիտության տիպիկ օրինակ»: Դրսևորելով գաղտնի պայմանագ-

1919թ. մայիսի 21-ի «Երեքի» նիստում Լլոյդ Ջորջը առաջ քաշեց թուրքական հարցի կարգավորման նոր տարբերակ: Նա հայտնեց իր կատարյալ պատրաստակամությունը ոչ միայն հաստատելու իր նախկին որոշումը ԱՄՆ-ին փոխանցելու Կ.Պոլսի, նեղուցների և Հայաստանի (Կիլիկիայով հանդերձ) «լրիվ մանդատը». այլև լրացուցիչ կերպով ԱՄՆ-ին տրամադրել Անատոլիայի նկատմամբ, ինչպես նաև Ռուսահայաստանի, Ադրբեջանի և ողջ Կովկասի շրջանի «ժամանակավոր մանդատը», մինչև «ռուսական պրոբլեմի լուծումը»[17]: Այսպիսով, այդ «միասնական մանդատի» տարածքն ընդգրկում էր Կ.Պոլսից ու նեղուցների գոտուց մինչև Բաքու ընկած շրջանները. իր մեջ ընդգրկելով նաև ողջ «Թուրքահայաստանը, Ռուսահայաստանը և Պարսկահայաստանը»:

«Հայաստանի և Կ.Պոլսի նկատմամբ մանդատների հեռանկարը համապատասխանում էր նախագահ Վիլսոնի իդեալներին: Նրանց հարկ չկար համոզելու»,- գրում էր Լլոյդ Ջորջը[18]: Իսկապես Վիլսոնը հաճույքով համաձայնվեց վերցնել այդ տարածքների նկատմամբ մանդատի իրավունքը, սակայն զգուշորեն վերապահում անելով, որ այդ հարցը պետք է վերջին հաշվով լուծի ամերիկյան ժողովուրդը: Վիլսոնյան «Կ.-Պոլսից մինչև Կովկաս» միասնական մանդատի տեսակետը խարսխված էր այն հիմնարար գաղափարի վրա, որ տարածաշրջանում տարբեր ազգերի ու ժողովուրդների, հետևաբար տարբեր շահերի գոյությունը, պարտադիր պայման է առաջադրում, որ այդ վիթխարի տարածքը գտնվի մեկ ուժային կենտրոնի հովանավորության տակ, այլապես խաղաղությունը մշտապես կբացակայի աշխարհի այդ պայթյունավտանգ գոտուց: «Թուրքիայում մանդատների գծով միջազգային հանձնաժողովի» ամերիկացի անդամները Հենրի Քինգը և Չարլզ Կրեյնը այդ միտքը ծակերպում էին հետևյալ կերպ. «Փոքր Ասիայում տարբեր պետությունների պրոբլեմները խիստ փոխկապակցված են, որպեսզի հնարավոր լիներ հովանավորությունը հանձնարարել տարբեր մանդատներին, որոնք անխուսափելիորեն միմյանց հետ կմտնեն բախման մեջ»[19]:

Ամերիկացիները նաև այն կարծիքին էին, որ տնտեսական տեսակետից Փոքր Ասիան և Անդրկովկասը իրենցից ներկայացնում են մի անբաժանելի ամբողջություն, որը հոգատար մանդատների տեսակետից անկարելի է բաժանել»[20]: Գեներալ Հարբորդի առաքելության կարծիքով[21] միասնական մանդատի դեպքում «հայերը և թուրքերը կլինեին հարևաններ, երկու կամ երեք մանդատի դեպքում՝ հակառակորդներ»: Վերջապես Հարբորդի հանձնաժողովի կարծիքով, հայկական հարցը կարելի էր լուծել միայն այն դեպքում, երբ ողջ Փոքր Ասիան գտնվեր մեկ պետության՝ տվյալ դեպքում ԱՄՆ-ի հովանավորության տակ:

Անատոլիայի մանդատը ամերիկացիներին հանձնելու որոշման դեմ դժգոհության ձայներ հնչեցին միայն ֆրանսիական պատվիրակության կողմից: Կլեմանսոն դժգոհում էր, որ ինքը տվեց Մոսուլը, տվեց Պաղես-

տինը, ոչ մի կերպ չի կարողանում ստանալ Սիրիան, իսկ այժմ իրեն գրկում են նաև Անատոլիայից: Նա նույնիսկ համարձակվեց նկատել, որ «վտանգավոր է ԱՄՆ-ին մտցնել Փոքր Ասիա»: Ծաղրի ենթարկելով Վիլսոնի և Լլոյդ Ջորջի «ճամարտակություններ» «մահմեդական աշխարհի նշանակության մասին», Կլեմանսոն հայտարարեց, որ Կ.Պոլսից ու Հայաստանից բացի եթե Ամերիկային տրվի նաև նրանց միջև ընկած Անատոլիան. ապա դա աուսջ կբերի «պառակտում ողջ եվրոպական աշխարհում»[22]:

Իտալիայի վարչապետը առիթը չկորցրեց թունոտ սարկազմով դիմելու Վիլսոնին. «Երբ դուք դաղարեք նախագահ լինելուց, մենք ձեզանից կսպասենք Մեծ թուրք» (ժամանակին Եվրոպայում այդպես էին անվանում սուլթանին Վ.Բ.)[23]:

Դաղտնիք չէ, որ Մերձավոր Արևելքում անգլիական բաղձանքների գլխավոր օբյեկտը Կ.Պոլիսն էր և նեղուցները: Սակայն դրանց նկատմամբ մանդատը առաջարկելով ԱՄՆ-ին ըստ երևույթին Լոնդոնը ծրագրել էր բազմաքայլ մի կոմբինացիա: Ամենայն հավանականությամբ այդ առաջարկը կլսում էր փորձաքարի բնույթ: Միանգամայն հնարավոր է, որ Ամերիկայի մերժումից հետո նախատեսվում էր բարձրացնել անգլիական մանդատի վերաբերյալ հարցը:

Առհասարակ Փարիզի կոնֆերանսում առավել բարդ խնդիրը ոչ թե «օտտոմանյան ժառանգության» անգլիական կամ ֆրանսիական, այլ ամերիկյան բաժնի որոշումն էր: Նկատի ունենալով, որ այդ կոնֆերանսում ԱՄՆ-ը ակտիվ ու եռանդուն հետաքրքրություն էր դրսևորում մերձավորարեելյան գործերի նկատմամբ և սկսել էր հավակնել ղեկավար դերի «թուրքական խնդիրը» լուծելու հարցում, Անգլիան և Ֆրանսիան ոյիմում էին ճարպիկ դիվանագիտական խուսանավումների Վաշինգտոնի հետ բաց առճակատումից խուսափելու համար: Նրանք միանգամայն հանգիստ էին ընկսւում ամերիկյան այդ ակտիվությունը, որովհետև ամերիկացիները հենց սկզբից հավակնություններ չէին ներկայացնում Օսմանյան կայսրության արաբական տիրույթների նկատմամբ, իսկ ամենակարևորը նրանք Մերձավոր Արևելքում չունեին ոչ մի զինվոր, հետևաբար այդ տարածաշրջանում նրանց կողմից որևէ տարածքի ձեռք բերումը գործնականում հնարավոր չէր: Բացի այդ, նախագահ Վիլսոնի քաղաքական դիրքերը հենց բուն Միացյալ Նահանգներում այդ ժամանակ լրջորեն թուլացել էին. նրա երկրորդ նախագահական ժամկետը արդեն ավարտվկու վրա էր. 1918թ. միջանկյալ ընտրությունների հետևանքով նրա կողմից ղեկավարվող դեմոկրատական կուսակցությունը կոնգրեսի գոյգ պալատներում կորցրեց մեծամասնությունը. երկրում և Կապիտոլիում աճում էր ընդդիմությունը նրա արտաքին քաղաքականության նկատմամբ, որը հասարակական կարծիքի և կառավարող վեր-



28

րիկայի մանդատը որոշակի ժամկետով, տարածքի ամբողջականության, սահմանադրության ու արտաքին հարաբերությունների իրավունքի պահպանման պայմանով»:

Բեքիր Սամի բեյը հաղորդում էր նաև, որ այդ հարցի կապակցությամբ ինքը Սամսունում զրուցել է ամերիկյան ներկայացուցչի հետ, որը հանգամանորեն ծանոթացրել է իրեն ամերիկյան մանդատի պայմանների հետ, միաժամանակ առաջարկելով դիմել Վիլսոնին, ամերիկյան սենատին ու կոնգրեսին գործին ընթացք տալու համար:

Բեքիր Սամի բեյը այդ բոլորին ավելացնում էր, որ ամերիկյան ներկայացուցիչը խոստացել է ապահովել Սըվասի կոնգրեսի կողմից ընտրված պատվիրակության մեկնումը ԱՄՆ՝ ամերիկյան ռազմանավով[26]:

Իր պատասխան գաղտնագրված նամակում Մուստաֆա Քեմալը գրում էր, որ ողջ Սըվասի կոնգրեսի ընթացքում պաշտպանվում էր պետության ու ազգի կատարյալ անկախության պահպանման անհրաժեշտության մասին տեսակետը: Այդ իսկ պատճառով նպատակահարմար չի համարվում կոնգրեսի ուղղակի քննարկմանը դնել ամերիկյան մանդատի հարցը, առավել ևս, որ ինչպես գրում էր Մ. Քեմալը, «այդ մանդատի իմաստը մեզ համար ևս դեռևս լրիվ պարզ չէ»[27]:

Բեքիր Սամի բեյին ուղղված իր հաջորդ նամակում կասկածամիտ, զգույշ ու պրագմատիկ քեմալական շարժման պարագլուխը գրում էր. «թույլ տվեք ձեր կարծիքն իմանալ մեկ այլ հարցի առթիվ. ինչպիսի՞ք են այն օգուտները, որ իր համար սպասում է ամերիկյան կառավարությունը, պատրաստակամություն հայտնելով իր վրա վերցնել մանդատը, որը կարող է բազում դժվարություններ ստեղծել ԱՄՆ-ի համար: Ո՞րն է ամերիկացիների շահագրգռվածության պատճառը, առհասարակ ինչպիսի՞ք են նրանց մտադրությունները Թուրքիայի նկատմամբ[28]: Այնուհետև, ինչպիսի՞ք են լինելու Օսմանյան պետության սահմանները, արդյոք նրանք համընկնո՞ւմ են կայսրության մինչպատերազմական սահմանների հետ թե ոչ, ինչպիսի՞ տարաձայնություններ կան անգլիացիների ու ամերիկացիների միջև, արդյոք անգլիացիները ևս ձգտո՞ւմ են ստանալ Թուրքիայի մանդատը, ինչո՞ւ ամերիկացիները հրաժարվեցին Հայաստանի նկատմամբ մանդատից և այլն»:

Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում Խալիդե Էդիպի 1919թ. օգոստոսի 10-ի նամակը Մուստաֆա Քեմալին: Նա Ամերիկայի ժամանակավոր մանդատը Թուրքիայի համար համարում էր չարյաց փոքրագույնը հետևյալ պատճառներով. ամերիկյան մանդատը ի վիճակի է լուծելու թուրքական և նույնիսկ ողջ արևելյան հարցը: Այդ դեպքում հնարավոր կլինի պահպանել Թուրքիայի ծավալուն սահմանները, քանի որ ամերիկացիները ցանկանում են ձեռք բերել Թուրքիայի նկատմամբ «միասնական ու ընդհանուր մանդատը»: «Պաշտոնական Ամերիկան չի համակրում մեր տարածքի վրա Հայաստան ստեղծելու մտադրությա-

ներ»: Իհարկե. մանդատը հարված կհասցնի թուրքերի ազգային ինքնասիրությանը: Սակայն դա այնքան էլ վտանգավոր չէ, քանի որ «Ամերիկայի կառավարական մեխանիզմը չի հանդիսանում ոչ կղերական և ոչ էլ ազգայնական»[29]:

Խալիդե Էդիպը զայրագնում էր նաև այն միտքը, որ անհրաժեշտ է միջոցներ գտնել վերացնելու համար Թուրքիայի ազգային փոքրամասնությունների կողմից օտարերկրյա պետությունների միջոցով Թուրքիային սպառնալու հնարավորությունը: Նա գտնում էր, որ ինչպիսի պայմաններ էլ որ լինեն, քրիստոնյա փոքրամասնությունները մնալու են Թուրքիայի սահմանների մեջ: Եվ հենվելով եվրոպական որևէ պետության վրա, նրանք անընդհատ բարձրացնելու են հուգումներ, առաջ բերելով օտարերկրյա միջամտություն, որի հետևանքով Թուրքիան ամեն տարի կորցնելու է իր անկախության մի մասը հօգուտ այդ փոքրամասնությունների: Քանի որ իր սահմաններում մասնատված ու թուլացած Թուրքիան ի վիճակի չի լինելու իրականացնել վերոհիշյալ բարդ խնդիրը, ուստի ելքը, ըստ նամակի հեղինակի, մանդատն ընդունելն է: Ըստ երևույթին Խալիդե Էդիպը ենթադրում էր, որ մանդատեր Ամերիկան ոչ մի պայմանով թույլ չէր տուս, որ եվրոպական որևէ պետություն միջամտի իր հովանավորության տակ գտնվող երկրի ներքին գործերին: «Մենք ոչ մի տեղ չենք կարող գտնել այնպիսի հենարան, ինչպես Ամերիկան է, որն ավելի ուժեղ է, քան Եվրոպան»,- գրում էր նա: «Ամերիկան,- շարունակում էր Խալիդե Էդիպը,- մյակ երկիրն է, որը հաշվի է նստում ժողովուրդների հոգեբանության հետ և ունակ է ստեղծելու ժողովրդավարական վարչակարգ... ուստի նա մեզ համար ևս, անկասկած, համարվում է առավել ընդունելի օտարերկրյա պետությունը»: Միայն Ամերիկան, ըստ Խալիդե Էդիպի, ի վիճակի կլինի 20 տարվա ընթացքում ստեղծելու նոր, մտավոր ու տնտեսական առումով անկախ Թուրքիա[30]: «Որպեսզի մենք դուրս գանք ներկա ստեղծված վիճակից,- շարունակում էր նա,- և արագ կազմակերպենք մեր պաշտպանությունը ընդդեմ ամբողջ աշխարհի, անկասկած մեզ անհրաժեշտ է այն պետության աջակցությունը, որը դրա համար ունի բավարար չափով ուժ: Եթե մենք կարողանայինք այդ նպատակով օգտագործել Ամերիկային, նրան գցելով մեր առջևը որպես մանդատեր, որը վճասազերծում է իմպերիալիստական Եվրոպայի կողմից մեզ սպառնացող անհամար վտանգները, դրանով իսկ մենք կկարողանայինք լուծել քուրքական և նույնիսկ արևելյան հարցը»:

«Ամերիկան ընդհանրապես հակված չէ Արևելքում ընդունել մանդատ,- ենթադրում էր նամսկի հեղինակը,- կամ իրեն ինչ որ բանով կապել Եվրոպայում: Սակայն ամերիկացիները ձգտում են իրենց ողջ համակարգին ու իդեալներին համապատասխան, լինելու ավելի բարձր ազգ, քան եվրոպական ժողովուրդները: Այդ ձգտումը թելադրված է նրանց ինքնասիրությամբ: Եթե որևիցէ երկիր կստարյալ անկեղծութ-

յուն չունեն, ապա կմատնանշվի, որ եթե նրանք հույս ունեն կայսրության որևէ շրջանի նկատմամբ ինքնիշխանություն կիրառել, ապա պետք է ցույց տան, որ ոչ միայն կամենում են, այլև, ավելին, ի վիճակի են հետ պահել իրենց ազգակիցներին և կրոնակիցներին գազանություններ գործելուց: Հետևաբար, ոչ մի ներողություն չի ընդունվի թուրքերից, որ ի վիճակի չեն եղել կանխել ոճիրները հայերի նկատմամբ»:

Մեծ վեզիր Դամադ Ֆերիդ փաշան պատասխանում է, որ «եթե ինքը չի կարող զորք ուղարկել վտանգված վայրերը, ապա ինչպե՞ս կարող է պատասխանատու լինել ըստ պրեզիդենտ Վիլսոնի նոտայի պայմանների», ակնարկելով, որ ռեալ իշխանությունը գտնվում է քեմալականների և ոչ թե Ստամբուլի կառավարության ձեռքերում: Իր այդ ասածը հաստատելու համար, մեծ վեզիրը ամերիկյան ծովակալ Ուեբբին կարդում է վիլսոնյական տոնով գրված մի նամակ, որն իրեն էր ուղղել Էրզրումի վալիի պաշտոնակատարը: Նա գրում էր, որ ժողովրդի (իմա՝ քեմալականների) ձայնը տարբեր է կառավարության ձայնից[34]:

Ամերիկյան սենատոր Լիիլյամսը 1919թ. սեպտեմբերի 9-ին սենատին առաջարկեց մի միացյալ բանաձև, որը նպատակ էր հետապնդում լիազորել կառավարությանը ամերիկյան զորքերին օգտագործելու Հայաստանում: Այդ առաջադրությունը նաև մի փորձ էր իմանալու ամերիկյան կարծիքը Մերձավոր Արևելքում մանդատ ստանալու վերաբերյալ: Միացյալ բանաձևը ուներ հետևյալ բովանդակությունը. «Ընդքանուր որ քրիստոնական զորքերի հեռուցումը Կովկասից և Հայաստանից հայ ժողովրդին աննօգնական կթողնի քրդերի ու թուրքերի հարձակումների դեմ հանդիման, և որքանով որ ամերիկյան ժողովուրդը խորապես և անկեղծորեն համակրում է հայ ժողովրդի ազատության, խաղաղության և առաջադիմության բաղձանքներին, այդ իսկ պատճառով Ամերիկայի Միացյալ Նահանգների կոնգրեսի սենատի և ներկայացուցիչների պալատի կողմից պետք է որոշվի, որ Միացյալ Նահանգների պրեզիդենտս այսու լիազորվում է օգտագործելու Միացյալ Նահանգների այնպիսի ցամաքային ու ծովային ուժեր, որոնք, նրա կարծիքով, նպատակահարմար կլինեն Հայաստանում խաղաղություն և անդորրություն պահպանելու համար, մինչև որ այդ երկրի գործերի լուծումն ավարտվի ազգերի միջև կնքված պայմանագրով»:

Այս միջոցառման նկատմամբ ԱՄՆ-ում գործող ընդդիմությունն այն միտքը գարգացրեց, որ Միացյալ Նահանգները քնավ պատերազմի մեջ չեն եղել Թուրքիայի հետ և հետևաբար նրա դեմ չի կարելի օգտագործել զորքեր: Առհասարակ ընդդիմությունը այս հարցի շուրջը ուժեղ աղմուկ բարձրացրեց[35]:

Նկատի ունենալով, որ Սըվասը դարձել էր քեմալական շարժման կարևոր կենտրոններից մեկը, գեներալ Հարբորդը իր հանձնաժողովի հետ այցելեց նաև այդ քաղաքը և շփումների մեջ մտավ ազգայնական-

ների հետ: Այդ առթիվ Կաստամունիի վալի Ֆերիդ բեյը և նույն քաղաքի պարետ գնդապետ Օսմանը հաղորդում էին Մուստաֆա Քեմալին, որ Սըվասից ամերիկյան գեներալը հարցրել է Ստամբուլ, որ Թուրքիայում ազգային շարժման առաջացումը ունի օբյեկտիվ պատճառներ և հանդիսանում է միանգամայն օրինական:

Նրա այդ կարծիքը ոգևորել էր նամակի հեղինակներին, որոնք գտնում էին, որ քեմալականները հենվում են ռեալ ուժի վրա և տերությունների ոչինչ չի մնում, եթե ոչ ընդունել իրենց «արդարացի պահանջները»: Սակայն վախենալով, որ «իմպերիալիստների» հետ շփումները կարող է վարկաբեկել քեմալական շարժումը, Ֆերիդ բեյը և Օսմանը թախանձագին խնդրում էին իրենց գործընկերներից, որ հանուն ազգային շարժման անվտանգության չքողազերծեն «մեր գաղտնի շփումների հարցը ինչպես ամերիկացիների, այնպես էլ անգլիացիների հետ»[36]:

Ամերիկյան մանդատի հարցը Սըվասի կոնգրեսում քննության ենթարկվեց նրա երկու նիստերում (1919թ. սեպտեմբերի 8-ին և 9-ին): Այդ նիստերին մասնակցում էր նաև Կ.Պոլսից եկած Կրեյնի ներկայացուցիչ ոմն Էդգար Լուիս Բրաուն, որն իրեն անվանում էր լրագրող, բայց իրականում հետախույզ էր: Մուստաֆա Քեմալը նրա մասին արտահայտվել է հետևյալ կերպ. «դա մի երիտասարդ էր, մտավոր առումով չափազանց զարգացած և զգայուն զրուցակից»: Քեմալը հայտնում էր նաև, որ Բրաունը հանդես էր գալիս իբրև մասնավոր անձ: Իսկ ամենատարօրինակը այն էր, որ այդ լրագրողը, ինչպես նշում էր Մուստաֆա Քեմալը, «ոչ միայն չի ասել, որ Ամերիկան կհամաձայնվի ընդունել (Թուրքիայի Վ.Բ.) մանդատը, այլև հայտարարեց, որ ամենայն հավանականությամբ, նա կհրաժարվի ընդունելու այն»: Դժվար չէ կռահել, որ միստեր Բրաունը պատկանում էր պրեզիդենտ Վիլսոնի քաղաքականության նկատմամբ ընդդիմության շարքերում:

Սըվասի կոնգրեսում մանդատի հարցի շուրջը քեմալականների միջև բորբոքվեց սուր պայքար: Պատգամավորների մի մասը հանդես էր գալիս հօգուտ ամերիկյան մանդատն ընդունելու: Եղել են նաև հակառակորդներ: Քննարկումը հիմնականում գնացել է այն հարցի շուրջը, թե Թուրքիան պետք է մնա որպես անկախ պետություն, թե՞ համաձայնվի մանդատի հետ: Մի շարք պատգամավորներ, օրինակ, Ռեֆեթ բեյը, Կարա Վասիֆ բեյը և այլն հայտնում են այն տեսակետը, որ մանդատ հասկացությունը և անկախությունը չեն հանդիսանում իրար հակասող երևույթներ: «Մենք կանգնած ենք ամերիկյան երաշխիքները ընդունելու անհրաժեշտության, այսինքն մեր նկատմամբ մանդատ հաստատվելու պարտադրանքի առջև,- հայտարարում է Ռեֆեթ բեյը: Չէ՞ որ հնարավոր չէ, որ XX դարում մի ժողովուրդ, որն ունի հինգ հարյուր միլիոն լիրայի հասնող պարտք, քայքայված և ոչ մեծ արտադրողականությամբ հողեր և մաքսիմում տասից մինչև տասնհինգ միլիոն պետական եկամուտներ,

կսրողանա գոյություն պահպանել առանց օտարերկրյա օգնության»: Վերջում ճառախոսը եզրակացնում էր, որ նման պայմաններում, առանց օտարերկրյա օգնության, Թուրքիան իրեն չի կարող պաշտպանել նաև հունական ագրեսիայից[37]:

Սակայն Սըվասի կոնգրեսում ի վերջո հաղթանակը Թուրքիայի կատարյալ անկախության կողմնակիցների կողմն էր: Թերևս այդ վճռի ընդունման համար կարևոր դեր խաղաց Մուստաֆա Քեմալի հետևյալ հայտնի դրույթը. «ազգային կարիքներին չհամապատասխանող որոշումները ոչ մի դեպքում չեն կարող դիտվել որպես ազգի համար պարտադիր»:

1919թ. սեպտեմբերի 11-ին Սըվասի կոնգրեսն ընդունեց մանիֆեստ, որտեղ ասվում էր. «Օսմանյան կայսրության տարածքը, որի բնակչությունը ճնշող մեծամասնությամբ կազմում են մահմեդականները... հանդիսանում է մի միասնական ամբողջություն. նրա ոչ մի մասը չի կարող օտարվել Օսմանյան կայսրությունից և ոչ մի պատրվակով ու ոչ մի ձևով»[38]:

Սա նշանակում էր, որ մերժվում է ամերիկյան մանդատի գաղափարը: Սակայն Սըվասի կոնգրեսի մանիֆեստում, ինչպես նաև Էրզրումի կոնգրեսի եզրափակիչ բանաձևում, այնուամենայնիվ տեղ էր գտնում «անշահագրգիռ պետությունների կողմից Թուրքիային օգնություն ցույց տալու ցանկալիության» մասին դրույթը: Ավելին, Մուստաֆա Քեմալը Սըվասի կոնգրեսի անունից ԱՄՆ-ի կառավարությանն ու սենատին ուղեց մի հուշագիր ու նամակ, որտեղ հույս էր հայտնվում, որ Ամերիկան բարյացակամ վերաբերմունք կդրսևորի «թուրքական ազգային գործի» նկատմամբ: Ընդորում, այդ փաստաթղթերում հստակ շեշտվում էր, որ թուրքական շարժումը բնավ բոլշևիկյան բնույթ չունի[39]: Միաժամանակ կոնգրեսի մասնակիցների կողմից խնդրվում էր Թուրքիա ուղարկել ամերիկյան սենատի անդամներից կազմված մի հանձնաժողով, որպեսզի «շահագրգռված ազգի պարզ հայացքով վերջինս ուսումնասիրի Թուրքիայում գոյություն ունեցող իրական վիճակը և թույլ չտրվի, որ խաղաղության պայմանագրի որոշմամբ Օսմանյան կայսրության տարածքները տրվեն ուրիշներին»[40]: Այսպիսով մանդատի վերաբերյալ և ոչ մի խոսք: Ըստ էության մանդատի դեմ արտահայտվեցին ոչ միայն Էրզրումի և Սըվասի կոնգրեսները, այլև քեմալական նորաստեղծ բանակի հրամանատարությունը: Ի պատասխան Քեմալի կողմից ուղարկված հեռագրական հարցումների, հրամանատարների մեծամասնությունը դեմ արտահայտվեց որևէ երկրի մանդատ ընդունելուն[41]:

1919թ. հոկտեմբերի երկրորդ կեսին Ամասիայում տեղի ունեցավ Մուստաֆա Քեմալի հանդիպումը Կ.Պոլսի սուլթանական կառավարության ներկայացուցչի հետ: Քննարկման նյութը առաջիկայում խորհրդարանի գումարման հարցն էր: Կողմերը ամերիկյան մանդատին վերաբե-

քալ խնդրի կապակցությամբ իրենց վերաբերմունքը ձևակերպեցին այն առումով, որ դա մի միջոց է Թուրքիայի տեխնիկական, արդյունաբերական և տնտեսական կարիքները բավարարելու համար, սակայն պայմանով, որ ամբողջապես պահպանվի Թուրքիայի անկախությունը՝ համաձայն Սըվասի կոնգրեսի մանիֆեստի 7-րդ հոդվածի[42]:

Սա փաստորեն նշանակում էր, որ քեմալական իշխանությունները փակում էին Կ.Պոլսի, նեղուցների և Անատոլիայի նկատմամբ ամերիկյան մանդատի վերաբերյալ հարցը: Միջազգային ատյանների օրակարգում, սակայն, դեռ շարունակում էր մնալ Հայաստանի մանդատի հարցը: 1919թ. նոյեմբերի 19-ին ԱՄՆ-ի սենատ մտցված առաջարկը Վերսալի պայմանագիրը հաստատելու վերաբերյալ չապահովեց անհրաժեշտ քանակությամբ ձայներ[41]: Հետևաբար օդից կախված էր մնում նաև Հայաստանի նկատմամբ մանդատի հարցը: Գնալով ամերիկյան մամուլում և ընդդիմության շրջանակներում ավելի ու ավելի բացահայտ կերպով էին հնչում ձայներ այն մասին, որ անիմաստ է Հայաստանի համար ծախսել դրամ և կատարել զոհողություններ: Ի վերջո 1920թ. մայիսի 30-ին Սիացյալ Նահանգների սենատը մերժեց վերցնել Հայաստանի մանդատը:

VAHAN BAYBURDYAN

ON THE TURKISH-AMERICAN RELATIONSHIP IN RESPECT OF DEVELOPMENTS AROUND THE ARMENIAN QUESTION DURING THE KEMALIST MOVEMENT

The article examines the Turkish-American relationship in respect of developments around the Armenian Question during the Kemalian Movement in Turkey. It points out that as early as in the spring of 1917, the US, after it became engaged in the World War, started to display much of an interest in the "Near East" problems, including, among others, the Armenian Question. US President Woodrow Wilson, when he published his famous "14 Points" also known as the Wilson Peace Plan, referred also to the Armenian Question, which he viewed from a standpoint of creating the new world order.

The Armenian Question appeared in the agenda of the international conference summoned in Paris in 1919, but the Turkish delegation led by Senior Vizier Damad Ferid Pasha tried to jeopardize any attempt at positive settlement of the Question. In effect, the Sultan's Government in Istanbul and the Kemalians were in perfect agreement as to their strive to jeopardize the Question and, despite their fundamental discrepancies on some other problems, they stood on a strong joint platform in respect of the Armenian Question.

The Article provides a comprehensive analysis of the American mandate over Armenia, which was most warmly advocated by President Woodrow Wilson. The Article further sheds some light on the so-called "joint mandate" of the US over

Turkey. To this end, it is emphasized that the political forces active in Turkey's political arena had absolutely different positions on the idea of a "joint mandate".

During the congresses of Erzurum and Sivas held by the Kemalians in 1919, there were active discussions of the Turkish-American relationship, including the issue of a joint American mandate over Turkey. The Article highlights in this respect that the Kemalians did not have a common position on the said issue. The leader of Turkey's mille-nationalists Mustafa Kemal advocated complete independence of Turkey, which by default implied rejection of the mandate idea.

The National Vow taken by the Kemalians exhaustively rejected the application concerning an American mandate. This document, which was an extensive plan of the Kemalians, declared that Turkey's territory was a single whole, and that any part of it could not be detached from it in either way regardless of cause.

Thus, the National Vow finally declined the possibility of an American mandate over Armenia and, more broadly, one over Turkey.

ՕԱՆՈՒԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Шпилькова В.И., Империалистическая политика США в отношении Турции (1914-1920гг.), М., 1960, с. 36-38.
2. Бекер Р., Вудро Вильсон, Мировая война. Версальский мир. М.-Пг., 1923, с.96.
3. "Papers Relating to the Foreign Relations of the United States. 1919. The Paris Peace Conference", Vol. I, Washington, 1942, p.33.
4. Pernot M., La question turque, P., 1923, s.263.
5. Ллойд Джордж, Правда о мирных договорах, т. 2, М., 1957, с. 208-209.
6. Williams W.A. Some Presidents. From Wilson to Nixon, New York, 1972, p. 31.
7. Ключников Ю.В., Сабанин А.В., Международная политика новейшего времени в договорах, нотах и декларациях, т. 2, От империалистической войны до снятия блокады с Советской России, М., 1926, с. 109.
8. "Papers Relating ...", Vol. II, Washington, 1942, p.272.
9. Lansing R. The Peace Negotiations. A Personal Narrative, L., 1927, p. 171.
10. Lamont T., Across World Frontiers, New York, 1950, p. 112.
11. Мустафа Кемаль, Путь новой Турции, 1919-1927, т.1, М., 1929, с. 29-30.
12. Reponce du président de la Conférence de la Paix au Memorandum présente par la délegation Ottomane. Paris, 25 juin, 1919, s. 1-4.
13. "Papers Relating...", Vol. VI, p.691-694.
14. Նույն տեղում, էջ 711:
15. Նույն տեղում, էջ 577-580:
16. Мустафа Кемаль, Путь новой Турции, т. I, с. 291.
17. "Papers Relating...", Vol. V, p.707-711.
18. Ллойд Джордж, Правда о мирных..., т. 2, с. 393.
19. The King – Crane Report on the Near East. A Superessed official Document of the US Government. Editor and Publisher. LV, • 27 (December 2, 1922).
20. Խատիսյան Ա., Հայաստանի հանրապետության ծագումն ու զարգացումը, Բեյրութ, 1968թ. էջ 190-191:

21. Sti'u Report of the Armenian Military Mission to Armenia. May. Gen. James Harbord US Army. Washington, 1919.
22. "Papers Relating...", Vol. V. p.711.
23. Riddel G.A.. Lord Riddel's Intimate Diary of the Peace Conference and After. 1918-1923, L., 1933. p. 19.
24. Мустафа Кемаль, Путь новой Турции, т. II, М., 1932, с. 366.
25. Мустафа Кемаль, Путь новой Турции, т. I, с. 382.
26. Նույն տեղում, էջ 87-88:
27. Նույն տեղում, էջ 89-90:
28. Նույն տեղում, էջ 92:
29. Sti'u Миллер А.Ф., Турция. Актуальные проблемы новой и новейшей истории, М., 1983, с.166.
30. Мустафа Кемаль, Путь новой Турции, т. I, с. 93-95.
31. Նույն տեղում:
32. Նույն տեղում, էջ 97-100:
33. Миллер А.Ф., նշվ. աշխ., էջ 166: Sti'u նաև Мустафа Кемаль, Путь новой Турции, т. I, с.103.
34. "Documents on the British Foreign Policy. 1919-1939. First Serics. 1919", Vol. IV, L., 1952, p.550-552.
35. Նույն տեղում, էջ 566-567:
36. Мустафа Кемаль, Путь новой Турции, т. I, с. 303.
37. Նույն տեղում, էջ 106-111:
38. Askun V.E., Sivas Kongresi, Istanbul, 1963, s. 127.
39. Мустафа Кемаль, Путь новой Турции, т. I, с. 419.
40. "Papers Relating...", Vol. II, p.875-888.
41. Мустафа Кемаль, Путь новой Турции, т. 2, с. 223, 229-230.
42. Նույն տեղում, էջ 56-57:
43. "Papers Relating...", Vol. XIII, p. 9.

ՍՈՒՐԵՆ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ԻՍԼԱՄԻ ՀԱՄԱՏԵՂԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ
(Թուրքիայի մոդելը)

Այդի արևմտյան քաղաքական և արևելագիտական շրջանակներում ինչպես նաև Մերձավոր և Միջին Արևելքի երկրներում առավել հաճախ է սկսել քննարկվել այն հարցը, թե համատեղելի են արդյո՞ք իսլամական հավատի սկզբունքներն ու արժեքները արևմտյան քաղաքակրթության արժեքային համակարգի հետ՝ հաշվի առնելով այդ քաղաքակրթության ակտիվ ներթափանցումը մերձավոր- և միջինարևելյան տարածաշրջան և նրա ընդգրկումը Արևմուտքի կենսական շահերի գոտու մեջ:

Վերոհիշյալ շրջանակների կողմից առաջ է քաշվում այն դրույթը, որ, ելնելով սեփական անվտանգության և զարգացման հեռանկարային ապահովման նպատակներից, ԱՄՆ-ն և Եվրոպան պետք է իրականացնեն Մերձավոր և Միջին Արևելքում, ինչպես նաև Եվրասիայում արմատական փոփոխություններ՝ նպաստելով «վատ» (ավտորիտար-ֆեոդալական բնույթի) վարչակարգերի վերացմանը և սկսելով վերոնշյալ տարածաշրջաններում աշխարհաքաղաքական տեղաշարժերի և ժողովրդավարական բարեփոխումների իրականացման փուլը: Այս նախագիծը այսօր հայտնի է «Մեծ Մերձավոր Արևելք»[1] անվան տակ:

Սակայն այս առումով Արևմուտքը կանգնած է մի կարևոր հարցին պատասխանելու անհրաժեշտության առջև. «Ժողովրդավարության ո՞ր մոդելը կարող է առավել հաջողակ լինել մահմեդական Արևելքում»: Եվ ամենևին էլ պարտադիր չէ, որ դա լինի եվրոպական կամ անգլոսաքսոնական ժողովրդավարության տեսակը: Այս համատեքստում էլ հաճախ որպես մահմեդական երկրում որպես ժողովրդավարության կայացման նմուշ առաջ է քաշվում ժամանակակից Թուրքիայի օրինակը:

Գաղտնիք չէ, որ արդեն հիսուն տարուց ավելի Թուրքիան ծառայում է Արևմուտքի (հատկապես՝ ԱՄՆ-ի) համար որպես «հաջողության պատմություն» (“success story”), որով նա կարող է հիմնավորել մահմեդական քաղաքակրթության հետ արդյունավետ գործընթացների համատեղելիության խնդիրը: Բացի այդ, Թուրքիան հանդիսանում է

միակ մահմեդական երկիրը. որը Արևմուտքի ռազմավարական ղաշնակիցը է ոչ միայն երկկողմ հարաբերությունների. այլև պաշտոնական ինստիտուցիոնալ շրջանակներում՝ ՆԱՏՕ-ի անդամի և Եվրամիության անդամության թեկնածուի կարգավիճակով: Մյուս կողմից, Թուրքիայի հետագա կարգավիճակը վառուց արդեն լուրջ պրոբլեմ է հանդիսանում ինչպես Եվրոպայի, այնպես էլ ԱՄՆ-ի համար: Նույն Միացյալ Նահանգների համար Թուրքիան ամբողջ «սառը պատերազմի» ընթացքում ունեցել է ռազմավարական նշանակություն՝ տեղակայված լինելով երեք տարածաշրջանների խաչաձևման կետում՝ Բալկաններ. նախկին Խորհրդային Միություն և Մերձավոր Արևելք, և այդ դիրքը դեռ շարունակելու է լուրջ ազդեցություն ունենալ թուրք-ամերիկյան հարաբերությունների վրա: Այս համատեքստում հատկանշական է ամերիկյան տեսակետը Թուրքիայի վերաբերյալ, որը, 2003թ. նոյեմբերյին Ստամբուլում տեղի ունեցած ահաբեկչական գործողություններին արձագանքելով, արտահայտեց «Նյու Յորք Թայմս» պարբերականը. «Ժողովրդավարությունը Թուրքիայում՝ ամբողջ Մերձավոր Արևելքի ժողովրդավարացման հիմքն է», և Թուրքիան չափազանց կարևոր է քեոկրաասական և կլանային Մերձավոր Արևելքում արևմտյան արժեքների տարածման առումով[2]:

Իսկ այն որոշումը. որը կկայացնի Եվրոպական Միությունը Իրեն Թուրքիայի անդամակցության վերաբերյալ, հետևանքներ է ունենալու թե՛ Թուրքիայի ներքին զարգացման, թե՛ Արևելյան Միջերկրածովյան ավազանում և Մերձավոր Արևելքում, ինչպես նաև Հարավային Կովկասում նրա ներակատարման վրա:

Այս տեսանկյունից էական է դառնում պատկերացում կազմել, թե ինչ է իրենից ներկայացնում իսլամն և արդիականացման համատեղելիությունը բուն Թուրքիայում և դիտարկել, թե ինչքանով է թուրքական մոդելը կիրառելի ամբողջ Մերձավոր և Միջին Արևելքի տարածաշրջանի երկրների համար:

Իսլամի և արևմտյան քաղաքակրթությունների միջև փոխհարաբերությունների մերձեցումն ու միաժամանակյա ճգնաժամն սկսվել էին դեռևս XIX դարում, երբ արևմտյան քաղաքակրթության մարտահրավերին դիմակայելու նպատակով Օսմանյան կայսրությունում և Եգիպտոսում նախաձեռնվեցին եվրոպականացմանն ուղղված բարեփոխումներ: Սակայն, վերջիվերջո, ուշ օսմանյան և վաղ հանրապետական ժամանակաշրջաններում եվրոպական քաղաքականության ճշմարտությունների և ներքին քայքայման հետևանքով փլուզման եզրին կանգնած սկզբից Օսմանյան կայսրությունը, ապա հանրապետական Թուրքիան փորձեր կատարեցին պատասխանել «ինչպե՞ս փրկել այս պետությունը» հարցադրմանը օսմանյան սահմանադրության և պանօսմանիզմի, երիտթուրքական Սահմանադրության և պանթյուրքիզմի, վերջապես, Հանրապետության նախագծերով: Դրանցից առավել հաջողը վիճակված էր

դառնալ քեմալիստական Հանրապետության նախագծին, որի արդյունքում Թուրքիան վերածվեց ազգ-պետությանը, անցավ արդիականացման մի քանի փուլերով, դարձավ եկավ իսլամական աշխարհի քաղաքական և կրոնական ուղեծրից:

Չնայած, հարկ է ընդունել, որ քեմալական բարեփոխումները հանդիպացան Թանզիմաթի. «նոր օսմանների» և երիտթուրքերի ժամանակաշրջաններում նախաձեռնած հասարակական գոյնըթնացների հետևանքը: Օսմանյան Թուրքիան դարեր շարունակ գտնվել է եվրոպական քաղաքակրթության հետ անմիջական շփման գոտում: Ինչպես նշում է թուրք քաղաքագետ Օ.Մանդերը, «Թուրքիայի քաղաքացիների արագ հարմարեցումը աշխարհիկ ազգային պետության հայեցակարգին կատարվեց շնորհիվ օսմանյան ժառանգության պրակտիկ, իրատեսական ընկալման»[3]:

Լավ հասկանալով այս իրողությունը՝ Քեմալ Աթաթյուրքը և նրա հետևորդները ամեն կերպ ձգտում էին իդենտիֆիկացնել Թուրքիան արևմտյան հասարակության աշխարհիկ մոդելի հետ. «Թուրքերը միշտ ձգտել են շարժվել դեպի Արևմուտք: Մենք ցանկանում ենք ունենալ եվրոպական Թուրքիա, այլ կերպ ասած, թուրքական երկիր, որը նայում է դեպի Արևմուտք: Մենք ցանկանում ենք արդիականացնել մեր երկիրը: Մեր բոլոր ջանքերը նպատակաուղղված են ժամանակակից արևմտականացված կառավարման ստեղծմանը»[4]:

Ընդ որում, արևմտականացման գործընթացը մշտապես իրականացվել է վերևից, երբ իրեն «լուսավորյալ» համարող թուրքական գիհվորականաց-բյուրոկրատական վերնախավը, որը մշտապես առնչվել է արևմտյան աշխարհի հետ, որոշումներ է կայացրել դեռևս «տհաս» ազգի փոխարեն: Այս դրույթը մինչ օրս իր ազդեցությունն ունի Թուրքիայի հասարակական և քաղաքական կյանքում: Դրա հետևանքով երկրում ներքնից նախաձեռնությունները երբևիցե չեն ունեցել լայն դրսևորումներ, և այդ է պատճառը, որ Թուրքիան հայտնվեց է երկու քաղաքակրթությունների և երկու աշխարհընկալումների սրանքում՝ կարծրացած վիճակում, իսկ արդիականացման ընթացքը մինչ օրս չի ստացել ամբողջական տեսք:

Թուրքիայի տրանսֆորմացիայի արգելակման կամ ձախողումների պատճառներից մեկը կարելի է համարել նաև այն, որ որպես արևմտականացման և իսլամի ազդեցությունից ազատվելու միջոց Աթաթյուրքն ընտրեց ազգայնականությունը: Մինչդեռ վերջին տասնամյակների ընթացքում. հատկապես՝ եվրոպական միավորման և ամերիկյան քաղաքակրթության գլոբալիզացման ընթացքին զուգահեռ ազգայնականությունը որպես գաղափարախոսություն, առավել ևս՝ պետական կուրս բավականին հեղինակազրկվեց արևմտյան քաղաքական և մտավորական շրջանակների աչքերում: Թուրքիան ևս չէր կարող դուրս մնալ այդ գոր-

ծընթացներից, երբ արդիականացման ընթացքն իր հետ բերեց մի շարք լուրջ ճգնաժամեր, որոնցից դուրս գալու համար թուրքական իշխող վերնախավը հաճախ դիմում էր ծայրահեղ միջոցների՝ ռազմական հեղաշրջումների: Այսօրվա վիճակով, ինչպես նշում է հայտնի գերմանացի թուրքագետ Հայնց Քրամերը, քեմալիստական մոդելը ժամանակակից Թուրքիայում էրոզիայի է ենթարկվել[5]: Ակնհայտ է դարձել. որ այլևս անհնար է դիմագրավել արգելքներին և սահմանափակումների միջոցով «բողոքական» տրամադրություններին, որոնք հաճախ ներկայանում էին և են իսլամիստական շարժման տեսքով:

Այսօր Արևմուտքի քաղաքական ղեկավարման և «ազդեցային» կենտրոններում չեն թաքցնում, որ մահմեդական աշխարհում արմատականներին հաղթելու կամ չեզոքացնելու գործում առանցքային դերակատարումը պետք է վերապահվի այսպես կոչված «չափավորական» իսլամիստներին, որոնք իրենց թվաքանակով և ազդեցությամբ անհամեմատ գերազանցում են ծայրահեղական խմբավորումներին: Այդ նույն արևմտյան գիտական և քաղաքական շրջանակներում առկա է այն ընկալումը, որ չափավորական իսլամական շարժումները. գալով իշխանության, ունակ են հաստատելու Արևմուտքի հետ հարաբերությունների ընդունելի ձևաչափ: Այդ պատճառով էլ Թուրքիայի օրինակը՝ որպես պետության; որն ունակ եղավ կոտրել հին համակարգը և ստեղծել արդիական պետական և քաղաքական կառույցներ, ազդեցիկ կարող է լինել[6]:

Արևմտյան տիպի քաղաքացիական հասարակության և պարլամենտական կամ բազմակուսակցական ժողովրդավարության ընթացակարգային նորմերը, որոնք այսօր ձևավորում են թուրքական քաղաքական, մտավորական և տնտեսական ընտրանու գիտակցությունը, այդպես էլ օտար մնացին թուրքերի մեծամասնության համար: Այդ պատճառով Թուրքիայում հնարավոր դարձավ չափավորական իսլամիստական քաղաքական ուժի հաղթանակը:

Այս տեսանկյունից «Արդարություն և Բարգավաճում» (Adalet ve Kalkinma-AKP) կուսակցության կառավարումը[7] Թուրքիայում պետք է դիտարկել որպես վերոհիշյալ ընկալման իրականացման փորձ: Այսպես, Մերձավոր Արևելքի գծով ամերիկյան փորձագետ Բարրի Ռուբինը նշում է, որ Թուրքիան տվեց իսլամիստական շարժման կողմից իրոք բարեփոխումների ունակ լինելու օրինակը՝ փորձելով կառավարել հասարակությունը իսլամական արժեքների միջոցով, սակայն չգնալով ամբողջ հասարակության հեղափոխական փոխակերպմանը: Թուրքիայում իսլամիզմը հանդես է բերում փաստորեն միտում դեպի չափավորություն: Ռուբինը համարում է, որ իսլամիստները կարող են դառնալ եվրոպական և ամերիկյան պահպանողականությանը համարժեք մի քաղաքական հոսանք, ինչպես իրեն փորձում է ներկայացնել նաև «Արդարություն և Բարգավաճում» կուսակցությունը[8]:

Իրանը, ի տարբերություն արմատական իսլամիստների, ինչպես, օրինակ, «Նորքայր-մուսուլմանները», թուրքական իսլամիստները չեն դիտարկում իսլամը որպես արևմտյան ժողովրդավարության հակաթեզ[9]: AKP-ի առաջնորդ, Թուրքիայի վարչապետ Ռ.Թ.Էրդողանը դիրքավորում է իրեն որպես «պահպանողական ժողովրդավար», որի համար առաջնահերթ է Եվրոպայի հետ Թուրքիայի ինտեգրացումը: Ըստ էության, դա հաստատում է այն մտայնությունը, որ ներկայումս Թուրքիայի, ինչպես նաև Մերձավոր Արևելքի երկրների բնակչության մեծամասնության համար առաջնային են ոչ այնքան կրոնական կամ գաղափարախոսական հիմնահարցերը, որքան տնտեսական բարիքների և քաղաքական իրավունքների ապահովման պահանջմունքները: Հենց դրանց կենսագործման կարգախոսի տակ էլ «Արդարություն և բարգավաճում» կուսակցությունը իշխանության եկավ Թուրքիայում:

Ռացի այդ, չափավորական իսլամիստները լուծում են ևս մի կարևոր խնդիր: Թուրքիան տասնամյակներ ապրում էր քեմալիստական կաղապարի մեջ՝ որդեգրելով «պաշարված ամրոցի» հոգեբանությունն ու վարքագիծը: Ըստ էության, միայն ուժեղ իսլամիստական քաղաքական հոսանքը կարող էր հաղթահարել իր ժամանակն ապրած քեմալիստական մոդելի իներցիան, քանի որ արևմտյան տիպի կուսակցություններն ունակ չեղան համարժեքորեն արձագանքել հասարակության և արտաքին աշխարհի պահանջներին և հարցադրումներին:

Այս առումով, Թուրքիայում ստեղծվում է լուրջ հակասություն, քանի որ երկրի կառավարող շրջանակները (պետական-բյուրոկրատական ապարատը և զինվորական վերնախավը՝ հանձինս բանակի և հետախուզության) կամ, ինչպես դրանց պայմանականորեն անվանում են, «քեմալիստները» ունեն իրենց պատկերացումները երկրի արդիականացման վերաբերյալ: Այս էլիտան, լինելով այսօրվա Թուրքիայում դեպի արևմտյան քաղաքական և տնտեսական ընկերակցությունը կողմնորոշված և իսլամիստական գաղափարախոսությունը կտրականապես ժխտող խավ, պնդում է, որ Եվրոպան մտադիր չէ ընդունել Թուրքիային իր շարքերի մեջ՝ կրոնական, ժողովրդագրական, աշխարհագրական, տնտեսական և ժողովրդավարական նկատառումները հաշվի առնելով, ինչի ապացույցը կարող է ծառայել Ֆրանսիայի նախկին նախագահ և եվրոպական Սահմանադրության հանճնաժողովի նախագահ Վալերի Ժիսկար դ'Էստենի հայտարարությունը, որն արվեց 2002թ. ԵՄ-ի Կոպենհագենյան գագաթաժողովից առաջ, որտեղ նշվում է, որ «Թուրքիան ունի այլ մշակույթ, այլ մոտեցումներ, այլ կենսակերպ... Նրա մայրաքաղաքը չի գտնվում Եվրոպայում, նրա բնակչության 95% ապրում է Եվրոպայի սահմաններից դուրս, նա եվրոպական երկիր չէ: Իմ կարծիքով, Թուրքիայի մուտքը ԵՄ կդառնա Միության վերջը»[10]:

Դրան ի պատասխան թե՛ կառավարող «Արդարություն և Բարգավաճում» կուսակցությունը. թե՛ երկրի ազատականացման օգտին հանդես եկող մտավորականները պնդում են, որ ներկա պահին, թերևս, էական է Թուրքիայի արդիականացման և եվրոպականացման գործընթացը. իսկ թե ինչ կստացվի դրանց արդյունքում, պարզ կդառնա մոտակա հինգ-տաս տարիների ընթացքում: Նրանք մեջբերում են հենց Քեմալ Աթաթյուրքի խոսքերը, որ «Արևմուտքը միշտ նախապաշարումներ է ունեցել թուրքերի նկատմամբ... Բայց մենք. թուրքերս, միշտ հաստատուն կերպով շարժվել ենք դեպի Արևմուտք: Քաղաքակիրթ ազգ դառնալու համար այլընտրանք գոյություն չունի»[11]:

Ավելին, թուրք «եվրոպամետ» մտավորականների շրջանակներում գերիշխում է ինքնաքննադատական մոտեցումը, որն արտահայտել է այժմ Արևմուտքում բնակվող թուրք պատմաբան Թաներ Աքչամը՝ նշելով. «Թուրքական ազգային ինքնությունը հիմնված է Արևմուտքի նկատմամբ կասկածամտության, անվստահության և նույնիսկ թշնամանքի վրա և նման մտածելակերպ ունեցող Թուրքիան չի կարող դառնալ ժողովրդավարական և եվրոպական տիպի երկիր»[12]:

Խնդիրն իրոք փոխկապակցված է. Թուրքիայի արդիականացումը անհրաժեշտ նախապայման է ԵՄ-ին նրա անդամակցության համար, և միաժամանակ ԵՄ-ի հետ ինտեգրացումը դառնում է երկրի արդիականացման գլխավոր շարժիչ ուժը: Թեպետ և այդ արդիականացման ընթացքում Թուրքիան կորցնում է այն ավանդական մեխանիզմները, որոնք հնարավորություն էին տալիս դիմակայել իսլամիզմի, այդ թվում և նրա արմատական տեսակների տարածմանը: Հայտնի է, որ Թուրքիայի քաղաքական և զինվորական վերնախավի որոշ ներկայացուցիչներ հիմնավորում էին ժողովրդավարական բարեփոխումների անցկացման վերաբերյալ իրենց բացասական դիրքորոշումը նրանով, որ «Թուրքիայում այն կարող է նշանակել հոջաների և հետադիմականների իշխանություն»[13]: Սակայն վերջին տաս տարվա ընթացքում իսլամիստների իշխանության երկու անգամ գալու փորձը ցույց է տվել, որ այն չդարձավ աղետ Թուրքիայի համար, ինչպես դա գուշակում էին լաիցիզմի հետևորդները:

Թե՛ Եվրոպայում, թե՛ Մերձավոր Արևելքում այսօր ստեղծված նոր իրավիճակը պահանջելու է Թուրքիայից վերահիմնտավորել սեփական ազգային շահերը: Դեպի Եվրոպա իր շարժման մեջ Թուրքիան այլևս չի կարող հենվել այդ մոդելի վրա, որի հենասյուներն են համարվել թուրքական ազգայնականությունը (թուրքիզմը) և նրա շարժիչ ուժն ու կրողը համարվող թուրքական բանակը: Այստեղ է, որ արդեն պետք է կիրառվեին արևմտյան արժեքային համակարգին և նորմերին հատուկ ընթացակարգերը, օրինակ, ուժեղ քաղաքական կուսակցության և կայուն քաղաքական համակարգի միջոցով պետության և հասարակության ար-

դիականացման իրականացումը: Եվ որքան էլ պարադոքսալ չթվա, նման դերկատուրումը ստանձնեց իսլամիստական համբավ ունեցալ ԱKP-ն և կրոնական քնույթի բանաստեծությունների հրապարակային արտասանման համար մի քանի ամիս բանտում անցկացրած վարչապետ Ռեջեփ Էրդողանը:

Թեև թուրքական ընտրանին դեռևս չի մշակել նոր աշխարհայացք, որը կփոխարիներ քեմալիզմին, սակայն ի դեմս ԱKP-ի այդ նոր աշխարհընկալման առաջացման փորձ է կատարվում զուգակցել աշխարհիկ կամ արևմտյան արժեքները իսլամական սրժեքային համակարգի հետ, առաջ տանել յուրատեսակ իսլամական ժողովրդավարության մոդելը: ԱKP-ի ծրագրային դրույթներում նշվում է, որ իսլամը կարող է հարմարվել նոր պահանջներին, և տվյալ ժամանակաշրջանում իսլամը Թուրքիայում պետք է ձևավորի արդիական պետության հետ ներդաշնակության մեջ գտնվող սրժեքային համակարգ, որը պատասխանում է ազգի վսփոխվող կարիքներին. «Մեր կուսակցությունը ընկալում է Աթաթյուրքի սկզբունքներն ու հեղափոխությունը որպես թուրքական հասարակության արդի քաղաքակրթության մակարդակին դուրս բերելու համար ամենակարևոր միջոց...»[14]:

Ամերիկյան հատնի արևելագետ Քեռնսրդ Լյուիսը նշում է, որ արևմտյան քաղաքակրթության հետ իսլամական քաղաքակրթության փոխհարաբերություններում առաջացած ճգնաժամը հաղթահարելու համար գոյություն ունեն երկու ելք: Առաջինը, մահմեդականների բոլոր չարիքների պատճառ համարելով իսլամի պատվիրանների և ավանդույթների մոռացումը կամ շեղումը, կոչ է անում վերադառնալ իսլամի «անաղարտ» անցյալին: Դա իրանական հեղափոխության և արմատական շարժումների և վարչակարգերի ուղին է: Մյուս ուղին կայանում է աշխարհիկ ժողովրդավարության մեջ է, որի լավագույն մարմնավորումը, Լյուիսի կարծիքով, մահմեդական աշխարհում դարձավ Քեմալ Աթաթյուրքի ստեղծած Թուրքիայի Հանրապետությունը. «Բացառությամբ Թուրքիայի, արևմտականացման և ժողովրդավարացման ընթացքը որևէ այլ մահմեդական երկրում հաջողության չի հասել, և միայն Թուրքիայի Հանրապետությունը մահմեդական աշխարհի պետություններից կարողացել է առաջադիմել ազատ տնտեսության, ազատ հասարակության և քաղաքական համակարգի կայացման գործում»[15]:

Գերմանացի հայտնի քաղաքագետ Ուդո Շտայնբախը ևս համարում է, որ ռազմատենչ իսլամիզմին և արմատականությանը այլընտրանքի վայրում օրինակ կարող է ծառայել հենց Թուրքիան, որը 1999թ. դեկտեմբերին ստացել է Եվրամիության անդամության թեկնածուի կարգավիճակ[16] (1999թ. դեկտեմբերին Հելսինկիում կայացած ԵՄ գագաթաժողովում Թուրքիան պաշտոնապես հայտարարվեց որպես Միության թեկնածու, սակայն բանակցությունները նրա անդամության վերաբերյալ

հետաձգվեցին մինչև 2004թ. դեկտեմբեր): Այսինքն. անկախ նրանից, կընդունեն Թուրքիային Միության կազմի մեջ, թե՞ ոչ, բայց մահմեդական աշխարհի երկրներից մեկը ճեռք է բերում «եվրոպական» երկրի համարում: Թուրքիայի ժողովրդավարացումը ի սկզբանե դրվել է որպես ԵՄ-ին նրա անդամագրման հիմնական նախապայման:

Նման քաղաքականությունը, կարծես թե, տեղավորվում է Եվրոպայի կողմից այսօր որդեգրված գերազանցապես երկխոսության, քաղաքակրթական շփումների միջոցով արևմտյան և մահմեդական աշխարհների միջև առկա թշնամանքի և փոխհամաձայնության բացակայության երևույթները հաղթահարելու քաղաքականության մեջ:

Ներկայումս էլ Թուրքիայի առնչությունները Եվրոպայի հետ կրում են երկակի բնույթ. մի կողմից, այս երկիրը պատկանում է Տրանս-Ատլանտյան ընկերակցությանը որպես ՆԱՏՕ-ի անդամ. Ընդհանուր Շուկայի ասոցիացված անդամ է, ԵՄ-ի անդամության թեկնածու, Եվրախորհրդի անդամ: Սակայն ԵՄ-ն դեռևս վերջնականապես չի որոշել, թե ինչ է նշանակում «Եվրոպա» հասկացությունը, որտեղ են ավարտվում եվրոպական սահմանները: Ավելին, եվրոպական իսթեբլիշմենտը շարունակում է տարակուսանքով վերաբերվել թուրքերին՝ դնելով յոր և նրանց առջև այն հարցը, թե արդյո՞ք նրանք (թուրքերը) եվրոպացի են[17]: Վ.Ժիսկար դ'Էստենի արդեն նշված հայտարարությունը այդ մոտեցման փայլուն ապացույցը կարող են լինել: Արևմուտքի թերահավատությունը Թուրքիայի արևմտականացմանն ընթացքի վերաբերյալ հասկանալի է. նախ և առաջ, Թուրքիան դարերով եղել է քրիստոնյա Եվրոպայի անվիճելի հակառակորդը: Եվրոպացիները դեռևս հիշում են, որ մանկական հասակում իրենց մայրերը վախեցրել են նրանց «թուրքը կգա և քեզ կտանի» սպառնալիքով[18]: Թուրք պատմաբան Հ.Ինալջիքը ևս նշում է, որ Եվրոպան շարունակում է նույնացնել ժամանակակից Թուրքիան Օսմանյան պետության կամ հետամնաց իսլամական երկրի հետ՝ չնայած Աթաթյուրքի և նրա հետնորդների ջանքերին ամեն գնով ապացուցել, որ Թուրքիան այն ժամանակակից ազգ-պետություններից է, որն առաջացել է Օսմանների միջնադարյան կայսրության փլուզման հետևանքով[19]:

Միայն վերջին հարյուր տարվա մեջ Թուրքիան սկսեց անցում կատարել դեպի արևմտյան իսնտիտուցիոնալ, ապա և արժեքային համակարգերը: Այս ընթացքում երկրում տեղ գտած քաղաքական ազատությունների, մարդու իրավունքների, ազգային փոքրամասնությունների իրավունքների ոտնահարման երևույթները Թուրքիային Արևմուտքի աչքերում ևս մի լավարներ չբերեցին: Թուրքիային փրկում էր, ըստ էության, նրա աշխարհաքաղաքական դիրքը, որը ստրատեգիական նշանակություն ուներ թե՛ «սառը պատերազմի» տարիներին, թե՛ նրան հաջորդած «հետ-սառըպատերազմյան» ժամանակաշրջանում:

Վերոհիշյալին ավելացնում են ԵՄ-ի մտահոգությունները՝ թուրքական տնտեսության չեռն իր վրա վերցնելու, Թուրքիայից դեպի եվրոպական երկրներ թուրքերի ներգաղթի կտրուկ աճի, Թուրքիայում մարդու հիմնական ազատությունների և իրավունքների պահպանման, ազգային փոքրամասնությունների դեմ գործողությունների և զինվորականության քաղաքական ազդեցության պրոբլեմների, Կիպրոսի հակամարտության հետ կապված:

Այսպիսով, կարելի է հանգել այն եզրակացության, որ Թուրքիայի մուտքը Եվրամիություն սկզբունքորեն այլևս չի բացառվում, ինչպես դա այվում էր մինչև 1999թ. Հելսինկիի գագաթաժողովը: Թուրքական քաղաքական վերնախավը նույնիսկ այդ խնդիրը սկզբունքորեն լուծված է համարում, իսկ մնացածն արդեն ժամանակի հարց է և այդ ժամանակը պետք է օգտագործվի երկրի և հասարակության արագ արդիականացման համար: Թեև ԵՄ-ն միշտ էլ հնարավորություններ ունի ձգձգելու անդամակցության արձանագրման շուրջ բանակցությունները: Այսինքն, օրակարգում դրված է երկու հարց. «երբ» և «ինչպես» է Թուրքիան միանալու Եվրամիությանը: Ավելին, հաշվի առնելով, ԵՄ-ի շահերը Մեջտավոր և Միջին Արևելքում, հենց Թուրքիան կարող է դառնալ այստեղ եվրոպական արժեքների և մոդելների մուտքի համար լավագույն ալիքը:

Ինքը՝ Թուրքիան վարձում է այսօր ստանձնել նման դերակատարում՝ իր վարքի վրա ապացուցելով իսլամի և արևմտյան ժողովրդավարության հնարավորությունը: Հենց նման փորձարկումը որպես երկրի քաղաքական առաջնահերթություն հռչակեց 2003թ. Թեհրանում կայացած Իսլամական կոնֆերանս կազմակերպության անդամ-պետությունների արտգործնախարարների համաժողովի ժամանակ Թուրքիայի ԱԳ նախարար. «Արդարություն և Բարգավաճում» կուսակցության մեջ երկրորդ դեմք համարվող Աբդուլլահ Գյուլը. «Ներկայիս թուրքական կառավարությունը ձգտում է ապացուցել, որ մահմեդական հասարակությունը կարող է լինել ժողովրդավարական, բաց, թափանցիկ, բազմակարծիք և արդիական՝ միևնույն ժամանակ պահպանելով իր ինքնությունը, և թուրքական վարքը մարտահրավեր է նետում այն պնդումներին, որ իսլամն ու ժողովրդավարությունն անհամատեղելի են»[20]:

Սակայն Թուրքիայի մոդելը դժվար թե կարող է աշխատել իր լիարժեք իմաստով: Նախ, Թուրքիան օսմանյան ժամանակաշրջանից ի վեր թե՛ իր սահմաններից դուրս, թե՛ երկրի ներսում անընդհատ առնչվել է եվրոպական քաղաքակրթության, ինչպես նաև դրանց կրողների՝ բյուզանդացիների, բալկանյան ժողովուրդների, հույների, հայերի հետ և յուրացրել նրանց մշակույթների տարրերը: Պետք չէ մոռանալ, որ Թուրքիայի դեպքում գոյություն չունեին այնպիսի գործոններ, որոնք էականորեն շաղկապված կլինեին իսլամական աշխարհի զարգացման ուղիների հետ. ինչպես, օրինակ, նավթի պաշարները, արաբա-իսրայելական հա-

կամարաությունը, ազդեցիկ արմատական իսլամիստական հոգևորականության և խմբավորումների առկայությունը: Եվ այս տեսանկյունից ժամանակակից Թուրքիան, ինչքանով էլ որ օտար է ընկալվում Եվրոպայում, ավելի մոտիկ է կանգնած նրան (հատկապես՝ Եվրոպայի հարավային մասին), քան թե մահմեդական Արևելքին:

Պետք է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ Թուրքիան Իրանի հետ միասին այն քացառիկ պետություննն է, որ Մերձավոր և Միջին Արևելքում ունեցել է պետականության հարուստ փորձ՝ այսպիսով էապես տարբերվելով տարածաշրջանի մյուս երկրներից, որոնք հանդիսանում են գերազանցապես առաջին և երկրորդ աշխարհամասերի արդյունքում և մեծ տերությունների կամքով առաջացած պետություններ: Մինչդեռ «Մեծ Մերձավոր Արևելքի» ծրագրի շրջանակները նախատեսում են հենց դեռևս կայացման փուլում գտնվալ պետականությունների տրանսֆորմացիայի իրականացումը: Այսպես, որ չափանիշներն այստեղ քացարձակ տարբեր պետք է լինեն:

Քացի դրանից, ինչպես ցույց է տվել պատմական փորձը, Թուրքիան առանձնապես շահագրգռված չի եղել իր մերձավորարևելյան հարևանների հետ քաղաքական հարաբերությունների զարգացման մեջ: Սրան կարելի է գումարել այն փաստը, որ Թուրքիայի մերձավորարևելյան քաղաքականության մեջ իսլամական քաղաքակրթության և հավատի արժեքները չեն ունեցել վճռորոշ ազդեցություն[21]: Որպես արևմտյան կողմնորոշում ունեցող պետություն, Թուրքիան արդյունքում օտարվեց Մերձավոր Արևելքից և դժվար թե նրա մոդելը կարող է վճռական ներգործություն ունենալ մահմեդական աշխարհի վրա:

Առավել ևս, եթե հիշենք, որ Թուրքիան դարեր շարունակ եղել է արաբական ժողովուրդների և Իրանի աշխարհաքաղաքական հակառակորդը կամ մետրոպոլիտեն, ուստի, համակրանքը թուրքական մոդելի հանդեպ դժվար թե հնարավոր է հանդիպել մահմեդական Արևելքում:

Վերջապես, յուրաքանչյուր երկիր ունի իր առանձնահատկությունները, որոնց համապատասխան էլ կարող են ստեղծվել պետականության և ժողովրդավարության այն ձևերը, որոնք կիրառվում են ժամանակակից աշխարհում: Այս առումով «Մեծ Մերձավոր Արևելքի» նախագծի իրականացման գործում հաջողությունն ամենևին էլ երաշխավորված չէ:

SUREN BAGHDASARYAN

TO THE PROBLEM OF THE COMPATIBILITY BETWEEN MODERNIZATION AND ISLAM (Turkey's Model)

At the present time in the political and scientific circles of the West, as well as in the countries of the Middle East is discussed the problem of compatibility between the Islamic civilization's principles and values and the Western civilization's value system.

As the model of such a compatibility these circles often offer the example of Turkey, which has served for the last fifty years as a "success story" in the modernization of the Islamic society, therefore, the Turkish political experience can be used in the implementation of "Greater Middle East" geopolitical project recently declared by the U.S. administration.

Actually Turkey was the first Muslim country which relatively fast adapted to the Western concepts of secular nation-state and was identified itself with the Western civilization's patterns. However, due to serious contradictions within the Turkish society, Turkey couldn't complete its modernization process and still remains between two modus vivendi, surviving permanent crises. These crises, in their turn, enforced the influence of the Islamist movement in Turkey, simultaneously corrupting the Kemalist state model.

The last political developments in Turkey showed that the Islamist movement, refraining from the radical thinking and actions, is able to establish the acceptable modus vivendi of the relationship with the West, as well to diminish the influence of the old (Kemalist) elite.

In that context in the paper there are discussed the problems of Turkey-EU relations, which have still very serious issues and obstacles. Besides, there is analyzed the row of the historical, political, military and cultural contradictions between Turkey and the rest Islamic world. This analysis allows to come to conclusion that the Turkish model for the modernization of the Islamic society is not fully valid because of Turkey's modernization way, as well the country's political and cultural conditions are very different from the other Muslim countries and peoples.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Լայն իմաստով, «Մեծ Մերձավոր Արևելքի» նախագիծը՝ հետաուղղպատերազմյան ղարաշրջանի գեոստրատեգիական հայեցակարգ է, որն առաջ է քաշում Ադրիատեանից մինչև Աւտամբուլ և Կասպից ծովից մինչև Նեղոս գետը մի հսկայական աշխարհաքաղաքական տարածաշրջանի կառավարելիության գաղափարը՝ ելնելով աշխարհում ճգնաժամերի և բախումների տեսանկյունից տարածաշրջանի առավել վտանգավորության փաստից:
2. Craig Smith, "In the Balance: Attacks on Turkey Aim to Sever a Bridge Between Islam and the West", *New-York Times*, November 21, 2003.

3. Oral Sander, "Turkish Foreign Policy: Forces of Continuity and Change", *Turkish Review*, Winter 1993, p. 34.
4. "Atatürk'ün Söylev ve Demeçleri", III. Türk • nk• lap Tarihi Enstitüsü, Ankara, 1952, p. 67.
5. Heinz Kramer, "A Changing Turkey. The Challenge to Europe and the United States", Washington, 2000, p.25.
6. Ian O. Lesser, Bruce R. Nardulli, and Lory A. Arghavan, "Sources of Conflict in the Greater Middle East", http: // www. rand. org/publications /MR/MR897/ MR897.chap4
7. AKP-ն, հաղթանակ տոնելով 2002թ. նոյեմբերին երկրում կայացած խորհրդարանական ընտրություններում, ստացավ 363 պատգամավորական տեղ 550–անդամանոց Մեջլսիում և ձևավորեց 1987թ. հետո առաջին միակուսակցական կառավարական կաբինետը:
8. Barri Rubin, "Islamic Radicalism in the Middle East: A Survey and Balance Sheet", *MERIA JOURNAL*, Volume 2, No. 1 - May 1998, http:// *www.biu.ac.il/soc/besa/meria/news/1998/98news8.html*
9. John Esposito, ed., "Voices of Resurgent Islam", New York, 1983, p.11.
10. "Giscard Remarks Cause Uproar in Ankara, Brussels", *Turkish Daily News*, 11 November 2002.
11. William Hale, "Turkish Foreign Policy 1774-2000", London, 2000, p.38.
12. Taner Akçam, "Türkiye-Avrupa: yeni açilimlarin kaçinilmazligi", *Agos*, 25.07.2003
13. Mete Tunçay, "Turkiye Cumhuriyetinde Tek Parti Yonetimi Kurulmasi", Ankara, 1985, s. 224
14. http://www.akparti.org.tr
15. Bernard Lewis, "The Crisis of Islam: Holy War and Unholy Terror", New-York, 2003, pp.118, 163.
16. Удо Штайнбах, "Исламский терроризм. Сейчас необходим самокритичный диалог культур", http://www.deutschebotschaft-moskau.ru/ru/bibliothek/internationale-politik/2002-03/article02.html
17. Bülent Yesilada, "The Worsening EU-Turkey Relations", *SAIS Review*, Vol. 19, No. 1 (1999), p. 148.
18. E.Heller, "Mamma, I Turchi--Hilfe, die Tuerken", *Süddeutsche Zeitung*, April 12-13, 1997.
19. Halil Inalcik, "Turkey Between Europe and the Middle East", *PERCEPTIONS*, March-May 1998 Volume III - Number 1, http:// *www.mfa.gov.tr/grupa/percept/III-1/inalc.htm*
20. http:// *www.mfa.gov.tr/grupa/ai/Malaysia15 October2003.htm*
21. Դրա լավագույն վկայությունն են հանդիսանում Թուրքիայի սերտ հարաբերությունները արաբական աշխարհի հակառակորդ համարվող Իսրայելի հետ և այս երկու երկրների միջև առկա ռազմա-քաղաքական համագործակցության մակարդակը:

ԱՐԱՄ ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՄԲՈՒԹՅԱՆ ՄԻՐԻԱԿԱՆ ՎԻԼԱՅԵԹՆԵՐՈՒՄ ԱՐԱԲԵՐԵՆ ԼԵԶՎԻ ՎԻՃԱԿԸ ԵՐԻՏԹՈՒՐՔԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՕՐՈՔ

1908 թ. հուլիսի 23-ի երիտթուրքական հեղաշրջումը մեծ հույսեր ներշնչեց Օսմանյան կայսրության ոչ թուրք, այդ թվում նաև արաբ ազգաբնակչությանը: Ոգևորված երիտթուրքերի՝ Օսմանյան կայսրության ողջ ազգաբնակչության հավասարության խոստումներով, արաբների մի մասը հնարավոր էին համարում կայսրության սահմաններում ազգային ինքնավարության ձեռքբերման իրականացումը: Պատահական չէ, որ Սահմանադրության[1] վերականգնումից անմիջապես հետո արաբական մի շարք կազմակերպություններ ակտիվորեն սկսեցին արտահայտել իրենց այդ ձգտումը՝ վարչական ապակենտրոնացման պահանջի հետ միասին առաջ քաշելով նաև արաբական վիլայեթներում արաբերենը պաշտոնական լեզու և, նույնիսկ, օսմանյան խորհրդարանում այն աշխատանքային լեզու ճանաչելու հարցը:

1908 թ. սեպտեմբերին Ստամբուլում հիմնված «Արաբա-օսմանյան եղբայրություն» («Ալ-Իխուա ալ-Արաբի ալ-Օսմանի») կազմակերպությունը, որն իր մասնաճյուղերն ուներ Միջիայում և Իրաքում, և որը չէր թաքցնում իր համակրանքն ու հավատարմությունը երիտթուրքերին և Սահմանադրության դյուրթներ պահպանելու գործում վերջիններիս աջակցելու պատրաստակամությունը՝ իր առջև դրված խնդիրների շարքում կարևորելով նաև արաբերենի լեզվով լուսավորության տարածման հարցը[2]:

Սակայն շատ շուտով, հատկապես 1909 թ. ապրիլի 13-ին ընդդիմադիր ուժերի կազմակերպած հակաերիտթուրքական հեղաշրջման փորձից[3] հետո երիտթուրքերի ղեկավարները կատարելապես հրաժարվեցին նախկին խոստումներից՝ իրենց քաղաքականությամբ հիասթափեցնելով Օսմանյան կայսրության ազգություններին, այդ թվում նաև արաբներին, հանգամանք, որն առավել ինտենսիվ և հետևողական դարձրեց իրենց նպատակներին հասնելու վերջիններիս ջանքերը: Հարկ է նշել, որ այդ ջանքերը վառ կերպով դրսևորվեցին հատկապես կայսրության Մի-

լիական վիլայեթներում[4], որոնք մի շարք հանգամանքների բերումով անհամեմատ զարգացած էին հասարակական-քաղաքական առումով:

Օսմանյան կայսրության արաբ ազգաբնակչության՝ ինքնավարության համար պայքարում կենտրոնական տեղ էր գրավում արաբերեն լեզվի պահպանման և նրա կիրառման շրջանակները հնարավորինս ընդլայնելու խնդիրը. ինչը, ի դեպ, լայնորեն արծածվել է նաև արաբ լուսավորիչների գործերում[5]: Պատահական չէ, որ կայսրությունում արաբերեն լեզվի ճանաչման և հատկապես արևաբաքնակ շրջաններում նրա կարգավիճակի հարցը մեծապես կարևորվում էր արաբական կուսակցությունների և կազմակերպությունների մեծ մասի ծրագրերում և առանց բացառության նրանց ընդունած բոլոր փաստաթղթերում:

Չնայած ձևակերպումների մեջ առկա տարբերություններին՝ արաբների բոլոր, նաև լեզվական պահանջների հիմնական բովանդակությունը գրեթե միշտ նույն էր: Մասնավորաբար. 1912 թ. վերջին Կահիրեում Սիրիայից, Լիբանանից և Պաղեստինից արտագաղթած արաբ ազգայնականների ստեղծած «Վարչական ապակենտրոնացման օսմանյան կուսակցության» («Հիզբ ալ- Լամարքազիյա ալ-Իդարիյա ալ-Օսմանի») ընդունած ծրագրում. արտահայտելով իրենց հավատարմությունն Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականության պահպանման գաղափարին և միայն նրա սահմաններում ինքնավարություն ձեռք բերելու մտադրությանը, միաժամանակ պահանջվում էր օսմանյան բոլոր վիլայեթներում թուրքերենի և տեղաբնիկների ազգային լեզվի համատեղ գործածություն, ինչպես նաև վիլայեթներում մայրենի լեզվով տարրական կրթության իրականացում (հոդվ. 14 և 15)[6]: Հասկանալի է, որ կուտսկցությանն առավելապես հուզում էր արաբերեն լեզվի կարգավիճակը Սիրիական վիլայեթներում:

Արաբերեն լեզվի հարցը կարևոր տեղ էր գրավում նաև 1913 թ. հունվարին Բեյրութում ստեղծված Քարենորոգումների ընկերության վարչական ապակենտրոնացման սկզբունքների վրա հիմնված բարեփոխումների ծրագրում: Եվս մեկ անգամ հավաստելով. որ արաբները անջատողական որևէ ձգտում չունեն, այլ, ընդհակառակը, հակված են Օսմանյան կայսրության մաս կազմել և. ավելին, աջակցել նրան՝ դիմակայելու Եվրոպայի հնարավոր ոտնձգություններին, այնուամենայնիվ. իրենց այդ հավատարմությանը որպես փոխհատուցում պահանջվում էր ծայրահեղ ինքնավարության մոտեցող ապակենտրոնացում: Պահանջների սկզբունքային կետերից էր, նախ և առաջ, արաբերեն լեզվի ճանաչումը որպես արաբական վիլայեթների պաշտոնական լեզու՝ թուրքերենը թողնելով միայն որպես Ստամբուլի հետ հաղորդակցման միջոց: Միաժամանակ առաջարկվում էր, որ արաբերեն լեզուն ընդունվի օսմանյան խորհրդարանում (հոդվ. 1): Որպես հաջորդ քայլ՝ պահանջվում էր նաև, որ Սիրիս-

յում ճշանակվեին միայն ասրաբերեն լեզվին տիրապետող պաշտանյաներ(հմդվ. 2)[7]:

Այս հանգամանքը, որ ծրագրում արաբերեն լեզվի հարցն զբաղեցնում էր առաջին երկու կետերը, ինքնին վկայում է այդ խնդրին տրվող կարևորության մասին:

Այս տեսակետից առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում այնպիսի հեղինակավոր համաժողովի ընդունուած որոշումը, ինչպիսին 1913 թ. հունիսին Փարիզում կայացած Արաբական կոնգրեսն էր[8]:

Հիմնավորելով Օսմանյան կայսրության արաբական վիլայեթների ադմինիստրատիվացման անհրաժեշտությունը և շարադրելով այդ նախագծի հիմնական սկզբունքներն ու դրա իրականացման պայմանները՝ կոնգրեսի մասնակիցներն ընդունած որոշման մեջ առանձին կետ էին հատկացնում լեզվի հարցին՝ դարձյալ շեշտը դնելով այն բանի վրա, որ արաբերեն լեզուն ճանաչվի օսմանյան խորհրդարանի կողմից և կայսրության արաբաբնակ տարածքներում համարվի պաշտոնական լեզու (հմդվ. 5)[9]: Նախագծին կից լրացման մեջ հատուկ ընդգծվում էր, որ եթե կոնգրեսի ընդունած որոշումների պատշաճ ձևով չիրականացվեն, ապա Սիրիական Արաբիայի Քարեներգործչների կոմիտեի անդամները կհրաժարվեն իրենց պարտականություններն կատարումից Օսմանյան կայսրությունում[10]:

Ուշագրավ է, որ կոնգրեսի ընդունած որոշումները ներկայացվում էին որպես օսմանյան սիրլացիների և արաբների քաղաքական ծրագիր և նախազգուշացվում էր, որ խորհրդարանական ընտրություններում ոչ մի թեկնածու իրենց աջակցությանը չի արժանանա, եթե նախապես չհայտնվորվի պաշտպանել և իրականացնել վերոհիշյալ ծրագիրը[11]: Այդ բան է, անշուշտ, որ, ինչպես ցույց տվեց ապագան, կոնգրեսի գործնական արդյունքներն տարբեր հանգամանքների բերումով չափազանց համեստ եղան: Այն գործիչները, որոնք պետք է իրականացնեին կոնգրեսի որոշումները, չկարողացան գտնել դրան համար արդյունավետ միջոցներ: Ավելին, թուրքական կառավարող շրջաններին հաջողվեց նրանց հակել փոխզիջման, ինչը, իրականում, նշանակում էր կոնգրեսում հռչակված սկզբունքներից, այդ թվում նաև լեզվական պահանջների հիմնական մասից հրաժարում: Կոնգրեսի որոշման կետերի իրականացման հնարավորության խափանմանը մեծ չափով նպաստեցին հատկապես արևսբ ազգայնականների միջև առկա հակասությունները, ինչպես նաև երիտթուրքերի «Միություն և առաջադիմություն» կուսակցության արաբ կողմնակիցների դիրքորոշումը, որոնք նպատակահարմար էին գտնում «Արաբների իսկ շահերից ելնելով՝ արաբական երկրներում թուրքերենը թողնել որպես պաշտոնական լեզու»[12], փորձելով հետևողել, որ հակառակ դեպքում կտուժեն միայն արաբները:

Լեզվի պահպանման հարցում արաբների շահագրգռությունը և այդ ուղղությամբ նրանց ջանքերը, թերևս, անմիջապես քելադրվում էին

հետևյալ հիմնական հանգամանքներով: Հատկապես արաբների պարագայում, երբ կրոնական գործոնը նպաստում էր երիտթուրքերի որդեգրած օսմանիզմի գաղափարների իրականացմանը, լեզվի պահպանումը դառնում էր նրանց միասնականությունն ու ինքնությունը պահպանելու կարևորագույն, առաջնահերթ միջոց և, միաժամանակ, ստեղծված իրադրության պայմաններում վերջիններիս տալիս էր որպես ընդհանրության, որպես ժողովրդի և որպես ազգի իրավունքների անվիճելիությունը հաստատելու այդքան անհրաժեշտ հնարավորություն[13]:

Այն հավասարապես հետևանք էր նաև երիտթուրքերի սրընթաց քաղաքականության, սրտեղ լեզվական ծուլման խնդիրը կարևոր տեղ էր գրավում՝ համարվելով նաև ապակենտրոնացումը կասեցնելու միջոց: Անվերադարձ անցել էին այն ժամանակները, երբ երիտթուրքերը, կայսրության տարբեր ազգերի հավասարության ջատագովի կեցվածք ընդունած, փորձում էին սիրաշահել վերջիններիս և բոլոր միջոցներով ւլսհսլսնել իրենց նկատմամբ վստահությունը: Սակայն ոչ թուրք ազգաբնակչության բացահայտ ընդդիմությունն օսմանիզմի գաղափարի իրականացմանը և կայսրության մասնատման իրական հեռանկարը երիտթուրքերին ստիպեց հրաժարվել իրենց իսկական դիտավորությունները սքողելու միտումից և ձեռնամուխ լինել կայսրության ոչ թուրք ազգությունների բռնի ծուլմանն ուղղված անթաքույց քաղաքականության: Դա, անշուշտ, կարելի է համարել կայսրության նախկին իշխանությունների վարած թուրքացման քաղաքականության շարունակությունը: Երիտթուրքերի այս կողմնորոշումը վերջնականապես ձևակերպվեց 1911 թ. հոկտեմբերին կայացած համագումարում, որի ընդունած որոշման մեջ ուղղակիորեն հայտարարվում էր, որ վաղ թե ուշ իրականացվելու է բոլոր օսմանահպատակների լիակատար թուրքացումը, որ կայսրության ոչ թուրք ազգություններին պետք է զրկել կազմակերպվելու իրավունքից, քանի որ ապակենտրոնացումն ու ինքնավարությունը թուրքական կայսրության նկատմամբ դավաճանություն են: Որոշման մեջ հստակորեն նշվում էր, որ ազգային փոքրամասնությունները կարող են պահպանել իրենց կրոնը, սակայն ոչ լեզուն[14], հանգամանք, որը մեկ ևսնգւսմ ևս վկայում է երիտթուրքերի կողմից այդ գործոնին տրվող կարևորության մասին: Լեզվական ճնշումը, այսպիսով, վերջիններիս կողմից դիտվում էր որպես թուրքերենի գերակայության անհրաժեշտ նախապայման, ինչը և, նրանց խորին համոզմամբ, կհանդիսանար կայսրության ոչ թուրք ազգաբնակչության ծուլման առավել արդյունավետ միջոց:

Հայտնի է, սակայն, որ երիտթուրքերի այս քաղաքականությունը ոչ միայն չնպաստեց օսմանիզմի հայեցակարգի իրականացմանը, այլև, ի վերջո, ճակատագրական եղավ իրենց իսկ կուսակցության համար: Իզուր չէ, որ Ջ. Անտոնիուսը, արաբների ազգային զարթոնքին նվիրված իր ուսումնասիրության մեջ հատկապես ընդգծելով երիտթուրքերի կող-

մից կայսրության ազգային կազմի յուրահատկությունների անտեսման և ազգությունների ապակենտրոնացման պահանջներին ընդդիմանալու հանգամանքը, իշխանության գալուց հետո վերջինիս ամենակոպիտ սխալը և նյա անհաջողության ուղղակի պատճառ է համարում հենց պետության կենտրոնացման քաղաքականության որդեգրումը[15]:

Կայսրության արաբ ազգաբնակչության նկատմամբ օսմանիզմի քաղաքականությունն իրականացնելիս երիտթուրքերը հիմնական շեշտերից մեկը դնում էին լեզվական ծուլման վրա: Եթե սկզբնական շրջանում վերջիններս արաբական վիլայեթներում արաբերեն լեզվի գործածմանը զոնե արտաքուստ վերաբերվում էին քիչ թե շատ հանդուրժողաբար, ապա ավելի ուշ վիճակը փոխվեց: Այլևս հարկ չհամարելով որևէ չափով սքողել իրենց իսկական մտադրությունները՝ նրանք բացահայտորեն արտահայտում էին իրենց ծայրահեղ դժգոհությունն՝ արաբների՝ իրենց մայրենի լեզվով խոսելու փաստը գնահատելով որպես թուրքերենի նկատմամբ արհամարհանքի դրսևորում և, միաժամանակ, չափազանց վտանգավոր իրողություն: Նրանք փորձում էին այդ հանգամանքն օգտագործել արաբների նկատմամբ նոր, ծայրահեղ ճնշումներ գործադրելու նպատակով, ընդհուպ մինչև ստիպել մոռանալ իրենց լեզուն և խոսել «տիրոջ լեզվով», այսինքն՝ թուրքերենով[16]: Իթթիհադականների ներկայացուցիչներից մեկը՝ Ջելալ Նուրին, գրում էր. «...Արաբական երկրները, հատկապես Եմենը և Իրաքը, պետք է վերածվեն թուրքական գաղութների՝ թուրքերեն լեզուն տարածելու նպատակով...: Երաշխավորելու համար մեր գոյությունը՝ անհրաժեշտ է բոլոր արաբական երկրները դարձնել թուրքական»[17]:

Ոչ թուրք ազգաբնակչությանը ծուլելու երիտթուրքերի այս սևեռուն գաղափարն իր վառ արտացոլումը գտավ վիլայեթների մասին օրենքում (1913 թ.): Չնայած այն հավաստիացումներին, որ հինգ տարվա ընթացքում սանջակների կենտրոններում գտնվող պետական դպրոցներում ուսուցումը վարվելու է տեղական (տվյալ դեպքում՝ արաբերեն) լեզվով, այնուամենայնիվ, այն սահմանափակվում էր մի շարք վերապահումներով: Բացի այն, որ դպրոցներում պահպանվում էր թուրքերենի պարտադիր ուսուցումը, երկու գլխավոր առարկաների՝ պատմության և աշխարհագրության դասավանդումը ևս պետք է անցկացվեր թուրքերենով: Իսկ վիլայեթների կենտրոններում գտնվող երկրորդ աստիճանի դպրոցներում թույլատրելի էր համարվում միայն թուրքերեն լեզվով ուսուցումը:[18]

Անմիջապես ծուլման նպատակ էր հետապնդում նաև վիլայեթներում տարրական դպրոցների նկատմամբ երիտթուրքերի քաղաքականությունը: 1913 թ. ընդունված օրենքով առաջին և երկրորդ աստիճանի դպրոցների միավորման անվան տակ «միասնական տարրական դպրոցի» շրջանակներում վիլայեթների առաջին աստիճանի դպրոցները պետության հսկողության տակ դնելու միջոցով, փաստորեն, ծայրահեղ չափով

սահմանափակվում էր նրանց ինքնավարությունը և, առաջին հերթին, այդ դպրոցներում մայրենի լեզվի դասավանդումը՝ սկզբից ևեթ կողմնորոշելով աշակերտներին առավելապես դեպի թուրքերենը[19]:

Արաբերեն լեզվի ճնշմանը մեծ չափով նպաստում էր նաև երիտթուրքերի կադրային քաղաքականությունը: Որքան էլ արաբական կուսակցությունները իրենց ծրագրերում համառորեն պահանջում էին, որ արաբական վիլայեթներում պատասխանատու պաշտոններ զբաղեցնեն սովորելապես իրենք՝ արաբները, այդ պաշտոններում դիտավորյալ ճշանակվում էին ոչ տեղական ծագում ունեցող և հաճախ արաբերենին չտիրապետող անձինք: Այն պարագայում, երբ արաբաբնակ վիլայեթներում ազգաբնակչությունը մեծ մասամբ չէր տիրապետում թուրքերենին, ողջ գործավարությունն իրականացվում էր միայն թուրքերենով և միայն երբեմն թարգմանչի մասնակցությամբ: Պաշտոնապես հայտարարվեց նաև տեղական կառավարման մարմիններում ոչ թուրքերեն լեզվով դիմումների, հայցերի և մյուս պաշտոնական գրությունների ընդունումը դադարեցնելու մասին[20]:

Այնուամենայնիվ անհրաժեշտ է նշել, որ ոչ թուրք ազգաբնակչության և, հատկապես, առավել չափով արաբների նկատմամբ իրենց քաղաքականությունն իրականացնելիս երիտթուրքերի առաջնորդները հարկադրված էին որոշ զիջումների գնալ: 1913 թ. վերջին լուսավորության նախարարությունը հրահանգ արձակեց արաբերեն լեզուն մտցնել որպես ուսուցման լեզու արաբական վիլայեթների տարրական դպրոցներում[21]: Պաշտոնական վաստաթղթերի և կառավարական հայտարարությունների տեքստերը մաքրվեցին բացահայտորեն ծուլման միտված ձևակերպումներից: Դրանք նույն ժամանակ՝ 1913 թ. նոյեմբերին, երիտթուրքերի կուսակցության կենտրոնական կոմիտեի գլխավոր քարտուղար Միդհատ Շյուքրյուն տագնապ էր հայտնում, որ պետք չէ չարաշահել արաբների համբերությունն ու վստահությունը. և անհրաժեշտ է առանց հապաղելու ինչ-որ բան ձեռնարկել՝ խուսափելու համար անախորժություններից[22]:

Առաջին հայացքից անսպասելի թվացող այս դիրքորոշումն անմիջապես հետևանք էր երիտթուրքերի քաղաքականության էվոլյուցիայի՝ որոշակի վտանգ մեջ ակնհայտորեն նկատվող նոր, հարկադրված զիջման մարտավարության,[23] որը, ստեղծված իրադրության պայմաններում, «օսմանյան ազգի միասնությունը պահպանելու» անվան տակ «...նպատակ ուներ քողարկելու երիտթուրքերի ազգային քաղաքականության իրական նպատակադրվածությունը»[24]:

Այն հանգամանքը, որ այս արտաքուստ «մեղմ» քաղաքականությունը հստակորեն իր վառ արտահայտությունը գտավ արաբական վիլայեթներում, պատահական չէ: Պատճառներից մեկը թերևս այն էր, որ արաբները կազմում էին կայսրության ազգաբնակչության գերակշիռ մասը (համաձայն Մ. Լազարևի բերած տվյալների՝ առաջին համաշխարհա-

յին պատերազմի նախօրյակին՝ արաբները կայսրության 50% էին)[25], և նրանց հետ կտրուկ առճակատումը կարող էր խիստ վտանգավոր հետևանքներ ունենալ: Ոչ պակաս կարևոր գործոն էր նաև այն, որ արաբները եղել և մնում է իսլամի և Ղուրանի լեզու, ինչը երիտթուրքերի կողմից չէր կարող անտեսվել:

Այսպիսով դժվար չի. համոզվել, որ երիտթուրքերի գիջումները ունեին զուտ մարտավարական նպատակներ և որևէ չափով չէին կարող փոխել նրանց քաղաքականության բնույթը կամ գոնե ղրա տպավորությունը ստեղծել: Անառարկելի է, որ այդ քաղաքականությունը, որքան էլ երբեմն զգուշավոր և քողարկված, երիտթուրքերի կառավարման ողջ շրջանում մշտապես և առաջին հերթին նպատակաուղղված էր օսմանիզմի գաղափարախոսության իրականացմանը, այն է՝ ամենատարբեր, այդ թվում նաև լեզվական ճնշման միջոցով կայսրության արաբ ազգաբնակչության ձուլմանը:

ARAM GASPARYAN

THE STATUS OF ARAB LANGUAGE IN THE SYRIAN VILAYETS OF OTTOMAN EMPIRE IN THE PERIOD OF YOUNG TURKS

The parer deals with the status of Arabian language in Syrian vilayets of Ottoman Empire in the period of Young Turks. After the revolution of 1908 several Arabian districts raised the question of decentralization of Arabian vilayets, at the same time dealing with the matter of development of the status of Arabian language. The matter of the language has an important place in the plans and decision of Arabian organizations. But the Young Turks continued their policy of assimilation of non-turkish as well as arabian population, limiting and making pressure on the Arabian language.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Օսմանյան կայսրության առաջին սահմանադրությունը հռչակվել էր 1876 թ. դեկտեմբերի 23-ին, սակայն արդեն 1878 թ. սկզբին Աբդուլ Համիդն այն չեղյալ հայտարարեց: Սահմանադրությունը վերականգնվեց միայն 1908 թ. հուլիսի 24-ին երիտթուրքերի կողմից:
2. З.И.Левин, Развитие основных течений общественно-политической мысли в Сирии и Египте, М., 1972, с. 132.
3. В.И. Шпилькова, Младотурецкая революция 1908-1909 гг., М.,1977, с.217
4. Մինչև առաջին համաշխարհային պատերազմը Սիրիական վիլայեթների կազմի մեջ մտնում էին Բեյրութի,Դամասկոսի,Հալեպի վիլայեթները, Լեռնային Լիբանանի մութասարիֆությունը և Երուսաղեմի սանջակը: Տես, D. Pipes, Greater Syria The History of an Ambition, N.Y., 1990, p. 16.

5. Մանրամասն տես՝ Bassam Tibi, Arab Nationalizm a Critical Enquiry. L.,1981. p. 47-62
6. Zein N. Zeine. Arab Turkish Relations and the Emergence of Arab Nationalism. Beirut, 1958, p. 83
7. A Programe of Reforms Based on Administrative Decentralization, տեքստը տես՝ Zein N. Zeine, նշվ.աշխ., էջ 137-138 (Appendix D); Հ.Ս.Սարգսյան, Ա.Հ.Թոփալյան, Արաբական մի շարք փաստաթղթեր արաբա-թուրքական հարաբերությունների վերաբերյալ, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. VI. Ե, 1974, էջ 220-221.
8. Արաբական կոնգրեսը տեղի ունեցավ Փարիզում 1913թ. հունիսի 18-23-ը: Կոնգրեսին մասնակցում էին 24 պատգամավորներ, որոնց մեծ մասը Սիրիայից էին, երկուսը՝ Իրաքից, երեքը՝ ներկայացնում էին ԱՄՆ-ի արաբներին: Մանրամասն տես՝ G.Antonius, The Arab Awaeking. The Story of the Arab National Movement. N.Y.,1946 p. 144-115, Э. Тума, Национально-освободительное движение и проблемы арабского единства., М., 1977, с. 116-117.
9. Resolution Votees par le Congres Arabe, տեքստը տես՝ Zein N. Zeine, նշվ. աշխ., էջ 135-136 (Appendix C); Հ.Ս.Սարգսյան, Ա.Հ.Թոփալյան, Արաբական մի շարք փաստաթղթեր արաբա-թուրքական հարաբերությունների վերաբերյալ, - Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. VI. Ե.,1974, էջ, 222-223.
10. Նույն տեղում.
11. Նույն տեղում.
12. Л.Н.Котлов, Становление национально-освободительного движения в арабских странах Азии 1908-1914гг., М., 1986, с. 306.
13. Э. Тума, նշվ. աշխ., էջ 117.
14. Э.Ю.Гасанова, Идеология буржуазного национализма в Турции в период младотурок. (1908-1914г.г.), Б., 1966, с.43-44.
15. G.Antonius, նշվ. աշխ., էջ 107.
16. З.И.Левин, նշվ. աշխ., էջ 133.
17. Նույն տեղում.
18. F. Ahmad, The Young Turks. The Committee of Union and Progress in Turkish Polities, 1908-1914. Oxf. 1969, p.134
19. А.Д.Желтяков, Ю.А.Петросян, История просвещения в Турции, М., 1965, с.108-109.
20. Л.Н.Котлов, նշվ. աշխ., էջ 40.
21. А.Д.Желтяков, Ю.А.Петросян, նշվ. աշխ., էջ 108-109.
22. Х.З.Габидуллин, Младотурецкая революция, М., 1936, с. 145
23. Ռ.Ա.Սաֆրաստյան, Օսմանիզմի դոկտրինան երիտթուրքերի կուսակցական փաստաթղթերում (1908-1916 թ.թ.), Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. XV, Ե, 1989, էջ 244.
24. Նույն տեղում.
25. М.С. Лазарев, Крушение турецкого господства на Арабском Востоке, М.,1960, с.13.

ԳՈՌ ԳԵՎՈՐԳՅԱՆ

1982Թ. ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԱԳՐԵՍԻԱՆ ԼԻԲԱՆԱՆՈՒՄ ԵՎ ԵԳԻՊՏՈՍԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ

1970-80-ական թթ. Լիբանանը արևմտական այն երկրներից էր, որի տարածքից պաղեստինցիները Իսրայելի դեմ զինված պայքար մղելու հնարավորություն ունեին[1]:

Որպես շարժառիթ օգտագործելով 1982թ. հունիսի 3-ին Լոնդոնում իսրայելյան դեսպան Շլոմո Արգովի դեմ անհաջող մահափորձը[2], հունիսի 5-ին Թել-Ավիվը որոշում ընդունեց ռազմական գործողություն իրականացնել՝ նպատակադրվելով ոչնչացնել կամ Իսրայելի սահմաններից հնարավորինս հեռացնել Լիբանանում տեղակայված Պաղեստինի Ազատագրության Կազմակերպության (ՊԱԿ) ռազմաքաղաքական կառույցները[3]: Հունիսի 6-ին իսրայելյան 80 հազարանոց զորամիավորումները ներխուժեցին Լիբանան՝ սկսելով «Խաղաղություն Գալիլեայինն» ռազմական օպերացիան[4]:

Իսրայելյան ագրեսիան Լիբանանում կամ ինչպես հաճախ այն անվանում են «արաբ-իսրայելյան 5-րդ պատերազմը» առավել երկարատև (78օր) արաբ-իսրայելյան պատերազմներից էր, որը ծանր հարված հասցրեց Պաղեստինյան դիմադրության շարժմանը (ՊԴՇ):

Լիբանանյան պատերազմի առաջին փուլը սկսվեց հունիսի 6-ին[5]: Համաձայնեցնելով

իր գործողությունները ԱՄՆ-ի հետ[6], Թել-Ավիվը ձգտում էր ոչնչացնել ՊԱԿ-ի ռազմաքաղաքական կառույցները Լիբանանում, լիբանանյան կառավարության հետ համատեղ հսկողություն սահմանել երկրի ողջ տարածքում, ինչպես նաև նպաստել այնտեղ տեղակայված սիրիական զորամիավորումների դուրս բերմանը:

Այդ շրջանում բացի սիրիական զորքերից, որոնց քանակը մոտ 30 հազար էր, 1976 թ-ից գտնվում էին նաև միջարաբական ուժեր, որոնց կազմում կային՝ Եմենի Արաբական Հանրապետության (ԵԱՀ), Եմենի Ժողովրդական Դեմոկրատական Հանրապետության (ԵԺԴՀ), Սաուդյան Արաբիայի, Արաբական Միացյալ Էմիրությունների (ԱՄԷ), Սուդանի և Լիբիայի ռազմական ստորաբաժանումները[7]: Լիբանանում էր

գտնվում նաև իրաքյան 1500 հոգուց բաղկացած մի զորախումբ, որը չէր մտել միջարաբական ուժերի մեջ[8]:

Իսրայելյան և սիրիական զորքերի միջև առաջին բախումը տեղի ունեցավ հունիսի 7-ին Խասբաի քաղաքի մոտ`: ԱՄՆ-ի միջնորդությամբ Դամասկոսին առաջարկություն արվեց իր հսկողության տակ վերցնել ՊԱԿ-ի ռազմական կառույցները և թույլ չտալ նրանց հրթիռակոծել Արևելյան Գալիլեան[10]: Ի պատասխան Սիրիայի մերժմանը, իսրայելյան ռազմաօդային ուժերը ոչնչացրեցին 34 սիրիական կործանիչ[11]:

Հունիսի 11-ին ԱՄՆ-ի նախագահ Ռ.Ռեյգանը դիմեց իսրայելյան կառավարությանը` կոչ անելով վերջ դնել ռազմական գործողություններին[12]: Հունիսի 15-ին իսրայելյան ագրեսիան Լիբանանում դատապարտեց ԽՍՀՄ-ը[13]: 1982թ. հունիսի 11-ի լույս 12-ի գիշերը Իսրայելի առաջարկությամբ հրադադար հաստատվեց: Այդ հրադադարով էլ ավարտվեց պատերազմի առաջին փուլը, որի արդյունքում իսրայելյան հսկողության տակ հայտնվեց լիբանանյան տարածքի գրեթե կեսը` մոտ 4,5 հազար կմ^2, որտեղ ոչնչացվել էին ՊԱԿ-ի ռազմաքաղաքական կառույցները[14]:

1982թ. հունիսի 6-ին ՄԱԿ-ի Անվտանգության Խորհուրդը (ԱԽ) ընդունեց 508 բանաձևը, որը պահանջում էր պատերազմող կողմերին դադարեցնել կրակը, իսկ Իրայելը պետք է զորքերը անհապաղ դուրս բերեր Լիբանանից[15]: Հաջորդ օրը ԱԽ ընդունեց 509 բանաձևը, որտեղ ևս դատապարտում էր Իսրայելի գործողությունները Լիբանանում[16]: Միայն հունիս-սեպտեմբեր ամիսների ընթացքում ընդունվել էր Իսրայելին դատապարտող շուրջ 9 բանաձև էր ընդունվել[17]:

Իրենց հերթին արաբական երկրները միջարաբական հակասությունների հետևանքով չկարողացան հստակ դիրքորոշում զբաղեցնել լիբանանյան ճգնաժամի նկատմամբ: Միայն հունիսի 26-ին Թունիսում հնարավոր եղավ Արաբական Պետությունների Լիգայի-ի (ԱՊԼ) նիստ գումարել արտգործնախարարների մակարդակով: Մասնակիցները չընդունեցին Սիրիայի առաջարկը` համատեղ գործողություններ սկսել Իսրայելի դեմ Լիբանանում և մի շարք տնտեսական պատժամիջոցներ ընդունել ԱՄՆ-ի նկատմամբ[18]: Տարաձայնությունների հետևանքով հնարավոր եղավ միայն ձևավորել հատուկ կոմիտե` ԱՄՆ, Անգլիա, Ֆրանսիա, Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն և ԽՍՀՄ գործուղելու նպատակով, ինչը միտված էր լիբանանյան ճգնաժամից դուրս գալու ճանապարհ հայթելուն:

Իսրայելյան ագրեսիային դիմադրելու նպատակով իրենց ռազմական ստորաբաժանումները գործուղեցին նաև Լիբիան, ՍԺԴՀ-ն, ԵԱՀ-ն և Ալժիրը, որոնց ցույց տված օգնությունը, սակայն, աննշան էր[19]: Լիբանանում հակաիսրայելյան ուժերին օժանդակելու նպատակով 1979թ. կազմավորված Համաարաբական ժողովրդական կոնգրեսը 1982թ. հունիսի

12-ին Տրիպոլիում կայացած արտահերթ հանդիպմանը որոշում ընդունեց կամավորներ հավաքագրել Լիբանան գործուղելու նպատակով[20]:

Լիբանանյան ճգնաժամի կանխարգելման գործում մեծ ներդրում ունեցավ Եգիպտոսը, որն ի տարբերություն արաբական մյուս երկրների (բացառությամբ Սիրիայի) հակաիսրայելյան լուրջ գործունեություն ծավալեց:

1982թ. մայիսի 28-ին անտեսելով ՊԱԿ-ի հետ հարաբերությունների բացակայության հանգամանքը, Եգիպտոսի նախագահ Մուբարաքը տեղեկացրեց Արաֆաթին, որ իր ունեցած տվյալների համաձայն, Իսրայելը մոտ ապագայում հարձակում է պատրաստում Լիբանանի վրա: Ընդ որում Եգիպտոսի նախագահը նշում էր, որ Թել-Ավիվի վերջնական նպատակն է՝ Բեյրութի գրավումը[21]: Նման տեղեկություններ հայտնել էր Արաֆաթին նաև Հորդանանի թագավոր Հուսեյնը[22]: Իսրայելյան ագրեսիայի առաջին օրերին Եգիպտոսում ընդդիմությունը նախագահից պահանջել էր խզել Իսրայելի հետ բոլոր տեսակի հարաբերությունները, ինչին սակայն Մուբարաքը չդիմեց՝ բավարարվելով միայն Թել-Ավիվին դժգոհություն հայտնելով[23]:

Լիբանան իսրայելյան ներխուժման հաջորդ օրը, հակառակ Եգիպտոսի հետ դիվանագիտական հարաբերությունների բացակայության հանգամանքին, Կահիրե ժամանեց Մարոկկոյի արտաքին գործերի նախարար Մուհամմադ Բուսեթան՝ նպատակ ունենալով քննարկել Մուբարաքի հետ Լիբանանում ստեղծված ծանր իրավիճակը[24]: Բուսեթան արաբական երկրներից առաջին բարձրաստիճան պաշտոնյան էր, որն այցելել էր Կահիրե՝ 1979թ. եգիպտա-իսրայելյան հաշտության պայմանագրի ստորագրումից հետո[25]:

Նպատակադրվելով լիբանանյան ճգնաժամի կարգավորման գործում նախաձեռնությունը վերցնել իր ձեռքը, Մուբարաքը կոչ արեց համաարաբական գագաթնաժողով հրավիրել ստեղծված իրավիճակից դուրս գալու ճանապարհներ որոնելու համար, որին սակայն արձագանքեցին միայն Հորդանանը և Սուդանը[26]: Եգիպտական քաղաքական գործիչների մեծամասնությունը հանդես եկան Թել-Ավիվի խիստ՝ քննադատությամբ պահանջելով Իսրայելից անհապաղ զորքերը դուրս բերել Լիբանանից:

Հայտնելով իր վրդովմունքը իսրայել-ամերիկյան փոխհամաձայնության նկատմամբ՝ Մուբարաքը մերժեց ԱՄՆ-ի Լիբանան միացյալ եգիպտա-ամերիկյան զորքեր ուղարկելու առաջարկը[27]: Հունիսի 8-ին իսրայելյան ագրեսիան Լիբանանում դատապարտել էր Եգիպտոսի Ժողովրդական ժողովը, որից հետո Մուբարաքը Ռեյգանին և Իսրայելի վարչապետ Բեգինին մի քանի բանավոր և գրավոր ուղերձներ հղեց, որտեղ կոչ էր անում վերջ դնել արյունահեղությանը[28]:

Եգիպտոսի արտաքին գործերի պետնախարար Բուտրոս Ղալին հայտարարել էր, որ Կահիրեն դեմ է Լիբանանում «իսրայել-ամերիկյան ռազմավարական համագործակցությանը Լիբանանում և պաղեստինյան հարցի նման ձևով լուծմանը»[29]: Համաձայն եգիպտական զանգվածային լրատվության միջոցների Մուբարաքը վարձում էր համոզել Վաշինգտոնին գաղտնի բանակցություններ սկսել ՊԱԿ-ի հետ[30]: Եգիպտոսը համոզված էր, որ միայն անմիջական բանախոսության միջոցով ԱՄՆ-ի և ՊԱԿ-ի, իսկ հետո նաև Իսրայելի և ՊԱԿ-ի միջև հնարավոր կլինի իրական առաջխաղացման հասնել մերձավորարևելյան հակամարտության կարգավորման գործում:

Իսրայելյան գործողությունները Լիբանանում անվանելով բարբարոսություն՝ Մուբարաքը միաժամանակ ձգտում էր չափից ավել խիստ դիրքորոշում չզբաղեցնել, ցույց տալով, որ, այդուամենայնիվ, Կահիրեն պատրաստ է շարունակել բանակցությունները Թել-Ավիվի հետ պաղեստինյան ինքնավարության վերաբերյալ քեմփդևիդյան համաձայնագրերի շրջանակներում[31]:

1982թ. օգոստոսին Կահիրեում տեղի ունեցան ՊԱԿ-ի գործկոմի անդամ Ա.Ս.Դաջանիի և եգիպտական ղեկավարության միջև բանակցություններ, որոնց նպատակն էր պատերազմը դադարեցնելու ծրագիր մշակել[32]: Ձգտելով ցույց տալ Եգիպտոսի նվիրվածությանը «արաբական գործին»՝ Մուբարաքը «կշտամբեց» Սպիտակ տանը, որ վերջինս համապատասխան միջոցներ չէր ձեռնարկում պատերազմի դադարեցման համար[33]: Լիբանանում ստեղծված իրավիճակի համար Եգիպտոսը մեղադրեց նաև Սիրիային, փաստարկելով, որ այդ երկրում այդ երկրում զորքեր պահելով Դամասկոսը մեկ անգամ ևս արհեստական լարվածություն է ստեղծում այդ երկրում[34]:

«Արաբ-իսրայելյան 5-րդ պատերազմի» դադարեցման գործում իր ջանքերին ավելի մեծ նշանակություն տալու նպատակով Եգիպտոսը դիմել էր Լիբանանի բոլոր քաղաքական ուժերին՝ կոչ անելով հանուն միավորվել արտաքին վտանգի առջև հայրենիքի անկախության պահպանմանը[35]:

1982թ. հունիսի 12-ին սկսվեց պատերազմի 2-րդ փուլը, և նույն օրը երեկոյան Իսրայելը հայտարարեց կրակի դադարեցման մասին, որը խախտվեց այս անգամ հունիսի 13-ին սիրիական զորքերի կողմից[36]: Սակայն շնորհիվ ԱՄՆ-ի հատուկ բանագնաց Ֆիլիպ Հաբիբի միջնորդությամբ, հնարավոր եղավ հրադադար հաստատել, որը սակայն նույնպես չէր կարող երկարատև լինել:

Երկրորդ հրադադարի ժամանակաշրջանում իսրայելյան բանակը ամբողջովին շրջապատել էր արևմտյան Բեյրութը և միացել արևելյան Բեյրութում քրիստոնեական բանակի հետ: Ընդհանուր առմամբ Թել-Ա-

վիվի հսկողության տակ էր հայտնվել Լիբանանի տարածքի մոտ 40%-ը[37]:

Հունիսի 21-ին իսրայելցիները գբավեցին Բեյրութի օդանավակայանի հարավային հատվածը: 60 ժամ տևողությամբ անդադար մարտերից հետո, իսրայելյան ստորաբաժանումները կարողացան ետ շպրտել սիրիական զորքերը դեպի Դամասկոսի մայրուղի: Դրանից հետո կրակը կյանկին դադարեց: Իսրայելը իր հերթին հաստատեց Բեյրութի ծովային և ցամաքային շրջափակում: Դրանով ավարտվեց պատերազմի երկրորդ փուլը, որին հաջորդեց երրորդը՝ Բեյրութի պաշարումը, որի ընթացքում Իսրայելը պայտադրեց ՊԱԿ-ի մարտիկներից և սիրիական 25-րդ բրիգադի մնացորդներին լքել Բեյրութը:

Հունիսի 29-ին Ռեգինը հայտարարեց, որ այդուամենայնիվ հնարավորություն կտա Բեյրութում պաշարվածներին Կարմիր խաչի պաշտպանության ներքո դուրս բերել և տեղափոխել Սիրիա[38]:

Այդ նույն ժամանակ Բեյրութում պաշարված Արաֆաթը ամերիկյան կոնգրեսականների հետ հանդիպման ժամանակ հայտարարեց, որ պատրաստ է ընդունել ՄԱԿ-ի Անվ-ի 242[39] բանաձևը, որի համաձայն Իսրայելը պետք է դուրս բերի իր զորքերը արաբական բռնազավթված տարածքներից:

Հուլիսի կեսերին Հաբիբը սկսեց բանակցել լիբանանյան կառավարության հետ՝ նպատակադրվելով դուրս բերել ՊԱԿ-ի ստորաբաժանումները և սիրիական զորքերը Լիբանանից: Դա առաջին դեպքն էր, երբ լիբանանյան կառավարությունը պաշտպանում էր Իսրայելի և ԱՄՆ-ի դիրքորոշումը այդ հարցում[40]: Իսրայելը հայտարարեց, որ ունենալով արևմտյան Բեյրութի բռնազավթման հնարավորությունը, նա միևնույն ժամանակ պատրաստ է բանակցել: Սակայն օգոստոսի 4-ին ի պատասխան պաղեստինյան հրետանակոծությանը, իսրայելյան զորքերը գրավեցին հարավային Բեյրութի երկու բնակավայր և օդանավակայանի հյուսիսային հատվածը:

Շուտով ՊԱԿ-ի պատրաստակամությունը դուրս գալ Բեյրութից մտավ փակուղի, քանի որ պարզ դարձավ, որ արաբական երկրները պատրաստ չէին ընդունել պաղեստինցի մարտիկներին: Միայն այն բանից հետո, երբ Սաուդյան Արաբիան խոստացավ համապատասխան ֆինանսական օգնություն հատկացնել, արաբական ոլոր երկրներ իրենց համաձայնությունը տվեցին ընդունել ՊԱԿ-ի մարտիկներին[41]:

Ցանկանալով դյուրացնել ՊԱԿ-ի ինքնակամ հեռացումը Բեյրութից, 1982թ. օգոստոսի կեսին ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդում Եգիպտոսը և Ֆրանսիան առաջ քաշեցին բանաձև, որով կոնկրետ ճանաչվում էր պաղեստինցիների իրավունքը և, որը ներկայացնում էր մերձավորարևելյան կարգավորման ծրագիր՝ շատ ավելի ընդարձակ ձևով քան պահանջում էր բուն լիբանանյան խնդիրը: Ծրագիրն իր մեջ ներ էր առնում Իս-

ՍՍՀՄ-ից, Մեզհյուսյոց, Ֆրանսիայից և Իտալիայից Լիքսացած ժամա-
նած Ոուբաուբը, որ ստորաբաժանումներն ուրեն բանակ չի եղաստան
Կեսոլ Հավասկոր ոլուսիների բանակ Իսուսյեն հեռ բաշտեցրոց Իսուսյեն
Ֆեդերատիվ Հանրապետության Վերխիվային Հայաստանի Ազգային
Արխիվ, Ֆ. 1982ք. օգոստոսի 15։ Մեզհյուսյոց Ֆրանսիայից Լիքսացած ժամա-
նակ Ոուբաուբը հայտարարեց, որ ինքն ուրեն Լիքսացած ժամանակ
Ֆեդերատիվ Հանրապետության Վերխիվային Հայաստանի Ազգային
Արխիվ, Ֆ. 1982ք. օգոստոսի 15։ Մեզհյուսյոց Ֆրանսիայից Լիքսացած ժամա-
նակ Ոուբաուբը հայտարարեց, որ ինքն ուրեն Լիքսացած ժամանակ
Ֆեդերատիվ Հանրապետության Վերխիվային Հայաստանի Ազգային
Արխիվ, Ֆ. 1982ք. օգոստոսի 15։ Մեզհյուսյոց Ֆրանսիայից Լիքսացած ժամա-
նակ Ոուբաուբը հայտարարեց, որ ինքն ուրեն Լիքսացած ժամանակ
Ֆեդերատիվ Հանրապետության Վերխիվային Հայաստանի Ազգային
Արխիվ, Ֆ. 1982ք. օգոստոսի 15։ Մեզհյուսյոց Ֆրանսիայից Լիքսացած ժամա-
նակ Ոուբաուբը հայտարարեց, որ ինքն ուրեն Լիքսացած ժամանակ

Մեզհյուսյոց Ֆրանսիայից Լիքսացած ժամանակ Ոուբաուբը հայտարարեց, որ ինքն ուրեն Լիքսացած ժամանակ Ֆեդերատիվ Հանրապետության Վերխիվային Հայաստանի Ազգային Արխիվ, Ֆ. 1982ք. օգոստոսի 15։ Մեզհյուսյոց Ֆրանսիայից Լիքսացած ժամանակ Ոուբաուբը հայտարարեց, որ ինքն ուրեն Լիքսացած ժամանակ Ֆեդերատիվ Հանրապետության Վերխիվային Հայաստանի Ազգային Արխիվ, Ֆ. 1982ք. օգոստոսի 15։ Մեզհյուսյոց Ֆրանսիայից Լիքսացած ժամանակ Ոուբաուբը հայտարարեց, որ ինքն ուրեն Լիքսացած ժամանակ

Ֆեդերատիվ Հանրապետության Վերխիվային Հայաստանի Ազգային Արխիվ, Ֆ. 1982ք. օգոստոսի 15։ Մեզհյուսյոց Ֆրանսիայից Լիքսացած ժամանակ Ոուբաուբը հայտարարեց, որ ինքն ուրեն Լիքսացած ժամանակ Ֆեդերատիվ Հանրապետության Վերխիվային Հայաստանի Ազգային Արխիվ, Ֆ. 1982ք. օգոստոսի 15։ Մեզհյուսյոց Ֆրանսիայից Լիքսացած ժամանակ Ոուբաուբը հայտարարեց, որ ինքն ուրեն Լիքսացած ժամանակ

Ֆեդերատիվ Հանրապետության Վերխիվային Հայաստանի Ազգային Արխիվ, Ֆ. 1982ք. օգոստոսի 15։ Մեզհյուսյոց Ֆրանսիայից Լիքսացած ժամանակ Ոուբաուբը հայտարարեց, որ ինքն ուրեն Լիքսացած ժամանակ Ֆեդերատիվ Հանրապետության Վերխիվային Հայաստանի Ազգային Արխիվ, Ֆ. 1982ք. օգոստոսի 15։ Մեզհյուսյոց Ֆրանսիայից Լիքսացած ժամանակ Ոուբաուբը հայտարարեց, որ ինքն ուրեն Լիքսացած ժամանակ

Ֆեդերատիվ Հանրապետության Վերխիվային Հայաստանի Ազգային Արխիվ, Ֆ. 1982ք. օգոստոսի 15։ Մեզհյուսյոց Ֆրանսիայից Լիքսացած ժամանակ Ոուբաուբը հայտարարեց, որ ինքն ուրեն Լիքսացած ժամանակ Ֆեդերատիվ Հանրապետության Վերխիվային Հայաստանի Ազգային Արխիվ, Ֆ. 1982ք. օգոստոսի 15։ Մեզհյուսյոց Ֆրանսիայից Լիքսացած ժամանակ Ոուբաուբը հայտարարեց, որ ինքն ուրեն Լիքսացած ժամանակ

Ֆեդերատիվ Հանրապետության Վերխիվային Հայաստանի Ազգային Արխիվ, Ֆ. 1982ք. օգոստոսի 15։ Մեզհյուսյոց Ֆրանսիայից Լիքսացած ժամանակ Ոուբաուբը հայտարարեց, որ ինքն ուրեն Լիքսացած ժամանակ Ֆեդերատիվ Հանրապետության Վերխիվային Հայաստանի Ազգային Արխիվ, Ֆ. 1982ք. օգոստոսի 15։ Մեզհյուսյոց Ֆրանսիայից Լիքսացած ժամանակ Ոուբաուբը հայտարարեց, որ ինքն ուրեն Լիքսացած ժամանակ

Ֆեդերատիվ Հանրապետության Վերխիվային Հայաստանի Ազգային Արխիվ, Ֆ. 1982ք. օգոստոսի 15։ Մեզհյուսյոց Ֆրանսիայից Լիքսացած ժամանակ Ոուբաուբը հայտարարեց, որ ինքն ուրեն Լիքսացած ժամանակ Ֆեդերատիվ Հանրապետության Վերխիվային Հայաստանի Ազգային Արխիվ, Ֆ. 1982ք. օգոստոսի 15։ Մեզհյուսյոց Ֆրանսիայից Լիքսացած ժամանակ Ոուբաուբը հայտարարեց, որ ինքն ուրեն Լիքսացած ժամանակ

Ֆեդերատիվ Հանրապետության Վերխիվային Հայաստանի Ազգային Արխիվ, Ֆ. 1982ք. օգոստոսի 15։ Մեզհյուսյոց Ֆրանսիայից Լիքսացած ժամանակ Ոուբաուբը հայտարարեց, որ ինքն ուրեն Լիքսացած ժամանակ Ֆեդերատիվ Հանրապետության Վերխիվային Հայաստանի Ազգային Արխիվ, Ֆ. 1982ք. օգոստոսի 15։ Մեզհյուսյոց Ֆրանսիայից Լիքսացած ժամանակ Ոուբաուբը հայտարարեց, որ ինքն ուրեն Լիքսացած ժամանակ

դուրս բերումը, որն ավարտվեց սեպտեմբերի 1-ին[49]: Մոտ 8.485 պաղեստինյան մարտիկներ և սիրիական 25-րդ բրիգադային մնացորդները (2 հազար մարդ) տեղաբաշխվեցին Սիրիա, Ալժիր, Թունիս, Հարավային Եմեն, Սուդան, Իրաք և Հորդանան[50]: Պաշարվածների դուրս բերումից հետո, սեպտեմբերի 1-ին Իսրայելը պաշտոնապես հայտարարեց, որ «Խաղաղություն Գալիլեայինն» ռազմական գործողությունը ավարտված է:

Սեպտեմբերի սկզբին Լիբանանի նորընտիր նախագահ Բաշիր Ժմայելը բանակցություններ սկսեց Իսրայելում Բեգինի հետ, սակայն սեպտեմբերի 14-ին սպանվեց: Բաշիրի սպանության հաջորդ օրը՝ սեպտեմբերի 15-ի գիշերը Շարոնի հրամանով իսրայելյան բանակը մտավ արևմտյան Բեյրութ[51]: Թել-Ավիվը հայտարարել էր, որ ծգտում էր կանխել քաոսային իրավիճակը, որը կարող էր ծագել նախագահի սպանության հետևանքով, և որ հակառակ դուրս բերման մասին համաձայնագրի Բեյրութում շարունակում էին մնալ 2 հազար պաղեստինյան մարտիկներ, որոնք իրենց տրամադրության տակ ունեին ծանր հրետանի ուներ[52]: Արդյունքում ձևավորվեց մի իրավիճակ, երբ իսրայելյան բանակը հսկում էր ողջ արևմտյան Բեյրութը, բացառությամբ պաղեստինյան երկու ճամբարները՝ Սաբրան և Շատիլան[53]:

1982թ. սեպտեմբերի վերջին, Սաբրայի և Շատիլայի դեպքերից անմիջապես հետո, Մուբարաքը ետ կանչեց Թել-Ավիվից Եգիպտոսի դեսպանին[54]: Նախագահը հայտարարել էր, որ չի հանդուրժի Իսրայելի կողմից արաբական երկրների իրավունքների այդ կարգի ոտնահարում: Մուբարաքը նույնիսկ «սպառնաց» ԱՄՆ-ի հարաբերությունների վատթարացմամբ, եթե Վաշինգտոնը փորձեր իր դեսպանությունը տեղափոխել Թել-Ավիվից Երուսաղեմ, ինչը այդ օրերին քննարկման առիթ էր դարձել[55]:

Եգիպտոսի արտաքին գործերի նախկին պետնախարար Բ.Ղալին գրում էր, որ Լիբանանում Իսրայելի կողմից կազմակերպված ջարդը հիասթափեցրեց Եգիպտոսում Թել-Ավիվի հետ հարաբերությունների պահպանման կողմնակիցներին[56]:

Փաստորեն Եգիպտոսը դե-ֆակտո սառեցրեց Իսրայելի հետ հարաբերությունները և առաջ քաշեց հետևյալ պահանջները, որոնց կատարումից հետո միայն Կահիրեն ենթադրում էր եգիպտա-իսրայելյան դիվանագիտական հարաբերությունների «վերականգնում»[57].

- իսրայելյան զորքերի անհապաղ դուրս բերումը հարավային Լիբանանից,
- Իսրայելի համաձայնությունը համապարփակ բանակցություններ սկսելու պաղեստինյան խնդրի կարգավորման նպատակով պաղեստինցիների մասնակցությամբ:

Մուբարաքը մեղադրեց իսրայելյան կառավարությանը նաև սրսղեստինցիների նկատմամբ ոչնչացման քաղաքականության անցկացման մեջ[58]:

1982թ. սեպտեմբերի 29-ին իսրայելյան զորքերը դուրս բերվեցին Բեյրութից՝ քաղաքի վերահսկողությունը հանձնելով լիբանանյան բանակին և նոր ժամանած միջազգային խաղաղարար ստորաբաժանումներին:

1983թ. մայիսի 17-ին Իսրայելի և Լիբանանի միջև ստորագրվեց բազմակողմանի հարաբերությունների վերաբերյալ համաձայնագիր[59]: Համաձայնագրով նախատեսվում էր Լիբանանի օդային, ջրային, ցամաքային տարածքի լիբանանա-իսրայելյան համատեղ հսկողության սահմանում[60]: Ուշագրավ է այն հանգամանքը, որ Ա.Ժմայելը[61] իր ստորագրությունը համաձայնագրի տուկ չդրեց, հավանաբար վախենալով արժանանալ Եգիպտոսի նախկին նախագահ Անվար Սադաթի ճակատագրին[62]:

Ավելին՝ 1984թ. մարտի 5-ին Ա.Ժմայելը անձամբ չեղյալ հայտարարեց լիբանանա-իսրայելյան համաձայնագիրը: Ստորագրված համաձայնագիրը արաբական երկրներից հավանության արժանացրեց միայն Եգիպտոսը՝ ԱՄՆ-ի տնտեսական ճնշման տակ[63], Սիրիան գնահատեց այն, որպես «սպառնալիք սեփական անվտանգությանը»[64]: Արաբական այսպես կոչված առաջադեմ երկրները բոյկոտեցին համաձայնագիրը, իսկ պահպանողականները՝ Սաուդյան Աբաբիայի գլխավորությամբ ձեռնպահ մնացին[65]:

Նպատակադրվելով խոչընդոտել Լիբանանում պաղեստինյան ռազմական ներկայության վերականգնմանը, Իսրայելը նպաստում էր սլաղեստինա-շիական տարաձայնությունների սրմանը՝ օգտագործելով այն թեզը, թե Լիբանանում գլխավոր վտանգը գալիս է ՊԱԿ-ի ներկայությունից, այլ ոչ թե իսրայելցիներից: 1985թ. մայիսին արևմտյան Բեյրութում զինված բախումներ սկսվեցին շիական «Ամալ» կազմակերպության և պաղեստինցիների միջև: Իրավիճակը փոքր ինչ շտկվեց միայն 1987թ. մայիսին, երբ սիրիական զորքերը մտան Արևմտյան Բեյրութ[66]: Դրա հետ միասին 1987թ. մայիսին լիբանանյան խորհրդարանը չեղյալ հայտարարեց 1969թ. Կահիրեի համաձայնագիրը, որի հիման վրա օրինականացվել էր ՊԱԿ-ի ռազմաքաղաքական կառույցների տեղակայումը Լիբանանում[67]: Իսրայելյան զորքերը շուրջ 18 տարի մնացին Թել-Ավիվի կողմից Լիբանանի հարավում ստեղծված «անվտանգության գոտում»: Իսրայելյան քաղաքական գործիչները ընդունեցին, որ «Խաղաղություն Գալիլեայի» ռազմական գործողությունը չլուծեց անաբեկչությունից ապահովման և անվտանգության պահպանման հարցը, թեպետև նվազեցրեց նրա սպառնալիքը Լիբանանի տարածքից: Այդ իրավիճակը պահպանվեց մինչև 2000թ. մայիսի 24-ը, երբ Էհուդ Բարաքի կառավարությունը որոշեց դուրս բերել իր զորքերը Լիբանանից[68]:

Կահիրեի դիրքորոշումը Լիբանանում իսրայելյան ագրեսիայի նկատմամբ ևս մեկ կարևորագույն քայլ[69] էր դեպի «արաբական ընտանիք» վերադարձի գործողների շարքում: Այդ առումով չափազանց կարևոր և նպաստավոր դեր կատարեցին Իսրայելի հետ հարաբերությունների առկայությունը, որը իբրև ճնշման յուրահատուկ լծակ օգտագործվում էր եգիպտական ղեկավարության կողմից՝ որպես Թել-Ավիվի հետ հարաբերությունների խզման սպառնալիք:

Իսրայելյան ագրեսիայի զոհ դարձած շուրջ 70 հազար սպանվածներ, որոնցից մոտ 60 հազարը խաղաղ բնակիչներ էին[70]: Պաղեստինյան 14 թաղամասեր ընդհանրապես ջնջվեցին հողի երեսից: Ինչ վերաբերում է իսրայելյան բանակին, ապա տարբեր տվյալների համաձայն այն կորցրել էր 500-2.000 զինվոր և սպա[71]:

Եգիպտոսի դիրքորոշումը «արաբ-իսրայելյան 5-րդ պատերազմի» նկատմամբ արաբական աշխարհում Կահիրեի քաղաքական դերի վերարժեվորման կարևորագույն գործոններից էր: Չնայած Իսրայելի հետ բազմակողմանի հարաբերությունների առկայությանը, Մուբարաքը կսրողացավ Եգիպտոսը ներկայացնել, որպես արաբական աշխարհի կարևոր մաս, ոլ կոչված է էական դերսկատարություն ունենալ մերձավորարևելյան գործընթացներում:

GOR GEVORGYAN

THE ISRAELI AGGRESSION IN LEBANON IN 1982 AND THE POSITION OF EGYPT

In summer 1982 Israel invaded Lebanon for annihilating the militant and political structures of Palestinian Liberation Organization based in that country. Egypt being isolated in the Arab world because of the Egypt-Israel peace treat signed in 1979, as a result of his effective position toward the aggression, could restore his previous political role in the Arab family. Cairo condemned the actions of Israel in Lebanon and the expansionistic policy of Tel-Aviv.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

I. Լիբանանում պաղեստինյան ռազմաքաղաքական կառույցների տեղակայման համար որպես իրավաբանական հիմք էր հանդիսանում 1969թ. նոյեմբերի 3-ի Կահիրեում լիբանանյան բանակի հրամանատար՝ գեներալ Բուստանիի և ՊԱԿ-ի նախագահ Յասեր Արաֆաթի միջև ստորագրված համաձայնագիրը: Մանրամասն տես՝ Հարությունյան Լ., Պաղեստինյան քաղաքական և ռազմական կառույցները Լիբանանում 1958-1975թթ., Մերձավոր Արևելք, Եր., 2000, էջ 83; Khalidi W., Conflict and Violence in Lebanon. Confrontation in the Middle East, Cambrige, 1979, p. 175-187.

2. Մահափորձը կազմակերպվել և իրագործվել էր ՊԱԿ-ից արոհված Աբու Նիդալի գլխավորած խմբի կողմից: Մանրամասն տես՝ Копин В.С., Некоторые аспекты внешней политики стран Северной Африки, Страны Северной Африки, М., 1984, էջ 65; Pogany I., Arab League and Peacckeeping in the Lebanon. L., 1987. p. 142.
3. Эпштейн А.Д., Бесконечное противостояние, М., 2000, էջ 106.
4. Հովհաննիսյան Ն.Հ.. Լիբանանյան ճգնաժամը և Լիբանանի հայ համայնքի դիրքորոշումը, Եր., 1982, էջ 74: Gabriel R.A., Operation Peace for Galilee: The Israeli-PLO in Lebanon. N.Y., 1984. p. 39.
5. Իսրայելյան հատուկ ծառայությունների տվյալների համաձայն Լիբանանում նախքան իսրայելյան հարձակումը գտնվում էին 10-12 հազար պաղեստինյան մարտիկներ: Մանրամասն տես՝ Мирский Г.И., Ливан в 80-е годы, М., 1987, էջ 11.
6. Համաձայն իտալական «Էուրոպեո» ամսագրին Իսրայելի պաշտպանության նախարար Արիել Շարոնը Լիբանանի վրա հարձակումը համաձայնեցրել էր ԱՄՆ-ի պետքարտուղարի և պաշտպանության նախարարի հետ: Մանրամասն տես՝ Дмитриев Е., Ближневосточный конфликт, Международный ежегодник: политика и экономика, М., 1983, էջ 215; Speigal S.L.. The Other Arab-Israeli Conflict: Making American s Middle East Policy from Truman to Reagan. Chicago 1983. p. 291. Բացի այդ համաձայն ամերիկյան ռազմական մասնագետ Բ.Քաուֆմանի Լիբանան ներխուժելու իսրայելյան ծրագրերի մասին ԱՄՆ-ի պետքարտուղարը տեղեկացել էր դեռ Եգիպտոսի նախագահ Անվար Սադաթի հուղարկավորման ժամանակ (1981թ. հոկտեմբերի 6): Մանրամասն տես՝ Կարապետյան Ռ., Արաբական երկրների նոր և նորագույն պատմություն, Եր., 2003, էջ 226:
7. Новейшая история арабских стран Азии, М., 1988, էջ 139.
8. Арабский мир: три десятилетия независимого развития, М., 1990, էջ 306; Schlicht A., Libanon zwischen Burgerkrieg und Internationale Konflikt, Bonn 1986, S. 21.
9. Կարապետյան Ռ., նշվ.աշխ.. էջ 228:
10. Ahdel H.J., Der Libanon Krieg und seine Vorgeschichte, Blätter für Documents und Internationalen Politik, N 10, Köln 1983, SS. 1313-1314.
11. Ангели Ф., Война без перемирия, Кишенев, 1985, էջ 81.
12. Rubinstein A.Z., The Soviet Union and the Peace Process Since Camp David, Soviet Foreign Policy in a Changing World. N.Y., 1986. p. 781.
13. Правда, М., 15.17.1982.
14. After Lebanon: The Israeli-Palestinian Connection, N.Y. 1983, p. 13.
15. The United Nations and the Question of Palestine, Dp.: 861-41360, November 1985, p. 30; СССР и ближневосточное урегулирование 1967-1988 (Документы и материалы), М., 1988, էջ 464.
16. Палестинская проблема, Док. ООН, международных организаций и конференций, М., 1984, էջ 112.
17. Նույն տեղում, էջ 157.
18. The Palestinians between Terrorism and Statehood, Brington 1996, p.243.

19. Валькова Л.В., С.Аравия: нефть, ислам, политика, էջ 157.
20. Зейналов М., Обшеарабский народный конгресс: свершения и задачи, Азия и Африка сегодня, N 12, М., 1982., էջ 11.
21. Ден Кон-Шербок, Даур эль-Алами, Палестино-израильский конфликт: две точки зрения, М., 2002, էջ 256.
22. Նույն տեղում:
23. Ковтунович О., Египет и Ливанская проблема, Восток и современность, М., 1983, N 4, էջ 4.
24. ТАСС БПИ N 203, 15.10.1982.
25. Krämer G., Ägipten unter Mubarak: identität und nationales Interese, Baden-Baden 1986, S.168.
26. Ковтунович О., Նշվ.աշխ., 5; Haskins J., Leaders of the Middle East, Wash., 1985, p. 136.
27. Абдулмаджидов Р.С., Основные тенденции внешней политики Египта в эпоху Хосни Мубарака 1981-2001гг., Арабские страны Западной Азии и Северной Африки, вып. 5, М., 2002, էջ 272.
28. Звягельская И.Д., Конфликтная политика США на Ближнем и Среднем Востоке, М., 1990, էջ 123.
29. «Ար-Րայ», Կահիրե. 20.08.82, ТАСС Атлас, N 35, 27.08.1982.
30. «Ալ-Ահրամ», Կահիրե, 21.08.1982:
31. «Ալ-Ախբար», Կահիրե, 27.08.1982:
32. Washington Reports on Middle East Affairs, U.S.-Egypt Relations Coolers, September, 6, 1982, p. 4.
33. Симонян П., Владимиров В., Арабская Республика Египет, Международный ежегодник: политика и экономика, М., 1983, էջ 236.
34. Князев А.Г., Египет 80-х годов, М., 1986, էջ 48.
35. The Egyptian Point of View on International Issues. Egyptian Moves in International Arena. Arab Republic of Egypt, Ministry og Information, Cairo, 1985, p. 7.
36. Evron Y., War and the Intervention in Lebanon: The Israeli-Syrian Defference Dialogue, Baltomore, 1987, p. 151.
37. Хрезат Мохаммед Ахмад, Ливано-израильские отношения, Автореферат, М., 1998, էջ 6.
38. Juliana S.P., The Reagan Administration and the Palestinian Question, Wash., 1984, p. 68.
39. 242 բանաձևը ընդունվել էր 1967թ. նոյեմբերի 22-ին: Բանաձևում արաբական բոնազավթված տարածքների հարցում բացակայում էր կոնկրետությունը, ինչը Իսրայելին մանևրելու հնարավորություն էր տալիս, որի հետևանքով էլ ՊԱԿ-ը հրաժարվեց այն ընդունել:
40. Эпштейн А.Д., Նշվ.աշխ., էջ109.
41. Павлов А., Ястребы над Ливаном, М., 1990, էջ 33; Vatikiotis R.J., Relations between Egypt and Israel 1977-1982, Arab and Regional Politics in the Middle East, L., 1984, p. 236.
42. Performance report: Egypt and the Palestinian Question 1945-1983, Ministry of Foreign Affairs, Cairo 1984, p.64.

43. Моджорян Л.А., Терроризм: правда и вымысел, М., 1983, էջ 158; ТАСС Атлас, N 33, М., 13.08.1982.
44. The Christian Science Monitor. Boston. 02.08.1982.
45. ТАСС Атлас, N 33, М., 13.08.1982.
46. Андреасян Р., Гашев Б., Сейранян Б., Египет: наследство Садата и политика Мубарака, Восток и современность, вып.2, М., 1983, էջ 42.
47. The Christian Science Monitor. London. 05.08.1982.
48. Հարությունյան Լ.. Սիրիայի և Իսրայելի գործոնը լիբանանյան ճգնաժամում 1975-1990թթ.. Արևելք. Եր., 2001. էջ 80:
49. Кальвокоресси П., Мировая политика после 1945г., т. 1, М., 2000. էջ 513; Стоклицкий С.Л., Ливан: тревоги и надежды, М., 1988, էջ 7.
50. Республика Ирак в системе международных отношений (80-е годы 20в. — начало 21в.), М., 2002, էջ 213; Киселев В.И., Палестинская проблема в международных отношениях: региональный аспект, М., 1988, էջ 184.
51. Тысовский Ю., Преступление без наказания, М., 1983, էջ 5.
52. Краткая еврейская энциклопедия, т. 3, Иерусалим, 1986, էջ 823.
53. Мухсин Мухаммед Салих, Палестинский вопрос: его история ее развитие до 2000 года, М., 2002, էջ 57.
54. Gamneer M., Egyptian-Israeli Relations, Middle East Contemporary Survey. L., 1984, p. 186; Агарышев А., Ближний Восток: терроризм и его покровители, М., 1986, էջ 196; «Ալ-Ահրամ», Կահիրե, 21.09.1982. Հարկ է նշել, որ Եգիպտոսի դեսպանը Իսրայել վերադարձավ միայն 1986թ. եգիպտա-իսրայելյան մի շարք հակասությունների կարգավորումից հետո: Սևանրամասն տես՝ Stein K.W., Continuity and Change in Egyptian-Israeli Relations 1973-1997, Israeli Affairs, vol. 3, N 3, Tel-Aviv, 1999, p. 309.
55. Егорин А.З., Египет нашего времени, М., 1998, էջ 252.
56. Green S., Egypt in Middle East Affairs, Washington Reports on Middle East Affairs, January, 14, 1985, p. 5.
57. Шмелева Т.А., Особенности политического и экономического развития АРЕ 1981-2001, Востоковедный сборник, вып. 3, М., 2002, էջ 198.
58. www.rian.ra/riam/index.com
59. Text of the Lebanese-Israeli Troop Withdrawal Agreement, Journal of Palestine Studies, Summer, 1983, vol. 12, N 4, p. 97.
60. Նույն տեղում:
61. Բ.Ժմայելի սպանությունից մեկ շաբաթ անց, Լիբանանի նախագահի պաշտոնը զբաղեցրեց նրա եղբայր Ամին Ժմայելը,որը հայտնի էր Սիրիայի հետ իր ունեցած սերտ հարաբերություններով:
62. Валькова Л.В., Саудовская Аравия: нефть, ислам, политика, էջ 160.
63. Ежегодник, М., 1984, էջ 251. Հարկ է նշել, որ այդ տարի Եգիպտոսին ԱՄՆ-ի տրամադրած ֆինանսական օգնությունը հասել էր 2,59 մլրդ. դոլարի:
64. William Polk, The Arab World Today, Cambridge, 1991, p. 355.
65. Валькова Л.В., Саудовская Аравия и США: общность интересов и противоречия, Азия и Африка сегодня N 2, М., 1984., էջ 9.

66. Семеновых В., Ливанский кризис и Ближневосточный конфликт, М., 1986, էջ 34.
67. L'Orient – Le Jour, 22.05.1987. օգտագործված է ըստ՝ Семеновых В., նշվ.աշխ., էջ 35.
68. Эпштейн А.Д., նշվ.աշխ., էջ 114.
69. Առաջին քայլը դա Եգիպտոսի դիրքորոշումն էր իրաք-իրանյան պատերազմի նկատմամբ:
70. Медведко Л.И., Мины под оливами, М., 1984, էջ 151-152.
71. Медведко Л.И., Նշվ. աշխ., էջ 152:

ԼԵՎՈՆ ԶՈՒՐԱԲՅԱՆ

ՊԱՂԵՍՏԻՆԻ ՀԱՐՑԸ ՀՈՒՍԵՅՆ-ՄԱԿՄԱՀՈՆ ՆԱՄԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԵՎ ԼՈՆԴՈՆԻ ԿՈՆՖԵՐԱՆՍՈՒՄ

I աշխարհամարտի տարիներին բրիտանաարաբական հարաբերությունների ընթացքում անդրադարձներ եղան նաև Պաղեստինին: Նախապես շփումներ ունենալով արաբների հետ՝ I համաշխարհային պատերազմի ժամանակ բրիտանացիները՝ հանձինս Եգիպտոսում Մեծ Բրիտանիայի Գլխավոր հյուպատոս Հենրի ՄակՄահոնի, բանակցությունների մեջ մտան Մեքքայի շերիֆ Հուսեյնի հետ՝ նպատակ ունենալով ի դեմս արաբների թուրքերի թիկունքում ապստամբություն բարձրացնել: Հենրի ՄակՄահոնի և շերիֆ Հուսեյնի միջև բանակցությունները ընթացան նամակագրական կապի միջոցով և պատմության մեջ մտան «Հուսեյն-ՄակՄահոն նամակագրություն» անունով[1]:

Հուսեյն-ՄակՄահոն նամակագրության հարցը գիտական քննարկման է ենթարկվել մի շարք հեղինակների կողմից, որոնցից հարկ է նշել հատկապես Ն. Հովհաննիսյանին, Վ. Կիսիլյովին, Վ. Լադեյկինին, Ռ. Ջոնին, Ս. Հադավիին, Դ. Փայվային, Դ. Ֆրոմկինին, Ջ. Կիմչեին, Ամին Սաիդին, Ալի Սուլտանին և այլն: Սակայն պետք է նշել, որ պատմագրությունը հատուկ ուշադրության չի արժանացրել այդ նամակագրության մեջ Պաղեստինի խնդրի արծարծմանը: Մինչդեռ դրա անհրաժեշտությունը կա, քանի որ հետագայում՝ 1939թ. Պաղեստինի հարցի համար կարևոր նշանակություն ունեցող Լոնդոնի կոնֆերանսում, այն հատուկ քննարկումների առարկա դարձավ:

Այս ուսումնասիրության համար հիմք են ծառայել 1969թ. Կահիրեում լույս տեսած «Պաղեստինի փաստաթղթերի ժողովածուն», ինչպես նաև մի շարք հեղինակների՝ հիշյալ թեմային նվիրված աշխատությունները:

Մինչև բրիտանական մանդատը Պաղեստինը պատմաաշխարհագրական Սիրիայի մաս էր կազմում և հայտնի էր նաև որպես «Հարավային Սիրիա»[2]: Սիրիան Օսմանյան կայսրության կազմում մի քանի անգամ վարչական բաժանման էր ենթարկվել: 1914թ. այն բաժանված էր հիմնականում հինգ վարչական մասի՝ Հալեպի, Սիրիայի (Դամասկոսի),

Ստանալով արաբ ազգայնականների աջակցությունը՝ 1915թ. հուլիսի 14-ին Շերիֆ Հուսեյնը նամակ ուղարկեց Եգիպտոսում Մեծ Բրիտանիայի Գերագույն կոմիսար Հենրի ՄակՄահոնին, որում շարադրում էր Սիրիայի արաբ ազգայնականների կարծիքը Մեծ Բրիտանիայի հետ համագործակցելու հարցի շուրջ՝ շեշտադրելով արաբ ազգի անկախության հասնելու ձգտումը[10]: Նամակում բրիտանացիներին արաբների աջակցության դիմաց առաջ էին քաշվում հետևյալ նախապայմանները.

1. Մեծ Բրիտանիան պետք է ճանաչեր արաբական երկրների անկախությունը, որի սահմանները պետք է լինեին հյուսիսում Մերսին-Ադանա գծից մինչև Պարսկաստանի սահմանը, արևելքում՝ պարսկական սահմանով մինչև Բասրայի ծոցը, հարավում՝ Հնդկական օվկիանոսը (բացի Ադենից, որը պահպանելու էր իր կարգավիճակը, այսինքն՝ մնալու էր բրիտանական տիրապետության ներքո), արևմուտքում՝ Կարմիր ծովն ու Միջերկրական ծովը՝ մինչև Սինայի թերակղզի:

2. Տնտեսական գործընկերության հարցում արաբական կառավարությունը նախապատվությունը տալու էր Մեծ Բրիտանիային, եթե առաջ քաշվող ծրագրերը համահավասար արտոնություններ ապահովեին բրիտանացիների և արաբների համար:

3. Երրորդ ուժի կողմից հարձակման դեպքում կողմերը պետք է պարտավորվեին միասնական դիմադրություն ապահովել:

4. Եթե կողմերից մեկը հարձակվեր երրորդ կողմի վրա, ապա մյուս կողմը կարող էր չեզոքություն պահպանել: Եթե պատերազմի մեջ մտնող կողմը ցանկանում էր, որ մյուս կողմն իր հետ մասնակցի պատերազմին, ապա կողմերը պետք է հանդիպեին և քննարկեին պայմանները:

5. Այս կնքվելիք պայմանագրի երրորդ և չորրորդ կետերը ուժի մեջ էին լինելու տասնհինգ տարի: Եթե կողմերից մեկը ցանկանար երկարացնել այդ կետերի ժամկետը, ապա մյուս կողմին պետք է տեղեկացներ այդ մասին պայմանագրի ժամկետն ավարտելուց մեկ տարի առաջ[11]:

Նամակագրությունը Շերիֆ Հուսեյնի և Հենրի ՄակՄահոնի միջև տևեց մինչև 1916թ. մարտի 10-ը: Ընդհանուր առմամբ տասը նամակ փոխանակվեց, որից ութը կապված էին ստեղծվելիք անկախ արաբական պետության սահմանների հարցի հետ:

Նորին մեծության կառավարությունը դեռ 1915թ. հունիսին լիազորել էր Հենրի ՄակՄահոնին երաշխավորել Արաբական թերակղզում արաբական խալիֆայության ստեղծումը պատերազմից դաշնակիցների հաղթական դուրս գալու դեպքում[12]: 1915թ. օգոստոսի 30-ին ՄակՄահոնը Հուսեյնին ուղարկած պատասխան նամակում հայտնում էր, որ գերադասում էր ստեղծվելիք անկախ արաբական պետության սահմանների հարցը քննարկել պատերազմից հետո, քանի որ այդ տարածքներից շատերը դեռ գտնվում էին զուտ թուրքական տիրապետության տակ[13]: Սակայն Հուսեյնը 1915թ. սեպտեմբերի 9-ին իր ուղարկած նամակում

հավանություն չտվեց ՄակՄահոնի՝ սահմանների հարցը հետագայում քննարկելու առաջարկին՝ շեշտելով, որ արաբ ժողովրդի աջակցությունը ձեռք բերելու համար բրիտանացիները պետք է ճշգրիտ նշեին ստեղծվելիք արաբական պետության սահմանները[14]:

Նամակի պարունակության մասին ՄակՄահոնը Մեծ Բրիտանիայի արտգործնախարարությանը հայտնեց 1915թ. հոկտեմբերի 18-ին: Բրիտանական կառավարությունն, ի դեմս արտգործնախարար Էդուարդ Գրեյի, անմիջապես կապ հաստատեց Լոնդոնում Ֆրանսիայի դեսպան Պոլ Քամբոնի հետ և նրա միջոցով ֆրանսիական կառավարությանը տեղեկացրեց արաբ ազգայնականների ծրագրերի մասին[15]: 1915թ. հոկտեմբերի 24-ին Ֆրանսիայի հետ իր կառավարության վարած բանակցություններից հետո. ՄակՄահոնը նամակ ուղարկեց Շերիֆին, որում գրում էր, որ Մերսինի և Ալեքսանդրեթի շրջանները, ինչպես նաև Սիրիայի՝ Դամասկոսի, Հոմսի, Համայի, Հալեպի շրջաններից արևմուտք ընկած մասերը[16] չէին կարող ստեղծվելիք արաբական խալիֆայության մաս կազմել, քանի որ իր երկրի կառավարությունը չէր ուզում դաշնակից Ֆրանսիայի շահերը ոտնահարել: Այսինքն, Ֆրանսիան որոշակի հետաքրքրություններ ուներ այդ տարածքներում: Բացի վերոհիշյալից, ՄակՄահոնը նաև գրում էր, որ՝

1. Սահմանների վերոհիշյալ փոփոխություններով Մեծ Բրիտանիան պատրաստ էր ճանաչել արաբական անկախ պետությունը և պաշտպանել Մեքքայի շերիֆի առաջնորդությամբ այդ պետության սահմանները:
2. Մեծ Բրիտանիան կպաշտպաներ բոլոր սրբավայրերն արտաքին ուժերի հարձակումներից:
3. Հնարավորության դեպքում Մեծ Բրիտանիան կօգներ և խորհուրդներ կտար արաբներին ներքին կառավարումը կազմակերպելու հարցերում:
4. Հասկանալի էր, որ խորհրդականները և այլ ծառայողները կառավարող օղակներում, բացի արաբներից, լինելու էին միայն անգլիացիներ:
5. Ինչ վերաբերում է Բաղդադին և Բասրային, ապա արաբները պետք է գիտակցեին Մեծ Բրիտանիայի հատուկ շահերն այդ տարածքներում, և պետք է միջոցներ ձեռնարկվեին այդ վայրերում յուրահատուկ կառավարում կազմակերպելու, օտարների հարձակումներից դրանք պաշտպանելու դրանց բնակչության բարօրության և բրիտանացիների ու արաբների փոխադարձ տնտեսական շահերի պաշտպանության համար[17]:

1915թ. նոյեմբերի 5-ի իր նամակում Շերիֆ Հուսեյնը համաձայնեց զիջել միայն Մերսինի և Ադանայի շրջանները: Ինչ վերաբերում է Հալեպի և Բեյրութի վիլայեթներին, ապա Հուսեյնը նշում էր, որ դրանք զուտ արաբական տարածքներ էին և պետք է ամբողջությամբ ընդգրկվեին Արաբական խալիֆայության մեջ: Նկատի ունենալով այս տարածքների

1916թ. ապրիլից մինչև մայիս Պետրոգրադում տեղի ունեցած գաղտնի բանակցությունների արդյունքում կնքվեց պայմանագիր, որը պատմության մեջ մտավ «Սայքս – Պիկոյի պայմանագիր» անունով[24]:

Պայմանագրով Պաղեստինի տարածքում (բացառությամբ Հարավային Նեգևի, որը հետագայում ընդգրկվեց Մեծ Բրիտանիայի մանդատի ներքո գտնվող Պաղեստինի կազմի մեջ), իրականացվելու էր միջազգային կառավարում: Միջազգային կառավարման բնույթը սահմանվելու էր Ռուսաստանի հետ խորհրդակցելուց և մյուս դաշնակիցների, մասնավորապես Մեքքայի Շերիֆի հետ համաձայնեցնելուց հետո: Քարտեզի վրա Պաղեստինը, փաստորեն, ընդգրկում էր հարավում՝ Ղազայից մինչև Մեռյալ ծովի հյուսիսային մասը, արևելքում՝ Եղյուսաղեմ, Բեթղեհեմ, Երիքով քաղաքները և Հորդանան գետով դեպի հյուսիս՝ մինչև Տիբերիասի լիճն ընկած տարածքները:

Պայմանագրով Ֆրանսիան իր անմիջական տիրապետությունն էր հաստատելու ներկայիս Սիրիայի արևմտյան մասում ու Լիբանանում և ազդեցություն էր ունենալու Սիրիայի կենտրոնական ու արևմտյան մասերում և Մոսուլի վիլայեթում: Մեծ Բրիտանիան անմիջական տիրապետություն էր հաստատելու ներկայիս արևելյան Իրաքում և ազդեցություն էր ունենալու Իրաքի կենտրոնական ու արևմտյան մասերում, Մաանի սանջակում ու Հաուրանի սանջակի մեծ մասում[25]:

Սայքս-Պիկոյի համաձայնագրի դրույթները, փաստորեն անհամատեղելի էին Մեծ Բրիտանիայի կառավարության կողմից լիազորված ՄակՄահոնի՝ արաբներին տված խոստումների հետ:

Բացի այդ, Մեծ Բրիտանիայի արտգործնախարար Արթուր Ջեյմս Բալֆուրը 1917թ. նոյեմբերի 2-ին նամակ ուղարկեց ազգությամբ հրեա լորդ Ռոտշիլդին, որով Նորին մեծության կառավարությունը սիոնիստներին խոստանում էր աջակցություն ցույց տալ Պաղեստինում հրեական ազգային օջախ ստեղծելու հարցում[26]: Այդ նամակը պատմության մեջ մտավ «Բալֆուրի հռչակագիր» անունով:

Նման խոստումներ տալով արաբներին ու հրեաներին՝ բրիտանացիները հետագայում դժվարություններ ունեցան Պաղեստինում Ազգերի Լիգայից ստացած մանդատն իրականացնելիս: 1920-21, 1929թթ. արաբ-հրեական բախումները Պաղեստինում և վերջապես 1936թ. սկսված պաղեստինցի արաբների եռամյա ապստամբությունը, որն արդեն համաարաբական հնչեղություն ուներ, ստիպեցին բրիտանացիներին ավելի շատ հաշվի նստել արաբների հետ:

1938թ. վերջին բրիտանացիները Լոնդոնում կլոր սեղանի շուրջ քննարկումների հրավիրեցին պաղեստինցի արաբներին, Եգիպտոսին, Իրաքին, Սաուդյան Արաբիային, Եմենին և պաղեստինցի հրեաներին[27]:

1939թ. փետրվարի 7-ին Մուրբ Ջեյմսի պալատում իր աշխատանքները սկսեց Լոնդոնի կոնֆերանսը, որի մասնակից կողմերն էին բրիտա-

նական կառավարությունը, վերոհիշյալ արաբական երկրների և պաղեստինցի արաբների ու հրեաների պատվիրակությունները[29]: Եգիպտոսի պատվիրակն էր արքայազն Մուհամմադ Աբդ ալ-Մունիմը՝ Մեծ Բրիտանիայում Եգիպտոսի դեսպանը: Իրաքը ներկայացնում էր վարչապետ Նուրի աս-Սաիդը, իսկ Սաուդյան Արաբիան՝ Էմիր Ֆեյսալը՝ Իբն Սաուդ թագավորի որդին: Պաղեստինցի արաբների պատվիրակության ղեկավարը Ջամալ ալ-Հուսեյնին էր, իսկ հրեական պատվիրակությունը գլխավորում էր Խայիմ Վայցմանը[30]:

Լոնդոնում պաղեստինցի արաբները հրաժարվեցին սկոնխստների հետ բանակցության սեղանի շուրջ նստել՝ մտավախություն ունենալով, որ այդ փաստը կարող է ընկալվել՝ որպես Պալեստինում հրեաների երբևէ կարգավիճակի de jure ճանաչում[31]:

Արաբական պատվիրակության ղեկավար Ջամալ ալ-Հուսեյնին մի քանի անգամ հանդես եկավ զեկույցներով, որոնցում ներկայացվում էին արաբների պահանջները, որոնք, ըստ էության, չէին տարբերվում Լ աշխարհամարտից ի վեր բրիտանացիներին արաբների ներկայացրած պահանջներից, այն է՝

1. Չեղյալ համարել բրիտանական մանդատը Պաղեստինում:
2. Դադարեցնել Պաղեստինում հրեական ազգային օջախ ստեղծելու գործընթացը:
3. Դադարեցնել հրեաների ներգաղթը Պաղեստին[31]:

Կոնֆերանսում ալ-Հուսեյնին մեկ անգամ ևս նշեց, որ արաբներին մտահոգում էր Պաղեստինում հրեաների գերակայությունը, ուստի նրանք պահանջում էին բրիտանացիներից կատարել պատերազմի ժամանակ Մեծ Բրիտանիայի կառավարության կողմից լիազորված Սըր-Մահոնի՝ արաբներին տված խոստումները[32]:

Վայցմանն իր ելույթում պահանջեց իրականացնել Բալֆուրի հռչակագրով հրեաներին տրված խոստումը, որն, ըստ նրա, հույժ կարևորություն էր ստացել հրեական պատմության այդ շրջանում, երբ հրեաները հալածանքների էին ենթարկվում Եվրոպայում: Նա, փաստորեն, հրեական հարցի հիմքում դնում էր հրեաների կրած տառապանքների փաստարկը[33]:

Փետրվարի 23-ին կայացավ հրեաների և արաբական երկրների պատվիրակների առաջին հանդիպումը, որը, սակայն, դրական արդյունք չտվեց: Նույն օրը Պաղեստինի արաբական պատվիրակության քարտուղար Ջորջ Անտոնիոսը հրապարակեց մի հուշագիր, որում արծարծվում էր Հուսեյն–ՄակՄահոն նամակագրության հարցը: Ըստ Անտոնիոսի, քանի որ Հուսեյն-ՄակՄահոն նամակագրությունն ընթացել էր արաբերենով, այնուհետև նամակները թարգմանվել էին անգլերեն, դրանց արաբերեն և անգլերեն տարբերակներում անհամապատասխանություններ էին առաջացել: Մասնավորապես, նամակների անգլերեն

տեքստերում խեղաթյուրված էր ներկայացվել արաբերենի «ولاية_վիլայաթ» բառը, որը նախ նշանակում է «շրջան», ապա՝ Օսմանյան կայսրության վարչական միավոր: Հուսեյնի և ՄակՄահոնի նամակներում «ولاية_վիլայաթ» բառն օգտագործվել էր «շրջան» իմաստով, բացի Հուսեյնի՝ 1915թ. նոյեմբերի 5-ի և ՄակՄահոնի՝ 1915թ. դեկտեմբերի 14-ի նամակներից, որոնցում «Հալեպի և Բեյրութի վիլայեթներ» արտահայտության մեջ այդ բառն օգտագործվել էր Օսմանյան կայսրության վարչական միավորի իմաստով: Ըստ Ջորջ Անտոնիոսի, նամակների անգլերեն տեքստերում, որոնք, ինչպես նշեցինք, թարգմանվել էին արաբերենից, «ولاية_վիլայաթ» բառը ոչ մի տեղ չէր թարգմանվել «շրջան» իմաստով, այլ գրվել էր «vilayet», որը ենթադրում է Օսմանյան կայսրության վարչական միավորը: Այսինքն, Հուսեյնի և ՄակՄահոնի նամակների անգլերեն տարբերակները խիստ աղավաղված էին, քանի որ Օսմանյան կայսրության կազմում Մերսինի, Ալեքսանդրեթի, Հոմսի և Համայի վիլայեթներ չկային[34]:

Արաբները պնդեցին, որ ստեղծվեր արաբական պատվիրակության և բրիտանական կառավարության ներկայացուցիչներից կազմված հանձնաժողով, որի խնդիրն էր լինելու ուսումնասիրել Հուսեյն-ՄակՄահոն նամակագրությունը: Հանձնաժողովը կազմվեց և բրիտանական կառավարության ներկայացուցիչ լորդ Մոմի անունով կոչվեց Մոմի հանձնաժողով[35]: Փետրվարի 24-ին տեղի ունեցած հանձնաժողովի նիստում ելույթ ունեցավ Մայքլ Մակդոնելը՝ Պաղեստինի Գերագույն դատարանի նախկին նախագահը: Ելույթում նա, փաստորեն, հերքում էր Անտոնիոսի հրապարակած հուշագրի այն դրույթների ճշմարտացիությունը, որոնք կապված էին Հուսեյն-ՄակՄահոն նամակագրության մանրամասնությունների հետ: Նա շեշտում էր, որ թեև Հուսեյնը պահանջել էր արաբական ողջ տարածքները ներգրավել ստեղծվելիք անկախ արաբական պետության կազմի մեջ, այնուամենայնիվ ՄակՄահոնը նշել էր, որ Սիրիայի՝ Դամասկոսի, Հոմսի, Համայի, Հալեպի շրջաններից արևմուտք ընկած մասերը պետք է լինեին Ֆրանսիայի ազդեցության ներքո: Հիմք ունենալով Օսմանյան կայսրության վարչատարածքային բաժանումը[36] և ՄակՄահոնի վերոհիշյալ նշումը՝ Մայքլ Մակդոնելն իր ելույթում ասում էր, որ նշյալ շրջաններից արևմուտք ընկած Սիրիան նաև Բեյրութի վիլայեթի հարավային մասն էր, որի մեջ ընդգրկված էր Պաղեստինի հյուսիսային մասը՝ Աքքայի և Նաբլուսի (Քալքայի) սանջակները, և Երուսաղեմի սանջակը[37]:

1939թ. մարտի 16-ին Մոմի հանձնաժողովը Լոնդոնի կոնֆերանսին ներկայացրեց Հուսեյն–ՄակՄահոն նամակագրության ուսումնասիրութ-

յան արդյունքում կազմված զեկույցը. որտեղ ներառված էին արևք ներկայացուցիչների փաստարկները և բրիտանացիների հակափաստարկները: Արաբները փաստարկում էին. որ նամակագրության հանգամանքները Հուսեյնին հնարավորություն չէին տվել ճշգրտել ստեղծվելիք արաբական պետության սահմանները. չնայած որ արաբական պետության մեջ Պաղեստինի ընդգրկված լինելու հարցում նա միշտ համոզված էր եղել: Իսկ բրիտանացիները հեշտությամբ բերում էին հակափաստարկներ, թե ՄակՄահոնը, ճշյալ շրջաններից արևմուտք ասելով. նկատի էր ունեցել նաև Պաղեստինը: Հանձնաժողովի ուսումնասիրության արդյունքում Հուսեյնի և ՄակՄահոնի միջև վարված նամակների անգլերեն տեքստերում որոշակի ճշտումներ էին մտցվել. մասնավորապես «շրջան» բառի փոխարեն օգտագործված «vilayet» բառը փոխարինվել էր «district_շրջան» բառով[38]:

Նման վիճաբանությունները և արաբների բերած փաստարկները որևէ կերպ ազդեցություն չունեցան: Բանակցություններն արևք պետվիրակների, բրիտանացիների ու սիոնիստների միջև որոշակի արդյունքներ չտվեցին: Կոնֆերանսը. որի ընթացքում ոչ մի համաձայնություն ձեռք չբերվեց, ավարտվեց 1939թ. մարտի 27-ին[39]:

Իրականում բրիտանացիները քաջ գիտակցում էին. թե ինչ ելք էր ունենալու լոնդոնյան կոնֆերանսը, սակայն անհրաժեշտ էին համարում արաբների և հրեաների միջև միջնորդի դեր ստանձնել: Մեծ Բրիտանիայի գաղութների նախարար Մալկոլմ Մակդոնալդը հայտարարեց, թե Նորին մեծության կառավարությունը մտադիր էր չեղյալ համարել մանդատը և ստեղծել Պաղեստինյան պետություն, որը բարեկամության դաշինք կկնքեր Մեծ Բրիտանիայի հետ: Մակդոնալդի այս հայտարարությունն ընդգրկված էր 1939թ. Սպիտակ թղթում[40]:

Այսպիսով, հարկ է փաստել, որ արաբների հետ նախնական պայմանավորվածության ժամանակ հստակ չնշելով ստեղծվելիք անկախ արաբական պետության սահմանները՝ բրիտանացիները հետագայում հմտորեն կարողացան շահարկել այդ փաստը: Հիմք ընդունելով Հուսեյն-ՄակՄահոն նամակագրության ընթացքը և նամակների բովանդակությունը՝ կարելի է ենթադրել, որ բրիտանացիները ընդունում էին. որ Պաղեստինն ստեղծվելիք անկախ արաբական պետության մաս կազմի: ՄակՄահոնի 1915թ. հոկտեմբերի 24-ի նամակի համաձայն՝ արաբական պետության սահմաններից դուրս էին մնում միայն Սերսինի և Այեքսանդրեթի շրջանները և Միրիայի՝ Դամասկոսի, Հոմսի, Համայի, Հսղեպի շրջաններից արևմուտք ընկած մասերը: Պաղեստինն ընկնում էր ՄակՄահոնի նշած տարածքներից հարավ և հարավ-արևմուտք: Այն փաստը, որ հետագայում Պաղեստինը դրվեց բրիտանական, իսկ Լիբանանը ֆրանսիական վերահսկողության ներքո, արաբներին հիմք է սոս-

LEVON ZOURABYAN

THE PALESTINE QUESTION IN THE HUSSEIN-MACMAHON CORRESPONDENCE AND THE LONDON CONFERENCE

The article examines the negotiations between the High Commissioner of Great Britain in Egypt and the Sherif of Mecca, especially the Palestine question in those negotiations. During the World war I the British wanted to gain the Arabs' support against the Turks, promising the Sherif of Mecca to proclaim an independent arab state after the War. Sherif Hussein accepted their proposal and, among other problems, discussed the question of territories, which would be included in the above-mentioned state, with Henry MacMahon, the High Commissioner of Great Britain in Egypt. Based on the contents of the letters exchanged between Sherif Hussein and Henry MacMahon from July 1915 to March 1916, one can say that Palestine was intended to be included in the proposed independent arab state, but the British never accepted that fact. In 1939 the Hussein-MacMahon correspondence was discussed in the London conference, where british and arab delegations made reports on the above-mentioned negotiations, the British trying to prove that MacMahon intended to exclude Palestine from the proposed independent arab state and the arabs opposing them.

Our point of view is the following: Based on the administrative division of Palestine in the Ottoman empire, we conclude that Henry MacMahon intended to include Palestine in the promised arab state.

ՃԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 <<المراسلات المتبادلة بين الشريف حسين وسيرهنري مكماهون من 14 يوليو1915 الى 10 مارس 1916>> .– ملف وثائق فلسطين. ألقاهرة 1969. ص 187-169، الدكتورعلى سلطان.

تاريخ سورية 1908-1918. دمشق 1987. ص 387-383.

Հովհաննիսյան և Հ. Սարգսյան, Սիրիան անկախության համար մղված պայքարում, Երևան 1975, էջ 23-24; В.П. Ладейкин, Источник опасного кризиса, Москва 1973, стр. 52; Амин Саид, Восстания Арабов в XX веке, Москва 1964, стр. 65-66; McMahon-Husscin Correspondence. http://WWW.mideastwcb.org/mcmahon.htm.

2 جورج كوت. دراسات فلسطينية. بدون مكان، 1971. ص 24.

3 Daniel Pipes, Greater Syria, New York 1992, p.17; М. А. Соловейчик, Историко-географический атлас Палестины, Санк-Петербург 1913, стр.9.
4 Daniel Pipes, Greater Syria, New York 1992, p.17.
5 Амин Саид, Восстания Арабов в XX веке., Москва 1964, стр. 59-60.
6 Robert John and Sami Hadawi, The Palestine Diary, Beirut 1970, p. 27.
7 Lorand Gaspar, Histoire de la Palestine, Paris 1968, p. 87.

8 David Fromkin, The Fall of the Ottoman Empire and the Creation of the Modern Middle East, New York 1989, p.175.
9 Ն.Հովհաննիսյան և Հ. Սարգսյան, Սիրիան անկախության համար մղված պայքարում, Երևան 1975, էջ 23:
10 <<من الشريف حسين إلى سيرهنري مكماهون. 14 يوليو سنة 1915. الرسائل المتبادلة بين الشريف حسين و سير هنري مكّماهون من 14 يوليو1915 الى 10 مارس1916>>.ـ ملف وثائق فلسطين. ألقاهرة 1969. ص 169-170.
11 Նույն տեղում:
12 David Fromkin, The Fall of the Ottoman Empire and the Creation of the Modern Middle East, New York 1989, p. 178; Jon Kimche, The Second Arab Awakening, London 1970, p.51.
13 <<من سير هنري مكماهون إلى الشريف حسين. 30 أغسطس سنة 1915. الرسائل المتبادلة بين الشريف حسين و سيرهنري مكّماهون من 14 يوليو1915 الى 10 مارس 1916>>.ـ ملف وثائق فلسطين. ألقاهرة 1969. ص 171.
14 <<من الشريف حسين إلى سيرهنري مكماهون. 9 سبتمبر سنة 1915. الرسائل المتبادلة بين الشريف حسين و سيرهنري مكماهون من 14 يوليو1915 الى مارس 1916>>.ـ ملف 10 وثائق فلسطين. ألقاهرة 1969. ص 172-174.
15 David Fromkin, The Fall of the Ottoman Empire and the Creation of the Modern Middle East, New York 1989, p. 179.
16 Robert John and Sami Hadawi, The Palestine Diary, Beirut 1970, p. 39.
17 <<من سيرهنري مكماهون إلى الشريف حسين. 24 تشرين الاول سنة 1915. الرسائل المتبادلة بين الشريف حسين و سير هنري مكّماهون من 14 يوليو1915 الى 10 مارس 1916>>.ـ ملف وثائق فلسطين. ألقاهرة 1969. ص 175-176.
18 <<من الشريف حسين إلى سير هنري مكماهون. 5 تشرين الثاني سنة 1915. الرسائل المتبادلة بين الشريف حسين و سيرهنري مكماهون من 14 يوليو1915 الى 10 مارس 1916>>.ـ ملف وثائق فلسطين. ألقاهرة 1969. ص 177-178.
19 <<من سير هنري مكماهون إلى الشريف حسين. 14 كانون الاول سنة 1915. الرسائل المتبادلة بين الشريف حسين و سيرهنري مكماهون من 14 يوليو1915 الى 10 مارس1916>>.ـ ملف وثائق فلسطين. ألقاهرة 1969. ص 179-180.

20 <<من الشريف حسين إلى سيرهنري مكماهون. 1 كانون ألثاني سنة 1916. الرسائل المتبادلة بين الشريف حسين وسيرهنري مكماهون من 14 يوليو1915 الى 10 مارس 1916>>._ ملف وثائق فلسطين. ألقاهرة 1969. ص 182-181.

21 <<من سيرهنري مكماهون إلى الشريف حسين. 25 كانون ألثاني 1916. الرسائل المتبادلة بين الشريف حسين و سيرهنري مكماهون من 14 يوليو1915 الى 10 مارس1916>>._ ملف وثائق فلسطين. ألقاهرة 1969. ص 183.

22 Robert John and Sami Hadawi, The Palestine Diary. Beirut 1970. p. 40.

23 أبو عمار. ثورة أكتوبر و القضية الفلسطينية. بدون مكان و سنة . ص 9،

Ն.Հովհաննիսյան և Հ. Սարգսյան, Սիրիան անկախության համար մղված պայքարում, Երևան 1975, էջ 24; В.И.Кисилев, Палестинская проблема в международных отношениях: региональный аспект, Москва 1988, стр. 25; British Rule by David Mendelson. http://WWW. jajz-ed. org.il /100/concepts/ british.html.

24 <<معاهدة سايكس-بيكو. ابريل-مايو سنة 1916>>._ ملف وثائق فلسطين...ص 193،

الدكتورعلي سلطان. تاريخ سورية 1918-1908. دمشق. 1987. ص 417-403،

Ն. Հովհաննիսյան և Հ. Սարգսյան, Սիրիան անկախության համար մղված պայքարում, Երևան 1975, էջ 24-25; В.И.Кисилев, Палестинская проблема в международных отношениях: региональный аспект, Москва 1988, стр. 25; В.П.Ладейкин, Источник опасного кризиса, Москва 1973, стр. 52; The Sykes–Picot Agreement. http://www.mideastweb.org/mesykcspicot.htm.

25 Jon Kimche, The Second Arab Awakening. London 1970. p. 51.

26 << تصريح بلفور>>._ ملف وثائق فلسطين.... ص 217.

В.И.Кисилев, Палестинская проблема в международных отношениях: региональный аспект, Москва 1988, стр. 26; В.П.Ладейкин, Источник опасного кризиса, Москва 1973, стр. 55; Г.С.Никитина, Государство Израиль, Москва 1968, стр. 23; Е. Дмитриев, Палестинский узел, Москва 1978, стр. 18; Е.Дмитриев, В.Ладейкин, Путь к миру на Ближнем Востоке, Москва 1978, стр.18; Richard P.Stevens. Zionism and Palestine Before The Mandate. Beirut 1972, p. 31.

27 تهاني هلسه. دافيد بن جوريون. بيروت 1968. ص 53.

28 Г.С.Никитина,Государство Израиль, Москва 1968, стр. 38.

29 Robert John and Sami Hadawi, The Palestine Diary. Beirut 1970, p.297.

30 Jon Kimche. The Second Arab Awakening, London 1970, p.188.

31 صالح مسعود أبو يصير. جهاد شعب فلسطين. بيروت 1968. ص 256.

عز الدين فودة. قضية القدس. بيروت 1969. ص 162. 32

تهاني هلسه. دافيد بن جورين. بيروت 1968. ص 53. 33

<<مذكرة عن عهود بريطانيا للعرب. 22 فبراير سنة 1939>>. ملف وثائق فلسطين... 34
ص 677-682.

<<مؤتمرفلسطين. تقرير المجنة المؤلفة لدرس مكاتبات معينة تبودلت في سنتى 1915 و 351916
بين السير هنري مكماهون المندوب السامي البريطانى بالقاهرة وشريف مكة>>. ملف وثائق
فلسطين...ص 705-711 .

36 Daniel Pipes, Greater Syria, New York 1992, p. 17.

<<بيان أدلى به السيرمتشيل ماكدونيل لبعض المسائل القانونية الناشئة عن بيان رئيس37
القضاة في الجلسة الثانية التي عقدتها اللجنة في يوم 24 فبراير سنة 1939>>. ملف وثائق
فلسطين... ص 691-698.

<<مؤتمرفلسطين. تقرير المجنة المؤلفة لدرس مكاتبات معينة تبودلت في سنتى 1915 38
و 1916 بين الشريف حسين و السيرهنري مكماهون المندوب السامي البريطانى بالقاهرة>>.
ملف وثائق فلسطين... ص 705-711، <<الرسائل المتبادلة بين سيرهنري مكماهون و الشريف
حسين من 14 يوليو1915 الى 10 مارس 1916>>. – ملف وثائق فلسطين ...ص 187-169.

McMahon-Hussein Correspondence. http://WWW. mideastweb.org/mcmahon.htm.

39 Г.С. Никитина, Государство Израиль, Москва 1968, стр. 38.

40 Е. Дмитриев, Палестинский узел, Москва 1978, стр. 27-28.

ԳՈՀԱՐ ԻՍԿԱՆԴԱՐՅԱՆ

ԻՐԱՆԸ՝ ՊԱՐՍԻՑ ԾՈՑԻ ԱԶԴԵՑԻԿ ԳՈՐԾՈՆ (1960-70-ԱԿԱՆ ԹԹ.)

Ներկայացվող խնդիրը դուրս չի մնացել արևելագետների, միջազգայնագետների և պատմաբանների տեսադաշտից, որի շուրջ աշխատանքներ են իրականացրել Ն.Հ.Հովհաննիսյանը, Ա.Զ.Ազաթաջյանը, Ա.Բ.Բաղդասարովը, Դ.Դ.Ալիբեյլին, Ա.Ա.Ալիևը, Լ.Վ.Վակովսկս և այլք: Սակայն առկա նոր նյութերի պարագայում հանգում ենք նոր եզրակացությունների, որոնք ստորև կներկայացնենք:

1960-70-ական թվականներին շահական Իրանը, դառնալով տարածաշրջանում հզոր տերություն, իր ռազմական, տնտեսական, քնական հարստությունների և մարդկային խոշոր ռեսուրսների առկայությամբ, փորձում էր Մեջտավոր և Միջին Արևելքի երկրների վրա տարածել իր ազդեցությունը, ինչպես նաև ստանձնել Պարսից ծոցում թելադրող պետության դերը: Դրան նպաստում էին մի շարք գործոններ. ամերիկյան լայնամասշտաբ աջակցությունը Իրանին, Իրանի՝ նավթի ազգայնացման շնորհիվ կուտակված ֆինանսական միջոցները, մարտունակ բանակը՝ զինված արդիական զենքով և զինամթերքով:

1960-70-ական թվականներին իրանա-ամերիկյան հարաբերությունները թևակոխել էին որակական նոր փուլ: Վաշինգտոնն այդ տարածաշրջանում վարում էր «երկու հենարանների» քաղաքականություն՝ հենվելով Իրանի և Սաուդյան Արաբիայի վրա՝ մեծ հույսեր կապելով հատկապես շահական վարչակարգի հետ:

Սաուդյան Արաբիայի և Իրանի գաղափարական ու քաղաքական կողմնորոշումը դեպի Արևմուտք, ինչպես նաև այդ երկրների անտեսական փոխադարձ կապը համաշխարհային շուկայի և ԱՄՆ-ի տնտեսության հետ, դարձրեց նրանց ամերիկյան արտաքին քաղաքականության գլխավոր հենարանը տարածաշրջանում[1]:

Ինչպես բնորոշ է գերհզոր տերությանը, ԱՄՆ-ի վարչակազմն էլ հիշյալ տարածաշրջանում Իրանի զարգացմանը նպաստելիս ուներ իր սեփական շահերը: Նա ջանում էր հզորացնել Իրանը, որպեսզի կանխի Խորհրդային Միության հնարավոր ագրեսիան, ինչպես նաև փորձում էր

Երկրորդ միջադեպը կողմերի միջև գրանցվեց 1968թ-ին, երբ Թահրեյնի շեյխը պաշտոնական այցով ժամանեց Սաուդյան Արաբիա, ինչին Իրանի ղեկավար մարմինները խիստ բացասաբար արձագանքեցին. չէ որ դեռևս 1957թ. նոյեմբերի 10-ին Իրանի կառավարության որոշման համաձայն Թահրեյն կղզիախումբը հայտարարվել էր Իրանի 14-րդ օսթան (նահանգ): Այցելելով Էր-Ռիադ՝ շեյխն ակնկալում էր ստանալ Սաուդյան Արաբիայի աջակցությունը շահին ընդդիմանալու համար: Որպես քաղաքի նշան Իրանի շահը հետաձգեց նախատեսված այցը Էր-Ռիյադ, ինչը Ֆեյսալ թագավորը դրակեց որպես «ոչ բարեկամական քայլ Սաուդյան Արաբիայի նկատմամբ»[7]:

Սակայն ամերիկյան դիվանագիտությունը ճնշում գործադրեց և Իրանի, և՛ Սաուդյան Արաբիայի վրա՝ ձգտելով հարթել տարաձայնությունները երկու երկրների միջև: Ուստի վերջիններիս այլևս ոչինչ չէր մնում, քան բարելավել հարաբերությունները անխուսափելի համագործակցության համար: Իրանի շահի արտաքին քաղաքականության նպատակներից մեկն էր թույլ չտալ որ սասանվեն, էլ չենք ասում տապալվեն տարածաշրջանի միապետությունները[8], մանավանդ որ այդին իրողություն էր 1958թ. Իրաքի, 1962թ. Եմենի միապետությունների տապալումը[9]:

Իրանը տարածաշրջանում իրեն առավել վստահ զգաց հատկապես 1972թ., երբ ԱՄՆ-ի նախագահ Ռիչարդ Նիքսոնը խոստացավ շահին հնարավորություն ընձեռել գնել Միացյալ Նահանգների արտադրության ցանկացած տեսակի ռազմական տեխնիկա: Դա համընկնում էր Մհամմեդ Ռեզա շահի նպատակներին, քանի որ վերջինս ցանկանում էր Իրանը դարձնել տարածաշրջանի ամենամարտունակ և հզոր բանակ ունեցող երկրներից մեկը: Այդ մասին խոսել էր նաև Իրանի շահը Նյուսվիքին տված հարցազրույցի ժամանակ, որն արտատպել է Քեյհան Ինթերնեշնլ թերթը. "Իրանը ԱՄՆ-ից պատրաստվում է գնել 700 ուղղաթիռ՝ որից 220-ը ռազմական, ներառյալ «Չինուկով» և սուզանավերի դեմ պայքարող 18 «Սիկորսկի» տիպի ուղղաթիռ, 500 մլն դոլար ընդհանուր արժույթամբ": Մինչդեռ շահը նշում էր, որ տարածաշրջանի մի շարք երկրներ այդ թվում Եգիպտոսը, Սիրիան և Իսրայելը գտնում են, որ իրենց անվտանգության պահպանման համար անհրաժեշտ են մոտավորապես 500 օդային միջոցներ: "Բացի Միացյալ Նահանգներից ձեռք բերված ռազմական տեխնիկայի,-շարունակում է շահը,- Իրանը Անգլիայից գնում է «Չիֆթեն» տիպի 800 տանկ, 480 մլն դոլար ընդհանուր արժույթամբ, վերանորոգում և արդիականացնում ենք «M-47» տիպի 400 տանկ, որը ձեռք էինք բերել ԱՄՆ-ից, ինչպես նաև «M-60» տիպի 460 տանկ: Ընդհանուր առմամբ 1700 տանկ: Նավատորմը ևս կրկնապատկում ենք: Իրանը Միացյալ Նահանգներից ստացել է նաև լազերի միջոցով կառավարվող «Մմարտ» տիպի ռումբ»[10]: 1975թ. Իրանը սկսե-

յաստվում էր Միացյալ Նահանգներից գնել 8 հատ 1,200 Mwe (megawatt-electric) հզորությամբ ռեակտոր, համապատասխանաբար Յոլանսկայից էլ ձեռք էր բերվելու 2 հատ 900 Mwe. Գերմանիայից 2 հատ 1,200 Mwe հզորությամբ ռեակտորներ[11]: Իսկ 1977թ. շահը ԱՄՆ-ից գնեց շուրջ 6 միլիարդ դոլարի գենք, ևս 12 միլիարդի էլ պատվիրել էր[12]: Ընդհանրապես Ռեզա շահը նպատակ ուներ մինչև 1994թ. միջուկային ռեակտորների հզորությունը հասցնել 23.000 Mwe[13]:

Ըստ Էթթելաաթի տվյալների, ԱՄՆ-ը շահի հետ գաղտնի համաձայնություն էր ձեռք բերել, ըստ որի Իրանի տարածքում կառուցել էին 7 ռադիոէլեկտրոնային լրտեսական կայաններ[14]:

Իրանի ռազմականացումն առավել ակնհայտ դարձնելու համար բերենք 1973-1980թթ. Մեյձավոր և Միջին Արևելքի երկրների ռազմական ծախսերի հաշվեկշիռը, ըստ ԽՍՀՄ-ի Անվտանգության նախարարության տվյալների[15].

Երկիր	1973-1976		1977-80	
	մլրդ. դոլար	ընդհանուր գումարի մասնաբաժինը %	մլրդ. դոլար	ընդհանուր գումարի մասնաբաժինը %
Իրան	29.1	44.0	28,0	27.6
Իրաք	6.1	9.2	10.3	10.1
Սաուդյան Արաբիա	19.8	29.9	41.1	40.5
Թուրքիա	4.9	7.4	7.3	7.2

Ռնականաբար, Խորհրդային Միությունը բողոքեց իր հարավային սահմանների մոտ նման քանակի ռազմական ուժի և, որ ավելի կարևոր էր, ամերիկյան ռազմական մասնագետների թվի աճի կապակցությամբ: Ի պատասխան Խորհրդային Միության անդադար բողոքների, ԱՄՆ-ի նախագահ Նիքսոնը ամերիկացիների ներկայությունը բացատրում էր նրանով, որ ԱՄՆ-ը չի կարող անտեսել խորհրդային ժամանակակից նավատորմի ներկայությունը Հնդկական օվկիանոսում, Միջերկրական ծովում և Աֆրիկայի ափերի մոտ: Ի պաշտպանություն ամերիկացիների՝ իրանական մամուլը մատնանշում էր, որ Եգիպտոսում գործում էր ռուս մասնագետների 15 հազարանոց մի խումբ, այն բանից հետո, երբ ԽՍՀՄ-ը Եգիպտոսին վաճառել էր զենք և զինամթերք: Այնպես որ նրանք բնական են համարում օտարերկրյա ներկայացուցիչների առկայությունը երկրում. եթե այդ երկիրը գնել է ռազմամթերք մեկ այլ երկ-

յնից[16]: Ամերիկյան խորհրդականների կողմից կազմվել էր իրանական զորքին ամերիկյան զենքով զինելու ծրագիր. ներառյալ հրթիռներ և մարտական տեխնիկա, ինչպես նաև Իրանի տարածքում ռազմական օդանավակայան. վայրէջքի հրապարակ. նավահանգիստներ, նավակառուց. ճանապարհներ. ռադիոյի և հեռախոսային կապի ցանց կառուցել:

Այսպիսով. կարգավորելով սեփական ռազմական ուժերը. ունենալով բավական ֆինանսական միջոցներ ի հաշիվ նավթի[17]. այսուհետ Պարսից ծոցի հետ կապված հարցերը հայտնվեցին Իրանի քաղաքականության օրակարգում. որն առավել հայտնի է որպես Պարսից ծոցի նկատմամբ «ակտիվ կուրս» քաղաքականություն: Այս քաղաքականությունը ուզմավսրական նշանակություն ուներ Իրանի համար. քանի որ Պարսից ծոցով էր իրականացվում ինչպես իրանական ապրանքների առևտուրը. այնպես էլ նավթի և նավթամթերքի արտահանումը միջազգային շուկա: Իրանը իր վրա էր վերցնում տարածաշրջանում յուրաքանչյուր խնդրի լուծման ղեկավարությունը. որի մասին դեռևս 1969 հունիսին տպագրվեց Իրանի ԱԳՆ-ի հայտարարության մեջ. որտեղ նշվում էր. «Ոչ մի դեպքում չի կարելի հնարավորություն տալ մյուս երկրներին միջամտել Պարսից ծոցի գործերին. Իրանի կառավարությունը պատրաստ է համագործակցել Պարսից ծոցի բոլոր երկրների հետ՝ նաև տարածաշրջանի խաղաղության և անվտանգության պահպանման: Բայց եթե Պարսից ծոցի մյուս երկրները չեն կարող մասնակցե համատեղ պաշտպանությանը, ապա Իրանն ի վիճակի է միայնակ իր վրա վերցնել այս տարածաշրջանի շահերի պաշտպանության գլուխը»[18]:

Ուշադրության է արժանի Իրանի դիրքորոշումը Պարսից ծոցում առաջացած բազմաթիվ խնդիրների և դրանց լուծման եղանակների վերաբերյալ:

Կարևորելով Իրանի դերը տարածաշրջանում. դեռևս 1971թ. նոյեմբերի 29-ին Իրանի և Շարջայի կառավարությունները պաշտոնապես կնքեցին համաձայնագիր Աբու-Մուսա կղզին Իրանի ինքնավարության տակ թողնելու վերաբերյալ: Օգտվելով այս համաձայնագրից. հաջորդ օրը՝ նոյեմբերի 30-ին, Ռեգա շահի հրամանով իրանական զորքերը կայծակնային արագությամբ (6 ժամվա ընթացքում) տեղակայվեցին Աբու-Մուսայում, միևնույն ժամանակ զբաղեցրին նաև Մեծ և Փոքր Թումբերը[19], որոնց նկատմամբ Իրանը միշտ էլ հավակնություններ է ունեցել: Դրանով փաստորեն, Իրանը իր վերահսկողության տակ վերցրեց Հորմուզի նեղուցը[20]:

Իրանի կողմից՝ նշված կղզիների գրավումը ուժեղ հակազդեցություն առաջացրեց Արաբական աշխարհում: Առաջացած հարցի կապակցությամբ առավել զուսպ մոտեցում ցուցաբերեց Սաուդյան Արաբիան: Այս քաղաքականությունը մի կողմից ձեռնտու չէր Էր-Ռիադին, քանի որ Իրանն այդպիսով առավել ամրապնդում էր իր դիրքերը Պարսից ծոցում,

կապող բացահայտ հակաարաբական դիրքորոշում ընդունել և դրա համար հասկացրեց, որ այս պատերազմում արաբական երկրները կարող են համոզված լինել Իրանի չեզոքության պահպանման վրա[27]: Այս հայտարարությունը լիովին բավարարեց Իրաքին, քանզի վերջինս կարող էր Իրանի սահմանի մոտ տեղակայած զորքերը տեղավտխել պատերազմական օջախի մոտ:

Արաբական աշխարհը կուչ էր ածում Իրանին ևավէթ չմատակարել Իսրայելին: Իրաքի ներկայացուցիչները իրանական կողմի հետ հանդիպելիս բազմիցս բարձրացրել են պաղեստինյան խնդիրը և ջանում էին Թեհրանին ևս ներքաշել հակասիոնիստական ճակատի մեջ: Սակայն շահական կառավարությունը հակված չէր բարելավել հարաբերությունները Բաղդադի հետ՝ վտանգելով Իսրայելի հետ ունեցած իր կապերը[28]: Ընդհանրապես 70-ական թվականներին Իրանի հարաբերությունները սերտացան հատկապես ԱՄՆ-ի քաղաքականությանը ծեռնտու հունով ընթացող երկրների՝ Եգիպտոսի, Մաուրյան Արաբիայի, Հորդանանի և Իսրայելի հետ[29]:

Արաբա-իսրայելական պատերազմի բռնկումից իվեր և՛ Իրանը, և՛ Իրաքը քննադատում էին Իսրայելի գործողությունները, պահանջում էին հետ վերադարձնել 1967թ. գրաված տարածքները և Պաղեստինի ժողովրդին տալ ինքնավարության իրավունք: Սակայն ի տարբերություն Իրաքի, որը ընդգրկվել էր հակասիոնիստական ճակատի մեջ, Իրանը շարունակում էր Իսրայելի հետ իր լայնամասշտաբ ռազմա-քաղաքական և տնտեսական կապերը[30]:

Հարկ է նշել, որ այդ նույն ժամանակ ձևավորվում էր Սաուդյան Արաբիայի և ԱՄՆ-ի փոխհարաբերությունների սառեցում, քանի որ 1973թ. բռնկված 4-րդ արաբա-իսրայելական պատերազմի ժամանակ սաուդյան կառավարողները առավել ակտիվ ներքաշվել էին խնդրի լուծման գործընթացի՝ ի պաշտպանություն արաբական կողմի, դրանով իսկ շահելով նոր դիվիդենտներ Արաբական աշխարհում:

Որպեսզի էլ ավելի մեծացնի Իրանի ազդեցությունը տարածաշրջանում, շահը 70-ականների սկզբին հանդես եկավ մի շարք առաջարկություններով՝ այն է՝ ստեղծել Ասիական ընդհանուր շուկա, ստեղծել Պարսից ծոցի երկրների ռազմա-քաղաքական բլոկ, հրավիրել կոնֆերանս՝ տարածաշրջանի անվտանգությունը պահպանելու համար ուղիներ որոնելու նպատակով: Դրա համար 1974թ. Մոհամմադ Ռեզա շահ Փահլավին մեծ շրջագայություն կատարեց հարավային Ասիայի երկրներով՝ կնքելով մի շարք առևտրական համաձայնագրեր և տնտեսական համագործակցության պայմանագրեր: Այդ այցի նպատակն էր ստեղծել «Ասիական ընդհանուր շուկա»՝ Եվրոպական ընդհանուր շուկայի օրինակով[31]. բնականաբար, Իրանի հովանու ներքո, որը կարող էր հանդես գալ որպես հակակշիռ Եվրոպական շուկային:

1975թ., Սաուդյան Արաբիայի պաքսյագո Ֆահդը այցելեց Իրան: Օգտվելով այդ պատեհ առիթից շահն առաջարկեց կոնֆերանս հրավիրել Պարսից ծոցի երկրների դեկավարների մակարդակով՝ «տարածաշրջանի անվտանգության պահպանման ընդհանուր ուղի գտնելու» նպատակով[32]: Սակայն այդ առաջարկը չընդունվեց, քանի որ հենց այդ տարածաշրջանի երկրների միջև առկա էին չլուծված բազմաթիվ խնդիրներ: Ինչպես տեսնում ենք Իրանի նախաձեռնությունները հիմնականում չիրականացան, քանի որ Արաբական աշխարհը չէր ցանկանում տարածաշրջանում առաջատարի դերում տեսնել Թեհրանին:

1970-ական թվականների կեսերին Իրանը՝ տարածաշրջանում իրական ազդեցություն ձեռք բերելու համար, ամենուժեղտ ուշադրություն դարձրեց գիտատեխնիկական նվաճումների և հատկապես ատոմային էներգետիկայի զարգացման վրա: Եվ ահա 1974թ., Մոհամմեդ Ռեզայի նախաձեռնությամբ Իրանում ստեղծվեց Ատոմային էներգետիկայի կազմակերպություն: Հայտարարվեց, որ նպատակ ունեն ստեղծել մի շարք ատոմային կայաններ[33]:

Շահի այս նախաձեռնությունը մեծ աջակցություն գտավ հատկապես Արևմուտքի կողմից: Նախատեսվում էր մինչև 2000թ. կառուցել 20 ԱԷԿ 23 հազար մեգավատ ընդհանուր հզորությամբ, որի շնորհիվ Իրանը կդառնար Մերձավոր և Միջին Արևելքում ատոմային էլեկտրակայանների գլանց ունեցող հզոր տերություններից մեկը: Ատոմակայանների կառուցման առաջին վնուրը իրականացրեց ԳՖՀ-ն՝ Բուշեհրում: Այդ գործին մեծապես աջակցում էր նաև Ֆրանսիան, ծրագրելով ատոմակայանների կառուցում Աբադանում և Ահվազում: 1978թ. իրանա-ամերիկյան պայմանագրի համաձայն, Միացյալ Նահանգները նախատեսում էր կառուցել 8 ԱԷԿ: Սակայն 1979թ. Իրանի Իսլամական հեղափոխությունից հետո, նրա թեոկրատիկ կառավարությունը հրաժարվեց միջուկային ծրագրերի իրականացումից, և Ատոմային էներգետիկայի կազմակերպությունը չեղյալ հայտարարեց նախկինում կնքած պայմանագրերը ԳՖՀ-ի, Ֆրանսիայի և ԱՄՆ-ի հետ: Քիչ ժամանակ անց, ԻԻՀ-ն եկավ այն եզրակացության, որ անհրաժեշտ է ավարտին հասցնել Բուշեհրում ԱԷԿ-ի կառուցման աշխատանքները: Արդյունքում՝ շարունակվեց ծրագրավորված երկու ԱԷԿ-երի կառուցումը, որոնք առավել հայտնի էին որպես Իրան 1 և Իրան 2 ծրագրեր: Մինչև Իսլամական հեղափոխությունը դրանցից առաջինը կառուցվել էր 95%-ով, երկրորդը 75%-ով[34]:

Այսպիսով, Միացյալ Նահանգների գործում աջակցությամբ, ինչպես նաև 1973թ. Իրանի նավթի de facto ազգայնացմամբ շնորհիվ առաջացած ֆինանսական զգալի կուտակումների միջոցով, Իրանն արագ տեմպերով համալրեց բանակը ժամանակակից զենքով և զինամթերքով, որն էլ հնարավորություն տվեց նրան դառնալ տարածաշրջանում ռազմական ազդեցիկ ուժ և քաղաքական կարևոր գործոն: Ինչպես տեսանք վերը շա-

բաղրվածից, Իրանը հարմար առիթը բաց չէր թողնում տալածաշրջանում առաջացած խնդիրների կարգավորմանը մասնակից դառնալու համար. ակնկալելով էլ ավելի մեծացնել իր ազդեցությունը: Իրանի հզորացման նախադրյալներից մեկն էլ այն էր, որ մեծ ուշադրություն դարձվեց գիտատեխնիկական ոլորտի զարգացման վրա. դրի համալը չէր խնայվում ոչ մի միջոց:

Վերը նշվածի շնորհիվ էր. որ մինչև Իսլամական հեղափոխությանը. մի շարք ամերիկյան քաղաքագետներ Իրանը դիտում էին որպես ՆԱՏՕ-ի հարավային թևի քնական շարունակություն:

GOHAR ISKANDARYAN

IRAN AS INFLUENTIAL FACTOR OF THE PERSIAN GULF (1960-1970s)

The Shah of Iran placed a very high priority to building up the Iranian armed forces and improving Iran's defensive capabilities. He also sought to expand Iran's role in regional and world affairs, involving Iran in various regional conflicts (for example Dhofar, or islands of Persian Gulf-Abu Musa, the Great and Small Tunbs) and establishing visible presence for Iran in World forums such as the international oil market.

However, Iran's growing oil revenue and military power, the emergence of detente between the superpowers, and departure of British forces from the Persian Gulf in the early 1970s, enabled Iran to play a much more active role in regional affairs at that period.

ՇԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1. США и развивающиеся страны в 70-е годы, М. 1981, с. 202
2. Кокошина В.А., "Некоторые проблемы американо-иранских отношений в 60-70гг.", Развивающиеся страны. Политика и идеология, Москва, 1985, с. 138.
3. Pahlavi Mohammad Reza, The Shah of Iran, Answer to History, New York, 1980, p. 141.
4. Драмбянц Г.Г., Персидский залив без романтики, М., 1968, с. 38.
5. Валькова Л.В., Саудовская Аравия в международных отношениях, М.1979, с. 190.
6. Алибейли Г.Д., Иран и сопредельные страны Востока 1946-1978, Москва, 1989, с. 49.
7. Алибейли Г.Д., Иран и сопредельные страны Востока, с. 47.
8. Հովհաննիսյան Ն., Իրանը Մերձավորարևելյան տարածաշրջանի համակարգում (1979-1992թթ.) Իրան Նամէ, Երևան, 1993, N 2, էջ 3:
9. Эттелаат 1978.10.01, 1978.13.11.
10. Ньюсуик, Кейхан интернатионал 16.05.73.

11. Cottrell Alvin J., A.General Survey, The Persian Gulf States, Baltimore & London, 1980, p. 159.
12. Ramazani R.K., Iran's Revolution. The Search for Consensus, Washington. 1990, p. 49.
13. www./arouchepum.com/ other/2003/3039 iran-nuc.- Iran's Nuclear Energy: A Cheney Casus Belli?
14. Эттелаат 25.05.73.
15. Военная экономика стран Востока, научный сборник N 6, для служебного пользования, 000079, М.1986, с. 11-12.
16. Эттелаат 25.05.73
17. Եթե 1970թ. նավթից ստացած Իրանի եկամուտը կազմում էր 791 մլն դոլար, ապա 1973թ. այն հասավ 2,6 մլրդ դոլարի, 1974-ին 4,6 մլրդ, իսկ 1975թ. այն ածեց մինչև 17,8 մլրդ դոլարի: The Iranian Journal of International Affairs, vol V, N2, Tchran 1993, p. 461. Նավթից ստացվող եկամուտների մեծացումը առաջին հերթին կապված էր նավթի գնի բարձրացման հետ: 1973թ. Սաուդյան Արաբիան առաջարկեց նավթի գինը բարձրացնել, մեկ բարել նավթի համար առաջարկելով 7,5 դոլար, մինչդեռ Իրանը մեկ բարել նավթի համար պահանջում էր 14 դոլար: Ի վերջո եկան համաձայնության, որի համաձայն մեկ բարել նավթը արժեցավ 11,65դոլար: Կառավարության մասնարաժինը նս մեծացավ 7 դոլար նախկին 3,5-ի փոխարեն: Примаков А.Е., Персидский залив: Нефть и монополии, Москва 1983, с. 47. Андреасян Р.Н., Казюков А.Д., ОПЕК в мире нефти, М.1978, с. 99-121.
18. Алибейли Г.Д., Иран и сопредельные страны Востока, с. 83.
19. Алиев Ариф, Иран vs Ирак: история и современность, М.2002, с. 629-630.
20. Հորմուզի նեղուցն ունի ռազմավարական նշանակություն ոչ միայն Ծոցի երկրների հարաբերություններում, այլև համաշխարհային տնտեսության համար: Հորմուզի նեղուցով յուրաքանչյուր 10 րոպեն մեկ անցնում է մեկ տանկեր, որը կազմում է նավթի տարանցիկ համաշխարհային տեղափոխման 62%-ը: Հորմուզի նեղուցը Պարսից ծոցից դուրս գալու միակ ուղին է բոլոր սահմանակից երկրների՝ Իրանի, Իրաքի, Սաուդյան Արաբիայի, Կատարի, Բահրեյնի, Օմանի, Արաբական Միացյալ Էմիրություններ համար: Алиев Ариф, Иран vs Ирак, с. 626. Եվ փաստորեն 1971թ. այս ամենը հայտնվեց Իրանի վերահսկողության տակ:
21. Валькова Л.В., Саудовская Аравия: нефть, ислам, политика, М. 1987, с. 163.
22. Алиев Ариф, Иран vs Ирак, с 582.
23. Кейхан интернационал 16.05.73.
24. Мелихов И.А., Оман между прошлым и настоящим, с.13, 54-55.
25. Pahlavi Mohammad Reza, Answer to History, p. 134.
26. Кейхан интернационал 16.05.73.
27. Алиев Ариф, Иран vs Ирак, с. 583.
28. Алиев Ариф, Иран vs Ирак, с. 578.
29. Հովհաննիսյան Ն., Իրան. Այաթոլլահ Խոմեյնիի դարաշրջանը, Երևան, 20004, էջ 48:
30. Ариф Алиев, Иран vs Ирак, с. 586.

31. Кокошина В.А., "Некоторые проблемы американо-иранских отношений в 60-70гг.", Развивающиеся страны. Политика и идеология, Москва, 1985, с. 143.
32. Алибейли Г.Д., Иран и сопредельные страны Востока, с. 54, Валькова Л.В., Саудовская Аравия: нефть, ислам, политика, с. 165.
33. Арабаджяан А.З., Исламская республика Иран: Экономический потенциал, М. 2002, с. 139.
34. Военная экономика стран Востока, N 1, М.1981, с. 100-103.

ԱՐՄԱՆ ԻՍՐԱՅԵԼՅԱՆ

ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՎՈՂ ԲՆՈՒՅԹԸ ԵՎ ՀՆԴ-ԿԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱԿԱԱՀԱԲԵԿՉԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Միջազգային ահաբեկչության վերջին միտումների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նախկին Խորհրդային Միության փլուզումից և սառը պատերազմի ավարտից հետո գաղափարախոսությամբ ներշնչված ահաբեկչությունն ընդհանուր առմամբ անկում է ապրում, չնայած Հնդկաստանում, Նեպալում, Ֆիլիպիններում, Ճապոնիայում և Լատինական Ամերիկայի մի շարք երկրներում մարքսիստական և մաոիստական խմբերի շարունակվող գործողությունների:

Այնուամենայնիվ, պետք է արձանագրել, որ կրոնական և էթնիկական հիմքի վրա գործող ահաբեկչական խմբերը շարունակում են ակտիվ գործել, և նրանց ահաբեկչությունը պատճառաբանված չէ գաղափարախոսությամբ[1]: Հարավային և Հարավ-Արևելյան Ասիայի երկրների պարագայում այն ավելի շատ էթնիկական կամ կրոնական մեծամասնության կողմից փոքրամասնությունների նկատմամբ կիրառվող անարդարությունից առաջացած ցասումի արտահայտություն է:

Տարաձայնության զգացումն ու ցասումի արտահայտումը պատճառաբանվում են տարբեր գործոններով, այն է՝ փոքրամասնությունների կողմից քաղաքական կամ տնտեսական ճգտումների արհամարհումը, անարդարության զգացումը և իրենց մշակույթի վրա արտաքին բացասական ազդեցության կանխման ցանկությունը: Մյուս պատճառների շարքին, մասնավորապես անդրազգային իսլամական ահաբեկչական խմբերի դեպքում, կարելի է դասել Պաղեստինի նկատմամբ շարունակվող անարդարությունը, 80-ականների ընթացքում Աֆղանստանի բռնագրավումը խորհրդային զորքերի կողմից, ինչպես նաև 1991թ. պատերազմից հետո լայնածավալ արևմտյան զորքերի (մեծամասամբ քրիստոնեական) տեղակայումը Պարսից Ծոցի տարածաշրջանում, հիմնականում՝ Սաուդյան Արաբիայում, որտեղ գտնվում են մահմեդականության սրբագույն վայրերը: Այդ զգացումները ավելի խորացան ԱՄՆ կողմից Իրաքի գրավումից հետո:

Ժամանակակից անդրազգային իսլամական ահաբեկիչները որևէ տարբերություն չեն տեսնում 1980թ. Աֆղանստան սովետական զորքերի ներխուժման, 90-ականների սկզբին Պարսից ծոցի պատերազմի և 2003թ. իրականացված Իրաքի գրավման միջև: Ցանկացած ռազմական գործողություն մահմեդական բնակչության մեծամասնություն ունեցող երկրի հանդեպ նրանք դիտարկում են որպես արտաքին միջամտություն՝ ուղղված տարածաշրջանում երկրի քաղաքական և տնտեսական չահերի ամրապնդմանը: Ռուսի թե՝ ԽՍՀՄ-ի ազդեցության թուլացումը Աֆղանստանի պարագայում, և թե՝ ներկայումս ԱՄՆ-ի՝ արևմուտքի կողմից վերահսկվող Իրաքի կամ Աֆղանստանի քաղաքական և սոցիալական էլիտաների վրա, իրենք դիտում են որպես մեկ ընդհանուր պայքարի չառնանակություն:

Նելկս փուլի իսլամական ծայրահեղականության զարգացման և ամրապնդման ակունքները, մեր կարծիքով, պետք է փնտրել Պաղեստինի ինքնուրոշման հարցի չկարգավորման ձգձգման և Խորհրդային Միության կողմից Աֆղանստանի երկարաժամկետ օկուպացման մեջ, ինչը մեծապես նպաստեց Աֆղանստանի մոջահեդինների միավորմանը և նրանց գործողություններին արտաքին աջակցության տրամադրմանը՝ մասնավորապես Օսամա բին Լադենի արաբ վարձկանների կողմից: Հակազդման հիմքում ընկած էր Իսլամի, որպես կրոնի, ընկատմամբ վտանգի ընկալումը և, հետևաբար, այդ մարտսահմանվելին դիմակայելու անհրաժեշտությունը: Նույն զգացումներով են ներկայումս համակված իսլամական ծայրահեղական խմբավորումները Մերձավոր Արևելքի տարածաշրջանում, որոնցից շատերը պատրաստակամություն են հայտնում կամ ուղղակիորեն դիմակայում են ԱՄՆ-ի և կոալիցիայի զորքերին Իրաքում:

Ավելին, ԱՄՆ-ի հույսերը՝ ակտիվ միջամտություն ցուցաբերել Բալկաններում և աջակցել Բոսնիայի և Կոսովոյի մահմեդական բնակչությանը՝ ըստ էության նպաստակ հետապնդելով չհանել աշխարհի այլ տարածաշրջանների մահմեդականների հսմակրությունը, մասնավորապես՝ Մերձավոր Արևելքում, փաստորեն չարդարացան: Մերձավոր Արևելքի մահմեդական ծայրահեղականները ԱՄՆ-ի և ՆԱՏՕ-ի ներխուժումը Բալկաններ դիտեցին այս տարածաշրջանում հետապնդվող իրական ուսգմտիպական, քաղաքական և տնտեսական չահերից ուշադրությունը շեղելու փորձ:

Հարկ է նշել նաև, որ 80-ականն և 90-ականն թվականներին սկզբին ի հայտ եկավ մահմեդականության ահաբեկչության մի նոր ֆենոմեն՝ Աղանդավորական ահաբեկչություն (Սուննի մեծամասնությունը ընդդեմ Շիա փոքրամասնության Պակիստանում և Աֆղանստանում): Երբ նախկինում նման իրավիճակը բնորոշ էր միայն քրիստոնեություններ (կաթոլիկներն ընդդեմ բողոքականների Հյուսիսային Իռլանդիայում), ապա ներ-

ահաբեկչական գործակալությունների՝ նմանատիպ սցենարով գործող ահաբեկչության դեմ պայքարելուն:

Համակարգիչների միջոցով աշխարհի ֆինանսական, տնտեսական, ռազմական, գիտական և տեխնոլոգիական ենթակառուցվածքների ցանցավորումը համակարգչին տիրապետող ահաբեկիչներին մեծ հնարավորություններ է ընձեռում՝ տնտեսությանը զգալի վնաս պատճառելու համար: Այս ամենը հանգեցրեց նոր ֆենոմենի, որը կոչվում է «Վիրտուալ ահաբեկչություն»:

Միջազգային հակաահաբեկչության ոլորտում համագործակցությունը զգալիորեն աճել է վերջին տասնամյակում, սակայն այն հիմնականում սահմանափակված է եղել հետախուզական տվյալների հաղորդման և ահաբեկչական միջադեպերի համատեղ հետախուզման ու հետապնդման շրջանակներում: Ավելի խորացված միջազգային համագործակցությունը բարդացվում են քաղաքական կամ աշխարհագրական նկատառումներով, ուստի չափազանց կարևոր է առանձին պետությունների փորձը ահաբեկչության դեմ պայքարելու բնագավառում, ինչը և մենք կփորձենք ցույց տալ Հնդկաստանի Հանրապետության օրինակի վրա:

1947թ. ի վեր, երբ Հնդկաստանը ձեռք բերեց անկախություն, ապստամբության և ահաբեկչության հետ կապված խնդիրները բավականին լուրջ էին երկրի տարբեր մասերում: Ահաբեկչական գործողություններ էին տեղի ունենում Փանջաբ, Ջամմու և Քաշմիր նահանգներում՝ Պակիստանին հարող սահմանամերձ շրջաններում, երկրի հյուսիս-արևելքում՝ Մյանմարի և Բանգլադեշի մոտ, Նեպալի սահմանի մոտ գտնվող Բիհար նահանգում: Որոշակի ահաբեկչական գործողություններ էին տեղի ունենում նաև Հնդկաստանի Անդրա Պրադեշ, Մադհյա Պրադեշ և Օրիսսա նահանգներում, որոնք չունեն օտարերկրյա պետությունների հետ ընդհանուր սահման:

Հնդկաստանի տարածքում տեղի են ունեցել նաև ահաբեկչական գործողություններ, որոնք ուղղված են եղել կառավարության կամ մեծամասնություն կազմող հինդու համայնքի դեմ: Դրանց օրինակներն են 1993թ. մարտի 12-ին Մումբայում, ինչպես նաև 1998թ. փետրվարին Տամիլ Նադու նահանգի Կոիմբատորե քաղաքում տեղի ունեցած պայթյունները[3]: Անցյալում Տամիլ Նադու նահանգում արձանագրված ահաբեկչական գործողությունները հիմնականում կապված էին Շրի Լանկայում գործող Տամիլ Էլամի Ազատագրման Վագրերի հետ, որոնք ոչ միայն հաշվեհարդար էին տեսնում Հնդկաստանում ապրող իրենց քաղաքական հակառակորդների հետ, այլև ուղղակիորեն մարտահրավեր նետեցին Հնդկաստանի կառավարությանը՝ 1991թ. մայիսին Չեննայում սպանելով Ռաջիվ Գանդիին, ում իրենք մեղադրում էին Շրի Լանկայի ներքին գործերին միջամտելու մեջ[4]:

Մեր կարծիքով, Հնդկաստանում տարբեր տեսակի ապստամբական կամ ահաբեկչական շարժումների պատճառները հետևյալն են.

- Քաղաքական (մասնավորապես Ասսամում և Տրիպուրայում): Անկայունության և ահաբեկչության աճին այդ նահանգներում նպաստեց կառավարության անկարողությունը՝ վերահսկել մահմեդականների լայնածավալ ապօրինի ներգաղթը Բանգլադեշից, որոնք անմիջապես սկսեցին տնտեսական բարիքներ պահանջել իրենց համար՝ հիմնվելով նախկինում ունեցած հոլի իրավունքից:
- Տնտեսական (հիմնականում Անդրա Պրադեշում, Մադհյա Պրադեշում, Օրիսսայում և Բիհարում): Վերոհիշյալ նահանգներում բացակայում էին հողային բարեփոխումները, գյուղական մասերում չափազանց բարձր էր չգբաղվածության մակարդակը, հողատերերի հալածանքները չքավոր խավի նկատմամբ և այլն: Այս տնտեսական բնույթի գործոնները և սոցիալական անարդարության բազմաթիվ փաստերը նպաստեցին մարքսիստական և մաոիստական գաղափարախոսությամբ առաջնորդվող ահաբեկչական խմբերի առաջացմանը:
- Էթնիկական. հիմնականում Նագալանդում, Միզորամում և Մանիպուրում, դեռևս խիստ արտահայտված է օտարերկրյա զգացողությունը:
- Կրոնական. հիմնականում Փանջաբում (մինչև 1995թ.) և Ջամմու և Քաշմիր նահանգում (սկսած 1989թ-ից): Փանջաբում որոշ սիկխ տարրեր, որոնք պատկանում էին տարբեր կազմակերպություններին, դիմեցին ահաբեկչական գործողությունների՝ Սիկխերի համար առանձին պետություն ստեղծելու նպատակով, որի անունը պետք է լիներ Խալիստան: Անկախության պահանջը հիմնված էր այն համոզմունքի վրա, որ սիկխերը առանձին ժողովուրդ են և իրենց զարգացումը չի կարող ապահովվել հինդու մեծամասնություն ունեցող միասնական պետության մեջ: Ամենաադմկալի ահաբեկչական գործողությունը, անկասկած, Հնդկաստանի վարչապետ Ինդիրա Գանդիի սպանությունն էր: Ինչ վերաբերում է Ջամմու և Քաշմիր նահանգներին, ապա տարբեր կազմակերպություններին պատկանող մահմեդականները դիմեցին ահաբեկչական գործողությունների տարբեր և իրար հակասող պատճառներով: Այսպես օրինակ, «Ջամմու և Քաշմիրի ազատագրման ճակատը» ձգտում է անկախության ամբողջ Ջամմու և Քաշմիրի համար, այդ թվում՝ Հնդկաստանի, Պակիստանի և Չինաստանի մասերը: «Հիզբուլ Մուջահեդդին» կազմակերպությունը ցանկանում է Ջամմու և Քաշմիր հնդկական նահանգը միացնել Պակիստանի հետ: Եթե անկախություն ցանկացողները ներկայացնում են իրենց պայքարը որպես անջատողական, այլ ոչ թե կրոնական, ապա Պակիստանի հետ միացման գաղափարի կողմնակիցները ներկայացնում են իրենց պայքարը որպես զուտ կրոնական: Միանշա-



▪ Նահանգային ոստիկանությունը և նրանց համապատասխան հետախուզական ստորաբաժանումները: Համաձայն երկրի ֆեդերալ սահմանադրության, կարգ ու կանոնի ապահովման և պահպանման պատասխանատվությունն ընկնում է տվյալ նահանգի ոստիկանությանը վրա: Նյու Դելիում գտնվող կենտրոնական կառավարությունը կարող է միայն տրամադրել խորհրդատվություն, ինչպես նաև ֆինանսական, ուսումնական և այլ կարգի օժանդակություն ու կիսվել վերջիններիս հետ իր տրամադրության տակ գտնվող օպերատիվ հետախուզական տվյալներով: Հետագա քայլերի ծեռնարկման պատասխանատվությունը կրում է նահանգային ոստիկանությունը:

▪ Ազգային հետախուզական կառույցը բաղկացած է ներքին գործերի նախարարության *«Հետախուզական Գործակալությունից»*, որը պատասխանատու է ներքին հետախուզության համար, Կառավարության քարտուղարության *«Հետազոտության և վերլուծության բաժնից»*, որը պատասխանատու է արտաքին հետախուզության համար, այնուհետև *«Պաշտպանության հետախուզական գործակալությունից»*, որը հիմնադրվել է 2002թ. և *Զինված ուժերի գլխավոր տնօրինության հետախուզական բեղը:* «Հետախուզական գործակալությունը» անաբեկչությանն առընչվող տեղեկություններ է հավաքում երկրի ներսում, իսկ «Հետազոտության և վերլուծության բաժինը»՝ երկրից դուրս: Այսուս երկու գործակալությունները հավաքում են միայն մարտավարական բնույթի հետախուզական տվյալներ այն շրջաններում, որտեղ չափազանց մեծ է զինված ուժերի ներկայությունը (Ջամմու և Քաշմիր, Նագալանդ և այլն):

▪ Ֆիզիկական անվտանգության ապահովման գործակալություններ. *Արդյունաբերության անվտանգության կենտրոնական ուժերը* պատասխանատու են օդանավակայանների և կարևորություն ներկայացնող այլ կառույցների ֆիզիկական անվտանգության համար, *Ազգային անվտանգության գվարդիայի* հիմնական նպատակն է միջամտել ահաբեկչական գործողություններին, օրինակ պատանդների պահում, օդանավի գավթում և այլն, *Հատուկ պաշտպանության խումբը* պատասխանատու է Հնդկաստանի վարչապետի և նախկին վարչապետների անվտանգության համար:

▪ Ռազմականացված ստորաբաժանումներ. Այդպիսի ստորաբաժանումներին է պատկանում մասնավորապես *Կենտրոնական պահեստային ոստիկանությունը* և *Սահմանային անվտանգության ուժերը*, որոնք աջակցում են ոստիկանությանը հակաահաբեկչական գործողությունների ընթացքում, սակայն միայն այն դեպքերում, երբ իրենք հատուկ հրամանով կանչվում են դեպքերի վայր:

▪ Զինված ուժերը: Ինչպես նշեցինք վերը, զինված ուժերը երկրորդական տեղ են գրավում Հնդկաստանի հակաահաբեկչական համակարգում, սակայն պետք է նշել. որ վերջիններիս դերը շատ բարձր է Ջամմու և Քաշմիր նահանգում, ուր ոստիկանական ուժերը չեն բավարարում Պակիստանից ներթափանցող ահաբեկիչներին կասեցնելու գործում:

2002-2003թթ. ստեղծվեցին երկու այլ լրացուցիչ ստորաբաժանումներ: Առաջինը դա Հետախուզական Գործակալության կազմում *Հակաահաբեկչական միասնական կենտրոնի* ստեղծումն է, որի հիմնական նպատակն է մեկ տեղում հավաքել տարբեր գործակալություններին հակասահաբեկչական գործողությունների համար պատասխանատու սպաներին, որոնք պետք է համատեղ վերլուծեն տարբեր տեղերից ստացվող տեղեկատվությունը և հետևեն հետագա գործողություններին: Երկրորդը՝ Հնդկաստանի արտաքին գործերի նախարարության հակաքրգում *Հակաահաբեկչական բաժնի* ստեղծումն է: Այն պատասխանատու է լինելու հակաահաբեկչական գործողությունների դիվանագիտական ասպեկտների համադրման համար: Պետք է նշել, որ վերջին բաժնի ստեղծումը կրկնօրինակում է ԱՄՆ պետդեպարտամենտի համապատասխան քայլը[x]:

Ինչևէ, վերոհիշյալ անտանգության համակարգի փոփոխությունները, անկասկած, պայմանավորված են քրիտանական գաղութատիրության ժամանակաշրջանից ժառանգած խնդիրներով, երկրի աշխարհաքաղաքական դիրքով և պարտադրված են ժողովրդավարական գործընթացներով: Դրանք կոչված են լուծելու յուրահատուկ խնդիրներ, որոնցից մենք կառանձնացնենք Հնդկաստանի կողմից հակաահաբեկչության խնդրի նկատմամբ կիրառվող քաղաքական, տնտեսական, սոցիալական և զինվանագիտական մոտեցումները:

Քաղաքական մոտեցման հիմնական նպատակը ահաբեկիչների կալմից երկրում ժողովրդավարական գործընթացների խափանումը կանխելն է: Այստեղ պետք է արձանագրել, որ ահաբեկչական բռնությանը թույլ չի տրվել կասեցնելու ընտրությունները Հնդկաստանի հյուսիսարևելքում, Փանջաբում և Ջամմու և Քաշմիր նահանգում, ինչը տարբեր խմբավորումներին պատկանող ահաբեկիչների հիմնական նպատակն է: Մասնավորապես Ջամմու և Քաշմիր նահանգում բավականին կայուն կերպով անց են կացվում տարբեր մակարդակի ընտրություններ, որոնց երկրի իշխանությունները դիտորդի կարգավիճակով պարբերաբար հրավիրում են օտարերկրյա դիվանագետների: Զգալիորեն հանդարտվել է քաղաքական իրավիճակը Նագալանդ, Սիզորամ և Տրիպուրա նահանգներում: Մշտապես բարելավվում է ներքին անվտանգության կառավարումը և իշխանությունը: 2002թ. դեկտեմբերին Հնդկաստանի եր-

րակշռությունը: Գլոբալ առումով, երկրի կառավարությունը ծգտում է ապահովել, որ երկրի տարբեր մասերում իրականացվող հակա-ահաբեկչական գործողությունները ազդեցություն չունենան ամբողջ երկրի զարգացման տեմպերի վրա: Անգամ այն ժամանակաշրջանում, երբ երկիրը դիմակայում էր ահաբեկչական գործողություններին, Հնդկաստանի տնտեսությունը շարունակում էր իր բնականոն ընթ. գլխավորեն զարգացավ տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառը, բարձրացավ դպրոցների և համալսարանների կրթական մակարդակը և ավելացան երկրի արտարժութային պահուստները:

Սոցիալական մոտեցումը ենթադրում է կրթական մակարդակի բարելավում և չգբաղվածության հարցի լուծումը: Հնդկաստանի առաջատար կրթական հաստատությունները մասնաճյուղեր են հիմնում ահաբեկչությունից տուժած նահանգներում: Հատուկ պայմանավորվածություններ են գործում վերոհիշյալ նահանգներից երկրի այլ նահանգների ՌՈՒՀ-երում ուսանողների ուսումը կազմակերպելու ուղղությամբ: Հնդկաստանի իշխանությունները մեծ ուշադրություն են դարձնում նաև այսպես կոչված մադրասաների (հիմնականում մզկիթներին կից գործող մահմեդական կրթություն ապահովող դպրոցներ) կրթական ծրագրերին: Ի տարբերություն Պակիստանի, ուր գործում է մոտ 8000 մադրասա, Հնդկաստանում գործում են 35 000 մադրասաներ:

Մեծ խնդիրներ գոյություն ունեն Ջամմու և Քաշմիր նահանգում բժշկական օգնություն տրամադրելու բնագավառում: 1989թ. ի վեր մեծ քանակությամբ հինդուներ լքել են նահանգը, ուստի վերոհիշյալ ծառայությունները բնակչությանը տրամադրում են զինված ուժերը: Բոլոր տեսակի բժշկական ծառայությունները և դեղորայքները տրամադրվում են բնակչությանը անվճար կամ շատ մատչելի գներով:

Դիվանագիտական Հնդկաստանի իշխանությունները մեծ ուշադրություն են դարձնում ահաբեկչության դեմ դիվանագիտական միջոցներով պայքարին: Հաշվի առնելով այն փաստը, որ Հնդկաստանի իշխանությունները շարունակաբար մեղադրում են Պակիստանին՝ ինչպես միջազգայինում, այնպես էլ տեղական հնդկական ահաբեկիչներին սատարելու մեջ, ապա հասկանալի է, թե ինչ տեղ է հատկացվում այդ պայքարում արտաքին գործերի նախարարությանը: Վերջինս զգալիորեն ակտիվացել է սկսած 1992թ-ից:

Ի լրումն, արտաքին գործերի նախարարությունը զգալի դեր ունի օտարերկրյա կառավարությունների հետ ահաբեկչության դեմ պայքարի համատեղ փոխհամագործակցային ծրագրերի մշակման գործում: Այս համագործակցությունն ավելի կարևորվեց 2001թ. սեպտեմբերի 11-ին ԱՄՆ-ում տեղի ունեցած ահաբեկչական գործողություններից հետո, երբ ընդունվեց ՄԱԿ-ի Անվտանգության Խորհրդի 1373 բանաձևը, որը կոչ է անում բոլոր ՄԱԿ-ի անդամ երկրներին սերտորեն համագործակցել ա-

ARMAN ISRAELIAN

THE CHANGING NATURE OF TERRORISM AND INDIAN ANTI-TERRORIST POLICY

The terrorism is gradually changing in nature and that has became more obvious after the end of Cold War and collapse of the Soviet Union. The radical leftist groups resorting to terrorism are giving way to well-organized and well financed transnational religious terrorist groups. The overall increase during the past 15 years of terrorism motivated by a religious imperative reflects the convergence of new adversaries, motivations and tactics affecting terrorist patterns today. International terrorism's general tendency toward increasing lethality is also reflected in the percentage of international terrorist incidents that result in one or more fatalities. The terrorist attacks on 9/11 in USA were the most deadly examples of this trend.

The post-1945 de-colonization struggles brought a wave of terrorist campaigns affecting North-and sub-Saharan Africa, South and South-East Asia, and the Middle East. This paper examines the effects of terrorism on India, the largest democracy in the world, and how the country is responding to it. Since its independence in 1947, India has been facing the problem of insurgency and terrorism in different parts of the country. India has faced exclusively terrorist movements in Punjab and Jammu and Kashmir, nordering Pakistan and part insurgent part terrorist movements in the North-East bordering Myanmar and Bangladesh, in Bihar bordering Nepal and in some interior parts of the country such as Andhra Pradesh, Madhya Pradesh and Orissa not having international horder.

In our research we also look at the political, economic, ethnic and religious causes of the various insurgent and terrorist movements in India.

Almost 35 000 innocent civilians were killed by terrorists in India. The first act with large civilian casualties took place in Mumhai in 1993, when the bomb exploded in city center, claiming 250 lives.

It must be noted, that India adopts a comprehensive approach to terrorism, making a distinction between domestic and international terrorism as well as between indigenous and foreign terrorists and believes the counter terrorism can be effective only if there is a multi pronged approach based on national consensus.

The whole Indian national security set up has been revamped in order to act and react properly to the problem of terrorism. The main locus of counter-terrorism operations in on State Police, while the Armed Forces have a limited functions.

Also, there are perceptual differences between Indian approach to counter terrorism and that of other major countries. "Counter-terrorism" and not "combating terrorism" and "campaign against terrorism" and not "war against terrorism" are the views of India's internal security managers.

The basic idea is that there are no quick solutions to terrorism. The ideal objective of any democracy should be to crate healthy conditions of governance in which people do not feel the need to resort to terrorism for finding answers to their grievances. Only through dialogue and not pressure the results could be achieved. It took India 19 years to bring the insurgency in Nagaland under control, 20 years to restore normalcy in Mizoram and 14 years to put an end to terrorism in Punjab. So there is a belief among Indians that the same should eventually happen in Jammu and Kashmir and other areas, where terrorism is not yet under control.

ՃԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Mark Juergensmeyer, "The worldwide rise of religious nationalism", *Journal of International Affairs*, Vol.50, No.1, Summer 1996
2. Brian Michael Jenkins "Future trends in International Terrorism", RAND, P-7176, 1985
3. http://www.thehindu.com
4. http://www.timesofindia.com
5. http://www.satp.org (South Asia Terrorism Portal)

6. В.Я.Белокреницкий, В.П.Москаленко, Т.Л.Шаумян «Южная Азия в мировой политике». Москва. «Международные отношения», 2003
7. Saji Cherian "Terrorism and legal policy in India". – New Delhi, 2002
8. «India Today». – New Delhi
9. "Strategic Analysis". – New Delhi
10. Aparna Pande "South Asia: counter-terrorism policies and postures after 9/11". - New Delhi, 2002

ԱՆԱՀԻՏ ԽՈՍՐՈԵՎԱ

ԱՍՈՐԻՆԵՐՆ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՀԵՏՈ

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին երիտթուրքական կառավարության ներշնչումով ու ղեկավարությամբ անագորույն դաժանությամբ կոտորածների ենթարկվեցին նաև ասորիները: Սակայն նրանց ողբերգությունը դրանով իր ավարտին չհասավ: Աշխարհավեր սլստերսւզմի տարիներին և նրանից հետո ասորական ժողովուրդը արյունաքամ էր լինում ինչպես եվրոպական մեծ քաղաքականության սադրանքների. այնպես էլ թուրք, քուրդ, իրանցի բռնավորների կազմակերպած կոտորածների ու հալածանքների հետևանքով:

Առաջին համաշխարհային պատերազմի ավարտն ու Օսմանյան կայսրության անկումն ասորիների մեջ ինքնավարության ստանալու հույսեր արթնացրեց: Թուրքական իշխանությունների կողմից վարվող քաղաքականության հետևանքով անելանելի վիճակի մատնված ասորի ժողովուրդը ստիպված էր որոշակի հույսեր կապել ռուսական և բրիտանական իշխանությունների հետ, որոնք շռայլ խոստումներ էին տալիս, որ ի հատուցումն իրենց ռազմական սջակցության, պատերազմի հաղթական ավարտից հետո Եռյակ համաձայնության երկրները ասորիներին հնարավորություն կտան ստեղծելու անկախ պետականություն: Օ-ղորելով այս խոստումներով, և՛ ռուսները և՛ անգլիացիները թե՛ Օսմանյան Թուրքիայում և թե՛ Իրանում ասորիների արյան գնով լուծեցին իրենց համար մի շարք առաջնակարգ նշանակություն ունեցող ռազմաքաղաքական խնդիրներ և ի վերջո չկատարեցին իրենց խոստումները:

Դեռ 1918 թ. թուրքական յաթաղանից փրկված ասորի գաղթականների մի մասը հասել էր Իրաքի Բա'կուբա քաղաքը, իսկ մյուս մասը, որոնց թիվը հույների հետ հասնում էր մոտ 50-60 հազարի, հասել էր Բաղդադ[1]: Այստեղ նրանց տեղավորել էին բրիտանական բանակի կողմից կառուցված ճամբարներում, ուր նրանք ապրում էին վրանային պայմաններում: Ճիշտ է՝ գաղթականներն ապահովված էին սննդով, սակայն կենցաղային պայմանները անտանելի էին: Ականատեսներից մեկը վկայում էր, որ «սկզբնական շրջանում մահացողների թվաքանակը միջին հաշվով օրե-

կան հասնում էր 70-ից 80-ի: Հայերի և ասորիների դիակները նիվանդյա-նոցից միանգամից գերեզմանոց էին տեղափոխում: Ես քանի որ ասորի զաղթականների թվաքանակն այստեղ ավելի շատ էր, քան՝ հայերինը, հետևաբար նրանց զոհերի քանակը գերակշռում էր»[2]:

Մուդրոսի դաշնագրից հետո Օսմանյան Թուրքիան սկսեց իր զորքե-րը հեռացնել Իրանական Ադրբեջանից: Ասորիները հույսը կապելով Անգլիայի հետ՝ պատրաստվում էին վերադառնալ իրենց նախկին տա-րածքները: Սակայն անգլիական հյուպատոս Սմիթը. Համադանում հան-դես գալով ասորական ղեկավարների ժողովում. հայտնեց. որ «Անգլիան պատրաստ է փոխարինել ասորիների հին ռուսական զենքը նոր անգ-լիականով»[3] և ավելացրեց, որ «իրանական կառավարիչները չեն ցան-կանում. որ ասորիները վերադառնան Ուրմիա. այն էլ զինված վիճակում: Այժմ իրանական կառավարությունը բարեկամորեն է տրամադրված Մեծ Բրիտանիայի հանդեպ. և ցանկալի է. որ Թեհրանի անգլիական դեսպանատանը մենք ունենանք ասորի ազգի ներկայացուցիչ: Այդ դեպ-քում միայն կարելի է կարգավորել իրանական կառավարության և ասո-րիների միջև ծագած հարցերը»[4]: Ժողովում որոշվեց անել այնպես. ինչ-պես առաջարկում են «դաշնակիցները»: Ասորական հրամանատարութ-յունը հրաման արձակեց՝ հավաքել զենքերը. որի համար ստեղծվեց հա-տուկ հանձնաժողով: Շատ չանցած, հայտնվեց անգլիական մի ջոկատ. որը վերցրեց հանձնած զենքը և, ասորի վախստականներին լցնելով մե-քենաները, ուղևորվեց դեպի արևմուտք: Ասորիների մյուս մասը թաքնվեց լեռներում: Ինչպես պարզվեց հետագայում. ասորիներով լի այդ մեքենա-ները հասել էին Միջագետք: Այս կերպ քուրդական սպանդից վերկված ասորիները հայտնվեցին դաշնակից անգլիացիների իշխանության տակ: Այսպիսով, խաբված, լքված, մերժված այդ ժողովուրդը, որը մաշ-վել ու արյունաքամ էր եղել թուրք-քրդական հարվածներից, իր վերջին հույսը կապել էր Փարիզի խաղաղության վեհաժողովի հետ: 1919թ. այդ վեհաժողովին մասնակցում էին մի քանի ասորական պատվիրակութ-յուններ: Այստեղ էին ասորիների հոգևոր առաջնորդ Մար-Շիմունը, քաղ-դեացի ասորիների պատրիարք Ջոզեֆ Էմմանուել Թոմասը, որոնք ի-րենց հետ բերել էին առանձին ծրագրեր: Նշենք, որ ասորական պատվի-րակությունների նախագծերն իրարից գրեթե չէին տարբերվում: Որոշ-վեց, որ պետք է ելույթ ունենա պատվիրակությունների մեջ ամենից հե-ղինակավորը՝ փաստաբանները Մայլիդ Անտուտն Նամեկի. Ռուստեմ Նե-ջիբի և դոկտոր Ժան Զեբունիի գլխավորությամբ, որը ժամանել էր Կ. Պոլսից: Վերջիններս հանդես եկան նախ՝ ինքնավար, ապա ասորական անկախ պետություն ստեղծելու առաջարկով: Ըստ այդ ծրագրի, ասորա-կան ինքնավար պետության մեջ պետք է մտնեին Դիարբեքիրի, Մոսուլի վիլայեթները, Ուրֆան, Տեր-Զորը, Քիթլիսի վիլայեթի Սղերդ սանջակը, Ալեքսանդրեթի նավահանգիստը և Շաղ էլ Արաբ գետի տարածքը՝ Պար-

սից ծոցում: Սակայն այստեղ ասորիներին սպասում էր դառն հիասթափություն, որովհետև ասորական պրոբլեմ. որպես այսպիսին. մեծ պետություններին համար գոյություն չուներ: Ասորական անվանի գործիչ Յոկտան Յոնանը Փարիզում հանդիպումներ ունեցավ աշխարհի ուժեղների՝ Կլեմանսոյի, Լլոյդ Ջորջի, Վուդրո Վիլսոնի մերձավորագույն խորհրդական գնդապետ Հաուզի և այլոց հետ: Փարիզում սակայն հասկացրին. որ Յոնանն այնտեղ սնելիք չունի. որովհետև ասորական հարցը իբր թե լուծվելու է Լոնդոնում:

1920 թ. Սևրի վեհաժողովում քննության դյուրթավ նաև ասորական հարցը: Սևրի դաշնագրի 62-րդ հոդվածում ասվում էր, որ անհրաժեշտ է հաշվի առնել «ասորա-քաղդեացիների պաշտպանության կատարյալ երաշխիքները» երկու երկրներից ցանկացածում, այսինքն Թուրքիայում կամ Իրաքում: Սակայն քեմալականները կտրականապես մերժեցին Սևրի պայմանագրի ճանաչումը: Իրենց լուծերի փոխարեն Սևրի դաշնագիրը ասորիներին տվեց միայն «պաշտպանության երաշխիք», այն էլ հետագայում ինքնավար Քրդստան ստեղծվելու դեպքում: Սևրի պայմանագրով Մոսուլի վիլայեթն անցավ Անգլիային՝: Նշենք. որ Մոսուլի վիլայեթը հարուստ նավթային և կարևոր ռազմավարական նշանակություն ունեցող տարածաշրջան էր: Էլերի հողերն ու նպաստավոր կլիման Մոսուլը դարձրել էին Մերձավոր Արևելքի կարևոր տնտեսական կենտրոններից մեկը: Հենց այստեղ էլ, որպես աշխատուժ և զինուժ պետք էին ասորիները: Սակայն նրանք ինքնակամ Միջագետք չէին գնա. իսկ անգլիացիները դա ստիպողական չէին կարող անել: Նրանք չէին կարող հաշվի չառնել այն հանգամանքը, որ պատերազմի վերջում ասորիները ունեին յոթ հազարանոց զինված բանակ: Եվ դա էր այն հիմնական պատճառը, որ անգլիացիները կազմակերպեցին Սայֆո-Շիմունի սպանությունը. իսկ Մալիք Յոնանին ուղարկեցին Թեհրանի անգլիական հյուպատոսություն՝ որպես ասորական ներկայացուցիչ: Անգլիացիների այս քայլերին հետևեց նաև ասորի ազգի ռազմական առաջնորդ յեգենյար Աղա Պետրոսի ձերբակալությունը:

Ի վերջո անգլիացիների քմահաճ կամքով ասորիները դատապարտվեցին ապրելու Իրաքի քրդական ու արաբական բնակչության ունեցող թշնամական միջավայրում: Մովամահության ենթարկելու սպառնալիքով անգլիացիները ասորիներից կազմակերպեցին զինված ջոկատներ, որոնք կոչված էին պայքարել հակասանգլիական շարժումների դեմ և նպաստելու Մոսուլի հարցի լուծմանը:

1920 թ. ամռան վերջին, երբ ասորի գաղթականները զբաղված էին իրենց առօրյա հոգսով, այնտեղները պատրաստվում էին հարված հասցնել տեղի ոսանգլիացիներին և նրանց «հովանավորության տակ գտնվող» ասորիներին: Այնքերների կողմից ճամբարը շրջափակելուց հետո, գաղթականների հարցերով պատասխանատու անգլիացի գնդապետ Ք. Օռե-

նը, հավաքելով ճամբարների ղեկավարներին՝ հայտարարեց. «Մենք շրջափակված ենք արաբներով: Սակայն անգլիացիներն իրենց ուժերով միայնակ չեն կարող ձեզ պաշտպանել: Մեզ հարկավոր է ձեր օգնությունը»: Ասորի գաղթականներն, իհարկե, օգնեցին անգլիացիներին՝ հակահարված հասցնելու արաբներին, որոնցից շատերն ընկան ասորի մարտիկների ձեռքով[6]:

1920 թ. սեպտեմբերի 13-ի դրությամբ ասորի փախստականների մասին անգլիական կառավարությանը հաշվետվություն ներկայացվեց. «Օգոստոսին ասորի գաղթականների ճամբարը հիմնվեց: Բաքուբայի և Բա'կուբայի ճամբարների 40 հազարի չափ ասորիներից 30 հազարը մեկնեցին Մոսուլի վիլայեթ, այնտեղից նպատակ ունենալով հասնել իրենց «սեփական երկիր»[7]: Անգլիացիներին, իհարկե, դա ձեռնտու չէր. նրանք ցանկանում էին ասորիներին պահել իրենց աչքի առաջ՝ Իրաքում: Այնուամենայնիվ ասորիների մի փոքր զանգված, ըստ երևույթին, իրոք շարժվել է դեպի այս տարածք, որովհետև 1927թ. Թուրքիայում կատարված մարդահամարի տվյալների համաձայն, Հաքյարիի տարածքում ապրում էին յոթ հազար ասորիներ[8]:

1921 թ. փետրվարի 21-ից մարտի 14-ը տեղի ունեցավ Լոնդոնի կոնֆերանսը, որտեղ Ֆրանսիայի և Իտալիայի առաջարկով վերանայվեց Սևրի պայմանագիրը: Թեմզայի ափին ասորական պատվիրակության ներկայացուցիչ դոկտոր Յոնանը հանդիպեց Ֆորին օֆիսի արհամարական ու կոշտ վերաբերմունքին:

Թեև հուսահատության եզրին հասած ասորիների թախանձանքներին ընդառաջելով Ազգերի լիգան ասորական հարցը մտցրեց 1922-1923 թթ. տեղի ունեցած Լոզանի կոնֆերանսի օրակարգի մեջ, սակայն այդ հարցը կոնֆերանսում տապալվեց: Անգլիացիներին ասորիները հարկավոր էին Իրաքում քրդերին ու արաբներին հակակշիռ ստեղծելու համար, իսկ ֆրանսիացիներին ասորական հարցը բնավ չէր հուզում, ընդհակառակը, այն կարող էր անցանկալի կերպով արտացոլվել Սիրիայում իրադրության վրա: Թուրքերն էլ, արագորեն կռահելով, որ Անտանտի տերությունները ասորական խնդիրը բարձրացրել են լոկ տակտիկական նպատակներով, Իսմեթ Ինենուի բերանով պատասխանեցին վճռական «ոչ»-ով: Հենց կոնֆերանսի օրերին թուրքական իշխանությունները 20 հազար ասորիների Թուրքիայի տարածքից վտարեցին դեպի Իրաքի սահմանները, այսպես կոչված բրյուսելյան գիծ: Ազգերի լիգան ոչ մի քայլ չձեռնարկեց ասորական խնդրի լուծման, այդ ժողովրդին որևէ օգնություն ցուցաբերելու ուղղությամբ: Լոզանի պայմանագրի կնքումից հետո ասորիները կանգնեցին իրենց ազգային և մշակութային արժեքները կորցնելու վտանգի առաջ: Նրանք չէին կարող իրենց լեզվով հոգևոր և մշակութային գործունեություն ծավալել, զարգացնել իրենց ավանդույթները: Ասորական գյուղերում բացվեցին թուրքական դպրոցներ: Գյուղեր

բողջ խնդիրը կայանում էր նրանում, որ այդ բոլորից իրենք ասորիները ոչինչ չշահեցին:

1932 թ. Իրաքում քրիստոնական «հովանավորչության» ժամկետը լրանալուց հետո 70 հազար ասորիներ խնդրանքով դիմեցին իրենց քննակավայրերում հողակտորներ ստանալու համար: Սակայն Բաղդադը թշնամաբար ընդունեց «երախտամոռ» ասորիների այդ բնական ու համեստ պահանջը և ուժեղացրեց իր բռնաճնշումները: Իսկ անգլիացիները, որոնք այլևս ասորիների ծառայությունների կարիքը չունեին, լքեցին նրանց, այդ ժողովրդի ճակատագիրը թողնելով բախտի քմահաճույքին: Ավելին, երես թեքելով իրենց նախկին դաշնակիցներից, անգլիացիները նրանց մտանեցին Իրաքի հետաղիմության ձեռքը, որը չհապաղեց հաշվեհարդար տեսնել ասորիների հետ՝ կազմակերպելով նրանց ջարդերը:

1933 թ. հուլիսի 18-ին Մար-Շիմունը Իրաքում համարվեց անցանկալի անձնավորություն և ստիպված եղավ մեկնել Կիպրոս: Այստեղ նա իր ծայնը բարձրացրեց քրիստոնական անտարբերության դեմ: Ի պատասխան դրան. անգլիացիները սկսեցին կրկին սեպ խրել ասորիների. քրդերի և արաբների միջև՝ փորձելով ասորական հարցը լուծել վերջիններիս վերջնական ոչնչացմամբ:

Ըստ Ռ. Ստաֆֆորդի, որն Իրաքի արտաքին գործերի նախարարության նախկին վարչական տեսուչն էր՝ «Ասորական հարցն ինքնին քաղաքական հարց է»[11]: Եվ այդ քաղաքական հարցը անգլիացիները փորձում էին լուծել այդ ժողովրդին ամեն կերպ նեղելով:

1933 թ. օգոստոսի վերջին, երբ 1000 ասորիներ փորձում էին Սիրիա՝ ֆրանսիական հովանավորչության գոտի տեղափոխել իրենց ընտանիքները, Տիգրիս գետի ավելի Իրաքի իշխանությունները գենք գործադրեցին նրանց նկատմամբ: Ասորիները պատասխան քայլերի դիմեցին և հաջողությամբ անցան Սիրիա: Իրաքյան բանակը այս պարտության վրեժը լուծեց ասորական գրողերի խաղաղ քնակչությունից: Միայն Սեմմել սասորաբնակ գյուղում զոհվում է երեք հազար մարդ: Սեմմելի եկեղեցում հայտնաբերվում են ողջակիզված երեխաների բազմաթիվ դիակներ: Պետք է նկատել, որ այս ջարդերին իրաքյան կառավարությունը ոչնչով չխոչընդոտեց: Ավելին, ջարդերի կազմակերպիչը ստացավ գեներալի կոչում: Այս դեպքերի մասին վկայող իրաքյան արխիվները փակվեցին թագավոր Ֆայսալ I-ի մահից հետո:

Այն, որ 1933 թ. ասորիների կոտորածներն Իրաքում անգլիացիների ձեռքի գործն է, կասկած չկա: Ռ. Ստաֆֆորդն այդ կապակցությամբ գրում է. «Կասկած չկա, որ 1933թ. դեպքերը հարված հասցրեցին Անգլիայի հեղինակությանն Իրաքում, ինչպես նաև ամբողջ Աբևելքում: Իրաքի քնակչությունը, արդարացի, թե՝ ոչ, գտնում է, որ մենք դավաճանեցինք մեր ընկերներին՝ ասորիներին»[12]:

1933 թ. ռազեդգական դեպքերը պատճառ հանդիսացան, որ ասորիները ցրվեն աշխարհով մեկ. սկզբում՝ սահմանակից երկրներ, ապա՝ Եվրոպա, Ամերիկա և Ավստրալիա:

Յավով պետք է նշել, որ ասորիները էլ իրենց հերթին դասեր չքաղեցին պատմությունից և, մոռանալով անցյալի դառը ճակատագիրը, 1941թ. ապրիլ-մայիս ամիսներին մտան ռազմական կոնֆլիկտի մեջ՝ իշան Ռըշիտանիայի: Իրաքում տեղավորված Royal Air Force անգլիական բազան 1500 ասորիների շնորհիվ փրկվեց կործանումից: Նշենք, որ Իրաքի պարտությունը կարևոր էր նացիստական Գերմանիայի դեմ պատերազմն ելքը Մերձավոր Արևելքում որոշելու համար:

1945 թ. մայիսի 7-ին ասորիների հոգևոր առաջնորդ Մար-Շիմունը ելույթ ունենալով ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայում, փորձեց ստանալ մեծ տերությունների աջակցությունը՝ իր ժողովրդի դատը սյաշտպանելու խնդրում, սակայն կրկին ապարդյուն:

Այսօր աշխարհով մեկ սփռված ասորի ժողովուրդը մարդու իրավունքների հարգման, ինքնավար պետություն ունենալու կարիք է զգում և շարունակում է իր դարավոր ու սրտմտոր պայքարը: Ասորիների հարցը միջազգային լուծում է պահանջում: Այս խնդիրը առ այսօր դուրս է մնացել համաշխարհային հասարակայնության ուշադրությունից, որի ուղղությամբ անհրաժեշտ են լուրջ գիտական ուսումնասիրություններ և լայն քաղաքական քննարկումներ տարբեր երկրների պաշտոնական շրջանակներում՝ ի պաշտպանություն ասորի ժողովրդի և ի նպաստ պատմական արդարության վերականգնման:

ANAHIT KHOSROYEVA

ASSYRIANS AFTER THE FIRST WORLD WAR

During WWI Assyrians as well as Armenians underwent massacres and deportation. 1914-1918 in Ottoman Turkey and andjoined countries where about 1.000 000 Assyrians lived according to measures of international law the real genocide took place.

The falling of Ottoman Empire evoked hopes of getting an autonomy among Assyrians. A few Assyrian delegations took part in Parisian conference, 1919. The delegation headed by

advocates Sayid Antuan Namek, Rustem Nedjebi and doctor Jean Zebuni which arrivied from Constatinople was the most active. They came out in favour of an idea of establishing autonomy

and then independent state. According to this program Diyarbekir, Mosul vilayets, Urfa, Der- Dzor, the province of Seyerd /vilayet of Bitlis/, the harbour Alexandret in the Mediterranean Sea and the territory near Shade-ele-Arab /the Persian Gulf/ had to be included in the state. But instead of these aspirations the Sevr pact gave to the

Assyrian people only "the guarantee of defence" but in case of establishing autonomous Kurdistan.

In 1923 in Lozan the conference put an end to all the illusions. Here the Assyrian matter wasn't even auditioned. Just in the days of the conference Turkish authorities exiled 20,000 Assyrians from Turkey to the bounds of Iraq to the so-called "Brussels line". The League of Nations didn't take measures for settling the Assyrain matter, for helping the people either. And what is more on 26 December 1925 the League of Nations bringing to naught hopes of autonomy transferred Hakkary to Turkey and Mosul to Iraq. The Assyrians became aliens on their own historian land.

The tragic events of 1933 in Iraq caused Assyrians' migration to all over the world. On 7 May, 1945 giving a speech at the General Assembly of the UNO the chief ecclesiatic leader of the Assyrians Mar-Shimoun made unsuccessfull attempt to recieve a powerful backing from Great Powers for settling the Assyrian matter. On 7 May, 1945 giving a speech at the General Assembly of the UNO the chief ecclesiatic leader of the Assyrians Mar-Shimoun made unsuccessfull attempt to recieve a powerful backing from Great Powers for settling the Assyrian matter.

The international decree should not be to eliminate Assyrians from history. They should not be considered as a people who disappeared off the face of the earth at the time of the collapse of their empire. Assyrians hope that countries such as Turkey harbouring sich a past will be compelled to evaluate their past with objectivity and humanitarianism so that future evils may be forestalled.

ՁԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Վարդանեան Ե., Ամապատէ անապատ, Վենետիկ, 1923, էջ 53:
2. Նույն տեղում, էջ 111-112:
3. Мар-Юханна Я. И., Мемуары, Т., 1966, с.105.
4. Матвеев К. П. (Бар-Маттай), И. И. Мар-Юханна, Ассирийский вопрос во время и после первой мировой войны, М., 1968, с. 80.
5. Брукс М., Нефть и внешняя политика, М., 1947.
6. Gilliana Sh. Z., Assyrians in the Wilderness, Chicago, 2000, p. 57-58.
7. ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 575, թ. 9:
8. Բաղալյան Գ., Վանի նահանգը 1840-ական-1914թթ. (վարչա-քաղաքական և դեմոգրաֆիական ուսումնասիրություն), «Բանբեր Երևանի համալսարանի», N 3, Ե.,1986, էջ 22:
9. News-week, 1988 may.
10. Stafford R.S., The Tragedy of the Assyrians, London, 1935, p. 119.
11. Նույն տեղում, էջ 207.
12. Նույն տեղում:

ՌՈՒԲԵՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԻՐԱՔՈՒՄ ՃԱՊՈՆԻԱՅԻ ՌԱԶՄԱԿԱՆ ՆԵՐԿԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Երկրորդ համաշխարհային պատերազմում ծանր պարտություն կրած Ճապոնիայում 1946թ. պարտադրվեց «խաղաղ սահմանադրություն» ընդունումը, որը մինչ օրս մնացել է անփոփոխ: Նրա 9-րդ հոդվածով սահմանափակվում է "կանոնավոր բանակ պահելու ու պատերազմական գործողություններ իրականացնելու" Ճապոնիայի իրավունքը: Սառը պատերազմի տարիներին վերոհիշյալ հոդվածի վերանայումը ոչ միայն անհնար էր քաղաքական վերնախավի և բնակչության լայն զանգվածների բացասական վերաբերմունքի պատճառով, այլ նաև աննպատակահարմար և անիրատեսական էր աշխարհաքաղաքական առումով: Ճապոնիայի իշխանություններն ու ժողովուրդը կենտրոնացնելով իրենց ողջ ներուժը ստեղծագործ գործունեության վրա կարողացան արձանագրել տնտեսական աճի չտեսնված տեմպեր ու ապահովել անհախադեպ տեխնոլոգիական առաջընթաց: Արդյունքում Ճապոնիան դարձավ արդյունաբերական հսկա՝ իր արժանի տեղը գրավելով աշխարհի ամենազարգացած երկրների շարքում: Այդուհանդերձ, Ճապոնիան տնտեսապես հզոր տերություններից մեկը լինելով տասնամյակներ ի վեր չունի դերակատարություն ուներ միջազգային կարևորագույն հիմնախնդիրների կարգավորման գործում: Փաստորեն Ճապոնիայի տնտեսական զարգացման մակարդակը չէր համապատասխանում միջազգային անվտանգության համակարգում նրա ունեցած դերին: ԽՍՀՄ փլուզումից հետո և միջազգային նոր աշխարհակարգի ձևավորման պայմաններում Ճապոնիայի իշխանություններն առջև կանգնեց այդ անհամապատասխանության աստիճանաբար վերացման հարցը:

Ասիական մայրցամաքում ստեղծված նոր աշխարհաքաղաքական իրականության (ԱՄՆ-ի և Չինաստանի միջև աստիճանաբար ծավալվող պայքարը), Ճապոնիայի վատթարացող տնտեսական իրավիճակն ու քաղաքական ասպարեզում նոր սերնդի ի հայտ գալը նույնպես նպաստեցին երկրի արտաքին քաղաքական ռազմավարության ևսկտիվացմանը:

1997թ. սկսած Ճապոնիայի ռազմական հայեցակարգում հայտնվեցին նոր միտումներ: Այսպես, նույն թվականին Ճապոնիայի պաշտպանության նախարարության կողմից հրապարակված «Սպիտակ թղթում» ամրագրվեցին Ճապոնիայի Ինքնապաշտպանական Ուժերի (ՃԻՈՒ) տարածաշրջանային ռազմական ուժի վերածելու մտադրությունները: Արդյունքում, 1999թ. Ճապոնիան II աշխարհամարտից հետո առաջին անգամ մասնակցեց ԱՄՆ կողմից Գուամում իրականացված զորավարժություններին՝ տեղակայելով այնտեղ իր ռազմական օդանավերից մեկը: Նույն 1999թ. ՃԻՈՒ-ն օդային ուժերի հնարավորությունները բարելավելու նպատակով ձեռք բերեց չորս "Boeing 767" վերահսկողական օդանավ: 2000թ. Տոկիոն պայմանագիր ստորագրեց Սինգապուրի հետ վերջինիս ռազմական բազաները հնարավոր ճգնաժամի ժամանակ օգտագործելու վերաբերյալ: Ռազմական քաղաքականության ակտիվացումը շարունակվեց նաև 2001թ.: Տոկիոն պատրաստվում է գնել "Boeing 767" տիպի օդանավեր թռիչքի ընթացքում օդանավերի լիցքավորումն իրականացնելու նպատակով օգտագործելու համար: Դա հնարավորություն կտա մեծացնել ռազմակայաններում տեղակայված F-15 օդանավերի գործողությունների տարածքը մինչև 3000 մղոնի: Վերջին "Aegis" տիպի կործանիչների ձեռքբերումը շեշտակիորեն բարելավեց Ճապոնիայի ծովային հետախուզության հնարավորությունները: ԱՄՆ ռազմական զեկույցների համաձայն, Ճապոնիայի զինված ուժերը ի վիճակի են բարձր մակարդակով փոխգործակցության ԱՄՆ-ի տեխնոլոգիապես առաջատար ուժերի հետ[1]: Պետք է արձանագրել, որ արդեն իսկ 2001թվականին՝ երբ իշխանության եկավ Ջունիչիրո Կոիձումիի գլխավորած կառավարությունը, ապա երկիրն ուներ աշխարհի ամենազարգացած ռազմաարդյունաբերական համալիրներից մեկը[2]: 2001թ. սեպտեմբերի 11-ին Նյու-Յորքում տեղի ունեցած դեպքերն ու այնուհետև ԱՄՆ-ի գլխավորությամբ միջազգային ահաբեկչության դեմ ծավալված պայքարը ստեղծեցին պաշտոնական Տոկիոյի համար այն բարենպաստ միջազգային մթնոլորտը, երբ Ճապոնիան մի կողմից չէր կարող իր գործնական օժանդակությունը չցուցաբերել իր ռազմավարական դաշնակցին՝ ԱՄՆ-ին, իսկ մյուս կողմից էր փորձեց առիթը օգտագործել նաև միջազգային անվտանգության համակարգում իր դիրքերն ամրապնդելու համար: Նամանավանդ, որ այդ նույն պատճառաբանությամբ, չնայած իր «խաղաղ սահմանադրությանը», Ճապոնիան տարիների ընթացքում արդեն իսկ Ինքնապաշտպանական Ուժեր համեստ անվանման տակ ստեղծել էր հզոր և ժամանակակից բանակ: ՃԻՈՒ-ի վրա ծախսվում է երկրի բյուջեի շուրջ 6.1 տոկոսը (շուրջ 50 մլրդ. ամ. դոլար), որը կազմում է Ճապոնիայի ՀՆԱ-ի 0.995%-ը[1]: ՃԻՈՒ-ն իր տրամադրության տակ ունի խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում ամենամեծ նավատորմը ԱՄՆ-ից հետո, իսկ նրա ցամաքային ուժերը գերազանցում են Բրիտանական թագավորական բանակն ու նավատորմը իրար հետ գումարած: Վերոհիշյալ տրամաբանությամբ ղեկավարվելով, 2001թ.

յնտրություններից անմիջապես հետո խորհրդարանում իր առաջին իսկ ելույթում, Ճապոնիայի վարչապետ Ջունիչիրո Կոիզումին նշեց, որ «քաղաքական դնկավարության պարտականությունն է՝ ճշտել թե ինչպիսի ուսմակարգ պետք է ստեղծվի. եթե ժողովուրդն ու պետությունը հայտնվեն ճգնաժամային վիճակում»: Ջ. Կոիզումին վստահեցրեց, որ ինքը կներկայացնի «արտակարգ օրենսդրություն» (emergency legislation) փոփոխվող անվտանգության կարիքների հոգալու համար[4]:

Հարկ է նշել, որ Ճապոնիայի քնակչության վերաբերմունքը սահմանադրության նշված հոդվածի նկատմամբ շարունակում է մնալ բաժանված: Նրկրի 50%-ը դեմ է արտահայտվում սահմանադրության այդ հոդվածի վերանայմանը, իսկ մյուս կեսը՝ կողմ: Վերջին սոցիոլոգիական հարցումների համաձայն, երիտասարդության և միջին տարիքի ճապոնացիների մեծամասնությունն պատրաստ է, որպեսզի իրենց երկիրը ավելի մեծ դերակատարություն ունենա Ասիայի անվտանգության համակարգում[5]: Նրե ճապոնական հասարակությունը բաժանված է այդ հարցի վերաբերյալ, ապա թե կառավարող լիբերալ- դեմոկրատական կուսակցությունը՝ ի դեմս երկրի վարչապետ Ջ.Կոիզումիի, և թե երկրի գլխավոր ընդդիմադիր ուժը՝ դեմոկրատական կուսակցությունը. միևկայնիք են սահմանադրական վոփոխություններն իրականացնելու անհրաժեշտության հարցում: Ճապոնիայի վարչապետը վերջերս կառավարության մամուլի ակումբում տված հարցազրույցի ընթացքում նշել է. «Սահմանադրական բարեփոխումներն այս պահին չեն Ճապոնիայի համար: Լիբերալ-դեմոկրատական և դեմոկրատական կուսակցությունների խորհրդարանական քննարկումներն պետք է ավարտվեն այդ նպատակին ուղղված օրենքների ընդունմամբ: Մեր կառավարության դիրքորոշումն այդ հարցում կայանում է սահմանադրական մեկնաբանություններն անփոփոխ թողնելու մեջ: Հնձարկումներ կենսագործվում են սահմանադրական վերանայումները իրականացնելու մեջ»[6]: Սակայն այս հարցը խորհրդարանական երկարատև քննարկումներ պահանջող բարդ գործընթաց է: Փոփոխությունների նախագիծը վարչապետի խոսքերով լիբերալ- դեմոկրատական կուսակցությունը պատրաստ է ավարտել մինչև 2005թ. վերջը, իսկ դեմոկրատական կուսակցության ղեկավար Նաոտո Կանի խոսքերով իր կուսակցությունն այդ գործընթացը կավարտի մինչև 2006թ. վերջը: Տարածաշրջանի այլ պետություններ, ի հակազդեցություն Չինաստանի աստիճանաբար ծավալվող ազդեցությանը, նույնպես շահագրգռված են Ճապոնիայի զինված ուժերի ակտիվացման հարցում: Այսպես, Ավստրալիան և Սինգապուրը բազմիցս կոչեր են արել Տոկիոյին մեծացնել իր դերակատարությունը տարածաշրջանային անվտանգության համակարգում: Սակայն ամենահիմնական ուժը, որը մղում է Ճապոնիային նոր դեր ստանձնելու ուղղությամբ դա Վաշինգտոնն է: Մեծացնելով Տոկիոյի կշիռը Չինաստանի ծավալումը զսպելու գործում, հատկապես 2001թ. սեպտեմբերի 11-ից հե-

սու, Ճապոնիայի աջակցությունը ԱՄՆ-ին՝ վերջինիս կողմից ծավալված հակաահաբեկչական համընդհանուր պայքարում. ձեռք է բերում ծայրահեղ կենսական նշանակություն: Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո առաջին անգամ 2001թ. նոյեմբերին Ճապոնիան մասնակցեց իր սահմաններից դուրս իրականացվող ռազմական գործողություններին. գործուն աջակցություն ցուցաբերելով Գուամում և Սան-Դիեգոյում տեղակայված ԱՄՆ-ի նավատորմին:

Եթե Աֆղանստանում Ճապոնիան մասնակցեց վերակառուցման տնտեսական ծրագրերի ֆինանսավորման տեսքով, ապա Ճապոնիայի կողմից Իրաքում անմիջական զինվորական ներկայությունը ավետեց սրակապես նոր դարաշրջանի սկիզբ պաշտոնական Տոկիոյի համար:

Այսպես, 2003թ. հուլիսին Ճապոնիայի խորհրդարանում վարչապետ Ջ. Կոիզումիի կողմից ներկայացված հակաահաբեկչական օրենքի նախագծի ընդունմամբ՝ Իրաքում վերակառուցողական աշխատանքների իրականացմանն աջակցություն ցուցաբերելու նպատակով, կառավարությանը իրավունք տրվեց 1000-ին հասնող «ինքնապաշտպանական» ուժեր ուղարկել Իրաք: 2004թ. փետրվարին հումանիտար և խաղաղապահ գործողությունների իրականացման նպատակներով Իրաք մեկնեց ճապոնական ցամաքային փորձագիտա-հետազոտական զինվորական խումբը: Երկրորդ Համաշխարհային պատերազմից հետո Ճապոնիայի զինված ուժերն առաջին անգամ իրենց սահմաններից դուրս ձեռնարկեցին նման ընդարձակ ու վտանգավոր[7] առաքելություն: Ուժերի մեկնումից առաջ, 2004թ. փետրվարի 1-ին, Հոկայդոյի Ասահիկավա քաղաքում կազմակերպվեց պաշտոնական արարողություն՝ վարչապետ Ջ. Կոիզումիի և Ճապոնիայի Պաշտպանության Գործակալության ղեկավար Շիգերու Իշիբայի մասնակցությամբ: Վարչապետի, ինչպես նաև Պաշտպանության Գործակալության ղեկավարի ելույթներն ուղղված զինվորներին և նրանց հարազատներին, հաստատում էին նախապես հնչած իշխանության դիրքորոշումներն այդ հարցում, այն է՝ Իրաքում «միմիայն հումանիտար և խաղաղապահ գործողությունների իրականացում»[8]: Երկրի վարչապետի խոսքերով, այս առաքելությունն այնքանով է կարևոր Ճապոնիայի համար, որ այն կպաշտպանի երկրի պարտավորությունները միջազգային հանրության առջև: «Ճապոնիայի կառավարության ինքնապաշտպանական ուժերը կարող են գրանցվել ՄԱԿ-ի կողմից խաղաղապահ գործողություններ իրականացնող մասնակիցների թվում: Միևնույն ժամանակ այն կամրապնդի չորս տասնամյակ գոյություն ունեցող ԱՄՆ- Ճապոնիա դաշինքը».- նշեց Ջ. Կոիզումին[9]: Իրաքում ճապոնացի զինվորների ներկայությունը վկայում է միջազգային անվտանգության համակարգում Ճապոնիայի դերի ակնհայտ ակտիվացման մասին: Հատկապես հաշվի առնելով Տոկիոյի հավակնությունները ՄԱԿ-ի Անվտանգության Խորհրդում մշտական անդամ դառնալու

ությամբ: Կարծում ենք այսուհետ ևս մենք ականատես կլինենք Ճապոնիայի ռազմաքաղաքական դերի ակտիվացմանը թե՛ ասիական-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում և թե՛ միջազգային հանգուցային հիմնախնդիրների կարգավորման գործընթացներում:

Հաշվի առնելով վերոհիշյալը, ինչպես նաև Ճապոնիայի արտաքին քաղաքականության հայեցակարգի հնարավոր փոփոխությունները՝ անհրաժեշտություն է: Ցկատվում նոյնի մոտեցում որդեգրել նաև հայ-ճապոնական հարաբերությունների ողջ համակարգի նկատմամբ:

ROUBEN KARAPETIAN

JAPANESE MILITARY PRESENCE IN IRAQ

The article provides short background on Japanese Self Defence Forces and what lies behind the decision of the Japanese government for sending its small military contingent to Iraq in February 2004. By sending the troops to Iraq Tokyo is trying to rejoin the ranks of the great powers and play a full-fledged security role not only in the region but on the wider world stage. Taking into consideration the substantial changes in the Japanese foreign political agenda, a new approach to the whole system of Armenian-Japanese bilateral relations is required.

ՃԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. http://www.stratfor.com. Will Japan Rearm. February 2001.
2. Ճապոնիայի յանուկի թվաքանակը կազմում է 236.600 զինվոր (46.000 պահուստային): *Ցամաքային ինքնապաշտպանական ուժերը* կազմված են 13 դիվիզիայից, 950 զրահատեխնիկայից, 463 ուղղաթիռից, 800 միավոր հրետանային տեխնիկայից: *Ծովային ուժերը* բաղկացած են՝ 16 սուզանավից, 58 վերջրյա նավերից, 35 ականազերծող նավերից, 110 օդանավերից, 99 ուղղաթիռից: *Օդային ուժերը*՝ 368 կործանիչ, 42 տրանսպորտային և 182 այլ օդանավերից:
3. Japan Almanac 2003. Defence Spending, p.47, Asahi Shimbun, Tokyo.
4. Cato Institute, "Japan takes a Modest Step Toward Global Security", by Ted Galen Carpenter, January 8, 2002
5. "Japan Times", 22.11.2003
6. "Japan Echo", Vol.32. N2. April 2004
7. Իրաքցիների կողմից 3 ճապոնացիների պատանդ վերցնելը լուրջ փորձություն եղավ Կոիզումիի կառավարության համար: Սակայն արաբական որոշ երկրների միջնորդության (հիմնականում Սիրիայի) շնորհիվ հնարավոր եղավ պատանդների ազատ արձակումը: www.imra.org.il Syrian FM blames US for kidnappings in Iraq. 10.04.2004
8. "Asahi Shimbun", February 2, 2004
9. "Yomiuri Shimbun", February 1, 2004

ԱՂԱՎՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԼԻԲԱՆԱՆՅԱՆ «ՀԻԶԲԱԼԼԱՀԸ» ՈՐՊԵՍ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾՈՆ

Իսլամի պատմության նպագույն շրջանի համար առավել հատկանշական է դարձել կրոնաքաղաքական շարժումների ակտիվացումը, որոնց հիմքում թեև ընկած է աստվածաբանական ենթատեքստը, այնուամենայնիվ, առավել հետաքրքրություններն ու վերլուծությունները ցույց են տալիս, որ իսլամի դրոշի տակ հանդես եկող հասարակական-քաղաքական խոսնքները նվազագույն չափով են կապված կրոնական ու հոգևոր ոլորտների հետ՝ հիմնավորապես առաջնորդվելով սոցիալ-տնտեսական և քաղաքական նկատառումներով: Ակնհայտ է, որ իսլամխոսների գործունեության ակտիվացմանը նպաստեց մերձավորարևելյան հակամարտության կարգավորման գործընթացում ստեղծված փակուղային իրավիճակը՝ զգալորեն ընդլայնելով տարածաշրջանի հակամարտությունների շրջանակը, որոնց ուժային դաշտը համարվում էր արաբա-իսրայելական հակամարտությունն ու համաշխարհային երկու հակամարտող համակարգերի առճակատումը: Իսկ արաբա-իսրայելական պատերազմներում սեփական իշխանությունների կողմից «փոքր» Իսրայելին հաղթելու անկարողությունը, ԱՄՆ-ի վարած իսրայելամետ քաղաքականությունը և «չափավոր» արաբական վարչախմբերի հետ ԱՄՆ-ի համագործակցությունը, մուսուլմանական միջավայրում Սիացյալ Նահանգների և նրան սատարող երկրների ու քաղաքական ուժերի նկատմամբ ծայրահեղ հակակրանք և անհանդուրժողականության մթնոլորտ ստեղծեցին:

Վերոհիշյալ գործընթացների համատեքստում առանձնահատուկ ուշադրության է արժանի ինչպես գլոբալ ու տարածաշրջանային, այնպես էլ կլանային ու ներհամայնքային հակամարտությունների մարտադաշտի վերածված Լիբանանը, որտեղ 70-ականներին ամուր պետականության բացակայության, միջհամայնքային հակասությունների սրման հետևանքով նրանց միջև հաստատված դաշինքի[1] քուլացման արդյունքում սկիզբ առած ճգնաժամը, զուգակցվելով պաղեստինյան գործոնի հետ, արտահայտվեց կրոնա-դավանական համակարգի դեմ պայքարի

յի վերահսկողության տակ էր գտնվում) ուղարկեց «Իրանի հեղափոխական պահակազորի» 1000 փառաղրաններ[7]: Լիբանանի հյուսնամետ շիա շարժմանն օգնություն տրամադրելու նպատակով: Եթե 80-ականներին շիա համայնքում իր դիրքերն ամրապնդած Նաբիհ Բերրին չէր ցանկանում ազդեցությունը կորցնել դեպի Իրանը կողմնորոշվող իր համայնքի նկատմամբ, ապա Սիրիան չէր ցանկանում Թեհրանի կղերական վարչախմբին Լիբանանի ներքին գործերում ուղղակի միջամտության հնարավորություն ընձեռել[8]: Իրանն իր հերթին, հզոր քարոզարշավ կազմակերպեց Նաբիհ Բերրիի նկատմամբ՝ միաժամանակ մեծ գաղափարական և ֆինանսական օժանդակություն ցուցաբերելով նրա տեղակալ Հուսեյն Մուսավիին, որն իր կողմնակիցների հետ հեռանալով «ԱՄԱԼ»-ի շարքերից, նոր կազմակերպություն հիմնադրեց՝ դառնալով Լիբանանում իրանական արտաքին քաղաքականության իրականացման գլխավոր գործիքներից մեկը[9]: Միևնույն ժամանակ, Նաբիհ Բերրիի հետ իր քաղաքական հայացքները չկիսող «ԱՄԱԼ»-ի անդամ Իբրահիմ ալ-Ամինը, Մուհամմեդ Հուսեյն Ֆադլալահի[10] ակտիվ մասնակցությամբ, Բաալբեկում ծեռնամուխ եղավ լիբանանյան «Հիզբսոլլահ» կազմակերպության[11] («Աստծո կուսակցության») ստեղծման գործին[12]: «Հիզբալլահի» հետևորդների հոգևոր ու ֆինանսական կնքահայրը դարձավ այաթոլլահ Խոմեյնին, որի կողմից կազմակերպությանը տրամադրվող ֆինանսական և ռազմական օգնությունը խորապես գաղափարականացված էր և խարխխվում էր պատմական խոր արմատներ ունեցող շիական դոկտրինայի ու գաղափարական դրույթների վրա՝ բացառելով Իսրայելի պետության գոյության փաստի ճանաչումը:

Կազմակերպչական առումով «Հիզբսոլլահը» շատ ավելի հիշեցնում էր ազատ կառույց ունեցող գաղափարական շարժում, քան կուսակցություն[13]: Այն գաղափարապես մոտ կանգնած խմբերի և զինյալ ջոկատների դաշինք էր, որոնք գործում էին Բեյրութում, Բեքաայի հովտում ու Հարավային Լիբանանում:

1985 թ. հյուսնամետ ծայրահեղական կազմակերպությունների մասնակցությամբ Իրանում կայացած խորհրդաժողովի ժամանակ «Հիզբալլահի», «ԱՄԱԼ Իսլամիի» և լիբանանյան այլ խմբավորումների առաջնորդները հյուսնց երկարաժամկետ ծրագրային նպատակներ հայտարարեցին ալ-Քուդս սուրբ քաղաքի և Լիբանանի հարավի գրավյալ տարածքների ազատագրումը, Իսրայելի՝ մասնավորապես սիոնիզմի, ԱՄՆ-ի, Ֆրանսիայի և արևմտամետ արաբական վարչախմբերի[14] դեմ պայքարի ծավալումը, ճահատակության և ինքնազոհաբերման գնով «Աստծո թշնամիների» ոչնչացումը, Լիբանանում իրանական տիպի իսլամական հանրապետության ստեղծումը[15]:

Կազմակերպությունը մշտապես հետապնդել է համաիսլամական ու միջազգային նպատակներ, սրի անունն իսկ խոսում է պայքարի վերազ-

կերպաթյան, որը 1991 թ. վերածվեց երկրի հարավում իսրայելական զորքերի դեմ գործող լիբանանյան դիմադրության ոազմական առաջատար ուժի:

Հետագայում, 1989 թ. այաթոլլաե Խոմեյնու մահվան[20], 1991 թ. Ծոցի պատերազմից հետո ԱՄՆ-ի միջազգային դերի բարձրացման, 1991 թ. կոմունիստական դաշինքի փլուզման, արաբա-իսրայելական խաղաղության գործընթացի թափացյալ կարգավորման, Սիրիայի՝ ահաբեկչության սուտարող երկրների պիտակից ազատվելու և Արևմուտքի հետ իր հարաբերությունների բարելավման ցանկությամբ էր պայմանավորված 1990-ականներին Արևմուտքի դեմ «Հիզբալլահի» միջազգային ահաբեկչական գործունեության ակտիվության թուլացման հանգամանքը, որը 1990-ականների սկզբներին զատ կիսառազմական ծայրահեղ տիպի խմբավորումից սկսեց աստիճանաբար վերածվել լիբանանյան հասարակական-քաղաքական ակտիվ ուժի: Կազմակերպության ներսում «չափավորների» (Հասան Նասրալլահի) ու «արմատականների» (Սուբհի Թուֆեյլիի) միջև փոխզիջում ապահովելուց և «ԱՍԱԼ»-ի հետ հաշտություն կնքելուց հետո (այս հարցում չի բացառվում Սիրիայի միջամտությունը), 1992 թ. աշնանը կայացած խորհրդարանական ընտրությունների ժամանակ «Հիզբալլահը»՝ «ԱՄԱԼ»-ի հետ դաշինքի կայացման շնորհիվ, երկրի օրենսդիր մարմնում պատգամավորական ութ տեղ զբաղեցրեց՝ 2000 թ. խորհրդարանական ընտրություններին դրանք ավելացնելով ևս երկուսով[21]:

«Հիզբալլահի» հակաիսրայելական ակտիվ պայքարի արդյունքում 2000 թ. մայիսի 24-ին Լիբանանի հարավից իսրայելական զորքերի դուրս բերման (այս հարցում թերևս Սիրիայի կողմից Իսրայելի նկատմամբ հեռահար քաղաքական նկատառումները ևս դեր ունեցան), իսկ սեպտեմբերի 28-ից Իսրայելի դեմ այսպես կոչված պաղեստինյան երկրորդ ինթիֆադայի[22] աջակցության շնորհիվ «Հիզբալլահը» վերածվեց տարածաշրջանային ռազմաքաղաքական լուրջ գործոնի, որը նրան ակտիվ դեղակատարության հնարավորության ընձեռեց ինչպես Լիբանանի, այնպես էլ ողջ տարածաշրջանի ներքաղաքական զարգացումներում: Այդ է անուղղակիորեն վկայում 2000 թ. հունիսին ՍԱԿ-ի գլխավոր քարտուղար Քոֆի Անանի մերձավորարևելյան շրջագայության ընթացքում Լիբանանում «Հիզբալլահի» առաջնորդ Հասան Նասրալլահի հետ հանդիպման հանգամանքը, որը որոշ ԶԼՄ-ներ գնահատեցին որպես միջազգային հանրության կողմից կազմակերպության գործունեության օրինականության, կամ առնվազն՝ որպես քաղաքական կազմակերպության ճանաչման փաստ[23]:

Միևնույն ժամանակ, «Հիզբալլահն» իր գործունեությամբ ցույց տվեց, որ որոշ պայմաններում ի զորու է նաև բանակցել Իսրայելի հետ՝ համաձայնության գալով «իսրայելական անվտանգության գոտու» շուրջ՝ քնա-

կավայրերի վրա փոխադարձ չհարձակման վերաբերյալ պայմանավորվածության ձեռք բերման ուղղությամբ[24]:

Սակայն 2001թ. սեպտեմբերի 11-ի իրադարձությունները և ԱՄՆ-ի հայտարարած «ահաբեկչության դեմ պատերազմը» սկսեցին սպառնալ «Հիզբալլահի» ռազմավարական վերոհիշյալ ձեռքբերումներին, քանզի ԱՄՆ-ի որդեգրած հետսեպտեմբերյան քաղաքականությունը (ալ-Ղաիդայի դեմ պայքարը, Իրաքի պատերազմը) մեծացրեց նաև «Հիզբուլլահի» և նրա հովանավոր պետությունների՝ որպես «չարիքի առանցքի» դեմ շարունակվող ռազմայուշավոմ քիրախ դառնալու հավանականությունը[25]:

Հարկ եմ համարում նշել, որ ԱՄՆ-ի վարած «պատերազմն ահաբեկչության դեմ», ըստ իս, ցանկալի արդյունքի չի հասնի այնքան ժամանակ, քանի դեռ Սիացյալ Նահանգները պայքարում է ոչ թե ահաբեկչության *պատճառների*, այլև նրա *հետևանքների* դեմ:

AGHAVNI HARUTYUNIAN

LEBANON HIZBALLAH AS MILITARY AND POLITICAL FACTOR IN THE REGION

Hizballah is religious and political movement, which was born of terrorism in the 1980s, developed guerrilla warfare capabilities in the 1990s, and by the beginning of the new millennium, had matured into an important Middle East strategic player, capable of influencing the course of peace and war in the region. At the organizational level, Hizballah has evolved significantly from a loose, mysterious umbrella group under the guidance of Ayatollah Ruhollah Khomeini of Iran, to a movement collectively led by various shaykhs and warlords, to a well-knit, disciplined organization under the guidance of its own charismatic leader, Hassan Nasrallah.

ՃԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ն.Հ.Հովհաննիսյան., Լիբանանի ճգնաժամը և Լիբանանի հայ համայնքի դիրքորոշումը, Երևան, 1982 թ., էջ 7-10:
2. 1932 թ. մարդահամարի տվյալների համաձայն, շիաները կազմում էին երկրի ընդհանուր բնակչության ընդամենը 18 %-ը, 1968 թ.՝ 30%-ը, իսկ 1990-ականներին բնակչության 1/3-ից ավելին (շիաները 1 մլն. էին, մինչդեռ երկրի ողջ բնակչությունը՝ 2,5-3 մլն.): Շիաները բնակվում էին երկրի հարավում, Բեյրութի հարավային արվարձաններում և Բեքաայի հովտում: Նրանք դարեր շարունակ կրոնական ու մշակութային սերտ կապեր են պահպանել Իրանի ու Իրաքի շիաների հետ:
3. Ջոն Էսպոզիտո, Իսլամական սպառնալիք. Առասպե՞լ, թե իրականություն: Երևան, «Նաիրի», 2003, էջ 178:

4. «ԱՄԱԼ»-ը հապավում է՝ «Դիմադրության լիբանանյան գումարտակներ» («Ավֆաջ ալ-մուքավիմա ալ-լուբնանիյա»), որը նաև «հույս» է նշանակում: Մինչ «ԱՄԱԼ»-ի ստեղծումը, շիաները Լիբանանի զինված խմբավորում չունեցող միակ համայնքն էին:
5. 1978 թ. Մուսամար Քաղաֆիի հետ հանդիպման նպատակով Լիբիա կատարած այցի ընթացքում Մուսա Սադրի խորհրդավոր անհետացումը շրջադարձային իրադարձություն հանդիսացավ «ԱՄԱԼ»-ի պատմության մեջ, քանի որ սեփական նահատակի ու իմամի առկայության հանգամանքը պոտենցիալ հնարավորություն էր ընձեռում շիա համայնքի ներքին տարաձայնությունների հաղթահարման համար (նրա անհետացումը կապվում էր 9-րդ դարում անհետացած վերջին շիա իմամի նահատակության շիա դոկտրինայի և «ծպտյալ իմամի» պաշտամունքի հետ, որի վերադարձը սպասվում էր):
6. Ջոն Էսպոզիտո, Իսլամական սպառնալիք. Առասպե՞լ, թե իրականություն: Երևան, «Նաիրի», 2003, էջ 178:
7. Gary C. Gambill and Ziad K. Abdelnour, Hezbollah: Between Tehran and Damascus,- (Middle East Intelligence Bulletin), Vol. 4 No. 2. February 2002. p. 1. «Իրանի հեղափոխական պահակազորի» փասդարանները (մարտիկները), ուսումնավարժանքներ են անցկացրել «Հիզբալլահի» ռազմական թևը ներկայացնող մարտիկների հետ:
8. Питер Кальвокоресси, Мировая политика после 1945 года, Книга 1, Москва "Международные отношения", 2000, стр. 515
9. В.Махмедов, Ливанская "Хезболла" как "Центр силы" на Ближнем Востоке,- Информационный Центр Северная Африка, Ближний и Средний Восток, Исламизм и экстремизм на Ближнем Востоке (сборник статей). М., 2001, стр. 3. Ինտերնետային հասցեն՝ (www.middleeast.narod.ru/research/livan.htm).
10. Այդ ժամանակ Ֆաղլալահը ղեկավարում էր երկու միություններ՝ «Եղբայրական գերդաստանը» և «Լիբանանի իսլամական ուսանողների միությունը», իսկ հետագայում դարձավ «Հիզբալլահի» հոգևոր առաջնորդը՝ մուջթահիդը:
11. Մանրամասն տե՛ս Gary C. Gambill and Ziad K. Abdelnour, Hezbollah: Between Tehran and Damascus, (Middle East Intelligence Bulletin), vol. 4, No 2, February 2002, p. 1. Ինտերնետային հասցեն՝ (www.meib.org/articles/0202_l1.htm).
12. Լիբանանյան «Հիզբալլահի» պատմության արմատները գնում են դեպի Իրաք, որը 1950-70-ականներին վերածվել էր լիբանանյան շիաների քաղաքական կենտրոնի (Իրաքի Նաջաֆ քաղաքը իսլամական հայտնի կենտրոն էր, որտեղ հաստատվել էին շիա նշանավոր այաթոլլահներից ու գիտնականներից շատերը): Այստեղ էր դասավանդել նաև այաթոլլահ Խոմեյնին իր 13-ամյա աքսորի՝ 1965-78 թթ. ընթացքում): 1960-ականների վերջերին այն ժամանակ միակ շիա իրաքյան արմատական ֆունդամենտալիստական «Կոչի կոռակցությանը» («Ադ-Դաավա») զուգահեռ ձևավորվեց լիբանանյան թևը, որի մեջ մտան «Հիզբալլահի» ներկայիս առաջնորդներ Մ.Ֆաղլալահը, Ս.Թուֆեյլին, Խ.Կուրանին, Մ.Շամստդին, Մ.Սադրը: «Դասավիստնե-

րի» թվին, որոշ տվյալների համաձայն. պատկանում էին նաև «Հիզբալլահի» ներկայիս գլխավոր քարտուղար Հասան Նասրալահը, նրա տեղակալ Նաիմ Քասիմը, Մուհամմեդ Յազբեկը, Հուսեյն Հաուրան և այլոք: Վերջիններիս գործունեության սկիզբը կապված էր «բաալբեկյան աստվածաբանական դպրոցի» հետ, որտեղ ակտիվորեն ուսուցանվում էր Մ.Սադրի ուսմունքը: 1985 թ. մանիֆեստում «Հիզբալլահի» ղեկավարությունն իր հավատարմությունն արտահայտեց այաթոլլահ Խոմեյնիին և հայտնեց Լիբանանում իսլամական պետության հաստատման իրենց մտադրության մասին:

13. Կազմակերպության բարձրագույն ղեկավար մարմիններն են՝ Հոգևոր առաջնորդը, Համագումարը, Խորհրդակցական մարմինը, Քաղբյուրոն, Կենտրոնական գործադիր մարմինը: Նրա «Իսլամական դիմադրություն» ռազմական խմբավորումը լավ կազմակերպված, զաղտնի գործող և բարձր որակավորմամբ 300-500 արհեստավարժ մարտիկներից կազմված ռազմական կառույց է, որը բավականաչափ անկախ է իր գործողություններում, և որի կապը կազմակերպության քաղաքական ղեկավարության հետ պայմանական ու սահմանափակ բնույթ է կրում: 1990-ականներին «Հիզբալլահի» անդամների թիվը կազմում էր 8-10.000 մարդ: Կազմակերպությունը ահաբեկչությունն ու պատանդների առևանգումներն օգտագործում է որպես պայքարի ռազմավարական արդյունավետ միջոց:
14. Սաուդյան Արաբիա, Բահրեյն, Հորդանան, Քուվեյթ, ԱՄՆ:
15. Ջոն Էսպոզիտո, Իսլամական սպառնալիք. Առասպե՞լ, թե իրականություն: Երևան, «Նաիրի», 2003, էջ 182:
16. Ըստ «Հիզբալլահի», ԱՄՆ-ը. Ֆրանսիան և Բրիտանիան իրենց սկզբունքային թշնամիներն են՝ կապված Մերձավոր Արևելքում վերջիններիս վարած գաղութային ու նեոիմպերիալիստական քաղաքականության հետ: «Հիզբալլահի» ահաբեկչական գործունեությունը տարածվում է նաև Հարավային Ամերիկայում, Ասիական երկրներում, Կանադայում, Ծովեղիայում և այլ երկրներում արևմտյան՝ հատկապես ամերիկյան և իսրայելական շահերը ներկայացնող անձանց ու հաստատությունների նկատմամբ: Մանրամասն տես Ely Karmon, "Fight on all Fronts" Hizballah, the War on Terror, and the War in Iraq,- Policy Focus, The Washington Institute, (Research Memorandum), No. 46, Decemher 2003, p. 6-8.
17. Մանրամասն տես Polk William "The Arab World Today", Harward University Press, 1991, p. 355.
18. Itimar Rabinovich, The War For Lebanon 1970-1985, Cornell University Press, 1985, p. 179.
19. Ա.Ա.Հարությունյան, Սիրիա-լիբանանյան Թայեֆի համաձայնագիրը,-Հանդես Երևանի համալսարանի (գիտահինֆորմացիոն լրատու), N 1(96), Երևան-2000, էջ 111-117: «Հիզբալլահը» սկզբում չընդունեց համաձայնագրի պայմանները. որոնց համաձայն խորհրդարանի պատգամավորական տեղերը համամասնորեն բաժանվում էին քրիստոնյա և մուսուլման ներկայացուցիչների միջև՝ բացառելով երկրի նախագահի ու վարչապետի պաշտոնի ստանձնելու միջոցով կառավարության նկատմամբ վերահսկողության իրականացման հնարավորությունը:

20. Խոմեյնու մահվանից հետո նոր նախագահ Հաշեմի Ռաֆսանջանին հրաժարվեց Լիբանանում իսլամական պետության ստեղծման նպատակով «Հիզբալլահին» ցուցաբերվող օժանդակությունից առավել մեծ ուշադրություն հատկացնելով Իրանի ներքին գործերին և արտաքին առևտրի զարգացմանը: Նա դատապարտում էր նաև կազմակերպության կողմից թշնամիների հետ սակարկման նպատակով պատանդներ վերցնելու ռազմավարությունը: Այնուհանդերձ, որոշ տվյալների համաձայն, «Հիզբալլահին» տրամադրվող Իրանի ամենամյա ֆինանսական օգնությունը կազմում է 65-100 մլն. դոլար:
21. Մանրամասն տե՛ս Gary C. Gambill and Ziad K. Abdelnour, Hezbollah: Between Tehran and Damascus, (Middle East Intelligence Bulletin), vol. 4, No 2, February 2002. p. 5-7.
22. «Հիզբալլահը» համագործակցում էր պաղեստինյան սպստամբների հետ՝ նրանց ցուցաբերելով ռազմական աջակցություն՝ ինչպես ուսումնավարժանքների և զինամթերքի տրամադրման, այնպես էլ Շեբաա ֆերմայի շրջանում Իսրայելի Պաշտպանության Ուժերի դեմ ասիմանևային ռազմական գործողությունների իրականացման ձևով:
23. В.Махмедов, Ливанская "Хезболла" как "Центр силы" на Ближнем Востоке,- Информационный Центр Северная Африка, Ближний и Средний Восток, Исламизм и экстремизм на Ближнем Востоке (сборник статей), М., 2001, с.15.
24. Gary C. Gambill, Hassan Nasrallah Secretary-General of Hezbollah, (Middle East Intelligence Bulletin), Vol. 6, No.2/3, February-March 2004, p. 4-5. Ինտերնետային հասցեն՝ (www.meib.org/articles/0402_id.htm). Իսրայելի և Հարավային Լիբանանի Բանակի (SLA) դիրքերի ուղղությամբ «Հիզբալլահի» զրոհների արդյունավետության հանգամանքը պայմանավորված էր պարտիզանների կողմից «անվտանգության գոտու» մերձակայքի գյուղերը որպես ապաստարան օգտագործելու մարտավարության կիրառմամբ, որոնց նկատմամբ 1993 թ. հուլիսին Իսրայելի կողմից օդային ու հրետանային 7-օրյա ռմբակոծություններից հետո «Հիզբալլահը» 142 կատյուշային հրթիռներ արձակել հակառակ ուղղությամբ: Արդյունքում, Իսրայելն ու «Հիզբալլահը» Լիբանանի ու Իսրայելի քաղաքացիական բնակավայրերի վրա փոխադարձ հարձակման ուղղությամբ ոչ պաշտոնական համաձայնություն ձեռք բերեցին:
25. Ely Karmon. "Fight on all Fronts" Hizballah, the War on Terror, and the War in Iraq,- Policy Focus, The Washington Institute, (Research Memorandum), No.46, December 2003, p. 22.

ԼԻԼԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԼԻԲԱՆԱՆՈՒՄ ՇԻԱԿԱՆ ԳՈՐԾՈՆԻ ՈՒԺԵՂԱՑՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ (1970-1980-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐ)

Լիբանանյան կրոնական համայնքների շարքում իր յուրահատուկ տեղն ունի շիա համայնքը[1]: 1970-ականների սկզբին, թեև, շիաները կազմում էին Լիբանանի ողջ բնակչության 28%-ը (մոտ 1մլն. մարդ)[2] և, փաստորեն, ամենախոշոր կրոնական համայնքը էին, նրանք, այնուամենայնիվ, շարունակում էին մնալ համեմատաբար ամենաշրջանցվածը: Շիաների մոտ 60%-ը բնակվում էր հարավային Լիբանանում, 25%-ը՝ Բեքաայի հովտում և 10%-ը՝ լեռնային Լիբանանում[3]:

1970-ականների սկզբին մեծ թվով շիաներ հարավային Լիբանանում Իսրայելի իրականացրած բազմաթիվ հարձակումների արդյունքում[4], զրկվելով իրենց բնակարաններից, ստիպված էին հաստատվել Բեյրութում: Շիաները Բեյրութում էժան աշխատուժ էին և զբաղված էին հիմնականում շինարարական աշխատանքներում: Շիական ետնախորշերը Բեյրութի մի քանի թաղամասերում «չքավորության գոտիներ» էին:

Մինչև 1970-ական թվականները, շիաները ղեկավարվում էին մի քանի ավանդական ընտանիքների կողմից, սակայն 1960-ականների վերջին երիտասարդ շիա քարոզիչ իմամ Մուսա ասս-Սադրը սկսեց իր շուրջը համախմբել շիա երիտասարդության ու մի շարք առաջնորդների: Նա հանդես էր գալիս սոցիալական բարեփոխումների իրականացման ծրագրով, ինչը պետք է նպաստեր շիա բնակչության սոցիալական իրավիճակի բարելավմանը:

1970-ականների սկզբից շիաները միանգամայն ազդարարացիորեն պահանջում էին առավել լայն քաղաքական ներկայացուցչություն Լիբանանի կառավարման մարմիններում: Պատմականորեն Լիբանանում շիաներով բնակեցված շրջանները տնտեսապես ամենաթույլ զարգացածն էին: Շիաների առաջնային նպատակներից էր բոլոր միջոցներով նպաստել շիական գյուղական համայնքներին կառավարության կողմից տրամադրվող ռեսուրսների զգալի ավելացմանը[5]:

Մուսա ասս-Սադրը զգալի աջակցություն էր ստանում 1974թ. շիական համայնքում կազմավորված «Կեղեքվածների շարժում» («Հարաքաթ ալ-

մահրումին») կազմակերպությունից[6], որի հիմքի վրա 1975թ. գարնանը ձևավորվեցին կիսառազմական ջոկատներ՝ «Լիբանանյան դիմադրության գումարտակներ» («Աֆուաջ ալ-մուկառամա ալ-լուբնանիյա»), որոնք, հետագայում ընդլայնվելով, անվանվեցին «Ամալ»[7] («Հույս»): Վերջինս շատ կարճ ժամանակաշրջանում դարձավ շիա համայնքի ևոր քաղաքականության ձևավորողն ու իրականացնողը: «Ամալում» ընդգրկվեցին Քեյրութի արվարձաններում ապրող մեծ թվով կրթված, երիտասարդ շիաներ, որոնք պայքարում էին Լիբանանում շիաների ընդհանուր վիճակի բարելավման համար: «Ամալի» նախաձեռնությամբ Լիբանանի հարավային շրջաններում ձևավորվեցին նաև մի քանի շիական ռազմականացված ճամբարներ[8]:

«Ամալը» դրամական զգալի միջոցներ էր ստանում Սիրիայից և լիբանանյան շիաների մեծաքանակ սփյուռքից, որը հաստատվել էր Աֆրիկայի ֆրանսալեզու արաբական երկրներում: Արտերկրի շիաների զգալի դրամական փոխանցումները նպաստում էին արևմտյան Քեյրութում շիաների կողմից իրականացվող մեծ թափի հասնող շինարարության իրագործմանը, ինչպես նաև մի շարք բացառապես շիական կապիտալ ունեցող բանկերի կազմավորմանը[9]:

Լիբանանյան շիաների քաղաքական կազմակերպվածությունը դրսևորվեց դեռևս 1969թ. Շիական բարձրագույն խորհրդի ձևավորմամբ, որի նախագահ ընտրվեց իմամ Մուսա աս-Սադրը[10]: Լիբանանի սուննի[11] ղեկավարները սկզբնական շրջանում վրդովված էին վերոնշյալ հանգամանքով: Նորաստեղծ Շիական խորհուրդը գործում էր անջատ և ինքնուրույն էր արդեն իսկ գոյություն ունեցող Մահմեդական բարձրագույն խորհրդից, որում գերիշխող դիրքեր ունեին լիբանանյան սունիները: Շիական խորհրդում ներկայացված էին ինչպես շիաներ, այնպես էլ՝ սունիներ ու դրուզներ[12]:

Ստանձնելով Շիական բարձրագույն խորհրդի նախագահի պաշտոնը՝ աս-Սադրը ցուցաբերեց լիբանանյան սունիների և դրուզների հետ համագործակցելու այնպիսի պատրաստակամություն, որ շատ շուտով վերջիններիս դժգոհությունը՝ կապված խորհրդի ձևավորման հետ, մոռացության տրվեց:

Շիական բարձրագույն խորհրդի ձևավորումից որոշ ժամանակ անց լիբանանյան կառավարության որոշմամբ ձևավորվեց նաև Լիբանանի Հարավի խորհուրդը (Մաջլիս ալ-ջանուբ), որը գլխավորեց ազդեցիկ շիա դեկավար Քամիլ ալ-Ասաադը[13]: Խորհրդին տրամադրվեց 30 մլն լիբ. լիրա, որը պետք է ներդրվեր հարավային Լիբանանի հետամնաց շրջանների զարգացման ծրագրերում[14]: Սակայն վերոնշյալ խորհուրդը կարճ ժամանակ անց վերածվեց կոռումպացված մի մարմնի, որի գործունեությունը որևէ կերպ չէր նպաստում երկրի հարավի զարգացման ծրագրերի իրականացմանը:

1970-ականների սկզբին Մուսա աս-Սադրը Քեյրութում շիաների մասնակցությամբ կազմակերպեց մի քանի գործադուլներ: Աս-Սադրը լիբանանյան իշխանություններից պահանջում էր պաշտպանել հարավային Լիբանանի շիական բնակավայրերը, որոնք իսրայելյան հարձակումների հիմնական տուժողներն էին և դիմել պատասխան ռազմական գործողությունների[15]: Սակայն Մուսա աս-Սադրի պահանջներին լիբանանյան իշխանությունները որևէ կերպ չարձագանքեցին: Լիբանանն այդ փուլում իրոք պատրաստ չէր Իսրայելի հետ լայնածավալ հակամարտության: Սկսվել էր լիբանանյան բանակի կազմալուծման գործընթացը:

1974թ. մարտի 17-ին իմամ Մուսա աս-Սադրը Քաալբեքում կազմակերպեց ցույց, որին մասնակցեցին մոտ 75.000 շիաներ: Այստեղ աս-Սադրը կոչ արեց բոլոր շիաներին համախմբվել և անհրաժեշտության դեպքում նույնիսկ զինված պայքար մղել շիաների իրավունքների և նրանց սոցիալական պայմանների բարելավման համար: Իր ելույթում շիաների առաջնորդը նշեց. «Լիբանանի հարավում բնակվող շիաները պետք է համախմբվեն և պաշտպանեն իրենց գյուղերն ու տները իսրայելյան պարբերական հարձակումներից: Եթե լիբանանյան իշխանություններն անկարող են պաշտպանել հարավային Լիբանանն ու նրա բնակչությանը, ապա այդ գործը կստանձնեն շիաները»[16]: Այդ նպատակով Բեյրութում և Տիրում (Սուր) աս-Սադրի օժանդակությամբ կազմավորվեցին շիական զինված ջոկատներ, որոնք պետք է մասնակցեին հարավային Լիբանանի պաշտպանությանը: Իմամ աս-Սադրը երդվեց նաև պայքարել Լիբանանում բոլոր սոցիալական անհավասարությունների դեմ և աջակցել լիբանանյան մահմեդականների իրավունքների պաշտպանությանը: Նա կոչ արեց իր համախոհներին բոլոր միջոցներով պայքարել և ապաստել երկրում տիրող կաշառակերության, կոռուպցիայի և մենաշնորհների վերացմանը, ինչպես նաև մեղադրեց լիբանանյան իշխանություններին երկրում տիրող ճգնաժամային իրավիճակի հանդեպ անտարբերության մեջ[17]:

Ստեղծված իրավիճակում շիական բնակավայրերի պաշտպանությունը կազմակերպելու գործում Մուսա աս-Սադրին իրենց աջակցությունը հայտնեցին Իսրայելի հարձակումներին դիմակայող լիբանանյան ձախ ուժերը[18] ու պաղեստինյան զինվորական խմբավորումները: Սա արդեն նշանակում էր համագործակցության հաստատում լիբանանյան ձախերի, պաղեստինցիների և շիաների միջև:

1970-ականների առաջին կեսին Լիբանանն ապրում էր ներքաղաքական լուրջ ճգնաժամ, որի արդյունքում 1975թ. ապրիլին երկրում բռնկվեց քաղաքացիական պատերազմ: Այն տևեց մոտ 15 տարի՝ պատճառելով մարդկային և նյութական զգալի վնասներ: Արդեն 1976թ. Լիբանանում զինված հակամարտության արդյունքում տարբեր տվյալներով զոհվել

էին 44.000-46.000, իսկ վիրավորվել շուրջ 180.000 մարդ՝ այդ թվում զգալի թվով շիաները[19]:

1975-1976թթ. ընթացքում լիբանանյան աջերը[20] մի քանի անգամ հարձակվեցին արևելյան Բեյրութի շիական թաղամասերի վրա: Մասնավորապես. 1975թ. վերջին լիբանանյան ազ ուժերի զինված խմբավորումները հարձակում իրականացրեցին Հարաք ալ-Ջասարիևա շիական թաղամասում, 1976թ. հունվարին նմանատիպ հարձակում տեղի ունեցավ Մասլուխ և Կասրանտինա շիական չքավոր թաղամասերում, իսկ 1976թ. օգոստոսին աջերի զինված ուժերը մտան շիական Նաբաա արվարձանը[21]: Արդյունքում հազարավոր շիա բնակիչներ ստիպված եղան լքել իրենց բնակարանները:

1978թ. մարտի 15-ին «Լիտանի» գործողության շրջանակներում Իսրայելը ներխուժեց հարավային Լիբանան և գրավեց մինչև Լիտանի գետն ընկած շրջանը՝ երկրի ողջ տարածքի 10%-ը[22]: Արդյունքում տարբեր տվյալներով կային 1.500-2.000 սպանվածներ[23]: Իսրայելին հաջողվեց նպաստել հարավային Լիբանանի շիաների և պաղեստինյան զինված խմբավորումների միջև որոշակի հակասությունների առաջացմանը: Պատահական չէր, որ շիաները, որոնք այդ ներխուժման հետևանքով ստիպված էին լքել հարավային Լիբանանը[24], ստեղծված իրավիճակի համար մեղադրում էին պաղեստինցիներին, որոնք իրենց գործողություններով Իսրայելին դրդում էին պատասխան քայլեր ձեռնարկել հարավային Լիբանանի դեմ: Այս պայմաններում նույնիսկ համագործակցության որոշակի եզրեր ի հայտ եկան լիբանանյան բանակի նախկին մայոր Սաադ Հադդադի ղեկավարած «Հարավային Լիբանանի բանակի»[25] և լիբանանյան շիաների միջև: Շիաների և Պաղեստինի ազատագրության կազմակերպության (ՊԱԿ) միջև հարաբերություններն էլ ավելի սրվեցին 1980թ. սեպտեմբերին իրաք-իրանյան պատերազմի բռնկումից հետո, երբ ՊԱԿ-ի ղեկավար Յասիր Արաֆաթը հրաժարվեց այդ պատերազմում աջակցություն ցույց տալ իրանցիներին և գրավեց չեզոք դիրք[26]: Հակասությունները ՊԱԿ-ի և շիաների միջև այնքան սրվեցին, որ 1980-1981թթ. ընթացքում Բեյրութի արվարձաններում և հարավային Լիբանանում մի քանի զինված բախումներ տեղի ունեցան պաղեստինյան զինված խմբավորումների և շիական ջոկատների միջև[27]:

1982թ. հունիսի 6-ին Իսրայելը կրկին ներխուժեց Լիբանան այս անգամ «Խաղաղություն Գալիլեային» ռազմական գործողության շրջանակներում: Հակառակ գոյություն ունեցող որոշ հակասությունների՝ լիբանանյան շիաները, ձախ ուժերը և ՊԱԿ-ը կրկին համախմբվեցին Իսրայելի դեմ պայքարում[28]:

1982թ. հոկտեմբերին Լիբանանի նորանշանակ նախագահ Ամին Ժմայելի[29] հրամանով լիբանանյան բանակի մի քանի զորամիավորումներ մտան արևմտյան Բեյրութի Վազայի շիական արվարձանը և սկսե-

ցին քանդել շիաների խրճիթները: Արդյունքում շուրջ 5.000 շիաներ մնացին անօթևան[31]:

1983թ. հուլիսին արևմտյան Բեյրութի շիա փախստականներով բնակեցված թաղամասերից մեկում առաջին անգամ զինված բախումները տեղի ունեցան «Ամալ» զինված ջոկատների և լիբանանյան բանակի զորամիավորումների միջև: Բանակային զորամիավորումները փորձում էին տեղի դպրոցի տարածքը «մաքրել» շիա փախստականներից, որոնք երկու օր «Ամալի» զինված ջոկատների աջակցությամբ դիմադրություն էին ցույց տալիս: Բախումներն «Ամալ»-ի և բանակային զորամիավորումների միջև վերսկսվեցին օգոստոսի վերջին և որոշ ընդհատումներով տևեցին մինչև սեպտեմբերի 25-ը[31], երբ լիբանանյան հակամարտության մեջ ներքաշված բոլոր կողմերը հնազանդեցին զինադադար կնքել: Այս ընթացքում շիական համայնքի ներսում ավելանում էին ճնշումներն ու ոժգոհությունները «Ամալ»-ի ղեկավարության հանդեպ, որը համաձայնել էր համագործակցել լիբանանյան իշխանությունների հետ և կնքել զինադադար:

1978թ. Մուսա աս-Սադրի խորհրդավոր անհետացումից հետո[32] «Ամալ»-ի ղեկավարությունը ժամանակավորապես ստանձնեց Հուսեյն ալ-Հուսեյնին, իսկ 1980թ. «Ամալ»-ի ղեկավար ընտրվեց Նաբիհ Քերրին՝ երիտասարդ, աշխարհիկ հայացքներով աչքի ընկնող իրավաբան: Քերրին, սակայն, չուներ այնպիսի խարիզմատիկ ազդեցություն, ինչպես աս-Սադրը, իսկ նրա «չափավոր» քաղաքական ուղեգիծը քննադատության էին ենթարկում ինչպես «Ամալը», այնպես էլ որոշ շիա համայնքի ծայրահեղական շրջանակները[33]: Այս նշանակումը շրջադարձային էր կազմակերպության քաղաքական գործունեության փոփոխության տեսանկյունից: Կազմավորվելով որպես ընդդիմություն գործող իշխանությանը՝ «Ամալը», որոշ ժամանակ անց վերածվեց քաղաքական ուժի, որ պատրաստ էր համագործակցել իշխանության հետ:

«Ամալի» այս քաղաքականությունը նպաստեց շարժման հեղինակության անկմանը շիա բնակչության այն շրջանում, որը պահանջում էր ծայրահեղ միջոցառումների իրականացում Լիբանանից իսրայելյան զորքերի դուրս բերման ուղղությամբ:

Շիա համայնքում տարածայնությունների առկայության պայմաններում 1982թ. ամռանն «Ամալի» հրամանատարական խորհրդի անդամ Հուսեյն Մուսաուին լքեց շարժումը՝ ձևավորելով իր զինված խմբավորումը, որ անվանվեց «Իսլամական Ամալ»[34]: Մուսաուիի համախոհների թիվը սահմանափակ էր, սակայն այն աջակցություն էր ստանում Իրանից[35], որտեղից «Իսլամական հեղափոխության պաշտպանության էլիտար ստորաբաժանումների» 3.000 մարտիկներ Սիրիայի տարածքով անցել էին Լիբանան և ակտիվ օժանդակություն էին ցույց տալիս Մուսաուիին[36]:

1982թ. ամռանը Քեթաայի հովտում կազմավորվեց մեկ այլ ծայրահեղական շիական շարժում ևս, որ նույնպես խիստ քննադատության էր ենթարկում «Ամալի» ղեկավարի «չափավոր» քաղաքականությունը: Այս շարժումն անվանվեց «Հիզբալլահ» («Ալլահի կուսակցություն»), որ գլխավորեց խարիզմատիկ շիա ղեկավար շեյխ Մուհամմադ Հուսեյն Ֆադլալլահը[37]: «Հիզբալլահի» մեջ ներգրավվեցին ինչպես «Ամալի» առավել ծայրահեղական թևը՝ Հուսեյն Մուսաուայի գլխավորությամբ, այնպես էլ տարբեր շիական կրոնական և ռազմական միավորումների որոշ անդամներ, որոնք սերտ կապեր ունեին Իրանի ղեկավարության հետ[38]:

1983թ. ապրիլին շիական ծայրահեղականները Լիբանանում պայթյուն կազմակերպեցին ԱՄՆ դեսպանատան մոտ, իսկ 1983թ. հոկտեմբերի 23-ին միաժամանակ պայթյուններ տեղի ունեցան նաև Լիբանանում տեղակայված միջազգային խաղաղապահ ուժերի[39] ամերիկյան և ֆրանսիական զորամիավորումների զորանոցներում[40]: Պայթյունի հետևանքով զոհվեց տարբեր տվյալներով 50-56 ֆրանսիացի և 239-241 ամերիկացի զինծառայող[41]: Պայթյունների կազմակերպման պատասխանատվությունն իր վրա վերցրեց մինչ այդ անհայտ «Իսլամական Ջիհադ» խմբավորումը, սակայն որոշ ժամանակ անց մամուլից հայտնի դարձավ, որ պայթյունները կազմակերպել էին Հուսեյն Մուտաուան և Մուհամմադ Հուսեյն Ֆադլալլահը[42]:

1983թ. հոկտեմբերի 10-ին Իսրայելի զինված ուժերը Նաբաթիայում հարձակման ենթարկեցին Աշուրայի[43] հիշատակության սգո արարողությանը մասնակցող շիաների բազմամարդ թափորը, որին հաջորդած զարգացումների և շիական համայնքում անհանդուրժողական տրամադրությունների մեծացման արդյունքում 1985թ. մարտին շիա ազդեցիկ ղեկավարներից մուֆթի Մուհամմադ Սևհոլի Շամս ադ-Դինը «պաշտպանական ջիհադ» (ալ-Ջիհադ ալ-դիֆսի) հայտարարեց Իսրայելի դեմ[44]:

Մինչ այդ, 1984թ. փետրվարի սկզբին, Լիբանանում կրկին բախումներ բռնկվեցին շիական ջոկատների և լիբանանյան բանակային զորամիավորումների միջև: Բանակային զորամիավորումները հրետանային հարձակման ենթարկեցին արևմտյան Բեյրութի շիական թաղամասերը: Փետրվարի 4-ին «Ամսղի» ղեկավար Նաբիհ Բերրին կոչով դիմեց բանակի մահմեդական շարքային զինվորներին, որոնք հիմնականում շիաներ էին և խնդրեց ճեռնպահ մնալ զինված բախումներին մասնակցությունից[45]: Բերրիի կոչից մի քանի ժամ անց շիա և ընդհանրապես մահմեդական զինվորները լքեցին բանակի շարքերը: Արդյունքում փետրվարի 6-ի առավոտյան բանակային զորամիավորումները պարտություն կրեցին[46]:

Ստեղծված դժվարին իրավիճակում, երբ Ամին Ժմայելի վարչախումբը կանգնած էր փլուզման եզրին, 1984թ. փետրվարին ԱՄՆ-ը հայտարարեց, որ պատրաստվում է միջազգային խաղաղապահ ուժերի մեջ

1985թ. հունիսին հարաբերությունները սրվեցին նաև շիական զինված ջոկատների և պաղեստինյան մարտիկների միջև: Նրանց միջև առկա հակասությունները վերաճեցին զինված բախումների, որը ստացավ «ճամբարների պատերազմ» անվանումը: Շիական զինված ջոկատները ծգտում էին թույլ չտալ տարբեր տվյալներով 2000-2500 պաղեստինյան մարտիկների հնարավոր վերադարձը Լիբանան[54] և նրանց վերահաստատումը շիական վերահսկողության շրջաններ՝ հատկապես Բեյրութի արվարձաններում և հարավային Լիբանանում գտնվող պաղեստինյան փախստականների ճամբարներ, որտեղ բնակվում էին տարբեր տվյալներով 350.000-400.000 պաղեստինցի փախստականներ: Այդ «պատերազմի» ողջ ընթացքում պաղեստինցիների և շիաների միջև ստորագրվեցին մի շարք համաձայնագրեր, որոնք սակայն անընդհատ խախտվում էին հակամարտող ուժերի կողմից: 1987թ. սեպտեմբերի 11-ին ստորագրվեց վերջնական համաձայնագիրը, որով հաշտություն կնքվեց հակամարտող կողմերի միջև և հայտարարվեց «ճամբարների պատերազմի» ավարտը, որն ընթացքում սպանվեց 2000-3000 մարդ[55]:

Վերադառնալով շիական ծայրահեղական «Հիզբալլահ» շարժման գործունեությանը՝ նշենք, որ 1985թ. փետրվարի 16-ին հրապարակվեց շարժման «Բաց նամակը՝ ուղղված Լիբանանի և ողջ աշխարհի կեղեքվածներին»[56]: Այս փաստաթղթում շարադրված էին շարժման ծրագիրն ու հիմնական նպատակները.

1. Վերջ դնել իսրայելյան և ընդհանրապես օտարերկրյա զավթիչների ցանկացած ներկայությանը Լիբանանում;
2. Պատասխանատվության ենթարկել Լիբանանյան փաղանգներ կուսակցության ղեկավարներին՝ Լիբանանում մահմեդականների և քրիստոնյաների դեմ իրականացված հանցագործությունների համար;
3. Քննչությանը կոչ անել Լիբանանում ընտրել «իսլամական սկզբունքների վրա խարսխված իշխանություն», որը ստեղծված իրավիճակում միակ իրական հնարավորությունն էր՝ երաշխավորելու երկրում անկախության և արդարության վերահաստատումը[57]:

Ծրագրում հիմնական թշնամիներ համարվում էին Իսրայելը, նրան հովանավորող ԱՄՆ-ը և արևմտյան տերությունները[58]: Ինչ վերաբերում է Իսրայելի հետ հնարավոր որևէ հարաբերություններին, ապա սկզբունական շրջանում շարժումը ոչ միայն մերժում էր Իսրայելի գոյության փաստը, այլև Լիբանանի շահերին դավաճանելու մեջ մեղադրում էր ցանկացած ուժի, որ պատրաստ էր միջնորդ լինել իսլայելյան կողմի հետ բանակցություններում:

Անդրադառնալով Լիբանանի կառավարման հիմքում դրված կրոնահամայնքային համակարգին՝ «Հիզբալլահը», ի տարբերություն «Ամալի», գտնում էր, որ այդ համակարգը վաղուց սպառել է իրեն և այդ ուղղությամբ ցանկացած բարեփոխում համարում էր ոչ արդյունավետ[59]:

1980-ականներին «սառը պատերազմի» վերջին փուլում «Հիզբալլահ» իսլամն «առաջարկում էր» որպես այլընտրանք Արևմուտքի կապիտալիզմին և Արևելքի սոցիալիզմին: Շարժումը փորձում էր իր քաղաքականության հիմնական ուղղություններն ընդօրինակել Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքական ուղեգծից և պատահական չէ, որ «Հիզբալլահն» իր «Բաց նամակում» Իրանն անվանում էր պետություն, որին կարելի է նմանվել[60]:

Փաստենք, որ խորհրդարանական պաշտոնական կայքերում «Հիզբալլահին» տրվում է հետևյալ որակավորումը. ««Հիզբալլահը» շիական ահաբեկչական կազմակերպություն է, որը գտնվում է Սիրիայի և Իրանի վերահսկողության ներքո»[61]: Ինչ վերաբերում է շարժման ահաբեկչական բնույթին, ապա նշենք, որ թեև «Հիզբուլլահի» կայացման փուլում նրա քայլերն այս առումով բավական խոսուն էին. Բեյրութում միջազգային խաղաղապահ ուժերի գորանոցների պայթյուններ, Բասալբեքում լիբանանյան բանակի ռազմական ճամբարի վրա հարձակում, ինքնաթիռների առևանգում և պատանդների վերցնում, սակայն այդ գործողություններն ուղղված էին այն ժամանակ լիբանանյան գլխավոր խնդրի՝ 1982թ. Իսրայելի հարավային Լիբանան ներխուժման հանդեպ համաշխարհային ուշադրության սևեռմանն ու հարավային Լիբանանից իսպայելյան զորքերի դուրս բերմանը և պայմանավորված էին Իսրայելն Լիբանանի հանդեպ փսրվող քաղաքականությամբ:

Ինչ վերաբերում է «Հիզբալլահը» հովանավորող պետություններին՝ Իրանին և Սիրիային, ապա Իրանը «Հիզբուլլահին» ֆինանսական օժանդակություն է ցույց տալիս իր սեփական գաղափարական ազդեցության տարածման նպատակով՝ նաև լիբանանյան սուննի մահմեդականների շրջանում, իսկ Սիրիան այս շարժումը համարում է «կարևոր լծակ և ճնշման յուրահատուկ միջոց» Իսրայելի հետ բանակցություններում, որոնք վերաբերում են 1967թ. արաբ-իսրայելական պատերազմի ընթացքում Իսրայելի գրաված Գոլանի բարձունքները վերադարձնելուն:

1989թ. հոկտեմբերի 22-ին Տաիֆի համաձայնագրի ստորագրմամբ Լիբանանում վերջ դրվեց քաղաքացիական երկարատև պատերազմին[62]: Այս համաձայնագրի ստորագրումից հետո, երբ զինված հակամարտության բոլոր կողմերը համաձայնեցին զինաթափվել, «Հիզբալլահը» միակ շարժումն էր, որ, օգտվելով Տաիֆի համաձայնագրով հաստատված սիրիա-լիբանանյան հարաբերությունների հատուկ բնույթից, Սիրիայի ակտիվ միջամտությամբ կարողացավ պահպանել իր ռազմական խմբավորումները և շարունակել Իսրայելի դեմ իր զինված պայքարը Լիբանանի հարավից: Այս համաձայնագրի ստորագրումը հնարավորություն տվեց «Հիզբուլլահին» մուտք գործել նաև Լիբանանի քաղաքական դաշտ: 1992թ. մասնակցելով խաղաղության հաստատումից հետո երկրում տեղի ունեցող առաջին խորհրդարանական ընտրություններին՝ «Հիզբալլա-

հը» ստացավ 8 տեղ 128-ից (կրոնահամայնքային համակարգով շիա համայնքին հատկացված էր 19 տեղ 128-ից)[63]:

1970-1980-ական թվականներին լիբանանյան շիաների քաղաքական ակտիվացման արդյունքում աննախադեպ մեծացավ այդ համայնքի դերը Լիբանանի քաղաքական կյանքում: Շիաները, փաստորեն, գլխավորեցին Լիբանանում Իսրայելին դիմակայող ուժերի ճակատը: Պատահական չէ, որ հենց «Հիզբուլլահի» ակտիվ գործողությունների արդյունքում 2000թ. մայիսի 24-ին Իսրայելը ստիպված էր իր զորքերը դուրս բերել Լիբանանի ողջ տարածքից՝ «անվտանգության գոտուց»:

Այսօր էլ զգալի նյութական և ռազմական աջակցություն ստանալով Իրանից՝ «Հիզբալլահը» շարունակում է հարավային Լիբանանից Իսրայելի դեմ իր զինված պայքարը: Ակնհայտ է, որ «Հիզբալլահի» զինված պայքարի դադարեցումը և նրա վերջնականս վերափոխումը (transformation) ուղղակի քաղաքական կամ սոցիալական կազմակերպության, որի մասին խոսում էին դեռևս Տայֆի համաձայնագրի ստորագրումից հետո, կարող է տեղի ունենալ միայն Մերձավոր Արևելքում իրավիճակի վերջնական կայունացումից հետո:

LILIT HARUTYUNYAN

TO THE QUESTION OF THE GROWTH OF SHI'I FACTOR IN LEBANON (1970-1980s)

Lebanese Shi'i community plays a special and very important role in the confessional political system of Lebanon. Beginning from 1970's the Shi'i community became already the largest community of Lebanon although it continued to be the most ignored one. In 1970-1980's the Lebanese Shi'i community was experiencing a whole social, political and economic renaissance due to which mostly grew the Shi'is role in the Lebanese political arena. In this case the Shi'is headed the front of Israel resistant forces in Lebanon.

As a result of the effective activities of Shi'i community, especially of "Hizballah" Israel had to leave the whole territory of Lebanon – "the security zone" in May 2000.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Շիականությունն իսլամի երկու հիմնական ուղղություններից մեկն է, որ կապված է Մուհամմեդի հորեղբորորդի և չորրորդ խալիֆա Ալիի անվան հետ: Շիաներն Ալիին համարում են Մուհամմեդ մարգարեի միակ օրինական ժառանգորդը և գտնում են, որ իմամները՝ ումմայի քաղաքական և կրոնական բարձրագույն ղեկավարները, պետք է լինեն նրա ուղղակի ժառանգորդները:
2. Helena Cobban, "Lebanese Confessional Political System", Foreign Policy. No. 2, May, Washington, 1984, pp. 222-223.

3. Salim Nasr. "La Transition des Chiites vers Beyrouth: Mutations Sociales et Mobilisation Communautaire à la Veille de 1975", Mouvements Communautaires et Espaces Urbains au Machreq, Beyrouth: CERMOC, 1984, p. 145.
4. Իսրայելի հարավային Լիբանանի դեմ իրականացվող հարձակումներն ուղղված էին Լիբանանում հաստատված Պաղեստինի ազատագրության կազմակերպության (ՊԱԿ) վրիվված իմքավորումների գործողությունների դեմ, որոնք ակտիվորեն օգտագործում էին Լիբանանի հարավը Իսրայելի դեմ պայքարում:
5. Francis Griblat, La Communauté Libanaise et le Mouvement National Palestinien 1967-1986, Paris, 1988, p. 74.
6. Joun R. I. Cole and Nikk R. Keddie, Shi'ism and Social Protest, London, 1986, p. 144.
7. Augustus Richard Norton. "Making Enemies in South Lebanon: Harakat Amal, the IDF and South Eebanon", Middle East Insight. Washington, D. C., 3, No. 3, January-Fabruary, 1984, p, 19.
8. Augustus Richard Norton, Amal and the Shia: Struggle for the Soul of Lebanon, New York, 1987, p. 144.
9. النهار. «ան-Նահար», Բեյրութ, 07.12.1973:
10. Fouad Ajami, The Vanished Imam Musa al Sadr and the Shia of Lebanon, Cornell University, 1986, p. 24.
11. Սուննիականությունը իսլամի երկու հիմնական ուղղություններից մեկն է: Սուննիները գտնում են, որ հենց իրենք են Սուհամմեդ մարգարեի ուսմունքի և թողած ավանդությունների անաղարտ հետեորդները՝ շիաներին համարելով մարգարեի ուսմունքի խեղաթյուրողներ:
12. Դրուզները հիմնականում բնակվում են Լիբանանի և Սիրիայի լեռնային շրջաններում և ներկայացնում են շիական աղանդներից մեկը:
13. David R., Audrey C. Smock, The Politics of Pluralism: A Comparative Study of Lebanon and Ghana, New York, 1975, p. 141.
14. Thom Sicking, Shereen Khairallah, "The Shi'a Awakening in Lebanon: A Search for Radical Change in a Traditional Way", Vision and Revision in Arab Society, CEMAM Reports, Vol. 2, Beirut, 1975, p. 110.
15. Juan R. I. Cole, Mikki R. Keddie, Shi'ism and Social Protest, London, 1986, p. 145.
16. The Text of Imam Musa al-Sadr's Speech տե՛ս Augustus Richard Norton, Amal and the Shi'a. Struggle for the Soul of Lebanon, USA, 1987, pp. 46-47.
17. النهار، «ան-Նահար», Բեյրութ, 18.03.1974:
18. Լիբանանյան ձախ ուժերը՝ Առաջադիմական սոցիալիստական կուսակցությունը, Լիբանանի կոմունիստական կուսակցությունը, լիբանանյան ևսսերականները, Արաբական սոցիալիստական վերածննդի Բասս կուսակցության լիբանանյան մասնաճյուղը, Լիբանանի դրուզների համայնքի և Առաջադիմական սոցիալիստական կուսակցության դեկավար

Քամալ Ջունբլաթի գլխավորությամբ 1969թ. համախմբվեցին «Ազգային շարժում» («Հարաքաթ ալ-վատանի») դաշինքում:

19. "Civil War in Lebanon", The Bureau of Public Affairs. U.S. Department of State. Washington, 1987, p. 320.
20. Լիբանանյան աջ ուժերը. որի կորիզը կազմում էին Լիբանանյան փաղանգները («Հիզբ ալ-քաթաիբ ալ-լուբնանի») և Ազգային լիբերալ («Հիզբ ալ-կաումի ալ-ահրար») կուսակցությունները միավորվել էին «Լիբանանյան ճակատում»:
21. Helena Cobban, "The Grouth of Shi'i Power in Lebanon and Its Implications for the Future", Shi'ism and Social Protest, London, 1986, p. 143.
22. Ближний Восток и Международное право, М., 1982, с. 190.
23. Լիբանանի և այլ արաբական պետությունների պահանջով հրավիրվեց ՍԱԿ-ի Անվտանգության Խորհրդի նիստ, որը 1978թ. մարտի 19-ին ընդունեց թիվ 425 որոշումը՝ Լիբանանում կրակի դադարեցման և իրայելյան զորքերի անմիջապես դուրս քերման մասին: Որոշվեց կազմավորել նաև ՍԱԿ-ի ժամանակավոր ուժեր՝ 4000 մարդ, որոնք պետք է մեկնեին Լիբանան: Այդուհանդերձ, իսրայելյան զորքերը Լիբանանի տարածքը լքեցին միայն 1978թ. հունիսին, և սահմանի երկայնքով 10կմ «անվտանգության գոտին» փոխանցվեց ոչ թե ՍԱԿ-ի ուժերին, այլ աջ ուժերի փաստացի դաշնակից, լիբանանյան բանակի նախկին մայոր Սաադ Հադդադին: Այս մասին մանրամասն տե՛ս "Civil War in Lebanon", The Bureau of Public Affairs, U.S. Department of State, p. 323.
24. 1983թ. ժողովրդական մի զեկույցից տեղեկանում ենք, որ 1978թ. իսրայելյան ներխուժումից 5 տարի անց հարավային Լիբանանը լքած 141.000 շիաներ փախստականի կարգավիճակով դեռևս շարունակում էին քնակվել արևմտյան Բեյրութում: Մանրամասն տե՛ս Salim Nasr, "Conflit Libanais et Restruction de l'Espace Urbaines de Beyrouth", Politique Urbaines au Machreq et au Maghreb, Lyon, 1985, p. 210.
25. 1979թ. ապրիլին Սաադ Հադդադն իր կողմից վերահսկվող տարածքում (850կմ² մոտ 100.000 քնակչությամբ, որից 40.000 քրիստոնյաներ, իսկ 60.000 մահմեդական շիաներ) հռչակեց «Անկախ Լիբանան» պետությունը: Ողջ զինամթերքը՝ այդ թվում ծանր հրետանի, մատակարարում էր Իսրայելը: Թել-Ավիվը նույնիսկ վարձատրում էր Հադդադի՝ զինվորներին: Դեռևս 1976թ.-ից Իսրայելը սկսեց զենք և զինամթերք մատակարարել հարավային Լիբանանի քրիստոնեական գյուղերի քնակչությանը, որի նպատակն էր հնարավոր բոլոր միջոցներով հակասություններ սերմանել լիբանանյան շիաների և պաղեստինյան զինված խմբավորումների միջև, խոչընդոտել նրանց միջև առկա համագործակցության էլ ավելի ամրապնդմանը: Այս մասին մանրամասն տե՛ս Walid Khalidi, Conflict and Violencc in Lebanon: Confrontation in the Middle East, Cambridge, 1979, p. 128.
26. Helena Cobban, "The Grouth of Shi'i Power in Lebanon and Its Implications for the Future", Shi'ism and Social Protest, p. 146.
27. Karim Pakradouni, La Paix Manquée, Beyrouth, 1983, pp. 105-107.

28. Augustus R. Norton. External Intervention and the Politics of Lebanon, Washington, D.C., Washington Institute for Values in Public Policy, 1984, pp. 12-13.
29. 1982թ. օգոստոսի 23-ին գումարվեց Լիբանանի խորհրդարանի արտահերթ նիստ, որում երկրի նախագահ ընտրվեց Բաշիր Ժմայելը, որը սակայն նախագահի պաշտոնը դեռ չստանձնած՝ սեպտեմբերի 14-ին, պայթյունի հետևանքով սպանվեց: Սեպտեմբերի 21-ին երկրի նոր նախագահ ընտրվեց Բաշիր Ժմայելի եղբայր Ամին Ժմայելը: Այս մասին մասրամասն տե՛ս Thomas L. Friedman, From Beirut to Jerusalem, Anchor Book, USA, 1995, p.177, Tracy Chamoun, Au Nom du Pere. Paris, 1992. p.76.
30. Augustus R. Norton, "Lebanon's Old Politics Must Yield to the New", New York Times, January, 3, 1984.
31. Lally Weymouth, "What the Shias Want in Bloody Lebanon". Los Angeles Times, November 13. 1983, p. 2.
32. 1978թ. օգոստոսի 25-ին Մուսա աս-Սադրը ժամանեց Լիբիա: Աս-Սադրի խորհրդավոր անհետացումը տեղի ունեցավ օգոստոսի 31-ին Տրիպոլի հյուրանոցում, երբ նա պատրաստվում էր Լիբիայի նախագահ Մուամար Կադաֆիի հետ հանդիպմանը: «Ամալի» ղեկավարի անհետացումից հետո Մուամար Կադաֆին հայտարարեց. որ աս-Սադրը Լիբիայի տարածքը լքել էր իտալական ավիաուղիների օդանավով, որը մեկնում էր Հռոմ: Նրա խորհրդավոր անհետացման վերաբերյալ առաջ քաշվեցին մի քանի վարկածներ, սակայն «Ամալի» ղեկավարները մամուլում ակնարկում էին, որ Մուսամար Կադաֆին որոշակի առնչություն ուներ աս-Սադրի խորհրդավոր անհետացման հետ: Այդ մեղադրանքները, սակայն, որևէ կերպ չհաստատվեցին: Աս-Սադրի անհետացումից հետո շիա որոշ ղեկավարներ պնդում էին, որ նա կենդանի է, ինչի արդյունքում աս-Սադրը դասվեց շիականության մեջ լայնորեն տարածված «քողարկված իմամների» շարքին: Այս մասին մանրամասն տե՛ս Ն. Հովհաննիսյան, Իրան. Այաթոլլահ Խոմեյնիի դարաշրջանը, Երևան, 2004, էջ 15; Fouad Ajami, The Vanished Imam Musa al Sadr and the Shia of Lebanon, Cornell University, p. 180; Augustus R. Norton, Shi'ism and Social Protest in Lebanon, London, 1986, p. 169.
33. Augustus R. Norton, "Making Enimies in South Lebanon: Harakat Amal, the IDF and South Lebanon", Middle East Insight, Washington, D. C., No. 3, January-February, 1984, p. 19.
34. Anne Mougneres "Le Hizbollah Libanais: Contribution à l'Etude d'un Mouvement Islamique", Paris, 1994. p. 24.
35. 1979թ. փետրվարի հեղափոխությունից և շահի տապալումից հետո Իրանը հռչակեց «իսլամական հեղափոխության արտահանման» կարգախոսը: Շիական ծայրահեղականներին աջակցություն ցույց տալով՝ Իրանը փորձում էր իր գաղափարական ազդեցությունը տարածել Լիբանանում ողջ շիա համայնքի վրա:
36. Hamseh Hizar A., Islamism in Lebanon, Middle East Review, September, 1997.
37. Դեռևս 1960-ականներին ան-Նաջաֆում (Իրաք) ստեղծվեց շիա ուսանողների մի խմբակ, որի անդամները հետագայում կազմավորեցին

«ադ-Դաուա» («Կոչ») կուսակցությունը, որում ներգրավված էին նաև «Հիզբալլահի» ապագա ղեկավարները՝ Սուհամմեդ Հուսեյն Ֆադլալլահը, Թուֆեյլին և Կուրանին: 1980-ականների սկզբին նրանք փորձում էր ինքնուրույն կազմակերպել հալսովային Լիբանանում իսրայելյան ներկայության դեմ պայքարը:

38. Семеновых В., "Хезболлах", Азия и Африка сегодня, М., 1989, No. 1.
39. Լիբանանում անվտանգության ապահովման նպատակով 1982թ. օգոստոսի 21-ին Լիբանան ուղարկեցին միջազգային խաղաղապահ ուժեր՝ ամերիկյան, ֆրանսիական, իտալական և անգլիական զորամիավորումներ, որոնք 1984թ. փետրվարին մասնակիորեն դուրս բերվեցին Լիբանանից:
40. Elizabeth Picard, The Lebanese Shi's and Political Violence. Geneva: Unitcs Nations Research Institute for Social Development, 1993, pp. 34-35.
41. Elizabeth Picard, Eebanon. A Shattered Country: Miths and Realitics of the Wars in Lebanon, New York, London, 1993, p. 127.
42. Augustus R. Norton, Shi'ism and Social Protest in Lebanon, London, 1986. p. 172.
43. Աշուրան շիական կրոնական օրացույցի գլխավոր ամսաթիվն է՝ շիա իմամ ալ-Հուսեյն իբն Ալիի նահատակման հիշատակության օրը (ավելի հայտնի է «շախսեյ-վախսեյ» անվամբ), որը սպանվել է 680թ. հոկտեմբերի 10-ին: Սովորաբար այդ օրը կազմակերպվում են բազմամարդ թափորներ, որոնց ընթացքում թափորի մասնակիցներն իրենք իրենց մտրակում են, իսկ ավելի մոլիռանդ հավատացյալներն անգամ իրենց գլանահարում են դանակներով և այլ սուր գործիքներով:
44. Մուֆթի Շամս ադ-Դինի կոչը տե՛ս Daily Report, Middle East & Africa, March 5, 1985, p. 62.
45. Augustus R. Norton, Shi'ism and Social Protest in Lebanon, p. 175.
46. Augustus R. Norton, External Intervention and the Politics of Lebanon, Washington, D. C., Washington Institute for Values in Public Policy, 1984, pp. 13-14.
47. Tracy Chamoun, Au Nom du Pere, Paris, 1992, p. 121.
48. Juan R. I., Cole and Nikki R. Keddie, Shi'ism and Social Protest, London, 1986, p. 149-150.
49. Helena Cobban, The Growth of Shi'i Power in Lebanon and Its Implications for the Future, p. 152.
50. Նույն տեղում:
51. Арабский мир, Три десятилетия независимого пазвития, М., 1990, с. 91.
52. Шевченко Н. С., Ливанская "Хезболлах" и ее роль на Ближнем Востоке, Востоковедный сборник, Выпуск 4, Институт изучения Израиля и Ближнего Востока, М., 2002, с. 345.
53. Նույն տեղում:
54. 1982թ. Լիբանան իսրայելյան ներխուժմանը հետևած վարզացումների արդյունքում ՊԱԿ-ն իր ռազմական և քաղաքական կառույցներով մինչև 1982թ. սեպտեմբերի 1-ը դուրս բերվեց Լիբանանի տարածքից:
55. Elizabeth Picard, Eebanon. A Shattered Country: Miths and Realities of the Wars in Lebanon, New York, London, 1993, p. 128.

56. «Հաց նամակի» տեքստը տե՛ս أنهار. «ան-Նահար», Բեյրութ, 16.02.1985: www.hizballa.org
57. Նույն տեղում:
58. Шевченко Н. С., Ливанская "Хезболлах" и ее роль на Ближнем Востоке, Востоковедный сборник, Выпуск 4, Институт изучения Израиля и Ближнего Востока, М., 2002, с. 342.
59. Նույն տեղում:
60. www.hizballa.org
61. http://www.ict.org.il
62. Տաիֆի համաձայնագրի տեքստը տե՛ս http://www.monde-diplomatiquc,fr/cahicr/proche-orient/region-liban
63. «Արաքս», Թեհրան, 07.08.2000.

АНУШ ОГАНЕСЯН

К ОЦЕНКЕ ИСТОРИОГРАФИИ НЕКОТОРЫХ ПРОБЛЕМ ИДЕОЛОГИИ ТУРЕЦКОГО НАЦИОНАЛИЗМА.

В последние десятилетия востоковедная историография отметила "взрыв" числа публикаций, посвященных исследованию природы, сущности, форм, типов и характера эволюции национализма в странах Востока[1]. В этом контексте примечательно появление целого ряда исследований, рассматривающих проблемы возникновения, развития, характера и сущности турецкого национализма (тюркизма и пантюркизма)[2].

Не преследуя цель дать общую оценку отдельным работам, нам бы хотелось остановиться на некоторых концептуальных положениях разработок по данной теме, которые, как нам кажется, нуждаются в уточнении, пересмотре или даже переосмыслении. Это тем более важно, что многие из них, войдя в научный оборот, приобрели характер неких стереотипов, своего рода "историографических клише".

Известно, что на развитие обшественно-политической мысли в Турции в конце XIX- начале XX вв. большое влияние оказали идеи Гердера, Фихте, Ницше, Трайчке, а также взгляды таких социологов, как Дюркгейм, Лебон, Ренан и др. Определенную роль в формировании идеологии тюркизма сыграло также германо-турецкое сближение. Гиперболизируя значение внешних факторов, ряд авторов (У.Хейд, Б.Люис, К.Карпат, Д.Кашнер, Ф.Башгиль и др.)[3] проводят мысль о том, что национализм был заимствован турками у европейцев. Б.Люис, например, считает, что национализм (качественно иное явление в отличие от патриотизма, существовавшего, скажем, в Англии и Франции) зародился в Центральной Европе, где жили немцы, чехи, словаки, поляки, но не было Германии, Чехословакии или Польши. Была общность языка, культуры, но не было юридически оформленной территориальной общности. Вместо идей заподноевропейского патриотизма возникали и развивались идеи национализма. Такая идея национального единства, продолжает далее Б.Люис,

быстро проникла в Османскую империю с ее многонациональным составом. Последними, кто воспринял такие идеи национального и культурного единства, были турки, занимавшие господствующее положение в Османской империи. Медленно, под влиянием Запада, пишет Б.Люис, турки стали ощущать свою общность как нации в османском государстве и исламском мире[4].

Подобные концепции связаны с тем, что западные историки рассматривают развитие стран Востока как "переход от традиционного общества к совеременному" или как процесс вестернизации (модернизации)[5]. Национализм, таким образом, "механически перенимается" восточным обществом как необходимый компонент вестернизации. Подобная трактовка явлений не учитывает глубинных, социально-экономических процессов, происходивших в Турции, не связывается со вступлением ее на буржуазный путь развития. Эволюция Османской империи следовала собственной логике, и именно внутреннее развитие сделало османское общество восприимчивым к внешним влияниям. Достаточно подробно эти процессы освещались в свое время в советской туркологической литературе[6]. Однако нам кажется, что вряд ли оправдано рассмотрение национализма в начальной его стадии как чисто буржуазного явления, ибо сами авторы (Ю.А.Петросян, Э.Ю.Гасанова) неоднократно справедливо подчеркивают слабость именно турецкой национальной буржуазии в старне[7]. В начальной стадии формирования национализма очевидна его связь и с восточным просветительством, и с традиционным этатистским, а также исламским реформаторством, так называемым "антифоринизмом", характерными и для феодального общества. С нашей точки зрения, здесь необходимо более детальное изучение механизмов проникновения и дальнейшей трансформации западных идей в традиционных обществах Востока, в частности, в Османской империи[8].

Еше одним распространенным стереотипом в изучении проблем национализма (тюркизма и пантюркизма) является тот, что он возник среди тюркоязычных меньшинств России как ответ на панславизм, и лишь потом был ввезен в Турцию[9]. "Пантюркизм- продукт российской действительности и, если в центре Турции — Стамбуле — он нашел себе сторонников и покровителей, то это было в результате многолетней борьбы российских и турецких пантюркистов за преодоление "османизма", который был по существу основан на отрицании родства османских турок с российскими тюрко-татарами, несмотря на общность религии и очевидное сходство языков"[10].

Американский автор Чарльз Хостлер отмечает следующее: "В результате эмиграции тюркотатарских лидеров из России, подавления либерализма в России после 1907г. и приближении войны 1914-1918

гг. центр тяжести пантюркизма переместился из России в Турцию"[11]. Ниязи Беркес, говоря о пантюркизме и пантуранизме, пишет, что "два последних течения возникли вне Турции: одно в России, другое — в Венгрии" и что пантюркизм был направлен "против царского управления" а пантуранизм — "против панславизма"[12]. Действительно, после поражения революции 1905 г., в период столыпинских реформ некоторые видные буржуазные националисты царской России тюркского происхождения эмигрировали в Турцию (Ю.Акчура, А.Агаев, А.Гусейнзаде, И.Гаспринский и др.), став там видными идеологами пантюркизма. На наш взгляд, правильнее искать корни националистических пантечений любой нации на местной почве. Националистические идеи существовали и в царской России среди буржуазных кругов тюркоязычных народов, но в Турции они развивались на своей собственной почве и именно здесь окончательно оформились. Очевидно, что для выяснения взаимозависимости и взаимовлияния "российского" и "турецкого" тюркизма необходимы комплексные исследования указанных идеологических процессов для обеих этих стран. Попыткой такого рода является изданная в США книга С.Зенковского "Пантюркизм и ислам в России"[13]. Прослеживая в целом процессы национального развития у тюркоязычных народов России с середины XIX в. С.Зенковский справедливо отмечает разницу в уровнях самосознания, скажем, у крымских татар, волжских татар, народов средней Азии. В целом у всех этих народов, как пишет американский автор, форма национального самосознания выражалась главным образом в виде приверженности исламу вплоть до первой четверти XX в. Когда в 1905-1906 гг. тюрко-татарские лидеры в России организовали свои конгрессы, во всех документах фигурировали слова "мусульмане", а не тюрки. Даже проведенный в 1917 г. в России съезд назывался Первым всероссийским съездом мусульман, а скажем, басмаческое движение проходило не под национальными, а под религиозными панисламистскими лозунгами, как борьба с "неверными" и "безбожниками". И только после советизации, принесшей значительную секуляризацию общественной жизни, по мнению С.Зенковского, у этих народов стало выкристаллизовываться собственно национальное, а не исламское сознание. Однако, на наш взгляд, надо учесть, что там, где зарождалась местная буржуазия, как например среди крымских, волжских или кавказских татар, этот процесс проходил значительно раньше и быстрее. Так что здесь необходима четкая дифференциация. Как уже отмечалось выше, выходцы из России стали видными идеологами пантюркизма.

В Османской империи к началу XX века сформировались две идейно-политические доктрины: османизм и исламизм, причем обе

выражались в виде реакционных пантечений. В планах и османистов, и исламистов туркам отводилась главенствующая роль: в паносманизме — это объединение всех подданных Османской империи при господствующем положении турок, в панисламизме — объединение всех мусульман под эгидой все того же турецкого султана-халифа. Израильский востоковед Уриел Хейд совершенно справедливо отмечает, что практически идеи исламизма стали ширмой для отуречивания государства[14]. Надо подчеркнуть, что в советской литературе существовали две по сути противоположные точки зрения на природу османизма[15]. И.Л.Фадеева пыталась представить османизм как доктрину "равенства и братства". Мы склонны разделить мнение Р.А.Сафрастяна о том, что программа "османизации полиэтнического населения Османской империи... была направлена на ассимиляцию нетурецких народов... положения об уравнении в правах мусульман и немусульман... представляли собой лишь ширму для затемнения ее главной цели"[16]. Таким образом, ростки зарождавшегося тюркизма проявлялись в различных идейных течениях в Османской империи[17]. Выходцы из России, многие из которых получили образование в Петербурге, Париже, Женеве и других научных центрах Европы, эмигрировав в Турцию, принесли с собой, конечно же, целый спектр программ российских националистов. В результате этих идей, основной из которых являлся тюркизм, а также дальнейшей его политизации именно в Турции родились доктрины пантюркизма и пантуранизма. Эти доктрины стали усиленно пропагандироваться среди тюркоязычного населения России. Программа пантюркистов, как пишет С.Зенковский, должна была осуществиться в три этапа. Прежде всего османские турки должны были укрепить свои позиции внутри империи и отуречить национальные меньшинства, затем должен был начаться пантюркистский период, когда ближайшие соплеменники османских турок - кавказские татары (азербайджанцы) должны были войти в состав турецкого государства. На третьем этапе под сенью турецкого государства должны были собраться все тюркоязычные и "туранские" народы Азии[18]. Основные положения пантюркизма были сформулированы в целостном виде Зией Гекальпом[19].

Для объяснения сущности и характера тюркизма многие советские авторы (А.Ф.Миллер, Э.Ю.Гасанова, Д.Е.Еремеев, А.А.Колесников) обращались к известному ленинскому определению о двойственной природе национализма угнетенной нации. Подобная посылка совсем не верна, поскольку она не учитывает специфической особенности Турции, зависевшей, в какой-то степени, от великих держав, но одновременно являвшейся империей, угнетательницей других народов. Для пояснения этой мысли считаем целесообразным

привести несколько аргументов из обмена мнениями по упомянутой статье А.Д.Литмана[20]. А.Д.Литман подразделяет национализм на четыре типа: "По политическому признаку национализм делится на четыре типа: на национализм угнетающей нации (ныне ему соответствует национализм империалистической буржуазии), национализм угнетенных и развивающихся наций, национализм большой (или господствующей нации в различных типах многонациональных националистических государств) и национализм маленькой (или местный нациоанлизм)"[21]. Выходит, что А.Д.Литман признает два основания для деления нациоанлизма. Одно для разграничения национализма на первые два типа и какое-то другое — на два последних.. Но разве национализм угнетающих наций (по классификации автора — I тип) чем-то отличается от национализма больших господствующих наций (II тип), а национализм угнетенных (III тип), в свою очередь, от национализма малых наций (IV тип)? — задает резонный вопрос А.Д.Литману его оппонент М.В.Иордан[22]. Очевидно, утверждает М.В.Иордан, что национализм по политическому признаку следует делить на два основных типа. Приводимое ниже высказывание В.И.Ленина, на которого ссылались все советские авторы, не оставляет на этот счет никаких сомнений. Критикуя абстрактную постановку вопроса о национализме, В.И.Ленин писал, что необходимо отличать национализм нации угнетающей и нациоанализм нации угнетенной, национализм большой нации и национализм нации маленькой. И далее, что для нас очень важно: "По отношению ко второму национализму почти всегда в исторической практике мы, националы большой нации, оказываемся виноватыми в бесконечном количестве насилия". По отношению к какому это второму? Ясно, что по отношению к национализму малых угнетенных наций. Следовательно, есть и первый. И им является национализм больших угнетающих наций, заключает М.В.Иордан. "Национализм больших и национализм угнетающих наций — это не два разных национализма, а один и тот же угнетательский национализм великодержавных наций. Соответственно, национализм малых и национализм угнетенных наций - это не два отличных друг от друга национализма, а один и тот же национализм наций, задавленных национально-колониальным гнетом, национализм подчиненных, зависимых, неполноправных наций"[23]. Таким образом, понятно, что обращение к ленинскому определению о двойственной природе национализма угнетенной нации (в отношении турецкого национализма, национализма угнетающей нации) совершенно неоправдано.

Неправомерной представляется нам также точка зрения, согласно которой тюркизм в начале своего возникновения характеризуется как лишь "литературный", "культурный" (К.Карпат), "прогрессив-

ный" и только в процессе дальнейшей своей эволюции пробретший черты реакционного пантечения. Дело в том, что тюркизм с самого начала содержал в себе характерную особенность — двойственность, сочетание "интраверсивности" и "экстраверсивности". Как пишет Э.Ю.Гасанова, "тюркизм не был однозначным явлением и выступал с самого начала в двойном обличии"[24]. Одно его лицо было обращено как бы внутрь страны, а другое — к различным по своему происхождению и связанным лишь языковым родством народам, носило отпечаток великодержавной идеологии пантюркизма-пантуранизма[25]. Отсюда проистекает трудность определения грани между тюркизмом и пантюркизмом, на которую ссылаются многие исследователи. В другой своей работе Э.Ю.Гасанова, например, констатирует, что "в действительности идеология турецкого буржуазного национализма - тюркизм с самого начала проявлялась не в чистом виде, а с большой примесью пантюркизма" и была настолько насыщена "пантюркистскими идеями, что порой очень трудно определить грань между тюркизмом и пантюркизмом"[26]. Как нам кажется, эта трудность проистекает из упрощенной трактовки определения о двойственной природе национализма[27].

Другая сложность, обусловленная вышеуказанным концептуальным положением, заключается в следующем: по мнению ряда историков (А.Ф.Миллер, Д.Е.Еремеев, Э.Ю.Гасанова) "кемалисты в дальнейшей своей борьбе за спасение Турции стали опираться на идеологию буржуазного национализма, очищенного от пантюркистских наслоений"[28]. А.Ф.Миллер пишет, что "Ататюрк впервые в истории турецкой общественной мысли четко отделил турецкий национализм - ***тюркизм*** (А.О.) не только от общеосманского или обшемусульманского квазинационализма "новых османов", но и от пантюркизма младотурок..."[29]. Позже в советскую историографию ввели термин "кемалистский национализм" (Э.Ю.Гасанова). "Иногда имеет место попытка подмены кемалистского национализма ***тюркизмом*** (А.О.) и даже пантюркизмом, нашедшая отражение в работе ряда западных авторов"[30]. (Как мы видели выше, не только западных, но и советских). Попытка представить кемалистский национализм в качестве "очищенного" тюркизма недооценивает, как нам кажется, генетическую преемственную связь идеологии кемалистов и младотурок[31] не только в теории, но и в практике, беря за основу лишь их декларативные заявления. Например, Э.Ю.Гасанова пишет, что выступление Мустафы Кемаля с трибуны Великого национального собрания Турции в декабре 1921 г., в котором он критиковал пантюркизм и панисламизм[32] означало официальный отказ турецкой национальной буржуазии от этих идеологий[33]. Правда, она же заме-

чает, что "Кемаль Ататюрк не всегда был последователен в осуждении пантюркизма. Впоследствии он попустительствовал деятельности ряда лиц, в чьих ***статьях и книгах*** (и только? — А.О.) пропагандировалась эта реакционная идеология"[34]. К сожалению, мягким словом "попустительство" названо не только ущемление прав национальных меньшинств Турции — греков, курдов, армян и др., но резня армян и греков, прямая агрессия в Закавказье уже в кемалистский период[35]. Упрощенная трактовка кемализма (как "очищенного" тюркизма) не объясняет, с нашей точки зрения, живучесть и возрождаемость пантюркистских идей в Турции уже после создания национального государства, вплоть до наших дней.

Таким образом, как видим, необходимо дальнейшее изучение проблем турецкой общественно-политической мысли, а также переосмысление некоторых устоявшихся концепций в этой области. Это поможет полнее охарактеризовать идейные процессы, происходившие в Турции в прошлом и, возможно, будет способствовать их пониманию в настоящее время.

ANUSH HOVHANNISYAN

THE ESTIMATION OF THE HISTORIOGRAPHY OF THE PROBLEMS OF THE NATIONALISTIC IDEOLOGY IN TURKEY.

Quite a nubmer of works published within the last decades both in this country and abroad have been dedicated to exploring the issues of the origination of the Turkish bourgeois-nationalistic ideology. The conceptual statements advanced in these research works need to be specified, revised and even reappraised. This is extremaly important since many of these statements having been introduced into the scholarly circulation became a sort of "historiographic stereotypes". Their revision will enable a fuller and more multi-lateral characterization of the ideological currents in the present-day Turkey.

ПРИМЕЧАНИЯ

1. См.: А.Д.Литман, Об определении понятия и классификации типов национализма в развивающихся странах (к постановке вопроса) (Народы Азии и Африки, 1973, №1, с.37-49); Обмен мнениями по статье Литмана А.Д. (Народы Азии и Африки, 1975, №1, с.44-68); Современный национализм и общественное развитие зарубежного Востока, М., 1978; Ислам и проблемы национализма в странах Ближнего и Среднего Востока, М., 1986; З.И.Левин, Ислам и национализм в странах зарубежного Востока, М., 1988; Nationalism in the Middle East, New York, 1952; Expectant Peoples. Nationalism and Development, New York, 1963; A.Bireau, Vocabulaire practique des

sciescienses sociales, Paris, 1966; K.B.Minoque, Nationalism London, 1967; Nationalism in Asia and Africa, New York, 1970; C.P.Piscolli, The Advent of Idcology in the Islamic Middle East (Studia Islamics. № 55, 1982).

2. См.: Зарождение идеологии национально-освободительного движения (XIX- начало XX вв.) [Очерки по истории общественной мысли народов Востока (раздел: Турция), М., 1973]; Э.Ю.Гасанова, Общественная мысль в Турции в период буржуазной революции 1908 г. (Современная философская и социологическая мысль стран Востока, М., 1965, с.216-241); ее же, Идеология буржуазного национализма в Турции в период младотурок (1908-1914гг.), Баку, 1966; Д.Е.Еремеев, Особенности образования турецкой нации (Советская этнография, 1969, №5, с.57-67); И.Л.Фадеева, Ислам и тенденции национализма в идеологии османского общества второй половины XIX в. (Ислам и проблемы национализма в странах Ближнего и Среднего Востока, М., 1986, с.140-153; Lewis V. Tomas, Nationalism in Turkey (Nationalism in the Middle East. The Middle East Institute, Washington, 1952); F.Tachau. The Face of Turkish Nationalism (The Middle East Journal, vol. n3, 1959. !3); Ziya Gökalp. The Principles of Turkism. Leiden. 1968; B.Lewis, The Emergence of Modern Turkey, London. 1962; N.Berkes, The Development of Secularism in Turkey, Montreal. 1961; K.Karpat. Turkey's Politics in the Transition to a Multy-Party System, New-Jersey. 1959; D.Kushner, The Rise of Turkish Nationalism (1878-1908). London. 1977; Eric Yan Zürcher, The Role of Commitee of Union and Progress in the Turkish National Movement (1905-1926). Leiden, 1984; F.Georgeon, Aux origines du nationalisme ture, Paris, 1980; J.M.Landau, Pan-Turkism in Turkey. A Study in Irredentism, Leiden, 1981; C.Kudret, Ziya Gökalp, Ankara. 1963; M.E.Erişirgil. Türkçülük devri, milliyetçilik devri, insanlik devri. Ankara. 1958; I.Kafesoğlu. Türk milliyetçiliğinin meseleleri, Ankara. 1966.
3. U.Heyd, Foundations of Turkish Nationalism. London, 1950; B.Lewis указ. соч.. K.Karpat, указ. соч., F.Basgil, Türk milliyetçiligini: doguşu. mânasi, gayesi ve vaziflari. II TT Kongresi, Istanbul, 1937, Kongrenin çalismalari. kongreyesunulan tebligler. Istanbul. 1943; Kinross. Ataturk. A Biography of Mustafa Kemal, Father of Modern Turkey, New York, 1965.
4. B.Lewis. указ, соч., с.337.
5. См.: М.Н.Тодорова, Европеизация Османской империи (постановка проблемы и ее освещение в современной западной и турецкой историографии) (Народы Азии и Африки, 1977, №2, с.204-211).
6. См.: Зарождение идеологии национально-освободительного движения (XIX- начало XX вв.).
7. См.: Ю.А.Петросян, Турция (Зарождение идеологии национально-освободительного движения), М., 1973, с.19; Э.Ю.Гасанова, Общественная мысль в Турции в период буржуазной революции 1908 г. (Современная философская и социологическая мысль стран Востока), М., 1965, с.221; на это обратил внимание Б.С.Ерасов, Проблемы исследования идеологии народов Востока в новое время (Народы Азии

и Африки, 1975, №1, с.108-121); О.Г. Инджикян, Буржуазия Османской империи, Ереван, 1977.

8. Об этом говорилось также в докладе И.Е.Петросян – Реформаторское движение в Османской империи в XIX веке: Традиции и новации (Туркологическая конференция "Проблемы истории Ближнего Востока (Османская империя) на рубеже XIX-XX вв.", Ереван, 21-23 мая 1986 г.
9. А.Аршаруни, Х.Габидуллин, Очерки панисламизма и пантюркизма в России, М., 1931; C.W.Hostler, Turkism and the Soviet, London, 1957; N.Berkes, указ. соч.
10. А.Аршаруни, Х.Габидуллин, указ. соч., с.13.
11. C.W.Hostler, указ. соч., с.137.
12. Н.Беркес, указ. соч., с.334, сноска 11.
13. S.A.Zenkovsky, Pan-Turkism and Islam in Russia. Cambridge, Massachusettes, USA, 1960.
14. U.Heyd, указ. соч., с.73.
15. И.Л.Фадеева, Официальные доктрины в идеологии и политике Османской империи (османизм-панисламизм), М., 1985; Р.А.Сафрастян, Доктрина османизма в политической жизни Османской империи, Ереван, 1985.
16. Р.А.Сафрастян, указ. соч., с.47.
17. См.: А.Р.Оганесян, К вопросу о формировании буржуазно-националистического направления в турецкой историографии (Тезисы XIII республиканской научной сессии молодых востоковедов, Ереван, 1987, с.29-30).
18. S.Zenkovsky, указ. соч., с.111.
19. Ziya Gökalp, Türkçülü• ün esaslar, Istanbul, 1958.
20. А.Д.Литман, указ соч.
21. Там же, с.39.
22. М.В.Иордан, О своеобразии национализма в странах "третьего мира", (Народы Азии и Африки, 1975, №1, с.49-50).
23. М.В.Иордан, указ соч., с.50.
24. Э.Ю.Гасанова, Об идеологических основах кемализма и их современном толковании в Турции (Народы Азии и Африки, 1968, №3, с.17).
25. Там же.
26. Э.Ю.Гасанова, Общественная мысль в Турции..., с.233.
27. Кстати, некоторые западные исследователи характеризуя турецкий национализм, употребляют термин "conquerer complex" ("комплекс завоевателя" – The Ottoman State and its Place in World History, Leiden, 1974).
28. Э.Ю.Гасанова, Общественная мысль в Турции..., с.236.
29. А.Ф.Миллер, Формирование политических взглядов Кемаля Ататюрка (К 25-летию со дня его смерти), (Турция. Актуальные проблемы новой и новейшей истории, М., 1983, с.110).
30. Э.Ю.Гасанова, Об идеологии национально-освободительного движения в Турции и роли Ататюрка в ее развитии (Турция) (история и современность), М., 1988, с.166.

31. См.: Erik Yan Zürcher, указ соч.
32. Atatürkün söyle ve demecleri, Istanbul, 1945, s.193-194.
33. Э.Ю.Гасанова, Идеология буржуазного национализма..., с.146.
34. Там же, с.148.
35. См. об этом: Е.К.Саркисян, Экспансионистская политика Османской империи в Закавказье накануне и в годы Первой мировой войны, Ереван, 1962, с.317-420; Р.Саакян, Франко-турецкие отношения и Киликия в 1918-1923 гг., Ереван, 1986; Дж.Киракосян, Младотурки перед судом истории, Ереван, 1986, с.292-347.

ՆԻԿՈԼԱՅ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԱՐԱԲԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՀԱՎԱԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՇՐՋԱՆՈՒՄ

Արաբա-թուրքական հարաբերությունները Մերձավոր Արևելքի ներկայիս շրջանի ամենաբարդ ոլորտներից մեկն են: Դա ունի իր պատճառները՝ ինչպես պատմական, այնպես էլ արդիական՝ քաղաքական, այդ թվում և աշխարհաքաղաքական-ծավալապաշտական, տնտեսական, կրոնական և այլն:

Արաբները մոտ 400 տարի՝ 1516-1918թթ., եղել են Օսմանյան կայսրության կազմում, որն անջնջելի հետք է թողել թե՛ արաբների, և թե՛ թուրքերի պատմական հիշողության մեջ: Արաբները հիանալի հիշում են չորսդարյա թուրքական զուլումի պատմական ժամանակահատվածը և իրավացիորեն թուրքական տիրապետությանը մեղադրում արաբների սոցիալ-տնտեսական և մշակութային-գիտական հետամնացության մեջ: Նրանց հիշողության մեջ դեռևս թարմ են Դամասկոսում, Բեյրութում, Երուսաղեմում և Ալեյում Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ օսմանյան կառավարության կանգնեցրած կախաղանները, որոնց վրա ճոճվում էին արաբական ազգային-ազատագրական՝ հակաթուրքական պայքարի բազմաթիվ առաջնորդների դիակները: Արաբ ժողովուրդը չի մոռացել դա և չի ներել երիտթուրքական առաջնորդներ Թալեաթին, Էնվերին և Ջեմալին, այն նույն դահիճներին, որոնք կազմակերպեցին հայոց ցեղասպանությունը՝ արմենոցիդը, այդ նույն ժամանակաշրջանում[1]:

Արաբների վրա օսմանյան չորսհարյուրամյա տիրապետությունը խոր հետք է թողել նաև թուրքերի պատմական հիշողության մեջ: Նրանք չեն մոռացել նրանց համար այդ "երանելի" պատմական ժամանակահատվածը, երբ նրանք տեր ու տնօրեն էին արաբական աշխարհում, որը կորցնելով, Թուրքիան դադարեց Օսմանյան կայսրություն լինելուց և վերածվեց Փոքր Ասիայի տարածքում կազմավորված Թուրքական հանրապետության: Եվ այդ պատմական հիշողությունը ստեպ-ստեպ դրսևորվում է թուրքական կառավարող շրջանակների մոտ, մանավանդ տա-

ռածաշրջանում քաղաքական յարվածության կամ ճգնաժամի առաջացման ժամանակ: Մյուս կողմից. երկարամյա տիրապետությունը արաբների վրա թուրքերին մոտ առաջացրել է ռրոշակի հոգեբանական քաթյոյյք: Նրանք վարժվել են արաբների վրա ավանդաբար նայել վերևից, մեծ դժվարությամբ են համակերպվում թուրքերի արաբների հետ իրավահավասարության հիմնաղրույթին, շատ հաճախ կրկին հավակնում են նրանց դիտել իրենց-ենթակա մի ժողովուրդ, որն ապրում է նախկինում "իրենց պատկանած" տարածքներում, և այլն:

Ահա այս հողի վրա թուրքական իշխանությունները, հետապնդելով իրենց ծավալապաշտական նպատակները, պարբերաբար հանդես են գալիս արաբական երկրների նկատմամբ տարածքային հավակնություններով և պահանջներով:

Թուրքիան և նրա նոր ղեկավարները՝ Մուստաֆա Քեմալը և նրա հետևորդներ համարվող քեմալականները, արաբական երկրների նկատմամբ տերիտորիալ պահանջներով հանդես եկան արդեն 1919-1920թթ., չնայած այն հանգամանքին, որ Օսմանյան կայսրությունն Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ գլխովին ջախջախվեց, կրեց խայտառակ պարտություն և անհետացավ պատմության թատերաբեմից. որն արձանագրվել էր առաջին միջազգային պաշտոնական դիվանագիտական փաստաթղթում՝ 1918թ. հոկտեմբերի 30-ին ստորագրված Մուդրոսի զինադադարի վերաբերյալ փաստաթղթում, իսկ այնուհետև 1920թ. Սևրի պայմանագրում: Այդ և հետագա պայմանագրերով (Լոզանի և այլն) վերացվում էր օսմանյան տիրապետությունը արաբական երկրներում:

Բայց ինչպես ցույց տվեցին հետագա դեպքերը, թուրքական ղեկավարությունը, մի կողմից ստորագրում էր համապայնագրեր ու պայմանագրեր արաբական երկրների վրա Թուրքիայի տիրապետությունից հրաժարվելու վերաբերյալ, իսկ մյուս կողմից, գործադրելով զանազան հնարանքներ, փորձում էր կրկին վերադառնալ արաբական աշխարհ՝ որպես նրա տիրակալ:

Առաջին համաշխարհային պատերազմի ավարտից շատ չանցած, բավականին լարված հարաբերություններ ստեղծվեցին երեկվա դաշնակիցներ արաբների և անգլիացիների ու ֆրանսիացիների միջև: Արաբներ, որոնք ապստամբվել էին օսմանյան տիրապետության դեմ 1916թ. հունիսին Հիջազի կառավարիչ Հուսեյնի գլխավորությամբ, և մեծ ավանդ ներդրել օսմանյան բանակների ջախջախման ու անգլո-ֆրանսիական ուժերի հաղթանակի գործում, պատերազմի ավարտից հետո չստացան այն, ինչ նրանց խոստացել էին Անգլիան և Ֆրանսիան, հատկապես անկախության հարցում: Դա, բնականաբար, առաջացրեց արաբների խորը դժգոհությունը: Հուսեյնի և Անգլիայի, հատկապես Ֆրանսիայի միջև հարաբերությունները բավականին սրվեցին:

Այդ իրադրությունից փորձեցին օգտվել Մուստաֆա Քեմալը և Թուրքիայի մյուս պետական ու ռազմական գործիչները: Նրանք դեռևս չէին հրաժարվել թուրքական մեծապետական իմպերիալիստական ծրագրերից և փայփայում էին Օսմանյան կայսրության սահմանները. եթե ոչ ամբողջապես, ապա գոնե մասամբ վերականգնելու ծրագրեր: Այդ ծրագրերի մեջ նրանք առանձնահատուկ տեղ էին հատկացնում Անդրկովկասի և Արաբական Արևելքի երկրների գրավմանը:

Քեմալական գործակալները լայն գործունեություն էին ծավալել Սիրիայում, հատկապես Հալեպում և նրա շրջակա տարածքներում, Դամասկոսում և այլ վայրերում, գրգռելով տեղական արաբ բնակչությանը անգլիացիների ու ֆրանսիացիների դեմ: Նրանց գործունեության համար այդ շրջանում ստեղծվել էր որոշ նպաստավոր հող, քանի որ, ինչպես նշվեց, արաբների մոտ խոր զայրույթ էր կուտակվել Անգլիայի ու Ֆրանսիայի դեմ, որոնք խաբել էին նրանց անկախության հարցում և ձգտում էին իրենց տիրապետությունը հաստատել արաբական երկրներում: Արաբ որոշ գործիչներ, հուսահատությունից ու անզորությունից, երբեմն դիմում էին չմտածված ու անխոհեմ քայլերի: Դրանց թվին էին պատկանում Հալեպի նահանգապետ Ջաֆար ալ-Ասկյարին. Յասին ալ-Հաշիմին և ուրիշներ, որոնք նույնիսկ կապեր հաստատեցին ու բանակցություններ մեջ մտան քեմալականների հետ: Նրանք դրանով փորձում էին պատժել իրենց եվրոպական բարեկամներին՝ Անգլիային ու Ֆրանսիային:

Քեմալականները փորձեցին օգտվել այդ հանգամանքից և անգլիացիների ու ֆրանսիացիների դեմ ուղղված արաբների դժգոհությունը ծառայեցնել իրենց շահերին: Դա դարձավ քեմալեսկան գործակալների գործունեության գլխավոր ուղղությունը և նրանց կողմից արաբական երկրներում տարածվող զանազան գրավոր ու բանավոր կոչերի հիմնական բովանդակությունը: Այդ առումով առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում քեմալականների երկու կոչերը:

Առաջին կոչը, որ 1919թ. հոկտեմբերի 10-ին տարածվեց Հալեբում, կոչվում էր "Մուստաֆա Քեմալի կոչը սիրիացիներին": Մուստաֆա Քեմալը կոչ էր անում արաբներին միանալ թուրքերին՝ ընդդեմ եվրոպական պետությունների: Կոչում ներկայացվում էր նաև Եվրոպայի դեմ արաբների ու թուրքերի միավորման հիմքը: Դա կրոնն էր՝ իսլամը: Քեմալը դիմում էր արաբներին որպես նույն կրոնին պատկանող մարդ: "Որպես կրոնակից, - ասում էր Քեմալը, - ես աղաչում եմ ձեզ ուշադրություն չդարձնել այն տարաձայնությունների վրա, որ ծագել էին մեր միջև և որոնք բաժանեցին մեզ"[2]: Նա առաջարկում էր վերջ տալ թյուրիմացություններին և զենքն ուղղել դավաճան կուսակցությունների դեմ, որոնք ցանկանում են մեր երկիրը բաժանել: "Եթե դուք չլսեք, - ընդգծում է Քեմալը, - ապա կափանաք: Հույս մի դրեք մեր կրոնի անհավատ թշնամիների

Ուրեմն Քեմալի հարվածի սլաքն ուղղված էր արաբական ազգային-հայրենասիրական ուժերի և նրանց կազմակերպությունների դեմ, որոնց դավաճան համարելը նշանակում էր, թե ինչպիսի քաղաքական նպատակներ էին հետապնդում քեմալականները՝ կոչ անելով արաբներին միանալ թուրքերին և իրենց զենքն ուղղել արաբական ազգային-հայրենասիրական ուժերի դեմ, որոնք քաղաքական ասպարեզ էին իջել արաբական երկրները օսմանյան բռանտիրությունից ազատագրելու օգնեկտիվ պահանջից:

Արաբական երկրների վրա Թուրքիայի տիրապետությունը վերականգնելու քեմալականների մտադրությունն ավելի հստակ ու որոշակիորեն է ելևում արաբներին ուղղված Քեմալի երկրորդ կոչում: Քեմալն ի լուր արաբների հայտարարում է. "Մենք ցանկանում ենք, հակառակ Վիլսոնի սկզբունքների, միացնել այն մասերը (իմա՝ տերիտորիաները - Ն.Հ.), որոնք պատկանում են Թուրքիային"[6]:

Քեմալն առանց այլևայլության հստակ հայտարարում է, որ արաբական երկրները, Օսմանյան կայսրության այլ տարածքների հետ միասին, պատկանում են Թուրքիային: Իր վերոհիշյալ ձևակերպումով նա այդ հարցում այլևս կասկածի տեղ չի թողնում: Դրա մասին է վկայում նաև այն փաստը, որ նա ուղղակիորեն հակադրվում է ԱՄՆ-ի պրեզիդենտ Վուդրո Վիլսոնի դեռևս 1917թ. հռչակած 14 կետերին, որի 12-րդ կետում արձանագրված էր, որ Օսմանյան կայսրության նախկին տիրապետությունները, այդ թվում և արաբական, պետք է ինքնորոշման իրավունք ստանան և այլևս չմնան օսմանյան տիրապետության ներքո:

Քեմալականներն այժմ հանդես էին գալիս այդ կարևոր պահանջի դեմ: Այդ պատճառով էլ նրանք, ինչքան էլ որ փորձեցին գունազարդվել և արաբական ժողովուրդների բարեկամի դիմակ հագնել, միևնույն է, չկարողացան խաբել և ապակողմնորոշել արաբներին: Դա եղավ թուրքական ծավալապաշտական ծրագրերի ձախողման գլխավոր պատճառը:

Իր վճռական նշանակությունն ունեցավ նաև Հիջազի արդեն թագավոր հռչակված Հուսեյն թագավորի և նրա զինակիցների շատ հստակ և որոշակի բացասական դիրքորոշումը քեմալականների և նրանց քաղաքական ակրտումների նկատմամբ: Հուսեյնը կտրուկ հանդես եկավ քեմալականների հետ կապեր հաստատելու և բանակցությունների մեջ մտնելու արաբական որոշ գործիչների, հատկապես Հալեբի նահանգապետ Ջաֆար ալ-Ասկյարիի փորձերի դեմ: Այդ մասին է վկայում 1919թ. երկրորդ կեսին իր որդուն՝ Ֆեյսալին, որը տնօրինում էր սիրիական գործերը, ուղարկված նրա հեռագիրը: Հուսեյնը նրան զգուշացնում է. "Հաստատ է, որ մարդիկ Հալեբից հյուսիս-արևմուտք բանակցություններ են վարում Քեմալ փաշայի հետ: Դու պետք է հասկանաս, թե ինչ կարող է լինել դրա հետևանքը"[7]: Նա կարգադրում է Ֆեյսալին հայտնել բոլոր նրանց, ում վերաբերում է, չմոռանալ իր՝ Հուսեյնի, խորհուրդները, և ան-

տեսելով իր ահագանգները, սխալներ չգործել: Հուսեյնը հայտնում է, որ ինքն այդ մասին մի քանի անգամ նախազգուշացրել է Ջաֆար Ասկյարլին[8]:

Հուսեյնը, Ֆեյսալը և նրանց գլնակիցները գիտակցում էին, որ Քեմալի իշխանության տարածումը Սիրիայի և արաբական մյուս երկրների վրա կնշանակեր թուրքական տիրապետության վերականգնում և արաբական երկրների անկախության գաղափարի ու հեռանկարների կործանում: Հասկանալի է, որ նրանք չէին կարող համաձայնվել դրա հետ և չարունակեցին պայքարը արաբական երկրների ազատության ու անկախության համար:

Քեմալականների փորձերը, նրանց քարոզչական արշավանքը, իսլամի օգտագործումը որպես արաբների ու թուրքերի "միավորման" հիմք, ոչ մի արձագանք չգտան արաբների՝ ժողովրդի և քաղաքական առաջնորդների մոտ, և լիակատար ձախողում կրեցին:

* * *

Քեմալական Թուրքիայի տերիտորիալ հավակնության հաջորդ նշանակետը դարձավ Իրաքը, ավելի կոնկրետ՝ Մոսուլի վիլայաթը, որի համար նա պայքարում էր 1920-ական թվականներից, ընդհուպ մինչև 1926թ.:

Առաջին համաշխարհային պատերազմի ավարտից հետո, Անգլիան Ազգերի լիգայից ստացավ Իրաքի կառավարման մանդատը, որն Իրաքում իրագործվեց միանգամայն յուրահատուկ կերպով: Ստեղծվեց Իրաքի թագավորություն, որը, սակայն, գաղութային կախվածության մեջ էր գտնվում Մեծ Բրիտանիայից: Իրաքն ուներ իր թագավորը, կառավարությունը, պառլամենտը և պետական այլ կառույցներ, սակայն, այնտեղ գործում էր անգլիական գլխավոր կոմիսարը, որին և պատկանում էր վերջին խոսքը: Անգլիական մանդատի ներքո իրաքյան թագավորության վերջնական կազմավորումն ավարտվեց 1921թ. օգոստոսին:

Այս գործընթացն այնքան էլ հեշտ ու խաղաղ չընթացավ: Իրաքի թագավորի թեկնածու Մեծ Բրիտանիան առաջարկում էր Հիջազի թագավորի երրորդ որդուն՝ Ֆեյսալին, որն աչքի ընկնող դերակատարում էր ունեցել արաբական մեծ ապստամբության նախապատրաստման և իրականացման գործում և ղեկավարել էր արաբական բանակի ռազմական գործողությունները թուրքերի դեմ Միջևայրում: Նա ճանաչված քաղաքական գործիչ էր և մեծ հեղինակություն էր վայելում արաբական շրջանակներում: Չնայած այդ հանգամանքին, Իրաքի գահին հավակնում էին նաև այլ մարդիկ, որոնց թվում և թուրքական իշխան Բուրխան ադ-Դինը[9]: Անգլիացիներին հաջողվեց ստիպել նրան և մյուս հավակնորդներին հանել իրենց թեկնածությունները և Ֆեյսալը մնաց միակ հավակնոր-

ույր: Նրա պաշտոնական բացադրումը կայացավ 1921թ. օգոստոսի 23-ին:

Իրաքի թագավորությունը կազմավորվեց երեք վիլայաթների՝ Բասրայի, Բաղդադի և Մոսուլի, միավորման հիմքի վրա:

Սակայն դրա դեմ հանդես եկավ քրդերի մեծամասնությունը, որը դեմ էր նաև Ֆեյսալի թեկնածությանը որպես Իրաքի թագավոր: Այդ կապակցությամբ անցակցված հարցման ժամանակ քրդերը կամ դեմ քվեարկեցին Ֆեյսալին, կամ էլ կամ քվեարկելով՝ արեցին վերապահումներ: Սուլեյմանիայում և Էրբիլում քրդերը քվեարկեցին հօգուտ Ֆեյսալի, բայց պահանջեցին հատուկ իրավունքներ իրենց համար. Սուլեյմանիայում քրդերը հրաժարվեցին մասնակցել քվեարկությանը. իսկ Կիրկուկում նրանք դեմ քվեարկեցին և պահանջեցին քրդերի համար ստեղծել քրդական կառավարություն: Միաժամանակ Կիրկուկի քրդերը Սուլեյմանիայի հետ միանալու դեմ արտահայտվեցին: Ընդհանուր առմամբ քրդերի մեծամասնության դիրքորոշումը Ֆեյսալի հարցում բացասական էր[10]: Ինչպես նշում է ֆրանսիական պատմաբան Պ. Ռոսին, "Քրդերը հայտարարեցին, որ իրենք չեն ենթարկվելու արաբներին"[11]:

Քրդերի դիրքորոշման պատճառով Մոսուլի վիլայաթում ստեղծվեց լարված իրադրություն, որը 1922թ. վերածվեց ապստամբության: Դրանից փորձեց օգտվել քեմալական Թուրքիան: Նրա գործակալները և հատուկ էմիսարները որոշակի դերակատարում ունեցան քրդական հուզումները բորբոքելու և նրանց արաբների դեմ գրգռելու գործում:

Այս կապակցությամբ անհրաժեշտ է ուշադրությունն հրավիրել հետևյալ հանգամանքի վրա:

1920թ. օգոստոսի 10-ին ստորագրված Սևրի պայմանագրով քրդերին իրավունք է էր վերապահվում ստեղծել իրենց պետությունը՝ Եփրատից արևելք և Հայաստանի սահմաններից հարավ ընկած տարածքում: Այդ կապակցությամբ պայմանագրում ասված էր, որ " եթե Մոսուլի քրդերը ևս կցանկանան մտնել նոր քրդական պետությանս կազմի մեջ, ապա գլխավոր դաշնակիցները չեն առարկի դրա դեմ"[12]: Սևրի պայմանագրի դեմ, ինչպես հայտնի է, հանդես եկավ Թուրքիան: Ըստ որում, ոչ միայն ընդհանրապես դեմ էր այդ պայմանագրին, այլև դեմ էր քրդերի՝ իրենց ինքնուրույն պետությունն ունենալու որոշմանը:

Թուրքիան ձգտում էր Մոսուլն անջատել Իրաքից:

Հետապնդելով այդ նպատակները, Թուրքիան ամեն ինչ անում էր, որպեսզի քրդական շրջաններում անհանգիստ իրավիճակ լիներ: Այդ պատճառով քրդական շրջաններում հայտնվում էին ոչ միայն քեմալական գործակալներ, այլև թուրքական զինված ջոկատներ: Այդ հանգամանքը նկատի ունենալով, որոշ հետազոտողներ, ինչպես Մ.Սետոն-Վիլյամսը և Է. Մեյնը, այն կարծիքն են արտահայտել, որ քրդերի 1922-

1924թթ. ելույթները ստարելկյա, տվյալ դեպքում թուրքական միջամտության արդյունք էին:

Հզոր եղյական ելույթները սկսվեցին 1922թ. գալնեանը: 1922թ. մարտի 17-ին թուրքական կառավարությունը Ռևանդուզ որպես կայմակամ՝ կառավարիչ. ուղարկեց իր հավատարիմ գործակալներից մեկին՝ Ռամզի բեյին: Դա բացահայտ միջամտություն էր Իրաքի ներքին գործերին. որը հնարավոր եղավ իրագործել երկու պատճառով: Նախ, Թուրքիան հաշվի չէր ցստում Իրաք պետության ստեղծման փաստի հետ. որը թեկուզ և անգլիական մանդատի ներքո էր գտնվում, այդուհանդերձ, պետություն էր: Նա չէր հաշտվում այն իրողության հետ, որ Մոսուլի վիլայաթը Իրաքի բաղկացուցիչ մասն էր, և փորձում էր այն դիտել որպես նախկին Օսմանյան կայսրության մի մասը, այն կայսրության, որի իրավահաջորդն էր նա փորձում հանդես գալ: Այնպես ինչպես բացատրել այն փաստը, որ Թուրքիայի կառավարությունն իրեն իրավունք էր վերապահում կառավարիչ նշանակել մեկ այլ պետության տարածքում գտնվող շրջանում:

Երկրորդ, Թուրքիան տեխնիկապես կարողացավ իրագործել այդ աննախադեպ քայլը, քանի որ այդ ժամանակ պետական սահմանների պաշտպանությունը չէր գտնվում այնպիսի բարձրության վրա, ինչպես մեր օրերում է: Նվ դա հնարավորություն էր ստեղծում պետական սահմաններով համեմատաբար ազատ տեղափոխություններ: Ասվածն առավել քննարկ էր Իրաքի համար, որը դեռևս թույլ էր և գործկ համապատասխան միջոցներից ու հնարավորություններից փակի տակ պահել իր սահմանները:

Ռամզի բեյը, ժամանելով Ռևանդուզ և ստանձնելով կայմակամի պաշտոնը, կապեր հաստատեց քրդական ցեղերի հետ և նրանց շրջանում յուրեր տարածեց, թե շուտով Մոսուլ կժամանեն խոշոր թուրքական զինված ուժեր, "որոնց օգնությամբ Սուլեյմանիան, Կիրկուկը և Էրբիլը կխլվեն քրդիտանացիներից"[13]:

Թուրքիայից ժամանեց և Ռամզի բեյին միացավ նևս մեկ այլ թուրքական գործիչ՝ Ալի Շևֆիկը, որն ավելի շատ հայտնի էր Յոզ Դեմիր՝ "Երկաթյա ուս" մականունով: Նա ժամանեց որպես "ազգային ապստամբության ղեկավար": Յոզ Դեմիրը հայտարարեց, որ նրա գլխավոր նպատակն ամբողջ Մոսուլն վիլայաթի գրավումն է[14]:

Քրդական ապստամբության ժամանակ, թուրքական գործերը մեկ անգամ չէ, որ անցնում էին Իրաքի սահմանը և մասնակցում անգլիացիների դեմ ուղղված ռազմական գործողություններին: 1922թ. օգոստոսին, երբ ապստամբեց քրդական փիժդար ցեղը, թուրքական զինված ջոկատներն անցան թուրք-իրաքյան սահմանը և միանալով ապստամբ փիժդուսր ցեղին, ռազմական գործողություններ ծավալեցին անգլիացիների դեմ

Ռաուլինսոնի մոտ: Անգլիացիները հայտնվեցին ծանր դրության մեջ և նահանջեցին այդ քաղաքից[15]:

Ստեղծված ծանր պայմաններում, անգլիական իշխանությունները հարկադրված էին որոշ զիջումներ կատարել քրդերին և փակել Թուրքիայի միջամտության խողովակները: Նրանց համաձայնությամբ ստեղծվեց քրդական կառավարություն Սուլեյմանիյաում շեյխ Մահմուդի գլխավորությամբ: Սակայն վերջինս բնավ մտադիր չէր կատարել հետևել Իրաքում անգլիական իշխանությունների և գլխավոր կոմիսար Պերսի Կոկսի հրամաններին: Նա իր սեփական խաղն ուներ: 1922թ. նոյեմբերին շեյխ Մահմուդն իրեն հայտարարեց"Քրդստանի թագավոր" և փորձեց իր իշխանությունը տարածել Իրաքի բոլոր քրդական շրջաններ վրա: Միաժամանակ նա ուղղակի կապեր հաստատեց քեմալականների հետ: Անկարայից շեյխ Մահմուդին այցելեցին թուրքական բանակի երկու սպաներ, որոնք խոստացան նրան օգնել ու աջակցել Մեծ Բրիտանիայի դեմ ուղղված նրա պայքարում[16]: Թուրքերն իրենց զորքերը կենտրոնացրին Զախոյից և Ջազիրա ալ-Ումարից մի քանի մղոն հեռավորության վրա: Դա նպաստեց թուրքամետ գաղտնի կոմիտեների գործունեության ակտիվացմանը Մոսուլի վիլայաթում[17]:

Այդ նույն ժամանակ, 1922-1923թթ.. ընդմիջումներով, ընթանում էր Լոզանի կոնֆերանսը, որի նիստերից մեկի ժամանակ թուրքական պատվիրակության ղեկավար, Մուստաֆա Քեմալի մերձավոր զինակից Իսմեթ փաշան, պահանջեց ամբողջ Մոսուլի վիլայաթը մտցնել Թուրքիայի կազմի մեջ: Անգլիան, հասկանալի է, դեմ էր քեմալականների պահանջին և ամեն կերպ ցանկանում էր Մոսուլի վիլայաթը պահել Իրաքի կազմում՝ ձգտելով Մոսուլի վիլայաթի հյուսիսային սահմանները դարձնել Իրաքի հյուսիսային սահմանները:

Անգլիան շտապում էր իր ծրագիրն իրագործել մինչև Լոզանի կոնֆերանսի ավարտը: Իսկ դրա համար անհրաժեշտ էր հանդարտեցնել քրդական շրջանները և իրեն ենթարկել շեյխ՝ Մահմուդին, հակառակ պարագայում, կարող էր այն տպավորությունը ստեղծվել, որ Իրաքի կառավարությունն ի վիճակի չէ իր վերահսկողության տակ պահել Մոսուլի վիլայաթը:

Պայքարը Մոսուլի վիլայաթի համար կարևոր նշանակություն ուներ երկու կողմերի համար էլ: Անգլիան ոչ մի կերպ չէր կարող նավթաբեր շրջաններով հարուստ այդ վիլայաթը զիջել որևէ պետության: Բացի դրանից, Մոսուլի վիլայաթն ուներ կարևոր ստրատեգիական նշանակություն Անգլիայի համար, որի գաղութային տիրույթները կազմում էին մի ամբողջ շղթա, սրի կարևոր օղակներից մեկն էր դարձել Մոսուլի վիլայաթը:

Թուրքիայի համար Մոսուլը նույնպես կարևոր էր թե՛ տնտեսական, և թե՛ ստրատեգիական առումով: Թուրքիան չէր կարողանում հաշտվել

այն մտքի հետ, որ հարկադրված է սահմանափակվել հիմնականում Փոքր Ասիայի շրջանակներով: Մոսուլի գրավումը նրան հնարավորություն կտար դուրս գալ Միջագետք և բարելավել իր ստրատեգիական և աշխարհաքաղաքական դիրքերը Մերձավոր Արևելքում:

Անգլիան անցավ վճռական ռազմական գործողությունների և կարողացավ ճնշել քրդերի ապստամբությունը: Նրանք 1923թ. ապրիլին թուրքերից ազատագրեցին Ռևանդուզը, իսկ մայիսի 28-ին մտան Սուլեյմանիա, ապա նաև մյուս ապստամբական կենտրոններ:

Այսպիսով, Թուրքիան չկարողացավ, օգտագործելով քրդերի պայքարն իրենց դրության բարելավման և իրավունքների ընդլայնման համար, և ուղղակի ռազմական միջամտությամբ տիրանալ Մոսուլի վիլայաթին:

Սակայն դա դեռևս չէր նշանակում, որ Թուրքիան վերջնականապես հաշտվել էր Մոսուլի կորուստի հետ և մտադիր չէր այլևս պայքարը շարունակելու:

Պայքարն շարունակվեց, բայց նա ռազմական ոլորտից տեղափոխվեց իրավական ոլորտ: Այդ հարցը դարձավ Ազգերի լիգայի քննարկման առարկա, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Իրաքի կառավարման մանդատն Անգլիային տվել էր նա և դրա հետ կապված հարցերը ենթակա էին նրա իրավասությանը:

Այդ հարցի ուսումնասիրության համար Ազգերի լիգան 1924թ. ստեղծեց հատուկ հանձնաժողով, որին Անգլիան և Թուրքիան ներկայացրին իրենց հուշագիրը, ձգտելով հիմնավորել իրենց պահանջների իրավական լինելը: Ուսումնասիրելով այդ հուշագրերը, հարցի պատմությունը և կողմերի վաստարկները, Ազգերի լիգայի հանձնաժողովն ընդունեց որոշում հօգուտ Անգլիայի, այսինքն Մոսուլի վիլայաթը համարել Իրաքի բաղկացուցիչ մաս և թողնել այն նրա կազմում: Նա համաձայնություն տվեց այսպես կոչված "Բրյուսելյան գծին", ըստ որի Մոսուլի վիլայաթը մտնում էր Իրաքի կազմի մեջ և նրա հյուսիսային սահմանները դառնում էին սահմաններ Իրաքի և Թուրքիայի միջև:

Սակայն հանձնաժողովը երկու նախապայման դրեց Անգլիայի առջև: Առաջին, Մոսուլի վիլայաթը համարել Ազգերի լիգայի մանդատի ներքո 20 տարի ժամանակով, և, երկրորդ, երաշխավորել քրդական բնակչության իրավունքները: Անգլիան համաձայնվեց հանձնաժողովի այս երկու պայմանների հետ:

Հանձնաժողովը 1925թ. իր որոշումը ներկայացրեց Ազգերի լիգայի Խորհրդի հաստատմանը:

Սակայն Թուրքիան վիճարկում էր Ազգերի լիգայի իրավասությունը տվյալ խնդրի վերաբերյալ որոշում կայացնելու կապակցությամբ: Ազգերի լիգայի իրավասության հարցը հանձնվեց Հաագայի միջազգային դատարանին: Վերջինս 1925թ. նոյեմբերի 21-ին տվեց իր եզրակացությունն՝

առ այն, որ Ազգերի լիգան իրավասու է որոշում ընդունել Մոսուլի վիլայաթի վերաբերյալ:

Հաագայի միջազգային դատարանի այդ եզրակացության հիման վրա, Ազգերի լիգայի Խորհուրդն ընդունեց որոշում, որի համաձայն Մոսուլի վիլայաթը դարձավ Իրաքի բաղկացուցիչ մասը՝ մանդատի ժամկետը 25 տարով երկարացնելու և ոչ արաբ քրիստոնյաների իրավունքները ապահովելու պայմանով:

Անգլիան ԱՄՆ-ի և Ֆրանսիայի հետ միասին ստիպեցին Թուրքիային ճանաչել Ազգերի լիգայի որոշումը Մոսուլի վիլայաթի վերաբերյալ: 1926թ. հունիսի 5-ին Անկարայում Անգլիայի, Իրաքի և Թուրքիայի միջև ստորագրվեց համապատասխան պայմանագիր, որի համաձայն կողմերը ճանաչեցին, որ "սահմանը Թուրքիայի և Իրաքի միջև վերջնականապես հաստատվում է Ազգերի լիգայի Խորհրդի կողմից 1924թ. հոկտեմբերի 29-ին հաստատված գծին (այսպես կոչված Բրյուսելի գծին) համապատասխան"[18]: Կողմերը համաձայնվեցին նաև սահմանը փոփոխելու փորձեր չկատարել, հրաժարվել կապեր հաստատելուց մյուս պետության ցեղերի ղեկավարների, շեյխերի և այլ անդամների հետ, որոնք տվյալ պահին գտնվում են մյուս պետության տարածքում և այլն: Իրաքը պարտավորվեց 20 տարի Թուրքիային վճարել նավթից ստացվող եկամտաբերի 10 տոկոսը:

Այսպիսով, քեմալական Թուրքիայի այս փորձը ևս՝ տիրանալ արաբական տարածք համարվող Մոսուլի վիլայաթին, ավարտվեց անհաջողությամբ: Սակայն դա անհետևանք չանցավ: Դա ցույց տվեց արաբներին, ինչպես և Սիրիայի դեպքում, որ Թուրքիան դեռևս հրաժեշտ չի տվել իր ոչ հեռավոր անցյալի քաղաքական մտածելակերպին, կայսերական ձգտումներին և ծավալապաշտական քաղաքականության և արաբական երկրների վրա նայում է որպես իր հնազանդ ագրեսիայի ամենահարմար նպատակակետերից մեկը:

* * *

Արաբական երկրների տարածքների նկատմամբ իր ագրեսիվ և զավթողական նկրտումները Թուրքիան կրկին անգամ ցուցադրեց Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ: Դա արդեն թվով երրորդ ոտնձգությունն էր, որ Թուրքիան դրսևորում էր արաբական երկրների տերիտորիաների նկատմամբ: Նախորդ երկուսը, ինչպես ցույց տրվեց, տեղի ունեցավ Քեմալի ղեկավարության շրջանում, իսկ այս երրորդը նրա մահվանից հետո, Իսմեթ Ինենյուի պրեզիդենտության շրջանում, այն Իսմեթի, որը դեռևս 1923թ. Լոզանի կոնֆերանսում պահանջեց Սոսուլի վիլայաթն ամբողջությամբ միացնել Թուրքիային: Թուրքիայի ղեկավարությունն իր ձեռքն էր վերցրել Քեմալի գործի հավատարիմ շա-

րանակարը, մի անճնավոյություն, որն արդեն քաղաքական փորձ ուներ արաբական տարածքները Թուրքիային բռնակցելու պահանջներ ներկայացնելու հարցում:

Այս անգամ ևս Թուրքիայի տերիտորիալ պահանջները բացահայտորեն հասցեագրված էին Սիրիային, իսկ սքողված կերպով նաև Իրաքին:

Թուրքիան Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ ձևականորեն չեզոք դիրք էր գրավել: Իրականում նա, կախված ռազմական իրավիճակից և հակամարտող կոմմերի՝ ֆաշիստական բլոկի և հակահիտլերյան կոալիցիայի, սլատերազմի դաշտում հաջողություններից կամ պարտություններից. մերթ մերձենում էր այս, մերթ այն բլոկին՝ հետապնդելով իր սեփական ռազմաքաղաքական նպատակները: Պատերազմի առաջին փուլում, երբ հաջողությունն ուղեկցում էր ֆաշիստական բլոկին. Թուրքիան սիրախաղում էր Գերմանիայի հետ և փորձում նրա օգնությամբ լուծել իր համար կենսական նշանակություն ունեցող մի շարք հարցեր, այդ թվում և Արաբական Արևելքում:

Իսկ դրությունն ստրատեգիական մեծ նշանակություն ունեցող այս տարածաշրջանում, խիստ տագնապալի էր, մանավանդ այն բանից հետո, երբ Ֆրանսիան 1940թ. պարտություն կրեց և անձնատուր եղավ Գերմանիային: Այդ իրադրությունն առաջին հերթին անդրադարձավ Սիրիայի և Լիբանանի իրավիճակի վրա. որոնք հսմսրվում էին ֆրանսիական ենթամանդատային երկրներ: Օգտվելով Ֆրանսիայի կապիտուլյացիայից Լ.Նանտում մտադրվեց հաստատվել Գերմանիան, ինչպես նաև Իտալիան:

Անս օգտվելով այս նոր քաղաքական իրադրություններից և այն հանգամանքից, որ Ֆրանսիան պարտություն էր կրել և այլևս նախկին հզոր տերությունը չէր, կրկին իր տերիտորիալ պահանջներով ասպարեզ իջավ Թուրքիան: Նա փորձեց դա իրագործել Գերմանիայի թույլտվությամբ և համաձայնությամբ, օգտագործելով այն պարագան, որ Ֆրանսիայի կապիտուլյացիայից հետո խիստ սրվեցին հարաբերությունները երկու նախկին դաշնակիցների՝ Անգլիայի և Ֆրանսիայի միջև: Անգլիան չէր կարող թույլ տալ, որ Ֆրանսիայի պարտությունից հետո Սիրիայում և Լիբանանում հաստատվի Գերմանիան՝ առանձին, կամ Իտալիայի հետ միասին: Ուստի նա, բնականաբար, ցանկանում էր իր վերահսկողությունը սահմանել ֆրանսիական այդ երկու ենթամանդատային երկրների վրա և կանխել գերմանական ուժերի ներխուժումը Սիրիա և Լիբանան: Անգլիական այդ ծրագրերի դեմ վճռականորեն հանդես էին գալիս հիտլերյան Գերմանիայի հետ համագործակցող և նրա կամակատար Ֆրանսիայի այսպես կոչված վիշիական ղեկավարությունը՝ Պետենը, Լավալը, Վեյգանը, Դառլանը և մյուս գործիչները: Նրանց այդ դիրքորոշումը. հասկանալի է. լրիվ աջակցություն էր գտնում հիտլերյան Գերմանիայի ղեկավարության կողմից:

Ամեն ինչ վկայում էր այն մասին, որ հասունանում էր նոր ռազմական կոնֆլիկտ՝ մի կողմից Անգլիայի և նրա հետ համագործակցող "Ազատ Ֆրանսիայի", որի ղեկավարն էր գեներալ դը Գոլլը, իսկ մյուս կողմից Սիրիայում և Լիբանանում Պետենին հավատարիմ մնացած ֆրանսիական ուժերի միջև, որոնց թիկունքում կանգնած էր Գերմանիան:

Թուրքիայի ղեկավարությունը մտածեց, որ հասունացել է հարմար պահը իր տերիտորիալ պահանջները ներկայացնել Սիրիայի նկատմամբ: Այդ մասին են վկայում գերմանական պաշտոնական փաստաթղթերը, որը պատերազմից հետո հրատարակեցին ԱՄՆ-ը և Անգլիան "Գերմանական արտաքին քաղաքականության փաստաթղթերը" ("Documents on German Foreign Policy") խորագրով: Դրա մասին նյութեր են պարունակում նաև "Միացյալ Նահանգների արտաքին հարաբերությունները: Դիվանագիտական նյութեր" ("Foreign Relations of the United States. Diplomatic Papers") մատենաշարի հատորները:

Թուրքիան բանակցությունների մեջ մտնելով գերմանական կառավարության հետ, բացահայտ կերպով դնում էր Սիրիան զավթելու հարցը:

1941թ. հունիսի 3-ին Անկարայում գերմանական դեսպան ֆոն Պապենը հայտնում է Գերմանիայի արտաքին գործերի նախարար Ռիբբենտրոպին իր զրույցի մասին, որ նա ունեցել էր Թուրքիայի արտաքին գործերի նախարար Սարաջօղլուի հետ: Վերջինս զրույցի ընթացքում բարձրացնում է Սիրիայի հարցը: Սարաջօղլուն նշում է, որ Թուրքիան վախենում է, որ Անգլիան կարող է գրոհել Սիրիայի վրա, որը "Թուրքիային կարող է դնել Բաղդադի երկաթուղին և Հալեբի շրջակա տերիտորիաները գրավելու անհրաժեշտության առջև՝ իր դիրքերի ստրատեգիական պաշտպանության համար"[19]: Ֆոն Պապենի հետ հետագա հանդիպումների և զրույցների ընթացքում. Սարաջօղլուն արդեն պնդում է ոչ միայն Հալեբի և նրա շրջանների, այլև ամբողջ Սիրիայի օկուպացման վրա[20]:

Այսպիսով, Թուրքիան կրկին բացահայտորեն հայտ է ներկայացնում Սիրիան զավթելու վերաբերյալ: Նա չի թաքցնում իր զավթողական մտադրությունները նաև Իրաքի նկատմամբ, քանի որ Բաղդադի երկաթուղու գրավումը Թուրքիայի կողմից անպայմանորեն կշոշափեր նաև Իրաքի տարածքային հարցը:

1941թ. հուլիսի սկզբներին Անկարայում էր գտնվում Ֆրանսիայի վիշիական կառավարության, որը հիտլերյան Գերմանիայի խամաճիկն էր, պետական քարտուղար բարոն Ժակ Բենուա-Մեշինը: Նրա այցի նպատակն էր բանակցություններ վարել թուրքական կառավարության հետ թուրքական տերիտորիայով Սիրիա ֆրանսիական զորքեր և ռազմական տեխնիկա տեղափոխելու վերաբերյալ: Գտնվելով Անկարայում, նա սերտորեն համագործակցում էր գերմանական դեսպանի հետ: Վերջինս

1941թ. հուլիսի 4-ին Քեռլին ուղարկված իր դիվանագիտական հերթական զեկուցագրում նշում էր, որ թուրքական կառավարությունը ֆրանսիական բարոյին ընդունել էր բավականին սառը:

Այդ նույն օրը, հուլիսի 4-ին Սարաջօղլուն նորից է հանդիպում ֆոն Պապենի հետ և նրա հետ դարձյալ քննարկում Թուրքիայի տերիտորիալ պահանջները բավարարելու հարցը: Իր պահանջներն ավելի "հիմնավորելու" և համոզիչ դարձնելու նպատակով. Թուրքիայի արտաքին գործերի նախարարը ֆոն Պապենին և նրա միջոցով Գերմանիայի կառավարությանն իր կասկածն է հայտնում առ այն, որ ֆրանսիացիները հագիվ թե կարողանան իրենց դիրքերը պահել Սիրիայում և այդ պատճառով հնարավոր է, որ նրանք, այսինքն ֆրանսիացիները, համաձայնվեն "Թուրքիային վստահել Սիրիայի հօգատարությունը": Շարունակելով իր "հիմնավորումները", Սարաջօղլուն տեղյակ է պահում ֆոն Պապենին, որ "Այդ դեպքում Թուրքիան կարող էր անհապաղ նախապատրաստվել Սիրիան օկուպացնելու համար, ֆրանսիական բանակին հնարավորություն կտար պատվով հեռանալու և պատերազմի ավարտից հետո Սիրիան կվերադարձներ Ֆրանսիային, բացառությամբ հյուսիսային շրջանի"[21]:

Ահա այսպիսին էին Թուրքիայի պահանջները: Նա կրկին ցույց էր տալիս, որ Թուրքիայում այդպես էլ չէին մոռացել և չէին հաշտվել արաբական երկրների կորուստի հետ, թեև դրանից հետո անցել էր ավելի քան 20 տարի: Մյուս կողմից ակնհայտ էր այն էժանագին խորամանկությունը, որ դրսևորում էր թուրքական ղեկավարությունը՝ թաքնվելով ֆրանսիացիների հօգատուր "բարեկամների" դիմակի տակ և առաջարկելով մի այնպիսի ծիծաղաշարժ առաջարկություն, ինչպես սկզբում գրավել ամբողջ Սիրիան, իսկ հետո ֆրանսիացիներին ետ վերադարձնել նրա մի մասը: Այստեղ Թուրքիան փորձում էր խաղացնել Ալեքսանդրետի սանջաքի տարբերակը: Մենք նկատի ունենք այն հանգամանքը, երբ Թուրքիան շանտաժի միջոցով կարողացավ 1939թ. ստիպել Ֆրանսիային Թուրքիային զիջել Սիրիայի մի մասը հանդիսացող Ալեքսանդրետի սանջաքը, որը մտնում էր Հալեպի նահանգի մեջ: Ֆրանսիան, լինի Պետենի ղեկավարության տակ գտնվող հատվածը, թե գեներալ դը Գոլլի "Ազատ Ֆրանսիան", չէր կարող համաձայնվել թուրքական առաջարկության հետ, քանի որ նրանք լավ գիտեին, ելնելով Ալեքսանդրետի սանջաքի փորձից, որ եթե թուրքական զինվորը մտնի Սիրիա, ապա նա կամավոր կերպով այնտեղից չի հեռանա:

Այդ պատճառով էլ, երբ ֆոն Պապենը թուրքական վերոնշյալ առաջարկությունը փոխանցեց բարոն Ժակ Քեոնու-Մեշինին, ապա նա կատեգորիկ կերպով մերժեց այն, ընդգծելով, որ թուրքական առաջարկությունն անընդունելի է Ֆրանսիայի համար[22]:

Նրա հետ լրիվ համաձայն էր գերմանական դեսպան ֆոն Պապենը, որը այդ կապակցությամբ նշում է. «Սիրիան Թուրքիայի խնամակալության ներքո ավելի պակաս ընդունելի է Գերմանիայի համար, քան թե Սիրիան անգլիացիների ձեռքում»[23]:

Այդուհանդերձ, Թուրքիան շարունակում էր պնդել Սիրիան գրավելու վրա և ձգտում ձեռք բերել Գերմանիայի համաձայնությունը: Հուլիսի 9-ին ֆոն Պապենը հաղորդում է Ռիբբենտրոպին, որ Սարաջօղլուն կրկին հանդիպել է իր հետ և նորից պահանջել Գերմանիայի համաձայնությունը գրավել Սիրիան մինչև Աբու Քեմալ-Տրիպոլի ճավքամուղի գիծը: Պապենը խնդրում է հետագա հրահանգներ այդ հարցի կապակցությամբ[24]:

Երեք օր անց, 1941թ. հունիսի 12-ին ֆոն Պապեր ստանում է Գերմանիայի արտաքին գործերի նախարար Ռիբբենտրոպի հետևյալ բովանդակությամբ հեռագիրը. "Մեզ համար հնարավոր չէ գրավել ցպաստավոր դիրքորոշում նյուսխայինի Սիրիան գրավելու թուրքական պահանջների նկատմամբ"[25]: Արտաքին գործերի նախարարը իր երկրի դիրքորոշումը հիմնավորում էր, նշելով թե Ֆրանսիան ամբողջ ժամանակ լոյալ է եղել Գերմանիայի նկատմամբ, և եթե այժմ Գերմանիան պաշտպանի Թուրքիային, ապա դա ոչ լոյալ ակտ կլինի Ֆրանսիայի հանդեպ[26]:

Գերմանիայի հրաժարվելը պաշտպանել Թուրքիայի պահանջները Սիրիան օկուպացնելու հարցում, ինարկե, բացատրվում էր այլ պատճառներով: Նացիստական Գերմանիան միջազգային հարաբերություններում երբեք չի ղեկավարվել բարոյական վեհ սկզբունքներով: Սիրիայի լրիվ կամ մասնակի օկուպացումը Թուրքիայի կողմից չէր համապատասխանում Գերմանիայի շահերին: Ահա այս էր գլխավոր պատճառը: Գերմանիան չէր կարող համաձայնվել, որ Սիրիան սկուտեղի վրա մատուցվեր Թուրքիային, որը ոչ մի կրակոց անգամ չէր արձակել Ֆրանսիայի պարտության մատնելու համար: Ֆրանսիայի դեմ պատերազմի և նրա պարտության ամբողջ ծանրությունը կրել էր Գերմանիան, և նրա համար անհասկանալի էին թուրքական նկրտումները:

Գերմանիան չպաշտպանեց Թուրքիայի հավակնությունները Սիրիան գրավելու հարցում և թուրքական կառավարությանը չհաջողվեց իրականացնել իր զավթողական ծրագրերը: Այդուհանդերձ, այդ ծրագրերի ձախողման գլխավոր պատճառը հանդիսացան անգլիական և "ազատֆրանսիական" զորքերի հարձակողական գործողությունները, որոնք սկսվեցին 1941թ. հուլիս 8-ին և հաջողությամբ ավարտվեցին մեկ ամսվա ընթացքում: Նրանք Սիրիայից և Լիբանանից դուրս մղեցին վիշիական զորքերին: "Ազատ Ֆրանսիան" գեներալ Դը Գոլլի գլխավորությամբ իր հսկողությունը սահմանեց Սիրիայի և Լիբանանի վրա:

Ստեղծվեց ռազմաքաղաքական նոր իրադրություն, երբ Գերմանիան և Թուրքիան այլևս անելիք չունեին Լևանտի երկրներում:

Այսպիսի վախճան ունեցավ արաբական երկրների տարածքներից ինչ-որ բան պահելու Թուրքիայի երկարող խոշոր փորձը:

Սակայն չպետք է կարծել, թե դրանով ավարտվեցին Թուրքիայի սպառնալիքները արաբական երկրներին. առաջին հերթին Սիրիային և Իրաքին: Թուրքիան ռազմական գործողություններ սանձազերծելու սպառնալիքներով անցյալ դարի երկրորդ կեսին փորձել է զանազան առիթներով ճնշում գործադրել կամ միջամտել Սիրիայի և Իրաքի ներքին գործերին: Հիշենք յեկուզ թուրքական զորքերի հաճախակի ներխուժումները Հյուսիսային Իրաք վերջին 15 տարիների ընթացքում՝ քրդական շարժումները ճնշելու պատրվակով և այլն:

Թուրքիան դիմելով նման քայլերի, արաբական երկրների տարածքներից ինչ-որ բան վախցնելու իր ցանկություններն փորձում է ներդաշնակել տարածաշրջանային գերտերության դեր կատարելու իր քաղաքական շատ հեռուն գնացող նպատակների հետ, որը մեծ սպառնալիք է ներկայացնում ոչ միայն արաբներին, այլև անդրկովկասյան-մերձավորարևելյան աշխարհաքաղաքական տարածաշրջանի բոլոր երկրներին և ժողովուրդներին:

NIKOLAY HOVHANNISYAN

ON THE TERRITORIAL CLAIMS OF TURKEY TOWARDS ARAB COUNTRIES IN THE NEWEST PERIOD

The Arab-Turkish relations are one of the complicated fields of the Middle Eastern geopolitical realities of the newst period. It has its reasons-historical, political, including geopolitical, economic, religious, etc.

The Arab countries were more than 400 years under the Ottoman domination. Despite the crush of the Ottoman Empire in 1918, the new Turk leaders, coming to power under the head of Mustafa Kemal, did not give up the idea of restauration of their domination over Arab countries, in particular on Syria and Iraq. This policy of Kemalists represented great danger to the independence of Arabs and became a permanent source of strained relations between Arab countries and Turkey.

The author elucidates in this article three main attempts of Turkey in 1919-1920, 1921-1926 and 1941 to occupy Syria and Iraq and to incorporate them in Turkey. He studies this problem in the context of international relations, taking into account not only the position of Arabs, but also the Great Britain, France, the United States of America and Germany.

The Turkish policy pursuing the occupation of some Arab territories had been failed. The Arab countries and peoples rejected all attempts of Turkey again to put them under the Turkish yoke.

ՃԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Մանրամասն տես՝ Հովհաննիսյան Ն.. Արաբական երկրների պատմություն, հ. II. Արաբական երկրները օսմանյան տիրապետության ներքո. 1516-1918թթ., Երևան, 2004թ.
2. Documents on British Foreign Policy. 1919-1939. First Serics, vol. IV, London, 1952, p. 478.
3. Նույն տեղում:
4. Նույն տեղում:
5. Նույն տեղում:
6. Նույն տեղում, էջ 568:
7. Նույն տեղում, էջ 553:
8. Նույն տեղում:
9. Оганесян Н.О. Национально-освободительное движение в Ираке (1917-1958гг.), Ереван, 1976, с. 180.
10. Աբդ ալ-Ռազակ ալ-Հասանի. Թարիխ ալ-Իրաքի աս-սիյասի ալ-հադիս: Հ. 2, Սայդա, 1957, էջ 32 (արաբերեն):
11. Rossi P. L'Irak des revoltes, Paris. 1962, p. 102.
12. Ключников Ю., Сабанин А., Международная политика новейшего времени в договорах, нотах и декларациях. Ч. 3, вып. 2, Москва, 1926, с. 34.
13. Edmonds C. Kurds, Turks and Arabs. London, 1957, p. 144.
14. Longrigg S. Iraq. 1900-1950, London, 1956, p. 244; Edmonds C. Kurds. Turks and Arabs, p. 144.
15. Edmonds C. Kurds, Turks and Arabs, p. 245.
16. Նույն տեղում, էջ 314:
17. Оганесян Н., указ.соч., с. 203.
18. Ключников Ю., Сабанин А., указ.соч., с. 310.
19. The Ambassador in Turkey to the Foreign Ministry. 3.VI.1941 – Documents on German Foreign Policy (DGFP). 1918-1945. Series D. (1937-1945). vol. XII, London, 1962, p. 953.
20. См. Оганесян Н. Политика империалистических держав на Арабском Востоке в годы Второй мировой войны (1939-1945гг.), Ереван, 1980.
21. DGFP. Serics D. vol. XIII, London, 1954, p. 82.
22. Նույն տեղում:
23. Նույն տեղում, էջ 83:
24. The Ambassador in Turkey to the Foreign Ministry. 9.VII.1941- DGFP. 1918-1945. Series D. vol. XIII, p. 106.
25. The Foreign Ministry to the Embassy in Turkey. 12.VII.1941, DGFP, 1918-1945. Series D. vol. XIII, p. 123.
26. Նույն տեղում:

ԳԵՎՈՐԳ ՂԱՐԻԲՋԱՆՅԱՆ

ՍԻՐԻԱՅՈՒՄ ՈՒՂՂԻՉ ՇԱՐԺՄԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (1970-ական թթ.)

1970թ. նոյեմբերին Սիրիայում Հաֆեզ ալ-Ասադի ղեկավարած ուղղիչ շարժումն էապես փոփոխության ենթարկեց ոչ միայն պետության ներքին և արտաքին, այլ նաև սոցիալ-տնտեսական քաղաքականության հիմնական ուղղությունները: Ուղղիչ շարժման հիմնական նպատակն, ըստ էության, վերադարձն էր Արաբական վերածննդի սոցիալիստական կուսակցության (ԱՎՍԿ կամ Բաաս) հիմնարար սկզբունքներին և գաղափարախոսությանը, որից, ըստ Հաֆեզ ալ-Ասադի, շեղվել էր նախորդ ձախբասական վարչակարգը: Հոդվածի նպատակն է ներկայացնել երկրի սոցիալ-տնտեսական քաղաքականության վերաբերյալ նոր իշխանության մոտեցումներն ու գլխավոր ուղղությունները:

Ստանձնելով Սիրիայի ղեկավարությունը՝ Հաֆեզ ալ-Ասադը սկզբնական շրջանում հատկապես մեծ ուշադրություն էր դարձնում երկրի տնտեսությանը՝ համոզված լինելով, որ առանց տնտեսության զարգացման և երկրի սոցիալ-տնտեսական իրավիճակի բարելավման անհնարին կլիներ որևէ հաջողություն ակնկալել քաղաքական ասպարեզում, հատկապես իշխանության եկած նոր վարչակարգի ամրապնդման և ժողովրդի կողմից նրա հանդեպ վստահության մթնոլորտի ստեղծման առումով: Ասադը մտադիր էր իրականացնել տնտեսության ազատականացմանն ուղղված ծրագրեր: Նոր իշխանությունը նախապատվություն էր տալիս ինչպես պետական, այնպես էլ մասնավոր սեկտորի գոյությանն ու պետության համար շահավետ նրանց մրցակցությանը, որի մասին նշված էր դեռ 1965թ. Բաաս կուսակցության համագումարում ընդունված ծրագրում[1]: Մասնավոր սեկտորը նախատեսված էր խթանել հատկապես թեթև և սննդի արդյունաբերության, ինչպես նաև ծառայությունների և սպասարկման ոլորտում: Ասադի օրոք Սիրիայի արտգործնախարար Խաարդամը դեռ 1969թ. նախորդ ձախբասական վարչակարգի օրոք նշանակվելով տնտեսության և առևտրի նախարար՝ որոշա-

այսպիսի ճաբելական և գյուղատնտեսական սայքավոյումներ ներմուծել արտասահմանից[11]: Սիրիայում արագ տեմպերով զարգանում էր նաև ծառայությունների և սպասարկման ոլորտը, որը դարձավ Ասադի վարչակարգի սոցիալ-տնտեսական քաղաքականության կարևոր բաղկացուցիչներից մեկը[12]:

Սիրիայում մասնավոր կապիտալի օգտագործումը և մասնավոր սեկտորի խրախուսումը նպատակ ուներ պետական սուղ միջոցները ուղղել ռազմավարական կարևոր խնդիրներ լուծելու համար, որոնցից էին երկրի պաշտպանունակության ամրապնդումը, բանակի թվաքանակի մեծացումը, նրա սպառազինումը ժամանակակից զենքի բոլոր տեսակներով և այլն: Կառավարության կարծիքով մասնավոր կապիտալի ներգրավումը պետք է փոքրացներ ճնշումը բյուջեի վրա և միջոցներ ազատեր մի շարք կարևոր ծրագրերի իրականացման համար[13]: Սիրիական կառավարությունն արաբական նավթարտյունահանող երկրներին առաջարկում էր ներդրումներ կատարել երկրի տնտեսության մեջ, խոստանում էր պաշտպանել նրանց օտարերկրյա ներդրողների հետ մրցակցությունում՝ ազգայնացման դեմ երաշխավորություններ տալով: Այս քաղաքականության հետևանքով արագորեն աճում էին կարճ ժամանակամիջոցում շահույթ ապահովող մասնավոր ձեռնարկությունները, իսկ շինարարությունն այնպիսի թափերով էր կատարվում, որ նկատվում էր շինարարական նյութերի պակաս[14]:

1971թ. կառավարության թիվ 50 որոշմամբ Սիրիան միացավ ներդրումների ապահովագրման (երաշխավորման) արաբական կազմակերպությանը և վավերացրեց միջարաբական ներդրումների օժանդակման ու նրանց պաշտպանության համաձայնագիրը[15]: Համաձայնագրի 2-րդ հոդվածը նախատեսում էր, որ կազմակերպության նպատակն է նաև արաբական ներդնողին երաշխավորել ամբողջական կամ մասնակի փոխհատուցում այն կորուստների դեպքում, որոնք՝կապված են ոչ կոմերցիոն ռիսկերի հետ, այսինքն որոնք կարող են ի հայտ գալ իշխանության կողմից որոշ միջոցառումների իրականացման դեպքում, որոնցից են օրինական քոնագրավումը, ազգայնացումը, կալանքը, ինչպես նաև տվյալ երկրի ներսում տարադրամի հաշվարկային փոխարժեքների խիստ տատանումների, ինֆլյացիայի ժամանակ առաջացած խնդիրները, ռազմական գործողությունների, ինչպես նաև քաղաքացիական հուզումների, հեղափոխությունների, հեղաշրջումների հետևանքով առաջացած սպառնալիքները և այլն[16]: Այս նախաձեռնությամբ Հաֆեզ ալ-Ասադը բացի տնտեսական նպատակներից բարելավում էր նաև նախորդ տարիներին անկում ապրած քաղաքական հարաբերությունները արաբական միապետական երկրների հետ: Սիրիայում անկախությունից ի վեր ընդունվել էին ներդրումների խրախուսմանն ուղղված բազմաթիվ օրենքներ, սակայն նրանք ի վիճակի չեղան ներգրավել ոՃչ տեղական, ոՃչ օտար կա-

պիտայ[17]: Այս պաստճառր գրեթե մշտական անկայուն ներքաղաքական իրադրությունն էր երկրում, հաճախակի ռազմական հեղաշրջումները, միջպետական յարված հարաբերությունները հարևանների հետ, ինչպես նաև այդ օրենքների կողմից ընծեռնված ոչ բավարար երաշխիքներն ու այն հանգամանքը, որ ներդնողներին վախեցնում էին 1963թ.-ի մարտի 8-ից ի վեր սոցիալիստական վերափոխումների լույսի ներքո Սիրիայում իրականացվող ազգայնացման քաղաքականությունը: Սիրիական ղեկավարության նոր տնտեսական քաղաքականությունը հնարավորություններ ստեղծեց ներդրումների համար նաև արևմտյան, մասնավորապես եվրոպական պետությունների կողմից: Եթե նախկինում այնմտյան ընկերությունները հետաքրքրվում էին ողղակի ներդրումներով միայն նավթարդյունահանման ոլորտում. ապա քարեփոխումներից հետո ներդրումների դաշտը բավական ընդլայնվեց: Սակայն այս կապակցությամբ հարկ է նշել, որ ազգային տնտեսությունում արտասահմանյան կապիտալի դերի հարցը սուր քանավեճի խնդիր էր նույնիսկ նոր ղեկավարության ներսում: Բանն այն էր. որ դեռ 1964թ. Սիրիան «երրորդ աշխարհի» երկրներից առաջիններից մեկն էր, որ որոշում ընդունեց ընդերքի շահագործման համար օտար կապիտալի մասնակցության սրգելման մասին: Բացառության կարգով իշխանությունը թույլ էր տալիս ներդրումներ կատարել այն ընկերություններին. որոնք զբաղվում էին նավթաարդյունահանող գործունեությամբ[18]: 1974թ.-ից Սիրիան նեյգլավեց արտասահմանյան ընկերություններին երկրում նավթաարդյունահանման գործունեություն ծավալելու համար: Այդ նպատակով երկրի մի շարք շրջաններ հայտարարվեցին բաց՝ նավթի հետախուզական աշխատանքներ իրականացնելու համար[19]: Սակայն, միայն 1977թ. կառավարության թիվ 33 որոշմամբ ձևակերպվեցին այն պայմանավորվածությունները, որոնք ձեռք էին բերվել Սիրիայի և ԱՄՆ-ի միջև ներդրումային գործունեության վերաբերյալ: Այդ համաձայնության դրույթները տարածվում էին միայն սիրիական կառավարության հետ համաձայնեցված ներդրումների և ծրագրերի վրա[20]: Նմանատիպ պայմանավորվածություններ գոյություն ունեին նաև արևմտաեվրոպական պետությունների հետ: 1977թ. հիմնադրվեց «SAMOCO» սիրիա-ամերիկյան կոնսորցիումը, համաձայնագիր կնքվեց մասնավորապես ամերիկյան «Tripco and Marathon» ընկերության, ինչպես նաև ֆրանսիական, կանադական, ռումինական ընկերությունների հետ[21]: Այս քայլերից կարելի է հետևություն անել, որ Ասադի տնտեսական ծրագրերն առավել պրագմատիկ էին համեմատած նախկին իշխանության հետ և տնտեսական առումով հիմնավորված: Հատկանշական է, որ քննադատելով իր նախորդներին ՍԱԿ-ի կողմից հատկացվող օգնությունը ստանալ հրաժարվելու մեջ այն պատճառով, որ դրա մեջ կար նաև ԱՄՆ չափաբաժինը՝ Ասադն ընդգծում էր, որ օրինակ Բուլղարիան ստացել է այդ օգնութ-

Ասադի տնտեսական քաղաքականությունը շուտով տվեց իր դրական արդյունքները: Սիրիայում համախառն արդյունաբերական այտաղյանքի ծավալը 1960-ական թթ.-ի համեմատությամբ էականորեն ավելացավ: Կառավարության կողմից անցկացվող տնտեսության ազատականացման քաղաքականության հետևանքով 1973թ. արդեն գոյություն ուներ 504 մասնավոր արդյունաբերական ձեռնարկություն: Սիրիայի տնտեսական իրադրության մասին կարելի է պատկերացում կազմել երկրի տարաորդամային պահուստների աճի տվյալներով. 1970թ. դյանք կազմում էին 55 մլն. դոլար. 1971թ.՝ 88 մլն. դոլար. 1972թ.՝ 135 մլն. դոլար. 1973թ.՝ 481 մլն. դոլար. 1974թ.՝ 835 մլն. դոլար. 1975թ.՝ 1240 մլն. դոլար[26]: Այս ցուցանիշները ուղղակիորեն կապված էին նավթի համաշխարհային գների կտրուկ աճի, ինչպես նաև Սիրիայում նավթաարդյունահանող արդյունաբերության զարգացման և նավթի արտահանման ծավալների մեծացման հետ: 1970-ական թթ. սկզբից Սիրիան մեծ ուշադրություն էր դարձնում հատկապես նավթի արդյունահանմանը և նոր հանքավայրերի շահագործմանը: Չնայած 1960-ական թթ. վերջից սկսվել էր Կարաջուկի, Ռումեյլանի և Սուեյդայի հանքավայրերի շահագործումը, այնուամենայնիվ նավթի մեծ մասշտաբներով արդյունահանումը սկսվեց 1971թ.-ից: ԽՍՀՄ օգնությամբ հիմնադրվեց երկրի տնտեսության մեջ նոր ճյուղ՝ նավթավերամշակող արդյունաբերությունը, որը դարձավ ազգային եկամտի գլխավոր աղբյուրներից մեկը[27]: Արժանի է հիշատակման, որ Սիրիայում նավթի երկրաբանական հետազոտման և արդյունահանման աշխատանքները նախկինում տարվում էին արևմտյան ընկերությունների, իսկ 1956թ. սեպտեմբերից՝ հիմնականում արևմտյերմանական «Հոնքորդյուս» ընկերության կողմից. որը ստացել էր 49 տեղանքի կոնցեսիա երկրի հյուսիս-արևելյան մասում[28], սակայն կապված որոշ խնդիրների հետ այդ ընկերությունները տեղեկություններ էին ներկայացնում երկրում նավթի պաշարների սակավության մասին, որի հետևանքով հետազոտական աշխատանքները դադարեցին: Խորհրդային մասնագետները հերքեցին այդ պնդումները և օգնեցին վերակազմակերպել նավթի արդյունահանումը, որն 70-ական թթ. սկզբներին զգալի ավելացավ[29]: 1970-կան թթ. ընթացքում երկրում նավթաարդյունահանումը կրկնապատկվեց: Եթե 1972թ. արդյունահանվել էր 4 մլն. տ., ապա 1976թ. այն կազմեց 9,6 մլն. տ[30]: Տնտեսության մեջ կարևոր գործոն էր նաև ֆոսֆատի արդյունահանումը, որը սկսվեց 1971թ. տարեկան 20.000 տ. չափով, որը գնալով աճում էր՝ 1975թ. կազմելով 857 հազ., իսկ 1981-ին արդեն 1,461 հազ. տ.[31]:

Իր ավարտին էր մոտենում 1960-ական թթ. վերջից սկսված Խորհրդային Միության օգնությամբ կառուցվող Եփրատի հիդրոէլեկտրակայանի շինարարությունը, որն արդեն 1972թ. ներգործություն ունեցավ արդյունաբերության զարգացման և նոր արտադրական ճյուղերի

րի ստեղծման վրա: Եփրատի հիդրոէներգետիկ հանգույցի շինարարության ավարտից հետո Սիրիային մի քանի տարի հնարավորություն ընձեռնվեց նույնիսկ որոշ քանակով էլեկտրոէներգիա արտահանել հարևան արաբական երկրներ:

Սիրիայի տնտեսության զարգացման վրա չափազանց մեծ ներգործություն ունեցավ նաև 1973թ. պատերազմից հետո արաբական հարուստ պետությունների կողմից Սիրիային հատկացվող ֆինանսական օգնությունը, որը գրեթե անհնար էր նախորդ իշխանության ժամանակաշրջանում: Որպես Իսրայելի հետ անմիջական առճակատումում մեջ գտնվող արաբական երկիր՝ Սիրիային հատկացվող օգնությունը տարբեր մասշտաբներով շարունակվեց մինչև 80-ական թթ. վերջը: 70-ական թթ. արաբական նավթարտահանող պետությունների անհատույց ֆինանսական օգնությունը Սիրիային հնարավորություն ընձեռեց էապես ավելացնել արտադրական ներուժը պետական սեկտորում խոշոր ձեռնարկությունների ստեղծման հաշվին, որոնք նպաստեցին երկրի արդյունաբերական զարգացմանը[32]: Այդուհանդերձ հարկ է փաստել, որ նշված գումարների առյուծի բաժինն ուղղվում էր ռազմական ծախսերին[33], կապված տարածաշրջանում ընդհանուր առմամբ անկայուն իրադրության և սպառնալիքների մեծացման հետ: Հետր է նշել նաև, որ արաբական երկրների կողմից հատկացվող օգնությունը շատ դեպքերում ամբողջ ծավալով չէր կատարվում: Օրինակ 1973թ. հոկտեմբերյան պատերազմի շրջանում արաբական նավթարտադրումնահանող պետություններ պարտավորվեցին Սիրիային հատկացնել 340 մլն. դոլար, սակայն 1973թ. վերջին Սիրիան իրականում ստացավ ընդամենը այդ գումարի 40 տոկոսը[34]:

1976թ. Սիրիայում ազգային տնտեսության զարգացման նպատակով ստեղծվեցին մի շարք ազատ առևտրի գոտիներ: Դրանցից առաջինը ստեղծվեց Տարտուս նավահանգստի շրջանում՝ 300 հեկտար մ/ք տարածքով: Նախատեսվում էր հետագայում արաբական և օտար կապիտալին թույլատրել այդ գոտիներում ստեղծել արդյունաբերական և առևտրային ընկերություններ արտոնյալ պայմաններով[35]: 1975թ. Սիրիայի և Հորդանանի սահմանում ստեղծվել էր սիրիա-հորդանանյան ազատ արդյունաբերական գոտի, որն օգտվում էր զգալի արտոնություններից: Այն գտնվում էր երկու երկրների պետական ձեռնարկությունների գործունեությունը կարգավորող օրենքների և ակտերի իրավասության շրջանակից դուրս՝ ազատված լինելով նաև տարբեր վարչական սահմանափակումներից և հարկերից:

1970-1980թթ. ընթացքում Սիրիայի արտաքին առևտրի շրջանառությունը 553 մլն. դոլարից հասավ 6203,5 մլն. դոլարի, այսինքն՝ ավելացավ մոտ 12 անգամ, սակայն այդ աճը պայմանավորված էր ոչ միայն ֆիզիկական ծավալի, այլ 1973-1974թթ. և 1979-1980թթ. նավթի գների կտրուկ

աճով[39]: Նշված ժամանակաշրջանում աճում էր նաև սիրիացիների կողմից արտասահմանից հայրենիք փոխանցվող գումարների չափը: Եթե 1970թ. այն կազմում էր 7 մլն. դոլար, ապա 1980թ. արդեն՝ 773 մլն. դոլար[40]: 1970թ.-ից սկսած Սիրիան արձանագրում էր կայուն տնտեսական աճ՝ տարեկան միջինը 8,6 տոկոս[41]:

1976թ. մարտի 8-ին ՍԱՀ վարչապետ Մահմուդ ալ-Այուբին, ամփոփելով 1970-1975թթ. Սիրիայի տնտեսական ցուցանիշները, «Բաաս» թերին տված հարցազրույցում նշեց, որ Սիրիայում համախառն ազգային արդյունքի ծավալը 1970թ.-ի համեմատությամբ 1975թ. ավելացել է 65.4 տոկոսով, արժեքային արտահայտությամբ կազմել է 18.5 մլրդ. սիրիական լիրա: Նա նաև նշեց, որ կապիտալ ներդրումների ընդհանուր ծավալը 1970-1975 թթ. ընթացքում ավելացել է 14.4 տոկոսով և 1975թ. կազմել է 5.7 մլրդ. սիրիական լիրա: 1975թ. Սիրիայի արտահանումը կազմել է 3.4 մլրդ. ս.լ.. իսկ ներմուծումը՝ 5.9 մլրդ ս.լ.[39]: Երկրի սննդամթերքի անվտանգությունն ապահովելու նպատակով կառավարությունն ավելացրեց ներդրումները սննդի արդյունաբերության ոլորտում՝ 1971թ.-ին 14 մլն. ս.լ.-ից հասցնելով 187 մլն.-ի 1981թ.[40]:

Հետազոտվող ժամանակաշրջանում Սիրիայի սոցիալ-տնտեսական զարգացումները ուսումնասիրողների կողմից միանշանակորեն չեն բնութագրվում, քանի որ նրանցում առկա էին ինչպես բազմաթիվ դրական, այնպես էլ բացասական երևույթներ: Եթե մինչև 1970թ.-ը Սիրիան գլխավորապես գյուղատնտեսական երկիր էր, ապա 1973թ.-ից գյուղատնտեսությունը զիջեց տնտեսության մեջ իր առաջնային դերն արդյունաբերությանը: Ինչպես արտաքին քաղաքականության ասպարեզում, այնպես էլ տնտեսության մեջ նկատելի էր Ասադի ճկուն և հավասարակշռված քաղաքականությունը, որն առաջին հերթին արտահայտվում էր տնտեսության ւզատականացմամբ, օտարերկրյա ներդրումներով և արտասահմանյան ընկերությունների հետ համագործակցությամբ: Եթե վարչակարգը քաղաքական աջակցությունը և ռազմատեխնիկական մատակարարումները ստանում էր գլխավորապես ԽՍՀՄ կողմից, ապա տնտեսության ոլորտում ակտիվորեն համագործակցում էր նաև արևմտյան պետությունների հետ՝ լայնորեն կիրառելով արևմտյան փորձն ու տեխնոլոգիաները: Մյուս կողմից պետական հատվածի ամրապնդման և գերիշխող դիրքերի պահպանման միջոցով նյութականացվեց նաև բաասական ռազմավարության մեջ արմատավորված սոցիալիստական գաղափարը: Միաժամանակ պետական սեկտորը այն հիմքն էր, որի շնորհիվ ամրապնդվում ու ծաղկում էր բյուրոկրատական բուրժուազիան[41]: Հարկ է նշել նաև, որ Սիրիան հսկայական միջոցներ էր ծախսում պետության պաշտպանության և ազգային անվտանգության ապահովման համար: Միայն Լիբանանում սիրիական զորքերի առկայությունը Սիրիայի համար արժեցնում էր օրական մոտ 250 հազ. ԱՄՆ դոլար[42],

իսկ յատ Մառզի, Լիբանանում Սիրիայի ներկայության մեկ օրն արժեր մեկ մլն. դոլար[43]: Սիրիայում նաև բավական տարածված էր հարկերից խուսափելու երևույթը[44], ինչը սահմանափակում էր մասնավոր սեկտորի ընդլայնմանն ուղղված պետության քաղաքականությունը:

Թեև ուղղիչ շարժումից ի վեր մասնավոր ներդրումների խրախուսմանը միտված պետության միջոցառումներին, այդուհանդերձ 60-ական թթ.-ի կեսերի և վերջի մասսայական ազգայնացման քաղաքականությունն ու միջոցառումների հիշողությունը դեռ թարմ էին ժողովրդի մեջ, և սկզբնական շրջանում գործարարները տարակուսում էին գործունեությունն ծավալել այնպիսի ծրագրերի ուղղությամբ, որոնք ենթադրում էին կապիտալի երկարաժամկետ ներդրման անհրաժեշտություն, քանի որ վարչակարգը շատերի համար մնում էր անկանխատեսելի:

1970թ. նոյեմբերին ուղղիչ շարժման սկզբնավորումից ի վեր տնտեսության զարգացմանը չափազանց մեծ ուշադրություն էր դարձվում, քանի որ այն դիտարկվում էր փսրչակարգի և պետական իշխանության ամրապնդման գործոն: Հաֆեզ ալ-Ասադը վերահայեց երկրի սոցիալ-տնտեսական քաղաքականության հիմնական ուղղությունները: Նոր տնտեսական քաղաքականության, մասնավորապես տնտեսության ազատականացման և ժողովրդի շրջանում իշխանության նկատմամբ վստահության մթնոլորտի ստեղծման շնորհիվ Սիրիայում, համեմատած նախորդ ձախբաւսսական վարչակարգի ժամանակաշրջանի հետ, էականորեն բարելավվեց երկրի սոցիալ-տնտեսական իրավիճակը, սակայն այն չլուծեց երկրի առջև կանգնած բոլոր տնտեսական խնդիրները, որոնք արտահայտվեցին 1970-ական թթ. վերջի և 1980-ականների սկզբների դժվարություններով: Ուսումնասիրվող ժամանակաշրջանում Սիրիայի տնտեսական զարգացմանն ուղղակիորեն նպաստեց մասնավոր հատվածի խթանուման, ինչպես նաև Հաֆեզ ալ-Ասադի արտաքին տնտեսական հավասարակշռված քաղաքականությունը՝ տնտեսական բնականոն հարաբերությունների հաստատումը ոչ միայն բոլոր արաբական երկրների ու ԽՍՀՄ-ի, այլև արևմտյան պետությունների հետ, սակայն գոյություն ունեին նաև որոշ արտաքին բարենպաստ գործոններ, որոնցից կարելի է նշել, օրինակ, արաբական պետությունների և ԽՍՀՄ-կողմից Սիրիային հատկացվող բազմաբնույթ օգնությունը և 1970-ական թթ.-ի սկզբներից նավթի համաշխարհային գների բազմապատիկ աճը:

GEVORG GHARIBJANYAN

SOME PECULARITIES OF SOCIO-ECONOMIC POLICY DURING OF THE CORRECTIVE MOVEMENT IN SYRIA (1970s)

On November 1970 the Corrective Movement of Syria led by Hafiz al-Assad significantly changed not only the internal and foreign affairs of the State, but also the main directions of socio-economic policy.

The Government in particular liberalized the economy, actually created a private sector, achieved a growth of foreign investment and protected the right of private enterprenership. Assad also made some steps towards bringing back the capital that had been transfered from the country in the time of the former left-ba'thist regime. President Assad established harmonic foreign economic relations not only with Arabic countries and Soviet Union but with Western States as well.

ՃԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. ألاقتصادي ألعربي، ١٩٦٥/٤/٨.
2. Иванов С. А., Межарабская политика Сирии, Том 1, Москва, 1986. с. 90.
3. Сирийская Арабская Республика, Москва, 1997, с. 77.
4. Նույն տեղում:
5. Նույն տեղում:
6. А. О. Филоник, В. М. Ахмедов, Сирия (Сирийская Арабская Республика), Рынки Ближнего Востока (Условия внешнеэкономической деятельности) М., 1997, с. 75.
7. Moshe Ma'oz, Asad. The Sphinx of Damascus. A Political Biography. Weidenfeld and Nicolson. London. 1988, p. 76.
8. John F. Devlin, Syria: Modern State in an Ancient land. Boulder, Colorado, 1983, p. 66.
9. حزب ألبعث ألعربي ألإشتراكي. القيادة القومية. مكتب الثقافة والاعداد الحزبي.
المؤتمرات القطرية لحزب ألبعث ألعربي ألإشتراكي فى القطر العربي السوري،ص. ٤١
9. Н. Оганесян, Национализация "Ирак Петролиум компани" и поддержка Арабскими странами Ирака (1972-1973), Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ XYII, Երևան, 1998, с. 27.
10. Moshe Ma'oz, նշվ. աշխ., էջ 75:
11. Kais Firro, The Syrian economy under The Assad Regime, Syria under Assad. Domestic Constraints and and Regional Risks. Edited by Moshe Ma'oz and Avner Yaniv, London, 1987, p. 45.
12. В. М. Ахмедов, Современная Сирия: промышленность, рабочий класс, профсоюзы. Москва. 1991, с. 47.
13. 'The New York Times" 1. 02. 1972.

14. Худа Абу-Табих, Исправительное движение и опыт либерализации сирийской экономики, Арабский сборник: выпуск второй, Москва, 2000, с. 93
15. А. О. Филоник, В. М. Ахмедов, Рынки Ближнего Востока, М., 1997, с. 75.
16. В. А. Исаев, Проблема иностранных и частных инвестиций в сирийской экономике, Ближний Восток и современность. Сборник статей (выпуск шестой), М., 1998, с. 39.
17. هشام متولي ابحاث في الإقتصاد السوري والعربي. دمشق، ١٩٧٤، ص.٧٥.
18. Сирия. Справочник, Москва, 1992, с. 260.
19. А. О. Филоник, В. М. Ахмедов, Рынки Ближнего Востока, М., 1997, с. 81.
20. Kais Firro, նշվ. աշխ., էջ 51:
21. From Asad's speech before the 12th Session of the Ba'th National (pan-Arab) Congress, նստ Moshe Ma'oz. Asad. The Sphinx of Damascus. p. 79-80.
22. John F. Devlin, նշվ. աշխ., էջ 84:
23. Цит. По Арабский мир. Три десятилетия независимого развития. Под редакцией В. А. Исаева, В. В. Наумкина, Москва, 1990, с. 151.
24. А. О. Филоник, Госсектор и бюрократия в Сирии, Арабские страны. Проблемы социльно-экономического и общественно-политического развития, Выпуск второй, Сборник стотей, М., 1995, с. 141.
25. Нефтедоллары и социально-экономическое развитие стран Ближнего и Среднего Востока. Москва, 1979, с. 121.
26. هشام متولي أبحاث في الإقتصاد السوري والعربي دمشق. ١٩٧٤، ص.١٠١.
27. В. П. Викторов, Экономика современной Сирии. (приблемы и перспективы), Москва, 1968, с. 190.
سبرغي تسفكانوف.التعاون بين الإتحاد السوفياتي والبلدان النامية، موسكو. ١٩٨٥ ص.٨٣.
28. Kais Firro, նշվ. աշխ., էջ 52:
29. Huda Hawwa. Linkages and Constraints of the Syrian Economy. State and Society in Syria and Lebanon, edited by Youssef M. Choueiri, University of Exeter Press, 1993, p. 88.
30. А. Филоник, Некоторые итоги эволюции социальной структуры Сирии, Специальный Бюллетень Но 2 (273), М., 1991, с. 16-17.
31. А. О. Филоник, В. М. Ахмедов, Рынки Ближнего Востока, М., 1997, с. 57.
32. Худа Абу-Табих, նշվ. աշխ., էջ 86:
33. Атлас Тасс 24.09.1976 No 39, с. 29.
34. Айюби Сакр, Структура и основные направления внешних экономических связей Сирии (70-е-начало 90-х годов), в сб. Страны Ближнего Востока (актуальные проблемы современности и истории), Москва, 1998, с. 17-18.
35. Նույն տեղում, էջ 22:

36. الحركة التصحيحية المجيدة في الذكرة الخامسة والعشرين، دمشق، ١٩٩٥، ص. ٤١٦.

37. ألبعث، دمشق، ١٩٧٦/٣/٨

38. Kais Firro, նշվ. աշխ., էջ 54:

39. А. О. Филоник, Госсектор и бюрократия в Сирии, с. 139.

40. "International Herald Tribune" 23, August, 1984.

41. Moshe Ma'oz, նշվ. աշխ., էջ 155:

42. Аль-Харири Мухаммад, Налоговое законодательство и практика уклонения от налогов в Египте и Сирии, в сб. Страны Ближнего и Среднего Востока (актуальные проблемы современности и истории), М., 1998, с. 184.

ԲԵՆԻԱՄԻՆ ՄԱԻԼՅԱՆ

ԱԲԽԱԶԻԱՅԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ (1921 – 1931թթ.)

Այսրկովկասում խորհրդային կարգերի հաստատման նախօրեին աբխազ հասարակությունը ազգային բազմակուտակ հարցերի լուծումը տեսնում էր Աբխազիայի կարգավիճակի բարձրացման մեջ: Չնայած բազմաթիվ փորձերին 1918-1920թթ. ինքնիշխանության գաղափարն իրականացնել չէր հաջողվել, որը Աբխազիայի կարգավիճակի շուրջը 1920-ական թվականներին հարուցեց նոր հակամարտություն:

Խորհրդային Ռուսաստանի Կարմիր բանակի ուժերով 1921թ. փետրվար-մարտին տեղի ունեցավ Վրաստանի խորհրդայնացումը: Ինչպես գրում է վրաց պատմաբան Դևի Ստուրուա, «1921թ. փետրվարին Վրաստանի պետականությունը ձևականորեն չէր վերացել, այլ տեղի էր ունեցել հասարակական-քաղաքական կարգերի ուժային փոփոխում, Վրաստանի...բոլշևիզացում: Այս գործընթացների լրջախոհ վերլուծումից ծնվեց «իրական զավթում» տերմինը»[1]:

Կարմիր բանակը, աբխազական «Կիալազ»[2] պարտիզանական ջոկատների հետ համատեղ, 1921թ. փետրվարի 19-ից մինչև մարտի 8-ը գրավեց ամբողջ Աբխազիան: Վրաստանում խորհրդային իշխանության հաստատման նախօրեին, վրաց և աբխազ կոմունիստ առաջնորդները Մոսկվայում նախապես պայմանավորվեցին, որ «Սուխումի կուսակցական կազմակերպությունը պետք է մտնի վրացականի մեջ, իսկ Աբխազիան՝ ինքնավարության սկզբունքով մտնի Վրացական ԽՍՀ կազմ»[3]: Մարտի 6-ին ձևավորվեց Աբխազիայի Հեղկոմի հետևյալ կազմը. Ն.Լակոբա, Ն.Ակիրտավա, Պ.Ագնիաշվիլի: Հեղկոմի նախագահ ընտրվեց Եփրեմ Էշբան, որը 1918թ. գարնանը արդեն գլխավորում էր Սուխումի Հեղկոմը: Քնորոշ է, որ խորհրդայնացման առաջին իսկ օրերից մինչև 1921թ. մարտի վերջերը Հեղկոմի պաշտոնական վաստաթղթերում ոչինչ չի ասված Վրաստանի և Աբխազիայի հարաբերությունների վերաբերյալ: Քավարարվում էին ընդհանուր կարգախոսներով, ինչպես՝ «Կեցցե եղբայրական միությունը Վրաստանի և Աբխազիայի աշխատավորների

միջև»[4]: Մոսկվայում ունենալով նախնական պայմանավորվածությունների. Վրացիեղկոմի անդամները համոզված էին, որ Վրաստանի ամբողջականության սպառնալիք չկա և կոչ հրապարակեցին, թե «Աջարիայի. Աբխազիայի և Հարավային Օսիայի եղբայր ժողովուրդները ինքնուրույն են որոշում իրենց ճակատագիրը»[5]: Կարգախոսային բնույթ է կրում Վրացիեղկոմի դիմումը Աբխազիայի Հեղկոմին, որտեղ մասնավորապես ասված է, «որ բոլոր փոքր ժողովուրդները հնարավորություն են ստանում ապրելու ըստ իրենց բնորոշ առանձնահատկությունների»[6]: Դիմումի մեջ Աբխազիայի և Վրաստանի հարաբերությունների վերաբերյալ որևէ առաջարկությունների բացակայությունը վկայում է քանակցությունների անդրկուլիսյան բնույթի մասին: Միաժամանակ Վրացիեղկոմի մարտի 8-ի «Վրաստանի ԽՍՀ կառավարման համակարգի մասին» որոշման մեջ ասված է, որ «Նահանգային հեղկոմները պետք է լինեն երեքը. Թիֆլիսի. Քութայիսի. Բաթումի և մեկ շրջանային՝ Սուխումի կամ Աբխազիայի»[7]: Սակայն հետագա իրադարձությունները զարգացան ոչ նախնական ծրագրի համաձայն:

1921թ. մարտի կառաջին կեսին տեղի ունեցավ Աբխազիայի պատասխանատու աշխատողների երկու խորհրդակցություն, որտեղ որոշվեց հռչակել Աբխազիայի ինքնուրույն հանրապետություն, իսկ կուսակցական կազմակերպությունը կոչել Աբխազիայի Կոմունիստական կուսակցություն[8]: Մարտի 26-ին Աբխազիայի Հեղկոմի անդամները Լենինին և Ստալինին հեռագիր հղեցին, որտեղ դնում էին Աբխազիայի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության հռչակման և այն ՌՍՖՍՀ-ի կազմում ընգրկելու հարցը: Որոշումը հիմնավորվում էր «իր ճակատագրի անմիջականորեն Խորհրդային Ռուսաստանի հետ կապելու» աբխազ ժողովրդի զանգվածային ցանկությամբ և «Աբխազիայի ինքնուրույնության հռչակումով Կարմիր բանակի պայքարի ազատագրական բնույթը ամրապնդելու ձգտումով՝ ինչպես Աբխազիայի աշխատավոր զանգվածների գիտակցության, այնպես էլ արտասահմանի հասարակական կարծիքի մեջ»[9]: Այս դիմումը դարձավ աբխազ բոլշևիկների նախորդ հակամենշևիկյան քարոզչության տրամաբանական հետևանք, որի հիմնական դրույթներից էր Խորհրդային Ռուսաստանին միավորվելու անհրաժեշտությունը, ինչը նշանակում էր նաև խորհրդային կարգերի հաստատում:

Խորհրդայնացումից հետո վերադառնալով վտարանդիությունից, Ն.Էշբան ստիպված էր այս տրամադրությունները նկատի առնել: «...Կարծում էինք, - գրում էր նա, - որ Աբխազիան գոյություն կունենա որպես Խորհրդային Վրաստանի անբաժանելի մասը, սակայն երբ մենք այստեղ եկանք և պարզեցինք, թե ինչպիսի մթնոլորտ ենք ընկել, մենք ստիպված էինք ընդունել Աբխազիայի անկախության տարբերակը» և «...մենք միաձայն կանգ առանք այն բանի վրա, որ ազգային պառակտության վերացման համար անհրաժեշտ է, թեպետ և ժամանակավոր՝

մանք (Մ.Գ. Դափրինդաշվիլի, Գ.Գ.Գեորգաձե և այլք), «Մարտի 29-ի Ռաթումի խորհրդակցությունը փաստացի ստիպված էր ճանաչել Խորհրդային Աբխազիայի անկախությունը հանգամանքների ճնշման ներքո»[15]: Այս առիթով կարևոր վկայություն է թողել Նեստոր Լակոբան, Վրաստանի կոմկուսի 4-րդ համագումարի ամբիոնից վերհիշելով այդ դեպքերը. «Աբխազիայի անկախության հարցը ծագում է 1921թ. և խորհրդայնացումից անմիջապես հետո առաջ է քաշվում իմ և ընկ. Էշբայի կողմից: Ռաթումում մենք, ընկ. ընկ. Մերգոն (Գ.Կ.Օրջոնիկիձեն կուսակցական կեղծանունը – հեղ.) և Էլիավան ապացուցում էինք, որ նման անկախությունը ներկա պահին անհրաժեշտ է Աբխազիայում իրական Խորհրդային իշխանություն ստեղծելու նպատակով, սակայն անհրաժեշտ է որպես ցուցանակ»[16]: Ուրեմն Աբխազիայի ներկայացուցիչների հիմնական փաստարկն այն էր, որ Վրաստանից անկախության ճանաչումն համբավ կբերի նոր իշխանություններին աբխազ ժողովրդի շրջանակներում: 1921թ. կոմունիստական առաջնորդները հմուտ կերպով օգտագործեցին «աբխազական խաղաքարտը»: Ստալինը, որպես կովկասյան գործերի պատասխանատու և ազգությունների ժողկոմ, թույլատրեց Աբխազիայի «անկախության» հռչակումը՝ դրանով շահելով աբխազների համակրանքը: Եթե 1918թ. աբխազները մերժում էին Խորհրդային իշխանությունը, ապա 1921թ. բոլշևիկների ձեռքից ստանալով «անկախություն»՝ աբխազների մեծամասնության համար նոր իշխանության և անկախության պաշտպանումը ընկալվեց հավասարազոր: Համապատասխանորեն խորհրդային կարգերի հակառակորդները ընկալվում էին որպես աբխազ ժողովրդի թշնամիներ, ինչը արտահայտվեց նաև Վրաստանում 1924թ. հակաբոլշևիկյան ապստամբության ճնշմանը աբխազների գործուն մասնակցությամբ: Ոչ լիարժեք անկախության հռչակումով բոլշևիկները ցանկություն ունեին ստեղծել ավելի լայն իրավունքների տրամադրման պատրանք, քան Աբխազիան ուներ ժողովրդավարական Վրաստանի կազմում 1918-1921թթ. սկիզբին: Այսպիսով Խորհրդային Ռուսաստանը աբխազների պատկերացմամբ դարձավ ազատություն և անկախություն արտոնող երկիր, իսկ Վրաստանը ընկալվում էր որպես Աբխազիայի անկախության հակառակորդ:

«Անկախության» հռչակումը բացատրվում էր նաև խորհրդային իշխանության արտաքին քաղաքական նպատակներով: Պարտություն կրելով պատերազմում Լեհաստանի դեմ, ինչը նշանակում էր «համաշխարհային պրոլետարական հեղափոխության» ծրագրերի ձախողում Արևմուտքում, Խորհրդային Ռուսաստանի առաջնորդները հայացքն ուղղեցին դեպի Արևելք, միաժամանակ նպատակ ունենալով տեղի ժողովուրդներին համոզել, թե ինչպես է խորհրդային իշխանությունը հոգում վաքրաթիվ ժողովուրդների կարիքները: Այդ փուլում Լենինը պարբերաբար հիշեցնում էր, որ «...լավ է ազգային փոքրամասնությունների

ժամանակավոր հայտարարել Խորհրդային Աբխազիայի անկախությունը»[25]:

Վլադիկավկազի հռչակագիրը ընթերցվեց Ս. Քավթարաձեի կողմից մայիսի 28-ին Աբխազիայի աշխատավորների 1-ն համագումարում, որը և ընդունվեց մեծ ոգևորությամբ: Պատասխան ելույթում Ն.Էշբան բոլոր հիմքերն ուներ նոյն իշխանության վատաբանման համար ասելով. «Ամիսներով թալանածում էին Թիֆլիսում շինծու ինքնավարության մասին, սակայն և նույնիսկ սնամեջ ինքնավարության գրանք (խոսքը ներկայացուցչական մարմնի՝ Աբխազիայի Ժողովրդական Խորհուրդի մասին է-հեղ.) չէին կարող հասնել (մենշևիկների կառավարությունից-հեղ.)...եկան բոլշևիկներ և պստիկ Աբխազիան ունի իրական անկախություն»[26]: Այս առիթով 1921թ. օգոստոսի 12-ին կայացած Կովկասյան երկրամասային կոմսխորհրդակցության ժամանակ Գ.Օրջոնիկիձեն նշեց. «Երբ Աբխազիան պահանջեց անկախություն, մենք մատնանշեցինք Աբխազիայի կոմունիստներին, որ նման վտքր պետության անկախությունն անհնար է, սակայն ի վերջո մենք համաձայնվեցինք: Մենք ասացինք. երբ աբխազ ժողովուրդը վրացիների նկատմամբ անվստահություն է տածում...քող Աբխազիան լինի անկախ, քող նա բուժի մենշևիկների հասցրած վերքերը, սակայն հետագայում աբխազներն իրենք կհամոզվեն խորհրդային հարևան Վրաստանի հետ սերտ միավորման անհրաժեշտության մեջ»[27]:

Աբխազիայի նոր իշխանավորները համտեսեցին իշխանության «հաճույքը», որը Ն.Լակոբան այսպես է նկարագրում. «Մենք սկզբից քաշվում էինք կոչել մեզ հանրապետության «նախագահներ», ժողկոմներ և այլն, սակայն անցնում է մեկ, երկու, երեք օր և ամաչկոտությունը վերանում է,...»[28]: Այս նյութերանգը նկատել էին ժամանակակիցները և այն արտահայտել վրացական «Սոցիալիստ-ֆեդերալիստ» թերթի էջերում տեղ գտած «Աբխազիայի հարցը» հոդվածում. «Այժմ ստեղծվել է հարմար պահ արվարձաններում արտոնյալ մաղդկանց համար: Մինչ Խորհրդային Վրաստանը զբաղված է ներքին կառուցապատմամբ, իրենք...ստեղծում են այնտեղ հանրապետություններ, քանի որ այժմ իշխանիկությունների մոդային չեն...»[29]: Կարճ ժամանակ հետո՝ 1921թ. հուլիսի 5-ին Ստալինի մասնակցությամբ գումարված ՌԿ(բ)Կ Կովբյուրոյի պլենումում կայացվեց «ինքնավար հանրապետության ծևով Աբխազիայի և Վրաստանի միավորման ուղղությամբ կուսակցական աշխատանք ծավալելու մասին»[30] որոշում: Կովբյուրոյի ճնշման ներքո, հուլիսի 22-ին, Աբխազիայի ղեկավարությունը Քաթումում հրավիրեց Հեղկոմի և Աբխազիայի ՌԿ(բ)Կ Կազմբյուրոյի միացյալ նիստ, որին ներկա էր Կովբյուրոյի քարտուղար Հ.Նազարեթյանը: Քացատրական ելույթում նա պարզաբանեց, որ անկախության և ինքնավարության հարցերը կիրառական լուծման պարագայում որևէ սկզբունքային հակասություններ չունեն[31]:

Եվ իրոք՝ երբ իշխանությունը խստագույնս կենտրոնացվել էր կուսակցության ձեռքում՝ ինքնավարություն, թե խորհրդային «անկախություն» հասկացություններն այլևս կրում էին պայմանական բնույթ: Գտնվեց նաև մեծ ոգևորությամբ հռչակված «անկախությունն» ի չիք դարձնելու «տնտեսական հիմնավորում», որը և ներկայացվեց Աբխազիայի պատասխանատու աշխատակիցների՝ հուլիսի 23-ին հրավիրված խորհրդակցությանը: Ընդգծվեց, որ «խորհրդակցությունը Վրացհեղկոմի հռչակագիրը այսուհետև համարում է աբխազ ժողովրդին առավելագույն ինքնավար իրավունքներ լիովին երաշխավորող», որի «վիակատար անկախությունը... անիրականանալի է, քանի որ ոչ մի վոքրիկ խորհրդային հանրապետություն չի կարող գոյատևել անկախ»[32]: Հույս հայտնվեց, որ Աբխազիայի Խորհուրդների առաջիկա համագումարը իր համերաշխությունը կհայտնի Վրացհեղկոմի հռչակագրի սկզբունքներին՝ Վրաստանի հետ դաշնության և տնտեսական միասնականության հիմքերի վրա:

Վերադաս կուսակցական մարմիններն իրականում հաշվի չէին նստում Աբխազիայի անկախ կարգավիճակի հետ: 1921թ. հուլիսին կայացած Կովբյուրոյի պլենումը անհրաժեշտ գտավ. «...ճանաչել կովկասյան հանրապետությունների (Վրաստան, Ադրբեջան, Հայաստան) անկախության իրականացումը, պահպանելով գոյություն ունեցող լիակատար կուսակցական հարաբերություններն այդ երկրների կոմկուսի կենտկոմների և ՌԿԿ ԿԿ-ի միջև...»[33]: Այս ատյանի նիստերին, Աբխազիայի, Դաղստանի և Լեռնային հանրապետության ներկայացուցիչները, ի տարբերություն երեք Այսրկովկասյան հանրապետությունների, մասնակցում էին խորհրդակցական ձայնի իրավունքով[34]: 1921թ. օգոստոսի 16-ին ստեղծված «Անդրկովկասի տնտեսական բյուրոյում» Աբխազիան, որպես առանձին միավոր, նույնպես չէր ներկայացված[35]: Այս լրվածքը հաստատում է Ստալինը 1921թ. սեպտեմբերի 1-ին ՀԿԳԿ - քարտուղար Ա. Ենուկիձեին գրած նամակում, «Աբխազիան հանդիսանում է անկախ Վրաստանի ինքնավար մաս, որի համար էլ ՌՍՖՍՀ-ում ինքնուրույն ներկայացուցիչներ չունի և պարտադիր չէ ունենա»[36]:

1921թ. հոկտեմբերի 15-ի Աբխազիայի Կազմբյուրոյի պլենումի և Հեղկոմի ընդլայնված համատեղ նիստում որոշվեց ձևակերպել Վրաստանի և Աբխազիայի կապը պաշտոնական պայմանագրով, որպես երկու միութենական հավասար հանրապետությունների[37]: Այսպիսով Աբխազիայի կոմունիստները ինքնուրույն փոխեցին վերադաս Կովբյուրոյի որոշումը «ինքնավարացման» մասին: Այս անհնազանդության դրդապատճառները պարզ են դարձնում Աբխազիայի ղեկավար գործիչների գալուստը՝ անդամակցել Կովդաշնությանը, շրջանցելով Վրաստանը[38]: 1921թ. նոյեմբերի 14-ով թվագրված նամակում Ե.Էշբան դիմում է Կովկասյան բյուրո, խնդրելով հավանություն տալ Աբխազիայի անդամակցությանը

Կովկասյան Դաշնության որպես չորրորդ հանրապետության[39]: Այդ գաղափարին կողմնակից էր նաև Ն.Լակոբան, ինչը նա խոստովանեց 1925թ. դեկտեմբերի 25-ին Վրաստանի կոմկուսի 4-րդ համագումարի ամբիոնից[40]: 1921թ. նոյեմբերի 1-ին վրաց-աբխազական հարաբերությունները քննարկվեցին Կովկասյան բյուրոյի նախագահության նիստում և որոշվեց 10 օրվա ժամկետում կազմել երկկողմ պայմանագրի նախագիծ: Այդ նպատակով ստեղծվեց հանձնաժողով՝ Բ.Լեգրանի նախագահությամբ: Ռևանի որ աբխազական դեկավարությունը պնդում էր Կովդաշնության առանձին անդամակցելու հարցը, հանձնաժողովի գործունեությունը անարդյունք եղավ և նոյեմբերի 16-ին Կովկասյան բյուրոն կայացրեց պարտադրող որոշում. 1. Անկախ Աբխազիայի գոյությունը համարել աննպատակահարմար; 2. Առաջարկել ընկ. Էշբային ներկայացնել իր վերջնական եզրակացությունը Վրաստանի դաշնության կազմում՝ պայմանագրային հիմունքներով Աբխազիայի ընդգրկման մասին, կամ ՌՍՖՍՀ-ում՝ ինքնավար մարզի սկզբունքներով[41]: Առաջին հայացքից այս որոշումն նկատի էր առնում Խորհրդային Ռուսաստանին անդամակցելու աբխազ կոմունիստների սկզբնական ցանկությունը: Սակայն, երբ Աբխազիան արդեն հռչակվել էր անկախ, այդ առաջարկը նախատեսում էր իր կարգավիճակի էական իջեցում և այստեղ առկա էր ընթացիկ հոգեբանական հաշվարկ: ՌՍՖՍՀ-ի կազմում Աբխազիան ստանում էր երկու աստիճան ցածր կարգավիճակ, քան Վրաստանի դաշնությունում: Իրական ընտրության բացակայության մասին է վկայում Աբխազիայի Կազմբյուրոն Վրաստանի Կ(բ)Կ Կենտկոմին կազմակերպչական առումով ենթարկելու մասին Կովկասյան բյուրոյի նոյեմբերի 24-ի որոշման վաստը[42]:

1918-1921թթ. վրաց հասարակական կարծիքը ընտելացավ Աբխազիան Վրաստանի անբաժանելի մասը համարելու մտքին: «Անկախ Աբխազիան, որի բնակչության մեծ մասը կազմում են վրացիները՝ անընդունելի է և ստեղծված է լիովին այլ նպատակներով, որին տեղաբնիկ վրացիները երբեք չեն ընտելանա: Սակայն մինչև այս հարցի վերջնական լուծումը անհրաժեշտ է, որ Վրաստանի Հեղկոմը...նշանակի Աբխազիայում Ներկայացուցիչ, որը կպահպանի...վրացիների շահերը»[43], - գրում էր վրացական մամուլը: Վրաց կոմունիստները չէին կարող հաշվի չառնել այս տեսակետները, առավել ևս իրենցից ոմանք տոգորված էին այդ տրամադրություններով: Քանի որ Աբխազիան արդեն հայտարարված էր անկախ հանրապետություն, Վրաստանի «տարածքային ամբողջականությունը» պահպանելու նպատակով, վրաց ղեկավարների սթափ մտածող մասը չսակարկեց ինքնավարության պաշտոնական կարգավիճակի վերաբերյալ և համաձայնություն տվեց «պայմանագրային հանրապետությանը», որպես փոխզիջումային տարբերակի:

1921թ. դեկտեմբերի 16-ին Աբխազիայի և Վրաստանի լիազոր ներկայացուցիչները (Ն.Ակիրտավա, Ս.Կայտուզիա, Ս.Քավթարաձե) կնքեցին միութենական դաշնագիր, որի առաջին հոդվածն ամրագրում էր, որ վերոնշյալ հանրապետությունները կազմում են միմյանց հետ ռազմական, քաղաքական և տնտեսաֆինանսական դաշինք[44]: Տեղի ունեցավ Աբխազիայի ղեկավարության շրջադարձը դեպի Վրաստանի հետ միությունը: Այդ է վկայում 1922թ. հունվարին Վրաստանի կոմկուսի առաջին համագումարում Ե.Էշբայի ելույթը: «Մենք ոչ մի լույս չէինք դադարում քարոզել ընդդեմ այսպիսի անկախությանը և քարոզչության արդյունքը ակնհայտ է»[45], – հայտարարեց նա:

Աբխազիայի Խորհուրդների առաջին համագումարը, որի անհրաժեշտության մասին խոսում էին խորհրդայնացման առաջին իսկ օրից, գումարվեց 1922թ. փետրվարի 12-17-ը: «Անդրկովկասի հանրապետությունների դաշնության մասին» զեկույցով հանդես եկավ Ն.Լակոբա. «...Խորհրդային իշխանության գաղափարի պահպանման նպատակով մանր ազգությունների շրջանակներում՝ ինչպես օրինակ աբխազականի, անհրաժեշտ էր մեկ լույսով Աբխազիան հայտարարել անկախ հանրապետություն...»[46], - նշեց նա: Երբ համագումարում հնչապարակվեցին Վրաստանի հետ միութենական դաշնագրի դրույթները պատվիրակների որոշ մասը բարձրաձայն բողոքեց: Ն.Լակոբան ստիպված էր այդպարագայի և հակաճառել. «Աբխազիայի անկախությունը Վրաստանը չի խլում...»[47]: Ինչ անկախության մասին էր խոսքը, եթե, իր իսկ բառերով, այն հռչակված էր մեկ լույսով: Պատվիրակներին վստահություն ներշնչելու նպատակով նա երաշխիքներ տվեց. «Եթե Վրաստանը սկսելու է խլել, մենք բողոքարկելու ենք հեղափոխության շտաբին՝ ՌԿԿ, ՀԿԳԿ, ընկ. Լենինին: Աբխազիայի աշխատավորների անկախությունը ոչ ոք չի կարողանա խլել, քանի դեռ գոյություն ունի խորհրդային իշխանությունը»[48]: Համագումարը ընդունեց որոշում՝ «Անդրկովկասի հանրապետությունների դաշնության և ԽՍՀ Աբխազիայի և ԽՍՀ Վրաստանի դաշնության մասին», որի հիման վրա առաջարկվեց Աբխազիայի ԿԳԿ-ին մշակել նոր դաշնագիր այն հիմունքներով, ինչպիսին է Անդրկովկասի հանրապետությունների միութենական դաշնագիրը[49]: Չնայած համագումարը չհաստատեց 1921թ. դեկտեմբերի 16-ի դաշնագիրը, Վրաստանի Կ(բ)Կ Կենտկոմի նախագահությունը 1922թ. փետրվարի 27-ին որոշեց Աբխազիային տրամադրել 3 տեղ հանրապետական ԿԳԿ-ում, միաժամանակ այն դրակելով «ինքնավար հանրապետություն»[50]: Կատարեկավարությունը հավանություն տվեց 1922թ. մարտի 2-ին ընդունված Վրաստանի ԽՍՀ սահմանադրության առաջին հոդվածի հավելվածին, որտեղ Աբխազիան հայտարարվում էր «միավորված» Վրաստանի հետ, ի տարբերություն Աջարիայի և Հ. Օսիայի, որոնք մտնում են նրա կազմի մեջ[51]: Սակայն այդ տարբերությունը ուներ ձևական բնույթ: Դեռևս 1921թ.

սեպտեմբերի 10-ին Աբխազիայի Կազմբյուրոյի քարտուղար Ն.Սվանիձեն գրում էր Կովբյուրո. «Խորհրդային Աբխազիան իր տարածքով հասկասար է Ռուսաստանի զավառին...Այնինչ ձևական նկատառումներով Աբխազիան հանդիսանում է ինքնուրույն հանրապետություն»[52]:

Աբխազիայի կարգավիճակը վերջնականորեն պետք է որոշվեր նրա սահմանադրությամբ, որի ստեղծման աշխատանքները սկսվեցին 1922թ: Նրա տեքստի ձևավորումը ձգձգվեց սուր հակամարտության պատճառով, որն առաջացավ Վրաստանի Կ(բ)Կ Կենտկոմի և ՌԿԿ Անդրերկրկոմի միջև՝ Անդրկովկասի հանրապետությունների դաշնության հարցի շուրջը: Վրաց «ոտկոմիստները», որոնք Կենտկոմում մեծամասնություն էին կազմում, տնտեսական զարգացման մակարդակների տարբերությունն պատճառով գտնում էին այդ դաշինքը ոչ նպատակահարմար: Դեկտեմբերի 10-ին Բաքվում կայացած Անդրկովկասի Խորհուրդների առաջին համագումարը հռչակեց ԱՍՖՍՀ, իսկ դեկտեմբերի 30-ին Մոսկվայում ստեղծվեց ԽՍՀՄ-ը, որի հիմնադիր անդամներն էին խորհրդային ազգային պետականության բարձրագույն աստիճան կրողները՝ մյութեուսկան հանրապետությունները, և որոնց հետևում էին նրանց կազմում գտնվողները՝ ինքնավար ԽՍՀ, ինքնավար մարզ և աշխատանքային կոմունա: Այդ համաչափության հակասում էր Աբխազիայի կարգավիճակը: Ունենալով ԽՍՀ կարգավիճակ, նա հանդիսանում էր միաժամանակ և «միութենական», և՛ թե «միավորված» Վրաստանի հետ: Այսպիսին յուրահատուկ իրավիճակը չէր շփոթեցնում Աբխազիայի ղեկավարներին: Նույն ունենալով 1922թ. մայիսին կայացած 2-րդ մարզային կուսկոնֆերանսում, Ն.Լակոբան ասաց. «...Մենք պետք է ասենք, որ այդ քաղաքական տեսակները՝ անկախության հռչակումը և այլն, բարբաջանք է, նրանով հրապուրվել պետք չէր...մեզ պետք էր ցուցանակ, և մենք կախեցինք, սակայն խոնարհվել նրա առջև պետք չէ»[53]: ԽՍՀՄ-ի ստեղծումից հետո խառնաշփոթը վերջնականորեն չհաղթահարվեց: 1923թ. նույն ունենալով Անդրկովկասի կոմունիստական կազմակերպությունների 2-րդ համագումարում, Շ.Էլիավան չկարողացավ ճիշտ գնահատել Աբխազիայի, Աջարիայի և Հարավային Օսիայի իրավական կարգավիճակը, վերջինս անվանելով հանրապետություն, այն դեպքում երբ այն ինքնավար մարզ էր[54]: Իսկ 2-րդ մարզային կուսկոնֆերանսում Աբխազիայի կարգավիճակի վերաբերյալ Ն.Լակոբան ասում էր. «Մենք ինքնիշխան պետություն ենք, ճիշտ է խորհրդային, բայց՝ անկախ»[55]: Ինչպես երևում է՝ հասկացությունների կատարյալ խառնաշփոթ: 1924թ. ԽՍՀՄ-ի առաջին սահմանադրության 15-րդ հոդվածում Աբխազիան հիշատակվում է որպես ինքնավար հանրապետություն[56]: Այս իրավիճակում Աբխազիայի սահմանադրության նախագիծ կազմողներն չէին կարող կողմնորոշվել նրա կարգավիճակի ճիշտ գնահատման գործում: Քացասական ազդե-

ցությւսն ունեցավ նաև Վրաստանում ազգային հարցի շուրջը ծավալված բանավեճը:

1923թ. մարտին կայացած Վրաստանի կոմկուսի 2-րդ համագումարի ամբիոնից հնչեցին Աբխազիայի տնտեսական շրջափակման կոչեր: Գրգռվածության պատճառը այն էր. որ Աբխազիայի պաշտոնական մարմինները չէին ընդունել որևէ փաստաթուղթ. որը իրավականորեն վավերացներ կապը Վրաստանի հետ[57]: Վրաստանում ստեղծված իրավիճակով խիստ դժգոհ էին Մոսկվայում: Այս կապակցությամբ. 1923թ. ապրիլին կայացած ՌԿԿ 12-րդ համագումարում ունեցած ելույթում Ստալինն ասաց. «Վերցնենք Վրաստանը: Այստեղ ւսոկա է 30 % ոչ վրացական բնակչություն...Վրաց կոմունիստների որոշ մասում ծնվել է գաղափար՝ այնքան էլ հաշվի չնստել ւսյդ մասը ազգությունների հետ...Դա շովինիզմ է, վնասակար և վտանգավոր շովինիզմ, որովհետև նա կարող է փոքր վրացական հանրապետությունը վերածել գզվոտոցի ասպարեզի: Այնուամենայնիվ նա արդեն վերածել է իրեն գզվոտոցի ասպարեզի...»[58]: Այս կտրուկ գնահատականը բնորոշում է Վրաստանում ստեղծված իրավիճակը: Այդ պայմաններում հասկանալի է դւսոնում Աբխազիայի ղեկավարության զգուշավորությունը Վրաստանի հետ որևէ իրավական կապերի ստեղծման գործում: Գ.Օրջոնիկիձեն 1923թ. դեկտեմբերի 21-ին Անդրկովկասի Խորհուրդների 2-րդ համագումարում ստիպված էր հանգստացնել. «Աբխազիան հիմա ինքնուրույն հանրապետություն է... ով ուզում է դարձյալ վերածել նրան որևէ մեկի գաղութի, կստանա ձեռքերին»[59]:

1923թ. հունիսի 26-ին Աբխազիայի ԿԳԿ-ի նախագահությունը որոշեց որպես հիմք ընդունել Վրաստանի գործող սահմանադրությունը[60], իսկ 1925թ. ապրիլի 1-ին Աբխազիայի Խորհուրդների համագումարին ներկայացվեց առաջին սահմանադրության նախագիծը: 5-րդ հոդվածը հռչակում էր Աբխազիայի ԽՍՀ ինքնիշխան պետություն և դուրս գալու ազատ իրավունք էր վերապահում ԱՍՖՍՀ և ԽՍՀՄ-ից: Այս դրույթը խիստ հակասում էր վերը նշված կառույցների սահմանադրություններին: Հետազոտողների միջև կան տարաձայնություններ ԽՍՀ Աբխազիայի 1925թ. Սահմանադրության օրինական լինելու մասին: Հիմք ընդունելով «3-րդ Համաաբխազական Խորհուրդների համագումարի տեղեկագիրը», ուր հայտնվում է Վրաստանի ԽՍՀ և ԱՍՖՍՀ-ի սահմանադրությունների հետ համաձայնեցման նպատակով համագումարին ներկայացված նախագծի վերամշակման որոշման մասին[61], մի շարք վրաց պատմաբաններ (Մ.Լորդքիփանիձե, Ա.Սուրգուլաձե, Է.Խոշտուրիա-Բրոսսե, Լ.Թոդիձե, Գ.Գոգսաձե և այլք) պնդում են, որ այսպես կոչված «1925թ. Սահմանադրությունը» մնաց որպես նախագիծ[62]: Աբխազ պատմաբան Բ.Սագարիան և վրաց գիտնականներ Դ.Գամախուրիան, Բ.Գոգիան հաստատում են Սահմանադրության ընդունման փաստը 3-

1920-ական թթ. վերջերին ԽՍՀՄ-ում այդեն ձևավորվել էր ազգային պետական կառույցների հիերարխիա, որտեղ «պայմանագրային հանրապետություն» հասկացությունը առանձնացված էր: Քաղաքական պահի հարկադրական պահանջ դարձավ լմի բերելու Վրաստանի և Աբխազիայի իրավական հարաբերությունները, այն համաձայնեցնելով ձևավորված իրականության և ԽՍՀՄ-ում իրականացվող պետական շինարարության քաղաքականությանը: Դեռևս Վրաստանի կոմկուսի 6-րդ համագումարում 1929թ. հուլիսի 4-ին Ն. Լակոբան հայտարարեց. «Աբխազիայի և Վրաստանի փոխհարաբերությունների հարցը ձևակերպված է այնպես, որ Աբխազիան ստիպված կլինի որոշակի փոփոխություն կատարել իր Սահմանադրությունում...»[71]: Նույն ժամանակ Աբխազիայի Ժողկոմխորհրդում կազմված տեղեկանքում նշված է «որ 1921թ. դեկտեմբերի 16-ի դաշնագիրը ...կորցրել է իրական նշանակությունը...կարող է դիտվել միայն որպես պայմանագիր ԽՍՀ Վրաստանին ԽՍՀ Աբխազիայի միավորման, որ պայմանագրային ԽՍՀ Աբխազիա անվանումը չունի իրական բովանդակություն»[72]: 1930թ. ապրիլին Աբխազիայի ԿԴԿ-ի ճնտաշրջանը որոշում կայացրեց վերացնել «պայմանագրային հանրապետություն» հասկացությունը սահմանադրությունից, փոխարինելով այն «ինքնավար հանրապետություն» անվանակոչումով: 1931թ. փետրվարի 11-ին Աբխազիայի Խորհուրդների 6-րդ հատուկ համագումարը, իսկ նույն ամսվա 19-ին՝ Վրաստանի Խորհուրդների 6-րդ համագումարը հաստատեցին այդ որոշումը[73]:

Եթե ընդունենք միայն ձևական իրավական կողմը, անշուշտ Աբխազիայի կարգավիճակի փոփոխումը կարելի է դիտել որպես նվազեցում: Սակայն նա «ինքնավար» դիտվում էր դեռևս 1921թ-ից, մյուս կողմից, սակայն, հանրապետության կարգափոխությունը չփոխեց նրա իշխանավորների իրական դերն ու լիազորությունները: Աբխազիայի ինքնավար հանրապետությունը, շնորհիվ նրա ԿԴԿ-ի նախագահ Նեստոր Լակոբայի հեղինակությանը և մտերմությանը Ստալինին, իրականում օգտվում էր միութենական հանրապետության կարգավիճակին բնորոշ «բացառիքներից»[74]: Միաժամանակ Աբխազիան չէր համապատասխանում նաև մի շարք այլ պահանջների (տարածքը, բնակչության թիվը և այլն) միութենական հանրապետության իրավունք կարգավիճակ ստանալու համար: Այսպիսով 1931թ. տնական քաշքշուկից հետո, Աբխազիայի համար գտնվեց կարգավիճակի մի տարբերակ, որը կարծես պետք է վերջակետ դներ այդ հարցում:

BENIAMIN MAILYAN

DEFINITION OF THE ABKHAZIA'S STATUS BY THE SOVIET STATEHOOD (1921-1931)

The study of the condition of Abkhazia in soviet state period have an importance in the context of the modern relationships between georgians and abkhazians. After sovietization of Georgia. befor the formation of the USSR, communist leaders of Soviet Abkhazia seek for the status of independence. which formally was given from central communist bodies. During the formation the federation of south Caucasis republics, Abkhazia was included Soviet Republic of Georgia based on an alliance agreement. Higher state and party bodies of the USSR regarded Abkhazia as autonomy region, but it was called agreement republic, such concessions were made, because the great part of abkhaz nationality didn't want to be under the administrative patronage of Georgia. The status of agreement republic of Abkhazia in 1922-1930 had the same formal character, as the independence in 1921. In 1931 Abkhazia was transformed into an autonomy republic in Georgia SSR as the USSR hadn't the analogy of agreement republic.

ՃԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Д.Стуруа, Сепаратистское движение в Абхазии в 60-е и 70-е годы нашего столетия, Тб., 1995, с. 59, նաև տես՝ А.Ментешашвили, Оккупация и фактическая аннексия Грузии, Тб., 1990.
2. Տես՝ Г.Дзидзария, "Кираз" (Об Абхазской революционной крестьянской дружине 1917-1921 гг.), Сух., 1981; նույնի Роль Советов и "Кираза" в истории революционной борьбы в Абхазии 1917-1921 гг., Сух., 1971.
3. А.Ментешашвили, Октябрьская революция и национально-освободительное движение в Грузии (1917-1921) Тб., 1987, с. 189.
4. Укрепление Советской власти в Абхазии (1921-1925). Сборник док. и мат. Составитель А.О.Тулумджян, Сух., 1957, с. 14-15.
5. Образование СССР, сборник док., М.,1972, с.172.
6. Революционные комитеты Абхазии в борьбе за установление и упрочение Советской власти (февраль 1921-февраль 1922), сб. док., Сух., 1961, с. 27.
7. Революционные комитеты Грузии, сб. док. и мат., Сух., 1963, с. 78.
8. Б.Сагария, Национально-государственное строительство в Абхазии (1921-1931 гг.), Сух., 1979, с. 25.
9. Б.Сагария, Образование и укрепление советской национальной государственности в Абхазии (1921-1938 гг.), Сух. 1981, с. 41-42.
10. Б.Сагария, Образование и укрепление.., с.44.
11. А.Ментешашвили, Октябрьская революция..., с. 189.
12. Г.К.Орджоникидзе, Статьи и речи, М., 1956, т.1, с.199-200.
13. А.Ментешашвили, Октябрьская революция..., с. 189.
14. Укрепление Советской власти в Абхазии (1921-1925), с. 27.

15. По поводу искажения грузино-абхазских взаимоотношений, Тб., 1991, с. 85.
16. Н.А.Лакоба, Статьи и речи, сост. А.О.Тулумджян, Сух., 1987, с.176.
17. В.И.Ленин, Полное собрание сочинений, т. 45, с. 360.
18. Там же, т. 45, с. 359-360.
19. История Абхазской АССР 1917-1937, Сух., 1983, с. 101.
20. Очерки истории Коммунистической партии Грузии, Тб., 1971, с. 428.
21. "Трибуна"(27.09.1921), մեջբ. ըստ А.Ментешашвили, Октябрьская революция..., с.198.
22. Д.Стуруа, նշվ. աշխ, էջ 58.
23. Քաղաքական կուսակցությունների արխիվ (Թբիլիսի), ֆ. 14, ց. 1, գ. 11, թ. 22.
24. Н.А.Лакоба, նշվ. աշխ, էջ 34.
25. Съезды Советов Абхазии (1922-1923 гг.), сборник док. и мат., Сух.,1959, с. 92, док. N 29.
26. Укрепление Советской власти в Абхазии (1921-1925), с. 44-45.
27. Г.К.Орджоникидзе, նշվ. աշխ. էջ 200-201.
28. Н.А.Лакоба, նշվ. աշխ, էջ 176.
29. Д.Гамахариа, Б.Гогиа, Абхазия-историческая область Грузии с древнейших времен до 30-х годов 20 века, Тб., 1997, с. 477, док. N 267.
30. А.Ментешашвили, Октябрьская революция..., с. 192.
31. Б.Сагария, Образование и укрепление.., с. 47-48; Г.П.Лежава, Между Грузией и Россией: исторические корни и современные факторы абхазо-грузинского конфликта XIX – XX веках, М., 1997, с. 101.
32. Б.Сагария, Образование и укрепление.., с. 48-49.
33. Քաղաքական կուսակցությունների արխիվ (ք. Թբիլիսի), ֆ. 14, ց. 1, գ. 37, թ. 180, մեջբ. ըստ թերթի "Свободная Грузия", N 115(28.06.1991).
34. "Свободная Грузия", N 115(28.06.1991).
35. Там же.
36. История Абхазии, Гудаута 1993, с. 329; А.Ментешашвили, Октябрьская революция..., с.192; В.А.Шнирельман, Война памяти: мифы, идентичность и политика в Закавказье, М., 2003, с. 267.
37. Б.Сагария, Образование и укрепление.., с.50
38. История Абхазской АССР.., с.105, նաև տես՝ Б.Сагария, Образование и укрепление.., с. 51.
39. Դ.Գամախարիա, Վրաց-աբխազական հարաբերությունների պատմությունից, Թբ., 1991, (վրաց.լեզ.), էջ 125, նաև տես՝ "Свободная Грузия", N 115(28.06.1991), նաև История Абхазии.., с.330.
40. Н.А.Лакоба, նշվ. աշխ, էջ 177.
41. Б.Сагария, Образование и укрепление.., с.51, նաև տես՝ История Абхазии.., с.330.
42. Б.Сагария, Образование и укрепление.., с.51.
43. "Социалист-Федералисти", (23.07.1921), մեջբ. ըստ Д.Гамахариа, Б.Гогиа, Абхазия-историческая..., с. 476, док. N 265.
44. По поводу искажения..., с. 90.
45. Б.Сагария, Образование и укрепление.., с.56.

46. Там же, с. 54.
47. Там же, с. 58-59.
48. Տես՝ "Международное право", N 4, 1999, с. 253-266.
49. Съезды Советов Советских Социалистических Республик (1917-1922 гг.), сборник док., М., 1960,т. 2, с. 461.
50. Քաղաքական կուսակցությունների արխիվ (ք. Թբիլիսի), ֆ. 14, ց. 1, գ. 192, p. 215.
51. По поводу искажения..., с. 92.
52. Ի.Գամախարիա, Վրաց-աբխազական.., էջ 118, նաև տես՝ "Свободная Грузия", N 115 (28.06.1991).
53. Ի.Գամախարիա, Վրաց-աբխազական.., էջ 118.
54. Б.Сагария, Образование и укрепление.., с. 131.
55. Գ.Գամախարիա, Վրաց-աբխազական.., էջ 113.
56. История советской Конституции (1917-1956), М., 1957, с. 463.
57. Б.Сагария, Образование и укрепление.., с. 56.
58. И.В.Сталин, Сочинения, т. 5, с. 249-250.
59. Б.Сагария, Образование и укрепление.., с.59.
60. Там же, с. 121.
61. Съезды Советов союзных и автономных советских социалистических республик Закавказья, сборник док. (1923-1937), т. 6, М., 1964, с. 673.
62. По поводу искажения..., с. 93, նաև տես՝Исторические и политико-правовые аспекты конфликта в Абхазии, Тб., 1995, с. 54, նաև Этнополитические конфликты в Закавказье, США, Мериленд, 1997, с. 133.
63. Б.Сагария, Образование и укрепление... с. 121-123, նաև տես՝ Д.Гамахариа, Б.Гогиа, նշվ. աշխ. էջ 122, նաև История Абхазской АССР ... с. 196-197.
64. По поводу искажения.., с. 93 նաև Д.Гамахариа, Б.Гогиа, նշվ. աշխ. էջ 123.
65. История Абхазской АССР.., с. 197, նաև Д.Гамахариа, Б.Гогиа, նշվ. աշխ. էջ 123.
66. Н.А.Лакоба, նշվ. աշխ. էջ 177-178.
67 Там же.
68 Б.Сагария, Образование и укрепление.., с. 10.
69 Там же.
70 История Абхазской АССР., с. 199-200.
71 Н.А.Лакоба, նշվ. աշխ. էջ 277.
72 История Абхазской АССР.., с. 250.
73 Там же, с. 338.
74 С.З.Лакоба, Очерки политической истории Абхазии, Сух., 1990, с. 118; В.А.Шнирельман, նշվ. աշխ. էջ 267: Վերջինս, հղելով Ստանիսլավ Լակոբայի աշխատությունը, համոզված գրում է, թե. «Желая закрепить это положение, в последние годы жизни [Нестор] Лакоба неоднократно ставил перед Сталиным вопрос о включении Абхазской АССР в состав РСФСР» (նույն տեղում, էջ 267). Այդ պնդումը, սակայն, չի հիմնավորված վավերագրորեն և Ս. Լակոբայի աշխատության մեջ ներկայացված է հետագայում գրառված հուշերի հիման վրա (տես С.З.Лакоба, Очерки ..., էջ 123):

ՍՈՒՐԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԲԱՇԱՐ ԱԼ-ԱՍԱԴԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՌԱՋԻՆ ՉՈՐՍ ՏԱՐԻՆԵՐԻՆ ՍԻՐԻԱՅՈՒՄ՝ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՐՈՇ ՏԵՂԱՇԱՐԺԵՐԻ ՄԱՍԻՆ (2000-2004 ԹԹ.)

2000թ. հուլիսի 12-ին հանրաքվեի ժամանակ ստանալով քվեարկության մասնակիցների ձայների 97.29 %-ը, Սիրիայի Արաբական Հանրապետության /ՍԱՀ/ նախագահ ընտրվեց Բաշար ալ-Ասադը[1]:

Սիրիան, որի ներքաղաքական կյանքը 1971 թ.-ից անփոփոխ ընթանում էր գրեթե նույն տրամաբանությամբ և առանց որևէ զգալի ցնցումների /բացառությամբ 1979-82 թթ. «Մահմեդական եղբայրներ» կազմակերպության հակակառավարական գործողությունների/ կամ նորամուծությունների, հայտնվեց կտրուկ փոփոխությունների մի շրջանում:

Բաշար ալ-Ասադի իշխանության գալն ինքնին մեծ սպասելիքներ առաջացրեց: Ակնկալվում էր, որ արևմտյան կրթություն ստացած երիտասարդ նախագահը կձեռնարկի սիրիական հասարակությունը վերափոխելու մի շարք քայլեր[2]: Այս հույսերի առհավատչյան դարձավ Բաշար ալ-Ասադի նախագահի պաշտոնում առաջին ելույթը, որում նա Սիրիայի ղեկի, Իսրայելի, Լիբանանի և արաբական աշխարհի հետ հարաբերությունների հետ մեկտեղ առանձնահատուկ շեշտեց ներքաղաքական և վարչական արմատական բարեփոխումների անհրաժեշտությունը, ինչպես նաև մատնանշեց ներքին քաղաքական զարգացման երկու հիմնական ուղղությունները՝ տնտեսական ազատականացումը և պետության արդիականացումը: Կոչ անելով իրականացնել ներքին բարեփոխումներ՝ նոր նախագահն ընդգծեց գոյություն ունեցող հասարակական ինստիտուտների բարելավման, բաց և կառուցողական քննադատության անհրաժեշտությունը[3]:

Այս սպասումներն ինչ-որ չափով արդարացան, սակայն ոչ ամբողջովին: Նրանք ովքեր ակնկալում էին կտրուկ փոփոխություններ, նույնիսկ հիասթափություն ապրեցին: Իրականում պարզ էր, որ սկզբնական շրջանում, մինչև իր դիրքերի ամրապնդելը, Բաշար ալ-Ասադը իսոսա-

ընդգրկվում նրա կազմում), ավելի քան կեսով նորացվեց Տարածաշրջանային ղեկավարության կազմը (21-ից 12-ը նոր անդամներ էին)[10]:

Ղեկավարության շրջանում կատարած փոփոխությունները նպատակ ունեին նաև աշխուժացնել Բասս կուսակցության ամենօրյա գործունեությունը. վախելով աշխատանքի մեթոդները. որոնց կիրառման արդյունքում վերջին տարիներին խիստ թուլացել էր կուսակցության կապը հասարակության հետ:

Այսպես. 2000 թ. կայացած Բասս Տարածաշրջանային ղեկավարության նիստում որոշվեց հրաժարվել կուսակցությունում պաշտոնների ճշանակումների համակարգից և 2001 թ. հունվարի 20-ին անցկացնել կուսակցական ընտրություններ: Նիստի ժամանակ Բաշար ալ-Ասադը նույնիսկ ակնարկեց. որ կցանկանար հաջորդ 2007 թ. ընտրություններն անցկացնել այլընտրանքային սկզբունքներով:

Սի շարք փոփոխություններ կատարվեցին նաև Ազգային Առաջադիմական ճակատում /ԱԱճ/:

Ստեղծման առաջին տարիներից. ԱԱճ-ի հիմնադիր փաստաթղթում՝ Ազգային խարտիայում հատուկ նշվում էր Ճակատում Բասսի առանձնահատուկ դերը: Այն միակն էր ԱԱճ անդամ կուսակցություններից. որն իրավունք ուներ սեփական թերթը հրատարակել եւ հասարակական ինստիտուտներում քաղաքական աշխատանք իրականացնել: Բաշար ալ-Ասադի իշխանության գալուց հետո այս մենաշնորհը. որոշակիորեն մեղմացվեց: ԱԱճ անդամ 6 կուսակցություններից երեքին թույլատրվեց հրատարակել սեփական թերթեր եւ 2001 թ. հունվարին լույս տեսավ ՍԿԿ-ի կողմից հրատարակվող «Նիդալ աշ-Շաաբ» թերթը[11]: 2002 թ. փետրվարից ԱԱճ-ի Կանոնադրության 9 հոդվածի փոփոխության արդյունքում"[12] ԱԱճ-ի անդամ բոլոր կուսակցություններն իրավունք ստացան գործել երիտասարդության շրջանում և համալսարաններում[13]: Այս ամենը վկայում էր սիրիական քաղաքական կյանքում հենց քաղաքական միավորների դերն ու նշանակությունը մեծացնելու Բաշար ալ-Ասադը ձգտման մասին ի հակակշիռ ոչ քաղաքական միավորների՝ բանակի և հատուկ ծառայությունների. որոնք Հաֆեզ ալ-Ասադի կառավարման հատկապես վերջին տարիներին ավելի մեծ կարևորություն էին ձեռք բերել սիրիական հասարակության մեջ՝ հետին պլան մղելով ԱԱճ- կուսակցություններին /խոսքը հիմնականում Բասսի մասին է/: Այս մասին է վկայում նաև կառավարության ձևավորման կուսակցական սկզբունքի պահպանումը. երբ ԱԱճ-ի անդամ ցանկացած կուսակցություն անկախ նրա դերից և հնարավորություններից ստանում է նախնարարական պաշտոններ[14]:

Հասարակության ժողովրդավարացմանն էր միտված նաև նախկինում արգելված քաղաքական ուժերի վերադարձը քաղաքական թատե-

միանձնյա կերպով: Ես պատրաստ են լսել տարբեր կարծիքներ և տարբեր տեսակետներ. անկախ այն հանգամանքից համաձայն եմ դրանց հետ թե՝ ոչ»[23]:

Հասարակությունն արձագանքեց այս հրավերին և կառավարման առաջին 4 ամիսների ընթացքում նախագահ Բաշար ալ-Ասադին ուղղվեցին 4 բաց նամակներ, որոնք տպագրվեցին նաև լիբանանյան մամուլում և մեծ արձագանք ստացան սիրիական հասարակությունում: Նրանք պահանջում էին բարեռեformներ իրականացնել՝ մատնանշելով երկրում առկա թերություններ: Վարչակարգը բավականին բարյացակամ ընդունեց այդ նամակները: Իշխանությունների կոչտ արձագանքի բացակայության պայմաններում 2000 թ. սեպտեմբերին լիբանանյան մամուլում տպագրվեց «99-ի ուղերձը», որը կոչ էր անում վերականգնել խոսքի ազատությունը, վերացնել ռազմական դրությունը, որ հաստատված էր երկրում դեռ 1963 թ.-ից, ներմուծել քաղաքական բազմակարծությունը և քաղբանտարկյալներին համընդհանուր համաներում հայտարարել: «Բաց նամակը» ստորագրողների թվում էին սիրիացի հայտնի մտավորականներ՝ բանաստեղծ Ադոնիսը, փիլիսոփա Սադեկ Ջալալ ալ-Ազմը, վիպասան Հայդար Հայդարը, պատմաբան Աբդուլլահ Հաննան, ռեժիսոր Մոհամմեդ Մալլասը և դերասան Խալեդ Թայան և այլք[24]:

2001 թ. հունվարին հայտնվեց «1000-ի ուղերձը»: Այս ուղերձի հեղինակները նույնպես ազատական հայացքներով բարեփոխումների կողմնակից մտավորականներ էին: Ուղերձում նրանք կոչ էին անում Բաշարը ալ-Ասադին ապահովել դատարանների ազատությունը, իրականացնել ԱԱԾ-ի արմատական վերափոխումը, ազատ արձակել քաղբանտարկյալներին, վերացնել արտակարգ դրությունը, ապահովել խոսքի ազատությունը[25]:

Այս երկու ուղերձներում էլ, փաստորեն, սիրիական տարբեր մտավորական շրջանակներ կոչ էին անում Բաշար ալ-Ասադին՝ շարունակել բարեփոխումները և իրենց աջակցությունն էին հայտնում նախագահին:

Օրինակ. Սիրիայում քաղաքացիական հասարակության վերականգնման կոմիտեի[26] անդամ Սիշել Կիլոն Լոնդոնում լույս տեսնող «ալ-Շարկ ալ-Առսատ»-ին տված հարցազրույցում նշում է, որ նրանք ուղարկել են այս նամակը նախագահին, և չէին ակնկալում, որ այն կհրապարակվի մամուլում: Սակայն դա տեղի ունեցավ, ինչը վկայությունն է այն բանի, որ երկրում վերականգնվում է ժողովրդավարությունը: Իսկ նամակը հեղինակած մտավորականները չեն հավակնում իշխանության և չեն ներկայացնում քշնամական պահանջներ: «Մենք ուրդակի ուզում ենք օգնել իշխանություններին, հասնելու լավագույն արդյունքի»: Ընդ որում նշվում է, որ արված առաջարկությունները չեն վնասելու ներքին վիճակին, և մտավորականներն աշխատել են հենց ժողովրդի միասնության.

հայկենիքի պաշտպանության և գյուղած տարածքների վերադարձման սկզբունքների շրջանակում[27]: Ուշագրավ է նաև 2002 թ. հունվարի 5-ին սիրիական մամուլում հրապարակված Ազգային դեմոկրատական ժողով կազմակերպության անդամ 10 ակտիվիստ ձախ այլախոհների հայտարարությունը. որով վերջիններս համաձայնվում էին մասնակցել բաց քաղաքական բանավեճերի. որոնք նախաձեռնվել էին Բաշար ալ-Ասադի իշխանության գալուց հետո: Խմբի գործադիր քարտուղար Հասան Աբդ ալ-Ազիմի խոսքերով՝ 10 տարուց հետո ընդհատակից դուրս գալու որոշումը կապված է Հաշալի ալ-Ասադի իշխանության գալուց հետո տեղ գտած որոշակի ազատական փոփոխությունների հետ[28]:

Այս ամենը վկայում էր երկրում հայտարարված «կառուցողական քննադատության» թույլտվության իրական լինելու մասին: «Դամասկոսյան գարնան» հետևանքներից էր նաև խոսքի ազատության որոշակի վերականգնումը և մի շարք կազմակերպությունների և ինստիտուտների ստեղծումը, որոնց գործունեությունը նախկին նախագահի օրոք ոտոլակի անհնար էր:

Դամասկոսում սկսեց գործել «մարդու իրավունքների պաշտպանության կոմիտեն»՝ սիրիացի լրագրող Անդամ Նախլայի գլխավորությամբ: 2000 թ. երկրորդ կեսին ՍԱՀ-ում սկսեցին ի հայտ գալ «քաղաքական ակումբներ»[29]. որտեղ բավականին բաց քննարկումներ էին ընթանում Սիրիայի ապագա զարգացման ուղիների շուրջ. նպատակ ունենալով երկրում քաղաքացիական հասարակության զարգացման խրախուսումը:

Խոսքի ազատության ոլորտում որոշակի տեղաշարժերն արտահայտվեցին ՋԼՄ-ներում կատարված փոփոխություններով: Թեև չընդունվեցին օրենքներ. որոնք կապահովեին խոսքի. մամուլի ազատություն. քաղաքական բազմակարծություն և հանրահավաքների ազատություն. սակայն այսօրեն որոշակիորեն իրականացվեց գրաքննությունից ՋԼՄ-ների ձեռքազատումը:

Գրեթե բոլոր պետական թերթերը սկսեցին հրապարակել բավականին «սուր» հոդվածներ՝ կառավարության տնտեսական քաղաքականության քննայատությամբ: Բաշար ալ-Ասադն անձամբ հանդիպեց ՋԼՄ-ների խմբագրերի հետ և քաջալերեց նրանց այդ պահվածքը[30]: Վերացվեց Բասել մենաշնորհը թերթեր հրատարակելու ոլորտում. ինչի հետևանքով 2001 թ. հունվարին բացվեց վերջին 40 տարում առաջին մասնավոր թերթը[31]:

Լուրջ ցուցանիշ էր նաև պետական «Թիշրին» և «Աս-Սաուրա» թերթերի. հեռուստատեսության և ռադիոյի պետական կոմիտեի նոր ղեկավարների և գլխավոր խմբագրերի նշանակումը և մի շարք այլ փոփոխություններ: Այսպես. «Թիշրին» խմբագրությունում վերադարձավ Արեֆ Դալիլան. որն արտաքսվել էր երկրից: Նա վերադարձավ Բաշարի ալ-Ասադի խնդրանքով և առաջին իսկ հոդվածում նշեց. որ միակուսակցա-

ԱՄՆ, դեսպանատան աշխատակիցը:[37] Դեպքը խստագույնս դատապարտեց Սիրիայում ԱՄՆ դեսպանության. հետո նաեւ ԱՄՆ Պետդեպարտամենտի կողմից. որի պաշտոնական ներկայացուցիչ Ռիչարդ Հաուչերը. նշեց դիվանագիտական ներկայացուցիչների ճածեռնմխելիության խախտման անթույլատրելության մասին[38]:

Ընդ որում պետք է նշել. որ բարեփոխումների դեմ ուղղված այս գործողությունները գայմանային միակարծությամբ պաշտպանվեցին Բասաս կուսակցության անդամների կողմից: Պարզվեց. որ սիրիական քաղաքական վերնախավն ընդհանրապես պատրաստ չգտնվեց ժողովրդավարական բարեփոխումների անցկացմանը: Եվ որքան էլ մեծ լիներ նախագահ Քաշար ալ-Ասադի վերափոխումներ կատարելու ցանկությունը. հնարավոր չէր դրանք իրականացնել առանց իշխանական վերնախավի համաձայնության:

Այսպիսով, առաջին 4 տարիները լուրջ փորձությունների շրջան էին երիտասարդ նախագահ Քաշար ալ-Ասադի համար: Կառավարման այս փուլում նա զգալի փոփոխություններ իրականացրեց Սիրիայի ներքին կյանքում: Թեև դրանցից շատերը վերջնական լուծում չստացան. սակայն դրանց իրականացման փաստն ինքնին շատ խոսուն է: Սիրիայի նման ավտորիտար երկրում տեղի ունեցան ժողովրդավարական որոշակի տեղաշարժեր. որոնք հետագայում կանգ առան:

Պատճառները տարբեր են՝ և՛ ներքին քաղաքական և՛ արտաքին:

Ներքաղաքական ասպարեզում Քաշար ալ-Ասադը ուղղակի չէր կարող հաշվի չառնել քաղաքացիական բաղեխոխումնելվ անցկացման դեմ ցուցաղրված դիմադրությունը. քանի որ, ինչպես նշում էին հռետեսներ. նրա իշխանության երկու հենարանները շարունակում էին մնալ հենց Հասաս կուսակցությունը և բանակը.[39] որոնք այդքան էլ չէին ցանկանում փոխել ստեղծված իրավիճակը: Միաժամանակ իշխանության այս առաջին տաբիներին նա փորձեր կատարեց ընդարձակել սեփական սոցիալ-քաղաքական բազան: Սրան էին միտված և՛ ԱԱԵ-ի ընդարձակմանն ուղղված քայլերը. և՛ նոր կազմակերպությունների գործունեության արտոնումը և՛ հասարակական քննարկման խրախուսումը:

Բացի այդ նույնիսկ զգուշավոր բարեփոխումներն իրականացնելիս նոր նախագահը պետք է հաշվի առներ այն. որ ներքաղաքական կարևոր հիմնախնդիրներից էր նաև երկրի կայունության պահպանումը: Հաֆեզ ալ-Ասադից հետո իշխանության անցումը նրա որդուն կարող էր լուրջ հակասությունների առիթ դառնալ սուննի-ալավի[40] համայնքների փոխհարաբերություններում: Լինելով երկրում կրոնական փոքրամասնություն կազմող ալավիական համայնքի ներկայացուցիչ՝ նա մշտապես զգում էր այս վտանգը: Թեև նրա իշխանության առաջին շրջանում ի հայտ չեկան առաջնորդներ. որոնք սուննիական կնախաձեռնեին ելույթ ալավիական գերիշխանության դեմ[41] և երկրի մեծամասնությունը կազ-



ON SOME SOCIAL AND DOMESTIC CHANGES IN SYRIA UNDER PRESIDENT BASHAR AL-ASSAD IN HIS FIRST FOUR YEARS. (2000-2004)

SUREN MANUKYAN

The new president of Syria Bashar al-Asad who had succeeded his father as head of state in 2000 implemented some social and political reforms in Syria.

The new president expanded free speech policy, countenanced a relatively open debate on Syria's domestic needs. Many intellectuals scnl him "open letters" ("99's

letter", "1000's appeal") asking for political, economic, and social reform. Claiming that Syria was in terrible condition, the letter-writers, very politely, demanded change. Papers published these letters and they were circulated inside Syria.

Surprisingly, they were tolerated by the regime, signaling that the era of regulation of thought and speech was over.

But along with the presidency, Bashar inherited a set of pressing and severe problems.

Realizing reforms he had to maintain a balance between his own identity and the various forces defining the country. Bashar has chosen to concentrate first on broadening his own social and political base and consolidating his position.

So, he handled some reforms in political system of Syria. He allowed activities of some underground and banned parties and made attempts to democratize and enlarge of broaden shape of ruling alliance of parties - National Progressive Front. Supposedly, he tried to create "Controlled demoeraey" in Syria.

The Old guard achieved to stop some of reforms by closing the number of "discussion clubs" and arresting some demoeratie activists. Being concentrated in foreign affairs Bashar al-Asad couldn't prevent this process.

Setting aside the need for quick successes allows him to advance slowly and deal with rear-guard pressure from the still-powerful older generation.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. 2000 թ. հունիսի 10-ին վախճանվեց Հաֆեզ ալ-Ասադը, որը ՍԱՀ նախագահի պաշտոնը զբաղեցնում էր 1971 –ից. Ն երկրում իշխանության ղեկը մոտ 40 տարի իր ձեռքում պահող «Բաաս» կուսակցությունը նախագահի պաշտոնին առաջադրեց նրա որդուն՝ Բաշար ալ-Ասադին: Ընդ որում դրա համար խորհրդարանը փոփոխության ենթարկեց երկրի Սահմանադրության 83 հոդվածը՝ նվազեցնելով նախագահական պաշտոնի համար անհրաժեշտ տարիքը 40-ից 34 – ի. ինչը թույլ տվեց 34-ամյա Բաշարին նշանակել նախագահի պաշտոնակատար:

2 Ակնկալիքները հասնում էին այնպիսի չափերի, որ խոսվում էր նույնիսկ 1964 թ. ազգայնացված հողերը հին տերերին վերադարձնելու, աշխատավարձը 100 տոկոսով բարձրացնելու և նույնիսկ «Բաաս» կոսակցությանն իշխանությյան մենաշնորհից զրկելու մասին:

3 Բաշար ալ-Ասադի նախագահի երդման ելույթը ըստ http://www.basharassad.org

4 Baidatz Yossi, Bashar's First Year: From Ophthalmology to a National Vision // Policy Focus Research Reports on Palestinian Issues, #41, (July 2001), www.washingtoninstitute.org/pubs/pfs/pfs

5 Համաձայն այս որոշման նկարները կարող էին լինել միայն կառավարական շենքերում: Թեև հետագայում դրանք հայտնվեցին նաև փողոցում, սակայն նմանօրինակ հրամանի ի հայտ գալն ինքնին շատ խոսուն էր:

6 Moubayed Sami Syria's New President Bashar Al-Assad: A Modern-Day Attaturk // Washington Report on Middle East Affairs, Dec2000, Vol. 19 Issue 9, p31.

7 Համաձայն «Միջազգային համաներում» կազմակերպության տվյալների՝ նրանց թիվը 1989 թ. հասնում էր 10 հազարի:

8 Ազգային Առաջադիմական Ճակատը հիմնվել է 1972 թ.: Ներկայումս նրա կազմի մեջ են մտնում «Բասաս»-ը, Սիրիական կոմկուսը, Արաբական սոցիալիստական միությունը, Արաբական սոցիալիստների շարժումը, Սոցիալ-յունիոնիստների կուսակցությունը, Յունիոնիստական սոցիալ-դեմոկրատական կուսակցությունը /1988 թ-ից/, ինչպես նաև 1980 թ-ից Բանվորների արհմիությունների համընդհանուր ֆեդերացիան, Գյուղացիների համընդհանուր ֆեդերացիան և Բաասական հեղափոխական երիտասարդության միությունը:

9 Ахмедов В.М. «Партия и власть в Сирии: эволюция отношений и перспективы взаимодействия в переходный период развития», с.349// Ближний Восток и современность, вып.18, М., 2003

10 «Հին գվարդիայի» ներկայացուցիչները, որոշ բացառությամբ, մնացին Տարածաշրջանային ղեկավարության կազմում:

11 2001 թ. սեպտեմբերի 22-ի համար 50 հրամանագրի տեքստը տես www.sana.org/arabic/decree/publications%20and%20press,

12 Ахмедов В.М. «Партия и власть в Сирии: эволюция отношений и перспективы взаимодействия в переходный период развития», с.350 // Ближний Восток и современность, вып.18, М., 2003

13 Բանակում քաղաքական գործունեություն ծավալելու թույլտվությունը, այնուամենայնիվ, պահպանեց միայն Բաասը:

14 Կոմունիստները, օրինակ, ստացան 3 տեղ 2001 թ. դեկտեմբերին կազմված «բազմակուսակցական» կառավարության մեջ /Երկու նախարարությունները ներկայացնում էին Յուսեֆ Ֆեյսալի ՍԿԿ-ն և մեկ նախարար Վ.Բակդաշի ՍԿԿ-ն կուսակցությունը/:

15 Ոչ պաշտոնապես ՍԱՍԿ վերսկսել էր իր գործունեությունը դեռ 1990-ական թվականներին, երբ նրա ներկայացուցիչներից մեկը մշտապես ընտրվում է Ազգային խորհրդի անդամ՝ «անկախ» պատգամավորների շարքում:

16 www.elaph.com, 5 March 2003 ըստ Косач Г. «Коммунисты в баасистском национальном контексте: пример Сирии»// Ближний Восток и современность, вып.17, М.2003, с.312

17 www.asharqalawasat.com/view/news/2003?03?12?157385 ըստ Косач Г. «Коммунисты в баасистском национальном контексте: пример Сирии»// Ближний Восток и современность, вып.17, М.2003, с.277

18 Սիրիայում այսօր գործում են 3 կոմկուս /Յուսեֆ Ֆեյսալի, Վիսալ Ֆահրա Բագդաշի ղեկավարությամբ երկու ՍԿԿ-ները և ոչ լեգալ պայմաններում գործող ՍԿԿ-Քաղբյուրոն Ռ.Թուրքի ղեկավարությամբ/:

19• Ռիյադ Թուրքի խմբակցությունը հեռացավ ՍԿԿ-ից 1972 թ. և հիմնեց Սիրիայի կոմունիստական կուսակցություն՝ Քաղբյուրո կուսակցությունը, որը 1979 թ. դարձավ ընդդիմադիր Ազգային-ժողովրդական միավորման անդամ:

20 alhiwaradimocratv.free.fr/alrail5 ըստ Косач Г.Г.«Коммунисты в баасистском национальном контексте: пример Сирии» // Ближний Восток и современность, вып.17, М.2003, с.280

21 Powell Sara and Syed Rehana. A New Generation In Syria// **Washington Report on Middle East Affairs**, Apr2001, Vol. 20 Issue 3, p. 88.

22 Косач И.Г., «Сирия при новом президенте: тенденции политического развития», с.38 // Востоковедный сборник (вып.3), М., 2002.

23 Lancaster Pat, Syria looks forward// Middle East, Jul/Aug2000 Issue 301, p4.
24 Moubayed Sami, Syria's New President Bashar Al-Assad: A Modern-Day Attaturk // Washington Report on Middle East Affairs, Dec2000, Vol. 19 Issue 9, p.31
25 Ахмедов В.М., «Сирия на рубеже столетий. Власть и политика» М., 2003. с. 92
26 Այն իր մեջ է միավորել տարբեր կողմնորոշումներ ունեցող մարդկանց՝ մարքսիստներ. լիբերալներ. իսլամականներ. ազգայնական և չեզոք մտավորականներից
27 «On the civil socity and reform discussions in Syria»// Arabic News.com, 1/17/2001
28 Сирия: диссиденты выходят из подполья //MIGnews 5.01.2002 www.mignews.com
29 «Ազ-Հայաթ». 19, 14.01.2001.
30 Ахмедов В. «Сирия на рубеже столетий. Власть и политика», М., 2003. с. 92
31 Powell Sara and Syed Rehana, A New Generation In Syria// Washington Report on Middle East Affairs, Apr2001, Vol. 20 Issue 3, p.88.
32 Moubayed Sami Syria's New President Bashar Al-Assad: A Modern-Day Attaturk // Washington Report on Middle East Affairs, Dec2000, Vol. 19 Issue 9, p.31
33 The Middle East, N 306, November 2000, c. 39.
34 Agence France Press (AFP), 15.02.2001.
35 Ахмедов В.М. «Партия и власть в Сирии: эволюция отношений и перспективы взаимодействия в переходный период развития», с.350 // Ближний Восток и современность, вып.18, М., 2003
36 Ахмедов В.М., «Сирия на рубеже столетий. Власть и политика», М., 2003, с. 95
37 Шепиков В. Ф., «Ситуация в Сирии» // http://www.iimes.ru/rus/stat/2004/27-05-04.htm
38 « Коммерсант », 10.03.04
39 Powell Sara and Syed Rehana, A New Generation In Syria// Washington Report on Middle East Affairs, Apr2001, Vol. 20 Issue 3, p88
40 Ալավիականությունն իսլամական շիական կրոնական հոսանքներից մեկն է: 1963 թ.-ից սկսում է նկատվել ալավիական ծագում ունեցող գործիչների դերի բարձրացումը ՍԱՀ իշխանական վերնախավում, որը նախագահ Հաֆեզ ալ-Ասադի օրոք դարձավ որոշիչ:
41 Pryce-Jones David, The Middle East: Death of a Tyrant - Assad and the world he left //National Review, July 3, 2000
42 Эксперты о Хафезе Асаде, его сыне и судьбе Сирии// "Вести " http://vesti.ru/ daynews/2000/06/13/40assad/experts
43 Բաշար ալ-Ասադի նախագահի երդման ելույթը ըստ http://www.basharassad.org

ՏԱԹԵՎԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՔՐԴԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ (1920-30ԹԹ.)

Քրդական խնդիրը Թուրքիայում երբեք դուրս չի մնացել թե խորհրդային, թե արևմտաեվրոպական արևելագետների ուշադրությունից: Դրվել են բազմաթիվ աշխատություններ, մենագրություններ, որոնք անդրադարձել են քրդերի ծագման, պատմության ընթացքի, սոցիալ-քաղաքական վիճակի խնդիրներին: Սույն հոդվածում մենք փորձ ենք արել անդրադառնալ հանրապետական Թուրքիայում քրդերի սոցիալ-քաղաքական վիճակին անցյալ դարի 20-30-ական թվականներին:

Հանրապետական Թուրքիայի ազգային պետական քաղաքականության հիմքում լի սկզբանե դրվեց ազգայնականությունը: Մերժելով երկրում առկա ազգային փոքրամասնությունների, այդ թվում՝ քուրդ ազգաբնակչության գոյությունը՝ քեմալականները դրդեգրեցին պանթյուրքիստական հայտնի կարգախոսը. «վերափոխել բոլոր մահմեդականներին թուրքերի»[1]:

Այդ քաղաքականությունը փաստացի վավերացվեց 1920թ. հունվարի 28-ին կազմված «Ազգային ուխտում», հյսմածայն սրի (կետ 1-ին) «...Օսմանյան կայսրության այն հատվածը, որ մեծամասամբ բնակեցված է օսման-մահմեդականներով՝ միավորված կրոնական և ռասսայական հիմքով՝ մեկ ամբողջություն է, և նրա մասնատումը որևէ պատրվակով անհանդուրժելի է»[2]:

1920թ. Սևրի դաշնագրի կնքումից հետո, երբ ուրվագծվեց ապագա Քրդստան ստեղծելու հեռանկարը, Քեմալ Աթաթուրքը այն որակեց որպես «իմպերիալիստական» սադրանք. «Անգլիան ցանկանում է իր տիրապետության տակ ստեղծել քրդական պետություն և դրանով իսկ հանդես գալ հրամայողի դերում Թուրքիայի, Իրանի և Անդրկովկասի նկատմամբ...»[3]:

Ինչպես հայտնի է Սևրի դաշնագիրը առաջին պատմալրւսվական փաստաթուղթ է, որտեղ միջազգային իրավունքական մակարդակով քննարկվում է քրդական հարցը: Դաշնագրի երրորդ բաժինը ամբողջությամբ «Քրդստան» ստեղծելու վերաբերյալ է: Այստեղ մասնավորապես

կողմը գրավել: Առավելապես չահարկելով քրդերի կրոնական զգացմունքները, թուրքերին և քրդերին անվանելով «միասնական կրոնի զավակները», քեմալականները ամեն կերպ աշխատեցին հավատ ներշնչել քրդերին «նոր Թուրքիայի» սահմաններում նրանց իրավունքների հարգման և ազգային քաղաքական վիճակի լիարժեքության մասին:

Քաղաքական այս իրավիճակի ամենահետաքրքիր երևույթն այն էր, որ Թուրքիայի Ազգային Մեծ Ժողովն ընդունեց աննախադեպ, ինչպես նաև հետագայում նմանը չունցող նախագիծ՝ Թուրքայում քրդերի ինքնավարության վերաբերյալ:

1922թ. փետրվարի 11-ին ԹԱՄԺ-ը վավերացրեց հետևյալ 10 կետից բաղկացած այդ փաստաթուղթը.

1. Քուրդ ժողովրդի մշակութային զարգացմանը սատարելու համար Թուրքիայի Մեջլիսը քրդերին ինքնավարության իրավունք կտա, որը պետք է ներառի նրանց բոլոր իրավունքները և սովորույթները:

2. Որպես Գլխավոր նախարար (ինքնավար մարզի նահանգապետ) Մեջլիսը կընտրի այն անձին, որը հեղինակություն է վայելում քրդերի մոտ և երաշխավորված է նրանց կողմից:

3. Գլխավոր նախարար (ԳՆ) ընտրվում է երեք տարով: Սակայն քուրդ ազգաբնակչության մեծամասնության ցանկությամբ նրա իրվունքները կարող են դադարեցվել և Քրդական ազգային խորհրդարանի կողմից նոր ԳՆ-ը ընտրել:

4. ԳՆ-ին, ինչպես նաև նրա տեղակալին հաստատում է Անկարան:

5. Քրդական ազգային խորհրդարանը ընտրվում է Արևելյան վիլայեթների բնակչության կողմից՝ երեք տարի ժամկետով:

6. ԳՆ և Քրդական ազգային խորհրդարանի միջև վիճելի հարցերի առկայության դեպքում վճռական խոսքը պատկանում է ԹԱՄԺ-ին, և երկու կողմն էլ պարտավոր են ենթարկվել վերջինս որոշմանը:

7. Արևելյան վիլայեթների պաշտպանության համար կազմվում է ոստիկանություն՝ Քրդական ազգային խորհրդարանի որոշմամբ: Սակայն այդ մարմնի ղեկավարումն ու վերահսկումը որոշ ժամանակ լինելու է թուրքերի ձեռքում:

8. Քրդական ազգային խորհրդարանի, ինչպես նաև կառավարության գործավարությունը պետք է վարել թուրքերենով: Միաժամանակ իրավունք է տրվում դպրոցներում դասավանդել քրդերեն: Թեև այն պետական լեզու չէ, բայց և այնպես, կարելի է հարդրդակցվել:

9. Քրդական ազգային խորհրդարանը վերահսկում է Արևելյան վիլայեթների կարգուկանոնը:

10. Առանց ԳՆ-ի թույլատրության և հաստատման Քրդական ազգային խորհրդարանը իրավասու չէ տարաբնույթ գործողություններ իրականացնել:

Ինչականաբար այս նախագիծը այդպես էլ մնաց թղթի վրա և ամմիջապես չեզոքացվեց թուրքական հատուկ ծառայությունների կողմից: Այդուհանդերձ այն ունի կարևոր նշանակություն. նախ հաստատում է քրդական հիմնահարցի գոյությունը Թուրքիայում և երկրորդ՝ հնարավորություն է տալիս մեկ անգամ ևս ընդգծել Քեմալ Աթաթուրքի կողմից իրականացվող «երկակի ստանդարտի» քաղաքականության արդյունավետությունը:

Պետք է նշել, որ քեմալականների քաղաքականությունը՝ քարոզչությունը և խոստումները քրդերին, հատկապես Ազգային Ժողովի որոշ քուրդ պատգամավորներին, անպայմանը չմնացին:

Մուժերի նոր դասավորության պայմաններում, միջազգային մի շարք գործոնների ազդեցության տակ 1923թ. հուլիսի 23-ին ստորագրվեց Լոզանի պայմանագիրը, որը ի չիք դարձրեց քրդերի՝ անկախություն ստանալու բոլոր հույսերը: Եվ ահա, երբ Լոզանից հեռագիր ուղարկվում Թուրքիա՝ քրդերի ինքնավարության՝ Սևրի դաշնագրով նախատեսված պայմանները ճշտելու համար, ԹԱՄԺ-ի արտահերթ նիստում Էրզրումի քուրդ պատգամավորը հայտարարում է. «Այս երկիրը պատկանում միայն թուրքերին և քրդերին, ու այս ամբիոնից միայն երկու ժողովուրդի ներկայացուցիչ իրավունք ունի խոսելու՝ թուրքերը և քրդերը»:[8]

Այս ամենի հետևանքով Լոզանում Իսմեթ Ինենյուի գլխավորած պատվիրակությանը հաջողվում է «ազատվել» Սևրի դաշնագրի պահանջներից և սահմանափակվել միայն ազգային փոքրամասնությունների որոշ իրավունքներին վերաբերող պարտավորություններով, որոնց շարքին քրդերը որպես մահմեդական չէին դասվում[9]:

Լոզանի պայմանագրի ստորագրումից անմիջապես հետո թուրքական իշխանությունները կտրուկ փոխում են քրդերի հանդեպ իրականացվող քաղաքականությունը: Ի տարբերություն առաջինի՝ երկրորդ գումարման ԹԱՄԺ ոչ մի քուրդ պատգամավոր չի ընտրվում, իսկ նախկինները ձերբակալվում և հանձնվում են զինվորական դատարանին[10]: Թուրքիայի կողմից իրականացվող ազգայնական քաղաքականությունը և ազգային փոքրամասնությունների իրավունքների անտեսումը արձանագրվում է նաև Թուրքիայի Հանրապետության 1924թ. առաջին սահմանադրության մեջ:

«Թուրքիայի Հանրապետության բոլոր քաղաքացիները՝ անկախ կրոնական և ռասսայական պատկանելիությունից՝ թուրքեր են»:

«Անձի անձեռնմխելիությունը, խղճի, մտքի, խոսքի, տպագրության ազատությունն ու իրավունքը պատկանում են միայն թուրքերին»[11]:

Այդպիսի անհանդուրժողականությունն ազգային փոքրամասնությունների նկատմամբ վերածեց ազգային պետական զաղափարախոսության, որը և օգնեց Թուրքիային տարածաշրջանում ինքնահաստատվել և հետագայում հաջողությամբ խաղադրով համաշխարհային երկու

համակարգերի առճակատման վրա՝ ապահովել իր առաջխաղացումը: Չնայած քրդերը կազմում էին արևելյան վիլայեթների բնակչության մեծամասնությունը, այնուամենայնիվ, քրդական մշակույթն իր բոլոր դրսևորումներով արգելվեց: Քրդերը տեսականորեն համարվելով «թուրք» գրկվում էին ազգային, իսկ գործնականում՝ ընդունվելով որպես «քուրդ»՝ քաղաքացիական իրավունքներից: Այդ քաղաքականության իրականացման համակարգում մեծ թափ է ստանում թուրքական քարոզչական ապարատի գործունեությունը. պատմագրությունը, գրականությունը, զանգվածային լրատվամիջոցները, լծվում են քրդերի՝ թուրք-օղուգական արմատները «հայտնագործելու» առաքելությանը:

«Թուրքիայի արևելյան և հարավարևելյան Անատոլիայի շրջանում տեղ-տեղ կենտրոնացած, մեծամասամբ ցրված բնակվող քրդերը ծագումով պատկանում են թուրք օղուգներին»[11]:

«Թուրքիայի հանրապետության քրդերի մեծամասնությունը խոսում է թուրքերեն և ապրում ինչպես թուրքերը: Մենք՝ թուրքերս, նրանց չենք համարում այլ ազգության ներկայացուցիչներ: Քրդերը Առաջավոր Ասիայի տարածքում ապրող թուրքական ծագումով մի ժողովուրդ են»[12]:

1920-ական թթ. Թուրքիայում ձևավորվում են քրդական մի քանի կազմակերպություններ՝ Քրդստանի ազկախության կոմիտեն, Քրդստանի վերածննդի միությունը, Քրդական ազգային կուսակցությունը, Սոցիալական աջակցության քրդական միությունը[13] և ուրիշներ, որոնց անդամները հիմնականում քրդական մտավորականության և ավազանու ներկայացուցիչներ էին: Նրանցից ոմանք համագործակցում էին թուրքական իշխանությունների հետ՝ հավատալով «նոր Թուրքիայի» ստեղծման գործում քրդերի կարևոր դերակատարության մասին Աթաթուրքի տված խոստումներին: Միայն որոշ ժամանակ անց քրդերը սկսեցին գիտակցել, որ հայերին և հույներին կոտորելուց հետո թուրքական իշխանությունները հաշվեհարդար կտեսնեն նաև իրենց հետ՝ առանց հաշվի առնելու նրանց մահմեդականությունը և նախկին օժանդակությունները թուրքական պետությանը[14]:

Քեմալական Թուրքիայի՝ նմանատիպ քաղաքականությունը չէր կարող քուրդ ազգաբնակչության շրջանում չառաջացնել խռովություններ, որոնցից ամենազանգվածայինը 1925թ. Շեյխ Սայիդի ապստամբությունն էր: Այն բավականին ուսումնասիրված և վերլուծված է, ուստի նշենք միայն, որ թուրքական իշխանություններն ու մամուլը աղավաղեցին ապստամբության պատճառներն ու նպատակները՝ վարկարեկելով շարժման ղեկավարներին. «Սայիդը Շեյխի տեսքով, ժողովրդի կրոնական զգացմունքները օգտագործելու միջոցով հարստություն դիզած, ևս խիղճների և հոտերի տեր մի անճնավորություն էր, որ ոչխար էր բազմացնում և Սիրիայում վաճառում...Նրա կողմից գլխավորած ապստամբությունը (1925թ. փետրվարի 1-ից ապրիլի 15-ը) ծավալվել է Թուրքիայի

արևելյան շրջանի սի հատվածում... Շեյխ Սայիդը և էլի 47 մասնակիցներ արևելյան անկախ դատարանի կողմից դատապարտվեցին մահվան: Այդ իրականացվեց Դիարբեքիրում 1925թ. հունիսի 29-ին»[15]:

Ժամանակի հայ մտավորականությունը ևս մեծ չափով արձագանքել է ինչպես 1925թ. այնպես էլ հետագա քրդական ապստամբություններին՝ այտահայտելով իր օժանդակությունն ու համակրանքը քրդերի հակաթուրքական ազատագրական շարժումների նկատմամբ. «Քրտական այս մեծ ապստամբութիւնը, իր կազմակերպութեան ձեւերով, ղեկավարնեյու ընդգրկած նպատակներով եւ շարժման ընդհանուր թափով Քիւրտիստանի ազգային ազատագրական յեղափոխութիւն մրն էր, վեր բոլոր առարկութիւններէն»[16]:

Թուրքական պատմագիտությունը խեղաթյուրում է ևսն քրդական պատմության այս էջը՝ քուրդ ժողովրդի ազգային հետսին վարկաբեկելով և քրդական ազգային ազատագրական շարժման ամենակարևոր նրնութենլից մեկը որպես «հետադիմական. զուտ կրոնական և արտաքին ուժերի կողմից հրահրված»[17] այլակերպ: Այդուհանդերձ կցանկանանք ընդգծել, որ ապստամբության անհաջողության մատնվելու պատճառներից մեկն էլ թերևս քրդերի ազգային ինքնագիտակցության ցածր մակարդակն էր և քրդական ցեղերի ու աշիրեթների՝ միմյանց նկատմամբ թշնամանքի դրսևորումը[18]:

Ապստամբության ճնշումից հետո թուրքական իշխանությունները զանգվածային անողոք գործողություններ ծավալեցին քրդերի դեմ. «դատարանների որոշմամբ քրդերին կախաղան էին բարձրացնում, բանտ նստեցնում, աքսորում...»[19]: 1925-1926 թվականներին ավիրվում է շուրջ 206 գյուղ, այրվում 8758 տուն, սպանվում 150 հազարից ավել խաղաղ բնակիչներ՝ կանայք, ծերեր և երեխաներ[20]:

1927թ. հունիսի 10-ին ԹԱՄԺ-ը օրենք է ընդունում քրդերի՝ արևելյան վիլայեթներից արևմտյան շրջաններ տեղափոխելու վերաբերյալ. «վարչատարածքային, ռազմական և հասարակական նպատակներով կառավարությանը իրավունք է վերապահվում անհնազանդ ընտանիքներին տեղավոխել արևմտյան վիլայեթներ»[21]: Այդ քաղաքականության հետևանքով 1927-1928թթ. արևմուտք է տեղահանվում մոտ մեկ միլիոն քուրդ, սակայն, բնականաբար, բոլորը չէ, որ անհնազանդ և իռավարարներ էին:

1925-1938թթ. քրդական ընդվզումներն ու իռովությունները Թուրքիայում շարունակական բնույթ էին կրում: Հիշատակության է արժանի Արարատի ապստամբությանը: Այն 1927թ. կազմակերպվել և գլխավորվել է «Խոյբուն»[22] կոմիտեի կողմից: Դադափարախոսական և կազմակերպչական մի շարք թերություններով հանդերձ «Խոյբունը» քաղաքական կուսակցություն էր՝ իր ծրագրով և կանոնակարգով, որի գլխավոր նպա-

տակը «քուրդ ժողովրդի ազատագրումն էր թուրքական լծից և անկախ Քրդստանի ստեղծումը»[23]:

«Խոյբուն» գործունեությանը սատարում էր նաև արդեն սփյուռքում գործող Հայ Յեղափոխական Դաշնակցությունը, որը ջանում էր համախմբել քրդական ցեղերն ու աշիրեթները՝ նրանց մեջ զարգացնելով ազգային ինքնագիտակցության գաղափարը: «Խոյբուն-Դաշնակցություն» համագործակցության արդյունքում «Խոյբուն» կանոնադրության մեջ մտցվում է հայերի հետ համագործակցության վերաբերյալ ստանձին կետ[24]: Այդուհանդերձ, այս համագործակցությունը երկուստեք վտխշահավետ էր. Դաշնակցությունը ուներ հեռահար նպատակներ և դեռևս ուղիներ էր որոնում Հայաստանում իշխանությունը վերականգնելու համար: Քրդերի դեպքում խնդիրը փոքր-ինչ այլ էր. «Չկար ոչ մի կազմակերպություն ոչ մի երկրից, որը օգնություն ցույց տար Խոյբունին, նրա նկատմամբ բարեկամություն դրսևորեր: Հաշվի առնելով այդ, քրդերը նպատակահարմար գտան բարեկամանալ հայերի հետ»[25]:

Կողմերը համաձայնության էին եկել, որ Քրդստանի և Հայաստանի սահմանների հարցը կլուծեն քրդական և հայկական ապագա կառավարությունները: Նշվում էր նաև, որ կապը Խոյբունի և Արարատի ապստամբների միջև ևս իրականացրել են դաշնակցականները: 1928-1930թթ. փաստորեն բոլոր հյուսիս-արևելյան վիլայեթները գտնվում էին ապստամբների վերահսկողության տակ: Թուրքական իշխանությունները ստիպված էին կենտրոնացնել ռազմական մեծ ուժեր՝ այն ճնշելու համար[26]:

1930թ. հուլիսին ռազմական գործողությունները ավարտվեցին կառավարության լիակատար հաղթանակով: Ապստամբության հաջորդեցին քրդերի զանգվածային բնաջնջումներ, այրվեցին գյուղեր, մահվան դատապարտվեցին հազարավոր քրդեր[27]:

Ամփոփելով ասեք, որ Արարատի ապստամբությունը, թեև վերջնական հաղթանակի չհասավ, այնուամենայնիվ ավելի կազմակերպված բնույթ ուներ և ապացուցում էր, որ քրդական շարժումները զուտ ազատագրական էին և «ոչ մեկ օտար պետության հովանավորությունը կը վայելէն»[28]: Այդ ապստամբությունը նաև հայ-քրդական համագործակցության ամենահետաքրքիր դրսևորումներից մեկ է:

Անդրադառնալով քրդերի տնտեսական վիճակին՝ հարկ է նշել ակնհայտ այն իրողությունը, որ թուրքական իշխանությունները արտահայտված խտրական քաղաքականություն էին վարում քրդաբնակ շրջանների նկատմամբ: Չնայած այս վիլայեթների թույլ զարգացած վիճակին՝ կառավարությունը, որպես կանոն, այստեղ ֆինանսական ներդրումներ չէր կատարում, մինչդեռ առավելապես թուրքաբնակ շրջանները հատուկ ուշադրության էին արժանանում. և՛ ճանապարհաշինության, և՛ կրթության, և՛ պետական զարգացման ծրագրերի միջև առկա էր տսլրբե-

յություն քրդաբնակ և թուրքաբնակ վիլայեթների միջև[29]: Սա, ինչ խոսք հատուկ մշակված տնտեսական քաղաքականության հետևանք էր:

1920-30-ական թվականները թուրքական կառավարության դեմ քրդական ազատագրական շարժումների տարիներ էին: Ու թեև թուրքական իշխանությունները դաժանորեն ճնշեցին այդ շարժումները, նրանց չհաջողվեց ազատվել քրդական հիմնահարցից: Այն շարունակում է գոյատևել և այսօր էլ հանդիսանում է Թուրքիայի ներքաղաքական անկայունության կարևոր գործոններից մեկը:

TATEVIK MANUKYAN

THE SOCIAL-POLITICAL CONDITIONS OF KURDS IN TURKEY (1920-1930s)

The events of 1920-1930's are the most remarkable in Kurd's history. For the first time during the history of Kurds after the seal of Severe's convention it became touchable for the Kurds the perspective of the creation of independent Kurdistan. However because of Kurds own mistakes and with the influence of external factors the Kurdish question in Lozano's (Lasagna's) conference stayed out of the day program of International Diplomacy. We would like to accent also that due to Turkey's carried out double standard effective policy Turkey succeeded in even though temporally solving the Kurdish problem.

ՃԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Аванесов С.С. "Положение национальных меньшинств в Турциии", Ереван, 1963, с. 49.
2. Beşikçi I.,Kürdistan üzerinde emperiyalist bölüşüm mücadelisi,1915-1925,cilt 1, Ankara, 1992,s. 396
3. Аралов С.И. "Воспоминания советского дипломата", М.1960, с.107.
4. Ключников Ю.В. "Мирные договоры империалистической войны", отдел III, "Курдистан", М. 1925, с. 122.
5. Ռայբուրդյան Վ., Հայ-քրդական հարաբերությունները Հայաստանի առաջին հանրապետության գոյության տարիների, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ.XX, Երևան 2001,էջ 36.
6. Büyük lugat ve ansiklopedi, S. Kılıclıoglu, N. Araz, H. Devrim, eilt XI, Istanbul, 1985
7. Ш.Х. Мгои, Севр-Лозанна и проблемы национального самоопределения курдов, "Курдский альманах", М. 2001, с. 20-21.
8. Курдское движение в новое и новейшее время, М. 1987, с. 99.
9. Ключников Ю.В. "Мирные договоры империалистической войны", отдел VI, М. 1925, с. 151-152.
10. Гасратян М.А. Курды Турции в новейшее время, Ереван 1990, с. 55.

11. Türkiye ansiklopedisi, M.E. Üzümeri, S.Dinçer, S. Kazancı. cilt- III„ Ankara 1956, s. 512
12. Büyük luğat ve ansiklopedi, S. Kılıclıoğlu, N. Araz, H. Devrim, cilt VIII, Istanbul, 1985, s.735.
13. McDowall D., A Modern history of the kurds, London- NewYork, 2000
14. Բայբուրդյան Վ., XX դարի 20-30-ական թվականների քրդական ապստամբությունները և թուրք-իրանական հարաբերությունները, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ.XXI, Երևան 2002,էջ 9.
15. Büyük luğat ve ansiklopedi, S. Kılıclıoğlu, N. Araz, H. Devrim, cilt XI, Istanbul, 1985, s.772.
16. Սասունի Կ. Քիւրտ ազգային շարժումները և հայ-քրտական յարաբերութիւնները, Պէյրութ, 1969, էջ 251
17. Büyük luğat ve ansiklopedi, S. Kılıclıoğlu, N. Araz, H. Devrim, cilt XI, Istanbul, 1985, s.772
18. Ապստամբությանը, չնայած իր ընդգրկած մասշտաբներին, չէին մասնակցում մի շարք ազդեցիկ քուրդ ցեղապետեր՝ Իսմայել Աղա Սիմկոն, շեյխ Սահմուդը և ուրիշներ, չէին մասնակցում նաև որոշ ցեղեր, մասնավորապես՝ լոլան, խորմեկ և Դերսիմի քրդերը, որոնք չէին հավատում ապստամբության հաղթանակին և օժանդակում էին թուրքական իշխանություններին: Կարևոր դեր էր խաղում և քրդական ցեղերի կրոնական տարբերությունները:
19. Armstrong H.C.,Grey Wolf, Mustafa Kemal, London,1934, p.26
20. Гасратян М.А., Курдская проблема в Турции (1925-1939гг.), Специальный бюллетень но. 6, М.,1975, с.52, տե՛ս նաև Rambout L., Les Kurds et le droit, Paris,1947, p.28.
21. Гасратян М.А. Курды Турции в новейшее врамя,, Ереван 1990, с. 128
22. 1927թ. գարնանը Սիրիայում և Լիբանանում գումարված քրդական կազմակերպությունների համագումարում ստեղծվում է «Խոյբուն» («անկախություն» կամ, այլ տեսակետի համաձայն՝ «լինել ինչպես կաս») անվամբ Քրդական ազգային կոմիտեն: Մշակվում է վերջինիս գործունեության ծրագիրը և կանոնադրությունը: «Խոյբունի» նախաձեռնությամբ ապստամբությունը կազմակերպվում է Արարատի ստորոտում: Այն գլխավորում էին Իբրահիմ Հսգե Թելլի փաշան, Իհսան Նուրի փաշան և Զիլան բեյը, որն ըստ Կ.Սասունու խնուսցի Արտաշես Մուրադյանն էր, որ ներկայացնում էր հայկական թևը:
23. Никитин В., Курды, М.,1964, с. 294.
24. Բայբուրդյան Վ., նշվ. աշխ., էջ 14.
25. Гасратян М.А. Курды Турции в новейшее врамя,, Ереван 1990, с. 154, տե՛ս նաև Silopi Z., Doza Kurdistan, 1969
26. История Курдистана, М.,1999, с. 283-284
27. Jwaideh W., Kürt Milliyetçiliğinin tarihi, Istanbul, 1999, s. 412

28. Սասունի Կ. Քիւրտ ազգային շարժումները և հայ-քրտական յարաբերութիւնները, Պէյրութ, 1969, էջ 295:
29. Արևելյան վիլայեթների տնտեսական վիճակի մասին առավել մանրամասն տես Դալուստյան Հ., Հանրապետական Թուրքիայի կառավարության քաղաքականությունը Արևելյան վիլայեթներում (1920-1960-ական թվականներ), Երևան, 1999:

ՍԱՄՎԵԼ ՄՈՒՐԱԴՅԱՆ

ԷՋԵՐ Հ.ՏԵՐ-ԱՍՏՎԱԾԱՏՐՅԱՆՑԻ «ԱՂԷՏՆԵՐԻ ՅՈՒԾԱԳԻՐԸ» ՆՈՐԱՀԱՅՏ ՕՐԱԳՐԻՑ (1918թ.)

Ակադ. Մկրտիչ Ներսիսյանի (1909-1999թթ.) արխիվի նախնական մշակման ընթացքում երևան է եկել «Աղէտների յուշագիրը. 1918թ.» խորագիրը կրող ձեռագիր մի ծավալուն օրագրություն (243 մեծաղիր էջ), որի հեղինակն է Հ.Տեր-Աստվածատրյանցը: Կազմի վրա տպագրի նմանեցվող խոշոր տառերով գրված է. «Ողջի՛ր Հայկայ, մենք կենաքի քառցրութիւնը չտեսանք, գոնէ դուք տեսէք, որ մեր ոսկորները հանգստանան գերեզմաններում: ՀաՏէրԱս: 1/I 1918թ. ԹԻՖԼԻՍ»: Հեղինակի այս ձեռագիր աշխատությունը կատարելապես անծանոթ է հայագիտությանը: Օրագրության առաջին էջի վերին լուսանցի աջ եզրին կա այլ թանաքով ու գրչությամբ կատարված համարակալում՝ 273, և էջերի թիվ՝ 1-243: Ի հաստատումն հիշյալ թվերի ստուգության դրված է հստակորեն կարդացվող կնիք՝ «Խ.Ս.Հ.Մ. գիտությունների ակադեմիայի Հայկական [ֆիլիալ]: Армянский филиал Академии Наук [СССР]. Պատմության յեվ նյութական Կուլտ. ինստիտուտ. Институт истории и материальной культ.»: Հետևաբար՝ ձեռագիրն իբրև արխիվային միավոր պատկանել է ԱրմՖԱՆ-ի (Գիտությունների ակադեմիայի Հայկական մասնաճյուղի) Պատմության և նյութական մշակույթի ինստիտուտին: Սկսած Մ.Գ.Ներսիսյանը 1937-41 թվականներին եղել է այդ ինստիտուտի գիտաշխատող, ապա և տնօրեն: Պիտի ենթադրել, թե նա մտադրություն է ունեցել եթե ոչ ամբողջապես հրատարակել նոր ժամանակների պատմության այս կարևոր աղբյուրը, ապա գոնե նրանից քաղումներ կատարել 1918թ. իրադարձություններին անդրադառնալիս: Կարծում ենք, սակայն խորհրդային տարիներին ամբողջական հրատարակություն կատարելը գործնականորեն անկարելի էր, քանի որ օրագրական գրառումներում պաշտոնական պատմագրությանը հակասող, հաճախ նույնիսկ բոլշևիկների վարած քաղաքականությունը ուղղամտորեն քննադատող էջեր կան, գաղափարական ակնառու հակադրումներ: Այս իրողությունը թույլ է տալիս վարկած առաջադրել, թե գուցե ինստիտուտի տնօրեն Մ.Գ.Ներսիսյանը պարզապես արխիվի հերթական «զտումից» փրկերո

համար «Աղետների յուշագիրը» վերցրել է և «մոռացության տվել»: Այստեղ ևկատառելի է երկու պարագա ևս. ինչպես տեղեկանում ենք գիտնականի մի հարցազրույցից, 1930-40-ական թվականներին ևս քանիցս գաղտփարկական քննադատության և նույնիսկ ամբաստանության է ենթարկվել. հետևաբար այս ընագրի հրատարակությունը վստահաբար կծանրացներ նրա վիճակը, և ապա՝ 30-ական թվականների վերջերից ևս ղալարեց զբաղվել Դաշնակցության կուսակցության պատմության հետ կապված հարցերով: «Ինձ համար պարզ դուրծավ, որ հնարավոր չէր ճշմարիտ խոսք ասել այդ կուսակցության մասին: Սկսեցի զբաղվել հայ ժողովրդի XVIII և XIX դարերի պատմության հարցերով» (տես «Ակադեմիկոս Սկրտիչ Ներսիսյան», Երևան, 2004, էջ 10-11):

Հ.Տեր-Աստվածատրյանցի օրագրությունները վերաբերում են 1918 հունվարի 1-ից մինչև հունիսի 20 կատարված իրադրություններին, հավասարապես առնչվելով այդ շրջանում հայոց միջավայրում գործող բոլոր կուսակցություններին, և առաջին հերթին, բնականաբար, դաշնակցություններին: Ինչևէ, փաստն այն է, որ աշխատությունը պահպանվել է և նրանում գրառված տեղեկությունները կարևոր լրացումներ են կատարում 1918թ. առաջին կեսի բարդ ու բազմաշերտ իրադարձությունների գնահատության խնդրում: Հեղինակը գրառումներ կատարելիս և անցուդարձը վերլուծելիս չի գոհանում պաշտոնական շրջանների (Անդրկովկասի Սեյմի և նրանում ներկայացված կուսակցությունների) տված տեղեկություններով ու գնահատություններով: Նա կարողանում է տեղեկանալ ստացվող հեռագրական նյութերին, ճանաչել Սեյմում ներկայացված էթնիկական ու կուսակցական խմբավորումների շահագրգռությունները, դիտարկել դրանք հայոց ազգային խնդիրների տեսանկյունից: Օր-օրի կատարվող դեպքերին հետևելիս, բնականաբար, գրառողը զերծ չէր կուլող մնալ քաղաքում (Թիֆլիսում) շրջահառող լուրերի ազդեցությունից, իբրև անհատ արծագանքում էր դրանց՝ ներկայացնելով կենդանի առօրյա իրողությունը: Նա հնարավորություն չունի լրացուցիչ ստուգումների ենթարկելու արծագանգրվող անցքը. ուստի նրա ոչ բոլոր գրառումներն են հավասարապես փաստական, բայց որ գործ ունենք լայն իմացությունների ու ազգային ազնիվ մղումներ ունեցող հմուտ մի հեղինակի հետ՝ անվերապահ է:

«Աղետների յուշագրի» հեղինակի մասին մեր ունեցած տեղեկությունները խիստ սահմանափակ են, բացառապես քաղված նրա օրագրության էջերում եղած ոչ ուղղակի վկայություններից: Հայտ ունենք, թե Երևանի և Թիֆլիսի արխիվներում կարելի պիտի լինի ի հայտ բերել նրա կյանքին ու գործունեությանը վերաբերող նոր նյութեր:

Այստեղ ի ծանոթություն ընթերցողին է առաջարկվում մեր կողմից տպագրության պատրաստվող ընագրից մի քանի էջ՝ մսըլտի 1-6 եղած օրագրությունները, ուր ներկայացվում են Էրզրումը թուրքերին հանձնե-

յու պալագաները, ինչպես նաև դրվագներ Սեյմի ներկայացուցիչների եւ թուրք պատվիրակների միջև սկսված բանակցությունների նախնական ընթացքից:

Հաճելի պարտք ենք համարում շնորհակալություն հայտնել տիկին Նաուեե Դելոյսնին՝ Մ.Գ.Ներսիսյանի արխիվում պահպանված այս քնագիրը մեզ ի հրատարակություն տրամադրելու համար:

«ԱՂԷՏՆԵՐԻ ՅՈՒԾԱԳԻՐԸ. 1918»

1 մարտի

Սարիղամիշից գեն. Օդիշելիձէն հեռագրում է, որ փետրուարի 27-ին, ցեղեկուայ ժամը 12-ին տաճիկները գրաւել են Էրգրումը: Եղել է թեթև կռիւ, վիրաւորուած է գնդապետ Թորգոմը, մեր կողմից կորուստ եղել է 200 վնասուածներ (*):

- Թիֆլիսի Սօցիալիստ-յեղափոխականների Կեդրոնական կոմիտէն յայտարարել էր չենթարկուել Ազգային խորհրդի կոդմից յայտարարուած զօրակոչին, սակայն դրա դէմ բողոքել են Ախալցխայի հայ սօցիալիստ յեղափոխականները: Ասում են, որ Սօցիալ-յեղավոխականների շրջանային կոմիտէն ուղղել է արդէն իր այդ սխալ քայլը:

Հաշտարար պատուիրակութիւնը. - Տաճկական պատուիրակութիւնը Ծէվկէտ նաւով 27-ին փետրուարի հասել է Տրապիզոն, բաղկացած 5 հոգուց, նախագահութեամբ ծովային գնդապետ Ռայիխ բէյի: Մեր պատուիրակութեան քարտուղարը ողջունել է նրանց նաւի վրայ, որից յետոյ տաճկական մի պատուիրակ եկել է մերոնց մօտ՝ պայմանաւորուելու տեսակցութեան տեղի և ժամի մասին: Նախնական մի քանի հարցեր պարզելու համար Ռայիխ բէյը և Չխէնկելին տեսնուել են մի տան մէջ, որը յատկացուած էր ժողովի համար: Որովհետև մերոնց յայտնի չէ տաճկական կառավարութեան պատասխանը վերջին հեռագրին՝ մեր շրջանների մէջ էվակուացիայի մասին, ուստի Չխէնկելին պատուիրակութեան նախագահին հարց է առել, թէ յայտնի՞ է արդեօք նրան տաճկական գեներալիսիմուսի առաջարկը և ընդունո՞ւմ է նախագահը այդ առաջարկութիւնը, իբրև ոչ ցանկութիւն Օտտոմանեան կառավարութեան՝ շարունակել հաշտութեան բանակցութիւնները, նախագահը պատասխանել է, որ ինքն այդ առաջարկի մասին ոչինչ չը գիտէ և խնդրում է Չխէնկելու հարցը գրաւոր կերպով ներկայացնել: Տաճիկներն իրենց պատասխանի համար ժամանակ են խնդրել և յայտնել են, որ իրենց նպատակն է հաստատուն հաշտութիւն կնքել: 28 փետր. մեր պատուիրակութիւնը ափ է դուրս գալիս հաշտութեան բանակցութիւնների համար:

- *Դերմանացիք* գրաւել են Պետրոգրադը, բոլշևիկները Մոսկուա են տեղափոխուել:

- *Անգլիացիք.* - Այսօր քաղաքումս լուրեր են պտտում, որ անգլիացիները զինուած ընդհարումներ են ունեցել Թեհրանում և Թաւրիզում պարսկական զօրքերի հետ և իբր թէ գրաւել են այդ քաղաքները: Ինձ ասյգ ըսրը հաղորդողն է Թիֆլիսի հեռագրատան ծառայողներից մի հայ ծառայող:

- Լ.ոյս տեսաւ «Կարմիր օրեր» թերթի N 2-ը:

- Այսօր, Թիֆլիսի ժողովսրանի տարեկան ժոլովին ես ընտրուեցայ առաջ: Ժողովն ընդունեց միաձայն իմ առաջարկը՝ գումարել մօտակայում առաձին ժոլով և քննել Թիֆլիսի ժողովարանը «Հայկական Ակումբ» անուսնելու հարցը: Իր 28000ռ. գուտ աղղիւնքից 15000ռ. յստկացրեց Ազգային խորհրդին:

Էրզրումի առման մանրամասները. - Սէյմի նախագահը 28 փետր. սսացել է հետևեալ հեռագիրը՝ «Հաղորդում եմ գեներալ Վըլիչինսկու 27 վետրուարի ուուսօ N 498 հեռագրի պատճէնը. ի տեղեկութիւն գնդապետ Չիճկինիչը Հասան-Ղալայից հաղորդում է, որ այսօր փետրուարի 27-ին լոյս ծագելիս Էրզրումի բեղդագնդի (гарнизон) մասերը, իրենց գլուխ ունենալով Առաջին հայկական գունդը, սկսեցին թողնել քաղաքը և հեռանալ: Թիւրքերը առաւօտուանից սկսեցին յարձակուել Խաբբերդի, Տրապիզոնի և Օլթու կողմի արտաքին ամրութիւններից (равелины) և 7 ժամին առաւօտեան Տրապիզոնեան ամրութիւնը գրաւուած էր նրանց կողմից, չը նայած կապիտան Ստօյակինի գլխաւորութեամբ անձնուեր կերպով մի քանի գինուորների կողմից եղած պաշտպանման և բերդի արտիլերիայի սպայի: Սորանից յետոյ սկսուեց ամբողջ բեղդապահ զօրքի տարերային նահանջը, որոնք հաւաքուեցան Հասան-Ղալէում: Կոմանդիրը Հասան-Ղալա և Խնուս տուել է հետևեալ հրամանը. «Հասան-Ղալա. գեն. Անդրանիկին, Խնուս՝ գնդապետ Օսիպովին. Հրամայում եմ գեն. Անդրանիկին Էրզրումի զօրամասը (отряд) ժողովել Հասան-Ղալէ և ձեռք առնել բոլոր միջոցներ հանգստացնել և կարգի բերել: Էրզրումի զօրամասին՝ որքան կարելի է երկար դիմամանալ Հասան-Ղալէի շրջանում, որպեսզի ապահովեն Խնուսի զօրամասի նահանջը դէպի Քէֆրիքեօյ: Գնդապետ Օսիպովին հրամայում եմ իր զօրամասով հիմիկուանից սկսել հետզհետէ նահանջել դէպի Քէֆրիքեօյ: Հէնց որ Խնուսի զօրամասը կը գայ այդտեղ, ամբողջովին մտնել գեն. Անդրանիկի հրամանատարութեան ներքոյ: Կարմունջի զօրամասին հրամայում եմ հետզհետէ նահանջել դէպի Ղարաքիլիսա: 27 փետրուարի, 16 ժամ. 30 ր. (երեկոյեան 4ժ. 30ր.): Օդիշելիձէ:

Որովհետև ոչ մի յարաբերութիւն չունեմ Վանի հետ, խնդրում եմ, զօրքի հրամանատարի հրամանով, ձեր կարգադրութիւնը Վանի զօրամասի վերաբերեալ կարգադրութիւններ անելու և նրանց յայտնել համապատասխան ցիտողութիւններ: 27 փետր. Վըլիչինսկիյ»:

- 25 և 26 [փետրուարի] Էրզրումի շրջանում մեր առաջագնաց գնդերը Ալիլջայի և Թանիա-Դարւսսու ուղղութեամբ հանդիպելով թիւրքական կազմակերպ զօրամասերին, թնդանօթներով, գնդացիրներով և հեծեալ գնդով կատաղի ետ քաշուեցան դէպի Էրզրումի ամրութիւնները, կորցնելով 10 սպաներուած և 180 վիրաւոր և անյայտ կորած 50 մարդ, կանտուգիայի է ենթարկուած ենթգնդապետ Թորգոմը և ծանր վիրաւորուած է Տէր Դանիէլեան: Խնուսի կողմեր, Խնուսից դէպի հիւսիս Մանջիլդի գիւղն մօտ քշել են քրդերին: Քելլիի շրջանում (Խնուսից հարաւ) նոյնպէս քրդեր են երևան հանուած: Ճարբերդի կողմեր քրդերին քշել են, իսկ Ախլաթի մօտերք ունեցել են ընդհարումներ մեր առաջխաղաց գնդերը:

- Պաշտօնական յայտարարութիւնից երևում է, որ մերոնք Էրզրումում շատ բան չեն կարողացել ոչնչացնել և թողել են թէ ռազմամթերք և թէ պարենաւորում: Մեր կորուստները են 200-ից աւելի սպաներուած և վիրաւոր, և մօտ քսան սպայ, որոնք անհետք կորել են:

- Վրացիք գինւում են և ճանապարհում Բաթումը պաշտպանելու և ամբողջ Գուրիան ստիլ է կանգնել:

Խորհրդածութիւններ 1. Անդրկովկասեան կառավարութիւնը շարունակ խանգարում էր մեր Ազգային խորհրդին իր ժամանակին զօրահաւաք անել. Ազգային խորհուրդը յայտարարեց զօրահաւաք 19-32 տարեկանների, իսկ Անդրկովկ. կառավարութիւնը՝ մինչև 25 տարեկանները: Այսպիսով, ի հարկէ հնար չեղաւ ժամանակին ամբացնել ռազմաբեմը: Սրա պատճառն այն է, որ տեղական կառավարութեան վրացի անդամները միամտաբար ասեմ թէ յիմարաբար (ըստ վրացական սովորութեան) լսեցին թուղթ-թաթաը անդամներին և գործը փչացրին: Դէ սիրելիք, մահմեդականը մահմեդական է, և նա պարզ աշխատում է իր հաւատակցի համար ... 2. Խանգարիչների դերումն էին նաև մենշևիկները, որոնք սպառնում էին դուրս գալ Ազգային խորհրդի կազմից, և թաղեցին գործը: 3. Հայ սօցիալ-յեղափոխականները հօ պռոնիկի դերի մէջ մտան և ափաշկարայ կոչ արեցին չը հնազանդուել Հայոց Ազգային խորհրդի զօրակոչին և դասալիք զինուորների պաշտպան կանգնեցին: 4. Գեներալ Օդիշելիձէն, որ Էրզրումի շրջանի հրամանատրն է, անժամանակ, *ինչ-ինչ դիտումներով* թողեց Էրզրումը և իր կայանը փոխադրեց Սարիղամիշ: Սա էլ պօլիտիկա՞ է թէ ոչ: 5. Անդրանիկը շարունակ զօրք էր խնդրում, սակայն նրան լսող չեղաւ, և նրա խնդիրը չը կատարուեց: Այսպէս, ահա, դևերը միաբանուեցան, որ միահամուռ ուժերով կործանեն հայկական գործը:

Մէյմ. Նիստ 26 փետրուարի նուիրուած էր Վեհիք - փաշայի առաջարկին՝ դադարկել Բաթում, Կարս և Արդահան: *Գէգէկօրին* և գլխաւոր հրամանատար գեն. *Լեբեդինսկին* հաղորդեցին մանրամասնութիւնները, որ մեր պատուիրակութիւնը հասել է Տրապիզոն, իսկ Թիւրքիոյ պատուիրակութիւնը չի եկել, իսկ վերջինս էլ, որ Թիւրքիան ամրացնում է Տրապի-

զոնի շրջանը Եւրոպայից վտխաղրած զօրքերով, և սկսուեց հարցի քննութիւնը. առաջին ճառախօս մենշևիկ *Ժորդանիան* առաջարկեց, որ պէտք է կնքել պատուաւոր հաշտութիւն և հայրենիքի պաշտպանութեան համար պէտք է ամբողջ ոյևմոկրատիան զէնքի դիմի և որ գլխաւորը է՝ պահել այն, ինչ որ տուել է յեղափոխութիւնը: «Մուսաւաթի» կողմից *Խան-Խօյիսկին* մահմեդական սովորական խորամանկութեամբ առաջարկում է այդ հարցը քննել այն ժամանակ, երբ դա կարևոր կը լինի հաշտութիւնը չը գլուխ գալու պատճառով: Ուրեմն՝ սա ուզում է կովկասեան ազգերին քնացնել, որ թիւրքերը նեղս գան ազատ կերպով: *Շահխաթունին* դաշնակցութեան կողմից յայտնում է հայերի պատրաստակամութեան մասին տալ գոհեր հայրենիքի պաշտպանութեան համար: Սօցիալ-յեղափոխական *Լօռդկիպանիձէն* և կադէտ *Իւ. Սմմեօնովը* կանգնած են Ժորդանիայի տեսակետի վրայ, և Սէյմը ընդունում է քաղաճև, որով կառավարութեան արած քայլերին տալիս է իր հաւանութիւնը:

27-ին վերտրուաղի եղած պատմական նիստ՝ նուիրուած յեղափոխութեան տարեդարձին, որը շատ կարճ էր, և ճառ խօսեց միայն Սէյմի նախագահ Ն. Ս. Չխէիձէն: Նիստից յետոյ պալատի առջև տեղի ունեցաւ միտինգ, որտեղ խօսեցին Չխէիձէն, Գէգէչկօրին, Մեսխիևը, Իս. Րամիշվիլին, Արզումանեանը, ժուռնալիստ Վօյնտինսկին և ուրիշները:

2 մարտի

Սէյմ. 28/II դաշնակց. Համաստիւռ մտցրել է հարց Գանձակի մասին, որ հայերը և թուրքերը կդգիացել են վերջնականապէս և կարող է սարսափելի վախճան առաջանալ, որի համար ընդունում է առանձին պատգամաւորութիւն:

Առայժմ Սէյմում կան 24 վրացի, 28 հայ, 37 մահմեդական, 4 ռուս, 1 գերմանացի. 1 օս, 1 լեզգին, 1 քուրդ և 2 թաթար պատգամաւորներ, որոնցից 16 փաստաբան, 17 ժուռնալիստ, 8 ինժեներ, 16 մանկավարժ, 6 բժիշկ, 3 զինուորական, 1 կօնտորշչիկ, 1 առևտրական, 3 բանուոր, 9 մունիցիպալական գործիչներ, 9 ուսանող, 1 գրսկանագէտ, 1 ագրոնոմ, 1 երկրաչափ, 1 հաշուապահ, 1 քիմիկոս և 2 հրապարակախօս: Սորանցից 62 բարձրագոյն կրթութեամբ, 28՝ միջնակարգ (որոնց թում և ուսանողները 9 հ.), 8 ստորին և 1 ընտանեկան կրթութեամբ, իսկ 1-ը անգրագէտ:

Էրզրումի առման մասին գեն. Օչիշելիձէից ստացուած է գրութիւն՝ ողարկուած 27 փետր. և ստացուած մարտի 1-ին. «Գեն. Անդրանիկի շտաբի կառավարիչ գնդապետ Չինկինիչը 27 փետր. 22 ժամին Քեֆրիքեօյից ապպարատով զեկուցեց հետևեալ մանրամասնութիւնները մեր զօրքերի Էրզրումը թողնելու մասին. «Ախ ռազմական հրամանները չը կատարելու պատճառով (քաց է թողած) ... և երկրորդ, Էրզրումից հեռանալը տեղի ունեցաւ այն պատճառով, որ հայկական զօրամասերում, ո-

րանք կազմուած էին ռուսահայերից, նկատելի էր ցանկութիւն տուն վերադառնալու, իսկ թուրքահայերի զօրամասերում՝ գլխովին դեզօրգանիզացիա, որովհետև պակասում էին սպաներ և ենթասպաներ և մանաւանդ որ այդ մասերը ռազմական պատրաստութիւն չունէին: Ամբողջ հետևակ զօրքը, որ Էրզրումում բաղկացած էր 3000 հոգուց, մի ամբոխի փոխուեց: Զինուորները նստում են գնացքների մէջ, բաց պլատֆորմների վրայ և ճանապարհում դէպի Սարիղամիշ: Սպաները մեծ մասամբ մնացին Հասան-կալէում: Զօրամասի վստահելի մասն են կազմում միայն Մուրադի և Սեսպուհի ձիաւոր զօրամասերը, որոնց հրամայուած է պաշտպանել ճահանջը և որը կը շարժուի դէպի ետ ռազմական կարգով: Այդ զօրամասն ունի 6 լեռնաթնդանօթ: Հասան-կադէն թալանուած է և այրուում է: Այդ բոլորն այնքան արագ է կատարուել, որ մօտ 20 արտիլերիստ սպաներ մնացել են Էրզրումում, և Չէնկլիչը համոզուած է, որ չեն փչացրած այն բոլոր արտիլերիան, որոնց համար հրաման էր տուած ոչնչացնելու: Դուրս է բերուած 4 լեռնաթնդանօթի կողպէքներն ու պանօրամները, արտիլերիական պահեստում մի պայթուցիչ ական է դրուած, որը պէտք է պայթէր 27-ի 11 1/2 ժամին Ախալիէ կոչուած ամրութեան վրայ: Տրապիզոնեան դրան մօտ եղած պարենաւորման մեծ պահեստը մնաց անվնաս: Ցիտադելի գլխաւոր արտիլերիական պահեստը պայթուցուեց Էրզրում մնացած սպաների խնդրով: Էրզրումի վրայ յարձակուող զօրքերի քանակը Չենկլիչը որոշում է՝ կանոնաւոր հետևակ զօրք 3000 մարդ 4 թնդանօթով և 4 գնդացիրով, 1 հեծելազօր գունդ, 3 էսկադրոն խառն զօրամաս և 1 օդանաւ: Մեր կորուստները մօտաւոր հաշուով աւելի քան 200 մարդ սպանուած և վիրաւոր: Գեն. Անդրանիկը իր շտաբով անցաւ Քէֆրի-քեօյ՝ հաւատ չունենալով Հասան-Ղալայի պաշտպանութեան համար կազմել գոնէ պաշտպան փոքրիկ զօրամաս և որպէսզի կազմակերպէ Քէֆրի-քեօյի համար որևէ պաշտպանութիւն: Այսօր 28 փետր. գեն Անդրանիկը զեկուցեց, որ այսօր առաւօտուանից Քէֆրի-քեօյն դատարկուում է, և Հասան-Ղալայից առաջագնաց զօրամասը հեռանում է, քէպէա թշնամին ո՛չ մի տեղ չի երևում: Գեն. Անդրանիկը Խնուսի զօրամասին հրամայել է ետ գալ Կարաուրգան և այնտեղ կանգ առնել՝ պահապան մասեր կանգնեցնելով: Զինուորների տարերային շարժումը դէպի Սարիղամիշ շարունակւում է, և գեն. Անդրանիկը ենթադրում է, որ յոյս դնել մինչև անգամ ժամանակաւորապէս Սարիղամիշում անկարելի է: Որովհետև միանգամայն անյուսալի է պաշտպանել Թիւրքահայաստանը: Ես այսօր ուղարկում եմ Վեհիք - փաշային հետևեալ ռադիոհեռագիրը. «Որովհետև հաշտութեան բանակցութիւնները սկսուած են Տրապիզոնում մեր կառավարութիւնների միջև, ես հրամայել եմ Թիւրքահայաստանում գտնուած բոլոր զօրամասերին քաշուել դէպի պետական սահմանը: Ես համոզուած եմ, որ ձեր կառավարութիւնը, համաձայն ձեր նախկին հաղորդակցութեան, նոյնպէս իր զօրքերը կը կանգնացնէ

սլետական սահմանների վրայ. մինչև որ կը վերջանան հաշտութեան բանակցութիւնները: 28 փետր. 12 ժ. N 493. Օղիշելիձէ»:

Օդեսա գրաւել են գերմանացիները:

Ե. Գէգէչկօրիի կարգադրել է, որ Քութայիսում ընդհանուր զօրահաւաք լինի և սլստրաստութիւններ տեսնեն պաշտպանելու Քաթումը: Տաճիկները գալիս են Քաթումի վրայ, Գուրիան ոտի է կանգնել, իսկ հնչ վերաբերում է ազարներին (մուսուլման-վրացիներ) նրանք դաւաճանութեամբ են գբաղուած և պսրգ կերպով տանկաց կողմնակիցներ են:

3 մարտի

Արտահանի քրիստոնեայ բնակչութեան դրութիւնը շատ է ծանրացել մանաւանդ թիւրքաց արշաւանքների պատճառով և ճանապարհներ էլ չկան. որ գոնէ փախչեն: Գիւղերը կողոպտւում են ու թալանւում: Կատարեալ տերրոր է տիրում ամբողջ շրջանում:

Սէյմ. 28-ին հաստատուեց Սէյմի պատգամաւորների ցուցակը:

Սօցիալ-դեմոկրատ փոքրամասնականների կողմից պատգամաւոր են ճանաչուած.

1. Ն.Ն. Ժորդանիա	12. Մ. Ն. Սմիրնով	23. Կ. Ա. Անդրոնիկով
2. Ի.Գ. Ծերեթելի	13. Ի. Ա. Բէզզադեան	24. Գ. Է. Օնիաշվիլի
3. Ն.Ս. Չխէիձէ	14. Ա. Ս. Լօմտատիձէ	25. Ս. Գ. Պիրւզմով — Ռ
4. Ե.Պ. Գեզէչկօրի	15. Ղ.Գ. Տէր-Ղազարեան	26. Գ. Ն. Անջապարիձէ
5. Ա.Գ. Ջոհրաբեան	16. Գ. Ֆ. Մախարաձէ	27. Ր. Ա. Չիխլաձէ
6.Ն.Վ. Րամիշվիլի	17. Ր. Մ. Արսէնիձէ	28. Գ. Գ. Գուրջուա
7. Ի.Ի. Րամիշվիլի	18. Ե. Ա. Բերնշտէյն	29. Գ. Աբաշիձէ
8. Ա. Ի. Չխէնկելի	19. Վ. Վ. Թևզայա	30. Գ. Ա. Գագլօև
9. Մ. Ի. Սկօբօլև	20. Ս. Վ. Ջիբլաձէ	31. Լ. Դաղէչկելիանի (մեռաւ)
10. Վ. Գ. Ջիբլաձէ	21. Պ. Գ. Խօմերիկի	32. Վ. Գ. Ախմեաելով
11. Գ. Պ. Գէորգաձէ	22. Գ. Պ. Էրաձէ	

Ժողովրդական Ազատութեան կուսակցութիւնից՝ Իւ. Ֆ. Սեմեօնով:

Սոցիալ-յեղափոխականներից՝ 1. Վ. Վ. Լունկևիչ, 2. Լ. Ն. Աքաբէկեան. 3. Ի. Պ. Գոբեչիա. 4. Ս. Ս. Սահակեան և 5. Լօրդկիպանիձէ:

Դաշնակցութիւնից

1. Զօրեան Ռոստոմ	10. Չիլինգարեան	19. Հ. Եսայեջեան
2. Մ. Յովհաննիսեան	11. Ս. Լ. Վրացեան	20. Խ. Համատիիտ
3. Հ. Օհանջանեան	12. Գ. Ի. Խատիսեան	21. Գ. Չօլախեան
4. Կ. Համբարձումեան	13. Ա. Նալչաջիան	22. Աւ. Սահակեան
5. Յ. Զաւրեան (բժ.	14. Գ. Չամոյեան	23. Պ. Լեոնեան
6. Ա. Շահխաթունեան	15. Ա. Ի. Խատիսեան	24. Գ. Տէր-Յարութիւնեան
7. Օ. Ի. Քաջազնունի	16.Ս. Ա. Խաչատրեան	25.Ս. Քոչարեան

8. Ս. Տիգրանեան
9. Կ. Ա. Ղազազեան
17. Խ. Կարճիկեան
18. Մ. Յարութիւնեան
26. Գ. Մանդալեան
27. Գ. Տէր-Գէորգեան

Վրաց Նացիօնալ-դեմոկրատներից՝ Գ. Բ. Գվազավա:
Վրաց Սօցիալ-ֆեդերալիստներից՝ Գ. Մ. Լասխիշվիլի
Մահմեդականների Մուսավաթից և անկուսակցականներից

1. Սահմէդ-Իաուֆ Ջաֆարով
2. Ալի Մարդան-բէկ Թօփչիբաշև
3. Ռասուլ-Զադէ
4. Ն-բէկ Ռամազէկով
5. Գ-բէկ Աղայև
6. Խ-բէկ Սուլթանով
7. Գ. Ա. Սամէդբէկով
8. Մ-բէկ Սահմուդով
9. Մ.Գ. Սէյիդով
10. Ա. Կարդաշև
11. Մ. Ռոստամբէկով
12. Ֆ-բէկ Խան-Խօյսկի
13. Խ. Խաս-Մահմէդով
14. Մ.Գ.Հաջինսկի Մելիք Եգանով
15. Հաջի Բաբաբէկով
16. Գ.Մ. Ախունդ-զադէ
17. Մ. Ախիջանով
18. Խ. Մելիք-Ասլանով

«Հումմէթից»՝ 1. Ախունդով, 2. Ի. Ավիլով, 3. Ա. Շեյխ-ուլ-իսլամով և 4. Ս. Աղամալով:

«Մուսուլման-սօցիալիստների բլօկից»՝ 1. Հայդսպրով, Ալիխան Կանտեմիրով, 3. Ա. Սաֆիկիւրդսկի, 4. Ա. Պէպինով, 5. Բ. Ռիգան, 6. Դ. Հաջինսկի և 7. Մ. Մեհդրամով:

«Իթիհատ» կուսակցութիւնից՝ 1. Ս. Մ. Ղօնին, 2. Մ-եա Միխտին և Ե. Կ. Մամէդբէկով:

- Այսօր երեկոյեան 7 ժամին Հայ-ժողովրդական կուսակցութիւնը բաց է անում իր ակումբը իր բիւրօյի շինութեան մէջ (Օբօլովինսկի N 25): Խօսելու է բացման մասին Միքայէլ Իվանիչ Բաբաջանեանցը:

Ջալալ-օղլի. 27-փետր. հեռագիր. «Փետր. 21-ին ղըզըլքիլիսեցիք յարձակուեցին Փոքր-Ղարաքիլիսա գիւղի մօտ հայ հովիւների վրայ: Մի հովիւ սպանուած է, մէկը վիրաւորուած, հրացանները տարուած են: Փետր. 25-ին Նովո-Ստեպանովկա գիւղի հայերից Բաշքիչեթի շրջանի թուրքերը քշեցին տարան 1500 գլուխ ոչխար: Փետր. 27-ին մի քանի հարիւր զինուած թուրքեր, վոնդելով գրաֆ Գօտլիբին, քշեցին տարան 600 կով» - Սիմօնեան: Երկրորդ հեռագիր 28 փետր. «Ուդէլի մօտ կռիվ է տեղի ունենում» - Սիմօնեան:

Հայոց Ազգային Խորհուրդին 1 մարտի հեռագրում են *Արդահանից*, որ հայ բնակչութիւնը գաղթում է, օգնութիւն են խնդրում:

4 մարտի

Այսօր կատարուեցան ընտրութիւններ Ռուսական Ազգային խորհրդի ընտրութեան համար: Գործում էր 4 ցուցակ զանազան խմբերի:

Թիւրքիոյ ռազմահայոյտակցութիւն (բռնուած ռադիօհեռագրից տեղեկութիւններ). - ... Էրզրումում մեծ քանակութեամբ թնդանօթներ և ռազմամթերք է գրաւուած. խնկական քանակը դեռ չի որոշուած: Հայերը կոտրցրել են մօտ 2000 մարդ: Հայոց զօրամասը նահանջում է դէպի Հասսան-Ղալա և Թորթում: Ծովափին մեր զօրամասերը մօտենում են նախկին պետական սահմանին: Տրապիզոնում մերոնք վերցրել են 82 զանազան չափի թնդանօթներ. իսկ Էրզրումում, ինչպէս ցայդ պարզուած է, 232 թնդանօթ: Մամուխաթունում՝ 18 ականացիր: Հայոց զօրամասը, որ կազմուած էր 2600 հետևակից 6 գնդացիրով և 240 հեծեալներից, յարձակուեց Ախլսքի ու Կարմուջի մօտ մեզ վրայ, սակայն մեծ կորուստներով ետ մղուեց: ... Էրզրումում վերցուած է 68 թնդանօթ, փոքր քանակութեամբ ականացիրներ և գնդացիրներ և զրահաւորում:

Հազակներ. Ուրբաթ 2-ին մարտի քաղաքում կալանաւորուեց սմբոոջ կազմակերպութիւն 35 հոգուց, որոնք իբրև զօրամաս սպրդելիս են եղել զինուորական շինութեան մէջ, ունեցել են սեփական կառքեր, աւտոմօբիլ. ձիաներ, զէնք և այլն և Թիֆլիսի շատ թալաններ կատարել են նրանց ձեռքով: Զինուորասեղավախակում դատարանը այդ օրն եւ եթ սկսեց նրանց դատը և մարտի 3-ին առաւօտեան 4 ժամին դատարանը կայացրեց վճիռ, որի հիման վրայ դրանցից 12 հոգի (որոնցից 1 հայ, 1ոռս և 10 հոգի վրացի՝ նոյն օրն եւ եթ առաւօտեան 5 ժամ 30 ր. հրացանազարկ եղան. մնաս 23 վերաբերեալ դեռ քննութիւն է կատարում: Նրանց բնակարանում գտնուած է ինչպէս վճռասուած գոհերի ցուցակը, նոյնպէս և նրանց, որոնց վրայ պիտի յարձակուեին:

Թաւրիզից գրում են Кавк. Слово-ին, որ ռուս զօրքերի հեռանալուց յետոյ պարսիկները գրաւել են մնացած ռազմամթերքները, թալանել են պահեստները և գրաւել ամբողջ Թաւրիզ-Ջուլֆա երկաթուղու կայքը:

Մէյմ. - Ե. Պ. Գէզէչկօրլին համարեա համաձայնութեան է եկել կուսակցութիւնների հետ և արդէն պատրաստել է Կաբինէթի՝ Մինիստրների ցանկը և վաղը ներկայացնելու է Մէյմին ի յայտարարութիւն:

Բաքումում ակօպային դրութիւն է յայտարարուած, քաղաքը լցուած է զօրքով:

Ընդհանուր հաշտութիւն. - Լուրեր են պտտում, որ այս օրերս հաւաքուելու է եւրոպական խաղաղարար Կօնֆերենցիա, որտեղ ենթադրում են կապել ընդհանուր դաշինք Ռուսաստանի հաշուին, վասն զի Անգլիան և Ֆրանսիան չեն կարողանում թոյլ տալ, որ Ռուսաստանում կարող է հաստատուել վերջնականապէս Գերմանիայ գերիշխանութիւնը: Тифл. Лист. 4/III N 50.

- Ասում են. որ բօլշևիկները գրաւել են Գանձակը, բայց դեռ լուրը չէ ստուգուած:

Ֆիզուլից - Փետր. 22-ին Բաքու հասած Ադրբեջանի ճանապարհորդները, որ Լեռնի և Ղուրդի կայարանների մէջն ընդհատ կը

5 մայտի

Կոնդակ Էջմիածնի կաթուածքների խլման մասին

«Գէորգ՝ ծառայ Յիսուսի Քրիստոսի, կամօքն Աստուծոյ եպիսկոպոսապետ և կաթուղիկոս ամենայն Հայոց, ծայրագոյն պատրիարք համազգական նախամեծար աթոռոյս Արարատեան առաքելական մայր եկեղեցւոյ Սրբոյ Կաթուղիկէ Էջմիածնի»

Անհնարին է ցաւօք համակեալք, գամք ի ձեռն Կոնդակիս յայտ առնել հարազատիցդ մերոց ոչնչաց գցաւս, որ հասին մեզ ի վերջնում աւուրս: Զի ընթեռնումք յօրագիրս, եթէ անակնկալ իմն տնօրինութիւնք Յանձնակատար խորհրդոյ Կովկասեան շրջանի, գան հանել ի ձեռաց Հայրապետի Ամենայն Հայոց և ի ձեռաց Հայ եկեղեցական իշխանութեանց և Հոգաբարձութեանց եկեղեցեաց գամենայն կալուածս վանօրէից մերոց և եկեղեցեաց, որով և կապտիմք յիւրաւանց հասոյթից ազգային ընդհանուր սեպհականութեանց մերոց և ստացութեանց, որք են յանուն Մեծի Աթոռոյս:

Եւ դժուարին լինի մեզ հաւատալ, եթէ յեղակարծ կարգադրութիւն ինչ վերի վայր յեղեղեսցի հիմնական օրէնք և կարգ տիրապետութեան Ս. Եկեղեցւոյս և այն ի ժամանակի, յորում կամքս, ի ժամանակի, երբ ամենայն հաստատութիւն և հատուած ազգային ունի կազմակերպիլ ինքնուրոյն օրինադրութեամբ, ազատական, ինքնիշխան և ի ձեռն ազգային կազմակերպութեանց իւրոց:

Նա զի իրաւունքս այսոքիք այնու նս առաւել գտանին զօրացեալ և անհերքելի հաստատեալ. զի ոչ տեղական ինչ են կայքդ և գոյգ, և ո՛չ մասնաւոր ինչ ևն սեպհականութիւն և մատակարարութեան իրաւունք նորին և պատկանեալ միայն Հայոց, որ ի սահմանս շրջանի Կովկասու և կամ ի սահմանս համայն Ռուսիոյ. այլ են նիւթական տուչութիւնք և անկապուտ սեպհականութիւնք ամենայն Հայոց. որ ի սփիւռս աշխարհի և համարձակօրէն իսկ մարթ է հաստատել. եթէ առաւելագոյնք են ի նոսա մասնակցութիւնք Հայոց քնակելոց ի Պարս. ի Հնդիկս, ի գաւառս Տաճկական Հայաստանի և ամենայն Հայոց. որք ի ծագս աշխարհիս:

Եւ չկարէր իսկ այժմ այլազգ ինչ լինել. զորչափ Մայր Աթոռս համարի և է կեդրոն բովանդակ Հայ Առաքելական Ս. Եկեղեցւոյ, զորչափ Գլուխ Ամենայն Եկեղեցեաց Հայոց և ընտրական քահանայապետութիւն առ բովանդակ հայ ժողովուրդն կայ կապեալ, առ որ յօդեալ են ամենայն անդամք նորա. իբր մխոյ նեթ մարմնոյ. իբրև անանջատ մասունք միայնոյ Հայ եկեղեցւոյ:

Առաւել են ծանրայ յաչս մեր տնօրէնութիւնդ այդ, քանզի ըստ նուիրական կարգաց, որ հիմն եկեղեցւոյս մերոյ. հասք և եկամուտ սեպհականութեանց այդոցիկ ի կրթութիւն և ի դաստիարակութիւն մանկանց Ս. Եկեղեցւոյս գնան, յայդ աղբիւր մշտական կան կապեալք դպրոցք մեր ի ստորին ծխականց ցդպրոցս ցՁեմարան մեր հոգևոր, ընդ հովանեաւ ո-

յոյ կքթեցան և կրթին մանկունք մեր ի գաւառաց Կովկասեան շրջանի. եթէ ի հեռաւոր վայրից Եւրոպիոյ, Ասիոյ և Ամերիկայի, ւսոանց խստրութեան իւիք: Ի հասիցդ են մատակարարութիւնք այլ և այլ հաստատութեանց կրթականի և լուսաւորութեան Ազգիս, պահապանութիւն Տպարանի Մայր Աթոռոյս, Թանգարանի և ճոխագոյն Մատենադարանի ներին, յոր որպէս ւսո ճրագ լուսատու ոչ սակաւք են, որ գան յուսումնասիրութիւն ի գիտնոց: Ի ձեռն աղբերացդ են, որ պահպանի եկեղեցականութիւն Ս. Եկեղեցւոյս ի Գլխոյ ներին ցյետին սպասաւոր, և եթէ խցեսցին աղբիւրք, ապաքէն և զմահ հաստատութեան հաւատոյս ունիմք տեսանել՝ի մօտոյ:

Եւ ւսոյր, եթէ ի ժամանակս բռնութեան և հալածանաց ւսզգն Հայոց ոչ ամենևին դանդաղեաց ծառանալ ընդդէմ բռնութեան ի պաշտպանութիւն իւսուանց իւրոց, մի՞թէ յաւուրս ազատութեան, ինքնորիշ կազմութեան չեւսնիցէ մեզ մի անհատ ժողովրդեան իմոյ դէմ դնել անիրաւի որոշման և ասել ի ձայն բարձր, եթէ *«Մի որ յամարձակեսցի բառնալ զսպհակայնութիւն մեր, որ ժառանգեցաք և՝ի պահապանութիւն որոյ ունիմք դնել զկեանս մեր իսկ»:*

Ուրախ եմք ի սիրտ և ի հոգի, զի իրաւունք սեպհականութեան մերոց դրացեաց, գՎրաց ասեմք և զմահմեդականաց, կան և մնան անշարժ որպէս և ակն իսկ էր և իրական:

Արդ մի՞թէ հայն առաւել նուազ ունի ցուցանել ոգի ասպետական և զսէր կրօնական, քան զդրացիս իւր. մի՞թէ ոգի ներս ունի խոնարհիլ ընդ լծով անիրաւացի որոշան: Քա՛ւ. գիտեմք և հաւատամք, եթէ գտցի յազգի իմում նոյն ոգի առաքինի ասպետութեան և զգացման առ սրբութիւն հանրւսկան սեպհականութեան իւրոյ:

Մաղթիմք սրտագին կար և զօրութիւն ամենեցուցդ յայս գործ մեծ և աղօթեմք հասնել ի գլուխ պաշտպանութեան իւրեանց եկելոց առ մեզ ի նախնեաց մերոց և տալ սերնդեան մերոյ, որ գկնի մեր:

Ողջ լերուք զօրացեալ ի Գլուխն հաւատոյ Մերոյ և օրհնեալք Մենջ: Ամէն:

Գէորգ Ե. Կաթուղիկոս Ամենայն Հայոց
Ի 10-ն Յունուարի 1918 ամի ըստ տոմարիս Ռ-34 է
՝Ի Հայրապետութեան մերոյ Է. ամի յԱրարատեան Մ.
Աթոռ Ս. Էջմիածին: Ի Վաղարշապատ, Թ. 44:

- Լուրեր են պտտում, որ Տրապիզոնում մեր պատուիրակութիւնը անյաջողութեան է հանդիպել, և տաճիկները պահանջել են մանդատներ:

6 մարտի

Տաճկական հաշտարար պատուիրակները են՝ 1. *Հուսէին Րաուֆ բէյ*, առաջին կարգի կասլիտան, կայսերական Ծովային բաժնի շտաբի պետ, առաջին պատուիրակ (նախագահ), 2. *Մահմէդ Նուսրէդ բէյ* - արտաքին գործոց նախարարութեան իրաւաբանական մասի կառավարիչ, 3. *Դոքտոր Թէվֆիկ Սալիմ բէյ* - գնդապետ, Կովկասի ճակատի տաճկական բանակի գլխավոր բժիշկ, 4. *Խուզրէվ բէյ* - ընդհ. սպայակոյտի սպայ, Կովկ. ճակատի օսմ. բանակի օպերատիւ մասի պետ, 5. *Իւսուֆ Ռիզա բէյ* - պահեստի սպայ, 6. *Իսմայիլ Համի բէյ*, առաջին քարտուղար, Պօլսի համալսարանի պրօֆեսոսօր, 7. *Համիդ բէյ* - օսմանեան կայսերական նաւատորմիղի առաջին կարգի կապիտան-քարտուղար, 8. Լէյտենանտ *Աբդուլահման* - քարտուղարի ադիւտանտը:

Րաուֆ բէյը ողջունել է մեր պատուիրակութեան, որին պատասպանել է Չխենկելին: Րաուֆ բէյը ինքնաբերաբար ստանձնելով նախագահի դերը, արտասանել է հետեւեալ ողջունի ճառ. «Շնորհակալ լինելով երկնքին, որ ինձ առիթ շնորհեց իմ երկրի և ընկերակիցների անունից բարի գալուստ մաղթելու յարգելի ներկայացուցիչներին Անդրկովկասի. որը ցաւիգմի անկումից յետոյ աստիճանաբար առաջանում է անկախութեան ճանապարհով: Ես պատիւ ունեմ դիտելու այս առիթը իբրև իմ կեանքի ամենահաճելի ուրախութիւններից մէկը: Յանձին ձեր. այսօր ողջունելով ձեր երկիրը՝ ոչ միայն ծնականութեան և դիպլոմատիկական աւանդութիւնների անհրաժեշտութիւնից դրդված՝ ես աւելի շուտ ոգեւորուած եմ յարգանքի զգացմունքով և աջակցելու ցանկութեամբ այն գործին, որի ներկայացուցիչն էք հանդիսանում դուք: Ի նկատի ունենալով, որ ցարիզմի դէմ մեր մղած բոլոր պատերազմական գործողութիւնները եղել են մեր երկրների համար պաշտպանողական պատերազմներ՝ ես կարծում եմ, որ մեր ընդհանուր ճակատագիրները աւելի և աւելի կասրել են այդ ընդհանուր փառատր պատմութեան ընթացքին: Վերջին մեր ապրած շրջանը, դժբախտաբար, խանգարեց շօշափելի կերպով գործադրելու մեր պատմական պարտականութիւնը ձեզ օգնելու գործում, և ես համոզուած եմ, որ մենք բոլորս այստեղ համարում ենք մեզ բաժանող արգելքի անկումը սւելի կարևոր երևոյթ. քան ամենից աւելի աչքի ընկնող դիւանագիտական յաջողութիւնը. որովհետև մեզ միացնող կապերը հանդիսանում են ոչ միայն պատմական ու աշխարհագրական, այլ աւելի շատ ազգակցական կապեր. որ բղխում են մեր ընդհանուր ւսնցեալից: Հենց այդ պատճառով Կովկասեան և տաճկական ժողովուրդները այժմ կազմուած են միևնոյն կրօնքներից և ազգերից և համարեա միևնոյն պատմութիւնն ունին: Ոգեորուած այս զգացմունքներով՝ ես մաղթում եմ երջանիկ ելք մեր խորհրդակցութիւնների համար և յայտարարում եմ առաջին ընդհանուր նիստը բացուած»:

Այս ֆրանսերէն լեզուով արտասանած ճառին Անդրկովկասեան պատուիրակութեան նախագահ Չխէնկելին պատասխանել է Բաուֆ բէյին հետեւեալ ճառով, որ այստեղ առաջ եմ բերում ամբողջութեամբ. «Անդրկովկասեան Սէյմի հաշտարար պատուիրակութեան անունից մատուցանում եմ իմ ամենեղջ շնորհակալութիւնը օսմանեան կառավարութեան հաշտարար պատուիրակութեան նախագահին այն ողջոյնի խօսքի համար, որը նրան հնարաւոր եղաւ հենց հիմա արտասանելու: Սրա հետ մեկտեղ ողջունում եմ տաճկական պատուիրակութիւնը:

Ես առանձին ուրախութիւն եմ յայտնում օսմանեան կառավարութեան պատուիրակութեան նախագահի սղջոյնի խօսքի վերջին մասի առթիւ. ցանկանալով յաջողութիւն յառաջիկայ ընդհանուր աշխատանքին, պատուիրակութեան նախագահը յայտնեց, որ նրան իբրև հիմք, նա դնում է անկեղծութիւնը: Անդրկովկասեան պատուիրակութիւնն առանձին վստահութեամբ է վերաբերւում այդ խօսքերին, մանաւանդ որ երկու երկրների միջև բարեկամական յարաբերութիւնները հաստատելու նախաձեռնութիւնը բղխում է օսմանեան կառավարութիւնից, իսկ ինչ վերաբերւում է Անդրկովկասեան ժողովուրդներին, նրանք յանձին Անդրկ. Սէյմին յայտնեցին անկոտրում հաւատը հաստատելու Տաճկաստանի հետ ամենաանկեղծ և բարեկամական յարաբերութիւններ:

Եթէ ձեզ հաճելի եղաւ ասելու, որ դուք համարում եք ձեզ համար բացառիկ հաճոյք մեզ ողջունելու հնարաւորութեան վայրկեանը, թոյլ տուէք մեզ աւելի ևս յատկութիւն ունենալու այդ հաճոյքին, որովհետև Անդրկովկասեան պատուիրակութիւնն առաջին անգամ լիազօր օրգան Սէյմի անունից դռռոս է գալիս միջազգային հյարաբերութիւնների ճանապարհը: Հենց այդ պատճառով, որ մենք առաջին անգամ ենք գալիս, մեզ հարկ չկայ դիւանագիտութիւն անելու: Ամեն մի դիւանագիտութիւն, ամեն մի գաղտնիքի բացակայութիւն - ահա՛ ղեկավար սկզբունքը Անդրկովկասեան յեղափոխական ժողովուրդների:

Անդրկովկասի ազատ ժողովուրդները, որոնք իրենց ձեռքն են առել իրենց ճակատագրի տնօրինումը, ի վիճակի կը լինին պաշտպանելու իրենց երկրի շահերը, բայց պաշտպանել այնպէս, որ ոչ մի դէպքում չխանգարուեն հարևան ժողովուրդների շահերը:

Սէկ անգամ էլ ողջունելով ձեզ՝ ես վերջացնում եմ նոյն բանով, ինչով հաճեցիք վերջացնել և դուք. մենք ոչ միայն ցանկանում ենք յաջողութիւն մեր զբաղումների, այլև տալիս ենք կատարեալ երաշխիք, որ բովանդակ եռանդով պիտի ձգտենք անկելւ և բարեկամական յարաբերութիւններ հաստատելու Անդրկովկասի և Տաճկաստանի ժողովուրդների միջև»:

SAMVEL MURADYAN

PAGES FROM H.TER-ASTVATSATRYANTS' NEWLY DISCOVERED DIARY "TRAGEDY MEMORIUM" (1918)

The consisting of 243 standard pages handwritten diary reflects the most important political, economical and ethnic incidents in the first half of 1918 in Transcaucasus, Turkey and other neighbouring countries. The author is well informed inhabitant of Tbilisi H.Astvatsatryants, who often participated in those incidents. The work has been kept in archive of M.G.Nersisyan. In this publication the inscriptions made from 1st to 6th of March, 1918 are being presented to reader.

ԿԱՐԻՆԵ ՍԱՄՎԵԼՅԱՆ

ՄԱԿ-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԻՐԱՔՈՒՄ (2003թ. ՄԱՐՏ – 2004թ. ՀՈՒՆԻՍ) ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԾԻՔԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

Սույն հոդվածը նպատակամղված է շարունակելու «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ» մատենաշարում տպագրված նախորդ երկու հոդվածներում[1] արտահայտված թեզերն ու զարգացումները:

Ուսումնասիրվող թեման ունի իր գիտական հետաքրքրությունը և միաժամանակ բարդությունները: Թեմայի կատարման ժամանակահատվածում Իրաքում տեղի ունեցան քաղաքական բուռն զարգացումներ՝ 2003թ. մարտին ԱՄՆ-ի կողմից Իրաքի նախագահ Սադդամ Հուսեյնին ներկայացվեց վերջնագիր, ապա հաշվված օրերի ընթացքում տապալվեց Իրաքի բաասական վարչակարգը, և երկրում ստեղծվեց բոլորովին նոր իրադրություն իր բոլոր հետևանքներով:

Վերադառնալով Իրաքում ՄԱԿ-ի գործունեությանը կարևոր է նշել, որ չնայած քաղաքական ալեբախումներին, արդի զարգացումները գալիս են հաստատելու միջազգային այդ կարևոր կազմակերպության անհրաժեշտությունը[2]:

ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի հրապարակած փաստաթղթերի ուսումնասիրությունը, Իրաքում ներքին իրավիճակը և ամենագլխավորը՝ ԱՄՆ-Իրաք հարաճուն լարված զարգացումները թելադրում էին առանց այն էլ ժամանակավոր սանկցիաների գնահատականը:

Սադդամ Հուսեյնի վարչակարգի տապալումը և ԱՄՆ-ի գերակայությունը Իրաքում փաստորեն ի զորու չեղավ երկրում դեմոկրատիայի ջահեր վառել: Նշենք, որ Իրաքը այն յուրահատուկ երկրներից է, ուր ի սկզբանե բացակայել են դեմոկրատիայի ինստիտուտները: Այդպիսի ավանդույթներ անգամ Իրաքը չի ունեցել: Ուրեմն՝ միջազգային կազմակերպությունները, ներկա դեպքում ՄԱԿ-ը, կանգնած է լուրջ դժվարությունների առջև և միաժամանակ, իրոք, Իրաքն ունի նրա գործունեության լայն և հիմնավոր անհրաժեշտություն: Սրանով է պայմանավորված մեր այն տեսակետը, որ «Իրաքում մարդու իրավունքների, երկրի կյանքում

կանանց մասնակցության, երեխաների իրավունքների պաշտպանության, մերձակա շրջապատի բնապահպանության և այլ խնդիրների հետ մեկտեղ, ՄԱԿ-ը ստիպված է լինելու նաև որոշակի վերափոխումներ կատարել իր կազմակերպության ներսում, իրաքյան վերջին իրադարձությունների հետո: Իրաքյան ճգնաժամը իրոք որ, թելադրում է, որոշակի բարևփոխություն ՄԱԿ-ի շրջանակում: Հատկանշական է նաև, որ ՄԱԿ-ի դերի կայունացումը անհրաժեշտ է անդամ պետություններից յուրաքանչյուրին, այդ թվում նաև ԱՄՆ-ին»[3]:

ՄԱԿ-ի գործունեությունը Իրաքում սերտորեն փոխկապակցված է Իրաքի և միջազգային հանրության վերաբերմունքի հետ, ու նաև այդ կազմակերպության անդամ պետությունների վարած քաղաքականության հետ[4]:

Իրաքում ՍԱԿ-ի գործունեության խնդրում նույնպես ոչ պակաս կարևոր նշանակություն ունի հասարակական կարծիքի ձևավորումը, նրա ուշադրությունը, որից անմասն չէ նաև գիտական մտրտը:

Իսրայելի և Մերձավոր Արևելքի ինստիտուտի դեկավար, Ռուսաստանցյաց հրեական կոնգրեսի նախագահ Եվգենի Սատանովսկին հայտնված է, որ «Մերձավոր Արևելքի դեմոկրատացումը՝ հյուծախտ է»:

Նրա կանխատեսումը այն հարցի կապակցությամբ, թե արդյո՞ք ամերիկացիները Իրաքից ժամանակից շուտ կհեռանան, հետևյալն է՝ «Եթե անգամ ամերիկացիները ետ նահանջեն, ապա՝ նախապես կազմակերպված կանոնակարգով: (Ընդգծումը՝ Կ.Ս.) Ամերիկացիները, ինչպես ինձ է թվում, մոտակա ապագայում Իրաքից չպետք է դուրս գան: Առաջինը՝ որովհետև դա կնշանակեր արաբական աշխարհի համար ռազմական գործողությունների անհապաղ վտխադրում ամերիկյան տարածքի վրա»[5]:

Որոշ պատմական զուգահեռներ անցկացնելով ԽՍՀՄ-ի Աֆղանստան մտնելու հետ, նա շարունակում է՝ «Ամերիկացիները մտան Իրաք այնպես, ինչպես որ մտան, և դա սխալ է: Նրանք այնտեղ քազմաթիվ սխալներ գործեցին: Բայց եթե նրանք այնտեղից գնան, իրավիճակը չհասցնելով կայունության որոշակի մակարդակի, դա կլինի խոշորագույն սխալ Ամերիկայի համար»:

Անդրադառնալով ԱՄՆ-ի նախագահ Ջորջ Բուշի հետագա ռեյտինգին, նա նշում է՝ «Քանակի հեռացումը Իրաքից ընդունակ է զրոյի հավասարեցնել Բուշի ռեյտինգը ավելի հավանական կերպով, քան մնացած ամեն ինչ»[6]:

Այսպիսով քաղաքական տեսաբանը գտնում է, որ Վաշինգտոնի քաղաքականությունը այս հարցում տակտիկական քայլերի շարան է, որը տանում է ռազմավարական ձախողման[7]:

Եվգենի Սատանովսկու կարծիքով՝ «Պատերազմը կշարունակվի: Իրաքի կայունացումը կծգծգվի տասնամյակներով»[8]:

Ուշադրությունից չի վրիպում՝ «նախասլես կազմակերպված կանոնակարգ» արտահայտությունը, որը հաստատում է նախապես ծրագրավորված գործողությունների առկայությունը և փաստը:

2004թ. հունվարի 13-ից լյուտվակաև տեղեկատվության ծառայության շրջանակում է ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի պրես-ռելիզը, որ ամվավփված են 2003 թվակսնին գործունեության առանցքում ընդունված կարևոր ուշշումները ու դիմում հայտարարությունները:

Հատկապես ուշագրավ է 2003թ. մարտի 28-ին միաձայն անցած Իրաքի «նավթ՝ սլարենի դիմաց» ծրագրի կարգավորումներին վերաբերվալ որոշումը[9]: Հարցը նրանում է, որ շտապ կեյսով լսրված իրավիճակում ընդունվել են կարևոր համապատասխանեցումներ նախկինում եւյսած ծրագրային կետերին, քանի որ ինքնին ժամանակահատվածը արդեն խոսում է իրադրության մասին:

Անվտանգության խորհուրդը գտնում է, որ ԺՆի IV կոնվենցիայի « 55-ի որոշման համաձայն, որը վերաբերվում է քաղաքացիական անձանց պաշտպանության խնդրին պատերազմի ընթացքում և ընդունված է 1949թ. օգոստոսի 12-ին, ամբողջապես մնում է ուժի մեջ և օկուպացիոն իշխանությունը պարտավորություն ունի ազգաբնակչությանը պարենամթերքով և բժշկական օգնությամբ ապահովելու հարցում: Իշխանությունը պետք է ներկայացնի ընդարձակ հաշվետվություն, նշելով անհրաժեշտ սննդամթերքների անվանումների ցանկը, մայրկանց հիվանդության մանրամասն պատմությունը՝ բժշկական ձևով և այլ հոդվածներ, եթե գրավված տարածքի ռեսուրսները բավարար չեն:

Համոզված լինելով, որ ազգաբնակչության հրամայական կարիքները շարունակվում են ապահովվել, և Իրաքի ժողովրդին տրվող հումանիտար նպաստը երկրի ներսում ամենուրեք գտնվում է համապատասխան հիմքի վրա, այնուամենայնիվ մարդկանց կարիքների ուժը, որպես հումանիտար նպաստի ծևով բավարար օգնություն, չափվում է բուն Իրաքի ժողովրդի կողմից, ով լքում է երկիրը ռազմական գործողությունների պատճառով[10]:

Կարևորը այն է, որ տվյալ նիստի ժամանակ ուշադրության առնվեցին բազմաթիվ սանկցիաներ, որոնք ընդունվել էին մինչ այդ ՄԱԿ-ի կողմից Իրաքի դեմ: Հիմնական շեշտը դրվեց իրաքյան ժողովրդի հումանիտար օգնության ապահովման վրա, այնքան ժամանակ, քանի դեռ երկրում դրա կարիքը ունի ազգաբնակչությունը[11]: Այդ փոփոխությունները վերաբերվում էին 661 (1990) 6 օգոստոս 1990, 986 (1995) 14 ապրիլ 1995, 1409 (2002) 14 մայիս 2002 և 1454 (2002) 30 դեկտեմբեր 2002 որոշումներին:

Ի գիտություն ընդունվեց նաև գլխավոր քարտուղարի 2003թ. մարտի 17-ին ընդունած որոշումը, ետ վերցնելով Միացյալ ազգերի և միջազգային նշանակության աշխատակիցների այն պարտավորությունները, ո-

առաջին քայլ, և անհրաժեշտություն համակարգելու հետևյալ միջոցառումները.

Համապատասխանաբար՝ 12 կետերով նշված են բոլոր հնարավոր տարբերակները և անհրաժեշտ քայլերը:

Հատկապես հետաքրքիր է 7-րդ կետը, որտեղ նշված է, որ ներկա ռեժիմամբ ամբողջապես բոլոր դիմումները պետք է ներկայացվեն «նավթ՝ պարենի դիմաց» ծրագրից դուրս, պետք է դիտարկվեն և քննարկվեն Միացյալ ազգերի գործակալության ծրագրերի և ֆոնդերի, ինչպես նաև այլ միջազգային կազմակերպությունների և ոչ կառավարական կազմակերպությունների (NGOs) կողմից, որոնք կտեսակավորեն, կամ կօգտագործեն, կիրականացնեն Իրաքում արտակարգ հումանիտար օգնության տրամադրումը, ինչպես նաև կհոգան բժշկական սարքավորումների, առողջապահական ծառայությունների, պարենամթերքի բաշխման և ապահովման հարցերը: Վերջիններս պետք է քննվեն պլուսնելիության առումով, Կոմիտեի կողմից, որը կգործի շուրջօրյա, առանց պրոցեդուրային առարկությունների[13]:

Կոմիտեի գործողությունները հաստատված են 661 (1990) որոշման համաձայն՝ հսկելու և մանրազնին իրականացնելու « 4-ի համապատասխան բոլոր կետերը:

Ինչ վերաբերվում է Գլխավոր քարտուղարի հարցումներին, կոմիտեն համապատասխանեցնելու Իրաքի ներկա վիճակին, կապված ժամանակակից պահանջների հետ, առաջարկում է ծեռնարկել այնպիսի միջոցներ, որոնք կպահանջվեն և խորհրդակցել Կոմիտեի հետ, կարգ ու կանոն հաստատելու կնքվող համաձայնագրերի հարցում, բեռների պլուսնելիության, ինչպես նաև սննդամթերքի, դեղորայքի բարդության, ջրի սանիտարական վիճակը, մատակարարման հարցերը հոգալու համար[14]:

Որոշվեց նաև, որ « 4-ում ներկայացված պայմանները ժամանակավոր են և կսբռդ են ուժի մեջ լինել 45 օրվա ընթացքում, հաշված ընդունման օրից և կարող են ապագայում երկարացվել, վերանայվելով Խորհրդի կողմից[15]:

Ընդհանրապես իր ողջ բովանդակությամբ ՄԱԿ-ի ընդունած այս փաստաթուղթը հիմնարար է Իրաքի ժողովրդի համար, ծանրագույն հանգամանքներում դիմակայելու պատերազմական աղետի արհավիրքներին:

Նույն 2003 թվականի ընթացքում այս ծրագիրը ենթարկվեց որոշ փոփոխությունների՝ կապված ներքին իրավիճակի զարգացումների հետ, սակայն գլխավոր նպատակը՝ օգնության, աջակցության առանցքը մնաց նույնը: Փաստորեն ՄԱԿ-ի ընդունած երբեմնի պատժամիջոցները Իրաքի հանդեպ մնացին երկրի պատմության նախորդ անցած էջերում:

2003թ. ապրիլի 24-ին նույնպես 4743 նիստում միաձայն ընդունվեց ՍԱԿ-ի Անվտանգության խորհրդի որոշումը, համաձայն որի 1472 (2003) որոշման « 4-ում պետք է հիշատակվի, որ այն ուժի մեջ է մինչև 2003թ. հունիսի 3-ը և կույսուլ է լուտ հետագա հանգամանքների, վերանայվել խորհրդի կողմից[16]: Այս որոշումը լրացում էր 2003թ. մայրտի 28-ի որոշման ժամկետը երկարաձգելու մասին:

Նրե ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի 2003թ. ապրիլի 24-ի ընդունած որոշումը հիմնականում սոցիալ-տնտեսական քնույթ էր կրում, ապա հետագա վիճաստաթղթերի ուսումնասիրությունը հաստատում է Իրաքի շուրջ քաղաքական խնդիրներում այս կազմակերպության դերի ակտիվացումը:

2003թ. մայիսի 22-ին ՍԱԿ-ի 4761 նիստին մասնակցեցին Անգլիան, Բուլղարիան, Կամերունը, Չիլին, Ֆրանսիան, Գերմանիան, Գվինեան, Մեքսիկան, Պակիստանը, Ռուսաստանի դաշնությունը, Իսպանիան, Միացյալ թագավորությունը, Միացյալ նահանգները: Չմասնակցեց Սիրիան: Իսկ ընդունված որոշումը անցավ միաձայն: Այն ներառում էր 27 կետեր, որոնք վերաբերվում են Իրաքի հետագա զարգացումներին և մասնակից պետությունների պարտավորություններին[17]:

Ընդգծվեց Իրաքի ժողովրդի իրավունքը ազատ կերպով որոշելու իր սեփական քաղաքական ապագան և սահմանելու վերահսկողություն իր սեվոսկան քնական ռեսուրսների նկատմամբ, ողջունելով քոլոր կուսակցությունների կոլեգիալությունը համատեղելու իրենց աջակցությունը՝ ստեղծելու տվյալ իրավիճակին համապատասխան մարմին, ինչը անհրաժեշտ է:

Հույս հայտնվեց, որ իրաքյան ղեկավարությունը արագ կկայանա:

Որոշվեց ապահովել անհրաժեշտ հարգանք Իրաքի հնագիտական, պատմական, մշակութային և կրոնական ժառանգության հանդեպ և շրջանակել պահպանության տակ վերցնել հնագիտական, պատմական, մշակութային և կրոնական վայրերը, թանգարանները, գրադարանները և հուշարձանները:

Նիստի մասնակիցները ողջունեցին Միացյալ Ազգերի կազմակերպության նախագահի կողմից Իրաքում իր հատուկ ներկայացուցչի նշանակումը:

Նլսնք հավանություն տվեցին Իրաքի ժողովրդի առաջին քայլերին նոր իրավիճակում, նկատի ունենալով 2003թ. ապրիլի 15-ի Նասիրիայի և 2003թ. ապրիլի 28-ի Բաղդադի արած դիմում-հայտարարությունները:

Ուշադրության առնվեց Կենտրոնական բանկի յոթ ինդուստրիալ պետությունների խմբի ղեկավարների և ֆինանսների նախարարների կողմից 2003թ. ապրիլի 12-ի ընդունած դիմումը, որով անդամները ընդունեցին, որ կարիք կա բազմակողմանիորեն աջակցելու վերակառուցել և

զարգացնել Իրաքը, այդ նպատակով նշելով Միջազգային ֆինանսական ֆոնդի և Համաշխարհային բանկի օգնության կարիքը:

Ուշադրության առնվեց 2003թ. մայիսի 8-ի դիմումը ստացված Ամերիկայի Միացյալ Նահանգների ներկայացուցիչների պալատից, ինչպես նաև Մեծ Բրիտանիայի Միացյալ թագավորությունից և Հյուսիսային Իռլանդիայից, ուղղված ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի նախագահին (S/2003/538) և ընդունվեցին հատուկ իրավասություններ, պատասխանատվություններ և պարտավորություններ միջազգային իրավունքի ներքո այդ պետությունների կողմից, որպես օկուպացնող ուժեր և միացյալ հրամանատարություն ("Authority" – Իշխանություն)[18]:

Որոշվեց աջակցել, որ յուրաքանչյուր պետություն, որը օկուպացնող ուժերից չէ, ներկայումս աշխատում է կամ ապագայում, կարող է աշխատել Իշխանության ներքո:

Մասնակիցները ողջունեցին անդամ պետությունների զգատրաստակամությունը աջակցելու Իրաքում կայունության և անվտանգության հաստատելու գործին, ներդնելով անձնական, տեխնիկական և այլ միջոցներ իշխանության ներքո[19]:

Այս փաստաթղթում մանրամասն շարադրված է ՄԱԿ-ի խարտիայի VII գլխի դրույթներին համապատասխան այն որոշումների ցանկը, որոնք պետք է իրագործվեն Իրաքում[20]:

Փաստորեն, ակնհայտ է օկուպացնող ուժերի կողմից համագործակցության միտումը, քանի որ Իրաքում տիրող կացությունը թելադրում էր վերահայելու մինչ այդ նրանց կողմից վարվող քաղաքականության:

2003թ. օգոստոսի 14-ին ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի 4808 նիստով եւստատվեց ՄԱԿ-ի Իրաքի օգնության ներկայացուցչությունը:

Անդամ 14 պետությունների մասնակցությամբ, բացակա էր միայն Սիրիան, միաձայն որոշվեց հիմնել Միացյալ Ազգերի Իրաքին օգնող ներկայացչություն աջակցելու Գլխավոր քարտուղարին իրագործելու իր մանդատը 1483 որոշման համաձայն, համապատասխան 2003թ. հուլիսի 15-ի իր զեկույցի բովանդակության, պարտավորություն կրելով 12 ամիս ժամանակով, որպես սկզբնական ժամանակահատված[21]:

2003թ. օգոստոսի 20-ին ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը հանդես եկավ հայտարարությամբ՝ դատապարտելով նախորդ օրը Բաղդադում, Միացյսո Ազգերի շտաբ կայանի դեմ հարձակումը, որի արդյունքում եղան բազմաթիվ զոհեր և տուժածներ՝ միջազգային անձնակազմի և Իրաքի ժողովրդի շրջանում: Անվտանգության խորհուրդը ցավակցելով բոլոր տուժածներին, և նրանց ընտանիքներին, միաժամանակ հայտնում է իր վճռականությունը համապատասխան անվտանգության միջոցներ ձեռնարկելու և շարունակելու իր գործունեությունը «օգնելու Իրաքի ժողովրդին խաղաղություն և արդարություն հաստատելու իր երկրում, կերտելու իր սեփական քաղաքական ապագան»[22]:

Այս պահանջով՝ ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը հանդես եկավ, դիմելով Իրաքի ժողովրդին, թվարկելով այն բոլոր տեռորիստական հարձակումները, որոնք իրականացվել են Իրաքում 2003թ. ընդհանրապես, և ոչ միայն ՄԱԿ-ի աշխատակիցների դեմ, դրանք որակելով, որպես «հարձակում ուղղված Իրաքի ապագայի դեմ»[23]:

Պետք է մատուցել այժմյան ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդին և նրա գլխավոր քարտուղար Քոֆի Անանին, որ չնայած դժվարագույն, բայց իրավիճակին, ՄԱԿ-ը նրա գլխավորությամբ հետևողական և արդյունավետ աշխատանք է կատարում Իրաքում, հանդես բերելով հեռատեսություն և նոր պայմաններում գործելու վճռականություն:

ՄԱԿ-ի դեմ այս հարձակումից և այլ ոտնձգություններից հետո ՄԱԿ-ը իր աշխատանքային հունից դուրս չեկավ: Դումարվել են հետաքրքիր նիստեր, որոնց արձանագրությունները, ընդունված որոշումները վերաբերվում են Իրաքի քաղաքացիների իրավունքներին, տնտեսական ոլորտին, 2004թ. հունիսի 30-ի սպասվող՝ Իրաքի անցումային կառավարությանը իշխանության փոխանցմանը, ՄԱԿ-ի Իրաք-Քուվեյթ դիտորդական առաքելության մանդատի ավարտին, «նավթ՝ պարենի դիմաց» ծրագրի ավարտին, Միջին Արևելքում խաղաղության ապահովման խնդիրներին և այլն:

Շատ կարճ ժամանակահատվածում՝ 2003թ. մարտ – 2004թ. հունիս, ակնհայտ է հասարակական կարծիքի ձևավորումը հօգուտ Իրաքի, որից ամմասն չէ ՄԱԿ-ը:

«Բաղդատում ՄԱԿ-ի շենքի մոտ օգոստոսյան տեռորիստական գործողության վայրկյանից սկսած ինձ անհաղթահարելի կերպով ձգում էր Իրաքը: Ժամանակին ես հրատարակել եմ "Washington Post"-ում բաց նամակ նախագահին, որտեղ իմ անհամաձայնություններ եմ հայտնել նրա քաղաքականության հանդեպ: Մեր ներխուժումից հետ երկիր, ես իմ դիրքորոշումը հաստատեցի հայտարարությամբ, որի համար նույնպես վճարեցի իմ անձնական միջոցներից: Ես ցանկանում էի ծայրել ավելի համոզիչ, ինչը հնարավոր է՝ միայն փաստերը ձեռքիդ:

Ես պետք է վերադառնայի Իրաք, ես զգում էի, որ դա իմ պարտքն է ամերիկյան զինծառայողների հանդեպ և Իրաքի քաղաքացիական բնակչության հանդեպ»:

Եվ այսպես «Օսկար» միջազգային կինոփառատոնի տղամարդու լավագույն դերի համար 2004թ. մրցանակակիր Շոն Պեննը, որը 2003թ. եղել էր Իրաքում. Սադդամ Հուսեյնի նախագահության օրոք, նորից է մեկնում այդ երկիրը՝ այդեղ ՄԱԿ-ի դեմ տեռորիստական գործողություններից հետո, հրատարակելով հետաքրքիր մանրամասներ պատերազմական վիճակում գտնվող Իրաքից[24]:

Նա գրում է՝ «Երբ ես ժամանեցի ռազմական և խաղաղ լրագրության ինստիտուտ, այնտեղ դասախոսություն էր իրաքցի երիտասարդ լրագ-

ռուների համար: Ես լսում էի, ինչպես պիթսբուրգյան "Tribune"-ի թղթակցուհին խոսում էր մասսայական հուղարկավորությունների թեմայով, որպես մոդել, ռեպորտաժի ստեղծման մասին:

Երբ նա այդ բառերը արտասանեց, իրաքցի ունկնդիրներից մեկը ուժեղ ծիծաղեց՝ «Ողջ այս երկիրը – մասսայական դամբարան է: Մենք ապրում ենք եղբայրական մեծ գերեզմանում»:

«Իմ նախկին ուղևորության ժամանակ ես եղա «ալ-Մանսուր» հիվանդանոցում և ինձ շատ հետաքրքրեց տեսնել, թե օկուպացիոն իշխանությունը ինչպես է բարելավել մանկական առողջապահությունը: Բոլորովին էլ ոչ: Հիվանդանոցը ամբողջապես կեղտի մեջ, դեղորայքը՝ քիչ, բժիշկները և մնացած բժշկական անձնակազմը չեն բավարարում, փոխնեղալըմա արյուն նույնպես չկա: Այստեղ մարդ չի ցանկանա բերել մինչև ևնգամ թափառող շանը, այնինչ հենց այստեղ են ապրում և բուժվում սպիտակարյունությամբ հիվանդ երեխաները - այդ հիվանդությամբ տառապող այդքան շատ երեխաների, նման թվաքանակ աշխարհում ոչ մի տեղ գոյություն չունի»[25]:

«Սա օկուպացված երկիր է: Մաքառող երկիր է: Մեկ տարի ևառաջ ոչ մի իրաքցի ինձ հետ խոսելիս, ղեկավար «Բաաս» կուսակցության գծից տարբերվող կարծիքներ չէր հայտնում, իսկ այսօր շատերը ասում են, որ օկուպացիան չի կարող ազատություն բերել: Եվ որ նրանք չեն վստահում իրենց գործերին միևկողմանի միջամտությանը: Բոլորը հավաստում են, որ դիմադրական շարժումը օրեցօր դառնում է ավելի ուժեղ և կազմակերպված»: Հետաքրքիր է, որ կինոդերասանը մանրամասն իվսըլկում է բոլոր այն ուժերին, որոնք ներկայացնում են իրաքյան հասարևակայության տարբեր շերտերը ու հոսանքները:

Հեղինակը շեշտելով արաբական մենթալիտետի նշանակությունը, բերում է համոզիչ տվյալներ: Միաժամանակ նշում է, որ հենց Բաղդադում ամենից ցայտուն է երևում, որ պատերազմը նույնպես բիզնես է:

Մի իրաքցի փաղոցում նրան հարցրել է՝ Ձեր զորքերը եկել են մեր ժողովրդին Սադդամից ազատելու, թե՞ նավթը ազատելու մեր ժողովրդից: Այնուհետև նկարագրում է բենզինի մեծ հերթերը քաղաքում: Բենզինի համար մարդիկ օրերով հերթ են կանգնում[26]: «Բաղդադի կենտրոնական կոմունիկացիոն աշտարակի ծռմռված երկաթյա և բետոնե ավերակները հիմա վկայում են միայն ամերիկյան բանակի հզորության մասին: Ես կանգ եմ առնում մեր ռազմական «Շոկ և թրթիռ» կամպանիայի այդ հուշարձանը լուսանկարելու համար»[27]:

Իրաքում ԱՄՆ-ի, ևշված ժամանակահատվածում, վարած քաղաքականության որոշ հարցերի մասին հետաքրքիր տեղեկություն է հաղորդում Ամերիկայի հայտնի հրապարակախոսներից Ֆարիկ Զակարիան, որը նաև «News Week» թերթի գլխավոր խմբագիրն է: Նրա մենագրությունը՝ «Ազատության ապագան՝ ոչնչեքերալ դեմոկրատիան մեզ մոտ՝ տա-

ն և արտասահմանում» 2003թ. գարնանը համարվեց քեսթսելլեր, ակնթարթորեն սպառվելով:

2004թ. մայիսին «ԼՋՉպլՅՈՒ՝» թերթի հարցերին նա պատասխանեց Նյու-Յորքում իր հյուրի՝ ռուս գիտնական Վլադիսլավ Ինոզեմցևի հետ զրույցի ընթացքում:

Ինչպիսի՞ն է ձեր կանխագուշակումը Իրաքում իրավիճակի զարգացման մասին հարցին, նա պատասխանել է՝ միևչ դեմոկրատիայի, ազատության և այլն ձեռք բերումը, դուք պետք է հասնեք հասարակական կարգուկանոնի: Իրաքում, դժբախտաբար դա ժամանակավոր կոալիցիոն աղմինիստրացիայի կողմից, իսկ ամենագլխավորը՝ Պենտագոնի և Բուշի աղմինիստրացիայի կողմից, անտեսված էր: Այժմ անհրաժեշտ է հասնել Իրաքի և արտաքին աշխարհի միջև խաղընկերության: Որպեսզի ոչ միայն ԱՄՆ-ը, այլև ուրիշ երկիրները կարողանան օգնել Իրաքին դեմոկրատիա կառուցել: Որպեսզի նրանք կոալիցիայի զորքերին չհամարեն օկուպացիոն ուժ:

Սակայն այդ երկրի շանսը իսկական դեմոկրատիայի անցնելու համար շատ փոքր է, քանի որ մենք վերին աստիճանի շատ սխալներ ենք գործել, Իրաքում ստեղծել ենք հակաամերիկանիզմի մթնոլորտ:

... Ինձ ամենից առավել հուսահատեցնում է ԱՄՆ-ի վարած «ետպատերազմյան» քաղաքականությունը Իրաքում: Դա աղետաբեր է: Եվ միայն այժմ է սկսել խմբագրվել: Այնտեղ մենք քիչ զորք ունեցանք, մենք չգիտակցեցինք ՄԱԿ-ի ներգրավման անհրաժեշտությունը իրաքյան գործերում: Մենք հաշվի չառանք, որ ոչ միայն ԱՄՆ-ը, այլև ուրիշ երկրները կսզող են իրենց հետաքրքրություններն ունենալ Իրաքում»[28]:

Ինչպես ցույց են տալիս նշված ժամանակահատվածում ՄԱԿ-ի գործունեության արդյունքները և հասարակական կարծիքը, ապա կաբելի է անհրաժեշտ համարել այդ կազմակերպության դերի ընդլայնումը և հետագա ակտիվացումը:

2004թ. հունիսի 28-ին Բաղդադի ժամանակով՝ ժամը 10:26-ին, քաղաքացիական օկուպացիոն աղմինիստրացիայի ղեկավար Պոլ Բրեմերը Իրաքի նոր ղեկավարներին հանձնեց «լրիվ սուվերենություն փոխանցելու» պաշտոնապես ամրացնող փաստաթղթերի փաթեթը[29]:

Արարողությունը կայացավ Բաղդադի «կանաչ գոտում», ուր գտնվում էր կոալիցիոն ուժերի շտաբը, իսկ մինչև վերջերս այստեղ էր տեղավորված նաև Իրաքի ժամանակավոր կառավարող խորհուրդը: Բրեմերը հրապարակեց կարճ հայտարարություն՝ «Համաձայն ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի 1546 բանաձևի, ժամանակավոր կոալիցիոն աղմինիստրացիան դադարեցնում է իր գործունեությունը հունիսի 28-ին: Դա նշանակում է օկուպացիայի վերջ և ազգային կառավարության կողմից լրիվ սուվերենության ձեռքբերում: Մենք ողջունում ենք Իրաքի քայլերը,

որոնց նպատակն է իր իրավական տեղը գրավել ազատ ժողովուրդների շրջանում»:

«Սա պատմական օր է, երջանիկ օր է, որին սպասում էր մեր ողջ ժողովուրդը, - պատասխան խոսքում ասաց Իրաքի «ժամանակավոր» նախագահ Գազի ալ Յավարը: - Մենք շնորհակալություն ենք հայտնում դաշնակիցներին: Իմացեք՝ վերադարձ անցյալին մենք թույլ չենք տա»[30]:

Նույն օրը ժամը 12:30-ին Պոլ Բրեմերը, որը 13 ամիս աշխատել էր այս երկրում «պրոկուրատոր» (գործերի հավատարմատար), Իրաքից հեռացավ ԱՄՆ-ի ռազմա-օդային ուժերի C-130 ինքնաթիռով[31]:

Ուշագրավ է, որ Իրաքում իշխանության փոխանցումը կայացավ նախապես նշված ժամկետից՝ հունիսի 30-ից երկու օր շուտ՝ հունիսի 28-ին: Պատմական այս իրադարձության շուրջ մամուլում արտահայտված կարծիքներում կարևորվում է ՄԱԿ-ի դերը[32]:

KARINE SAMVELYAN

THE ACTIONS OF THE UNITED NATIONS IN IRAQ (MARCH 2003-JUNE 2004) AND THE FORMATION OF THE PUBLIC OPINION

The article deals with the analyses of the achievements of the active role of the United Nations in Iraq in period of March 2003 – June 2004.

It included the examination of Resolutions and Statements of the Security Council of the United Nations: Adjustments to Iraq-'oil-for-food' programme, Establishment of UN Assistance Mission for Iraq, Call for return of power to Iraqi people and etc.

The very important factor in this period is the formation of the public opinion: to help the people of Iraq to form a representative government based on the rule of law.

The United Nations should play a vital role in the reconstruction of Iraq and the restoration and establishment of national and local institutions lor representative governance. Lifting of sanctions on Iraq is very important step in the activity of the United Nations.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Տես՝ Կարինե Սամվելյան, ՄԱԿ-ի սանկցիաները Իրաքի նկատմամբ, «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», XXI, Երևան, 2002, էջ 137-146, Կարինե Սամվելյան, ՄԱԿ-ը և Իրաքի դեմ ԱՄՆ-ի ռազմական գործողությունների հարցը, «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», XXII, Երևան, 2003, էջ 119-128:
2. Կարինե Սամվելյան, ՄԱԿ-ի սանկցիաները Իրաքի նկատմամբ, «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», XXI, Երևան, 2002, էջ 145:
3. Կարինե Սամվելյան, ՄԱԿ-ը և Իրաքի դեմ ԱՄՆ-ի ռազմական գործողությունների հարցը, «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», XXII, Երևան, 2003, էջ 127:

4. Նույն տեղում, էջ 125: Տես՝ Նիկոլայ Հովհաննիսյան, Կարևոր փաստաթուղթ հետպատերազմյան Իրաքի վերակազմավորման և ԱՄՆ-ի քաղաքականության վերաբերյալ, «Ազգ», 29 III, 2003, էջ 4, "Новое время", 19.IV.2003.
5. Տես՝ Демократизация Ближнего Востока – это маразм, "Независимая газета", 28.V.2004, с. 10.
6. Նույն տեղում:
7. Տես նույն տեղում:
8. Նույն տեղում:
9. S/RES/1472 Adjustments to Iraq oil-for-food' programme, United Nations, Press Release Security Council, SC/7976, 13 January 2004, Resolutions and Statements of the Security Council, 2003, p. 28.
10. Նույն տեղում:
11. Տես նույն տեղում, էջ 29:
12. Նույն տեղում:
13. Նույն տեղում:
14. Նույն տեղում, էջ 30:
15. Նույն տեղում, էջ 31:
16. Նույն տեղում, S/RES/1476, էջ 35:
17. Տես՝ S/RES/1483, Lifting of sanctions in Iraq. United Nations, Press Release, Security Council, Resolutions and Statements of the Security Council, 2003, p. 46-51.
18. Նույն տեղում, էջ 46:
19. Նույն տեղում, էջ 47:
20. Նույն տեղում, էջ 47-51:
21. Նույն տեղում, էջ 73:
22. S/PRST/2003/13, United Nations, Press Release..., p. 116:
23. S/RES/1511, United Nations, Press Release..., p. 88.
24. Репортаж от Шона Пенна, 4 дня войны в Ираке, "Premiere" N 88, апрель 2004, с. 44.
25. Նույն տեղում, էջ 46:
26. Նույն տեղում, էջ 47:
27. Նույն տեղում, էջ 46:
28. "Известия", 5 V, 2004, с. 5.
29. Նույն տեղում, 29.06.2004, էջ 1, Георгий Степанов, Пол Бремер передал иракцам "полный суверенитет".
30. Նույն տեղում:
31. Նույն տեղում:
32. Տես՝ նույն տեղում, էջ 1, 5, Георгий Мирский, Американцы передали власть иракцам на два дня раньше, чем обещали.

РУБЕН САФРАСТЯН

ВОЗВРАЩЕНИЕ "СЕРЫХ ВОЛКОВ": КОНСЕРВАТИВНАЯ ПАРТИЯ В ПОЛИТИЧЕСКОЙ ЖИЗНИ ТУРЦИИ (1983-1985)

Заметным явлением как идейной, так и политической жизни Турции является право-радикальный национализм, который выражает себя чаще всего как *пантюркизм*. Однако по сравнению с другими идейно-политическими течениями он исследован недостаточно[1]. В частности, остается не вполне проясненной проблема особенностей взаимосвязи и взаимовлияния между его тремя основными сегментами: политическими партиями, идейно-политическими организациями и массовыми движениями. Между тем, только в контексте ее детального изучения возможно приступить к рассмотрению вопроса о мобилизационных возможностях турецкого право-националистического радикализма. Этот вопрос в специфических условиях Турции интересен не только с чисто научной точки зрения, но и имеет выход в сферу реальной политики, ибо в течение последних трех десятилетий Партия националистического действия (ПНД), основная партия, "напрямую" представляющая правый экстремизм на политической арене[2], дважды входила в состав правящих коалиций.

Потерпев поражение в ходе последних всеобщих выборов (ноябрь 2002 г.) ПНД оказалась за бортом парламента, однако остается одной из ведущих партий в стране. Это подтвердили итоги состоявшихся в марте 2004-го года выборов в местные органы власти, когда ПНД заняла третье место, пропустив вперед только партии, представленные в парламенте[3]. Основу ее организационной мощи составляют не только широко развлетвленная сеть первичных партийных организаций, но и экстремистские организации националистов-пантюркистов, или как их называют в Турции "*очаги идеалистов*" [4]. Формально не входя в состав партийной структуры ПНД они, тем не менее контролируются ее руководством и используются в качестве дополнительного средства манипулирования настроениями и действиями тех слоев и групп населения, которые составляют

ее постоянный и стабильный электорат[5]. Его часть, в основном молодежь, в случае необходимости используется согласно предварительно подготовленным планам в качестве ударных отрядов при осуществлении массовых акций, в том числе, насильственных. В свое время создатель и лидер ПНД Альпарслан Тюркеш самолично благославлял молодых "идеалистов" на хранение и владение оружием: "Молодые люди могут иметь пистолет. Мы — нация, которая любит оружие. У кого из нас нет оружия!"[6]. Кроме того, по оценке специалистов, в стране действуют многочисленные мафиозные группировки, руководство которых напрямую связано с верхушкой ПНД. Вся эта тщательно сотканная иерархическая сеть, раскинувшаяся не только по всей Турции, но по многим европейским странам, где есть турецкие переселенцы, и называется общественно-политическим движением "*серых волков*" ("бозкуртлар", на турецком)[7], а ее участники — будь то внешне респектабельный партийный босс, профессор-"идеалист" из университетского "очага", активный участник уличных потасовок или же просто убежденный сторонник ПНД — каждый из них называет себя "*серым волком*" — *бозкурт*[8]. В научной литературе "серых волков" зачастую называют также турецкими фашистами.

Один из частных, но вместе с тем весьма интересных и репрезентативных случаев функционирования этого механизма относится к начальному периоду формирования ныне действующего политического режима Турции, созданного после военного переворота 12-го сентября 1980 г. Это был период, когда после принятия новой конституции 1982 г. и закона о политических партиях 1983 г., вместо запрещенных и распущенных военным руководством партий в стране начали создаваться новые политические партии. Характерной особенностью этого процесса было то, что он проходил в условиях строгого контроля и давления со стороны военных властей.

В числе этих новых партий была Консервативная партия (*Muhafazakar Partisi*), которая под этим названием действовала всего два года. Наш интерес к этой партии обусловлен тем фактом, что именно она заложила фундамент возрождения ПНД.

Неодходимо отметить, что хотя и феномен ПНД в последнее время привлекает внимание исследователей, в частности, турецких, однако в большинстве работ рассматриваются главным образом те периоды в истории ПНД, когда она или находилась у власти, или, будучи в оппозиции, оказывала значительное влияние на политическую жизнь страны. Тем самым проблема мобилизационных возможностей и ресурсов ПНД остается вне поля зрения специалистов. В основу настоящей статьи положен иной подход: чтобы получить бо-

лее полное представление о силе и жизнеспособности политической организации необходимо обратить внимание также на те периоды в ее истории, для которых характерна не борьба за власть, а борьба за выживание. Именно таким был рассматриваемый нами в настоящей статье период 1983-1985 годов, то есть те годы, когда движение "серых волков" в политической жизни Турции представляла Консервативная партия (КП) — наследница ПНД 1970-х годов и предшественница современной ПНД.

1. ПОЛИТИЧЕСКИЕ УСЛОВИЯ ЗАРОЖДЕНИЯ КОНСЕРВАТИВНОЙ ПАРТИИ

В первые два десятилетия после создания Турецкой республики пантюркизм находился под строгим контролем властей и фактически вынужден был проявлять себя более в полулегальных изданиях публицистического и литературного характера, чем в реальной политике. Кемалисты, установившие авторитарный режим правления с явными тоталитарными тенденциями, подавляли все те силы, которые выражали идеи, не совместимые с их взглядами.

В 1960-х годах, в период частичного ослабления контроля государства над политической и идеологической жизнью, наблюдается активизация пантюркистских сил, их перегруппировка.

Начиная с середины 70-х годов прошлого века началось перерастание право-националистического экстремизма в широкомасштабное массовое движение фашистского типа под руководством ПНД. Вооруженные отряды молодых "серых волков" — костяк которых составляли т.н. "коммандос", прошедшие специальную подготовку в т.н. "воспитательных центрах" ПНД, развязали настоящую войну на улицах турецких городов против левых и всех тех, кто не был согласен с их идеями[9]. Их действия "прикрывали", а зачастую и поощряли сторонники ПНД в госаппарате и полиции. Как стало известно уже задним числом, ПНД к концу 70-х годов была в состоянии в случае необходимости отмобилизировать в течение короткого времени около 200 тысяч своих вооруженных сторонников.

Кроме того, ПНД и ее сторонники издавали в большом количестве пантюркистскую литературу, инициировали выход в свет различных периодических изданий соответствующего направления и т.д. Все эти издания создавали в стране атмосферу оголтелого национал-шовинизма и страха. Недаром, турецкий исследователь Хакан Явуз политику, проводимую ПНД, охарактеризовал как "политику страха"[10]. Активные сторонники ПНД были внедрены в бюрократический аппарат и спецслужбы, когда сама партия в 1975-1977 гг. входила в правяшую коалицию, а ее лидер Альпарслан Тюркеш в

эти же годы занимал пост вице-премьера. Фактически, ПНД, пользуясь стремительно прогрессирующим хаосом во внутриполитической жизни Турции, который в значительной степени она сама и создавала, и вводя в действие свои специально созданные для подобных случаев структуры, взяла курс на захват власти в стране с использованием методов массового террора и запугивания.

После того, когда 12-го сентября 1980-го года произошел военный переворот, в стране была приостановлена деятельность всех политических партий и организаций, а их руководители были взяты под стражу. Однако лидер ПНД А. Тюркеш, используя свои давние связи в среде военного командования[11], сумел узнать загодя о готовящемся перевороте и поэтому успел скрыться, избежав на время ареста. В течение трех дней он находился на нелегальном положении и использовал это время для передислокации структур ПНД и подготовки их к новым условиям; лишь после этого он добровольно сдался военным властям.

Придя к власти военные начали широкомасштабные репрессии, как против левых, так и правых политических и иных организаций, а также наиболее видных представителей интеллигенции страны, придерживающихся взглядов, отличных от официальной идеологии кемализма. Согласно весьма компетентным оценкам базирующейся в Германии турецкой организации TAYAD, они затронули 650 тысяч человек, то есть, каждого десятого жителя страны[12].

Репрессии были предприняты также против руководства ПНД и "очагов идеалистов", а также рядовых "серых волков". При этом, из всех 4 крупных партий военные наиболее жесткие меры предприняли именно против ПНД, считая что от нее исходит наибольшая угроза идейно-политическому наследию Ататюрка[13]. Подавляющее большинство армейской верхушки в 1980 г. последовательно выступило также против терроризма ПНД[14]. По делу "ПНД и "очаги идеалистов"" проходило 587 человек. Наиболее серьезные обвинения были предъявлены А. Тюркешу. Он обвинялся в стремлении насильственным путем захватить власть, а также устроить "массовую резню"[15]. В ходе судебного процесса, начавшегося в апреле 1981 г., прокурор потребовал смертной казни как для него, так и для еще более 200 "серых волков"[16]. Военные, считавшие себя гарантами и фактическими руководителями кемалистской Турции, не были намерены делиться с кем-либо своей властью.

16-го октября 1981 г. все партии в Турции были распущены[17]. Через неделю состоялось первое заседание Учредительного собрания, перед которым была поставлена задача подготовить текст новой конституции[18]. Однако, как уже справедливо отмечалось в специальной литературе, фактическими авторами новой конституции были

пять высших генералов турецкой армии, составлявшие Совет национальной безопасности (СНБ) — руководители военного путча[19]. В апреле 1983 г., уже после принятия новой конституции и на ее основе был подготовлен новый закон о политических партиях, давший СНБ монопольное право решать судьбу политических партий[20]. Тем самым, военные положили начало формированию новой партийной системы страны согласно своим идейно-политическим установкам, основанным на догматическом восприятии кемализма - официальной идеологии Турецкой республики.

2. ФОРМИРОВАНИЕ КОНСЕРВАТИВНОЙ ПАРТИИ

Консервативная партия была учреждена 7-го июля 1983г.[21]. Первоначально предполагалось, что новая партия будет называться Республиканской консервативной партией, однако Совет министров отказался зарегистрировать ее под этим названием, посчитав, что она может своей деятельностью скомпрометировать понятие "республика". Поэтому вновь созданная партия получила название Консервативная партия (КП), которое сохранилось до ее конгресса в декабре 1985г. Она явилась десятой по счету партией, возникшей после переворота 1980г.

Еще за месяц до появления КП в турецкую печать просочились сведения о том, что идет процесс формирования партии, которая будет стремиться обьединить все правые силы[22]. Отмечалось, что в этом направлении независимо друг от друга интенсивно работают четыре различные группы[23]. Одной из этих групп удалось в значительной степени объединить вокруг себя остальные группировки и провозгласить создание КП. Ее лидер Мехмет Памак, член Консультативного меджлиса от Чанаккале, занимавший ранее пост заместителя начальника главного управления доходов министерства финансов, стал первым генеральным председателем КП[24].

Ժառանգական սպաները և Ղաջարական ընտանիքի արքայորդիները զրկվեցին իրենց կոչումներից[15]: Նորաստեղծ բանակի կորիզը կազմեցին Ժանդարմերիայի և Կոզակական բրիգադի իրանցի սպաները և ենթասպաները: Հատկանշական է, որ ղեկավար դիրքերը զբաղեցրեց Կոզակական բրիգադի սպայակույտը, որը հաճախ դժգոհությունների առիթ էր հանդիսանում: Ժանդարմերիայի սպաները, բարձր գնահատելով իրենց որակավորումը և հավակնություններ ունենալով բանակում ղեկավար դիրքեր գրավելու նկատմամբ, չէին ցանկանում գործել Կոզակական բրիգադի սպաների ենթակայության տակ: Բանակում կարգուկանոն հաստատելու նպատակով Ժանդարմերիայի սպաներից շատերը հեռացվեցին բանակից, որի արդյունքում այն զրկվեց մի շարք արհեստավարժ մանագետներից:

Ապահովելով բանակում սպաների և ենթասպաների քանակը՝ Ռեզա խանը ձեռնամուխ եղավ ռազմական ուսումնական համընդհանուր ծրագրի իրագործմանը, որն անկասկած նպաստում էր հասարակության միավորմանը, գրագիտության մակարդակի բարձրացմանը և նահանգային մեկուսացման քայքայմանը: Մինչև 1930թ. Թեհրանում հիմնվել էր 2 ռազմական դպրոց, որտեղ դասավանդում էին ինչպես ֆրանսիացի սպաներ, այնպես էլ Եվրոպայի ռազմական ակադեմիաների իրանցի շրջանավարտներ: Ռեզա խանը կանխամտածված էր համալրում իրանական բանակը սպայական մեծաքանակ անձնակազմով՝ հարկ եղած դեպքում պահեստային ծառայության մեջ գտնվող զինվորներին մոբիլիզացնելու նպատակով[16]:

1925թ. փետրվարին Մեջլիսը ճանաչեց Ռեզա խանին որպես երկրի զինված ուժերի գերագույն հրամանատար՝ տալով նրան շահին հարիր արտոնություններ[17]: Նույն թվականի հոկտեմբերի 31-ին Ռեզա խանի ճնշման ներքո Մեջլիսը որոշում ընդունեց Ղաջարական դինաստիայի

տապալման և երկրի իշխանությունը Ռեզա խանին փոխանցելու վերաբերյալ:

1925 թվականի հունիսի 6-ին Մեջլիսն ընդունեց Պարտադիր զինվորական ծառայության մասին օրենք՝ 21 տարեկանը լրացած իրանահպատակ բոլոր տղամարդկանց համար: Նոր օրենքը տարածվում էր ինչպես կրոնական միաբրամասնությունների, այնպես էլ քաղաքային քոչվորության և ցեղերի վրա: Ի լրումն երկամյա ակտիվ ծառայության՝ զինակոչիկները 23 տարվա ընթացքում գտնվում էին պահեստային ծառայության մեջ[18]:

Այդ օրենքն առաջացնում էր զգալի սոցիալական փոփոխություններ, որոնցից յուրաքանչյուրը կազմում էր արդիականացման և զարգացման համընդհանուր ծրագրի կարևոր մաս: Նոր օրենքի համաձայն՝ միջնակարգ և բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողները մինչև իրենց ուսման ավարտը ազատվում էին զինվորական ծառայությունից, ինչպես նաև որոշ զիջումներ էին կատարվում ընտանեկան պարտավորվածություն ունեցողների հանդեպ[19]: Ռեզա շահի հրամանով ազնվականների, ցեղերի առաջնորդների և հասարակ գյուղացիների զավակները պետք է ծառայեին նույն զորամասերում[20]: Ի լրումն զինվորական ծառայության՝ առաջին երկու տարիների ընթացքում կազմակերպվում էին գրագիտության դասընթացներ, ինչպես նաև քայլեր էին ձեռնարկվում զինվորներին որևէ արհեստ սովորեցնելու ուղղությամբ: Քաղաքային կյանքի ազդեցությունը գյուղական և ցեղերի զորակոչիկների վրա այնքան մեծ էր, որ ակտիվ ծառայությունն ավարտելուց հետո նրանք հաճախ մնում էին քաղաքում, իսկ իրենց գյուղերը վերադառնալուց՝ տանում էին արևմտյան քաղաքակրթության նշույլները, որն արտահայտվում էր ոչ միայն արևմտյան տիպի հագուստ կրելով, այլև նրանց մտածելակերպի վրա ունեցած ազդեցությամբ:

1936թ. փետրվարի 15-ին ընդունվեց Զինված ուժերի վերակազմավորման մասին նոր օրենք, որը սահմանում էր նոր և բացառապես պարսկերեն լեզվով կոչումներ[21], վերանայում էր մարտակարգը, կանոնավորում առաջխաղացման հիմքերը, սահմանում թոշակավորման համակարգը և զինվորական անձնակազմի ապահովագրումը:

1925թ. Համընդհանուր զինվորական պատրաստման մասին օրենքը փոխարինվեց 1938թ. հունիսի 19-ին վերանայված օրենքով, որն ապահովում էր ծառայության ավելի սեղմ ժամկետներ և առաջխաղացման ավելի կարճ սանդղակ միջնակարգ դպրոցների և բարձրագույն ուսումնական հաստատությունների շրջանավարտների համար: Այն սահմանափակում էր զինվորական ծառայությունից խուսափելու հնարավորությունները, քանի որ հետմահ այն՝ աշխատունակ ցանկացած տղամարդու համար անհնար էր դարձել գտնել աշխատանք առանց զինծառայությունն ավարտելու կամ դրանից ազատվելու վկայագրի:

Նոր օրենքը մեծ ազդեցություն ունեցավ նաև կրոնավորների կյանքի վրաս: Համաձայն հին օրենքի 16-րդ հոդվածի՝ Շարիաթի դատարանների դատավորները, աստվածաբանական դպրոցների ուսանողները, զրադաշտական, քրիստոնյա և հուդայական կրոնների կրոնավորները ազատվում էին զինվորական ծառայությունից: Նոր օրենքի 62-րդ հոդվածով քոլոր հոգևորականները ենթարկվում էին երկամյա պարտադիր ակտիվ ծառայության, սակայն ազատվում էին հետագա պահեստային ծառայությունից[22]:

1938թ. հունիսի 26-ին կանոնավոր բանակի առաջխաղացման սանդղակը վերանայվեց հօգուտ համալսարանական կրթությամբ սպաների, որը խթանում էր նաև բարձրագույն կրթության տարածումը[23]:

Դարասկզբին բանակի սպառազինումը բազմաբովանդակ էր, քանի որ դրա համալրման գործընթացը համակարգված չէր, որը կարելի է բացատրել նրանով, որ չունենալով սեփական ռազմական արտադրություն, Իրանը ստիպված էր դրսից գնել զենք և զինամթերք, որին համապատասխան գումարներ երկիրը չուներ: Միայն 1920-1930-ական թվականներին իրանական կառավարությունը ձեռնամուխ եղավ այդ խնդրի լուծմանը՝ բանակի սպառազինությունը համալրելով Չեխոսլովակիայի, Շվեդիայի, Գերմանիայի ռազմական գործարաններից[24]:

Համաձայն պաշտոնական տվյալների՝ բյուջեով նախատեսված էր ռազմական ծախսերին հատկացնել[25].

Բյուջետային տարի	Ընդհանուր պետական ծախսեր, (թումանով)	Ռազմական նախարարության ծախսեր (թումանով)	Ռազմական ծախսերի հարաբերակցությունը ընդհանուր ծախսերին, %
1922-1923թթ.	20, 438 896	9, 000 000	44,4
1923-1924թթ.	22, 937 856	9, 400 000	40,9

Այսպիսով Ռեզա շահի կառավարման առաջին տարիներին ռազմական ծախսերը կազմում էին բյուջեի մոտավորապես 40%, 10 տարի անց այդ թիվը նվազել էր մինչև 25%, քանի որ աճել էին տնտեսության զարգացմանն ուղղված ծախսերը: Դրան գումարած կար նաև նավթի, թեյի, շաքարի ճակնդեղի մենաշնորհներից ստացված եկամուտների հատուկ բյուջե, որի 30-35% տրամադրվում էր ռազմական ծախսերին[21]: Այդ եկամուտների մեծ բաժինը նախատեսված էր հիմնականում ռազմական տեխնիկա՝ մասնավորապես նավեր, ինքնաթիռներ, տանկեր և ծանր բեռնատար մեքենաներ գնելու համար: Բացի այդ, երկրի արդյունաբերության զարգացման, տրանսպորտային շինարարության և հաղորդակ-

ցությանն նախագծերը ձեռնարկվում էին մեծ մասամբ ռազմական կարիքների հաշվի առնելով: 1930-ական թվականներին արդյունաբերության զարգացման աճը խթանեց նաև զենքի արտադրությունը. Թեհրանում կառուցվեց զնդացիրների, իսկ մայրաքաղաքի մատույցներում՝ «Շահբազ» ավիացիոն գործարանները[27]:

Բանակի ճնավորման գործընթացում կարևոր քայլ էր նաև երկրում ռազմական օդուժի ստեղծումը: Համաձայն ԽՍՀՄ-ի ռազմավարական հետախուզության տվյալների՝ Իրանը մինչև 1923թ. չուներ ինքնաթիռներ: Այդ քացը լրացվեց նույն թվականին՝ Իրանի Ռազմսկսան նախարարության և երկրում Խորհրդային առաքելության միջև կնքված՝ ինքնաթիռներ գնելու վերաբերյալ համաձայնագրով[28]: Հետագայում օդուժն արդեն ուներ 4 ավիաջոկատ, որոնք բաղկացած էին շուրջ 200 ինքնաթիռից: Այդ ինքնաթիռները ռուսական, բրիտանական արտադրության էին, կամ արտադրված էին Իրանում բրիտանական նախագծով[29]:

Հիմնվեց մի քանի ավիացիոն դպրոց, մասնավորապես Մեհրաբադի դպրոցը. որտեղ ուսուցումը իրականացնելու նպատակով վարձվեցին օտարերկրացի օդաչուներ, ինչպես նաև 1928թ. սկսվեց իրանցիներին ԽՍՀՄ և այլ երկրների ավիացիոն դպրոցներ ուղարկելու գործընթացը: Այսպիսով, ուսուցումը դեռևս հիմնականում օտարերկրացիների ձեռքում էր, որտեղ զգալի էր հատկապես գերմանացիների մասնակցությունը: Սակայն չի կարելի ասել, թե որևիցե երկիր ուներ առավել ազդեցություն Իրանում, քանի դեռ նրանցից ոչ մեկը չէր ստացել այլ արտոնություններ[30]: Իրանական փոքրաքանակ օդուժը քիչ ուշադրություն էր գրավում, քանի որ այն հիմնականում մասնակցում էր շահի սրտովին կատարվող ռազմական շքերթներին:

Հետաքրքիր է նշել նաև, որ Ռեզա շահի ջանքերով Պարսից ծոցում հիմնվեց նաև ռազմական նավատորմ, որը սկզբում բաղկացած էր ընդամենը 2 հրետանավից և 4 հետախուզական ռազմանավից, որոնք 1932թ. գնվել էին Իտալիայից [31]:

Ի տարբերություն օդուժի, իրանական նավատորմի հայտնվելը Պարսից ծոցում անհանգստություն առաջացրեց, քանի որ իրանական հետախուզական ռազմանավերը կանգնեցնում էին արաբական նավերը իրանական տարածքային ջրերից դուրս, որն էլ դժվարություններ էր ստեղծում բրիտանացիների համար՝ արաբների հետ իրենց հարաբերություններում: Հարկ է նշել, որ իրանական նավերը խնդիրներ առաջացրին հատկապես Շաթթ-էլ-Արաբում՝ չենթարկվելով նավահանգստային օրենքներին[32]:

Իր կառավարման առաջին տարիներին Ռեզա շահը, բանակի վիճակը որոշ չափով բարելավելուց և այն մարտունակ դարձնելուց հետո, ձեռնամուխ եղավ կենտրոնախույս ցեղերի խնդրի լուծմանը, որը ևս նրա՝ երկրի կենտրոնացման քաղաքականության կարևոր տարրերից էր: Այդ

ուղղությամբ նա ձեռնարկեց մի շարք միջոցառումներ, որոնցից էին ճանապարհաշինությունը, ցեղերի բռնի «ընակեցման» քաղաքականությունը, նրանց զինաթափումը, ցեղապետերի չեզոքացումը խոշտանգումների, ձերբակալությունների, տնային կալանքի միջոցով: Որոշ ցեղապետերի կալվածքները փոխարինվեցին իրենց ցեղերից հեռու՝ այլ նահանգներում գտնվող կալվածքներով՝ դավադրությունները կանխելու նպատակով[33]: Ռեզա շահը նպատակ հետապնդելով քայքայել ցեղերի միասնությունը՝ թուլացրեց հասարակ անդամների կախումը ցեղապետերից: Ցեղերի հանդեպ կիրառվող քաղաքականությունն ուներ երկու նպատակ. խափանել կենտրոնական կառավարության դեմ քաղաքական կամ ռազմական ընդդիմության ցանկացած հնարավորություն և կարգուկանոն հաստատել նահանգներում: Չնայած, որ իր կառավարման ընթացքում Ռեզա շահը կարողացավ թուլացնել կենտրոնախույս ցեղերին և հաստատել համեմատաբար կենտրոնացված իշխանություն[34], սակայն ժամանակ առ ժամանակ՝ հատկապես 1930-ական թվականներին, տեղի էին ունենում ցեղերի խռովություններ և ավազակային հարձակումներ, որոնց դեմ նա ստիպված էր պայքարել:

Ռեզա շահը նպատակ ուներ հասնել ազգային ինքնիշխանության երկրում և Իրանի անկախության ճանաչմանը դրսում, որը հնարավոր էր միայն հզոր կենտրոնական իշխանության պայմաններում: Որպես այդ նպատակներին հասնելու վճռորոշ գործիք նա դիտարկում էր հզոր բանակը: Ռեզա շահն աշխատում էր արդիականացնել երկիրը՝ նվազագույնի հասցնելով կախումը Եվրոպայից:

Չնայած, որ իրանական հեղաշրջումը կատարվել էր զինվորականների և քաղաքացիական առաջնորդների համագործակցությամբ, սակայն Ռեզա շահը իշխանության գլուխ էր եկել և որոշակի կայունություն էր հաստատել բանակի աջակցությամբ: Բանակին համապատասխան ֆինանսական միջոցներ տրամադրելու և Ժանդարմերիան ու Ոստիկանությունը իր տրամադրության ներքո մտցնելու շնորհիվ էր, որ գալով իշխանության գլուխ՝ նա կարողացավ ասպարեզից հեռացնել բոլոր ընդդիմադիր քաղաքական գործիչներին և իր կառավարման ընթացքում թույլ չտվեց քաղաքական ընդդիմության գոյություն[35]:

Հարկ է նշել, որ Ռեզա շահ Փահլավին, ըստ արժանվույն գնահատելով բանակի դերը, բազմիցս արտահայտել է իր կարծիքը այդ կապակցությամբ, որը հստակ ձևավորվել էր դեռևս 1921թ. հեղաշրջումից հետո ստեղծված կառավարության ծրագրում հետևյալ կերպ. «Բանակն ամեն ինչից առաջնային ու վեր է: Ամեն ինչ առաջին հերթին պետք է արվի բանակի համար, և կրկին բանակի համար...մինչև որ մեր զինված ուժերը հասնեն զարգացման բարձրագույն աստիճանի»: Այդ խոսքերը հնչում էին վարչապետ Սեյիդ Զիա էդ-Դին Թաբաթաբայիի ծայնով, սա-

կայն բանակին վերաբերող բառերը, իհարկե, Ռեզա խանին էին պատկանում[36]:

Ռեզա շահի վարած քաղաքականության հետևանքով բանակը մեծ հեղինակություն էր վայելում՝ քանի որ դրա միջոցով անգամ հասարակ քնակիչները հնարավորություն էին ձեռք բերում կրթություն ստանալ և հասնել որոշակի ազդեցության: Բանակի հավատարմությունը թագավորական իշխանության հանդեպ ապահովելու նպատակով Ռեզա շահը ձեռնարկեց մի շարք միջոցառումներ. սպաներից շատերին շնորհվեցին կոչումներ և հողային տարածքներ, որի հետևանքով նրանք ձեռք բերեցին մի շարք արտոնություններ[37]: Անգամ ցածրաստիճան սպաները, կամավոր զինվորները և ժանդարմներն ձեռք բերեցին ավելի մեծ արտոնություններ՝ համեմատած իրենց նախկին դասային դիրքի հետ: Այսպիսով, արվեց ամեն ինչ՝ բանակի հավատարմությունը երաշխավորելու նպատակով: Այդ քաղաքականության շնորհիվ ստեղծվեց որոշակի արտոնյալ սոցիալական դաս, որը հավատարիմ էր Ռեզա շահին, և իր գահ բարձրանալուց առաջ և հետո հանդես էր գալիս որպես նրա քաղաքականության հենարան:

Իրանի ժամանակակից ռազմական ուժի զարգացումը լուրջ հետևանքներ ունեցավ ցեղերի և գյուղական կյանքի համար: Ավանդաբար ցեղերն իրենց կռվող ուժերի գերադասության շնորհիվ մեծ հեղինակություն էին վայելում և ինչ-որ տեղ կախման մեջ էին պահում կառավարությանը: Սակայն այժմ դրանք փոխարինվել էին ավելի լավ սպառազինված կռվող ուժով, որը և ստիպեց նրանց ենթարկվել կառավարության պահանջներին: Այսպիսով, նորաստեղծ Ազգային կանոնավոր բանակն էր, որ կարողացավ թուլացնել ցեղապետերի ուժը և նրանց ազդեցությունը նահանգներում ու հաստատել կենտրոնական կառավարության ազդեցությունը ողջ երկրով մեկ:

Ռեզա շահի ջանքերով մինչև 1941թ. Իրանում ստեղծվել էր կանոնավոր բանակ, որի պարտականությունների մեջ իհարկե մտնում էր երկիրը արտաքին վտանգից սյուշտպանելը, սակայն այն առավելապես ընդունակ էր պահելու կենտրոնական կառավարության իշխանությունը[38] հանգամանք, որը չի եղել երկրում երկար ժամանակ: Ռեզա շահը օգտագործում էր հզոր բանակի գաղափարը որպես Իրանի վերակենդանացման խորհրդանիշ՝ միաժամանակ ճնշելով կենտրոնախույս ցեղերի ըմբոստությունները: Նա ոչ միայն կարողացավ որոշ չափով միավորել երկիրը իր իշխանության օրոք և օգտագործել բանակը որպես նվաճումների վրա հիմնված սոցիալական առաջընթացի ճանապարհ, այլև օգտագործեց այն՝ որպես իր անձնական ազդեցության գործիք[39]:

Այդուհանդերձ, ինչպես Առաջին Համաշխարհային պատերազմի ժամանակ, երբ Ղաջարական պետությունը գտնվում էր ճգնաժամային վիճակում՝ օտար տերությունների ազդեցության տակ, այնպես էլ, Երկ-

ընդդ Համաշխարհային պատերազմի ժամանակ. երբ երկիրը Ռեզա շահի կառավարման ներքո դարձել էր անկախ պետություն, որն ուներ կենտրոնական կառավարություն և Ազգային միասնական բանակ. Իրանը հայտարարեց իր չեզոքության մասին: Սակայն երկու դեպքում էլ Իրանի կամքն անտեսվեց, և երկիրը վերածվեց պատերազմական գործողությունների թատերաբեմի:

Այսպիսով, բանակն իր վիճակի չեղավ դիմադրելու Դաշնակիցների կողմից Իրանի գրավմանը 1941թ. օգոստոսին և Ռեզա շահի՝ գահից պարտադրված հրաժարվելուն հօգուտ իր որդու, ուստի մեծ գումարների. ժամանակի, մարդկային կազմի և ռեսուրսների ներդրումը կյանքի այլ կարիքների հաշվին չարդարացրեց Ռեզա շահի սպասումները հզոր բանակ ստեղծելու վերաբերյալ:

Սակայն նորաստեղծ բանակին հաջողվեց երկրի բոլոր անկյուններում հաստատել կենտրոնական կառավարության իշխանությունը: Եվ չնայած այդ գործընթացները կրում էին հարկադրական բնույթ և ունեցան հարաբերական հաջողություն, անուամենայնիվ, միայն երկրում կայունություն հաստատելուց հետո էր հնարավոր իրականացնել արդիականացմանն ու զարգացմանն ուղղված բարեփոխումները:

LUSINE STEPANYAN

IRANIAN ARMY AS MAIN FACTOR OF CENTRALIZATION POLICY OF THE COUNTRY (THE FIRST HALF OF XX CENTURY)

Reza Shah Pahlavi from the first days of his rulership sought to centralize Iran and make it a modernized and developed country with self-sufficient and educated nation. But reforms couldn't be made in the atmosphere of disunity that reigned in Iran, so the first task was the unification of the nation. The most important step on this way was re-establishment of law and order and concentration of power in the hands of the central government.

Realizing that the emergence of a unified national state coincides with the development of a standing national army, Reza Khan pledged himself to that problem. After becoming Minister of War in 1921, he dissolved all independent military units that existed at the end of Qajar period and created the first unified and uniformed standing national army in Iran of that period. And the power of newly created army elevated Reza Khan to the throne.

Reza Shah not only created an adequate and competent officer corps, which was made partly by sending cadets to the military academies of France and later other European countries, but also proposed the enaetment of a universal military training program, which contributed considerably to the amalgamation of society, the rise of literacy, the urbanization of the young rural and tribal population and the breakdown of provincial isolation. In 1925 the Majlis passed the Law of compulsory military conscription, which brought considerable social changes, one of which is that the

representatives of all social classes had to have military service in the same conditions.

Reza Shah not only created a unified army, he provided it with relatively modern munition, founded a small Navy on the Persian Gulf and an airforce. According to the oficial budget figures from 1921 to 1941 an annual average of 33.5 per cent of the total revenue was allocated for military purposes. As a result of Reza Shah's efforts, a Westernized army could be mobilized by 1941. And though the army of Reza Shah Pahlavi could not withstand the forcible entry of Allies into Iran in 1941, it was capable of maintaining the authority of the central government throughout Iran, a condition that had not existed in the country for hundreds of years. Alhough all these processes carried forcible character and had relative success, it was after the unification and centralization of Iran, that Reza Shah could make reforms on the way of modernization of the country, which was an important step forward, especially in comparison with Iran during the reign of last Qajars.

ՃԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Marvin Zonis, The Political Elite of Iran, Princeton University Press, 1971, p. 102.
2. Персия: Обзор вооруженных сил с приложением очерка экономического и политического положения по данным к 1 июля 1923г., Материалы стратегической разведки, Москва, 1923, стр. 46, Տե՛ս նաև՝ Donald N. Wilber, Riza Shah Pahlavi: The Resurrection and Reconstruction of Iran, New York, 1975, p. 30, Banani Amin, The Modernization of Iran: 1921-1941, Stanford, California, 1961, p. 52, William S. Haas, Iran, Columbia University Press, New York, 1946, p.221.
3. Н.Р. Рихсиева, К истории иранских казачьих частей (по архивным материалам), Востоковедение, Сборник научных трудов N° 564, Ташкент, 1979, стр. 130, Տե՛ս նաև՝ М. Выборнов, Персия и ее вооруженные силы, Отдел Военной литературы, Москва, Ленинград, 1928, стр. 54, Towards a Modern Iran, Studies in Thought, Politics and Society, London, 1980, p. 219, E. Burke Inlow, Shahanshah. A study of the monarchy of Iran, Delhi, 1979. p. 141.
4. Banani Amin, The Modernization of Iran, p. 53, Տե՛ս նաև՝ Tulsiram, Persia to Iran (One Step Forward Two Step Back), New Delhi, 1985, p. 22.
5. Персия: Обзор вооруженных сил по данным к 1 июля 1923г, стр. 3, Տե՛ս նաև՝ William H. Forbis, Fall of the Peacock Throne, The Story of Iran, New York, 1980, p. 143.
6. Выборнов, Персия и ее вооруженные силы, стр. 56, Տե՛ս նաև՝ Marvin Zonis, The Political Elite of Iran, p. 103, Towards a Modern Iran, Studies in Thought, Politics and Society, p. 219.
7. Ibid., p. 219, Տե՛ս նաև՝ Выборнов, Персия и ее вооруженные силы, стр. 56.
8. Bruce Hopper, The Persian Regensis (Key to politics in the Middle East), Foreign Affairs, Janvary, 1935, vol.-13, No-2, p. 298.

9. Персия: Обзор вооруженных сил по данным к 1 июля 1923г., стр. 4, Ирандуст, Персия, 2-ое издание книги Персия вчера и сегодня, Москва Ленинград, 1928г., стр. 158, Տե՛ս նաև՝ Ариф Алиев, Иран vs Ирак: История и современность, Москва, 2002, стр. 506, Реза Годс М., Иран в XX веке: Политическая история, Москва, 1994, стр. 133, Arthur Millspaugh, Americans in Persia, Washington. 1946, p. 27, General Hassan Arfa. Under Five Shahs. New York, 1965, p. 126.
10. 1919թ. օգոստոսին Իրանի և Մեծ Բրիտանիայի կառավարությունների միջև կնքվեց պայմանագիր, որի կետերից մեկի համաձայն նախատեսվում էր ստեղծել Պարսկա-բրիտանական համատեղ հանձնաժողով, որը պետք է իրականացներ իրանական բանակի վերակազմավորման և արդիականացման գործընթացը՝ սոկա բոլոր զինված ուժերի միավորմամբ: Փոխարենը Բրիտանիան Իրանում ստանալու էր տնտեսական առավելություններ և իրավունք՝ Թեհրանից Պարսից ծոց երկաթուղի կառուցելու համար: Այսպիսով, Իրանը ոչ միայն վճարում էր իրեն տրված «օգուտի» համար, այլև դրանով ընկայվում էր Մեծ Բրիտանիայի ազդեցության ոլորտն Իրանում: (Richard W. Cottam, Nationalism in Iran, University of Pittsburgh Press, 1964, p.18, Տե՛ս նաև՝ Tulsiram. Persia to Iran: One Step Forward Two Step Back, New Delhi, 1985, p.22.)
11. Agreement between His Britannic Majesty's Government and the Persian Governnment. Signed at Tehran, August 9, 1919, Article 1, point 2, Collection of Treaties, Engagements and Sanads, relatiing to India and neighbouring countries, vol. XIII, 138, Calcutta: Government of India, 1933, p. 138, Տե՛ս նաև՝ J.C. Hurewitz, Middle East Politics: The Military Dimension, New York, Washington, London, 1969, p. 271, Brigadier-General Sir Percy Sykes, A History of Persia, London, 1951, p.524.
12. Персия: Обзор вооруженных сил по данным к 1 июля 1923г., стр. 4, Տե՛ս նաև՝ Выборнов, Персия и ее вооруженные силы, стр. 60, William H. Forbis, Fall of the Peacock Throne, p. 43, General Hassan Arfa, Under Five Shahs, p. 127.
13. Персия: Обзор вооруженных сил по данным к 1 июля 1923г, стр. 28, Տե՛ս նաև՝ Elwell-Sutton, Modern Iran, London, 1941, p. 76, E. Burke Inlow, Shahanshah, p. 153.
14. Banani Amin, The Modernization of Iran, p. 55, Տե՛ս նաև՝ J.C. Hurewitz, Middle East Politics, p. 271.
15. Ариф Алиев, Иран vs Ирак, стр. 506.
16. Ibid., p. 271.
17. General Hassan Arfa, Under Five Shahs, p. 170.
18. Towards a Modern Iran, Studies in Thought, Politics and Society, p. 220, p. 75, Տե՛ս նաև՝ J.C. Hurewitz, Middle East Politics, p. 271.
19. Banani Amin, The Modernization of Iran, p. 55, Տե՛ս նաև՝ Выборнов, Персия и ее вооруженные силы, стр. 69.
20. General Hassan Arfa, Under Five Shahs, p. 189.
21. Реза Годс М., Иран в XX веке, стр. 144.
22. Banani Amin, The Modernization of Iran, p. 56.

23. Ibid., p. 56.
24. D. Bourke-Burrowes, Changes and Develpoment in Pesria during the Pahlevi Regime, Journal of the Central Asian Society, vol.XVIII, Janvary, 1931, part I, p. 39.
25. Персия: Обзор вооруженных сил по данным к 1 июля 1923г., стр. 94.
26. Marvin Zonis, The Political Elite of Iran, p. 105, Տե՛ս նաև՝ Twentieth-Century Iran, ed. By Hosscin Amirsadeghi, London, 1977, p. 34.
27. Реза Годс М., Иран в XX веке, стр. 146, Տե՛ս նաև՝ Journal of the Central Asian Society, vol. XVIII, p. 39.
28. Персия: Обзор вооруженных сил по данным к 1 июля 1923г., стр. 34.
29. Twentieth-Century Iran, p. 34.
30. Elwell-Sutton, Modern Iran, p. 74.
31. Ibid., p. 76, Journal of the Central Asian Society, vol. XVIII, p. 39, Տե՛ս նաև՝ Arthur Millspaugh, Americans in Persia, p. 27.
32. Twentieth-Century Iran, p. 34.
33. Journal of the Central Asian Society, vol. XVIII, p. 40, Տե՛ս նաև՝ General Hassan Arla, Under Five Shahs, p. 286.
34. E. Burke Inlow, Shahanshah, p. 142, Տե՛ս նաև՝ William S. Haas, Iran, p. 151, Elwell-Sutton, Modern Iran, p. 74.
35. J.C. Hurewitz, Middle East Politics, p. 275, Տե՛ս նաև՝ A. Reza Arasteh, Man and Society in Iran, Leiden, Netherlands, 1964, p.104.
36. Donald N. Wilber, Riza Shah Pahlavi, p. 49.
37. George M. Haddad, Revolutions and Military Rule in the Middle East: The Northern Tier, New York, 1965, p. 226, Տե՛ս նաև՝ Nikki Keddie, Iran: Religion, Politics and Society, London, 1980, p. 154.
38. Banani Amin, The Modernization of Iran, p. 57, Տե՛ս նաև՝ Leonard Binder, Iran, Political Development in a Changing Society, Berkeley and Los Angeles, 1962, p. 144.
39. Ibid., p. 144, Տե՛ս նաև՝ Towards a Modern Iran, Studies in Thought, Politics and Socicty, p. 220, William H. Forbis, Fall of the Peacock Throne, p. 145.

ԱՐԱՔՍ ՓԱՇԱՅԱՆ

ՎԱՀԱԲԱԿԱՆ ՔԱՐՈԶՉՈՒԹՅԱՆ ՄԻ ՔԱՆԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՇՈՒՐՋ

Վահաբականությունը, որպես կրոնաքաղաքական հոսանք, սկզբնավորվեց 18-րդ դարի առաջին կեսին Արաբական թերակղզու կենտրոնական շրջանում՝ Նեջդում, կրոնական քարոզիչ աստվածաբան Մուհամմադ իբն Աբդ ալ-Վահհաբի (1703-1787) կողմից[1], որը ծայրահեղության հասնող մաքրակրոնության կողմնակից էր: Նրա ուսմունքը կոչ արեց վերադառնալ վաղ իսլամի ակունքներին, խստորեն հետեւել միաստվածության սկզբունքներին, հրաժարվել ամեն տեսակ նորարարությունից (բիդա): Վահաբականությունը, ձևավորվելով սունիականության հիմքում, հարում էր հանբալիզմին[2]: Եվրոպացի և արաբ որոշ հեղինակների աշխատանքներում վահաբականները բնութագրվել են որպես պուրիտաններ կամ իսլամի բողոքականներ[3]: Վահաբականության հատուկ է անհանդուրժողականությունը այն մահմեդականների նկատմամբ, որոնք վահաբականության տեսանկյունից խախտել են իսլամի սկզբունքները (թաքֆիր): Պատահական չէ, որ մեր օրերում «վահաբականություն» ասելով հաճախ նկատի են առնվում իսլամական արմատական գաղափարախոսությունները:

Պատմականորեն վահաբականությունը դրական դերակատարություն ունեցավ սաուդական պետության ձևավորման հարցում: 1745թ. սաուդյան դինաստիայի հիմնադիր էմիր Մուհամմադ իբն Սաուդի դաշինքը ալ-Վահհաբի հետ հիմք դարձավ XIX դարում սաուդական պետության ստեղծման համար: Սաուդցիներին աստիճանաբար հաջողվեց միավորել Արաբական թերակղզու զգալի մասը: Ավելի ուշ, 1932-ին, հռչակվեց Սաուդյան Արաբիայի Թագավորությունը[4]:

Որպես դավանանք Սաուդյան Արաբիայում հռչակված է իսլամը: Սաուդական դինաստիայի ներկայացուցիչները մեկ անգամ չէ, որ նշել են, թե վահաբականությունը չպետք է դիտարկել որպես իսլամի հատուկ տեսակ: Դրա մասին խոսվում է միայն պատմական և դավանաբանական համատեքստում, չնայած այն վահաբականությունը ծառայում է սաուդական պետական գաղափարախոսությանը:

Սաուդյան Արաբիայում, որը թե' արաբական և թե' իսլամական ինքնության կրող է, իսլամն ավելի մեծ դերակատարություն ունի քաղաքական և սոցիալական կյանքում, քան որևէ այլ արաբական երկրում: Այն քաղաքական արժեքների վրա ազդեցություն է գործում որպես կրոն, գաղափարախոսություն և մշակութային ինքնագիտակցության խորհրդանիշ[2]: Սաուդյան Արաբիան միակ պետությունն է ողջ մահմեդական աշխարհում, որտեղ Ղուրանը ծառայում է որպես հիմնական օրենք, իսկ հասարակության բարոյական, սոցիալական և իրավական կողմերը կարգավորում է շարիաթը:

Միջազգային հարաբերություններում ստուդական քաղաքական դերի մեծացումը ակնհայտ դարձավ 1960-ականների երկրորդ կեսին և 1970-ականների սկզբին, որ պայմանավորված էր մի շարք կարևոր պատմական դեպքերով: 1940-50-ականներից արաբական մահմեդական երկրներում ազգայնական գաղափարախոսությունների ու քաղաքական աշխարհիկ տեսությունների ամրապնդման պայմաններում Սաուդյան Արաբիային մտահոգում էր իր ոչ առաջնային դերը: Նավթային հսկայական պաշարների շնորհիվ՝ թագավորությունը հայտնվեց ԱՄՆ-ի կենսական հետաքրքրությունների և քաղաքական գործընկերության ոլորտում: Այն դիտվեց որպես կարևոր հենակետ՝ տարածաշրջանում հակամիսլամական ուժերը արաբական միասնության և ազգայնականության դեմ ուղղորդելու, ինչպես նաև համայնավարության թափանցումը կանխելու հասար: Որպես իսլամի հայրենիք Սաուդյան Արաբիան աստիճանաբար սկսեց հանդես գալ իսլամական արժեքների պահպանման, իսլամական աստվածաբանական և տեսական հարցերը ժամանակակից աշխարհում հիմնավորելու և իսլամական աշխարհին հուզող խնդիրները համակարգելու հավակնությամբ: Այս նպատակով 1960-ականների սկզբին սաուդական թագավորության հովանավորությամբ ստեղծվեցին միջազգային իսլամական մի շարք կազմակերպություններ:

1967թ. արաբ-իսրայելական պատերազմի արդյունքում արաբները կորցրեցին զգալի տարածքներ, Իսրայելը գրավեց Արևելյան Երուսաղեմը, որտեղ իսլամական սրբատեղիներ կան: Այս շրջանում իսրայելական քաղաքականությանը դիմագրավելու հարցում արաբական աշխարհում իսլամական կարգախոսներ հնչեցին, ևոր թափ ստացան իսլամական վերածննդի շարժումները: Նավթաարտյունաբերող արաբական երկրները, այդ թվում՝ Սաուդյան Արաբիան, զգալի ֆինանսական օգնություն ցույց տվեցին պատերազմից տուժած արաբական երկրներին: 1969թ. օգոստոսին Երուսաղեմում գտնվող իսլամական երրորդ գլխավոր սրբավայրի՝ ալ-Ակսա մզկիթի մի հատվածի հրկիզումից հետո Արևելյան Երուսաղեմի ազատագրման հարցում հետևողականություն ցուցաբերող Սաուդյան Արաբիան նպատակահարմար գտավ իսլամական արաբա-

կան շահերի պաշտպանության համար ստեղծել համաիսլամական ֆորում[6]: Ալ-Ակսան առիթ դարձավ, որպեսզի 1969թ. սեպտեմբերին Սաուդյան Արաբիայի թագավոր Ֆեյսալի ջանքերով հրավիրվի Իսլամական կոնֆերանս կազմակերպության (ԻԿԿ) հիմնադիր համագումարը: 1972թ. Ջիդդայում ընդունվեց կազմակերպության կանոնադրությունը, որում հիմնական նպատակներ հռչակվեցին մահմեդական երկրների և ժողովուրդների սերտ համագործակցությունն ամենատարբեր ոլորտներում, իսլամական համայնքի՝ ումմայի շահերի պաշտպանությունը, աջակցությունը Պաղեստինի ժողովրդի պայքարին և այլն[7]:

Արտաքին քաղաքականության մեջ Սաուդյան Արաբիան զգալի տեղ է հատկացրել մերձավորարևելյան հակամարտությանը: Թագավորությունը, ընդհանուր առմամբ, հանդես է եկել հակամարտության համապարփակ կարգավորման, ինչպես նաև պաղեստինցիների իրավունքների պաշտպանությամբ՝ շեշտադրելով Երուսաղեմի հարցում մահմեդականների իրավունքների առաջնայնությունը[8]: Սաուդական պետությունը Իսլամական կոնֆերանս կազմակերպության միջոցով փորձել է ի ցույց դնել իր աջակցությունը մահմեդականներին առնչվող գրեթե բոլոր հիմնահարցերին:

ԻԿԿ քաղաքական և ֆինանսական վերնախավը Ծոցի միապետություններն են, առաջին հերթին՝ Սաուդյան Արաբիան: Կազմակերպության գլխավոր քարտուղարությունը և մի շարք մասնագիտացված ու օժանդակ կառույցներ գործում են թագավորության տարածքում: Եթե կազմավորման շրջանում կրոնաքաղաքական բնույթ ունեցող այս կազմակերպությանն անդամակցում էին ոչ ավել քան երեք տասնյակ պետություն, ապա դրանց թիվն այսօր շուրջ վեց տասնյակ է:

Սաուդյան Արաբիայի արտաքին քաղաքական ձգտումներին մեծապես նպաստեց 1970-ականների սկզբին նավթային գների աճը, որ հանգեցրեց համաշխարհային շուկայում նավթատրդյունսհանող մահմեդական երկրների կապիտալի դերի մեծացմանը: Սաուդյան Արաբիան 1973թ. հոկտեմբերին արաբ-իսրայելական պատերազմի ժամանակ կարողացավ օգտագործել նավթային գործոնը՝ որպես պայքարի միջոց՝ նավթային բոյկոտ կիրառելով Իսրայելին աջակցող մի քանի պետությունների, այդ թվում՝ ԱՄՆ-ի դեմ[9]:

Նավթային գների աճի պայմաններում, 1973-ին, Իսլամական կոնֆերանս կազմակերպությունը վավերացրեց Իսլամական զարգացման բանկի (ԻԶԲ) ստեղծման մասին որոշումը: Սաուդյան Արաբիան դարձավ բանկի հիմնական բաժնետերերից մեկը: ԻԶԲ-ի հիմնական նպատակը մահմեդական ժողովուրդների և համայնքների տնտեսական և սոցիալական աջակցությունն է՝ համաձայն իսլամական օրենքների՝ շարիաթի[10]: Բանկի նստավայրը Ջիդդայում է:

արվեց ընդլայնել վահաբական ազդեցությունը՝ դիմագրավելու 1979թ. Իրանի իսլամական հեղափոխության ալեկոծությունում թագավորական վարչակարգին սպառնացող քաղաքական և գաղափարախոսական վտանգները, ինչպես նաև սահմանափակել ագգայնականության ընթացքը՝ հօգուտ իսլամականի:

Սաուդական իշխանությունները ձգտում են վահաբական ազդեցությունը ընդարձակել նաև դեպի Հիջազի սրբավայրեր մահմեդական ամենամյա ուխտագնացությամբ, որն անցկացվում է վահաբական ծիսակարգով[14]: Ուխտագնացության ընթացում, որպես կանոն, կազմակերպվում են սիմպոզիումներ, սեմինարներ, դասախոսություններ ամենահայտնի մահմեդական աստվածաբանների մասնակցությամբ: Անվճար բաժանվում են Ղուրանի օրինակներ:

Ուխտագնացությունը Սաուդյան Արաբիայի համար քաղաքական մեծ նշանակություն ունի, որ նաև խիստ եկամտաբեր է: Սաուդական դինաստիան համարվում է մահմեդական սրբավայրերի պահապանը: Սակայն այս փաստը միանշանակ չի ընդունվում իսլամական աշխարհում: Իսլամական առաջին, ներառյալ շիական շրջանակներ, դեմ են այս հարցում Սաուդյան Արաբիայի մենաշնորհին: Իրանի իսլամական հեղափոխությունից հետո երկրի իշխանությունները հայտարարեցին, որ սաուդյան դինաստիան ձախողել է իսլամի սկզբունքներից և չի կարող համարվել սրբազան վայրերի պահապանը: Այաթոլլա Խոմեյնին կոչ արեց տապալել սաուդական բացարձակ միապետությունը[15]: Նման դիրքորոշումը պայմանավորված էր նաև սաուդամերիկյան ռազմաքաղաքական դաշնակցությամբ, ինչպես նաև թագավորությունում շիաների նկատմամբ գոյություն ունեցող ճնշումներով:

Ուխտագնացության օրերին թագավորությունում հատուկ ուշադրություն է դարձվում անվտանգության խնդիրներին: Անվտանգության մարմինները հիմնականում զգուշանում են ուխտավորների շրջանում քաղաքական հուզումներից, ինչպես դա եղավ 1981թ. և 1987թ., երբ անվտանգության մարմինների և իրանցի ուխտավորների միջև բախումներ տեղի ունեցան[16]: 1990-1991թթ. Ծոցի պատերազմից հետո ուխտագնացության հարցում սաուդական մենաշնորհի դեմ հանդես եկավ Իրաքի նախագահը[17]:

Վահաբական քարոզչության դրսևորումներից է նաև սաուդական կրթական հաստատություններում երիտասարդ մահմեդականների ուսումնառության կազմակերպումը: Այս պրակտիկան Սաուդյան Արաբիան օգտագործեց նաև ԽՍՀՄ-ի փլուզումից հետո: ԱՊՀ մահմեդական հանրապետություններից և Ռուսաստանից շատերը կրոնական կրթություն ստանալու նպատակով մեկնեցին Սաուդյան Արաբիա[18]: Հոգեբանական և գաղափարական մշակման արդյունքում թագավորությունում

կուղմնորոշման մզկիթներում: Միսիոներները, երկար ժամանակով տվյալ համայնքում հաստատվելով, որպես կանոն, ստեղծում են իսլամական կենտրոն, որի շրջանակներում պետք է գործի դպրոց, մզկիթ և գրադարան: Բարեգործական և կրոնական նպատակներ հետապնդող միսիոներների գործունեությունը որոշ դեպքերում քաղաքական նպատակներ ունի[29]:

Լիգան համագործակցում է թագավորության արտաքին գերատեսչության, իսլամի գործերով գերատեսչության, հատուկ ծառայություններ ի և այլ պետական մարմինների հետ: Լիգայի աշխատակիցները պաշտոնավարում են աշխարհի տարբեր անկյուններում թագավորության դեսպանությունների՝ իսլամի հարցերով զբաղվող բաժիններում[30]:

Վահաբական քարոզչության մասշտաբները ու ծավալն աննախադեպ չափեր է ընդունել: Ամերիկյան "U.S. News and World Report" ամսագրի համաձայն՝ վերջին քառորդ դարի ընթացքում Սաուդյան Արաբիան իր բարեգործական հիմնադրամների միջոցով 70 մլրդ դոլար է ծախսել աշխարհի շուրջ քսան երկրներում վահաբական մզկիթներ, մեդրեսեներ և կրոնական կենտրոններ հիմնելու, վահաբական գրականություն տարածելու, ինչպես նաև՝ մարզական ճամբարներ ստեղծելու, զենք գնելու ու վարձկանները հավաքագրելու համար[31]: Վահաբական գրականությունը թարգմանվել է տարբեր լեզուներով և տարածվել նաև ոչ մահմեդականների շրջանում: 1991թ. Իրաքի դեմ «Փոթորիկ անապատում» գործողության ժամանակ Սաուդյան թագավորության տարածքում գտնվող ամերիկացի զինծառայողների շրջանում քարոզչությամբ են զբաղվել վահաբի շեյխերը: Որոշ ամերիկացիներ ընդունել են իսլամի վահաբական ուղղությունը[32]: Ամերիկացի ուսումնասիրողների կարծիքով՝ քառորդ դարի ընթացքում Սաուդյան Արաբիան վահաբական քարոզչության համար ծախսել է ավելի շատ գումար, քան Խորհրդային Միությունը համայնավարության քարոզչության համար իր ողջ գոյության ընթացքում[33]:

2001թ. սեպտեմբերից հետո միջազգային ահաբեկչության դեմ պայքարի շրջանակներում պարզ դարձավ, որ ահաբեկչության տարածմանը և ֆինանսավորմանը մեծապես նպաստել են նաև աշխարհով մեկ սփռված իսլամական բարեգործական և քարոզչական առանձին հաստատություններ, առավել հաճախ՝ դրանց մասնաճյուղերը: Ահաբեկչության հետ կապ ունենալու մեղադրանքով ԱՄՆ-ի «սև ցուցակում» հայտնվեցին Իսլամական աշխարհի լիգային ենթակա մի շարք հաստատություններ, այդ թվում՝ Մահմեդական երիտասարդների միջազգային ասամբլեան (ՄԵՄԱ), Իսլամական օգնության միջազգային կազմակերպությունը (ԻՕՄԿ), Երկու սրբավայրերի իսլամական հիմնադրամը (ալ-Հարամեյն) և այլն: Փակվեցին ալ-Կաիդային և ահաբեկչական այլ կազմակերպությունների ֆինանսավորած մահմեդական բարեգործական

հաստատությունների և հիմնադրամների մասնաճյուղերը. սառեցվեցին դրանց բանկային հաշիվները[34]:

Իսլամական քարոզչական և բարեգործական հաստատությունները սովորաբար համարվում են ոչ-կառավարական կամ մասնավոր: Սակայն դրանցից շատերը ղեկավարում են սաուդցի բարձրաստիճան պաշտոնյաները: Սաուդյան Արաբիայի մեծ մուֆթի շեյխ Աբդ ալ-Ազիզ բեն Աբդալլա Ալ աշ-Շեյխը, որ նաև կառավարության անդամ է, գլխավորում է Իսլամական աշխարհի լիգան: Իսլամի հարցերով նախարարը՝ շեյխ Սալիհ բեն Աբդ ալ-Ազիզ աշ-Շեյխը. ՄԵՄԱ-ի գլխավոր քարտուղարն է, ինչպես նաև ալ-Հարամեյնի վարչական պատասխանատուն: Այս երեք կազմակերպություններն էլ բարեգործական նպատակով մեծ քանակի ճվիրատվություններ են ստացել թագավորական ընտանիքից, որի մասին պաշտոնապես հայտարարվել է[35]:

Սեպտեմբերի 11-ից հետո ամերիկյան մի շարք ազդեցիկ կենտրոններ, քաղաքական գործիչներ, հեղինակավոր ամսագրեր և թերթեր իսլամական ծայրահեղական խմբավորումներին հովանավորելու և ահաբեկչությունը խրախուսելու մեջ Սաուդյան Արաբիային մեղադրող հոդվածներ և զեկույցներ հրապարակեցին: 2003թ. փետրվարին "Washington Post" թերթում մի քանի սենատորների հրապարակման մեջ նշվեց, որ Սաուդյան Արաբիայի իշխող ընտանիքը տասնամյակներ շարունակ երկակի խաղ է վարել Սիացյալ Նահանգների հետ՝ իրականում վահաբականության դիրքերից ֆինանսավորելով և օժանդակելով ալ-Կաիդային և նման այլ կազմակերպությունների: Սենատորներն այն եզրահանգմանն էին եկել, որ վահաբականությունն իսլամի ծայրահեղական տարատեսակ է, որը ոչ միայն վատաբանում է այլ կրոնդավանականս համայնքների, այլ ծգտում է կրոնական ոլորտից դուրս մղել իսլամի խաղաղ հետևորդներին: Վահաբականությունն օգտագործում է մզկիթներ և մեդրեսեները, որպեսզի երիտասարդների մեջ սերմանի ատելություն ոչ իսլամադավանների նկատմամբ: Նրա նպատակը համաշխարհային իշխանությունն է և իր թշնամիների ոչնչացումը[36]:

Հարկ է նշել, որ այսօրինակ փաստարկումները, որոնք առանձին դեպքերում որոշակի նպատակներ են հետապնդում, որևէ կերպ չեն ստվերում առդամենիկյան ջերմ հարաբերությունների ընթացքը:

Ռուսական լրատվամիջոցներում, ինչպես նաև քաղաքագիտական ուսումնասիրություններում նույնպես հաճախ են տեղ գտել Ռուսաստանի և ԱՊՀ մյուս երկրների տարածքում սաուդական դաուայի կազմակերպությունների գործունեության մասին տեղեկություններ, որոնց ներկայացուցիչները Ռուսաստանի Դաշնության տարածքում ստեղծել են վահաբական կենտրոններ, զբաղվել քարոզչական, կազմակերպչական և քաղաքական գործունեությամբ[37]: Չնայած սաուդական իշխանությունները միշտ հայտարարել են, որ Չեչնիայի խնդիրը Ռուսաստանի

ներքին գործն է, ռուսական մամուլը բազմիցս չեչեն զինյալներին սառնյական ֆինանսական և այլ օժանդակությունների մասին վկայող փաստեր է հրապարակել: Ռուսաստանյան տվյալներով՝ նման կազմակերպություններից են ԻՕՄԿ-ը, ալ-Հարամեյնը, Իբրահիմ բեն Իբրահիմը և այլն[38]:

Սառոդցի պաշտոնատարները բազմիցս հերքել են ահաբեկչության հետ կապ ունենալու մեղադրանքները: Իր հերթին՝ իսլամական աշխարհի բարձրագույն քաղաքական մարմինը՝ Իսլամական կոնֆերանս կազմակերպությունը, դատապարտել է ահաբեկչությունը՝ մտահոգություն հայտնելով ահաբեկչական այն գործողությունների համար, որոնց մասնակից են մահմեդականները[39]:

Դ-ոյության մի քանի տասնամյակի ընթացքում վահաբականությունը մի ծայրով հանգեցրել է արմատական իսլամի, ինչպես նաև ահաբեկչության տարածմանը: Այսօր ԱՄՆ-ը հենց Սաուդյան Արաբիայի օգնությամբ է փորձում լուծարել այդ հզոր արտաքին քաղաքականության գործիքը, որի հետևանքները հաղթահարելու համար մեծ միջոցներ են ներդրվում:

Պետք է արձանագրել, որ «սառը» պատերազմի ավարտից հետո Ռ-իստի հովանավորած տարաբնույթ կառույցները՝ մասամբ կամ ամբողջովին, դուրս եկան պետական վերահսկողությունից՝ առանձին դեպքերում վերաճելով սաուդական ու Ծոցի այլ վարչակարգերին սպառնացող ընդդիմադիր ուժի: Արմատական տրամադրություններ ունեցող այդ ուժերից շատերի գաղափարախոսության հիմքում ընկած է վահաբականությունը:

Վահաբական քարոզչությունը պետք չէ միանշանակորեն մշտապես վերագրել պաշտոնական Ռ-իստին: Մի կողմից՝ վահաբական քարոզչությունը իսլամական աշխարհում գերակայության հասնելու, սուննի իսլամի վահաբական ուղղությունը տարածելու Սաուդյան Արաբիայի քաղաքականության դրսևորումներից մեկն է: Երբեմն, սակայն, վահաբականությունը, որպես կրոնաքաղաքական գաղափարախոսություն, քաղաքական իսլամի ծայրահեղ դրսևորում է, որը չի առնչվում Սաուդյան Արաբիայի արտաքին քաղաքականությանը:

ARAKS PASHAYAN

ON SOME EXPRESSIONS OF THE WAHHABI PROPAGANDA

The Wahhabism cmerged in 1940's of eighteenth century in Central Arabia (Nejd) from the teaching of Muhammad Ibn Abd al-Wahhab. Coming of Hanbalism it is considered to be onc of the fundamental directions of Sunni Islam. Historically Wahhabism played a positive role in formation of

Saudi state becoming the governmental ideology of the state. Especially in the beginning of 1970's (connected with the increase of petrol prices) Saudi Arabia (SA) tried to strengthen its political role and importance in the world of Islam. In 1960's SA initiated formation of some Islamic international organizations, such as the Islamic Conference Organization, the Muslim World League, etc. SA purposed to make the Islam a main functional power arguing its leadership in the Islamic world. During quarter century SA made all efforts to establish Wahhabi oriented mosques, educational and religious centers, benevolent and humanitarian foundations, spreading Wahhabi literature all over the world via Wahhabi missioners. Saudi Arabia rejuvenated the concept of militant **jihad** promoting Islamic militant and political several movements. After the end of "cold" war some of Saudi inspired structures coming out of Saudi control transformed into a serious threat for Saudi regime. The ideology of some radical Islamic movements is Wahhabism. After September 11 in the frame of "war against terrorism" it became apparent that many Wahhabi oriented missionary structures and charities had sponsored the international terrorism. In our days it is aright to refer the Wahhabi propaganda entirely to official Riyadh.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Մանրամասն տե՛ս՝ Васильев А., Пуритание ислама?. Ваххабизм и первое государство Саудитов в Аравии (1744/45-1818), М., 1967.
2. Հանբալիզմը իսլամական չորս կրոնաիրավական *մազհաբներից՝* դպրոցներից, մեկն է, որի հիմնադիրն է իմամ Ահմադ Իբն Հանբալը: Այս ուղղությունն ի սկզբանե մերժում էր Ղուրանի և *հադիսների* ցանկացած ազատ մեկնություն և միայն ավելի ուշ թույլ տվեց խիստ սահմանափակ ձևով կիրառել *կիյաս* (դատողություն ըստ անալոգիայի) և *իջմա'* (հավաքական կարծիք): Հանբալիզմը ծայրահեղ անհանդուրժող է ամեն տեսակ նորամուծության հարցում, հակված է անշեղորեն կատարել շարիաթի նորմերն ու մահմեդական ծիսակատարությունները: Հանբալիզմի հետևորդներն ամենամոլեռանդ մահմեդականներն են:
3. Васильев А., Пуритание ислама?, с. 105.
4. Մանրամասն տե՛ս՝ Васильев А., История Саудовской Аравии (1745-1973), М., 1982.
5. Farouk A. Sankari, Islam and Politics in Saudi Arabia. Islamic Resurgence in the Arab World. Edited by Ali E. Hillal Dessouki, N.-Y, 1982, p. 178.
6. Փաշայան Ա., Իսլամական կոնֆերանս կազմակերպությունը. նպատակները, գործունեությունը, դիրքորոշումը ղարաբաղյան հակամարտության նկատմամբ, Եր., 2003, էջ 37-38:
7. Устав Организации Исламская Конференция. В кн.: Александров И., Монархии Персидского Залива этап модернизации, М., 2000, с. 456-457.
8. Валькова Л., Место Саудовской Аравии в мусульманском мире. В кн.: "Исламский фактор" в международных отношениях в Азии, М., 1987, с. 102-114.
9. Валькова Л., Саудовская Аравия: нефть, ислам, политика, М., 1987, с. 10.

10. Իսլամական զարգացման բանկը, Ջիդդա, 1997, էջ 8 (արաբերեն):
11. Մանրամասն տե՛ս՝ Максимов А., Милославская Т., Исламские банки в странах Ближнего и Среднего Востока. В кн.: Ислам в странах Ближнего и Среднего Востока, М., 1982.
12. Кепель Ж., Джихад, М., 2004, с. 75.
13. Նույն տեղում, էջ 77:
14. Նույն տեղում, էջ 79:
15. Валькова Л., Место Саудовской Аравии в мусульманском мире, с. 108.
16. Кепель Ж., Джихад, с. 133-134.
17. Նույն տեղում, էջ 77:
18. Ярыкапов А., Ваххабизм на Кавказе, Угроза ислама или угроза исламу?, М., 2001, с. 140.
19. *Ջիհադ* բառն արաբերենում նշանակում է ջանալ, ճիգեր թափել, պայքարել: Իրավական-կրոնական տեսանկյունից՝ *ջիհադը* աստծո հավատքի նվիրյալների կողմից գործադրվող բազմաթիվ միջոցների համալիր է: Մանրամասն տե՛ս՝ Փաշայան Ա., *Ջիհադ* հասկացության և դրա մեկնաբանության հարցի շուրջ, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հտ. XXII, Եր., 2003, էջ 157-172:
20. Իսրայելական տվյալներով՝ Սաուդյան Արաբիայից հովանավորվող կազմակերպություններից մեկն էլ Համասն է, որի բյուջեի զգալի մասը ներդնում է թագավորությունը: Առհասարակ, սյաղեստինյան ինքնավարության տարածքում սաուդական թագավորությունն իրականացրել է վահհաբական քարոզչություն, խրախուսել ինքնաճախատակությունը: Իր բարեգործական հաստատությունների միջոցով Սաուդյան Արաբիան օգնել է մահապարտ-շահիդների ընտանիքներին: Մանրամասն տե՛ս՝ Dore Gold, Saudi Arabia's Dubious Denials of Involvement in International Terrorism, Jerusalem Public Affairs, Jerusalem Viewpoints, No. 504, October 2003 www.jepa.org
21. Москаленко В., Афганистан и Пакистан. В кн.: Афганистан: проблемы войны и мира, М., 2000, с. 136.
22. «Անհավատների» և հերձվածների թվին են դասվում նաև քրիստոնյաները և հրեաները: Այս մասին տես՝ Игнатенко А., Экстремизм-исламский или ваххабитский?. В кн.: Угрозу ислама или угроза исламу?, М., 2001, с. 85-86.
23. Իպամում *դաուա* (արաբերեն՝ կոչ, հրավեր) ասելով նկատի է առնվում ճշմարիտ կրոնին՝ իսլամին հետևելու աստծո կոչը: Այս մասին տե՛ս՝ The Encyclopedia of Islam, New Edition, vol. 2, C-G, Leiden, E.J. Brill, 1983, p. 168-170. Պատմական տարբեր ժամանակներում մահմեդականականները կոչվել են համախմբվելու կրոնական քաղաքական որևէ գաղափարի շուրջ կամ դիմագրավելու *ոխմային* սպառնացող վտանգը: Իսլամական կրոնա-քաղաքական և ռազմաքաղաքական առանձին կազմակերպությունների անվանումներում շատ հաճախ տեղ է գտել *դաուա* բառը: Շիաների իրա-վունքների համար մղված շարժումները երբեմն որակվել են որպես *դաուայի* շարժումներ: Այս մասին տե՛ս՝ Hanna Seven, Shi'i Organizations in Iraq: al-Da'wah al-Islamiyah and al-Mujahidin, Shi'ism and Social Protest, London, 1986.

24. Кепель Ж., Джихад, с. 76.
25. Шарипова Р., Панисламизм сегодня. Идеология и практика Лиги исламского мира, М., 1986, с. 24.
26. Նույն տեղում. էջ 17:
27. Игнатенко А., Вашингтон и Эр-Рияд: союз против ваххабизма, "Независимая газета", 13.02. 2004.
28. Шарипова Р., Наджип З., Движение исламской солидарности. Основные теоретические концепции. В кн: "Исламский фактор" в международных отношениях в Азии, М., 1987, с. 72.
29. Шарипова Р., Панисламизм сегодня, с. 39-40.
30. Игнатенко А., Вашингтон и Эр-Рияд: союз против ваххабизма, "Независимая газета", 13.02. 2004.
31. Նույն տեղում:
32. Նույն տեղում:
33. Игнатенко А., Вашингтон и Эр-Рияд: союз против ваххабизма, "Независимая газета", 13.02. 2004.
34. www.jepa.org
35. www.jepa.org
36. Տեղեկությունը ըստ՝ Հովհաննիսյան Դ., ԱՄՆ դիվանագիտական նոր մոտեցումները. ռուս-սաուդյան հարաբերությունները. Հանրապետական. թիվ 6, 2003, էջ 4:
37. Այս մասին տե՛ս՝ Поляков К., Арабо-мусульманское влияние на ислам в России: Проблемы и противоречия (90-е гг. XX в.), Угроза ислама или угроза исламу?, М., 2001 с. 146-779; Добаев И., Концепция и практика Джихада в исламском мире и на Северном Кавказе, Центральная Азия и Кавказ, No. 1 (31), 2004, с. 87-88.
38. Чуйков А., Партия Аллаха. Саудовская Аравия забрасывает исламских миссионеров, "Известия", 5.06.2002.
39. Փաշայան Ա., Իսլամական կոնֆերանս կազմակերպությունը, էջ 171-177:

ԱԶԱՏ ԲՈՋՈՅԱՆ

ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ ԵՎ ԲՅՈՒԶԱՆԴԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆԸ ԺԱ ԴԱՐԻ ՎԵՐՋԻՆ ԵՎ ԺԲ ԴԱՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Կոմնենոսների հարստությունը իշխանության գլուխ եկավ ԺԱ դարի 80-ական թթ., Մանազկերտի ճակատամարտից (1071 թ.) հետո, ճակատագրական այն իրադարձությունների պահին, երբ Սելջուկ թյուրքերը ավսծեցին Բյուզանդական կայսրության արևելյան նահանգները և մոտեցան Կոստանդնուպոլսին[1]: Սելջուկները տեր դարձան Հայաստանին և մխրճվելով կայսրության ներքին գավառները, իրենց իշխանությունը տարածեցին Փոքր Ասիայի մեծագույն մասի վրա, մտնելով անգամ թերակղզու ծայր արևմուտքում գտնվող Նիկիա քաղաք: Հարստության առաջին գահակալը՝ Ալեքս Ա Կոմնենոսը (1081-1118) փորձ կատարեց համախմբել Բյուզանդական կայսրության բոլոր ներքին և արտաքին ուժերը, հակահարված տալու համար արևելքից ներխուժած սելջուկներին, Սիցիլիայից կայսրության տարածքներ թափանցած նորմաններին և Բալկանների հյուսիսից կայսրության սահմանները մուտք գործած և թերակղզին ասպատակող պեչենեգներին: Կոմնենոսները Բյուզանդական կայսրության գահին բազմեցին շուրջ մեկ հարյուրամյակ:

Արտաքին թշնամիներից, հատկապես Փոքր Ասիա ներխուժած սելջուկներին հակահարված տալու համար, Ալեքս Ա Կոմնենոսը օգնություն խնդրեց Եվրոպայից[2]: Հռոմի պապ Ուրբան Բ-ը Կլերմոնի ժողովում խաչակրաց ռազմարշավ հայտարարեց ընդդեմ արևելքի մուսուլմանների և Երուսաղեմը գրավելու կոչով դիմեց Արևմտյան Եվրոպայի քնակչության ու պետություններին[3]: Կոմնենոս հարստության կայսրերը փորձեցին օգտվել առաջին խաչակրաց արշավանքի ժամանակ Մերձավոր Արևելքում ստեղծված բարենպաստ իրադրությունից, իրենց վերահսկողության տակ առնելու համար սելջուկյան ռազմարշավների ընթացքում կորցրած տարածքները, սակայն այդ մտահաղացումը նրանց հաջողվեց իրականացնել մասամբ: Փոքր Ասիայում և Հյուսիսային Աս-

ղիքում ստեղծված իրավիճակը անհանգստացնում էր Կոմնենոսներին, որոնք այդ տարածքներն համարում էին կայսրության սեփականություն, իսկ դրանց վրա ստեղծված իշխանություններին ստիպում էին վասալական երդում տալ Բյուզանդական կայսրությանը: Այդ էր պատճառը, որ կայսրությունը ԺԲ դարի ընթացքում սկսեց ուղիներ փնտրել վերադարձնելու փոքրասիական և հյուսիսասորիքյան տարածքները: 1097/8 թ. Ալեքս Ա-ը Բյուզանդական կայսրության իշխանությունը վերահաստատեց Փոքր Ասիայի արևմտյան հատվածում (Նիկիա, Զմյուռնիա, Եփեսոս, Սարդիկե, Ֆիլադելֆիա և այլուր): Պետության առաջնակարգ նպատակներից էր տեր դառնալ Փոքր Ասիայի մերձափնյա շրջաններին և թույլ չտալ սելջուկներին իրենց տիրապետությունը հաստատել ծովում: Այս խնդրում կայսրությանը անգնահատելի օգնություն կարող էր ցույց տալ հայկական ազգաբնակչությունը Մերծավոր Արևելքի և Բալկաններ-ի մի նշանակալի հատվածում ստեղծած իր քաղաքական և եկեղեցական կառույցներով, սակայն բյուզանդական գաղափարախոսության տվյալ դարաշրջանի արտաքին քաղաքականության հիմնադրույթներից մեկն էլ այն էր, որ հայերը թյուրքերի հետ դաշնակցած Բյուզանդիային դուրս են վռնդել իր սեփական տարածքներից[4]: Այդ հիմնադրույթից ելնելով Բյուզանդական կայսրությունը Փոքր Ասիայի և Հյուսիսային Ասորիքի հայկական իշխանությունների նկատմամբ անհաշտ դիրք էր գրավել: ԺԲ դարի ընթացքում Կոմնենոսների արևելյան քաղաքականության կարևորագույն ուղղություններից մեկը դարձավ փոխհարաբերություններ-ի ճշգրտումը և բարելավումը տարածաշրջանի հայկական իշխանությունների և Հայոց եկեղեցական կազմակերպության հետ:

Ինչ վերաբերում է Սելջուկյան ռազմարշավներից հետո Կիլիկիայում և Հյուսիսային Ասորիքում հաստատված հայկական իշխանություններին, ապա նրանց հիմնական մասը (Փիլարտոս, Խաչատուր, Դռդ Վասիլ, Ռուբինյաններ և ուրիշներ) իրենց համարում էին Բյուզանդական կայսրության ստորականեր, քանի որ իրենք եղել էին բյուզանդական բանակի հրամանատարներ: Պարզապես նրանք օգտագործել էին առիթը անկախություն ձեռք բերելու և տարածաշրջանում իրենց իշխանությունը հզորացնելու, քաղաքական պայքարում հաճախակի շփվելով Սելջուկ սուլթանությանը ենթակա պետական միավորների հետ: Բյուզանդական կայսրության արևելյան քաղաքականությունը պայմանավորող գործոններից էր դառնում հետզհետե ԺԲ դարի սկզբում Քեսունի Կարմիր վանքում հաստատված, և նույն դարի 40-ական թթ. Հռոմկլա տեղափոխված Հայոց կաթողիկոսարանը: Կոմնենոս կայսրերի իշխանության տարիներին Հայոց կաթողիկոսական գահին մեկը մյուսին հաջորդելով բազմում էին Պահլավունի իշխանական տնից սերող գահակալներ, որոնք հսկայական ջանքեր էին թափում ճորմալացնելու համար Հայոց կաթողիկոսարանի փոխհարաբերությունները Բյուզանդական կայսրութ-

յան և մերձավոր Արևելքի մյուս քույր եկեղեցիների հետ: Հայտնի է Գրիգոր Բ և հաջորդ, մանավանդ Գրիգոր Գ և Ներսես Դ կաթողիկոսների գործունեությունը ի նպաստ հունական մատենագրական հուշարձանների հայերեն թարգմանության: Նրանք առիթը բաց չէին թողնում շփվելու կայսրության ուսումնական կենտրոնների և վանական հաստատությունների հետ: Այս առումով, հիարկե հետաքրքրական է Գրիգոր Բ Վկույասերի գործունեությունը, որը կաթողիկոսական իշխանությունը ստանձնելուց առաջ պաշտոններ էր վարել կայսրության արևելյան սահմանների աշխարհիկ կառույցներում: Այցելելով Կոստանդնուպոլիս, նա փորձել է հավանաբար մեղմացնել ահագնացող հակակրանքը հայոց և հունաց եկեղեցիների միջև[5]:

Այեքս Ա Կոմնենոսի իշխանության տարիներին հայ-բյուզանդական եկեղեցական փոխհարաբերությունները հեռու էին բարեկամական համարվելուց: Այդ է վկայում Ալեքս Ա Կոմնենոսի դավանաբանական ճառը, որ հեղինակն անդրադառնում է Հայոց եկեղեցու մոլորություններին[6]: Բյուզանդական կայսրությունը, նախորդ կայսրերի օրօք, ԺԱ դարի ընթացքում, օգտագործել էր իր բոլոր հնարավորությունները Հայոց կաթողիկոսական աթոռը մայրաքաղաք Անիից դուրս բերելու համար: Վերացնելով Բագրատունիների Հայոց թագավորությունը, Բյուզանդիան բռնի ուժով ստիպել էր Անիի կաթողիկոսարանը լքել Պետրոս Գետադարձ և Խաչիկ Բ Անեցի հայրապետներին, իսկ վերջինիս մահից հետո, ամեն կերպ խոչնդոտել էր Լուսավորչի աթոռի նոր գահակալի ընտրությունը և ձեռնադրությունը[7]: Բյուզանդական եկեղեցին Ժ դարից պետական քաղաքականություն դարձրած կրկնամկրտությունների միջոցով փաստորեն իրենից վանում էր Հայոց եկեղեցական կազմակերպությանը: Այս իրադարձությունները իրենց հետքն են թողել ԺԲ դարի հայ պատմագրության վրա և բուն Հայաստանի հոգևոր եկեղեցական շրջաններում, կասկածի ենթարկելու համար բյուզանդական կողմի յուրաքանչյուր միութենական նախաձեռնություն:

Բյուզանդական հոգևորականությունը շարունակելով նախորդ դարերի ավանդները, ԺԱ դարում անհանդուրժողական ղեկը էր գրավել Հայոց եկեղեցու նկատմամբ: Այդ մասին է վկայում 1087 թ. Նեղոս Կալաբրացի վանականի դեմ սկսված դավանաբանական դատավարությունը, որի կապակցությամբ հիշատակվում են նրա համախոհներ Տիգրանի և Արշակի անունները[8]:

Բյուզանդական աստվածաբանները Հայոց եկեղեցու հետևորդներից պահանջում էին ընդունել Քաղկեդոնի և նրան հետևող բոլոր եկեղեցական ժողովների դավանաբանական և կարգապահական որոշումները, ծիսական հարցերում հետևել Կոստանդնուպոլսի եկեղեցուն և ենթարկվել բյուզանդական եկեղեցական կազմակերպությանը: Հեշտ է նշմարել բյուզանդական քաղաքական շահերի առկայությունը այդ պահանջնե-

միջև: Այդ դիրքորոշման բացահայտման լավագույն վկայությունը Ալեքս Ա-ի դաստր՝ Աննա Կոմնենեի երկն է, ուր նկարագրվում է 1114/1115թթ. Փիլիպուպոլսի հերձվածողների դեմ Ալեքս Ա Կոմնենոսի սկսած դատավարությունը[9]: Բյուզանդական եկեղեցին շարունակում էր վաղուց ի վեր սրդեգրած, Հայոց եկեղեցու հավատացյալներին վերամկրտելու քաղաքականությունը[10]: Այս առումով, Աննա Կոմնենեյի պատմության հետ միասին բացառիկ վկայություններ է հաղորդում Թեոֆիլակտ Օխրիդացին իր թղթերում[11]: Դավանաբանական խնդիրների արծարծմամբ ևս բյուզանդական եկեղեցու ներսում գրված աշխատությունները շարունակում էին նույն ուղղությունը, ինչ դրանք ունեին մի քանի դար առաջ[12]: Դրանց մեջ կարևոր նշանակություն ունեն ԺԱ դարի վերջում գրված Եվթիմիոս Զիգաբենոսի «Πανοπλία δογματική» աշխատությունը և նրա հիմնական դրույթները պաշտպանող, ԺԳ դարի սկզբին գրված Նիկետաս Խոնիատեսի "Θησαυρὸς τῆς ὀρθοδοξίας» դավանաբանական երկը[13]: Այս հանգամանքը ցույց է տալիս, որ ԺԲ դարի ընթացքում Հայոց եկեղեցու նկատմամբ վերաբերմունքը Բյուզանդական կայսրության ներսում փոփոխության չէր ենթարկվել, չնայած գրեթե 20 տարի (1165-1178թթ.) շարունակ բանակցություններ էին տեղի ունեցել կողմերի միջև: Դրա ամենավառ ապացույցն էր Իսահակ Անգելոս կայսեր իշխանության տարիներին (1185-1195) Հայոց եկեղեցու ներկայացուցիչների նկատմամբ Բյուզանդիայում, հատկապես Փիլիպուպոլսի շրջանում իրականացվող հալածանքները և վերամկրտության փաստերը, որոնց մասին հաղորդում են թե՛ հունական, թե՛ հայկական սկզբնաղբյուրները[14]:

Հայոց եկեղեցու և կաթողիկոսական աթոռի նկատմամբ նման վերաբերմունքն ուներ իր քաղաքական դրդապատճառները: Վերացված Հայոց թագավորության պայմաններում կայսրությունը փորձում էր կոտրել Հայոց եկեղեցական կառույցի դիմադրությունը, որի շնորհիվ ավելի հեշտ կլիներ իր իշխանությունը տարածել կայսրության ներսի և նրա սահմանների շուրջ հաստատված հայաբնակ շրջանների վրա:

Բյուզանդական կայսրությունը սելջուկյան ռազմարշավների պատճառով ետ էր մղվել Հայաստանից, Հյուսիսային Ասորիքից և Փոքր Ասիայի մեծագույն մասից: Ալեքս Ա Կոմնենոսի իշխանության տարիներին Բյուզանդական կայսրության տարածքում, հատկապես Բալկաններում հայ ազգաբնակչության նկատմամբ հալածանքների մի քանի հզոր ալիք էր անցել: Աննա Կոմնենեն բավական մանրամասն անդրադառնում է այդ իրադարձություններին: Միաժամանակ կապված Ա խաչակրաց ռազմարշավի հետ, Բյուզանդական կայսրությունը երկարատև ընդմիջումից հետո, ԺԲ դարի սկզբին, բավական աշխուժացրեց իր քաղաքականությունը Փոքր Ասիայում և Հյուսիսային Ասորիքում: Բյուզանդական բանակները խաչակիրներին ուղեկցելով հասան մինչև Անտիոք, փորձելով իրենց վերահսկողության տակ առնել տարածաշրջանը: Խա-

չակյաց առաջին ռազմարշավին հաջորդած առաջին տարիները ևս - Մատթեոս Ուռհայեցու կողմից քննութագրվում են իբրև մի կողմից հայերի և ասորիների, մյուս կողմից հույների և լատինների միջև բորբոքված տոմարական վեճի ժամանակաշրջան: Առաջին անգամ Հայոց ԾԾԱ թվականի(=1102) կողմերի միջև վեճի առարկա դարձավ Ծոազատկի խնդիրը, որը մի քանի հարյուրամյակ շարունակ միմեանց դեմ էր հանում հակադիր կողմերում դիրքավորված տոմարագետ վարդապետներին[15]: Խաչակիրների, հատկապես Սիցիլիայի նորմանների դեմ մղված պայքարն ավարտվեց Դեաբոլի հաշտության պայմանագրով (1108), որով ծովափնյա Կիլիկիայի տարածքները կրկին մտնում էին բյուզանդական ազդեցության գոտու մեջ: Հայոց եկեղեցու նկատմամբ Ալեքս Ա Կոմնենոսի քաղաքականության սպառիչ բնութագիրը գտնում ենք ԺԲ դարի 30-ական թթ. պատմագիր Մատթեոս Ուռհայեցու երկում. «...ի վերայ ազգիս Հայոց յոյժ ատեցող երեւեալ: Սա գործեաց գործ, որ ոչ էր ըստ կամացն Աստուծոյ. հրամայեաց երկրորդ մկրտութիւն առնել...»[16]: Ալեքս Ա Կոմնենոսի մահից (1118) մինչև ԺԲ դարի 30-ական թթ. Բյուզանդական կայսրության արևելյան քաղաքականության տեսադաշտից շարունակում էր հեռու մնալ Հյուսիսային Ասորիքում գտնվող Հայոց կաթողիկոսարանը:

Այս քաղաքական գծին հակառակ, Սելջուկները ավելի ու ավելի նպաստավոր պայմաններ էին փորձում ստեղծել Հայոց եկեղեցու գործունեության համար, հնարավորություն տալով Բարսեղ Անեցուն վերացնել Հռոմի հակաթոռ կաթողիկոսարանը, ամրապնդել եկեղեցական միաբանական կառույցը սելջուկ սուլթանության տարածքներում[17]:

ԺԲ դարի 30-ական թթ. բյուզանդական նվաճողական քաղաքականության հիմնական թիրախներից մեկը դարձավ Կիլիկիայի հայկական իշխանությունը: Հովհաննես Կոմնենոսը երկու անգամ իր բանակներով ներխուժեց Կիլիկիայի հայկական իշխանության տարածք և Հյուսիսային Ասորիք (1136-1138, 1142-1143): Բյուզանդական կայսրը իր բանակի ռազմական հաջողությունները ամրապնդում էր, Իսավրիայի, Կիլիկիայի և Հյուսիսային Ասորիքի գլխավոր քաղաքներից հեռացնելով լատին թեմական առաջնորդներին և այդ աթոռների վրա վերահաստատելով հույն-օրթոդոքս եկեղեցու եպիսկոպոսներին: Մատթեոս Ուռհայեցու վկայությամբ Հովհաննես Բ Կոմնենոսի (1118-1143) իշխանության տարիներին Բյուզանդական կայսրությունը նկատելիորեն հրաժարվում է Հայոց եկեղեցու և ազգաբնակչության նկատմամբ բռնի ուժի քաղաքականությունից: Նրա մասին պատմիչը գրում է. «...սա եղեալ ընդունող ազգին Հայոց՝ և վերացոյց զցասումն անարժան մկրտութեանն...»[18]: Այս շրջանում Բյուզանդական կայսրությունն անմիջական հարաբերությունների մեջ մտավ նաև Հայոց եկեղեցու առաջնորդների հետ, որոնք տարածաշրջանում ձեռք էին բերել բավական մեծ հեղինակություն: Ըստ լատին և հայ-

կական սկզբնաղբյուրների, նրանք բավական ինտենսիվ փոխհարաբերություններ էին հաստատել կաթոլիկ եկեղեցու Մերձավոր Արևելքում հաստատված կառույցների հետ[19]: Հովհաննես Բ Կոմնենոսի գահակալման այս շրջանին է վերաբերում Ֆրանսիացի բյուզանդագետ Ժ.Դարուզեզի կողմից հայտնաբերված և Revue des Etudes Byzantin-ում (1990) հրապարակված Հայոց կաթողիկոս Գրիգոր Գ Պահլավունու թուղթը ուղղված Հովհաննես Բ Կոմնենոս Կայսրին: Ամենայն հավանականությամբ այս վավերագիրը գրվել է Հովհաննես Բ-ի առաջին կամ երկրորդ Կիլիկիա-Հյուսիսասորիքյան ռազմարշավներից մեկի ընթացքում և կաթողիկոսի կողմից անձամբ հանձնվել է կայսրին: Չնայած որ, ոչ այդ նամակի վերնագրում, ոչ էլ բնագրում չի հիշատակվում այդ պահին Հայոց կաթողիկոսական գահը զբաղեցնող Գրիգոր Գ կաթողիկոսի անունը, այնուամենայնիվ նամակի սկզբից պարզ է դառնում, որ կայսրը խնդրել է Հայոց եկեղեցու առաջնորդին բացատրություններ տալ Հավատս հանգանակի շուրջ և հույներին հուգող մի շարք ծիսադավանական խնդիրների մասին[20]:

Այդ խնդիրներից առաջինը Հայոց եկեղեցու Հավատո հանգանակն էր, յավանաբանության խոստովանությունը: Կաթողիկոսն իր նամակի սկզբում մանրամասնորեն անդրադառնում է Ս.Երրորդության անձերին (Հայր, Որդի, Ս.Հոգի), բնութագրում է նրանց ընկալումը Հայոց եկեղեցու ուղղափառության տեսանկյունից: Հավատո այս հանգանակը գրեթե չի տարբերվում օրթոդոքս եկեղեցու մոտեցումներից և հակադրվում է լատին աստվածաբանությանը՝ Filioque-ի մերժումով: Անդրադառնալով Ռուսի մկրտմանը, կաթողիկոսը հավասարապես զգոված է և՛ Եվտիքեսին, և՛ Նեստորին: Նամակում խոսվում է նաև պատարագի գինու և Ս.Սեռնի մասին, բերվում է հայոց եկեղեցուն բնորոշ դավանաբանական բանաձևը. «τρεῖς ὑποστάσεις καὶ μίαν φύσιν»: Այս վավերագիրը իր քննարկած հարցերով նախորդում է 1165թ. սկսված հայ-բյուզանդական եկեղեցական բանակցություններին (1165-1178), որը բարձրակետն է հայ-բյուզանդական եկեղեցական փոխհարաբերությունների:

1143թ. հետո մեծ տեղաշարժեր տեղի ունեցան Կիլիկիայում և Հյուսիսային Ասորիքում: Եդեսիայի կոմսության կործանումից հետո, 1150-ական թթ. հետո Հայոց կաթողիկոսարանը հաստատվեց Եփրատի ափին գտնվող Հռոմկլա ամրոցում, որը մտել էր Հսղեպի աթաբեկության տարածքների մեջ:

Հայոց կաթողիկոսարանը մեզ հետաքրքրող պատմաշրջանում հայերին միավորող համազգային միակ կազմակերպությունն էր, այն փաստորեն պետություն էր պետականությունը կորցրած ժողովրդի համար: Նրա իշխանության մյուս առանձնահատուկ կողմն էլ այն էր, որ այն տարածվում էր հայազգի բոլոր հավատացյալների վրա, որոնք բնակվում էին Մերձավոր Արևելքի բազմաթիվ պետություններում: Այդ է

յան քաղաքական կյանքի վայրիվերումների հետ է կապում ողջ աշխարհի կացությունը. «Արդ ընդ սեանն տատանել՝ շարժի և աշխարհ ընդ ամենայն կողմանս սովով եւ սրածութեամբ եւ սասանութեամբ, որպէս ասաց Քրիստոս յաստուածապատում աւետարանութեանն յաղագս կատարածին» (ԹՐ, 1871, էջ 86): Այդ միտումը ընթերցողի մեջ սերմանելու և գաղափարը ՊԽՄ-ի վերջնական ակորդ դարձնելու համար հեղինակի գրչի տակ քիչ դեր չի խաղում Միրիոկեֆալեի ճակատամարտում Բյուզանդական բանակի պարտությանն ծանուցում դիտելով 1176 թ. ապրիլի 11-ի արեգակի խավարումը:

Ուրեմն՝ Ներսես Լամբրոնացու քաղաքական հավատամքի համաձայն պետք էր ամեն կերպ աջակցել Բյուզանդական կայսրության հզորության ամրապնդմանը և դատապարտել ու խանգարել հակաբյուզանդական ուժերի գործունեությանը: Չի կարելի անտեսել նաև այն հանգամանքը, որ ՊԽՄ ժողովածոյի կազմողը, որը դեռ 1182-1183 թթ. եկեղեցական միության հայ-բյուզանդական բանակցությունների հետևողական կողմնակից էր, 1196 թ. Կ.Պոլիս այցելելուց հետո, խոր հիասթափություն է ապրում, տեսնելով Բյուզանդական կայսերական եկեղեցու և պրքունիքի իսկական վերաբերմունքը հայ-բյուզանդական եկեղեցական բանակցությունների շարունակման վերաբերմամբ:

Մյուս կողմից. Հայ-բյուզանդական փոխհարաբերությունների նկատմամբ Հայոց եկեղեցու դիրքորոշման մասին մեր տեսակետները ամբողջական չեն լինի, եթե անտեսենք Հյուսիսային Հայաստանի վարդապետների դիրքորոշումը: Նրանք հայ-բյուզանդական բանակցությունների ողջ ընթացքում ընտրել էին երկխոսությունը ընդհատելու և բոյկոտելու քաղաքականություն: Այդ քաղաքականությունը ուղիղ համեմատական կապի մեջ պետք է տեսնել Վրաց պետության վարած կրոնական քաղաքականության նկատմամբ, որի հետևանքով վերամկրտվում էին Հայոց եկեղեցու ներկայացուցիչները, քաղկեդոնականների ձեռքն էին անցնում Հայոց եկեղեցիներն ու վանքերը: Այդ է պատճառը, որ բյուզանդական եկեղեցու նկատմամբ վերաբերմունքը տարբեր էր Կիլիկիայում և ամբողջովին հակառակ Հյուսիս-արևելյան Հայաստանում: Գրիգոր Տուտեորդին և նրան ժամանակակից հյուսիս-արևելյան մյուս վարդապետները փորձում էին ամեն կերպ խոչընդոտել հայ-բյուզանդական եկեղեցիների մյության կիլիկյան վարդապետների ծրագրին: Նրանք իրենց նամակներով ժամանակ առ ժամանակ սթափության կոչեր էին անում Հռոմկլայի կաթողիկոսներին և Կիլիկիայի Ռուբինյան իշխանության ղեկավարներին:

Կոմնենոսների հարստության վերջին տարիներին քաղաքական անկայունության հետևանքով Բյուզանդական կայսրությունում կրկին հալածանքներ սկսվեցին Հայոց եկեղեցու ներկայացուցիչների դեմ: Այդ հալածանքների թիրախ դարձան Փիլիպուպոլսի շրջանի հայկական հա-

մայնքները: Հակահայկական պրոպագանդայի արտահայտություններից մեկն էլ Անդրոնիկոս Կոմնենոսի (1183-1185) կողմից Թեոդոսիոս Քոլաղիոտես (1179-1183) պատրիարքի գահընկեցությունն էր, որին ներկայացված մեղադրանքներից մեկն էլ ըստ բյուզանդական պատմիչ Նիկետաս Խոնիատեսի՝ պատրիարքի հայկական ծագումն էր: Իհարկե այս գարշահոտ հայոց եկեղեցին բավական ամուր կարգավիճակ էր ձեռք բերել Բալկաններում: Ըստ Վարդան Արևելցու այստեղ գործում էր հայոց եկեղեցուն ենթակա երեք եպիսկոպոսական աթոռ[21]: Այս եկեղեցական կազմակերպությունը լուծարելու միտում ուներ Իսահակ Անգելոսի (1185-1195) կրոնական քաղաքականությունը, որի հիմնական դրույթները շարադրված են Գրիգոր Դ Տղա կաթողիկոսին ուղարկված նամակում[22]: Այստեղ կայսրն արդարացնում է Բյուզանդական եկեղեցու որդեգրած կրկնամկրտությունների սըլակտիկան: Հենց այս քաղաքականության նկատմամբ դժգոհությունն էր, որ Գ խաչակրաց ռազմարշավի ժամանակ Փիլիպուպոլսի հայկական բնակչությունը ապստամբեց Բյուզանդական կայսրության դեմ և քաղաքն հանձնեց գերմանական խաչակրաց բանակին[23]: Ահա Կոմնենոսների կայսրության այս վերջին իրադարձությունների լույսի ներքո էլ ԺԳ դարի սկզբի բյուզանդական մատենագիրները և հատկապես Նիկետաս Խոնիատեսը, որը այդ տարիներին Փիլիպուպոլսի քաղաքապետն էր, անդրադառնում են Հայոց եկեղեցու և հայ ազգաբնակչության նկատմամբ կայսրության վարած քաղաքականությանը:

AZAT BOZOYAN

ARMENIAN CHURCH AND BYZANTINE EMPIRE IN THE 11-12 CENTURES

The article include some questions on Armenian-Byzantine relations in the epoch of the Comnenoi temps and duscussed some Byzantinc document.

ՃԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. G.Ostrogorsky, History of the Byzantine State, Oxford, 1956, p. 303-309.
2. G.Ostrogorsky, History..., p. 315-324; Ф.Успенский, История Византийской империи. Отдел VI. Комнины, т.4, М. 2002, с. 112-113.
3. G.Ostrogorsky, History..., p. 320; Ф.Успенский, Указ. соч., с. 146.
4. Տե՛ս այդ մասին G.Dcdeyan, Les Armeniens entre Grecs, Musulmans et Croises, vol. 2, p. 733-735.
5. Այդ մասին տե՛ս G.Dedeyan, Les Armeniens..., t. I, p. 249-252.
6. Տե՛ս Papadopulos-Kerameus,' Αναλεκτα ' Ιεροσολυμικῆς σταχυλογίας, I, SPb. 1891, p. 116-123; H.-G. Beck, Kirche und theoilogiche Litcrature im Byzantinischen Reich, München, 1959, p. 610.

7. ԺԱ դարի Բ կեսի եկեղեցա-դավանական վեճի էությանը անդրադարձել են Նիհւս Գարսոյանը (N.G.Garssoïan, The Problem of Armenian Integration into the Byzantine Empire.- in: Studies of the Internal Diaspora of the Byzantine Empire, Washington, 1998, p. 112-122) և Ժան Գույարը (J.Gouillard, Gagik II défenseur de la foi Arménienne. MT, 7, 399-418):

8. Տե՛ս Gouillard J.. Le synodikon de l'orthodoxie.- TM, 2, 1967, p. 204-205; Garsoïan N., L'abjuration du moine Nil de Calabre.- BS, XXV/1, 1974, 12-27; Mullett M., Theophylakt of Oehrid. reading the letters of a byzantine archbishop, Birmingham Byzantine and Ottoman Monograph, 2, Aldershot, 1997, p. 88-89, 187, 240-241 Dedeyan G., Les armeniens..., t. 2, p. 735-736. ԺԱ-ԺԲ դդ. բյուզանդական սկզբնաղբյուրներից հիշատակելի են. Theophilakt d'Aehrida, Lettres, introd., texte, traduct, et notes par P.Gautier, CFHB, vol. XV/2, Thessalonique, 1986, p. 129; Anne Comnene. Alexiade, edit. et trad. B. Leib, t.II, p. 188-189.

9. Տե՛ս Mullet, Theophylact, pp. 88-89; Ducellier A., Kaplan M., Ferluga J., Arrignon J.-P., Carile A., Balard M., Byzanee et monde orthodoxe, A.Colin, Paris, 1986, p. 248-249; Vryonis S., Byznatine Images of the Armenians.- in: R.Hovannisian (dir.), The Armenian Image in History and Litterature, University of California, Los Angeles, 1981, p. 65-81; Zekyan L., The Armenian Community of Philippopolis and the Bishop Ioannes Athmanos, Imperial Legate to Cilicia.- in: G.Kara (dir.), Between the Danube and Caucasus, p.367-368; Dagron G., Minorités ethniques et religieuse dans l'Orient hyzantin à la fin du Xe et au XIe siecle: L'immigration syrienne.- in: TM, 6, 1976, p. 200-204; Ա.Բոզոյան, Բյուզանդիայի արևելյան քաղաքականությունը և Կիլիկյան Հայաստանը, Եր., 1988, էջ 20-21; Սկզբնաղբյուրների մեջ առանձնանում է. Anne Comnene, Alexiade, t. II, p. 179-181, Համմտ. Анна Комнина, Алексиада, с. 396-398.

10. Այդ քաղաքականությունը երկուստեք ահագնացող չավերի էր հասել Ժ դարում. Անանիա Մոկացի կաթողիկոսի (941-965 թ.) իշխանության տարիներին (տես Գ.Տեր-Մկրտչյան, Հայագիտական Ուսումնասիրություններ, գիրք Բ, աշխատ. պրոֆ. Պ.Հ.Հակոբյանի, 1998, էջ 77 նև.):

11. Տե՛ս Anne Comnene, t. II, p. 181-185; 218-223; Theophilacte, Lettres. pp. 178-179, 336-337, 338-339; համմտ. Chalandon F., Les Comenes, t. I, pp. 317-319; Mullett, Theophilact. p. 241; Dedeyan G.. Les Armeniens..., t. 2, p. 739-740:

12. Auge, Politique religieuse...; Garsoïan N., The problem of Armenian Integration into the Byzantine Empire.- in: H.Ahrweiler and A.E.Laiou (dir.), Studies of the Internal Diaspora of the Byzantine Empire, Washington, D.C., 1998, pp. 76-77.

13. Տե՛ս PG, t. 139, 140; համմտ. H.-G. Beck, Kirche, S. 665-664.

14. Ὁ ἐν Κωνσταντινουπόλει Ἑλληνικὸς Φιλολογικὸς Σύλλογος. Ἀνέκδοτα ἑλληνικα συγγραμματια ἐγγραφα τε καὶ ἄλλα κείμενα κατ᾽ ἐκλογήν συλλεγέντα ἐκ τῶν ἐν τῇ „Μαυρογορδατέω Βιβλιοθηκῃ„ ἀναγραφομένων χειρογράφων καὶ ἰδίων πρῶτον ἐκδιδομενα ὑπὸ Παπαδοπουλου του Κεραμέως, Ἐν Κωνσταντινουπολει, 1884, σελ. 59-63; Հայերեն թարգմանությունը տե՛ս Հր.Քարբիկյան, Իսահակ Անգելոս կայսեր պատասխան նամակը Հայոց կաթողիկոս Գրիգոր Տղայիճ.- Էջմիածին, 1967, 4, էջ 54, համմտ. հայ պատմագրության հետ. Հաւաքումն Պատմութեան Վարդանայ վարդապետի, Վենետիկ, 1862, էջ 133:

14. Այս խնդրին առաջին անգամ անդրադառնում է Գրիգոր Բ Վլայասերը «Վասն Զատկին մոլորութեանն» ճառում: Այս վավերագրի բնագրական զուգահեռների մասին տե՛ս Օղլուգեան Ա., Մատենագրական հետազոտություններ Մովսէս վարդապետ Երզնկացու գրական առեղծուածի շուրջ, Էջմիածին 2001, էջ 105-109:
15. Մատթէոս Ուռհայեցի, Ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898, էջ 345.
16. Այս մասին ավելի մանրամասն տե՛ս Բոզոյան Ա., «Կաթողիկոս Հայոց» տիտղոսի նորովի ընկալումը Բագրատունյաց թագավորության անկումից հետո.- Հայաստանը և Քրիստոնյա Արևելքը, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., Երևան, 2000, էջ 80-86:
17. Մատթեոս, էջ 346:
18. Տե՛ս Dédeyan G., Le rôle complementaire des frères Pahlawuni Grigor III. Catholicos, et Saint Nerses Snorhali. coadjuteur, dans rapprochement avec les Latins, à l'epoque de la chute d'Edesse (v.1139 – v.1150).- in REArm. NS. t. XXIII, 1992, p. 237-252.
19. Darrouzes J., Trois doeuments de la controverse greco-armenicnne.- Revue des Etudes Byzantines, 48, 1990, p. 94-97; 101-102; 131-145.
20. Տե՛ս Հաւաքումն պատմութեանն Վարդանայ վարդապետի, Վենետիկ 1862, էջ 133-134:
21. Տե՛ս Հ.Բարթիկյան, Իսահակ Անգեղոս կայսեր պատասխան նամակը Հայոց կաթողիկոս Գրիգոր Տղայիի.- Էջմիածին, 1967, թ. 4, էջ 50-55 (վերահրատ տե՛ս Հ.Բարթիկյան, Հայ-բյուզանդական հետազոտություններ, հտ. Ա, էջ 181-186):
22. Տե՛ս Ա.Բոզոյան, Հայ-բյուզանդական եկեղեցական բանակցությունների վավերագրերը (1165-1178), Եր. 1995, էջ216-220:

ԵՐՎԱՆԴ ԳՐԵԿՅԱՆ

ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ԱՍՏՎԱԾԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋ. ՈՒՐԱՐՏՈՒԻ «ԱՐՔԱՆԵՐԸ»*

(նախնական դիտարկումներ)

Պատմագիտության մեջ առկա են բազմաթիվ ուսումնասիրություններ. որոնք վերաբերում են ուրարտական տերության գլխավոր աստծուն՝ Խալդիին: Դրանցում փորձ է արվել վեր հանել նրա էությունը, նրա տեղն ու դերը դիցարանում և դիցաբանից դուրս: Այս ուղղությամբ արձանագրվել են էական ձեռքբերումներ. բացահայտվել են գործառույթներ, արվել համադրություններ, մեր գիտելիքները հարստացել են նոր փաստերով, շրջանառության մեջ են դրվել բազմաթիվ վարկածներ[1]: Այս ամենով հանդերձ թեման չի կարելի համարել սպառված. այն կարիք ունի հետագա ուսումնասիրությունների:

Ներկայացվող հոդվածում ամփոփված են դիտարկումներ, որոնք հանգում են մեկ հիմնական եզրակացության. Խալդին, ըստ իշխող պատկերացումների, ոչ միայն աստված էր, առաջինը՝ աստվածների մեջ, այլև արքա, արքա՝ երկրում, դիտվելով ուրարտական տերության՝ նաև աշխարհիկ առաջնորդ:

Խալդի՝ մարդ և աստված. հոգևոր ընկալումներ

Տերության մարդկանց համար, որոնք կրողն էին այդ նույն կառույցի, Խալդին ամենակալ էր և ամենուրեք. նա արև էր, թեև կար արևի աստված. ռազմիկ (ադեղնավոր թե տեգավոր), միևչդեռ՝ կար և ռազմի աստված, նա պատճառ էր բարու և չարի, ընդունակ էր կործանելու, միաժամանակ՝ արարչագործ էր, նա պատանի էր, հասուն տղամարդ և կամ ծերունի. նա հավերժ էր: Նա կենսախինդ էր, աղբյուր՝ երջանկության: Մասնագետները հանգամանորեն ներկայացրել են այս ամենը: Կարելի

---

* Հոդվածը մաս է կազմում «Ուրարտուն և իր հարևանները» ծրագրի, որը հեղինակն իրականացրել է Գերմանիայի Վյուրցբուրգի համալսարանի Հին արևելյան բանասիրության ինստիտուտում՝ «Գերմանական ակադեմիական փոխանակման ծառայության» (Deutsche Akademische Austauschdienst) հովանավորությամբ (նոյեմբեր 2003 – հունվար 2004):

տալ. մարդկանց համար կառուցել շենքեր կամ մասնակից լինել պատերազմների առաջնորդելով այդ նույն մարդկանց, կռվել նրանց կողքին (մի պատկերացում, որ գեղեցիկ կերպով ներկայացնում էր Հոմերոսը Տրոյական պատերազմի իր նկարագրություններում), վճռել նրանց բախտը՝ կամենալով չարը կամ բարին: Հունական դիցաբանության մեջ արտահայտված այս միասնությունը, այնուամենայնիվ, դիտվում է որոշակի սահմանափակման կամ շրջանակի մեջ: Ամեն մահկանացուի վիճակված չէր շփվել աստվածների հետ: Նման բախտի, սովորաբար, արժանանում էին առաջնորդները, արքաները, հերոսները, ընտրյալները, ևս մի դրսևորում, որի արմատները, հունական դիցաբանության շատ էջերով հանդերձ, տեսանելի է Արևելքում: Հավատամք դարձած այս դրսևորման ոչ սահմանափակ, «զանգվածային» օրինակը կարող ենք դիտել Ուրարտուում:

Արքա Խալդի

ա) *Ինչ վերաբերում է այդ քաղաքի բնակիչներին, նրանց տեղահանությունը ես ծրագրեցի (և) նույնպես Խալդիին, հույսը Ուբարտու (երկրի). ես հրամայեցի նրան դուրս բերել, ... իր դարպասի առջև ես նրան հաղթականորեն ցած իջեցրի ...:*

բ) *Իմ վստահելիներիս, իմ առաջնորդներին ես ուղարկեցի տաճարը Խալդիի, Խալդիին՝ նրա աստծուն, և Բագմաշթուին՝ նրա աստվածուհուն, ի թիվս նրա տաճարի բազմազան և անհամար հարստության, (ես գերեցի) ..... և բերեցի իմ ճամբարի պատերից ներս:*

Ինչպես նշվել է մասնագիտական գրականության մեջ, ասորեստանյան հաղթահանդեսների մասն է կազմել թշնամու պարտված և գերված արքաների ցուցադրումը ժողովրդին Նինվեի դարպասների մոտ, հաղթանակի և հաղթողի գերազանցության մի յուրատեսակ ցույց, որ հետո որդեգրելու էին հռոմեացիները[7]: Այստեղ ևս տեսնում ենք նույն մոտեցումը. ժողովրդի առջև ցուցադրվել է Խալդին՝ որպես Սարգոնի գերի, որպես հաղթված, որպես *արքա*: Հաղթանակած (ասորեստանյան) արքան, անգամ ասորեստանցիների պատկերացումներում, չէր կարող հաղթել աստծուն, աստվածային ուժին, բայց կարող էր հաղթել *արքային*: Նրանք կարող էին գերի տանել թշնամու աստվածներին, բայց ոչ երբեք կործանել նրանց: Ասորեստանյան գրագիրը քաջ գիտակցել է տարբերությունը Խալդի-աստծո և Խալդի-արքայի: Այս հնարավորությամբ միայն կարող է բացատրվել այն փաստը, որ Խալդիին գերեվարվել է երկիցս[8]: Նախ, որպես արքա՝ ցուցադրվելով ի տես ժողովրդի (հատված *ա*)[9], իսկ այնուհետ՝ որպես աստված. «հաղթահանդեսից» հետո Խալդիին ետ է տարվել տաճար և նորից «գերեվարվել», այս անգամ արդեն իր կնոջ՝ Վաբուբանի (Բագբարթու/Բագմաշթու) աստվածուհու հետ միասին (հատված *բ*)[10]:

Եթե ասորեստանյան աղբյուրն հեղինակած գրագրի՝ «արքունի մեծ դպիր» Նաբու-շալլիմ-շումնուի կողմից փաստն այնուամենայնիվ չի ասվել ուղղակի, ապա միայն այն պատճառով, որ Ասորեստանում արքան, իրականում, շատ ավելի մոտ էր աստվածային իշխանությանն ու իրենց՝ աստվածներին, ինչ-որ տեղ դիտվելով նրանց հավասար. նույն շարքում՝ զգայական ոլորտում, և փաստացի՝ իրականում: Այս առումով Ասորեստանում, կամ, առնվազն, պալատական սրահներում, ինչպես երևում է, ավելի շատ տեղ էր տրվում աստվածների և նրանց իշխանության «բանաձևային պաշտամունքին» քան իրական. գուցե և երբեմն նկատելի բացառություններով՝ առանձին տիրակալների պարագայում: Այս երևույթը դիտվում է ամենուր՝ և պատկերագրության մեջ. ուր գլխավոր դերում արքան էր, մինչ աստվածները ներկայացված էին իրենց խորհրդանիշերի տեսքով, եթե չասենք սոսկ իբրև խորհրդանիշ կամ որպես խորհրդանշական, գեղեցիկ մի նախշազարդ՝ չխախտելու համար պատկերագրության ձևավորված կաղապարները, և արքայական արձանագրություններում, որոնցում գլխավոր հերոսը վերստին արքան էր. գուցե և աստվածներից հետո, նրանց բավական մոտ, բայց արքան, ուրքւսն անձամբ կամ նրա ներկայության ինչ-որ արտահայտություն՝ արքայի խոսքը, հրամանը կամ պարզապես արքայի գործը[11]:

Այլ էր պատկերն Ուրարտուում: Շատերին է հայտնի, թե ուրարտական աղբյուրներում ինչպիսի տեղ են զբաղեցնում Խալդիի հիշատակումները: Նրա անունը, եզակի բացառություններով, սովոկա է յուրաքանչյուր տեքստում՝ երբեմն կրկնվելով բազմիցս, կարելի է ասել ինչ-որ տեղ նրա «ճնշող» ներկայության մասին: Այդ պատճառով է Գրիգոր Ղևսփանցյանն օգտագործել *խալդամոլություն* տերմինը[12] կամ Չառլզ Բըրնին ուրարտական պետությունը կոչել Խալդիստան[13]: Երկար ժամանակ պատմագիտության մեջ արմատացել էին նաև «խալդեր», «խալդական» անվանումները[14]: Ուրարտական բոլոր հանդիսավոր արձանագրություններում և նախևառաջ *արքաների* տարեգրություններում առաջնությունը պատկանում էր Խալդիին. նա էր դուրս գալիս արշավանքի, նա էր հպատակեցնում երկրները կամ դա արվում էր նրա հրամանով, նրա կամքը աներկբա էր, հաղթական էր նրա զենքը և ակնհայտ՝ գործող *արքան* մղված էր եռին պլան: Այս նույնը կարելի է ասել ուրարտական պատկերագրության համար: Նրանում գրեթե բացակայում է *արքան*, արքայի *անձը*, մեկը եզակի երևույթներից՝ իր ժամանակաշրջանի համար[15]:

Կարելի է ենթադրել, որ ասորեստանցիներին քաջ հայտնի էին իշխանության մասին ուրարտական պատկերացումները: Նրանց հայտնի էր, թե ով էր, այնուամենայնիվ, երկրի տիրակալը նաև աշխարհիկ դաշտում:

«Իրավական» պատկերացումներ

Ուրարտական արձանագրություններում Խալդի աստվածը հանդես է գալիս որպես տերության միակ տիրակալ՝ (graf.) ushanume ueselase musi aluka uesiiauli PAP (տրբ. burgalani) KUR.KUR^{MES} (տրբ. ^{KUR}surili) – *պարգևեց-ինձ իշխանություն*[f1] *ճշմարիտ ճա-որդ*[ ] *իշխում է*[ ] *ողջ տերությանը* (երե ճիշտ է տրված մեկնությունը)[16]: Նրա կամքով և ձեռքից *արքաներ* կարող էին ստանձնել իշխանությունը սոսկ իբրև տեղապահներ, այսինքն՝ կոչվելով ի ծառայություն: Դա էր նպատակը նրանց գործունեության՝ ինչպես վկայում են տարեգրությունները *հանուն Խալդիի այս մեծագործությունների մեկ տարում կատարեցի* կաղապարային արտահայտությամբ (graf. ^{d}Haldia istinie inanili arniusinili I MU (արբ. šusini sali) zadubi)[17]:

Ասորեստանյան տեքստերից «Լուվրի աղյուսակում», կարող է թվալ, պահպանվել են ուրարտական *արքաների* թագադրության արարողության որոշ դրվագներ[18]: Ասորեստանցիների ընկալմամբ գուցե և դա թագադրություն էր, թագադրություն արքայի, մինչդեռ ուրարտացիների մոտ այն եղել է պարտականությունների սոսկ ստանձնում, ծառայության բարձրագույն աստիճան, ծառայություն՝ արքայի մոտ, նրա մշտական, իրականում աներևույթ, բայց պատկերացվող, «զգայական» ներկայությամբ: Թերևս պատահական չէ, որ ուրարտական տեքստերի գերակշիռ մեծամասնությունում այս փաստը նշվում է ընդամենը «*հայրական տեղը բարձրանալու (զբաղեցնելու, բազմելու)*» մասին արտահայտությամբ՝ չհիշելով արքայական իշխանության որևէ խորհրդանիշ[19]:

Նշված արտահայտության հետ երբեմն օգտագործվել է նաև *արքայական* թարգմանվող LUGÁL(ernu)-tuḫi(ni) բառը[20]: Այստեղ միայն նշենք, որ տերմինն արտահայտել է, այսօրվա մեր ընկալմամբ, *պետությունը* իմաստը, վերաբերելով ցանկացած երկրի - պետական կազմավորման, ցանկացած (պետական) կառուցվածքով: Հետաքրքիր է, որ «Լուվրի աղյուսակ»-ի՝ Խալդիին վերաբերող անդրադարձներից մեկում ուրարտական պետությունը համարվում է *հովվությունը*.

[.....s]a ul-la-ni-uš-šu ^{gis}PA ú a-gu-ú la in-na-ás-su-ú si-mat re-e-[ú-ti]

առանց նրա (համաձայնության) չեն կարող կրվել գայիսոնն ու խույրը՝ խորհրդանիշները հովվության...[21]:

Այստեղ առկա է դրույթ, որը ոչ միայն վերաբերում է իշխանության օրինականության մասին եղած պատկերացումներին (առանց Խալդիի համաձայնության ոչ ոք չէր կարող իշխել), այլև պարունակում է ակնարկ ուրարտական տերության պետական կառուցվածքի մասին: Աքքադերեն re'uti՝ *հովվությունը* տերմինը կարող էր և արտահայտել այն կառույցները, որոնցում առաջնային դերը պատկանում էր քրմական դասի ներկայացուցիչներին, այսինքն՝ ուրարտական պետությունը նրանք համարել են քրմապետություն կամ հովվապետություն: Կարիք չկա մեկ

անգամ ևս ընդգծել, որ այս դեպքում տերության փաստացի տիրակալները պետք է միաժամանակ հանդիսանային նաև հոգևոր առաջնորդներ, մի մոտեցում, որի հնարավորությունը վաղուց է արտահայտվել մասնագիտական գրականության մեջ[22]:

Ի դեպ, այսպես ասած «իրավական» պատկերացումները վերարտադրող այլ արձանագրություններում ուրարտական տիրակալները անվանվում են «ժողովուրդների ճշմարիտ հովիվ» (LÚsie musi LÚÙKU$^{ni:š}$)[23], «առաջնորդ» ($^{(LÚ)}$ipsuše), միաժամանակ նաև՝ Խալդի աստծո սպասավորներ կամ, գուցե ավելի տեղին կլինի՝ Խալդի աստծո հետևորդներ, աստծո մարտիկներ (^{d}Haldiei LÚERUM). սեպագիր տարբեր դպրություններում ERUM (IR/ARAD)՝ *սպասավոր, ծառա, ստրուկ* նշանակող գաղափարագիրն արտահայտել է նաև *աստծո հետևորդ, աստծո մարտիկ* իմաստները[24]: Իսկ եթե այս վերջինների մեջ փնտրենք Գրիգոր Ղափանցյանի ակնարկած «խալդամոլությունը»: Արդյո՞ք Խալդին գաղափարախոսություն չէր, քաղաքականություն, որ կրում էին ուրարտացիները, առաջնորդվում դրանով և իրականացնում այն[25]: Գուցե այստեղ տեսնենք այն հետևողականությունը, որով ուրարտական նվաճողները պարտադրում էին Խալդիի պաշտամունքը՝ որպես իրենց աստծո, և Խալդիի իշխանությունը՝ որպես իրենց արքայի: «Խալդամոլություն» ասվածը հավատարմություն էր, հավատարմություն արքայի հանդեպ, նրա կամքի աներկրա իրականացում, որը փոխհատուցվում էր նրա բարեկամեցողությամբ իր հետևորդների հանդեպ: Խալդին, որպես աստված, աղբյուրն էր «կյանքի», «պայծառ օրերի», «ուրախության», աղբյուրը՝ մարդկային երջանկության[26], հովանավորն իր հետևորդ(ներ)ի ու նրա(նց) (քաղաքական) իշխանության, երաշխիքը՝ ռազմական հաջողությունների[27], ու նաև աղբյուր՝ բարեկեցության. նա էր պարգևում հարստություն՝ այս անգամ արդեն որպես արքա (տես ստորև):

«Իրավական» բնույթի պատկերացումների մասն են կազմում Արգիշտի Առաջնորդու և Ռուսա Էրիմենիայորդու այն երեք արձանագրությունները, որոնց կաղապարային բանաձևերում հիշվում են իշխանության խորհրդանիշներ[28]: Դրանք տալիս էր Խալդին՝ տերության առաջնորդ(ներ)ին օժտելով «երկրային ճշմարիտ իշխանությամբ» (alušme šuini esini musi uešelaše uešigi/uešiuiali ?)[29]:

Բանաձևերի հայտնվելը ուրարտական՝ բացառապես ուշ շրջանի տեքստերում չի կարող հարցեր չառաջացրել: Դժվար է ասել, արդյո՞ք - դա զուտ նորամուծություն էր, ինչպես շատ այլ բանաձևեր (ի դեպ, սրանց համար ևս կարելի է գտնել զուգահեռներ միջագետքյան աղբյուրներում[30]), վկայություն՝ արքայական իշխանության ինչ-որ տարանջատմա՞ն (աշխարհիկ և հոգևոր ոլորտների), ոյականից ենթադրվող քրմապետ-արքայի դերի բարձրացում՞՝ պետական իշխանության կայացմանը զու-

գրնթաց, թե՞ դա կարող էր խորհրդանշել իշխանության անցում *արքա-յից* ոչ անմիջական գահաժառանգին. ինչի համար կարիք էր զգացվել շեշտելու Խաղղի արքայի կամքը (հմմտ. բանաձևերի *(նա) որը-ինձ թագ(իյ)[ՀՐ] կամեցավ* արտահայտությունը). չէ՞ որ միայն նա կարող էր մայրաքաղաքին օժտել օրինական իշխանությամբ[31]: Իսկ Աղգիշտին, Ռուսայի դեպքին, գահաժառանգը չէր[32]: Փարատված չեն նաև Էրիմենույի՝ Ռուսա-յի հոր, իշխանության հետ կապված կասկածները[33]:

LUGAL - արքա՞, թե ...

Ուրարտական սեպագիր արձանագրությունների մեզ հետաքրքրող շարքում, որոնց հիմնական մասը ընծայագրեր են՝ վերաբերելով և պաշ-տամունքային շինությունների, և առանձին առարկաների, Խաղղին հան-դես է գալիս շումերագիր EN տիտղոսով: Մասնագիտական հրատարա-կություններում այն աներկբա թարգմանվել է «տեր»՝ հիմք ընդունելով նաև արդեն աքքադական դպրության մեջ EN գաղափարագրին հաճախ տրվող bēlu(m)՝ «տեր» գուգահեռը[34]: Մինչդեռ, հայտնի են օրինակներ, երբ հինաբաբելյան սեպագիր դպրության տարբեր տեքստերում այդ նույն գաղափարագիրը, որի սկզբնական նշանակությունը, ի դեպ, ամենևին էլ «տեր»-ը չէ [35], կիրառվել է «արքա» նշանակությամբ[36]: Նույնը կարելի է ասել անգամ աքքադական դպրության համար. շատ տեքստերում այն պարզապես նշանակել է «արքա»[37]: EN գաղափարագրի ուրարտերեն հնչյունագրի՝ curi բառի խուրրիերեն գուգահեռն է eurə-ն[38], որը նա ունի «սրքա» նշանակությունը (eurenə, euernə) [39]:

Եթե Խաղղին, մեր կարծիքով, ընկալվել է որպես արքա և կոչվել «արքա», ապա ինչ է նշանակել ուրարտական տիրակալների տիտղոսաշա-րերում մշտապես հանդիպող գաղափարագիրը:

Նախ հարկ է նշել, որ միջագետքյան դպրության մեջ «արքա» հա-մատեղ արտահայտել է LUGAL շումերագիրը, որը, ի տարբերություն ու-րարտական տիտղոսաշարերի LUGÁL-ի (վերջինս աքքադագիր է), ունի միանգամայն այլ գրություն[40]: Այս գաղափարագրին են հիմնականում դիմել միջագետքյան գրիչները «արքա» բառն արտահայտելիս: Չնայած դրան, սեպագիր տարբեր դպրություններում, առավել ևս՝ նորասորես-տանյան, երկու գրելաձևերը վտիարինել են միմյանց առանց որևէ օրի-նաչափության և հավասարազոր են:

Ի տարբերություն, օրինակ, ասորեստանցիների, որոնց տեքստերի բանաձևային կառուցվածքը տեսնում ենք ուրարտական արձանագրութ-յուններում՝, վերջիններիս մոտ նկատվում է ինչ-որ օրինաչափություն: Վիմագրերում և մասնավորապես՝ տիրակալների տիտղոսաշարերում, գրիչները կիրառել են բացառապես LUGÁL գաղափարագիրը, սեպա-գիր արձանագրություններում՝ LUGAL-ը[42]:

Միանգամայն հիմնազուրկ կլինի ենթադրել. թե այս տարբերությունն ունի սոսկ գրաֆիկ (կամ պրակտիկ) նշանակություն. LUGAL-ը զբաղեցնում է շատ ավելի կարճ տարածություն և ունի պարզ գրելաձև[43]: Այդ դեպքում ինչ բացատրություն տալ այն փաստին. որ. օրինակ. Քելիշինի երկլեզու կոթող-վիմագրի ասորեստանյան տարբերակում մշտապես կիրառվել է LUGAL գաղափարագիրը. ուրարտականում՝ բացառապես LUGÁL-ը[44]:

Արդյո՞ք դրանցում գրիչները դրել են ինչ-որ տարբերություն՝ կիրառելով նաև ըստ այդմ: Գուցե ուրարտական պետության փաստացի առաջնորդը «արքա» էր ասորեստանյան տարբերակում՝ օտար ընկալման համար. և LUGÁL՝ ըստ իրենց պատկերացումների՞:

Իրոք, ինչու՞ տեքստերում օտար տիրակալները կարող էին արտահայտվել երկու գաղափարագրերով էլ (վաղագույն տեքստերում՝ բացառապես LUGAL-ով)[45], մինչ ուրարտական արքաները. շատ հաճախ միևնույն տեքստում՝ միմիայն LUGÁL-ո՞վ[46]: Այստեղ տեղին է մեջբերել Յ. Ֆրիդրիխի և Գ.Ղ. Ղափանցյանի մոտեցումը: Անկախ ժամանակի հեռվից երևացող խոցելի կողմերի, այն ինքնին հետաքրքիր է. գիտնականները միանշանակ տարբերակում էին այդ գաղափարագրերը[47]: Հիշենք նաև հետազոտողներից Ի. Դյակոնովին, որը քննարկվող գաղափարագիրը, հակառակ իր սկզբնական մոտեցման, հետագայում մշտապես տառադարձել է BUZÚR: Միգուցե նա ևս զգացել է ինչ-որ տարբերություն, չնայած դա չի նկատվում հրատարակություններում. նրա համար գաղափարագիրը ևս «արքա» է[48]: Իսկ BUZÚR-ը, այնուամենայնիվ, թվում է ավելի տեղին. սկզբնապես նշանակելով «պահպանություն» (ւպք. puzru), այն հետագայում է նույնացվել «արքա» գաղափարին. որպես «պահապան» (puzru = MAN)[49]: Ըստ էության գործ ունենք գաղափարագրի հենց այս ընկալման հետ, ինչը միաժամանակ տեսնում ենք ուրարտական տեքստերում: Խոսքը, մանավորապես, վերաբերում է Ռուսա Սարդուրդու Սովանայի երկլեզու կոթող-վիմագրին, որի ասորեստանյան տարբերակում կարդում ենք.

[x] ana-ku DÙG.GA šá ana UGU-ia i-[re?-u] ..... [x] x ki-li-ú na-ṣir e-q[u-ti]

Ես սքանչելի հովիվն եմ՝ ինձ վստահվածի, ... պահապանը ժառանգության[50]:

Ուրարտական այլ տեքստերում երբևէ չհանդիպող այս միտքը բավական խոսուն է՝ կարծես մատնանշելով «հովվի» գործառույթը՝ նա տերության փաստացի առաջնորդն էր, նրան էր աստված-արքան վստահել պետությունը, որի համար և պատասխանատու էր:

Հետևաբար, որքանով է նպատակահարմար գաղափարագրի «արքա» ընկալումը, եթե ուրարտացիներն իրենք որպես այդպիսին կարծես թե չեն դիտել այն: Ուրարտական *արքաների* տիաղոսաշարերի LUGÁL

ղեպքում՝ մսեղիքն ու լյարդը (barzani zieldi): Բացի այդ, Ուրարտուում երբևէ չէր կսրող *արքային* հասնել ավելին, քան Խալդի աստծուն կամ նրա տանը, եթե անգամ առաջինին դիտենք որպես գերագույն քուրմ: Հակասություն, որն ինքնըստինքյան վերանում է Խալդիին որպես արքուն ընկալելիս: Ի դեպ, այս միտքն է հուշում նաև «սրքա» գաղափարագրին հաջորդած «Խալդիի սոռն» հասկացությունը. այսինքն. կարծում ենք՝ երկրորդ դրույթն ամբողջությամբ վերաբերել է Խալդիին և նրա «տանը», այն դեպքի համար, երբ նա քաղաք այցելի:

Այստեղ, ինչպես երևում է, պարզապես գործ ունենք հինարևելյան պատկերացումներից ևս մեկի հետ, երբ երկրում ճանապարհորդում էին աստվածները: Այսինքն, աստծո արձանը (կամ նրա խորհրդանիշը, ասենք՝ որևէ զինատեսակ) հանդիսավոր թափորի ուղեկցությամբ (որը հաճախ գլխավորում էին երկրի առաջնորդները), տարվում էր քաղաքից քաղաք, յուրաքանչյուր բնակավայրում կատարելով որոշակի ծիսակատարություններ՝ ի նշանավորումն աստծո այցելության: Պաշտոնի այս ձևը հայտնի էր և միջագետքյան, և փոքրասիական աշխարհներում (մասնավորապես՝ խեթական)[56], հետագա դրսևորում ստանալով նաև քրիստոնեության մեջ (ընդունվում է, առավելապես, արևմտյան տիեզերական եկեղեցու կողմից):

Այս առումով հետաքրքրական է Թոփրաք-քայեից գտնված աղյուսակներից մեկի տեղեկությունը, որը մեկնաբանվել է կապված Խալդի աստծուն Ռուսախինիլի Քիլբանիկայի փոխադրելու հետ (եթե ընդունենք տրված մեկնությունը)[57]: Տեքստից, թեև դժվար է միանշանակ եզրակացնել՝ արտյոք խոսքը վերաբերում է կրոնական արարողության՝ աստծո ուղևորությանը դեպի Ռուսախինիլի[58], ինչի հնարավորության մասին արտահայտվեց վերը, թե ընդհանրապես՝ Ռուսախինիլի Քիլբանիկային՝ Ուրարտուի նոր մայրաքաղաքը, նաև Խալդի աստծո պաշտամունքի գլխավոր կենտրոն հաստատելուն, ինչը կարող էր կապ ունենալ Մուծուսծիրի կորստյան հետ:

Տեքստային վկայություններ

Ուրարտական արձանագրություններում ևս կարելի է գտնել հետաքրքիր վկայություններ: Դրանք գերազանցապես շինարարական/պաշտամունքային բնույթի տեքստեր են՝ չորս հիմնական վկայություններով:

ա) Ժամանակագրորեն հնագույն վկայությունը, որը կարող ենք նշել վստահությամբ, պատկանում է Մենուայի միահնձյա կառավարման տարիներին: Կուլբանցիից գտնված այդ տեքստում, մասնավորապես, ասվում է.

(graf.) ^{d}ḫal-di-i ku-r[u-ni] ^{d}DINGIR^{MEŠ}-na ku-ru-ni ma-ni-ni iš-ti-n[i ^{m}me]-nu-u-a ar-di-se ..... šu-i-ni-ni bar-za-ni zi-el-[di ^{m}me]-nu-a ^{d}ḫal-di-še u-su-ni

Խալդի (աստծո) կողմից՝, աստվածների կողմից՝ քող լինի Մենուայի հրամանը. ..... ամբողջից մսեղիքն (ու) լարդը Մենուայիին Խալդիին հատկացրեց՝[59]:

Տեքստն ինքնին առանձնանում է նրանով, որ այստեղ Խալդին հանդես է գալիս որպես գործող անձ, ընդ որում՝ որպես գերագույն իշխանավոր, որը կարող էր Մենուային (իսկ նա տերության փաստացի առաջնորդն էր) տալ հրաման, ինչպես նաև նրա համար սահմանել մասնաբաժին: Մի բանաձև, որով, գուցե, իրավական հենք էր ստանում նաև տերության հովվապետներին ըստ պատկերացումների արքայի կողմից տրվող մասհանումը, բերևս՝ մսսնաբաժին կանոնավոր գոհաբերություններից (տուրքերից[60]), մի դրույթ, որը գործելու էր *«այսուհետ»*[61]:

բ) (graf.) i-ú LUGAL-nu-a-di [a?-l]i-e-me ^{d}[ḫal]-di-še a-ru-ni u-i(-)al-di-ni-e VII LIM $_{1}$V$_{1}$ [ME] LX VI ^{GUD}[p]a-ḫi-ni^{MEŠ} L LIM L LIM VIII ME LXX VIII UDU^{MEŠ} ^{d}ar-gi-[iš]-t[i]-še a-li-e i-na-ni MU.MU ú-i-ia-bi

երբ ես «արքա» դարձա՝, (ահա այն) որը-ինձ Խալդին տվեց պ(-)aldine – 7566 (գլուխ) խոշոր եղջերավոր անասուն, 51878 (գլուխ) մանր եղջերավոր անասուն: Արգիշտին ասում է.- սա տարեկան (նա) պaեbi[61]:

Տեքստի թարգմանությունը վերջնական չէ. կարելի է շարունակել քննարկումը կամ միանալ արդեն իսկ առաջարկված այս կամ այն ընթերցմանը: Չխորանալով մանրամասների մեջ, այստեղ միայն սահմանափակվենք նշելով, որ հատվածն ամբողջության մեջ շատ է հիշեցնում Մենուայի վերոնշյալ տեքստը. սա ևս կարելի է մեկնաբանել կապված Խալդիի՝ այս անգամ Արգիշտիին տված հարստության հետ՝ մեծաքանակ ընտանի կենդանիներ, որպես ամենամյա մասհանում կամ պարգև (յուրատեսակ «ծառայության վարձ»): Տեքստի մասին կարելի է ասել նույնը, ինչ Մենուայի վիմագրի՝ քննարկված հատվածի մասին:

գ) Կարևոր վկայություններից են նաև ուրարտական մի քանի արձանագրությունների այն դրվագները, որոնցում նշվում է «Խալդյան դռան» կողմից տրված հրամանի մասին: Ահա դրանցից մեկը.

(graf.) ^{m}ru-sa-a-še a-li ^{d}ḫal-di-na-ni KÁ bi-di-ni gu-ni ar-di-še gu-ni ar-qa-ú-še ma-nu-li qu-du-la-ni šu-ḫi-na-ṣi-e MÁŠ.TUR ^{d}ḫal-di-e ni-ip-si-du-li-ni GUD 2 UDU ^{d}ḫal-di-e TAG...

Ռուսան ասում է.- Խալդյան դռան կողմից իրապես՝ հրամանը, իրապես՝ arqəuše (երբ) լինի, (տաճարային) նորակառույց համալիրի (կապակցությամբ) (մեկ) ուլ Խալդիին քող-ծղոթկիգվի, (մեկ) ցուլ (և) երկու ոչխար Խալդի (աստծուն) քող-մատուցվի... (հաջորդում է այլ աստվածությունների թվարկումը)[62]:

Տեքստից է պարզ դառնում, որ ծևակերպումներում հրամանը(ները)ը գալիս էր Խալդյան դռնից. այսինքն՝ «արքունիքից». *արքայից*՝ Ռուսայիի, փաստորեն վերապահված էր միայն հրամանի փոխանցումն ու իրագործումը:

Այս դրույթը կարող ենք ենթադրել Ռուսա II-ի հեղինակած առնվազն երեք այլ տեքստերում: Դրանց պահպանված հատվածներն Այանիսի susi-տաճարի արձանագրության հետ, որից սկսվել է մեջբերումը, ունեն բազում ընդհանրություններ, ինչը մղում է ենթադրելու, որ դրանք կրկնագրեր են[63]:

դ) Այս շարքը եզրափակենք Թոփիրսք-քալեից գտնված և մեր կողմից արդեն իսկ հիշված տեքստով.

(graf.) a-še LUGAL-ni ^{d}ḫal-di-ni a-šú-me ^{m}ru-sa-a-ḫi-na ^{KUR}qi-il-ba-ni-ka

…երբ արքա Խալդին թողնվեց-մեզ՝[7] Ռուսախինիլի Քիլբանիկայի (քաղաքում)[64]:

Տեքստն ինքնին խոսում է նրանով, որ Խալդին ուղղակի սնվանվել է «արքա»՝ *արքա Խալդի* (LUGAL-ni ^{d}Ḫaldi-ni): Այստեղ, ամեն դեպքում, չենք կարող չհիշել մասնագիտական գրականության մեջ առկա տարաբնույթ կարծությունները և տեքստի ընկալման, և տոպոգրաֆիական հետ կապված[65]:

Գուշակություն

Կարիք չկա մանրամասնել այն հսկայական նշանակությունն ու դերը, որ ուներ գուշակությունը հինավարեվյան հասարակություններում՝ և մարդկանց կյանքում, և պետության համար[66]: Բացառություն չէր նաև Ուրարտուն: Այստեղ, ընդհակառակը, մենք շատ ավելի վստահությամբ կարող ենք խոսել առնվազն արքունիքում, ինչպես և երկրի քաղաքական/հոգևոր կենտրոններում գործող պետգավմախոռուրանների կամ պատգամախոսի ինստիտուտի գոյության մասին: Ուրարտական իշխանության աստվածապետական կառուցվածքը ինքնին ենթադրում էր նման ինստիտուտի գոյություն. անհրաժեշտ էր ունենալ միջնորդ մի օղակ՝ աստված-արքայի (և մնացյալ աստվածների) ու մարդկանց միջև: Այս հնարավորության մասին է ակնարկվում նաև «Լուվրի ալյուսակ»-ում, Մուծածիրից տարված արժեքները թվարկելիս.

I tim-bu-ut-te GUŠKIN sa a-na sul-lu-um par-si sa ^{d}Ba-ag-bar-ti al-ti ^{d}Ḫal-di-a su-tam-lu-u ni-siq-ti NA_4.MEŠ...

կնիքով ոսկե մեկ մատանի՝ հաստատելու համար որոշումները Բագբարթուի (Բագմաշթուի)՝ Խալդիի կնոջ...[67]:

Ասորեստանյան աղբյուրի այս տեղեկությունը համարվել է վկայությունը գոնե Մուծածիրում, Խալդի աստծո տաճարում կատարվող գուշակության մասին. աստվածների կամքը, ինչպես ենթադրվում է, հայտնել է Վանտւրանի աստվածուհին[68]:

^{LU}A.NIN-li՝ քուրմ-պատգամախոս (*)

Խոսելով պատգամախոսի ինստիտուտի մասին, սրի գոյությունը Ուրարտուում հազիվ թե մեծ կասկածներ առաջացնի, ինքնըստինքյան հասց կառաջանա ուրարտական տեքստերում այս կարևոր գործառույթն արտահայտող որևէ տերմինի կամ գաղափարագիր համագրի առկայության հնարավորության վերաբերյալ, հարց. որին կարող է տրվել դրական պատասխան: Խոսքը վերաբերում է ուրարտական արխիվի մի քանի տեքստերում և կնքադրոշմներում հիշվող գաղափարագրերի ^{LU}A.NIN(-li/LI ?) կոմբինացիային:

Կարմիր-բլուրի սեպագիր աղյուսակների հրատարակությամբ շրջանառության մեջ դրված այս կոմբինացիան, որն անհայտ էր սեպագիր այլ դպրություններին, թարգմանվել է «տիրուհու/թագուհու որդի», «օրինական թագաժառանգ» իմաստներով[69]: Հետազոտողներն էլ առաջնորդվել են ըստ այդմ[70]: Միայն Փ. Ջիմանսկին է հնարավոր համարել նրանում տեսնել այլ իմաստ և բովանդակություն[71]: Տարիներ անց Ու. Հելվագն առաջարկեց կոմբինացիան ընթերցել ^{LU}A.ZUM-li տարբերակով, որպես մի պաշտոն, որի իրավասության ներքո էր ենթադրվում ջրաբաշխման գործը: Այսպիսով, կոմբինացիան նա ընկալում էր որպես «ջրային տնտեսության նախարար»[72]: Մ. Սալվինին, ելնելով Ռուսախինիլի Հուդուրուկայիի (Այանիս) կնքադրոշմների պահպանված տեքստերից, ընդհանրապես հրաժարվեց սեպախմբերին վերագրվող գաղափարագիր նշանակություններից, նրանցում տեսնելով վանկագրեր և, ըստ այդմ, ինչ-որ մի պաշտոն՝ ^{LU}a-şu-li[73]: Այստեղ հարկ է նշել, որ որպես հիմք ընդունված եզակի կնքադրոշմն իրոք պատկերում է NIN գաղափարագրին նմանվող -şu- սեպախումբը[74], սակայն դա, գոնե մեզ համար, չի կարող հիմք հանդիսանալ հրաժարվելու նախկին ընթերցումներից: Կարմիր-բլուրի և Բաստամի կնքադրոշմները չեն ենթադրում նման հնարավորություն. նրանցում գաղափարագիրը շատ դեպքերում ընթերցվում է վստահությամբ[75]: Ըստ այդմ, Այանիսի վերոհիշյալ օրինակի պարագայում եթե գործ չունենք տեխնիկական խոտանի հետ, ապա չպետք է բացառենք երկու հասկացությունների զուգահեռ գոյության հնարավորությունը: Ի դեպ, Այանիսի և ոչ մի կնքադրոշմում, ներառյալ և քննարկված օրինակը, չի հիշվում նման տեքստերում ակնկալվող որևէ արքայական:

Ուրարտական սեպագիր նյութը թույլ է տալիս NIN գաղափարագրին վերագրելու «աստվածուհի» իմաստը[76], իսկ աստվածների կամքը կարող էր հայտնել, ինչպես նշվեց վերը, Վարուբանին՝ գերագույնը աստվածուհիների մեջ: Ըստ այդմ, կոմբինացիան, որի բառացի նշանակությունը կլինի «որդին աստվածուհու» իմաստը, կարելի է ընկալել որպես «անձ, որը մոտ է կանգնած աստվածուհուն», այսինքն՝ նրա ներկայացուցիչ,

սպասավոր, քուրմ[77]: Այստեղ տեղին է հիշել Այանիսից գտնված մասնաբեկորներից մեկի II BU LIS (?) LÚ ^{d}A-ru-ba. *երկու ..... Վարուքա(ճի) (աստվածուհու) մարդ(ուն/կանց)* արտահայտությունը, որը կտրող էր վերաբերել կամ աստվածուհուն սպասարկող քրմությանը, կամ նրա տաճարի տնտեսական անձնակազմին[78]:

Մյուս կողմից, միջագետքյան դպրության մեջ այս գաղափարագիրն ունեցել է նաև *(բարձրաստիճան) քրմուհի* նշանակությունը՝ NIN, NIN.DINGIR = Šn(e)tu(m) [79]: Այս դեպքում, գուցե և չբացառենք *քրմուհու (որդի)* ընթերցումը, դրա տակ ենթադրելով նույն տիրուհուն, ավելի ճիշտ՝ (մայր) թագուհուն[80]: Հայտնի է, որ նա ուներ կարևոր դերակատարում հինարևելյան որոշ հասարակություններում, առավել ևս՝ խեթական[81]:

Այսպիսով, հնարավոր ենք համարում այս գաղափարագրով հանդես եկող անձանց, որոնց պատկանելությունը արքայական ընտանիքին ենթադրվում է նրանց անուններից, համարելու բարձրաստիճան քրմեր, որոնք իրավասու էին հաստատել հրամանները՝ աստվածների կամքն իմանալուց հետո: Ավելի շուտ պետք է ենթադրել այս իրավասության համատեղում իշխանական հիմնական գործառույթների հետ[82]. այսինքն, տերության առաջնորդը հանդես էր գալիս միաժամանակ որպես գլխավոր պատգամախոս, իրականացնելով, միգուցե, արքայի՝ խոսքի աստծո խորհրդականի դերը. նա էր կազմում հարցումների տեքստերը, դրանով իսկ, փաստորեն, տալով հրամանները[83]:

Կարծում ենք, այս երևույթն է արտացոլվել ուրարտական արխիվի պահպանված նամակներում: Ընդ որում, դրանցում հստակ տարբերակվում են երկու բանաձևեր[84], որի բացատրությունը, կարծում ենք, հետևյալն է: Երբ քրմապետն էր կատարում գուշակությունը (նման բովանդակությամբ տեքստեր, ցավոք, մեզ չեն հասել), գուշակության արդյունքն արտահայտվում էր *«արքան ասում է – հայտնիր PN-ին հրամանը* (հետևում է բովանդակությունը)» բանաձևով (LUGAL-še: ali: tie PN_1 PN_2(-di) bause)[85], փաստորեն, արքայի՝ խոսքի աստծո խոսքն ուղղված էր գուշակություն կատարողին, որը հայտնելու էր այն հասցեատիրոջը, հանդես գալով որպես միջնորդ: Այլ դեպքերում (ինչը կազմում է մեծամասնություն), երբ գուշակությունն իրականացնում էին այլ անձինք՝ *PN_1-ը խոսք ուղարկեց,– հայտնիր PN_2 PN_3-ին* բանաձևով (PN_1-še bause šiuni ti(e) PN_2 PN_3)[86]: Այս դեպքում հիշվում էր կոնկրետ պատգամախոսի անունը (^{m}Zua, ^{m}Šeini, ^{m}Inusši/pi-la ևն), որի գուշակությունը հաստատվում էր գլխավոր քրմի կողմից կամ պարզապես նրա կնիքով՝ այսպիսով, փաստելով հրամանի օրինականությունը. արքան էր այդպես կամենում:

Այս հնարավորությամբ ենք բացատրում այն անձնանունների առկայությունը, որոնք հաստատապես չեն պատկանել տիրող ընտանիքին (բայց կարող էին տալ/փոխանցել «խոսք(եր)», բառացի՝ «հրաման(ներ)՝

hause) և ոչ էլ անգամ հիշվում են ոյևէ մասնագիտության կամ պաշտոնի հետ կապված: Մյուս կողմից, իրավական դաշտում լրիվ վերանում են այլ մեկնաբանությունների դեպքում առաջանալիք հակասությունները[87]:

Այս կառուցվածքը, որը ենթադրում է նաև պատգամախոսների (քրմերի) որոշակի աստիճանակարգ, հետագայում, կարծես, մաս կազմելով ուրարտական պաշտոնեությանը[88], միգուցե և ուշ նորամուծություն է, եթե նկատի ունենանք, որ վաղագույն դրոշմները, որոնցում առկա է գաղավարւսգրերի քննարկվող կոմբինացիան, վերաբերում են ոչ ուշ քան Ռուսա Սարդուրյդյդու (Ռուսա I) ժամանակներին[89]: Այս հարցի շուրջ, սակայն, դեռ վաղ է անել եզրակացություններ[90]:

Վերջաբան

Այսպիսով, ի մի բերելով ասվածը, կարող ենք նշել. ուրարտական տերության իշխանական համակարգը էապես տարբերվել է ժամանակաշրջանի իր զուգահեռներից: Նրանում տեսանելի են բազում առանձնահատկություններ, որոնք հիշեցնում են արխաիզմ կամ կարելի է քննութագրել որպես «պահպանողական»: Համակարգում առանձնանում է ուրարտական դիցարանի գերագույն աստվածը: Ըստ ընկալումների, տերության միակ առաջնորդը, նաև աշխարհիկ դաշտում, համարվել է Խալդին՝ արքան, և աստվածը. ինչպես «Լուվրի աղյուսակն» է վկայում՝ *...ոդջ Ուրարտում ավելի մեծը չկար քան նա՝ Երկնքում և Երկրում...*[91]:

YERVAND GREKYAN

ON THE FEATURES OF THE URARTIAN THEOCRACY: THE "KINGS" OF URARTU (PRELIMINARY STUDY)

In the scientific literature it was long since noticed the possible theocratic character of the Urartian State. The offered paper is a preliminary promulgation of the author's reflections, a discussion about one of the individual points of the Urartian theocracy. In this system, the supreme God of the state pantheon - the God Haldi was perceived also as Leader of the Secular life, as a King. The "kings" of Urartu known from the cuneiform sources were, first of all, worshipers of Haldi, supreme priests, king's servants and keepers of Haldi's State. Their "Royal" power was a service, they came on the "paternal place" (throne) to serve the King. The fidelity to the King Haldi is seen everywhere both in the cuneiform texts, and in the iconography or, in generel, in their activities. Urartians obliged the local population the cult of Haldi – as their God, and the Power of Haldi – as their King. From this point the "Gate(s) of Haldi", besides its cultic significance, could also show the existence of Haldi's (Urartians') political power in different "lands" or in newly founded cities thus marking the borders of Urartu proper. It is also suggested to consider the bulk of the Urartian clay tablets as final documents of the omen texts – in the form of "royal orders". In this

case the combination of logograms ^{LÚ}A.NIN(.LI?) of the seal inscriptions, which appear also in the abovementioned tablets, could have belonged to supreme priests – "Kings" of Urartu.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դատական պրակտիկայում ձևավորվել են հետևյալ մոտեցումները[56]. ա) անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը ծագել է գրանցման պահից[57]. բ) անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը ծագել է գրանցման պահից հետո՝ ելնելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1-ին հոդվածի 3-րդ մասի դրույթներից, համաձայն որի՝ քաղաքացիական իրավունքները ենթակա են պետական գրանցման այն դեպքերում, երբ դա նախատեսված է օրենքով, և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1-ին հոդվածի 2-րդ մասի դրույթներից, համաձայն որի՝ քաղաքացիական իրավունքները ենթակա են պետական գրանցման այն դեպքերում, երբ դա նախատեսված է օրենքով[58]. գ) անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը ծագել է գրանցման պահից հետո՝ ելնելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1-ին հոդվածի 3-րդ մասի դրույթներից, համաձայն որի՝ քաղաքացիական իրավունքները ենթակա են պետական գրանցման այն դեպքերում, երբ դա նախատեսված է օրենքով, և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1-ին հոդվածի 2-րդ մասի դրույթներից, համաձայն որի՝ քաղաքացիական իրավունքները ենթակա են պետական գրանցման այն դեպքերում, երբ դա նախատեսված է օրենքով[59]. դ) անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը ծագել է գրանցման պահից հետո՝ ելնելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1-ին հոդվածի 3-րդ մասի դրույթներից, համաձայն որի՝ քաղաքացիական իրավունքները ենթակա են պետական գրանցման այն դեպքերում, երբ դա նախատեսված է օրենքով, և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1-ին հոդվածի 2-րդ մասի դրույթներից, համաձայն որի՝ քաղաքացիական իրավունքները ենթակա են պետական գրանցման այն դեպքերում, երբ դա նախատեսված է օրենքով[60]. ե) անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը ծագել է գրանցման պահից հետո՝ ելնելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1-ին հոդվածի 3-րդ մասի դրույթներից, համաձայն որի՝ քաղաքացիական իրավունքները ենթակա են պետական գրանցման այն դեպքերում, երբ դա նախատեսված է օրենքով, և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1-ին հոդվածի 2-րդ մասի դրույթներից, համաձայն որի՝ քաղաքացիական իրավունքները ենթակա են պետական գրանցման այն դեպքերում, երբ դա նախատեսված է օրենքով[61]. զ) անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը ծագել է գրանցման պահից հետո՝ ելնելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1-ին հոդվածի 3-րդ մասի դրույթներից, համաձայն որի՝ քաղաքացիական իրավունքները ենթակա են պետական գրանցման այն դեպքերում, երբ դա նախատեսված է օրենքով, և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1-ին հոդվածի 2-րդ մասի դրույթներից, համաձայն որի՝ քաղաքացիական իրավունքները ենթակա են պետական գրանցման այն դեպքերում, երբ դա նախատեսված է օրենքով[62]. է) անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը ծագել է գրանցման պահից հետո՝ ելնելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1-ին հոդվածի 3-րդ մասի դրույթներից, համաձայն որի՝ քաղաքացիական իրավունքները ենթակա են պետական գրանցման այն դեպքերում, երբ դա նախատեսված է օրենքով, և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1-ին հոդվածի 2-րդ մասի դրույթներից, համաձայն որի՝ քաղաքացիական իրավունքները ենթակա են պետական գրանցման այն դեպքերում, երբ դա նախատեսված է օրենքով[63]. ը) անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը ծագել է գրանցման պահից հետո՝ ելնելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1-ին հոդվածի 3-րդ մասի դրույթներից, համաձայն որի՝ քաղաքացիական իրավունքները ենթակա են պետական գրանցման այն դեպքերում, երբ դա նախատեսված է օրենքով, և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1-ին հոդվածի 2-րդ մասի դրույթներից, համաձայն որի՝ քաղաքացիական իրավունքները ենթակա են պետական գրանցման այն դեպքերում, երբ դա նախատեսված է օրենքով[64]. թ) անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը ծագել է գրանցման պահից հետո՝ ելնելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1-ին հոդվածի 3-րդ մասի դրույթներից, համաձայն որի՝ քաղաքացիական իրավունքները ենթակա են պետական գրանցման այն դեպքերում, երբ դա նախատեսված է օրենքով, և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1-ին հոդվածի 2-րդ մասի դրույթներից, համաձայն որի՝ քաղաքացիական իրավունքները ենթակա են պետական գրանցման այն դեպքերում, երբ դա նախատեսված է օրենքով[65]. ժ) անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը ծագել է գրանցման պահից հետո՝ ելնելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1-ին հոդվածի 3-րդ մասի դրույթներից, համաձայն որի՝ քաղաքացիական իրավունքները ենթակա են պետական գրանցման այն դեպքերում, երբ դա նախատեսված է օրենքով, և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1-ին հոդվածի 2-րդ մասի դրույթներից, համաձայն որի՝ քաղաքացիական իրավունքները ենթակա են պետական գրանցման այն դեպքերում, երբ դա նախատեսված է օրենքով[66]. ի) անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը ծագել է գրանցման պահից հետո՝ ելնելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1-ին հոդվածի 3-րդ մասի դրույթներից, համաձայն որի՝ քաղաքացիական իրավունքները ենթակա են պետական գրանցման այն դեպքերում, երբ դա նախատեսված է օրենքով, և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1-ին հոդվածի 2-րդ մասի դրույթներից, համաձայն որի՝ քաղաքացիական իրավունքները ենթակա են պետական գրանցման այն դեպքերում, երբ դա նախատեսված է օրենքով[67]. լ) անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը ծագել է գրանցման պահից հետո՝ ելնելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1-ին հոդվածի 3-րդ մասի դրույթներից, համաձայն որի՝ քաղաքացիական իրավունքները ենթակա են պետական գրանցման այն դեպքերում, երբ դա նախատեսված է օրենքով, և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1-ին հոդվածի 2-րդ մասի դրույթներից, համաձայն որի՝ քաղաքացիական իրավունքները ենթակա են պետական գրանցման այն դեպքերում, երբ դա նախատեսված է օրենքով[68]. խ) անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը ծագել է գրանցման պահից հետո՝ ելնելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1-ին հոդվածի 3-րդ մասի դրույթներից, համաձայն որի՝ քաղաքացիական իրավունքները ենթակա են պետական գրանցման այն դեպքերում, երբ դա նախատեսված է օրենքով, և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1-ին հոդվածի 2-րդ մասի դրույթներից, համաձայն որի՝ քաղաքացիական իրավունքները ենթակա են պետական գրանցման այն դեպքերում, երբ դա նախատեսված է օրենքով[69]. ծ) անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը ծագել է գրանցման պահից հետո՝ ելնելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1-ին հոդվածի 3-րդ մասի դրույթներից, համաձայն որի՝ քաղաքացիական իրավունքները ենթակա են պետական գրանցման այն դեպքերում, երբ դա նախատեսված է օրենքով, և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1-ին հոդվածի 2-րդ մասի դրույթներից, համաձայն որի՝ քաղաքացիական իրավունքները ենթակա են պետական գրանցման այն դեպքերում, երբ դա նախատեսված է օրենքով[70]. կ) անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը ծագել է գրանցման պահից հետո՝ ելնելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1-ին հոդվածի 3-րդ մասի դրույթներից, համաձայն որի՝ քաղաքացիական իրավունքները ենթակա են պետական գրանցման այն դեպքերում, երբ դա նախատեսված է օրենքով, և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1-ին հոդվածի 2-րդ մասի դրույթներից, համաձայն որի՝ քաղաքացիական իրավունքները ենթակա են պետական գրանցման այն դեպքերում, երբ դա նախատեսված է օրենքով[71]. հ) անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը ծագել է գրանցման պահից հետո՝ ելնելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1-ին հոդվածի 3-րդ մասի դրույթներից, համաձայն որի՝ քաղաքացիական իրավունքները ենթակա են պետական գրանցման այն դեպքերում, երբ դա նախատեսված է օրենքով, և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1-ին հոդվածի 2-րդ մասի դրույթներից, համաձայն որի՝ քաղաքացիական իրավունքները ենթակա են պետական գրանցման այ

հանդես է գալիս ոլսելես Թեշուբի և Հեբաթի սրյի, թարգմանաբար՝ «Թեշուբ աստծու ցլիկ/որդի»[43]: Այս, ինչպես նաև Խաթթիի կրոնական կյանքում իսուրրիական աստվածների պաշտամունքում Իսուվայի արքաների ունեցած զգալի դերը[44], ինչպես նաև այն փաստը, որ մինչև խեթական արտաքին քաղաքական այրտում ներգրավված լինելը, Իսուվան այսպես թե այնպես գտնվում էր հարևան Խուրրի-Միտաննի պետության անմիջական ազդեցության տակ[45] թույլ են տալիս միանշանակորեն պնդել այս արքայական դինաստիայի խուրրիական արմատների մասին, մանավանդ որ համաժամանակյա խեթական արքայատոհմը նույնպես խուրրիական ծագում ուներ: Միաժամանակ դա տվյալ տարածքում նաև խուրրիական էթնիկ տարրի առկայության ապացույց կարելի է հատմարել[16]: Ընդհակառակարար, հնարավոր չէ ճշգրիտ դատողություններ անել ոչ այս, և ոչ էլ մնացած էթնիկ խմբերի տարածվածության կամ գերակայության մասին, առավել ևս, որ գտնվելով քաղաքակրթությունների և առևտրական ճանապարհների խաչմերուկում, Իսուվան չէր կարող բնակեցված լինել մեկ էթնիկ խմբի ներկայացուցիչներով:

MARIAM KHANZADYAN

THE KING OF IŠUWA AND TUDHALIYAS IV

The article deals with the Hittite cuneiform text belonging to the 13-th century B.C., which containt information regarding Isuwa, one of the ancient states on the Armenian Highland. Specifically, it teils about the role of the kings of Išuwa in the inner liłe of the Hittite empire in the 13-th century B.C.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. R.Stefanini, La congiura di Hesni, "Athcnaeum", 40,1965
2. Տեքստի գիտական տառադարձման մեջ կիրառված են նորագույն սկզբունքները (Chr.Ruster – E.Neu, Hethitisches Zcichenlexikon, Wiesbaden, 1989): Նոր տառադարձման համաձայն՝ He-es-ni-is
3. Ստեֆանինին այս արտահայտությունը թարգմանել է որպես "Խեսնին և ես... գնացինք" Սակայն բնագրի am-mu-uq-qa ձևը uk/am-mu-uk անձնական դերանվան հայցական հոլովն է, և չի կարող թարգմանվել որպես "ես": Ենթադրվելիք [GIM-an-m]a-wa արտահայտությունը ալարուսկում է wa-էնկլիտիկը՝ ուղիղ խոսքի ցուցիչը: Կարող ենք միայն ենթադրել, որ Սալացիտին Խեսնիի հրամանով ուղևորվել է ինչ-որ մի քաղաք, հավանաբար՝ Խաթենա, ինչի մասին էլ նա պատմում է: Վերականգնվելիք տեքստը կարող էր ունենալ հետևյալ տեսքը. GIM-an-ma-wa ^{I}He-es-ni am-mu-uq-qa *I-NA* [^{URU}Ha-at-ti-na .... nu-war-] eruen՝ "[երբ] Խեսնին ինձ [Խաթենա ուղարկեց], և երբ որ մենք հասանք...:

4. Այստեղ և այնուհետ pí-hu-te տառադարձումն ըստ նոր ընթերցման փոխարինված է pe-hu-te տառադարձումամբ:
5. Բնագրի ^{d}IŠ դետերմինատիվը վրիպակ է, պետք է լինի անձնանունների ^{m}/^{f} դետերմինատիվը:
6. Նոր տառադարձման համաձայն՝ u-te-er:
7. Նոր տառադարձման համաձայն՝ le-e:
8. Նոր տառադարձման համաձայն՝ a-pe-e-da-ni-ya:
9. He-es-ni-is>-ni-is<-wa-mu-kán անվան >-ni-is< վանկերի առկայությունը գրչի սխալն է, նախորդ երկու վանկի կրկնորդություն:
10. Ստեֆանինիի մոտ՝ pi:
11. Իմաստին համապատասխան պետք է լինի usk- բայի usk/uski՝ "հետևիր, հետամուտ եղիր"ձևը:
12. Ակնհայտորեն u-ú ավելորդ նշան է, պետք է լինի ku-in e-ek-ta-an:
13. Հնարավոր է e-ek-ta-an ha-ma-an-du՝ "թող կապեն ցանցով" տարբերակը:
14. Քերականական ճիշտ ձևը պետք է լինի me-ma-i կամ me-ma-as՝ "ասում է " կամ "ասաց":
15. Առավել հայտնի է ^{URU}KA$_4$.E՝ "սուրհանդակ" տարբերակը:
16. Ստեֆանինիի մոտ կա նաև ME-K[A??.. շարունակությունը:
17. Ստեֆանինիի մոտ՝ zi-ik-ma-wa-za:
18. Վ.Խաչատրյանը սխալմամբ A-la-li-mi անձնանունը վերագրել է Իսուվայի արքային: В.Хачатрян, стр. 51:
19. Ենթադրվում է, որ այս լսկունյայում խոսքը Խուցիյայի մասին է, տես N.Tani, "More about "Hesni Conspiracy"" Altorientalisehe Forsehungen 28, 2001, J, p.158:
20. Ուղիղ ձևը՝ GUD/GU$_4$.MAH-atar՝ "անասնագոմ, փարախ":
21. uwaya- "անհանգստանալ" բայի միջին կրավորական ձև:
22. Աքքադերեն տարբերակը՝ zarâtu:
23. Հնարավոր է, խոսքը ^{uš}ariyal(a)-յի՝ "զամբյուղի" մասին է:
24. Արքայազն Խեսնին Թուդխալիյաս IV-ի հարազատ եղբայրն էր:
25. Խոսքն, հավանաբար, Խաթենա քաղաքի կամ երկրի մասին է. որն ամենայն հավանականությամբ գտնվում էր Եփրատի ավազանում՝ ժամանակակից Արմուղան քնակավայրից մինչև Երզնկայի հովիտ ընկած տարածքում (В.Хачатрян, стр.51): Խաթենա քաղաքի տեղադրության մասին առկա կարծիքները տես J.F.del Monte und J.Tischler, Die Orts- und Gewässernamen der hethitischen Texte, Wiesbaden, 1978, s.61:
26. Տախուրպա քաղաքի տեղադրության մասին առկա կարծիքները տես J.F.del Monte und J.Tischler, նշվ. աշխ.:
27. Վ.Խաչատրյանն իր "Восточные провинции Хеттской империи" աշխատության մեջ առաջարկում է Ka-ma-ha-na ընթերցումը, եզրակացնելով, որ խոսքը Կամախաանայի, կամ Կումախայի մասին,տեղադրելով այն Խաթենա երկրում, Իսուվայի անմիջական հարևանությամբ և նույնացնելով այն հետագայիս Կամախի/ Կոմմագենեի հետ: Սակայն առավել վկայված է Ka-ra-ha-na ընթերցումը: Նույն մոտեցումն ունի Ռ.Ստեֆանինին: Տես նաև Ա.Քոսյան, "Անի-Կամախը խեթական դարաշրջանում", Պատմա-Բանասիրական Հանդես, 2002, 3:

28. Հնարավոր է նաև "ապագայում" թարգմանությունը:
29. Հնարավոր է նաև "այնտեղ" թարգմանությունը:
30. Սեկ այլ կարծիքի համաձայն, UGULA LÚ^{MEŠ} · "հազարապետ" բառը նույնպես վերաբերում է Լուպակկիին (N.Tani, p.158):
31. Խեթական արքունիքում հավասարաբար զբաղեցնում էր GAL UGULA *LIM* ^{MEŠ}· հազարապետի պաշտոնը:
32. Ն.Տանին ենթադրում է, որ Տասկուհիլին նույնպես դավադիրների շարքում էր, բայց արսւաքնապես արքայի կողմնակից էր, ավելին, աջակցում էր Իեսնիին, որին էլ վերջինս հնարավոր է, որ խոստացել էր ծանր հետևակայինների հրամանատարի պաշտոնը՝ GAL.UKU.UŠ; հնարավոր է, որ Տասկուհիլի այս քայլը թելադրված էր Իսուվայի արքայի ձերբակալության դեպքում ճշմարտության բացահայտման վտանգով (N.Tani, p.159):
33. Հնարավոր է, որ խոսքը գնում է արքայազն (DUMU.LUGAL) Խուցցիայի մասին, որը միաժամանակ արքայազորի պետն էր՝ GAL *MEŠEDI*
34. N.Tani, p.155; T.Bryce, The Kingdom of the Hittites, p.326-336
35. H.Klengel, Die Hethiter und Išuwa, Oriens Antiquus, 7, 1968, s.74-76
36. Քիլուշխեպան ամենանայն ահավանականությամբ Խաթուսիլիս III-ի կնոջ՝ Պուդուխեպայի դուստրն էր, այլ ոչ թե քույրը: Հօգուտ այս ենթադրության է արտահայտվել Թ.վան դեն Հոուտը, փաստարկելով. որ Էխլիշարումայի և Թուդխալիյաս IV-ի միջև առնվազն մեկ սերնդի տարբերություն կա, և ավելի ճիշտ կլինի Քիլուշխեպային դիտել որպես Պուդուխեպայի դուստր, այլ ոչ թե քույր: (Th.van den Hout, Der Ulmitešub-Vertrag Eine prosopographische Untersuchung, Wiesbaden, 1995, p.126)
37. H.,Klengel, s.71
38. N.Tani, p.158
39. J.de Roos, Who was Kilushepa?, Jaarbericht van het Vooraziatisch-Egyptisch Geselschap, "Ex Oriente Lux", 29, p.75
40. T.Bryce, p.51
41. T.Bryce, p.294
42. Arišarruma անվան մեջ առանձնացվում է միայն šarruma բառը, իսկ Ehlišarruma-ն կազմված է eh(e)li՝ փրկել; փրկություն, ազատագրում, և šarruma բառերից (E.Laroche, Glossaire de la langue hourrite, Revue hittite et asianique, tome XXXIV,1976, p.75)
43. М.Л.Хачикян, Хебат, МНМ, том II, М, 1992стр. 586; E.Laroche, tome XXXV,1977, p.218
44. H.Klengel, p.74-76
45. Г.М. Аветисян, Государство Митанни, стр.42-43
46. H.Klengel, p.71

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

CTH – E.Laroche, *Catalogue des textes hittites*, Paris,1971
KBo – Keilschrifttexte aus Boghazköi, Leipzig and Berlin
МНМ – Мифы Народов Мира, М, 1992

ՎԱԼԵՐԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՆՈՐ ՓԱՍՏԵՐ ՈՒՐԱՐՏԱՅԻՆԵՐԻ ԵԿՎՈՐ ԼԻՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայերը հայկական լեռնաշխարհում քնակվելիս են եղել վաղնջական ժամանակներից:

Մ.թ.ա. 1410թ. սկսած խեթական տեքստերի տվյալներով Արևմտյան Հայաստանում կազմավորվել է Հայասա պետությունը, որը գոյատևել է մինչև մ.թ.ա. 1165թ. Այն ընդգրկել է հայկական Տավրոսի, Եփրատ գետի և Սև ծովի մինչև ընկած տարածքները:

Վաղ միջնադարի հայ պատմիչներին հասած հնագույն տեղեկությունները բաղդատելով խեթական տեքստերի հաղորդումների հետ՝ պարզվել է, որ դա Հայք պետական կազմավորումն է: Հայասա անունը պարունակում է հայ- արմատը, որի վրա խեթերը ավելացրել են իրենց լեզվի -ասա պատկանելություն ցույց տվող ածանցը: Հայասայի անձնանունների և տեղանունների լեզվական ուսումնասիրությունից պարզվել է, որ դրանք կազմված են հայերենի արմատներից ու ածանցներից:

Հայաստ պետության (հայ. Հայք) կործանվելուց հետո բավական ժամանակ անց, ըստ Մովսես Խորենացուն հասած տեղեկությունների, Արմենակը, որ Հայքի թագավորական տոհմի շառավիղն էր, մոտ մ.թ.ա. 1080թ. հայոց գահը տեղափոխում է Արարատյան դաշտ: Այնտեղ նրա հաջորդները մոտ երկու հարյուր տարվա ընթացքում աստիճանաբար հայոց պետականությանը ընդլայնում են՝ լեռնաշխարհի արևելյան հատվածի հայկական գավառները ընդգրկելով մեկ միասնական թագավորության կազմի մեջ:

Մ.թ.ա. 891թ. Արմավիրում Արամը գլուխ է բարձրանում: Այդ ժամանակ Հայկական լեռնաշխարհի արևմտյան հատվածի գավառները կամովին միանում են այդ թագավորությանը: Հայոց արքան, ուժեղացնելով բանակը, հարևան Մարաստանից ետ է գրավում այն գավառները, որոնք մարերը, նախքան նրա արքա դառնալը, խլել էին Հայաստանից: Այնուհետև Արամը զենքն ուղղում է դեպի հարավ, Կորդուքի միջով հասնում Ասորեստանի դաշտերը:

Այդ ժամանակ ասսուրական սեպագիր արձանագրություններում Հայկական լեռնաշխարհը, ի տարբերություն նախորդող ժամանակաշրջանի, հիշատակված է եզակի թվով՝ «Նայիրի երկիր» անունով: Դա Այրամի ստեղծած Հայկական թագավորությունն էր, որն ընդգրկում էր ողջ լեռնաշխարհը[1]:

Այժմ անդրադառնանք ուրարտացիների հետ Արամի ժամանակ հայերի առնչության հարցին:

Ուրարտացիների բնիկ երկիրը՝ Ուրուատրին (տարբ. Ուրատրի, Ուրատրու) ասսուրական սեպագիր աղբյուրներում հիշատակվում է մ.թ.ա. 13-րդ դարից: Այն գտնվել է Վանա լճից շատ հարավ՝ Ասորեստանի սահմանների մոտ՝ արևմուտքից սահմանակցելով Կաղմուխի (հայկ. Կաղմեա տուն), հյուսիսից Քռիտան գետի հարավային ավազանի խաբխի, իսկ արևմուտքից Կումանի և այլ երկրների հետ[2]:

Սկսած մ.թ.ա. 890թ. ոչ ասսուրական վավերագրերը և ոչ էլ այլ գրավոր աղբյուրներ չեն հիշատակում Ուրուատրին: Մ.թ.ա. 859թ. Ասորեստանի թագավոր Սալմանասար 3-րդը Վանի նահանգում իր գորքով բախվում է Ուրարտու պետության քանակի հետ: Դա նշանակում է, որ ասսուրական արշավանքների պատճառով ուրարտացիները իրենց բնիկ երկիր Ուրուատրին լքել էին և տեղափոխվել Վանի նահանգ[3]:

Մովսես Խորենացին հայոց Արամ թագավորի հարավային արշավանքի կապակցությամբ Կորդուքի առիթով նշում է, որ Ասորեստանն ամայի էր դարձրել այդ տարածքները[4]: Դա ևս հաստատում է այն իրողությունը, որ ուրարտացիները լքել էին Ուրուատրին (հայկ. Կորդուք) և տեղափոխվել Վանի նահանգ:

Հայ պատմիչն Ուրուատրիի տարածքը հիշատակում է Կորդուք անունով: Սակայն նույն հեղինակը Հայկ նահապետի Քաբելոնից կարծեցյալ գալու կապակցությամբ նույն տարածաշրջանն անվանում է Արաբադա երկիր, որը սահմանակից էր Կաղմեա տուն (ասսուր. Կաղմուխի) գավառին[5]:

Ի դեպ, «Աստվածաշնչի» հայերեն թարգմանության մեջ Նոյ նահապետի առնչությամբ հիշատակված է Արաբադ լեռը: Նույնը կրկնվում է այդ նույն գրավոր հուշարձանի հունարեն օրինակում: Սակայն ասորական թարգմանության մեջ Աբարադ լեռան անունը փոխարինված է Քարդու տերմինով: Մովսես Խորենացին այդ տարածաշրջանը մերք կոչում է Արաբադ, մերթ՝ Քալդու անունով Կորդուք, իսկ ասորեստանցիները՝ Ուրուատրի: Վերջինս Աբարադ անունն է, որը նրանք հարմարեցրել են իրենց լեզվին ու գրությանը: Ըստ երևույթին Արաբադ անվան մեջ առաջին երկու ա ձայնավորները հնչել են օ-ին մոտ տարբերակով: Իսկ սեպագրերում քանի որ այնտեղ օ գրելու հնարավորություն չկա և այն վերարտադրել կարող է միայն ու կամ այն պարունակող նշաններով, այդ անունը ր և դ բաղաձայնների դրափոխությամբ դարձել է Ուրուատ-

թագուհին հյուրընկալվել է Վանում: Նա բազմակողմանի օգնություն է ցույց ավել Մենուային, ինչպես այլ շինությունների, այնպես էլ ջրանցքի կառուցման գործերում: Ուրարտուի թագավորի համար դա շատ ճեռնտու համագործակցություն պետք է լիներ, քանի որ նա դրանցով Վանի թագավորության հզորության հիմքերն է դրել:

Դրա համար էլ Վանի ջրանցքը տարբեր վավերագրերում կարող էր հանդես գալ մերթ Շամիրամի, մերթ էի Մենուայի անունով:

Շամիրամ թագուհու նշված վաղքագիծը բնականաբար պետք է շատ վատ ընդունվեր Ասորեստանի արքունիքում: Այդ պատճառով էլ Աշդաենուսրի 3-րդը, որն արդեն մ.թ.ա. 806թ. հասունացած էր երկիրը դեկավարելու համար, Սովսես Խորենացու տվյալների համաձայն, որին նա գիտեր Նինվես անունով, իր զորախմբով գալիս է Վան և սպանում իր մորը՝ Շամիրամին[4]:

Մինչև մ.թ.ա. 810թ. ուրարտական թագավորներն արդեն նվաճել էին Արամի ստեղծած Հայկական թագավորության արևմտյան գավառները ու նահանգները: Այն մնացել էր ամփոփված լեռնաշխարհի արևելյան շրջանների սահմաններում, որի մայրաքաղաքն է Արմավիրը[5]:

Այժմ անդրադառնանք մեկ այլ հարցի: Ինչպես պարզվել է, նշված ժամանակաշրջանում Հայկական լեռնաշխարհը բնակեցված էր հայերով, որը հաստատվում է ոչ միայն մ.թ.ա. 9-7-րդ դդ իրադարձությունների մասին Մովսես Խորենացուն հասած տվյալների բաղդատությամբ ուրարտական սեպագիր աղբյուրների հադորդումների հետ, այլ նաև տարածաշրջանի տեղանունների ուսումնասիրությամբ, որոնք կազմված են հայերենի հնդեվրոպական արմատներից ու ածանցներից:

Այդ բոլորը, կարծում ենք, հիմնավորվում է նաև ուրարտական թագավորների Հայաստանում թողած սեպագիր արձանագրությունների այլ կարգի տվյալներով: Դրանց ճնշող մասի վերջում նրանք զետեղել են անեծքի բանաձև, որով սպառնում են կոթողը ջարդողներին այլ կարգի տվյալներով: Դրանց ճնշող մասի վերջում նրանք զետեղել են անեծքի բանաձև, որով սպառնում են կոթողը ջարդողներին աստվածների պատիժներով:

Քանի որ տեղի բնակչությունը ուրարտական արքաների համար օտար էր, նրանք միշտ վախեցել են, որ իրենց թուլած գրավոր հուշարձանները կարող են վերացվել: Ի տարբերություն ուրարտացիների, Ասորեստանի և Խեթական պետության տիրակալները իրենց երկրներում թողած արձանագրությունների վերջում չեն զետեղել անեծքի բանաձև, որովհետև սեփական ժողովուրդը դրանք չէր կարող ոչնչացնել:

Ի դեպ, ուրարտական սեպագիր հուշարձանների փոքր մասն է, որտեղ այդպիսի բանաձև չկա: Օրինակ՝ Վանի կթողները, որտեղ ուրարտացիներ էին բնակվում, կամ Արին-բերդի և այլ ամրոցների քարե կոթողները, որտեղ զետեղված մշտական էին կայազորներ:

Այժմ անդրադառնանք Վանի ջրանցքի վերը նշված երկու անուններին առնչվող մեկ հարցի:

Մովսես Խորենացուն հասած հնագույն հաղորդումների համաձայն այդ ջրանցքը կառուցել է Ասորեստանի թագուհի Շամիրամը, և պատմիչը դրա կոչում է նրա անունով:

Իսկ ուրարտական սեպագիր արձանագրություններից հայտնի է, որ այն կյանքի է կոչել Մենուան: Այսպես, Կատեպանց քնակավայրում ջրանցքի հունին մոտ նշված տիրակալը թողել է մի վավերագիր, որտեղ գրված է. «Խալդի աստծո զորությամբ Մենուան՝ Իշպուինիի որդին, այս ջրանցքը ան կացրեց: Անունը Մենուայի ջրանցք է»: Մի քանի տող հետո կարդում ենք. «Ով այս արձանագրությունը ոչնչացնի, ով ջնջվդի, ով որևէ մեկին այս (գործերը) վերագրի, ով որիշ բան ասի՝ ես այս ջրանցքը ան կացրի, թող (նրան) ոչնչացնեն Խալդին, Թեյշեբան, Շիվինին, բոլոր աստվածները»[10]:

Կարելի է ենթադրել, որ տեղի հայ քնակչությունը դեռևս այդ ժամանակ գերադասել է կոչել դրա կառուցման գործում Վանի թագավորին մեծ օգնություն ցուցաբերած իրեն թշնամի Շամիրամի և ոչ Հայաստանը նվաճած օտար բռնակալ Մենուայի անունով, ի հեճուկս վերջինի: Դրա համար էլ Մենուան ստիպված է եղել հատուկ նշելու, որ ով ուրիշին վերագրի այդ գործը, թող աստվածները նրան ոչնչացնեն:

Ավելին, Վանի աղբաները սովորաբար ամեն մի ամրոց կամ շինություն կառուցելիս թողել են մեկ արձանագրություն: Բացառություն է կազմում Էրեբունին, որի մասին մի քանի գրավոր կոթող է հասել մեզ: Սակայն Մենուան Վանի ջրանցքի ան կացման մասին գրել է տվել 11 արձանագրություն՝ դրանցում նշելով, որ այն իր անունով է կոչվում[11]:

Քելկրիի վավերագրում նա նորից նշում է, թե ով այս գործը ուրիշին վերագրի, թող աստվածները նրան ոչնչացնեն: Նույնը կրկնվում է Մարմոսի գրավոր աղբյուրի մեջ[12]:

Այս բոլորը հաստատում են, որ տեղի հայ բնակչությունը ջրանցքի կառուցումից հետո այն նախապատվություն է համարել կոչել իր համար ոչ բարեկամ Շամիրամի և ոչ երկիրը նվաճած օտար բռնակալ Մենուայի անունով:

Այժմ համառոտակի անդրադառնանք ուրարտերեն լեզվի վրա հայերենի թողած ազդեցության մի քանի հարցերի քննությանը:

Ռուսա 1-ինի (մ.թ.ա. 735-713թթ.) Սևանի ավազանի Ծովինարի սեպագիր արձանագրության մեջ կարդում ենք.

«Խալդի աստծո՝ տիրոջ զորությամբ Ռուսան՝ Սարդուրիի որդին՝ ես այս երկրները մեկ արշավանքի ընթացքում գրավեցի, դարձրի ստրուկ՝ Աղախունի երկիրը, Ուելիկուխի երկիրը, Լուերուխի երկիրը, Արքուքինի երկիրը՝ չորս թագավորների ծովի այս կողմից (4 LUGAL.^{MES} inani aptini

şuiniani), Գուրքումելի երկիրը..., 19 թագավորների ծովի այն կողմի բարձր լեռներում (19 LUGAL^{MEŠ} išani aptini şuiniani)»[13]:

Ինչպես մասնագետները պարզել են, ծուինի-ն հայ. ծով բառն է, ապուինի-ն նույն լեզվի ափ արմատն է՝ ուրարտերենի տինի «աւուն» բաղադրիչով: Ինանի-ն թարգմանվում է «այս»մ իսկ իշանի-ն՝ «այն·(կողմ)» իմաստներով[14]:

Կարծում ենք, որ դրանք Մուշի բարբառի ինա «այն» և իսա «այս» ցուցական դերանուններն են, որոնք ուրարտացի գրիչն օգտագործել է հսկառակ ընկալումով:

Այսպիսով, պարզվում է, որ վերը նշված բառակապակցություններում արմատները հայերեն են, իսկ վերջավորությունները՝ ուրարտերենի քերականական մասնիկներ:

Կամ, Վանի ջրանցքի կառուցման կապակցությամբ Մենուայի Կատեպանց գյուղի արձանագրության մեջ առկա է հետևյալ արտահայտությունը՝ iese ini pili agubi «ես այս ջրանցքը կառուցեցի»[15]: Այն կրկնվում է Արտամետի, Մժնկերտի, Ռերկբիի նրա թողած վավերագրերում[16]:

Կարծում ենք, իեշե-ն «ես» Սուշի բարբառի իես «ես» անձնական դերանուն է, իսկ ինի-ն նույն բարբառի ինա «այն» ցուցականը: Պիլի և ագու-բի արմատները հետազոտողները նույնացնում են հայերենի համապատասխան պեղ-ել «վտրել» և ագ-ուցել «հագցնել» բառերի հետ[17]:

Չնայած նման բառակապակցությունները շատ չեն ուրարտերենում, սակայն բերված օրինակները վկայում են ուրարտերենի վրա հայերենի թողած խիստ ազդեցության մասին: Ավելին, հայերենից անձնական և ցուցական դերանունների ուրարտական լեզվում ներթափանցելը, որը հազվադեպ է պատահում, ցույց են տալիս, որ տեղի հայերի լեզուն շատ մեծ հետևանքներ է թողել եկվորների խոսակցական և գրավոր բառապաշարում:

Վերը բերված որոշ փաստեր նաև վկայում են, որ դեռևս ուրարտացիների ժամանակ հայերենում բարբառային տարբերակումներ են եղել:

Ուրարտացիների եկվոր լինելու մասին է վկայում նս մեկ այլ փաստ: Արգիշտի 1-ինը (մ.թ.ա. 786-764թթ.) մ.թ.ա. 782թ. հայոց Անուշավան տիրակալի օրոք նվաճում է Էտիունին՝ Այրարատը և վերջ դնում հայկական թագավորությանը: Ավերելով Արմավիր մայրաքաղաքը՝ դրա տեղում կառուցում է նոր բերդ և իր անունով կոչում Արգիշտիխինիլի:

Երևան քնակավայրի մոտ նա կյանքի է կոչում մի ամրոց և անվանում Էրեբունի (այժմ Արինբերդ): Տեղում հայտնաբերված այդ արքայի վավերագրում կարդում ենք.

«Խալդի աստծու մեծությամբ Արգիշտին՝ Սեմուայի որդին, այս փառավոր ամրոցը կառուցեց, անունը դրեց Էր(ե)բունիին: Քիայնիլի երկրին (թոլ լինի) հզորություն, թշնամի (երկրներին)՝ հնազանդություն»[19]:

Այս տեքստը կրկնվում է նշված թագավորի թողած մի քանի այլ գրավոր հուշարձաններում:

Նախ, ակնհայտ է, որ ուրարտական թագավորը նվաճել է թշնամի երկիր: Դա Էտիունին է՝ Այրարատը: Քերդը կառուցելով՝ նա ծգտել է այդ օտար երկիրը հնազանդ պահել:

Ինչպես ժամանակին նկատել են մի շարք մասնագետներ, հայկական տեղանունների վ քաղածայնը ուրարտերենում հաճախ հնչել է բ: Իսկ Երևան տեղանվան ա ծայնավորը, կարծում ենք, o-ին մոտ արտասանություն է ունեցել. դրա համար էլ սեպագիր տեքստերում այն դարձել է ու, քանի որ, ինչպես վերը նշվեց, այդ գրության մեջ o արտահայտելու հնարավորություն չկա: Ավելին, սեպագրերը ե և է ծայնավորներ տարբերակելու հնարավորություն չունեն: Արդյունքում Երևանը դարձել է Էրեբունի, բայց ոչ հակառակը:

Ի դեպ, Երևան անունը կազմված է հայ. երեվ-ալ բայահիմքից և -ան ածանցից, որ առկա է միջնադարի շատ այլ տեղանունների մեջ (համմտ. Երևան՝ մենաստան Արաբկիրի գավառում, Երևանս՝ գյուղ Էրզրումում, Երևան՝ դաշտ Վանանդում, նաև Երևիլ ձևով և այլն):

Էտիունին՝ Այրարատը նվաճելուց մի քանի տարի անց Արգիշտին իր տարեգրության մեջ նշում է. «Արգիշտին ասում է՝ լսեցի, (որ) էտիունիականը Արզինի քաղաքի աշտիուծի-ն irbilani: Նույն տարում ձորից (՞) զինվորներ հավաքեցի...: Արշավանքի գնացի դեպի Էտիունի երկիր, նվաճեցի Էրխախի երկիրը, Կատարզա երկիրը, հասա մինչև Իշկիգուլու երկիրը ...»[20]:

Գ.Ա. Մելիքիշվիլին աշտիուծի-ն համարում է հայ. աստված բառի նախատիպ (համմտ. բարբ. աստուծ)[20]:

Նա իրբիլյանի բառածնը կապում է ուրարտ. irb(u)-«ստանգել» բայարմատի հետ: Դրանում -նի մասնիկը ուրարտ. բայի անցյալ ժամանակի երրորդ դեմքի ցուցիչն է: Այդ դեմքին է վերաբերում նաև -ի(ն)- քաղադրիչը: Այդուհանդերձ այդ բայածնը մնում է որոշ չափով անընկալելի: Սակայն եթե մենք հետևենք վերը բերված տեքստի բովանդակությանը և վերը նշված մեկնաբանություններին, այն, կարծում ենք, հնարավոր է մեկնաբանել հետևյալ ձևով:

Արգիշտին, լսելով, որ ումն էտիունցի Արզինի քաղաքի աստիուծիի արձանը հափշտակել է, դրա համար նա նույն տարում ձեռնարկում է արշավանք դեպի Էտիունիի երկիրը այն ետ խլելու նպատակով: Սակայն, ինչպես տեքստում է վկայում, դա նրան չի հաջողվում:

Կարելի է ենթադրել, որ Արգիշտին նախքան այդ լուրդությունը, նվաճելով Էտիունի երկիրը, այնտեղից հայերի գլխավոր աստծու արձանը,

որին նա հիշատակում է աշտիոծի ձևով, առևանգել է և տաքել ուրարտական կրոնական կենտրոն Արդինի քաղաք: Սակայն մի քանի տարի անց ոմն էտիունցի՝ այրարուտցի, գնում, գողանում է այդ արձանն ու տանում Էտիանի:

Ի դեպ, հնադարում թշնամի երկրի գլխավոր աստծու արձանը առևանգելով նվաճողը աշխատում է գրկել դրանով դիմացիններին նրանց իսկ աստծու օժանդակությունից:

Վերը բերված բոլոր փաստերը նույնպես հաստատում են, որ ուրարտացիները դրսից էին ներթափանցել Հայաստան ու Վանի նահանգում ստեղծել պետություն:

VALERY KHACHATRYAN

NEW FACTS ABOUT THE UNTRUSIVE CHARATER OF THE URARTIANS

In the article several facts about the untrusive character of the Urartians are given. These are –the existence of Armenian words in the Urartian language, the name of Van Canal – Shamiram, given by the Armenians still in the time of the reign of Menua, the fact of the abduction of the Armenians' supreme god's statue by the Urartian King Argišti I and its re-abduction from the city of Ardini by the Etiunians etc.

ՇԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Վ.Ն. Խաչատրյան, «Հայաստանը մ.թ.ա. 15-7-րդ դդ», Երևան, 1998, էջ 22-26, 34-46: Տես նաև «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», հ. XXI, Երևան, 2003թ., էջ 173-183:
2. Н.В. Арутюнян, "Биайнили", Ереван, 1970, стр. 12-21.
3. Վ.Ն. Խաչատրյան, նույնի, էջ 119:
4. Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, I, ժդ:
5. Նույնի I, ժ:
6. Վ.Ն. Խաչատրյան, նույնի, էջ 110-111:
7. Մովսես Խորենացի, նույնի, I, ժզ:
8. Մովսես Խորենացի, նույնի, I, ժէ:
9. Н.В. Арутюнян, "Биайнили", стр. 119-279.
10. Н.В. Арутюнян, Корпус урартских клинообразных надписей (= КУКН), Ереван, 2001, 60, стк. 1-3 и стк. 7-11.
11. Н.В. Арутюнян, КУКН, 63, 64, 74.
12. Н.В. Арутюнян, КУКН, 78.
13. Н.В. Арутюнян, КУКН, 389, стк. 1-13.
14. Н.В. Арутюнян, КУКН, стр. 448 и 450.
15. Н.В. Арутюнян, КУКН, 60, стк. 10.
16. Н.В. Арутюнян, КУКН, 61, 62, 64.

17. Н.В. Арутюнян, КУКН, стр. 458.
18. Н.В. Арутюнян, КУКН, 197, 198.
19. Н.В. Арутюнян, КУКН, 17,3, V, стк. 41-49.
20. Г.А. Меликишвили, "Переднеазиатский сборник", III, Москва, 1979, стр. 171-176.

ՔՐԻՍՏԻՆԵ ԿՈՍՏԻԿՅԱՆ

ԹԱՀՄԱՍՊ II-Ի ՀԱՅԵՐԻՆ ՈՒՂՂՎԱԾ ՀՐՈՎԱՐՏԱԿՆԵՐԸ ԵՒ 1730-31ԹԹ. ՆՐԱ ԱՐԾԱՎԱՆՔԸ ԴԵՊԻ ԵՐԵՒԱՆ

XVIII դարի 20-ական թվականներին Արևելյան Հայաստանի շրջաններն անջատվում են անկում ապրող ու ֆեյսլեների ապստամբության հետևանքով փլուզված Իրանի Սեֆյան պետությունից, և չնայած Սյունիքում ու Այրարատում տեղական ուժերի համառ դիմադրությանը, հետզհետե ամբողջովին անցնում Օսմանյան Թուրքիայի տիրապետության տակ: Այդ շրջանները թուրքական իշխանության տակ են մնում մինչև 1733 –35թթ. Նադիր խանի զորքերի կողմից նրանց վերագրավումն ու ղրանց ընդգրկումը նրա ստեղծած իրանական պետության կազմում: Ոստի պատահական չէ, որ խիստ սակավաթիվ են վեյսոնիշյալ ժամանակահատվածում հրապարակված պարսկալեզու հրովարտակները և գերակշռում են թյուրքալեզու հրամանագրերը: Այնուամենայնիվ այդ սակավաթիվ հրովարտակները, որոնցից շուրջ 7-ը հրապարակվել են Սեֆյան վերջին գահակալներից Թահմասպ II-ի կողմից և պահվում են Երևանի Մատենադարանում, որպես պատմական սկզբնաղբյուրներ հետաքրքրության արժանի վավերագրեր են:

Թահմասպ Միրզային, որը Սեֆյան շահ Սուլթան Հուսեյնի երրորդ որդին էր, Սպահանի պաշարման ընթացքում հաջողվում է աֆղանական զորքերի օղակը ճեղքելով հեռանալ Ղազվինի, որտեղ իր հոր գահընկեց լինելուց հետո, 1722թ. նոյեմբերի 10-ին իրեն շահ է հռչակում, ևան իր անունով խութբա է հնչեցնում, դրամներ հատում և հրամանագրեր հրապարակում: Թեև նրա իշխանությունը ավելի շատ ձևական էր, այն տևում է շուրջ 10 տարի[1]: Աֆղաններից նրան Ղազվինից քշում են Թավրիզ, այնտեղից էլ թուրքերը նրան ստիպում են հեռանալ դեպի Արդերիլ, այնուհետև՝ Ռեյի ճանապարհով՝ դեպի Մազանդարան: 1724թ. Ռուսաստանի ու Օսմանյան Թուրքիայի հետ պայմանագրեր կնքելուց հետո շահ Թահմասպ II-ի իշխանության տակ է մնում Արդեբիլը, Սուլթանիեն ու Ղազվինը ընդգրկող մի փոքր շրջան[2]:

Շահ Թահմասպ II-ին ժամանակակիցները բնութագրում են սրպես թույլ, վախկոտ և գինեմոլ անձնավորություն[3]: Նրա բնութագրի համար խիստ բնորոշիչ է այն փաստը, որ 1722թ. աֆղանների կողմից Սպահանի պաշարման ընթացքում իր հայր շահ Սուլթան Հուսեյնի կողմից ուղարկված լինելով Քաշանի ու Ղազվինի կողմերը օգնական ուժեր հավաքագրելու՝ նա գինարբուքի ու զվարճանքների է տրվում[4]:

Թահմասպ II-ի վերը նշված 7 հրովարտակներից ժամանակային առումով առաջինը հրապարակվել է դեռևս նախքան նրուս շահ հռչակումը 1720թ. և տրված է Հավուց Թառի Ս. Ամենափրկիչ (Ղզղլվանքի) Խաչատուր քահանայի խնդրանքով ի պաշտպանություն այդ վանքի Ղզղլվանք, Մանկուս և Կոխթ գյուղերում ունեցած կալվածքների, որոնց նկատմամբ ոտնձգություններ էր կատարում ոմն Աղի Բեկ[5]: Վերոհիշյալ գյուղերը Ս. Երևանցին հիշատակում է Հավուց Թառի մյքատու գյուղերի թվում[6]: Հրովարտակում նշվող գյուղերում գտնվող կալվածքների ժառանգական պատկանելությունը Հավուց Թառի վարդապետներին հաստատված են եղել դեռևս 1489թ. շար'ի արձանագրությամբ[7], որոնց ավելացվել են նաև 1526թ. կազմված կալվածագրով նրան վակֆ արված նոր կալվածքներ[8]: Ամենայն հավանականությամբ այդ կալվածքների նկատմամբ Հավուց Թառի վանքի վարդապետների իրավունքները հաստատելու նպատակով է կազմված եղել նաև մեկ այլ պարսկալեզու վավերագիր, որն իրենից ներկայացնում է մի անթվակիր համախոսական՝ հաստատված 50 անձանց վկայություններով, ըստ որի՝ Կոխթ, Ագարակ, Ղզղլվանք (Հավուց Թառ) գյուղերը պատկանում են Հավուց Թառի Ս. Ամենավրկիչ վանքին[9]:

1724թ. Աստվածատուր կաթողիկոսը Թահմասպ II-ի հրավերով գնում է նրա մոտ[10]: Նրանց միջև տեղի ունեցած հանդիպման արդյունքում կաթողիկոսը ձեռք է բերում հայության համար մեծ նշանակություն ունեցող մի հրամանագիր՝ ուղղված ընդդեմ հայերի մահմեդականացման: Շահների մոտ Սեֆյան ժամանակաշրջանում լայն կիրառություն ուներ այսպես կոչված Իմսմ Ջա'ֆարի օրենքը, ըստ որի քրիստոնյա հայ հպատակների մահմեդականացած ազգականները իրավունք ունեին իրենց քրիստոնյա ազգականների ունեցվածքը ամբողջովին գրավելու և նրանց զրկելու ժառանգությունից: Այս առթիվ բազմաթիվ բողոքագրերի և դատական պրոցեսների ստվար գործեր կան պահպանված: Այդ գործերի ուսումնասիրությունից պարզվում է, որ մասնակի բացառություններով, ժառանգության խնդրում միշտ էլ առաջնությունը տրվում էր մահմեդականությունը ընդունած ժառանգներին[11]: Վերոհիշյալ հրամանագրով[12] արգելվում է նոր մահմեդականացած հայերին ապօրինի հավակնություններ ունենալ այլ հայերի ունեցվածքի նկատմամբ և կարգադրում մի շարք դատական ու վարչական ատյաններում իրենց իրավունքները հաստատելուց հետո միայն հավակնել իրենց ազգականների ունեցված-



Վավ. 334



Վավ. 333

Նույն դեպքերի ընթացքը քիչ ձևափոխված կերպով շարադրված է Մուհամմադ Քյազիմի «Թարիխ-ե ալամ-առա-ե Նադեքի» աշխատությունում: Ըստ այդ երկի, Թահմասպ II-ի զորքի Չուխուր Սա'դի (Երևանի) նահանգը մտնելու ժամանակ Երևանի բերդը գտնվում էր Մուսթովֆի փաշայի կայազորի պաշտպանության ներքո: Իսկ կողմերի առաջին ընդհարման ժամանակ թուրքական զորքը գլխավորում էր Թեյմուր Փաշան, որը Ալի Փաշայի հանճնարարությամբ Կարսից դեպի Երևան էր

ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 1գ, վավ. 330, բնագիր,
մեծ. 23 x 51սմ, գիր՝ շիքասթե

Սեֆյան շահ Թահմասպ II-ի կնիքը. [Հանուն ամենաբարեգութ Ալլահի, վիլայեթի շահի[34] ծառա Թահմասպ II 1138]

Աշխարհասաստ հրամանագիր հրապարակվեց հետևյալի մասին.

Քրիստոնյա մեծանուների առաջնորդ Ուչքիլիսայի Աստվածատուր կաթողիկոսը Նորին սրբազնագույն Մեծությանը տեղեկացրեց, որ հայերից որոշ անձինք արժանանալով մահմեդականությունն ընդունելու պատվին, իրենց հայրերի մյուս զավակների ու ազգականների հետ, որոնք հայ են, վեճ են սկսում ու անօրինականություններ գործելով՝ նեղություն պատճառում նրանց: Եթե նրանցից որևէ մեկը մահանում է, նրա ունեցվածքն ու մուլքերը[35] խլում, տանում են: Այդ պատճառով հայ վաճառականների մեծ մասը Ռումի և Ֆարանգի վիլայեթներում[36] մնալով, իր հայրենիք չի վերադառնում: Խնդրեց որպեսզի արքայական ուղեղով կարգադրվի որպեսզի այսուհետև ջաղիդ-օլ-իսլամներից[37] ոչ ոք այդ խնդիրների շուրջ հայերի հետ վեճ չսկսի ու անօրինականություններ չգործի: Ուստի կարգադրեցինք որպեսզի այն ջաղիդ-օլ-իսլամները, որոնք հայերի հետ վեճ ու կռիվ կունենան, մինչև որ իրենց պահանջը բարձրագույն պալատում՝ յուրաքանչյուր մահալի[38] բեկլարբեկների[39], հաքիմների[40] կամ ամիլի[41] ներկայությամբ շար՛ով չհաստատեն, հայերին չնեղեն: Մինչև որ տվյալ մահալի քյադխուդաների[42], հաքիմի ու հելինականավոր անձանց կնիքներով հաստատված գրություն ու հավաստի վկայական բարձրագույն պալատ չուղարկեն, որի հիման վրա արքայական ռաղամ[43]՝ կհրապարակվի, չպետք է ինքնագլուխ կերպով իրենց պահանջած գումարը ստանան: Եթե վիլայեթների[44] բեկլարբեկերը, հաքիմներն ու ամիլները վերոհիշյալ հրամանին հակառակ վարվեն, վերոհիշյալ կաթողիկոսը պետք է տեղեկացնի և նրանք պատասխանատվության կկանչվեն: Այս թող ընդունեն որպես խիստ կարգադրություն, այս ուղղությամբ ջանք չխնայեն և հրամանին չհակառակվեն: Բարձրագույն դիվանի[46] մեծահոգի մեծ մուսթովֆիները[45] թող վերոհիշյալ պարտաղիր *ռաղամը* հաբաանող մատյաններում գրանցեն ու ամեն տարի նոր *ռաղամ* չպահանջեն:

Գրվեց 1136թ. ջումադի առաջին ամսին[47]:

Հակառակ կողմում

Նորին Մեծության անմիջական հրամանով, կնիք. [Չկա աստված բացի Ալլահից Հաքիմ Քեքիմ];

գրեց. կնիք. [Հանուն ամենաբաղեգութ Ալլահի]; ճիշտ է, կնիք. [Չկա աստված բացի ամենազոր Ալլահից, աստծո ծառա Մուհամմադ]; թող գործադրեն, կնիք. [Ով ամենազոր Ալլահ, իմամ Հուսեյն]:

Շահ (ջնջված է) ռւղղամն է, զոր ընդ արզայի Աստվածատուր կաթողիկոսին տուեալ է, զլւ տաճկացեալքն յազգականաց իւրեանց զբան ինչ մի՝ պահանջեսցէն: ոճլգ:[48]

ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղք. 1գ, վավ. 334, բնագիր, գիր՝ նասթա՛լիղ

Շահ Թահմասպ II-ի կնիքը [Վիլայեթի շահի ծառա Թահմասպ II, 1139]

Աշխարհասաստ հրամանագիր հրապարակվեց հետևյալի մասին.

Քրիստոնյա հոգևորականների մեջ լավագույն և Հիսուսի ծառաների առաջնորդ Ուչքիլիսայի Աբրահամ կաթողիկոսի ու վերոհիշյալ վանքի քահանաների, միաբանների ու մյուս սպասավորների հանդեպ ունեցած շահական ողորմածությամբ վանքի ու նրա համայնքի գործերին վերաբերող և նրանց մոտ եղած դրախտաբնակ շահերի, թող Բարձրյալը նրանց հոգիները լուսավորի, կողմից հրապարակված բոլոր ռաղամները,[49] հոքմերը[50] ու ֆերմանները[51], այնպես ինչպես որ նրանք հրապարակվել են Մեր արքայական ստորագրությամբ հաստատեցինք և կարգադրեցինք՝ որպեսզի որևէ մեկը նրանց իմաստից ու բովանդակությունից չշեղվի: Բարձրագույն ղիվանի մեծահոգի մուսթովֆիները թող այս ռաղամ - շնորհագիրը հարատևող մատյաններում գրանցեն, փոփոխություններից զերծ պահեն, ամեն տարի նոր *ռաղամ* չպահանջեն և այն իրենց պարտականությունը համարեն:

[Գրվեց] 1143թ. շավալ ամսին:

Հակառակ կողմում

Նորին մեծության անմիջական ներկայությամբ. կնիք. [Հանուն ամենաբարեգութ Ալլահի, 1142]:

ինչ ռաղամ որ ունիմք շահթահմազի տված ռաղամնէ[51]:

ՄՄ, կաթողիկոսական դիվան, թղթ. 1գ, վավ. 333, բնագիր
մեծ. 14.5 x 25սմ, գիր՝ շիքասթե

Շահ Թահմասպ II-ի կնիքը [Վիլայեթի շահի ծառա Թահմասպ II, 1139]

Աշխարհասաստ հրամանագիր հրապարակվեց հետևյալի մասին.

Ուչքիլիսայի հայության հանդեպ ունեցած արքայական մեծ ողորմածությամբ կարգադրվում է, որ վերոհիշյալ ժողովրդից ով, որ արժանանում է իսլամն ընդունելու պատվին, թող դրսւ հիման վրա իր ազգական քրիստոնյա մահացած անծանց ժառանգների հետ ժառանգության վեճ

չսկսի ու իր քրիստոնյա ազգականներին չնեղի: Ուխտուր Սա'ադի բարձրաստիճան մեծ ամիր ալ-ումարա[52] բեկլարբեկն ու ամիլները թող գրվածը կարգադրության համարելով, թույլ չտան, որ որևէ մեկը վերոհիշյալ ժառանգության պատճառով հիշյալ ժողովրդին նեղություն պատճառի: Եվ թող այս իրենց պարտականությունը համարեն:

Գրվեց 1143թ. շավալ ամսին:

Հակառակ կողմում

Նորին Մեծության անմիջական կարգադրությամբ, կնիք. [Հանուն ամենաբարեգութ Ալլահի, 1139]:

ՄՄ, կաթողիկոսական դիվան, թղթ. 1գ, վավ. 330



مهر شاه طهماسب ثانی [بسم الله الرحمن الرحیم بنده شاه ولایت طهماسب ...

ثانی ۱۱۳۵]

حکم جهان مطاع شد آنکه عمدة الاعیان المسیحیه اسوادور خلیمه
اوچ کلیسا یعرض اقدس رسانید که جمعی از جماعت ارمنی که بشرف
اسلام مشرف میشوند با پدر و اولاد و اقوام خود که ارمنی اند دعاوی و
شلتاقات نموده مزاحمت مینمایند و هر یک از ایشان که مسلمان میشوند
اموال و املاک اورا کشیده میبرند و بدانعلت اکثر تجار ارامنه در ولایت روم
و فرنگ مانده بوطن خود نمی آیند و استدعا نموده که بحسبالرقم اشرف
مقرر گردد که من بعد احدی از جدیدالاسلامان در باب مراتب مزبور با ارامنه
ادعائی ننموده شلتاق ننمایند. بنابرین مقرر فرمودیم که جدیدالاسلامانی
که با ارامنه دعوی و گفتگوئی داشته باشند مادام که دعوی خود را در درگاه
معلی ثابت ننمایند در حضور بیگلربیگی و حکام با عامل هر محل مثبوت
شرعی نرسانیده معروض احوال ارامنه نشوند و بعد از آنکه ادعای خود را
مثبوت و لزوم شرعی برسانند مادام که نوشته و وثیقه که در آن باب نوشته
شده و بمهر کدخدایان و حاکم و معتبرین هر محل رسیده باشد تا بدرگاه
معلی نفرستند و رقم اشرف برطبق آن صادر نشود خودسر مرتکب بازیافت
وجه دعوی خود نگردند و هر گاه بیگلربیگیان و حکام و عمال ولایات
بخلاف امر مزبور معمول دارند و تخلف نمایند خلیفة مشارالیه عرض نماید
که بازخواستی که لازم باشد بعمل اید و درینباب قدغن و اهتمام تمام لازم
دانسته از فرموده تخلف نورزند. ... وزیران عظام کرام دیوان اعلی رقم
مطاع مزبور را در دفاتر خلود ثبت نمایند و هر ساله رقم مجدد طلب
ندارند.

تحریراً فی شهر جمادی الاول سنة ۱۱۳۶.

ظهر

بالمشافهه العلیه العالیه مهر [لا اله الا الله الحکیم الکریم]

نوشته شد مهر:[بسم الله الرحمن الرحیم]
صح مهر:[لا اله الا الله اله اک عبد محمد...]
تعهد نماید مهر:[الله تعالی یا امام حسن]

ՄՄ, կաթողիկոսական դիվան, թղթ. 1գ, վավ. 333
مهر شاه طهماسب ثانی [وثیقه شاه ولایت طهماسب ثانی ۱۱۳۹]

حکم جهانمطاع شد آنکه بنابر وفور اشفاق خسروانی در بارهٔ ارامنهٔ
اوچکلیسیا مقرر فرمودیم که هر یک از جماعت مذکوره که بشرف اسلام
مشرف گردد دعوی ارث از متوفیان مسیحی اتباع خود نموده بدان علت
متعرض و مزاحم خویشان مسیحی خود نگردد. عالیجاه امیرالامراء العظام
بیگلربیگی و عمال الکای چخورسعد حسب المسطور مقرر دانسته نگذارند
که احدی بعلت ارث مذکور مزاحمت باحوال طایفهٔ مذکوره نرساند و در
عهده شناسد.
تحریرا. فی شهر شوال سنة ۱۱۴۳.

ظهر
باله شافیه العلیه العالیه مهر:[بسم الله الرحمن الرحیم ۱۱۳۹]

ՄՄ, կաթողիկոսական դիվան, թղթ. 1գ, վավ. 334
مهر شاه طهماسب ثانی [وثیقه شاه ولایت طهماسب ثانی ۱۱۳۹]

حکم جهانمطاع شد آنکه بنابر شفقت شاهانه در بارهٔ زبدةالرهبانیان
المسیحیه عمدة القسیسین العیسویه ابراهیم خلیفهٔ اوچکلیسیا و کشیشان و
رهبانان و نصاری معبد مزبور کل ارقام و احکام و فرامین ازمنهٔ سلاطین
جنتمکین انارالله تعالی برهانهم را که در باب امور اوچ کلیسیا و جماعت
مزبوره بطریقی که شرف صدور یافته در دست دارند بامضای هم اپون
ممضی و منفذ و مقرر فرمودیم که احدی از مضمون و مدلول آن عدول و
انحراف نجوید مستوفیان عظام کرام دیوان اعلی رقم این عطیه در دفاتر
خلود ثبت نموده از شایبه تغییر و تبدیل مصون و محروس شناسند و هر ساله
رقم مجدد طلب ندارند و در عهده شناسند.
شوال المکرم سنة ۱۱۴۳.

ظهر
بالمشافهه العلیه العالیه ،مهر:[بسم الله الرحمن الرحیم ۱۱۴۳].

KRISTINE KOSTIKYAN

THE DECREES OF TAHMASB II ADDRESSED TO ARMENIANS AND IIIS CAMPAIGN IN THE PROVINCE OF YEREVAN IN 1730-1731

Seven decrees issued by Shah Tahmasb II Safavid are kept in the Archive of Catholicosate of Yercvan Matenadaran. Those decrees, dated by the years 1720, 1724 and 1731, are important historical sources of the history of Armenian people, Iran and their political relations in that period. Author discusses the information contained in those dccrces in comparison with the reports of other (Persian and Armenian) sourecs. Through a comprehensive study of the data survived in those sources author represents new details referring to the military campaign organized by Shah Tahmasb II against Turkish troops in the territory of the province of Ycrevan in 1730-1731, the relations between the shah and the catholicos and other outstanding representatives of Armenian peoplc. The abovementioned deerees witness of shah's special benevolence towards Armenian population and promise them of a better state under the rule of shah, especially as regards their religion, bccausc they stop the encouragement of adoption of Islam. Those decrees on the whole were issued with the intention to gain the favour of local Armenian population in Persia's struggle against the Turkish predominance in the territory of Eastern Armenia and particularly during the military campaign organized by Shah Tahmasb II in the Yerevan Province. The article represents three of those decrces with their Armenian translations.

ՃԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1. تاریخ ایران:دوره صفویان [پژوهش از دانشگاه کمبریج]،تهران ۱۳۸۰،ص. ۱۳۷
2. تاریخ ایران:دوره صفویان [پژوهش از دانشگاه کمبریج]:تهران ۱۳۸۰،ص. ۱۳۸
3. Ս. Տեր-Ավետիսյան, Նադիր շահի արշավանքները (ըստ Հակոբ Շամախեցու, Երևան, 1940, էջ 36:
4. تاریخ ایران:دوره صفویان [پژوهش از دانشگاه کمبریج]:تهران ۱۳۸۰،ص. ۱۳۴
5. Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան՝ այսուհետև ՄՄ, կաթողիկոսական դիվան, թղթ. 1գ, վավ. 328:
6. Սիմեոն Երևանցի, Ջամբռ, Վաղարշապատ, 1873, էջ 276:
7. ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 1գ, վավ. 927 (տե՛ս Հ. Փափազյան, Մատենադարանի սլարսկերեն վավերագրերը. կալվածագրեր, պրակ I, էջ 82):
8. ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 1գ, վավ. 880, պատճեն, (տե՛ս տե՛ս Հ. Փափազյան, կալվածագրեր, էջ 105):
9. ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 1գ, վավ. 919:
10. Աբրահամ Երևանցի, Պատմութիւն պատերազմացն 1721-1736, հրատ. Հ. Սահակ Ճեմճեմեանի, Վենետիկ, 1977, էջ 31, 98:
11. Հ. Փափազյան, Սեֆյան Իրանի ասիմիլյատորական քաղաքականության հարցի շուրջը, Բանբեր Մատենադարանի, Երևան 1956, N 3, էջ 87-88:

12. ՄՄ, կաթողիկոսական դիվան, թղթ. 1գ, վավ. 330:
13. Л. Х. Тер-Мкртчян, Армения под властью Надир Шаха, Москва, 1963, с. 43.
14. Ընտիր պատմութիւն Դաւիթ Բէգին և պատերազմաց հայոցն Խափանու, որք եղեն ընդդէմ թուրքաց ի մերում ժամանակի, այն է յամի տեառն 1722, Վաղարշապատ, 1871, էջ 58-59:
15. Կամ 1731թ. (պատճենի գրության ոչ հստակ լինելը թույլ չի տալիս վստահաբար պնդել)
16. Րաֆֆի, Խամսայի մելիքությունները, Երկերի Ժողովածու, հ. X, Երևան, 1964, էջ 187: Նաև Դիվան հայ վիմագրության, պրակ V, Արցախ, Երևան, 1982, էջ 149:
17. Վավերագրի հակառակ կողմում արված է հետևյալ ռուսերեն մակագրությունը. "копия от грамоты Тахмасп Шаха":
18. Աբրահամ Երևանցի, նշվ. աշխ., էջ 140:
19. Ս. Տեր-Ավետիսյան, Նադիր շահի արշավանքները (ըստ Հակոբ Շամախեցու, Երևան, 1940, էջ 36):
20. محمد کاظم، نامهٔ عالم آرای نادری،دفتر اول، م.م.کو،۱۹۶۰، ص. ۳۲۷-۳۲۴، جهانگشای نادری. تالیف میرزا مهدی خان استرابادی، تهران،۱۳۷۷، ص ۱۷۱-۱۶۹
21. میرزا مهدی خان استرابادی، جهانگشای نادری، ص ۱۷۰
22. میرزا مهدی خان آسترابادی، درهٔ نادره، ۱۲۷۶،ص ۱۱۱
23. محمد کاظم، نامهٔ عالم آرای نادری، دفتر اول، م.م.کو،۱۹۶۰، ص. ۳۲۷-۳۲۴
24. Л. Х. Тер-Мкртчян, ук. соч., с. 46-47.
25. راجر سیوری، ایران عصر صفوی، تهران ۱۳۸۰ ص ۲۵۳
26. تاریخ ایران: دوره صفویان [پژوهش از دانشگاه کمبریج]، تهران ۱۳۸۰،ص. ۱۳۸
27. Խոսքը Ալիի մասին է:
28. Օլքա - Բառացի նշանակում է «երկիր»: Հողային այնպիսի տիրույթներ, որոնք որպես ավատ տրվում էին քոչվոր ցեղերի պարագլուխներին և բարձրաստիճան զինվորականությանը՝ ամիրներին: Օլքա ստացող ամիրները պարտավոր էին պահանջված դեպքում որոշյալ քանակությամբ զորք տրամադրել կենտրոնական իշխանությանը: Օլքայի ամիրները իրավունք ունեին առանձին դրոշակ ունենալ և հանդիսավոր երթերի ու զորաշարժերի ժամանակ հատուկ թմբուկներով թմբկահարել:
29. ՄՄ, կաթողիկոսական դիվան, թղթ. 1գ, վավ. 331:
30. ՄՄ, կաթողիկոսական դիվանի, թղթ. 1գ, վավ. 334:
31. ՄՄ, կաթողիկոսական դիվանի, թղթ. 1գ, վավ. 333
32. ՄՄ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 4, վավ. 144,
33. ՄՄ, կաթողիկոսական դիվան, թղթ.1գ, վավ. 878:
34. Վիլայեթի շահ անվանում էին Ալիին:
35. Մուլք - սեփականություն, տիրույթ, ժառանգաբար ստացած կամ դրամով գնած ու սեփականություն դարձրած հող կամ այլ անշարժ կալված:
36. Նկատի ունի Օսմանյան Թուրքիայի ու Եվրոպայի երկրները:
37. Ջադիդ օլ-իսլամ - Նոր մահմեդականություն ընդունած: Այսպես էին կոչվում այն քրիստոնյաներն ու այլադավանները, որոնք հասուն տարիքում հավատափոխ էին լինում և մահմեդականություն ընդունում:

38. Մահալ - Շրջան, գավառ:
39. Բեկլարբեկ - Սեֆյան Իրանի սահմանամերձ ևահանգներում կամ կուսակալություններում իշխող խաներն ու ամիրները կոչվում էին «բեկլարբեկեր:
40. Հաքիմ - Գավառապետ, քաղաքացիական ղատավոր
41. Ամիլ - Դրանք այն պաշտոնյաներն էին, որոնք հաշվառման էին ենթարկում բոլոր հարկատու օբյեկտները, չափում ցանքսերն ու այգիները, ցուցակագրում բոլոր չափահաս աշխատունակ մարդկանց և ըստ այմմ որոշում, թե տվյալ օբյեկտից որքան հարկ պետք է գանձվի:
42. Քյաղխոդա - Այսպես էին կոչվում գյուղական ավագները: Սակայն չպետք է հասկանալ միայն գյուղի «գեղջավագ»-ի, «տանուտերի» կամ «ռեսի» իմաստով. մի գյուղում կարող էին լինել մի քանի քյաղխուդաներ, դրանք փաստորեն գյուղի ավագների կամ «աղսախկալների» (պարսկ. – «ռիշսեֆիդ») խորհրդի անդամներն էին, որոնք այդ անունը ստացել էին երբեմն գյուղի տանուտեր եղած ժամանակ: Այդ պաշտոնից ազատվելուց հետո էլ նրանք շարունակում էին կոչվել քյաղխուդաներ ու մասնակցում էին ափսգների խորհրդին:
43. Ռաղամ - Պաշտոնական գրություն, թագավորական հրովարտակ:
44. Վիլայեթ - Երկիր, երկրամաս, ևահանգ
45. Դիվան - Պետական գործերի ատյան կամ գրասենյակ: Հասկացվում էր հատկապես պետության կամ նրա բարձրագույն օրգանի իմաստով:
46. Մուսթովֆի - Այսպես էին կոչվում պետության, արքունիքի, ինչպես ևաե կրոնական հաստատությունների ֆինանսական, հաշվապահական գործերի գլխավոր կառավարիչները: Մուսթովֆիներ կային խոշոր ևահանգային վարչական կենտրոններում, որոնք վերահսկում ու կառավարում էին տվյալ ևահանգի կամ երկրամասի հաշվապահական գործերը:
47. 1724թ. հունվարի 27-ից փետրվարի 26-ը:
48. Հրովարտակի հակառակ կողմում արփած հայերեն մակագրություն է:
49. Ռաղամ - Պաշտոնական գրություն, թագավորական հրովարտակ:
50. Հոքմ - Հրամանագիր, հրաման, բարձր կարգադրություն:
51. Ֆերման - Հրաման, թագավորական հրովարտակ:
52. Հրովարտակի հակառակ կողմում երկու պարբերություն գրված, ջնջված է, որից հետո այս մակագրությունն է արվել:
53. Ամիր ալ-ումարա - Այսպես էին կոչվում բարձրագույն զորահրամանատարները, ևահանգապետներն ու կուսակալները:

ՆԻԿՈԼԱՅ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՆՈՐ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ՍԵՊԱԳՐԵՐՈՒՄ

1. eia ardiše, pē eiardiše

Ուրարտերեն eja բառը Մ. Սալվինին նախկինում ընթերցել է որպես մի ամրողջություն.

manini ^{d}Ḫaldi bedini ^{d}Ḫaldinani KÁ bedini ^{m}Išpuinie ^{m}Menua ulguše manini ^{m}Išpuini ^{m}Menua alsuiši eia ardiši[1]

Իսկ հետագայում, հաշվի առնելով Ի.Մ. Դյակոնովի այդ առթիվ արված առարկությունը[2], eja-ն նա դիտարկել է որպես ardise բառի բաղկացուցիչ մաս՝ eiardiše.

^{d}Ḫaldi bedini ^{d}Ḫaldinani KÁ bidini manini ulguše pisuše alsuiše eiardise arni ušmaše[3]

Ի ղեպ հատկանշական է, որ eiardiše ընթերցման հավաստիության վերաբերյալ Ի.Մ. Դյակոնովի կողմից ստորև բերված մեկնաբանությունը, կարծում ենք, հարկ եղած չափով արդարացում չի գտնում ուրարտական իդեոգրամատիկ տեքստերում: Տվյալ դեպքում նա նկատի ունի Կարմիրբլուրի КУКН, 424, տողեր 4-5 արձանագրության ^{d}Ḫaldina $^{d\check{S}}$KÁ bidi manini ulguše pisuše alsuiše eja ardiše arni ušmaše տեքստը, որի հիման վրա սակավ հավանական է համարում eja շաղկապի հիշատակությունը նախադասության երեք անդամների թվարկումից հետո, ըստ որում վերջինից շատ ավելի առաջ:

Սակայն այստեղ Ի.Մ. Դյակոնովը անտեսում է, որ նույնը չի կարելի ասել, օրինակ, Արգիշտի II-ի Չելեբի-բաղդի КУКН, 406 արձանագրության երեսի կողմի 8-12 տողերի տեքստի մասին, ուր առկա է aruše ekuše(?) ispuise ulguše pisuše alsuiše eja ardiše arni ušmaše: Հետևաբար, ակնհայտ է, որ այստեղ eja շաղկապը արդեն հիշատակվում է նախադասության ոչ թե երեք, այլ վեց անդամների թվարկումից հետո: Այդ դեպքում, ըստ երևույթին, հավանական է, որ այստեղ eja-ն հանդես է գալիս ոչ թե «և», այլ իդեոգրամատիկ «նաև», «ինչպես նաև» իմաստներով[4]: Մյուս կող-

միկ կպւծում ենք, որ այս մեկնաբանությունը նույնքան հավանական է թվում վերոհիշյալ ԿՈՒՀ, 424 արձանագրության իդենտիկ տեքստի համար:

'Նեռ ավելին, նման կարգի կասկածներ eia շաղկապի հավաստիության վերաբերյալ այլևս չեն ծագում Մենուայի Շուշանցում հայտնաբերված ԿՈՒՀ, 141 երկլեզվյան արձանագրության ուրարտական տեքստում, որ մեզ հետաքրքրող eia շաղկապով շարահյուսվում են ընդամենը երկու բառ՝ alsuisi-ն և ardisi-ն՝ alsuisi eia ardiši': Ըստ որում հաշվի առնելով eia շաղկապի մեզ հայտնի մյուս տարբերակները, ինքնին հարց է ծագում, թե արդյո՞ք այն նույնական չէ eai-ի հետ, եթե տվյալ դեպքում ենթադրենք դրափոխության առկայություն eia-eai:

Եվ, վերջապես, սրանց հետ մենք հակված ենք ինչ-որ ընդհանրություն տեսնելու նաև տոսկ վերջերս Ռուսա II-ի Այանիսի նոր արձանագրության շնորհիվ գիտական շրջանառության մեջ դրված ai շաղկապը, որը նույն ձևով հանդիպում է նևսև խուրրիերենում և մեկնաբանվում «եթե», «կամ» իմաստով[6]: Ի դեպ ըստ ամենայնի ակնառու է, որ Ռուսա II-ի Զվարթնոցի արձանագրության ամենքի բանաձևի eai շաղկապին նույն թագավորի Այանիսի իսկենտիկ արձանագրությսն ամենքի բանաձևում փոխարինում է ai-ն: Ահա այդ տեքստերը.

... aluse ulise tiulie iese zadubi ... eai ^{KUR}biainise eai ^{KUR}luluiniše ^{d}Ḫaldiše ^{d}IM-se ^{d}UTU-ni-se DINGIR^{MEŠ}-se mei tini mei armuzi mei zilbi qiuraidi kulietuni (ԿՈՒՀ, 421, տողեր 37-47):

... aluse tiulie iese zadubi ai ^{KUR}biainise ai ^{KUR}luluiniše ... ^{d}Ḫaldiše ^{d}IM-še ^{d}UTU-ni-še DINGIR^{MEŠ}-še mani tini armuzi ... ^{d}UTU-ni piei ... auie ululie (Ayanis I, էջ 258, սեկցիա VIII, տողեր 6-11):

Ի դեպ բոլորովին էլ պատահական չէ, որ տվյալ դեպքում մեզ հետաքրքրող eia-յի տարբերակները՝ e'a-eua-ն, eue-ն և eai-ը որպես շաղկապ հիշատակվում են նաև ուրարտական մի շարք այլ արձանագրություններում: Ահա դրանք.

1. ... ini É ^{m}Menuaše ^{m}Išpuiniḫiniše šidistuni badusie e'a É.GAL šidistuni (ԿՈՒՀ, 83, տողեր 2-5):
2. ^{m}Menuaše ^{m}Išpuiniḫiniše ini pulusi kuguni e'a ^{d}Ḫaldinili KÁ sidistuali (ԿՈՒՀ, 101, երեսի կողմ, տողեր 2-6):
3. ^{m}Argistise ali aluše tinini tuli eai ini DUB-te pitulie (ԿՈՒՀ, 409, տողեր 13-15):
4. ^{d}Ḫaldiše EN-še ḫututuḫi gunuše eue ipsuše suini... (ԿՈՒՀ, 406, եբեսի կողմ, տողեր 31-34):
5. ... ^{d}Ḫaldiše eue DINGIR^{MEŠ}-aše parie esini telani (ԿՈՒՀ, 478, տողեր 8-10):

6. ... ini susie ^{m}Rusase ^{m}Argistiḫinise šidistuni eue ^{d}Ḫaldinili KÁ badusie ^{m}Rusaḫina $^{\text{ŠÀ.DU}_{11}.\text{GA}}$Eiduru-kai kušuni (Ayanis I, էջ 254, սեկցիա I, տողեր 1-2):

7. ^{LÚ}iani inukie E.GAL-a eue URU^{MES} alili inukie E.GAL-a zadubi (Ayanis I, էջ 258, սեկցիա VIII, տողեր 1-2):

8. ^{m}Rusaše ^{m}Argištiḫiniše ali ^{d}Ḫaldis-me ušḫanuni ḫututuḫi gunuse eue ipšuse (Ayanis I, էջ 258, սեկցիա VII, տողեր 5-6):

Մյուս կողմից, eia ardise (բայց ոչ eiardise) ընթերցման հավաստիությունը հստակ վկայում է ուրարտական արձանագրություններում հիշյալ ինքնուրույն բառերի աներկբա առկայության փաստը: Ըստ որում նրանցից eia-ն մեկնաբանվում է «և», «նաև», «ինչպես նաև», իսկ ardise-ն՝ «ուժ», «իշխանություն», «կարգադրություն» իմաստներով: Ինչ վերաբերում է eiardiše վիճելի ընթերցմանը, ապա անհնար է նրա օգտին կռահել որևէ փոքրիշատե համոզիչ իմաստավորում: Հետևաբար, պատահական չէ, որ eia ardiše ընթերցումը միահամուռ ընդունում են ուրարտական արձանագրությունների դիվանների հեղինակներ Գ.Ա. Մելիքիշվիլին[7], Ֆ.Վ. Քյոնիգը[8], Ն.Վ. Հարությունյանը[9] և այլոք:

2. amanigidi, թե՞ amani igidi

Այսօրիսի նորահայտ արձանագրության մեջ Մ. Սալվինին amanigidi-ի փոխարեն առաջարկում է amani igidi ընթերցումը[10]:

Նախ նշենք, որ amani բառ իրոք հայտնի է գիտությանը, այնինչ կարծեցյալ igidi-ն, հասկանալի պատճառներով, չի հանդիպում ուրարտական սեպագիր աղբյուրներում: Ինչ վերաբերում է վարդուց առաջարկված amanigidi ընթերցմանը[11], ապա առկա նյութի հոգատար քննարկման դեպքում, կարծում ենք, հազիվ թե կարող է կասկած հարուցել, որ դա պարզապես amani բառն է՝ մատուցված ուղնորական –gi(e)di (տարբերակ՝ i(e)di) հոլովածևով: Համմմ. $^{(\text{URU})\text{DU}}$dudi և $^{(\text{URU})\text{DU}}$dudigiedi (КУКН, 520, երեսի կողմ, տող 11), ^{KUR}ebani և ^{KUR}ebanigidi (КУКН, 241A, տող 5), ^{KUR}Uelikuni և ^{KUR}Uelikunigidi (КУКН, 241F, տող 7), ^{KUR}Isteluani և ^{KUR}Išteluanigidi (КУКН, 241F, տող 14) և այլն:

Ի դեպ, կարծում ենք, որ սեպագիր աղբյուրների վարդուց հայտնի սույն a-ma-ni-i-gi-di գրության մեջ Մ. Սալվինիին, ըստ երևույթին, թյուրիմացության մեջ է գցել սոսկ գրաֆիկ նշանակություն ունեցող հավելյալ i-ի առկայությունը amani-ից հետո՝ առձանագրության տվյալ տողի ազատ մնացած հատվածը զբաղեցնելու համար:

Մյուս կողմից հատկանշական է, որ tar-gi-i-ni-li բառի դեպքում ես, այդ նույն միտումով, Այանիսի նորահայտ մի արձանագրության հրատարակության ժամանակ[12] Մ. Սալվինիին ի սկզբանե շփոթեցրել է targi-

յց հետո առկա հավելյալ i-ն, որի պատճառով targinili բառը (amani igidi նման) նա արհեստականորեն տրոհել է targi և inili բաղադրիչների (հմմտ., սակայն, այդ բառի targini և targinili եզակի և հոգնակի գրություններ):

Նշենք նաև, որ հետագայում Այանիսի հիշյալ արձանագրության վերահրատարակության պահին իր նախկին targi inili-ն Մ. Սալվինին արդեն մատուցել է targinili ձևով: Ի դեպ որպես այդ «նոր» ընթերցման փաստարկ ծանոթագրության մեջ նա մատնացույց է արել, որ սեպագիր տեքստում targinili arniusinili բառակապակցության մեջ targinili որոշիչը հոգնակի թվով համաձայնեցված է arniusinili որոշյալին[13]: Այնուհետև, որոշ ուշացումով, Ռուսա III-ի Գյովելեքի նոր արձանագրության հրատարակության առիթով Մ. Սալվինին նաև հույս է արել այն մասին, որ Այանիսի նոր արձանագրության targinili-ն հանդիսանում է ուրարտական այլ արձանագրությունների DAN.NU$^{MI.S}$ շումերական գաղափարագրի համապատասխանությունը[14]:

Այստեղ մեզ մնում է սոսկ ավելացնել, որ targinili նոր ընթերցումը և այն հաստատող վերոհիշյալ երկու փաստարկները Մ. Սալվինին, առանց որևէ հույս անելու, տառացիորեն ընդօրինակել է տալերիս հեղինակի ուրարտական արձանագրությունների նոր ղիվանի՝ КУКН, 412b տեքստից և նրան հղված 5-րդ ծանոթագրությունից: Ինչ վերաբերում է հիշյալ փաստերի, այսպես կոչված, սեփականաշնորհման մատուցմանը տարբեր ժամանակներում և տարանջատված եղանակով, ապա դժվար չէ կռահել, որ այն միտում ունի թյուրիմացության մեջ գցելու սակավատեղյակ ընթերցողին: Ի դեպ ելնելով հիշյալ, այդօրինակ մի շարք այլ ակնառու փաստերից, բացառված չէ, որ amanigidi նոր ընթերցումը ևս - հետագայում աննկատ ունենա սեփականաշնորհման նույն ճակատագիրը:

Փաստական նյութը առավել տեսանելի և փաստարկները համոզիչ դարձնելու նպատակով այժմ ստորև հատվածաբար բերում ենք amani և amanigidi ընթերցումները հիշատակող ուրարտական տեքստերը.

1. ... aluki amani suga bari ... ali taše amani bidi ... [...]urbikaše masani tišni amani ... (КУКН, 193, տողեր 6-7,9-10):
2. ... aluki amani <suga bari ... (КУКН, 194, տող 6):
3. aše ... ^{d}Ḫaldini amanigidi iphie ^{d}Ḫaldini <badusini iu urzie> 'ahulini KI^{TIM}-a quldinini mei ešimesi elmuše <manunie> (КУКН, 415, տողեր 8, 10-11):
4. aše ... ^{d}Ḫaldini amanigidi iphie ^{d}Ḫaldini badusini iu urzie 'ahulini qiura quldinini mei esimesi elmuše manuni (Ayanis I, էջ 257, սեկցիա IV, տողեր 7-9):

Ի դեպ ուրարտերեն amanai բառը մասնագիտական գրականության մեջ առաջարկվել է նույնացնել հայերեն «աման»-ի[15] (ափսե) հետ: Այս բառը սովորաբար հիշատակվում է ուրարտական պաշտամունքային տեքստերում կենդանիների զոհաբերությունների ժամանակ և ԿՈՒՀ. 193 արձանագրության մեջ հանդես է գալիս մերթ որպես «ընծայի աման» (tase amani), մերթ էլ զոհաբերված կենդանու «սրտի աման» (tišni amani), իսկ Արծկեի և Այանիսի արձանագրություններում որպես «խալդի աստծո աման» (dḪaldini amani):

3. egudi badi, քե՞ gudi GÙB(?)-di կամ gudinadi

Խնդրո առարկա սեպագիր տեքստերի ընթերցումներում և մեկնաբանություններում ուրարտագիտության մեջ տեղ են գտել զգալի տարակարծություններ:

Գ.Ա. Մելիքիշվիլու մոտ, օրինակ, այդ առթիվ հանդիպում է հետևյալ ընթերցումը.

... a-lu-še ḫa-lu-li-e gu-di GÙB-di a-tu-li-i-e (ВДИ, 1953, № 2, էջ 295, № 96, տող 3. նույնի ՈՒՀ, 96, տող 3):

Ֆ.Վ. Քյոնիգը փաստորեն առաջարկում է նույն ընթերցումը, սակայն GÙB գաղափարագրի հավաստիությանը վերաբերում է կասկածամտորեն.

... a-lu-še ḫa-lu-li-e gu-di GÙB(?)-di a-tu-li-i-e (HchI, հատոր II, 76, III):

Ի դեպ gu-di GÙB(?)-di ընթերցումը ընդունում է նաև Ի.Մ. Դյակոնովը՝ միաժամանակ առաջարկելով դրա թարգմանությունը. «դեպի աջ (և) դեպի ձախ», «աջից և ձախից», բառացի՝ «աջին (և) ձախին» (УПД, էջ 48):

Իսկ Ն.Վ. Հարությունյանի մոտ Գ.Ա. Մելիքիշվիլու, Ֆ.Վ. Քյոնիգի և Ի.Մ. Դյակոնովի ḫalulie gudi-ի փոխարեն առաջարկված է ḫaluli egudi ընթերցումը (ՈՒՀ, 122, տող 3):

Եվ, վերջապես, լուենտիկ տեքստերի մեզ հետաքրքրող բառերի ընթերցումներում շատ ավելի մեծ տարակարծություններ ունի Մ. Սալվինին: Ի դեպ բացի մնացած կարևոր հանգամանքներից, որոնք կարծարծվեն ստորև, նրա մոտ վերոհիշյալ egudi (կամ՝ gudi) GÙB(?)-di երկու բառերի փոխարեն առաջարկված է ընդամենը մեկ բառ՝ gudinadi.

[3]) ... mRu-sa-a-še a-li me-i a-i-še-i ḫa-lu-li-e gu-di-na-di KÚ-ni ... (Ayanis I, էջ 257, IV սեկցիա, տող 10):

μ) ... dḪal-di-na-a KÁ i-še-er-ḫi-ni ḫa-lu-li u-i-la-ti-ni a-lu-še-e gu-di-na-di a-tu-li-e...(Ayanis I, էջ 258, V սեկցիա, տողեր 10-11):

Իսկ այժմ անդրադառնալով վերոհիշյալ ընթերցումների հավաստիությանը, կարծում ենք, անհրաժեշտություն է ծագում պարզելու երկու

խնդիր. ա) ḫa-lu-li e-gu-di, թե՞ ḫa-lu-li-e gu-di և բ) gu-di (կամ՝ e-gu-di), GÙB(?)-di, gu-di-na-di, թե՞ բոլորովին այլ եզրահանգում:

Առաջարկված խնդիրներից առաջինում, համոզված ենք, որ նախապատվությունը պետք է տալ ḫa-lu-li e-gu-di ընթերցմանը, քանի որ ոչ մի հիմք չկա egudi-ի սկզբի e-ն վերագրելու ḫaluli-ին և aluše-ին՝ իբր նրանց վերջավորություն: Այդ հարցի լուծման վրա հարկ եղած չափով լույս են սփռում ḫaluli aššulini (KUKH, 82, տող 27), ašhaštuli ḫaluli (KUKH, 122, տող 2) և ḫaluli uilatini (Ayanis I, էջ 258, V սեկցիա, տող 11) տեքստերը: Իլ չենք ասում ուրպատեյեն Ḫaluli-ի և հայերեն «խաղողդ»-ի վերաբերյալ մասնագիտական գրականության մեջ առաջարկված համոզիչ ստուգաբանությունը[16]:

Ինչ վերաբերում է ḫa-lu-li-e միակ գրության առկայությանը Այանիսի արձանագրության ... [kam]-ni-ni ^{GIŠ}GEŠTIN ḫa-lu-li-e kam-ni-ni É-i za-na-ni-ni հատվածում (Ayanis I, էջ 258, V սեկցիա, տող 9), ապա այնտեղ ḫa-lu-li-e բառի վերջին e-ն, É-i գաղափարագրի -i հնչյունական լրացման նմանությամբ, ակներևաբար հոլովական վերջավորություն է (սեռականի կամ տրականի): Իսկ գիտված տեքստի É-i za-na-ni-ni փոխարեն Մ. Սալվինիի առաջարկած É i-za-na-ni-ni ընթերցումն էլ հիմնովին հերքվում է KUKH, 122 արձանագրության 5-րդ տողում za-na-ni-ni բառի աներկբա գրության առկայությամբ:

Անդրադառնալով կրկին GÙB(?)-di ընթերցմանը, ապա ինչպես սոսկ վերջերս մեզ հաջողվեց բացահայտել, ուրարտական գրագրի մելքով ba վանկագիր նշանի խեղաթյուրման պատճառով առայժմ այն մնացել է ուրարտական սեպագիր տեքստերի ընթերցման պրոբլեմատիկ խնդիրների շարքում: Ի դեպ մեր անվստահությունը KUKH, 122 արձանագրության GÙB(?)-di ընթերցման նկատմամբ ծայր աստիճանի սրվեց հատկապես այն դեպքում, երբ նկատեցինք, որ Այանիսի նորահայտ ծավալուն արձանագրության նեղտիկ հատվածներում կարծեցյալ GÙB(?)-di-ի փոխարեն կրկնակի ւսոկա է ba-di կամ ba-a-di գրությունները (Ayanis I, էջ 258, սեկցիա IV, տող 10, սեկցիա V, տող 11): Ուստի այդ ակնառու փաստերն էլ, բնականաբար, մեզ ստիպեցին կրկին, ամենայն հոգատարությամբ, զննելու KUKH, 122 արձանագրության առեղծվածը: Եվ անմիջապես բացահայտվեց, որ այնտեղ ևս փաստորեն առկա է միևնույն ba-di բառը՝ պարզապես ba նշանի անզգուշորեն մասնակի խեղաթյուրմամբ ուրարտական գրագրի անփութության հետևանքով:

Ընթերցողին համոզելու համար նշենք, որ, ինչպես հայտնի է, ba նշանը բաղկացած է մեկ հորիզոնական, երկու «անկյունաձև» և մեկ ուղղահայաց հաջորդական սեպերից (տես Borger, ABZ, № 5): Հենց այդպես էլ իրոք փորագրված է կարծեցյալ GUB-ի տեղում KUKH, 122 արձանագրության 3-րդ տողում: Սակայն մի պահ կարծելով, թե ba նշանի փորագ-

րությունը տեքստում դեռևս չի ավարտվել, ապա այդ նշանի վերջին «անկյունածև» և ուղղահայաց սեպերը թյուրիմացաբար գրագիրը վերստին կրկնել է տեքստում: Հենց դրանից էլ ծագել է ողջ թյուրիմացությունը:

Եվ, այնուամենայնիվ, այդ ամենով հանդերձ վերը նկարագրված կարծեցյալ GÙB(?) սեպախումբը ամենևին չի համընկնում իրական GÙB գաղափարագրին (ասորեստանյան šumēlu-ին, որ նշանակում է «ծախ կողմը») ոչ սեպագրերի դասավորությամբ, ոչ էլ «անկյունածև» և ուղղահայաց սեպերի փոխհարաբերությամբ, այսինքն՝ KUKH, 122 արձանագրության կարծեցյալ GÙ3(?)-ը մեկ հորիզոնականի հետ միասին պարունակում է երեք «անկյունածև» և երկու ուղղահայաց՝ իրական GÙB-ի մեկ հորիզոնական, երկու «անկյունածև» և երեք ուղղահայաց սեպերի փոխարեն (տես Borger, ABZ, № 88): Դեռ ավելին, այդ ըստ ամենայնի անհամոզիչ GÙB(?) գաղափարագրի «ծախ կողմը» բարգմանությունն էլ, քնականաբար, արդարացում չի գտնում մեզ հետաքրքրող սեպագիր տեքստում:

Ինչ վերաբերում է Մ. Սալվինիի կողմից ba նշանի na ընթերցմանը Ա-յանիսի նորահայտ արձանագրության մեջ ba-di բառում, ինչպես նաև ^{URU}Ba-si-e-ḫi-na-a քաղաքանվան մեջ (նրա ընթերցմամբ՝ ^{URU}Na-ši-e-ḫi-na-a. Ayanis I, էջ 258, սեկցիա IV, տող 11), ապա դրանք երկուսն էլ հավասարապես կատարյալ թյուրիմացության արգասիք են:

Հետևաբար, ճշգրտելով առեղծվածային GUB(?)-di badi և gudinadi տարբեր պատճառներով խեղաթյուրված ընթերցումները, KUKH, 122 վաղեմի և Այանիսի նորահայտ արձանագրությունների մեզ հետաքրքրող իդեոգրամիկ հատվածները ստանում են այսպիսի տեսք.

1. … a-lu-še ḫa-lu-li e-[g]u-di ba-di a-tu-li-i-e … (KUKH, 122, տող 3):
2. … ^{m}Ru-sa-a-še a-li me-i a-i-še-i ḫa-lu-li e-gu-di ba-di KÚ-ni … (Ayanis I, էջ 257, սեկցիա IV, տող 10):
3. … ^{d}Ḫal-di-na-a KÁ i-še-er-ḫi-ni ḫa-lu-li u-i-la-ti-ni a-lu-še e-gu-di ba-di a-tú-li-e …(Ayanis I, էջ 258, սեկցիաV, տողեր 54-55):

Կարծում ենք, որ այս տեքստերը ընդհանուր առմամբ հասկանալի են: Խոսքը վերաբերում է ուրարտական տաճարներում (^{d}Ḫaldinili KÁ-li = šeštili) տեղի ունեցող պաշտամունքային արարողությունների ժամանակ զոհաբերված կենդանիների մարմնի զանազան մասերի (^{UZU}ḫušu «միս», ^{UZU}tišni «սիրտ», zieldi «լյարդ» և այլն) հետ միասին, մասնակիցներին մատուցվող նաև խաղողի (ḫaluli) ճաշակման (KÚ-ni = atuli) մասին:

Ինչ վերաբերում է խաղողին հավված egudi և badi մակդիրներին (Ḫaluli egudi badi), ապա նրանցից badi-ն, ըստ երևույթին, առնչվում է միևնույն bad- արմատից կազմված badusi «հոյակապ», «սքանչելի» բառի հետ, ո-

որ ուրարտական արձանագրություններում սովորաբար հիշատակվում է նորակառույց ամրոցների (E.GAL) և տաճարների (šestili) կապակցությամբ և մատնացույց է անում նրանց շինարարական կատարելության մասին: Հմմտ. badi-badusi և ini-inusi, alae-alusi, urišḫi-urišḫusi խղճտիկ բառակազմությունները:

Հետևաբար, ելնելով վերոհիշյալ փաստական նյութից, մենք հակված ենք խորհելու, որ badi-ն, հավանաբար, վկայում է պաշտամունքային արարողությունների ժամանակ ճաշակվող խաղողի բարձր որակի, իսկ ɛgudi-ն, գուցե, տեսակի մասին: Դրան պետք է ավելացնել տողերիս հեղինակի կողմից išerḫini բառի վերաբերյալ վերջերս առաջարկված «այն ժամանակ» ստուգաբանությունը, որը փաստորեն հաճդիսանում է խղճտիկ տեքստերի ikukani MU (sali)-ի («նույն տարում») հոմանիշը[17]:

NICOLAY HAROUTHIOUNYAN

NEW READINGS AND INTERPRETATIONS IN THE URARTIAN CUNEIFORMS

New reading of *eia ardiše* is suggested instead of the former *eiardise*.

It is denied the reading of *amani igidi* and suggested *amanigidi*, which may be considered as Directive Case of the word *amani*.

On the basis of detailed analyses of the cuneiform texts it is denied the deformed readings of *gudi GÙB(?)-di* and *gu-di-na-di* and suggested a new interpretation in the form of *e-gu-di ba-di*.

ՃԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. M. Salvini, Una «bilingue» assiro-urartea, «Studia Mediterranea, Piero Meriggi dicata», Pavia, 1979, էջ 578:
2. И.М. Дьяконов, ДВ, 5, ¿ç 166. նույնի AMI, 22. էջ 97-98
3. M. Salvini, Ayanis I, Roma 2001, էջ 254, սեկցիա I, տողեր 6-7:
4. Այս մասին տես մանրամասն Н.В. Арутюнян, КУКН, 141, ծանոթ. 7:
5. Н.В. Арутюнян, КУКН, 141, ուրարտ. տեքստ, տող 3:
6. E. Laroch. Glossaire de la lamgue hourrite. RHA. XXXIV. Paris. 1976, ¿ç 39:
7. Г.А. Меликишвили, УКН, 393.
8. F.W. König. Hchl. II. էջ 181:
9. Н.В. Арутюнян, КУКН, էջ 442:
10. M. Salvini, Ayanis I. Roma 2001. էջ 257, սեկցիա IV, տող 8, նույնի, SMEA, XLIII/2, Roma, 2001, էջ 286:
11. Ն.Վ. Հարությունյան, ՊԲՀ, 1962, թիվ 3, էջ 110: Н.В. Арутюнян, НУН, էջ 78, տող 10:
12. M. Salvini. SMEA, XXXV. Roma. 1995. էջ 111-124.

13. M. Salvini, Ayanis, I, Roma, 2001, էջ 251 և ծանոթ. 2:
14. M. Salvini, SMEA, XLIV/1, Roma, 2002, էջ 139:
15. Հ.Բ. Արտյոնյան, ԿՈՒՀ, էջ 434:
16. J. Sandalgian, ICU, Venisc, 1900, էջ 370: Հ.Ա. Մկրտչյան, ԴՎ, 4, էջ 27:
17. Այս մասին մանրամասն տես Ն.Վ. Հարությունյան, Նոր ընթերցումներ և մեկնաբանություններ Այանիսի նորահայտ ուրարտական սեպագրում, «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», XXI, Երևան, 2002, էջ 223-227.

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ՊԲՀ – Պատմա-բանասիրական հանդես (Երևան).
ВДИ – Вестник древней истории (Москва).
ДВ – Древний Восток (Ереван).
КУКН – Н.В. Арутюнян, Корпус урартских клинообразных надписей, Ереван, 2001.
НУН – Н.В. Арутюнян, Новые урартские надписи Кармир-блура, Ереван, 1966.
УКН – Г.А. Меликишвили, Урартские клинообразные надписи, Москва, 1960.
УПД – И.М. Дьяконов, Урартские письма и документы, Москва-Ленинград, 1963.
ABZ – Rykle Borger, Assyrisch-babylonische Zeichenliste, Neukirchen-Vluyn, 1978.
AMI – Archaeologische Mitteilungen aus Iran (Berlin).
Ayanis, I – A. Çilingiroğlu, M. Salvini, Ayanis, I. Roma, 2001.
Hchl – F.W. König, Handbuch der chaldischen Inschriften, I-II, Graz, 1955-1957.
ICU – J. Sanfalgian, Les inscriptions cunéiformes urartiques, Venise, 1900.
RHA – Revue Hittite et Asianique (Paris).
SMEA – Studi Miccnei cd Egco-Anatolici (Roma).

ՀԱՍՄԻԿ ՀՄԱՅԱԿՅԱՆ

ՀԱՅԱՍԱԿԱՆ ^{d}U.GUR-Ը ԵՎ ԱՐԱ ԳԵՂԵՑԻԿԸ

Խեթական Նոր թագավորության արքա Մուրսիլիս II-ի (Ք.ա 1322-1321?) և Հայասայի արքա Աննիայի միջև[1] կնքված պայմանագրում վկայաբերված են խեթական և հայասական աստվածները[2]: Մա միակ աղբյուրն է, որից մենք տեղեկանում ենք Հայասայի դիցաբանի մասին: Հայասական դիցար!անին տաբբեր տեսակկյուններից անդրադարձել են հայ և օտարազգի ուսումնասիրողներ (Գ.Ղափանցյան[3], Գ.Ջահուկյան[4], Ս.Պետրոսյան[5], Գ.Վարդումյան[6], Ա.Պետրոսյան[7], Է.Ֆորեր[8], Է.Լառուշ[9] և այլն): Այն ներկայացված է 14 աստվածություններով, որոնցից առաջին երկուսը՝ [m]U.GUR (անդրաշխարհի տիրակալ աքքադական Ներգալի գաղափարագիրն է) և ^{d}*IŠTAR* (սիրո և պտղաբերության աստվածուհի, շումերական ^{d}INNANA-յի գաղափարագիրն է), առանձնացված են մյուսներից, որը ըստ ուսումնասիրողների, մատնանշել է նրանց գերակա դերը Հայասայի դիցարանում:

Սա ամսովոր միասնություն է, քանզի սիրո և պտղաբերության աստվածուհու կողքին սովորաբար հանդես է գալիս կամ գերագույն հայր աստվածություն կամ ամպրոպի, ռազմի աստվածը: Անդրշիրիմյան ^{d}U.GUR աստվածությունը դիցարանում գլխավոր դերը չի զբաղեցնում:

Գ. Ղափանցյանի կարծիքով հայասական պանթեոնը գլխավորել է կամ Արա Գեղեցիկ աստվածությունը (հիմնավորելով իր միտքը այն հանգամանքով, որ մեռնող-հարություն առնող աստվածները հաճախ դառնում են նաև անդրաշխարհի տերեր), կամ նա հնարավոր է համարում "U.GUR-ի հնչյունական ընթերցումը[10]: Այս երկրորդ վարկածի առումով նշենք, որ ^{d}U.GUR-ը թե՛ տվյալ պայմանագրում, թե՛ խեթական այլ տեքստերում միշտ հանդես է գալիս գաղափարագիր գրությամբ, ինչը ամենայն հավանականությամբ բացառում է նրա հնչյունագիր ընթերցման հնարավորությունը: Հայասայի ^{d}U.GUR-ը խեթական տեքստերում հստակորեն տարբերակվել է մյուս ^{d}U.GUR-ից[11]: Այս տարբերակումը խոսում է Հայասայի ^{d}U.GUR-ի առանձնահատկությունների մասին:

Ինչ վերաբերում է երկրորդ տեսակետին (Արա Գեղեցիկի նույնացումը ^{d}U.GUR-ի հետ), ապա նշենք, որ մեռնող-հարություն առնող աստվա-

ծությունները, ըստ Ժ.Դյումեզիլի առասպելաբանական վերակազմումների, պատկանում են երրորդ ֆունկցիային, այսինքն նրանք դիցարանություններում գլխավոր դերը չեն ստանձնում: Փաստորեն, կարելի էր վիճարկել դափնեցյանական այս տեսակետը նույնպես, եթե Արա Գեղեցիկի անվանակերպարային բազմակողմանի վերլուծությունը ցույց չտար, որ նա բազմաշերտ և բազմաքնույթ դիցաբանական կերպար է և, ամենայն հավանականությամբ, օժտված է դիցաբանի գլխավոր աստծուն բնորոշ ռազմի, բերրիության և անդրշիրիմյան գործառույթներով:

Ստորև մենք առանձին կետերով կանդրադառնանք Արայի այդ բոլոր գործառույթներին:

1. Դիցարանի գլխավոր աստծո հատկություններ

ա) Ըստ Մովսես Խորենացու[12] առասպելի Արան օժտված է արտասովոր գեղեցկությամբ, հայրենասեր է, քաջ ռազմիկ, ընտանիքի հայր (ուներ 12-ամյա `որդի՝ Կարդոս (Արայան Արան) և սիրված ամուսին (նրա կինը Նվարդն է, որի կերպարը Դափնեցյանը համադրել է սիրո և պտղաբերության աստվածուհու հետ[13], իսկ անունը Հ. Աճառյանը բխեցնում է պարսկերեն nuward՝ նոր վարդ, կամ naward՝ հաճելի, սիրելի բառերից): Այսինքն նա օժտված է հայր աստծո հատկանիշներով, որի կինն է սիրո աստվածուհին: Ավելացնենք նաև, որ Կարդոսը (Արայան Արան) զոհվում է ռազմի դաշտում Շամիրամի հետ պատերազմելիս, (ինչը նրան օժտում է ռազմի հատկանիշներով), իսկ նրա որդին Սոսանվեր Անուշավանն էր, որին սիրված էր սոսի ծառը՝ (փշատերև և մշտադալար ծառերը սերտորեն առնչվում են բնության հովանավոր աստվածությունների պաշտամունքի հետ): Փաստորեն Արա Գեղեցիկը, Արայան Արան և Սոսանվեր Անուշավանը ստեղծում են եռֆունկցիոնալ միասնություն, որը շատ մոտենում է դյումեզիլյան հնդեվրոպական աստվածային եռյակների մոդելին[14]:

բ) Հայ հեթանոսական դիցաբանի գերագույն աստված Արամազդի (հանգում է հին իրանական Ահուրա Մազդա «տեր իմաստուն» ձևին) անվան Ահուրա բաղադրիչը հնարավոր է, որ ենթարկվելով հայերենի այն ժամանակաշրջանում գործող հնչյունական օրենքներին՝ փոփոխվել է և ինչ-որ առումով հարմարեցվել Արա աստծո անվանը և վերածվել Արամազդի[15]: Արամազդի մակդիրներն էին «Մեծն և արի Արամազդ», «արարիչ երկրի և երկնի», նա պարգևում էր լիություն և բերքատվություն: Արամազդի գլխավոր մեհյանը գտնվում էր Քարճր Հայքի Դարանաղի գավառի Անի ամրոցում, որտեղ գտնվում էին նաև Հայոց Արշակունի արքաների դամբարանները: Հետաքրքրական է, որ Մովսես Խորենացին գրում է. «Չկա ոչ մի Արամազդ, բայց միայն նրանց համար, որոնք կամենում են լսել, որ Արամազդ կա. և այսպես կոչված չորս Արամազդներից մեկն է միայն Ճաղատ Արամազդը»[16]: Համատեքստում նա բոլոր Ա-

րամազդներից առանձնացնում է Ճաղատ Արամազդին, այնպես, ինչպես առանձնացնում է բագում Տիգրաններից միայն Աժդահակին սպանող Տիգրանին: Հայտնի է, որ ճաղատությունը (նաև աչքի շլությունը, կաղ լինելը և այլն) բնորոշում են անդրաշխարհի տերերին: Վերոհիշյալ հանգամանքի հետ սա ևս ընդգծում է Արամազդի՝ անդրաշխարհի հետ ունեցած կապը:

գ) Արայի անվան համահնչունությունը և կերպարային առնչությունները ուրարտական ժամանակաշրջանից վկայված և Էրեբունիում տաճար ունեցող Իվարշա, Իարշա աստծո հետ, որի պաշտամունքը իրենց հետ բերել էին Հայասայի հարևան Ծուփք և Խաթթե երկրների վերաբնակիչները, նկատել է Ս.Հմայակյանը: Իվարշան համարվել է Խալդիին հավասարազոր աստվածություն. հեղինակը խոսում է նաև Արա-Իվարշա-(սլավ.) Յարիլո նույնացման մասին[17]: Ի.Դյակոնովը կարծում է, որ Խալդիի և Միթրայի պաշտամունքները միաձուլվել են, որում մասնակցել է մի միջնորդ աստվածություն[18]. այն ըստ Ս.Հմայակյանի կարող էր Իվարշան լինել[19]: Վերոհիշյալ կարծիքները համադրելով ստանում ենք հետևյալ պատկերը՝ Խալդի-Իվարշան-Յարիլո (սլավ.) -Արա-Միթրա: Այսինքն՝ Խալդին նույնանում է նաև Արայի հետ: Ի մի ըերելով ա), բ), գ) կետերում ղիտարկված փաստերը կարելի է ենթադրել, որ Արան աղեյաներ է դրսևորել գլխավոր աստվածությունների հետ:

2. Ռազմի աստծո գործառույթներ

ա) Ըստ առասպելի, Արան քաջաբար գոհվում է ռազմի դաշտում, ինչպես Պլատոնի «Հանրապետություն»-ում հիշատակված պամֆիլիացի Արմենիայի որդի Էրրը (Արայի և Էրրի նույնությունը առաջին անգամ նկատել է Մ.Էմինը):

բ) Արայի անունը Ա.Մատիկյանը համադրել է հունական դիցաբանության պատերազմի աստծու՝ Արեսի հետ: Այս առումով հետաքրքիր է, որ Բյութսնիայում հուլիս ամիսը կոչվում էր Արեյոս, այսինքն՝ Արես աստծուն նվիրված. իսկ հայկական տոմարի վեցերորդ ամսանունը՝ Աբաց. կապվում է Արայի անվան հետ[20]:

Արեսի անունը հնդեվրոպական ծագում ունի՝ *ēr – շարժվել, հուզել, բարձրացնել. ամենայն հավանականությամբ այս արմատն է ընկած նաև Արայի և Էրրի անվան հիմքում:

Արայի և նրան կերպարանվանական առումով համարժեք Էրրի՝ ռազմադաշտում գոհվելը, ինչպես նաև Արեսի հետ նրանց անունների ունեցած աղերսները հնարավոր են դարձնում ենթադրել, որ Արան ունեցել է նաև ռազմի աստծո գործառույթներ: Արեսին և Արային նմանեցնում են նաև նրանց պաշտամունքներում շան, շնակերպ էակների առկայությունը[21]:

3. Արա Գեղեցիկը, որպես բերրիության հովանավոր աստված և նրա անդրշիրիմյան գործառույթները:

Այս երկու գործառույթները փոխկապակցված են միմյանց. ասվածի լավագույն վկայությունը կարող է հանդիսանալ Հ.Մալտիրոսյանի նկարագրած չափերով մեծ դամբարանները՝ առանց մարդկային թաղումների, որոնցում հայտնաբերվել են ֆալլոսների արձաններ[22]: Այսինքն, թաղման ծիսակարգում հնագույն ժամանակներից ի վեր հանդես է եկել բերքատվության գաղափարը: Արա Գեղեցիկը որպես բերրիության հովանավոր և մեռնող-հարության առնող աստվածություն հանգամանալից կերպով ուսումնասիրել են Ա.Մատիկյանը[23] և Գ.Ղափանցյանը[24], ուստի մենք կկատարենք միայն որոշ դիտարկումներ:

Նման աստվածությունները կապված են բնության զարթոնքի և բերրիության հետ: Նրանք ստեղծվել են մարդկության պատմության վաղնջական ժամանակներում: Նրանց հեռացումից կամ մահվանից հետո բնությունը մեռնում է, ցամաքում էին ջրերը, մոլեգնում էին հիվանդություններ՝ մարդկանց և անասունների մեջ, մարդիկ և անասունները անպտուղ էին դառնում. և այլն: Սա շատ պատկերավոր է նկարագրվում Տելեպինուսի մասին խեթական առասպելում[25]:

Գ.Ղավյանցյանը Արայի անունը համադրել է *ara-s* – խեթական բուսականության աստվածության[26], Ա.Մատիկյանը՝ հին հնդկերեն *arya* '«օտարական, ընկեր» բառերի հետ[27]: Ավելացնենք նաև, որ Ժ.Դյումեզիլը մանրամասն վերլուծելով *ari* հիմքը և նրանից բխող *arya* ձևը առաջինը մեկնում է որպես «հյուր, օտարական», իսկ երկրորդը՝ «հյուրընկալողի» իմաստից նաև «տեր»[28]: Այս երկվությունը շատ հատկանշական է մեռնող-հարության առնող աստծու կերպարին՝ նա տեր է այս և հյուր անդրաշխարհում և՝ ընդհակառակը:

Ժամանակին Գ.Ղափանցյանը հորովելները կապել է Արայի անվան հետ՝ ենթադրելով, որ նրանք կազմված են Ara+wel-ից, որտեղ wel-ը կարող էր նշանակել «օգնի՛ր», «արի՛»[29]: Թ.Գամկրելիձեն և Վ.Իվանովը **uel* արմատի համար վերականգնում են հնդեվրոպական «մահվան դաշտեր» հասկացությունը, այսինքն, «երկնային անդրաշխարհիկ դաշտեր»[30]: Հ.Աճառյանը հորովելներ բառը բխեցնում է առավելին հասնելու գաղափարից՝ *հո՞* բացականչության հավելումով[31]: Հնարավոր չէ՞ արդյոք, որ *հորովելները* ծագած լինեն Արա + **uel* • Արայի դաշտեր՝ երկնային կամ երկբայիև դաշտեր հասկացությունից (հնարավոր է «հո» բացականչության հավելումով): Այս մոտեցման համար հիմք է հանդիսացել Ա.Պետրոսյանի կողմից Արա Գեղեցիկի անվան երկրորդ բաղադրիչի «գեղ» արմատի համար **uel* նախնական ձևի վերականգնումը[32]: Վերջինս, ինչպես տեսանք, համարվում է անդրշիրիմյան դաշտեր: Հողագոր-

առնչություններ են դրսևորում Արայի, իսկ ծագմամբ՝ Հայկական լեռնաշխարհի և նրան հարող փոքրասիական տարածքների հետ: Ստորև կքննարկենք նրանց սազմական և անդրաշխարհիկ հատկությունները՝ ըստ կերպարների:

Ռազմի կամ փոթորկի աստծու հատկանիշներ

ա) Առաջին շարքի աստվածությունները, օրինակ Ադոնիսը զոհվում է որսի ժամանակ, որում առկա են պատանուց տղամարդ՝ ռազմիկ դառնալու հնագույն ծեսի արձագանքները (հնիցիացիա): Ի տարբերություն նրա, Արան և Էրրը զոհվում են ռազմի դաշտում, այսինքն, նրանք արդեն ռազմիկներ էին:

Տելեպինուսը, որի կերպարը Գ.Ղափանցյանը համադրել է Արայի, իսկ վերջինիս՝ Յարիլոյի հետ[38]. ևս տարբերություններ է դրսևորում: Դա երևում է նրա անհետացման առասպելից, երբ աստծո բարկությունը համեմատվում է փոթորկի ծնդյունի հետ և Խանհախանանայի (իր մոր) ուղարկած մեղուների խայթոցից զարթնելով՝ նաև ավեր է սփռում երկրում: Այս տեսարաններում նա հիշեցնում է փոթորկի կամ ռազմի աստծո[39]:

Յարիլոն, որի կերպարը Գ.Ղափանցյանը վերլուծել ե համադրել է Ա-ուսյի հետ, նույնպես, ըստ բելոռուսական հավատալիքների, ունի ճերմակ ձիու վրա նստած հեծյալի նկարագիր, որի մի ձեռքում արյունոտված գլուխ է, իսկ մյուսում՝ ձեռքում հասկեր[40]:

Դիոնիսոսի մասին առասպելաշարքում պատմվում է, թե ինչպես խստորեն էր նա պատժում իր պաշտամունքը չընդունողներին. այս դրվագներում դրսևորվում է նրա ռազմատենչ էությունը[41]:

Ավելացնենք նաև, որ խեթական Pirua–ն, (որը նաև Խուվայի (Ծովքի) պանթեոնի գլխավոր աստվածն էր) վաղ շրջանի խեթական տեքստերում ներկայացել է որպես բերրիության աստված (նրանից լիություն են խնդրել), իսկ հետագայում նա ստացել է ձիու վրա նստած աստծո նկարագիր[42]:

բ) Անդրաշխարհիկ երևույթների և աստվածների հետ ունեցած առնչություններ

Տելեպինուս

Խեթական տեքստերից մեկում պահպանվել է Օվկիանոսի կողմից Արևի առևանգման մասին առասպելը[43]: Կայծակի և ամպրոպի աստվածը՝ Տելեպինուսի հայրը նրան է ուղարկում Արևին վերադարձնելու, և Տելեպինուսը ոչ միայն վերադարձնում է Արևը, այլև կնության է առնում Օվկիանոսի դուստրը: Օվկիանոսը և ջրային տարերքը այս և անդրաշխար-

հր բաժանող երևույթներ են (սա առկա է թե՛ հունական, թե՛ այլ դիցաբանություններում): Այսինքն Տելեպինուսը այս դեպքում որոշ առումներով կապ է հաստատում անդաշխարհի հետ: Նա եգիպտական անդրաշխարհային պատկերացումների հետ ևս շատ հետաքրքրական առնչություններ է դրսևորում: Թ.Գամկրելիձեն և Վ.Իվանովը նշում են, որ առասպելներից մեկում մեղրամոմով Տելեպինուսի աչքերի և ձեռքերի գմռումը իր զուգահեռներն ունի եգիպտական մումիաների աչքերը մեղրամոմով փակելու հետ[44]: Տելիպինուսի հետ է կապված նաև ḫaran – «արծիվ» թռչունը, որը անդրաշխարհին բնորոշ սուրբ կենդանիներից մեկն է:

Անդրադառնանք անդրաշխարհիկ աստվածությունների և երևույթների հետ Արայի ունեցած առնչություններին՝ բացատրելու համար հայասական պանթեոնում նրա ᵈU.GUR գաղափագրով հանդես գալու հանգամանքը:

Արա և Էրը

Նրանց անունը համահունչ է Ներգալի երկրորդ անվանը կամ կերպարին՝ աքքադական Էրրայինը (պատերազմի աստվածություն): Ներգալը անդրաշխարհ է մտնում Էրրա անունով, իսկ դրսից գալիս՝ Ներգալ անունով: Էրրայի մասին առասպելը հավանորեն վկայված է Ք.ա. XI դարից և կա կարծիք, որ այդ անունը փախառյալ է՝ հաշվի առնելով նմանատիպ խեթական աղբյուրներից հայտնի պատերազմի և ժանտախտի Յարրի աստվածությունը[45]: Յարրիի անունը քխում է հնդեվրոպական *jar -ից, որ առկա է նաև Յարիլոյի անվան մեջ[46] (հիշենք Խալդի-Իվարշա-Յարիլո-Արա նույնացումը): Այսինքն կարելի է ենթադրել, որ Արայի անունը փոխառնվել է Հայկական լեռնաշխարհից՝ սլավոնական Յարիլոյի դեպքում պահպանելով անունը և մեռնող-հարություն առնող աստծո գործառույթները, իսկ խեթ. Յարրիի և աքքադական Էրրայի դեպքում՝ անունը և անդրշիրիմյան գործառույթները[47]:

Պամֆիլիացի Էրրի դեպքում ի հայտ է գալիս դիակիզող կրակը: Կիզիչ արևը, տւսպր, ոչ բարի կրակը բնորոշում են Ներգալին: Կրակը որպես զայրույթը մեղմող և մաքրագործող, չաբը հեռացնող երևույթ հանդես է գալիս նաև Տիլեպինուսի առասպելում՝ նրա բարկությունը մեղմելու համար վառված կրակների տեսքով[48]:

Ուշագրավ է, որ ուրարտական դամբարաններում ճրագներ և ջահեր են վառվել[49]: Թե՛ հնդեվրոպական, թե՛ ուրարտական թաղման ծեսերում տարածված էին դիակիզումները, որոնք հավանաբար ծիսական կրակով մաքրագործման իմաստ են կրել:

Հայտնի է, որ Աստվածաշնչի հայերեն թագմանության մեջ Ներգալի փոխարեն հանդես է գալիս Անգեղը: Նրա կերպարը, ասես, Արայի ուղիղ հակադրությունը լինի, որը հուշում է նաև վերջինիս հետ նրա միասնութ-

Նրանց տեղական ծագման մյուս փաստարկներից մեկն էլ վերոհիշյալ շնակերպ լ.ակների և պտղաբերության կուռքերի կապն է: Բացի այդ, արալեզները, որպես շնակերպ էակներ վկայված են հայկական հնագույն առասպելաբանության մեջ, այնինչ նրանց մասին որևէ վկայություն չկա շումերա-աքքադական կամ խուրրիական առասպելներում: Ասվածին ավելացնենք նաև, որ Ա.Մովսիսյանը, հիմնվելով շումերա-աքքադական ազբյուրների վրա, Arallu երկիրը տեղադրում է Հայկական լեռնաշխարհում[58]:

Դիոնիսոս

Աստվածաշնչի հայերեն թարգմանության մեջ Դիոնիսոսը թարգմանված է Սպանդարամետ: Սպանդարամետը հայ հեթանոսական դիցարանում անդրաշխարհի տերն էր (նրա անունը ծագում է պահլավերեն Spandarmet «երկրի աստվածներ» ձևից, հանգում է ավեստերեն spenta armaiti «սուրբ իմաստություն» ձևին[59]: Անունների այս նույնացումը վկայում է, որ Սպանդարամետը հայերի մեջ նախապես ընկալվել է որպես պտղաբերության և գինեգործության աստվածություն[60]: Այս նույնացումը հիշեցնում է Ազա Գեղեցիկի՝ մի կողմից պտղաբերության և բուսականության հովանավոր լինելը, մյուս կողմից՝ անդրաշխարհի հետ նրա ունեցած առնչությունները: Դիոնիսոսը Զևսի և Կադմոսի աղջկա՝ Սեմելեի որդին էր: Կադմոս անունը նույնահունչ է Խորենացու տոհմածառի Հայկի թոռան՝ Կադմոս անվան հետ: Իսկ Գ.Ջահուկյանը նկատում է այդ անվան համահնչունությունը հայասական Qadmaša քաղաքի հետ[61]: Դիոնիսոսին տարբեր ուսումնասիրողներ վերագրում են թրակա-փռյուգակյան ծագում: Նա համեմատվում է Օգիրիսի, Միթրայի, իսկ Ա.Մատիկյանը նրան համեմատում է Խալդիի հետ՝ ելնելով նրանց երկուսի պաշտամունքներում խաղողի և գինու առկայության փաստից[62]: Հիշենք Ազա-Իվարշա-Յարիլու-Խալդի-Միթրա և եթե հաշվի առնենք Դիոնիսոս-Սլթրա, Դիոնիսա-Խալդի նույնացումը, ապա վերոհիշյալ շարքին կավելանա նաև Դիոնիսոսը:

Ինչպես տեսանք, այս շարքում ընդգրկված պտղաբերության և մեռնող-հարության առնող աստվածությունները (խեթ. Տելեպինուս, հայկ. Ազա և Էրդլ, սլավ. Յարիլո, հուն. Դիոնիսոս) իսկապես շեշտված ռազմական և անդրաշխարհիկ հատկություններ են դրսևորում և ուղղակի կամ անուղղակի կապերով փոխկապակցված են միմյանց: Եթե նրանք չեն սերում մեկ միասնական կերպարից, ապա նրանց համար կարելի է ենթադրել ընդհանուր բնակլիմայական և տարածաշրջանային ծագում, որը ամենայն հավանականությամբ Հայկական լեռնաշխարհն է և նրան հարող փոքրասիական տարածքները, ինչով էլ պայմանավորված է վերջիններիս կերպարային ընդհանրությունները: Հատկանշական է, որ ըստ

Կ.Քիտտելի Փոքր Ասիան և Արևելյան Եվրոպան պտղաբերության պաշտամունքի առաջացման ինքնուրույն օջախներ են կազմում՝ Շումերից մինչև մայրցամաքային Հունաստան ընկած ընդարձակ տարածաշրջանում[63]: Եվ իրավամբ Հայաստանում նման բերքատվության կուռքերի առաջացումը կրում է տեղական և ինքնատիպ բնույթ, քանզի նրանք առանձնանում են յուրատեսակ տարրերով[64]: Հայտնի է, որ պտղաբերության պաշտամունքը կապված է բնության երևույթների մեծ ու փոքր ցիկլերի հետ (օրինակ՝ գարուն-ձմեռ, ցեքեկ-գիշեր) և ինչպես տեսանք սերտորեն առնչվում է մահվան և վերածնության, հետադարձության գաղափարի հետ: Այս պատկերացումների յուրօրինակ բանաստեղծական արտահայտությունը կարելի է գտնել եգիպտական մահվան և վերածնության ընկալումներում. «նրա մարմինը թաղված է հողում, ինչպես հատիկը, իսկ նրա հոգին ճգտում է վեր, ինչպես բույսը»[65]: Հայկական լեռնաշխարհում և հարակից փոքրասիական տարածքներում, որտեղ ծագել են վերոհիշյալ աստվածությունների պաշտամունքները. ճմռանը հաղթող գարնանային ծիլը իր մեջ իրավամբ պայքարի տարրեր է պարունակում (ի տարբերություն միջագետքյան բնակլիմայական պայմաններում ձևավորված բնության հովանավոր աստվածությունների. որոնք ուզմատենչ չեն (հիշենք Դումուզիին. Թամմուզին ևն):

Եզրափակելով նշենք, որ Արայի պաշտամունքի բազմաշերտությունը խոսում է նրա ծագման վաղեմության մասին: Նրա կերպարի հանգամանալից վերլուծությունը ցույց տվեց, որ Արան օժտված է ռազմի, պտղաբերության, մեռնող-հաբություն առնող աստծո և շեշտված անդրշիրիմյան գործառույթներով և իրավամբ կարող էր հայասական պանթեոնում գրավել գլխավոր դերը և հանդես գալ ^{d}U.GUR գաղափարագրով: Բացի այդ, ուսումնասիրելով Հայկական լեռնաշխարհում տարբեր ժամանակաշրջաններում և տարբեր էթնոսների կողմից (նկատի ունենք ուրարտականը) ձևավորված պանթեոնները, մենք տեսնում ենք, որ նրանք ղրսնորում են մի յուրահատուկ նմանություն՝ գլխավոր աստվածությունների դեպքում. թե՛ Հայասայի, թե՛ Ծոփքի, թե՛ ավելի ուշ ձևավորված ուրարտական և հայ հեթանոսական պանթեոնների գլխավոր աստվածությունները օժտված են բերքատվության, ռազմի և անդրաշխարհիկ ու մեռնող-հարություն առնող աստծո հատկանիշներով (հիարկե որոշ դեպքերում այդ հատկանիշներից մեկը բացակայում է, սակայն ռազմի և պտղաբերության գործառույթները ընդհանուր են բոլորի համար), իսկ կայծակնային հատկանիշներ ունեն աստվածային գլխավոր զույգին հաջորդող աստվածները: Բերենք օրինակներ՝ հայասական պանթեոն՝ (գլխավոր աստվածությունը ^{d}U.GUR-Արա նույնացման դեպքում օժտված է վերոհիշյալ բոլոր հատկանիշներով, իսկ կայծակնային աստվածությունները՝ ^{d}U գաղափարագրով հանդես են գալիս չորրորդ և հինգերորդ տեղում): Ծոփքի պանթեոնի գլխավոր Pirua (որն ինչպես տեսանք, օժտված էր

^{d}U.GUR OF HAYASA AND ARA GEGHETSIK

HASMIK HMAYAKYAN

^{d}U.GUR is the supreme god of the pantheon of Hayasa. ^{d}U.GUR is the ideogram of the Akkadian Nergal – the lord of the netherworld. The author of the article attempts justifying and developing the opinion of Grigor Ghapantsian that the ideogram ^{d}U.GUR refers to the deity Ara Geghetsik (Ara the Beautiful). The detailed analysis of the character and etymology of Ara Geghetsik's name as well as his comparison with other gods and pantheon characters reveals that he is a multifaceted god in the pantheon and incorporates the features of the supreme god, god of war, fertility, dying and resurrecting deity as well as emphasized features of the netherworld. For this reason the author assigns the ideogram ^{d}U.GUR to Ara Geghetsik.

The article also shows the connection between Ara Geghetsik, *uruše*s and bronze statuettes excavated from the Armenian Plateau (holding in one hand the head of a dog and branches of life tree in another) which witnesses about the local origin of the deity itself and *uruše*s. Also, an effort was made to link and trace back *horovel*s –cultivating songs, to the name and function of Ara Geghetsik in the following form: Ara +*uel (netherworld celestial fields). The article compares the pagan deities ^{d}U.GUR of Hayasa, ^{d}Pirua of Sophene (Arm. Tsop'k'), ^{d}Ḫaldi of Urartu and relevant Armenian deities that had functions of war, fertility, netherworld as well as dying and reborn gods. (Ara and ^{d}Ḫaldi), but not bestowed with features of god of storm. These similarities if not testify that they were created by the same ethnic group, nevertheless attest interaction and peculiarities of the mythological perceptions and pantheons of

^{d}U.GUR is the supreme god of the pantheon of Hayasa. ^{d}U.GUR is the ideogram of the Akkadian Nergal – the lord of the netherworld. The author of the article attempts justifying and developing the opinion of Grigor Ghapantsian that the ideogram ^{d}U.GUR refers to the deity Ara Geghetsik (Ara the Beautiful). The detailed analysis of the character and etymology of Ara Geghetsik's name as well as his comparison with other gods and pantheon characters reveals that he is a multifaceted god in the pantheon and incorporates the features of the supreme god, god of war, fertility, dying and resurrecting deity as well as emphasized features of the netherworld. For this reason the author assigns the ideogram ^{d}U.GUR to Ara Geghetsik.

The article also shows the connection between Ara Geghetsik, *uruše*s and bronze statuettes excavated from the Armenian Plateau (holding in one hand the head of a dog and branches of life tree in another) which witnesses about the local origin of the deity itself and *uruše*s. Also, an effort was made to link and trace back *horovel*s –cultivating songs, to the name and function of Ara Geghetsik in the following form: Ara +*uel (netherworld celestial fields). The article compares the pagan deities ^{d}U.GUR of Hayasa, ^{d}Pirua of Sophene (Arm. Tsop'k'), ^{d}Ḫaldi of Urartu and relevant Armenian deities that had functions of war, fertility, netherworld as well as dying and reborn gods. (Ara and ^{d}Ḫaldi), but not bestowed with features of god of storm. These similarities if not testify that they were created by the same ethnic group, nevertheless attest interaction and peculiarities of the mythological perceptions and pantheons of

these people living in the same region. Historically the pantheons of Hayaša and Sophene (Tsop'k') are the earliest among them.

ՃԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. O.Carruba. Die Hajasa-Verträge Hattis. Documentum Asiae Minoris. Wiesbaden. 1998, S. 59-75.
2. E.Forrer, Hajasa-Azzi,. Caucasica 9 (1931). S. 6.
3. Г.Капанцян, Малоазийские (Азианические) боги у армян. Хайасские боги, Историко-лингвистические работы, т. 1, Ереван, 1956, с. 305-308.
4. Գ.Ջահուկյան, Հայոց լեզվի պատմություն, Նախագրային ժամանակաշրջան, Երևան, 1987, էջ 327-330:
5. Ս.Պետրոսյան, Դասերը և եռադասության դրսևորումները հին ու վաղ միջնադարյան Հայաստանում, Ատենախոսություն, Եր., 2001, էջ 91-127:
6. Г.Вардумян, Дохристианские культы армян, Армянская этнография и фольклор, 1991, N 18, 1991; с. 65-70.
7. Ա.Պետրոսյան, Հայոց ագգածագման հարցեր, ՊԲՀ, 2003 (2), էջ. 190-224:
8. E.Forrer, Hajasa-Azzi....
9. É.Laroche, Recueil d'onomastique hittite. Paris, 1952.
10. Г.Капанцян, Малоазийские (Азианические) боги у армян. Хайасские боги..., с. 306.
11. V.Haas, Geschichte der Hethitischen Religion. Leiden-New York-Köln, 1994. հայասական ^{d}U.GUR-ի մասին տե՛ս էջ 367:
12. Մ.Խորենացի, Հայոց Պատմություն, բարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները Ակ. Ստ.Մալխասյանցի, Երևան, 1968, գիրք առաջին, գլուխ ժ-ե:
13. Գ.Ղափանցյան, Արա Գեղեցիկի սլաշտամունքը, Երևան, 1946, էջ 107:
14. Ж.Дюмезиль, Верховные боги индоевропейцев, Москва, 1986, с. 158-172:
15. Նման այլ օրինակներ տե՛ս Ա.Մնացականյան, Մաշտոց անվան ստուգաբանությունը, Լրաբեր հասարակական գիտությունների, 1979, N8, էջ 86-92: Э.Грантовский, Ранняя история иранских племен Передней Азии, Москва, 1970, с. 302-305.
16. Մովսես Խորենացի, Հայոց Պատմություն... գիրք առաջին, գլուխ ԼԱ:
17. Ս.Հմայակյան, Իվարշա՝ հայկական աստվածություն, «Աստղային սուրհանդակ», 1993, N1:
18. И.Дьяконов, К вопросу о символе Халди, Древний Восток, N4, 1983, с. 193.
19. Ս.Հմայակյան, Վանի թագավորության պետական կրոնը, Երևան, 1990, էջ 63, Ըստ Ն.Հարությունյանի Ի (ու)արշա, Իուբշան Վագա երկրի տեղաբնիկ աստվածուրյուն էր, Н.В.Арутюнян, Новые урартские надписи, Ереван, 1966, с. 94-95.
20. Ա.Մատիկյան, Արա Գեղեցիկ, Վիեննա, 1930, էջ 313-314:
21. Ա.Մատիկյան, Արա Գեղեցիկ..., էջ 316-317:
22. А.Мартиросян, Идолы из Кармир-Блура, ИФЖ, 1958, N2, с. 130:
23. Ա.Մատիկյան, Արա Գեղեցիկ, Վիեննա, 1930:

24. Գ.Ղափանցյան, Արա Գեղեցիկի պաշտամունքը, Երևան, 1946:
25. В.Иванов, Луна, упавшая с неба. Исчезновение и возвращение Телепинуса, Москва, 1977, с. 55.
26. Г.Капанцян, Малоазийские (Азианические) боги..., с. 77.
27. Ա.Մատիկյան, Արա Գեղեցիկ..., էջ 331-332:
28. Ж.Дюмезиль, Верховные боги..., с. 174-175, ari մանրամասն վերլուծությունը տե՛ս նույն գրքի «ARI и АРИИ» գլխում:
29. Г.Капанцян, Малоазийские (Азианические боги)..., с. 275:
30. Т.Гамкрелидзе, В.Иванов, Индоевропейский язык и индоевропейцы, Реконструкция и историко-типологический анализ праязыка и протокультуры, т. 2, Тбилиси, 1984, с. 824:
31. Հ.Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 1, Երևան, 1971, էջ. 358:
32. А.Петросян, Отражение индоевропейского корня *uel в армянской мифологии, Вестник общественных наук АН Арм. ССР, Ереван, 1987, с. 61-62:
33. Г.Джаукян, Очерки по истории дописьменного периода армянского языка, Ереван, 1967, с. 297.
34. Ա.Աղսբեկյան, Հնդեվրոպական *u բաղաձայնը հայերենում, ՊԲՀ, 1981 (3), էջ. 95-105:
35. Ս.Հարությունյան, Հայ առասպելաբանություն, Համազգային Վահե Սեթեան Տպարան, էջ 365-375:
36. F.W. König. Handbuch der chaldischen Inschriften, Archiv für Orientforschung, Beiheft N8. Graz, 1955-1967. S. 168. Ս.Հմայակյան, Վանի թագավորության պետական...., էջ 36:
37. Տելեպինուսի պաշտամունքային կենտրոններն էին Փոքր Ասիայի կենտրոնական և հյուսիսային շրջաններում տեղադրված Տավինիա, Տուրմիտա, Լիխցինա, Խակմիսա, Խանխաննա քաղաքները: Ք.ա XIV դ. սկսած նրա պաշտամունքը տարածվում է նաև Հարավային Փոքր Ասիայում: G.F del Monte. J.Tischler. Խեթական տեղանունների բառարանում այն տեղադրվում է վերին երկրների շարքում. Die Orts und Gewässernamen der hethitischen Texte.Wiesbaden. 1978. S. 77.
38. Г.Капанцян, Об одном хеттском мифе в связи с журавлем и божеством весны, Историко-лингвистические работы, т. 2, Ереван, 1975, с. 175-176; (Տելեպինուս-Արա համադրումը), իսկ Արա-Յարիլո համադրումը տե՛ս Г.Капанцян, Армянский Ара и славянский Яр (Ярило), նույն տեղում, էջ 243-252:
39. В.Иванов, Луна, упавшая с неба, с 57.
40. Г.Капанцян, Армянский Ара и славянский Яр (Ярило), с. 245.
41. А.Лосев, Дионис, Мифы народов мира (МНМ), т. 1, Москва, 1980, с. 380.
42. Т.Гамкрелидзе, В.Иванов, Индоевропейский язык..., т. 2, с. 794-795.
43. V.Haas. Geschichte der Hethitischen Religion. էջ 444; В.Иванов, Луна, упавшая с неба, с 54.
44. Հայտնի է, որ մեղրը հնդեվրոպական երևույթ է և ի հայտ է գալիս Եգիպտոսում Ք.ա. III հազարամյակից սկսած, տե՛ս Т.Гамкрелидзе, В.Иванов, Индоевропейский язык..., т. 2, с. 608-609.

45. В.Афанасьева, Эрра, Ирра, МНМ, т. 2, Москва, 1962, с. 669.
46. В.Иванов, Хеттская мифология, МНМ, т. 2, Москва, 1962, с. 591.
47. Էրրայի անվան փոխառյալության մասին հայկական լեռնաշխարհից տե՛ս նաև Ա.Պետրոսյան, «Արա Գեղեցիկ և Սուրբ Սարգիս», «Հայոց սրբերը և սրբավայրերը», Երևան, 2001, էջ. 168- 169:
48. В.Иванов, Луна, упавшая с неба, с 57-58.
49. Ճրագներ վառելու մասին տե՛ս Б.Б.Пиотровский, Ванское царство, Москва, 1959, с. 209, իսկ ջահեր վառելու մասին բանավոր հայտնել է Ս.Հմայակյանը:
50. А.Мартиросян, Идолы из Кармир-Блура, ИФЖ, 1958 (2), с. 130-131.
51. Մովսես Խորենացի, Հայոց Պատմություն, գիրք առաջին, գլուխ ԺԵ:
52. Եզնիկ Կողբացի, Եղծ աղանդոց. Թիֆլիս, 1914, գիրք Ա, գլուխ ԻԴ, էջ. 69-70:
53. Գ.Ղափանցյան, Արա Գեղեցիկի պաշտամունքը, էջ 10:
54. Գ.Ղափանցյան, Արա Գեղեցիկի պաշտամունքը, էջ 30-31: Սակայն նրա բերած օրինակները՝ «խլեզ», «բզեզ» Գ.Ջահուկյանը համարում է կովկասյան փոխառություններ, տե՛ս Գ.Ջահուկյան, Հայոց լեզվի պատմություն, էջ 610:
55. Ս.Հարությունյան, Հայ առասպելաբանություն..., էջ 384:
56. И.Дьяконов, К вопросу о символе Халди..., с. 194.
57. Հ.Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 2, Երևան, 1973, էջ. 278:
58. Ա.Սուխիսյան, Սրբազան լեռնաշխարհը, Երևան, 2000, էջ 17-19:
59. Ж.Дюмезиль, Верховные боги..., "По названию она связана с первой функцией (ср. Вед. Армамати), но присвоенный ей материальный элемент — и присвоенный основательно, поскольку, например, армянское заимствование *Spandaramet* означает именно "землю", - переводит ее в третью функцию. Такая поливалентность заставляет вспомнить богиню, которая, как мы видели, в Индии иногда просоединена к списку функциональных мужских богов и которая в Младшей Авесте сохранилась под тройным именем "Влажная, Сильная, Непорочная" *(Arədvi, Surô, Anâhitâ)*, п. 35-36.
60. Ս.Հարությունյան, Հին հայոց հավատալիքները, կրոնը, պաշտամունքը և դիցարանը, Երևան, 2001, էջ 47:
61. Գ.Ջահուկյան, Մովսես Խորենացու «Հայոց Պատմության» առաջին գրքի անձանունների լեզվական աղբյուրները, ՊԲՀ, 1981 (3), էջ 56:
62. Ա.Մատիկյան, Արա Գեղեցիկ..., էջ 322:
63. K.Bittel, Prehistorische Forschungen in Kleinasien, Istanbul, 1936, S. 40-41:
64. А.Мартиросян, Армения в эпоху бронзы и раннего железа, Ереван, 1964, с. 179.
65. Мифология древнего мира, Р. Антес, Мифология в древнем Египте, Москва, 1977, с. 76.
66. Ս.Պետրոսյան, Ծ.Պետրոսյան, Հնագույն Ծոփքի դիցական եռյակի շուրջ, Գիտական աշխատություններ, IV 2001, ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, Գյումրի, 2001, էջ 79:

АРТУР МАТЕВОСЯН

О СИНТЕТИЧЕСКОЙ ПРИРОДЕ ХРИСТИАНСКОЙ МУДРОСТИ

Во всех традиционных религиях мудрости приписывалось сверхчеловеческое, божественное происхождение. В библейской Книге притчей Соломоновых Премудрость Божия говорит о себе: "Я родилась прежде, нежели водружены были горы, прежде холмов, Когда еще Он не сотворил ни земли, ни полей, ни начальных пылинок вселенной". (Притч. 8,25-26) Постижение этой мудрости в полной мере доступно только узкому кругу посвященных адептов, ведающих тайны духовного мира, тогда как профаны, к которым относилось подавляющее большинство, должны были довольствоваться экзотерической, общедоступной религией. Учение Христа не составляет исключения из этого правила. В Евангелии имеются недвусмысленные указания на то, что Христос проводил отчетливую грань между Своими учениками, посвященными в тайны духовного мира, и остальным народом. "И приступивши ученики сказали Ему: для чего притчами говоришь им? Он сказал им в ответ: для того, что вам дано знать тайны Царствия Небесного, а им не дано". (Мф.13,11) Отсюда следует, что и в изначальном христианстве имелось четкое различие между тайной эзотерической доктриной, доступной для немногих адептов, и экзотерическим, предназначенным для всех религиозным учением.[1] Ап. Павел в своем первом послании к Коринфянам следующим образом характеризует сущность проповедуемой им христианской мудрости: "Мудрость же мы проповедуем между совершенными, но мудрость не века сего и не властей века сего преходящих, Но проповедуем премудрость Божию, тайную, сокровенную, которую предназначил Бог прежде веков к славе нашей". (1Кор.2, 6-7) Таким образом, апостол различает три известных ему вида мудрости: 1-мудрость века сего, 2-мудрость властей века сего, 3-премудрость Божию. Начнем с мудрости века сего. Не приходиться сомневаться в том, что под ней апостол подразумевал господствовавшую в его эпоху в греко-римской ойкумене античную филосо-

фию, отношение к которой было у него однозначно отрицательным. "Смотрите, братия, чтобы кто не увлек вас философиею и пустым обольщением, по преданию человеческому, а не по Христу". (Кол.2,8) Может показаться, что ап. Павел становится здесь на позицию чистого фидеизма, отождествляющего религиозный опыт с нерассуждающей верой, и отвергающей сам принцип гнозиса т.е. духовного ведения, который в древности ассоциировался с греческой философией.[2] Но подобное впечатление ошибочно, поскольку оно не основано на конкретном анализе того, что представляла собою современная апостолу античная философия. Между тем 1в.н.э. был тем далеко не самым продуктивным периодом ее истории, который в истории философии обычно именуется периодом эклектизма. К этому времени скептики, такие как Пиррон, Аркесилай и Карнеад, уже подвергли уничтожающей критике господствовавшие у перипатетиков, стоиков и эпикурейцев представления, согласно которым чувственное восприятие и рассудочное мышление являются надежными средствами для познания сущего, тем самым подорвав гносеологический фундамент, на котором покоилось величественное здание античной теоретической философии. Актуальное значение продолжала сохранять лишь практическая философия, необходимая для определения норм правильного поведения человека в обществе. В этих условиях постепенно был утрачен интерес ко всякого рода метафизическим тонкостям, отличавшим одну философскую школу от другой, и был сделан акцент на том, что эти школы объединяло, а именно-на признаваемых всеми ими универсальных этических принципах. Эта тенденция еще более усилилась после завоевания эллинистического мира Римом. Римляне, будучи в отличие от склонных к метафизике греков весьма прагматичным народом, равнодушным ко всякого рода абстрактным умозрениям, ожидали от своих греческих наставников, главным образом, практических рекомендаций нравственного характера, необходимых для успешной общественной деятельности. И греческие мыслители, разумеется, не могли не учитывать запросов своих могущественных покровителей. Появляется и собственно римская философия, в которой характерные для всей эллинистической мысли скептические, эклектические и антиметафизические тенденции были доведены до своего логического конца. Наиболее значительные римские мыслители эпохи поздней Республики-Лукреций, Цицерон и Варрон были не столько оригинальными мыслителями, сколько эпигонами и популяризаторами греческой эллинистической философии. Лучшим выразителем духа римской философии был современник ап. Павла Луций Анней Сенека, воззрения которого были наиболее показательны для интеллектуальной атмосферы той эпохи. В истории философии Сенеку при-

So, Congregation took up missionary work among the infidels. Thus, the Popes were eager to realize their political purposes, for instance, uniting forees against "the common enemy"-Turkey.

The shah also offered his friendship and goodwill to all Christian princes against the turks. On 30. 09. 1592 Pope Clement VIII wrote a brief dealing the vary leage against sultan.

The departure of the first Carmelites from Rome was in 1604. The latters arrived in Persia at the end of 1607.

It is clear, that the the departure of the Carmelites was dictated with political purposes of the Catholic Rome. But the shah was very clever to understand the profits of his country.

ՕԱՆՈՒԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Sեe Encyclopaedia Britannica, v. IV, Chicago, London, Toronto, 1961, p.888, The Cambridge Medieval history, v. VI, Cambridge, 1936, p.757,
دکتر مر یم میرلحمدی،دین و دولت در عصر صفوی،تهران،۱۳۶۹،ص. ۳۰۰ - ۱۰۳.
2. Sեe Charles L. Souvay, The Catholic Encyclopedia, v.V, http://www.newadvent.org/cathen/05381b.htm
3. Sեe The Carmelite Order, The Catholic Encyclopedia, v.III, http://www.newadvent.org/cathen/03354a. htm, P. I. Moriones, Theresian Carmel, Pages of history, Rome, 1978, p. 2, http://www.ocd.pen.net/histo-1.htm

4. Տե՛ս Семенова Л. А., Орден кармелитов как орудие проникновения европейцев в Иран, М., 1962, с.94, Տես նաև՝ ۱۰۴ و دولت در عصر صفوی،ص. دکتر مر یم میرلحمدی،چین
5. A Chronicle of the Carmelites in Persia and the Papal Mission of the XVII-XVIII centuries, London, 1939, v.I, p.8 (այսուհետև՝ "A Chronicle of the Carmelites"), Семенова Л. А., նշվ. աշխ., էջ 94:
6. Տե՛ս Зонова Т. В., Дипломатическая служба Италии, Дипломатия иностранных государств, М. 2004, с.103.
7. Лозинский С. Г., История Папства, М.,1986, с. 40., Тер-Аветисян С. В., Город Джуга, материалы по истории торговых сношений джульфинских купцов XV-XVII вв., Тбилиси, 1937, с.2.
8. Տե՛ս Բայբուրդյան Վ. Ա., Նոր Ջուղայի հայկական գաղութը և կաթոլիկ միսիոներների կազմակերպությունները, ՀԽՍՀ ԳԱ «Տեղեկագիր». 1964, N9, էջ 39, Տե՛ս նաև՝ Բայբուրդյան Ա. Վ., XVII դ. Արևելյան Հայաստանում կաթոլիկ միսիոներների գործունեության պատմությունից, ՊԲՀ, Ե.,1989, 1(124), էջ 148. Байбуртян В. А., Армянская колония Новой Джульфы в XVII веке, Е., 1969, с.121.
9. Տե՛ս Шейнман М. М., Ватикан и католицизм на службе международной реакции, М., 1954, с.14.
10. Տե՛ս Шейнман М. М., Краткие очерки истории папства, М., 1952, с. 29-30, Шейнман М.М., Папство, М. 1961, с. 39-40, 47, Байбуртян В. А., Армянская колония Новой Джульфы в XVII веке, с.121-122.
11. Архангельский С., Отношения Англии с протестантской и католической Европой(1654-1658), "Вопросы Истории", N1, М., 1946, с. 114.
12. Տե՛ս "A Chronicle of the Carmelites", p. 10, Adam Olearius, The travels of Olearius in seventeenth-century Persia. http://depts.washington.edu/uwch/silkroad/texts/olearius/travels.html
13. Կլեմենտ VIII Պապը (Ippolito Aldobrandini) ծնվել է 1536թ. մարտին, Ֆաենցում(Ֆլորենցիա), պապական իշխանության անցել 1592թ. հունվարի 30-ին: Սահացել է 1605թ. մարտի 5-ին, Հռոմում:
14. Լեո, Երկերի ժողովածու, հ. III. գիրք I. Ե., 1969, էջ 45, 171, Сайид Али Муджани, Иран, Тегеран, 2002, с.78, ۳۰۸ - ۳۰۷ ،جلد سوم،ص. ۱۳۷۳،تهران،ایران سالنه عبدالعظیم رضایی،تاریخ ده هزار
15. Տե՛ս "A Chronicle of the Carmelites", p.66.
16. Հակոբյան Վ. Ա., Սևան ժամանակագրություններ XIII- XVIII դդ., հ. II, Ե., 1956, էջ 428:
17. "A Chronicle of the Carmelites", p.69.
18. Տե՛ս Բայբուրդյան Վ. Ա., Թուրք-իրանական հարաբերությունները (1900-1914թթ.),Ե.,1974, էջ 5:
19. Черняк Е. Б., Вековые конфликты, М. 1988, с.18, Տե՛ս նաև՝ Байбуртян В. А., Армянская колония Новой Джульфы в XVII веке, с. 9.
20. "A Chronicle of the Carmelites", p.84-85.
21. Հովհաննիսյան Ա.,Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, գիրք II, Ե.,1959,էջ 112:

22. Զուլալյան Մ. Կ. Հայ ժողովրդի XIII-XVIII դդ. պատմության հարցերը ըստ եվրոպացի հեղինակների. գիրք Ա, Ե., 1990, էջ 294-295:
23. Քաղվածքը՝ նույն տեղում, էջ 135:
24. Տե՛ս "A Chronicle of the Carmelites", p.66, 107.
25. Նույն տեղում, էջ 98:
26. Տե՛ս Հովհաննիսյան Ա., նշվ. աշխ., էջ 78:
27. Մեջբերումն ըստ՝ Օրմանեան Մ., Ազգապատում, Սասն Բ, Կ.Պոլիս, 1914, էջ 2302, 2643:
28. Տե՛ս Missionary rcsearches in Armenia, London,1834. p. 355,
Տե՛ս նաև՝ دکتر مر یم میرلحمدی،دین و دولت در عصر صفوی:ص. ۱۰۳–۱۰۵
29. Տե՛ս Դանեղյան Լ.Գ., Շահ-Աբբաս Ա-ի կրոնական հանդուրժողական քաղաքականության հարցի շուրջը, «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», Իրան, հ. IV, Ե.,1969, էջ 76:
30. "A Chronicle of the Carmclites", p.123.
31. Նույն տեղում, էջ 124:
32. Նույն տեղում, էջ 131-132:
33. Տե՛ս նույն տեղը, էջ 135, 143:
34. Տե՛ս "A Chronicle of the Carmelites", p. 152-153.
نصرالله ف...ی:۱۴۷۰-ز ن شاه عباس اول،جلد ۱–۱،تهران،۱۳۷۱،ص. ۵۶۹-۵۷۰-۵۷۳-۵۸۹
Տե՛ս նաև՝ Դավրիժեցի Ա., Պատմություն, Ե., 1988, էջ 61-62:
35. "A Chronicle of the Carmelites", p.153.
36. Նույն տեղում, էջ 164 -165:
37. Մեջբերումը՝ նույն տեղում, էջ 176:
38. Տե՛ս նույն տեղը, էջ 217:
39. Նույն տեղում, էջ 241, 245:
40. Տե՛ս նույն տեղը, էջ 258, 260, 262, 264:
41. Տե՛ս նույն տեղը, էջ 277:
42. Քաղվածքն ըստ՝ Գարեգին Բ. Կաթողիկոս, Հայաստանեաց եկեղեցին իր «ծառայական կերպ»-ին մէջ, Անթիլիաս, 1994, էջ 115, Տե՛ս նաև՝ Աստվածաշունչ, Ավետարան ըստ Մարկոսի, 16:15-74:

ԱՐՏԱԿ ՄՈՎՍԻՍՅԱՆ

ԹՎԵՐԻ ՆՇՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ՆԱԽԱՄԱՇՏՈՑՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱՀԱՍԱԿԱՐԳԵՐՈՒՄ ԵՎ ՄԱՇՏՈՑՅԱՆ ԱՅԲՈՒԲԵՆԻ ԹՎԱՀԱՄԱԿԱՐԳԸ

Ով իմաստության սիրողներ ե ինձ մոտ գիտություն սովորել ցանկացողներ, նպատակ ունեմ շարադրել ձեզ համար ***նախնիների քաՆքերով ստեղծված համարողական արվեստը***, որպես բարի ուսուցչի կենդանի ծայն:

ԱՆԱՆԻԱ ՇԻՐԱԿԱՑԻ

Հայկական լեռնաշխարհում գրի ծագմանն ու զարգացման պատմության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ մաշտոցյան և նախամաշտոցյան դպրությունների միջև առկա են բազմաթիվ ընդհանրություններ և առնչություններ: Դրանց թվին են պատկանում նաև թվերի նշման սկզբունքները:

Թվի գաղափարն առաջ է եկել դեռևս նախապատմական ժամանակներում, զարգացել և ամեն դարաշրջանում համապատասխանել է տվյալ ժամանակաշրջանի պահանջներին: Թվի նախնական գաղափարի ստեղծումն, անշուշտ, կապված է եղել տարբեր առարկաների պարզ հաշվարկի հետ, ինչը գրանցելու համար անհրաժեշտ էին պայմանական նշաններ՝ թվանշաններ: Ընդ որում, հին և միջին դարերում տարբեր ժողովուրդներ ունեցել են թվանշման բազմաթիվ սեփական համակարգեր:

Հին ու միջին դարերում կիրառված թվանշման համակարգերը կարելի է բաժանել երկու մեծ խմբի՝ հատուկ թվերի նշման համար նախատեսված պայմանական նշաններով (թվանշաններով) և գրանշաններով (տառերով) արտահայտվող: Վերջիններս գիտության մեջ առավել հայտնի են «այբբենական համակարգեր» անունով[1]: Դրանցից հնագույնն այսօր համարվում է հոնիականը, որն, ըստ ընդունված տեսակետի, առաջացել է Ք.ա. 5-րդ դարում[2]: Որպես այբբենական համակարգեր

օգտագործվել են հին արաբական, փյունիկյան, ասորական, եբրայական և այլ այբուբենները:

Մեսրոպ Մաշտոցի ստեղծած այբուբենը ևս, ինչպես հայտնի է, ծառայել է որպես թվանշանային համակարգ: Երեսունվեց տառերը բաժանելով չորս սյունակների՝ Մեսրոպ Մաշտոցն առաջին սյունակի ինը տառերին տվեց միավորների, երկրորդին՝ տասնավորների, երրորդին՝ հարյուրավորների, չորրորդին՝ հազարավորների արժեք[3]:

Ա - 1	Ժ - 10	Ճ - 100	Ռ - 1000
Բ - 2	Ի - 20	Մ - 200	Ս - 2000
Գ - 3	Լ - 30	Յ - 300	Վ - 3000
Դ - 4	Խ - 40	Ն - 400	Տ - 4000
Ե - 5	Ծ - 50	Շ - 500	Ր - 5000
Զ - 6	Կ - 60	Ո - 600	Ց - 6000
Է - 7	Հ - 70	Չ - 700	Ւ - 7000
Ը - 8	Ձ - 80	Պ - 800	Փ - 8000
Թ - 9	Ղ - 90	Ջ - 900	Ք - 9000

Այսքանով հնարավոր էր գրել մինչև 9999 (ներառյալ): Տասը հազարը գրաբարում կոչվում է «բյուր»: «Բյուրի» նշանը (դեպի վեր ուղղված անկյունիկ) դրվելով այբուբենի տառերի վրա՝ ստացվում էր դրանց բազմապատիկը 10.000-ով (Ք-ն «բյուրի» նշանով հավասար էր 90 միլիոնի): «Բյուրին» հաջորդող մյուս անվանակոչված միավորը «գունդն» է («բյուր» × «բյուր»), ապա «ավագ գունդը» («բյուր» × «գունդ»), «արքա գունդը» («բյուր» × «ավագ գունդ»), «կայսր գունդը» («բյուր» × «արքա գունդ», որը ներկայումս գործածվող թվերով կստացվի մեկից հետո քսան զրո)[4]: Նկատենք, որ տառերից ավելի բարձր («բյուրից» մինչև «կայսր գունդ») կատարվող հաշվարկի համակարգի հիմքում կրկին տասնորդական (10.000 բազմապատիկով ստեղծված) համակարգն է: Ակնհայտ է՝ ողջ համակարգի հիմքում ընկած է հաշվարկի տասնորդական սկզբունքը:

Նշենք, որ մաշտոցյան տառերով մեզ հասած թվերի նշումներում ընդունվածից բացի հանդիպում է մի սկզբունք ևս, որն ավելի անկատար է, քան վերը նշվածը: Օրինակ՝ 3900 թիվը վտխանակ արտահայտելու երկու տառով (.ՎՋ. – 3000 + 900), նշվում է չորս տառով՝ .ԳՌԹՃ. (3 × 1000 + 9 × 100)[5]: Ավելի կատարյալ համակարգն ունենալու պարագայում անկատարն օգտագործելն առաջին հայացքից տարօրինակ է թվում. դրան կանդրադառնանք քիչ ավելի ուշ:

Մեսրոպ Մաշտոցի ապրած ժամանակաշրջանում Հայաստանում կիրառվել են հունական, ասորական և պահլավական այբուբենները: Դրանցից և ոչ մեկը չուներ թվանշանների արտահայտման այնպիսի

կատարելություն, ինչպիսին Մաշտոցի այբուբենինն է: Փյունիկյան, սոսրական և 22 տառանոց այլ այբուբեններով նշվել է մինչև 499 թիվը ներառյալ (9 միավոր, 9 տասնավոր և 4 հարյուրավոր): Նույն սկզբունքով գործող հունական այբուբենը, դասական շրջանում ունենալով 27 նշան, բաժանվել է երեք 9-ական սյունակի՝ արտահայտելով մինչև 999-ը ներառյալ[6]: Մեսրոպ Մաշտոցի ապրած ժամանակաշրջանում հունական այբուբենի թիվը կրճատվել և հասել էր 24-ի, սակայն հավելյալ նշաններ միջոցով ապահովված էր նույն ծավալի հաշվարկը: Հին արաբական այբուբենի հիմքում ընկած էր նույն թվաբանական սկզբունքը, ընդ որում, այն բաղկացած էր 28 տառից (9 + 9 + 9 + 1). 28-րդ տառով նշվում էր 1000-ը[7]:



Կարելի էր միանգամից ենթադրել, որ Մաշտոցը վերցրել է իր ժամանակ Հայաստանում գործածվող հունական և ասորական այբուբենների թվանշման համակարգի սկզբունքը և, ելնելով այբուբենի տառերի քանակից, ստեղծել է մինչև «բյուր» հասնող քառաստիճան համակարգ, եթե նախաքրիստոնեական Հայաստանում չունենայինք հազարամյակների ճանապարհ անցած թվաբանական համակարգ, որի հիմքում ընկած է հաշվարկի տասնորդական սկզբունքը: Ընդ որում, այն այնքան խորն արմատներ ուներ, որ անգամ հաշվարկի վաթսունական համակարգ ունեցող միջագետքյան սեպագրի բարեփոխմամբ ստեղծված Վանի թագավորության սեպագրում ևս կիրառվում է տասնորդական համակարգը (տե՛ս ստորև):

Հին Արևելքի թվանշման համակարգերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ մեր նախնիները դեռևս նախնադարում ստեղծել են յուրօրինակ թվանշանային համակարգ, որի սկզբունքները ժառանգաբար հասել են մինչև միջնադար:

Թվ|ր	Բիայնական	Եգիպտական	Մեսպոտ|մ	Խե|թա-լուվիական
1	𒁹, 𒁺	𓏺	𒁹	𔕫
3	𒐈, 𒐉, 𒐊, 𒐋, 𒐌, 𒐍	𓏻	𒐈	𔕫𔕫
5	𒐎, 𒐏, 𒐐, 𒐑, 𒐒, 𒐓, 𒐔	𓏼	𒐎	𔕫𔕫
10	𒌋, 𒐕 (?)	𓎆	𒐕	𔕭
100	𒐖, 𒐗 (?)	𓍢	𒐖	𔖵 (?)

Ի տարբերություն Եգիպտոսի, Փոքր Ասիայի, սեպագիրը գործածող Միջագետքի և առաջավորասիական երկրների, Հայկական լեռնաշխարհում թվերի նշումները կատարել են ոչ թե գծիկներով, սեպերով կամ այլ սիմվոլիկ նշաններով, այլ կետ-շրջանակներով (տե՛ս աղ. 1): Թվերի կետային նշումը, լինելով հայաստանյան երևույթ, գալիս է դեռևս ժայռապատկերներից, արտահայտվում է մինչբրոնզեդարյան (օրինակ, Թեղուտից գտնված Ք.ա. 5-4-րդ հազարամյակներով թվագրվող խեցեղենի բեկորները, տե՛ս նկ. 1), բրոնզի և վաղ երկաթի դարաշրջանների իրերի վրա[8]: Այն իր կատարելությանն է հասնում Վանի թագավորության մեհենագրության մեջ, միաժամանակ դառնալով վերջինիս տեղական ծագման ապացույցներից մեկը[9]:

Վանի թագավորության հիերոգլիֆակիր առարկաների մեջ մեծ թիվ են կազմում տարողության նշումներով խեցեղեն ամանները, որոնց վրա բազմաթիվ տարբերակներով հանդիպում են մեկից մինչև ինը թվերի նշումները՝ կետերով (աղ. 1): Տարողության նշումներում կետերի կողքին հանդիպում են որոշ առարկաների գծապատկերներ (տիկ, սավար, գավաթ, թաս և այլն), որոնք չափի միավորներ ցույց տվող հիերոգլիֆներ են: Կարասների վրա առարկաների պատկեր-նշաններից բացի հանդիպում են ևս չորս հիերոգլիֆներ, որոնցից երկուսը, ամենայն հավանականությամբ, համապատասխանաբար, ցույց են տվել նաև 10 և 100 թվերը[10] (տե՛ս նկ. 2 և աղ. 1):

Հատկանշական է, որ հաշվարկի տասնորդական համակարգ են ունեցել նախասմաշտոցյան Հայաստանում կիրառված օտար ծագում ունեցող գրահամակարգերի մեծ մասը: Հայկական լեռնաշխարհի արևմուտքում՝ Եփրատի հովտում, Ք.ա. 15-8-րդ դարերում կիրառվել է խեթա-լու-

վիակաև մեհենագրությունը (հիերոգլիֆիկաև), որում 1-9 թվերը նշվում էին ուղղահայաց գծիկներով, իսկ 10-ը, 100-ը և 1000-ը՝ հատուկ նշաններով[11]: Այսինքն՝ այստեղ ևս գործ ունենք հաշվարկի տասնորդական համակարգի հետ:

Ասուրա-բաբելական սեպագրությունը կիրառել է հաշվարկի վաթսունական համակարգը[12], որը Հայաստանում լայն գործածություն չի ունեցել:

Քիայնական սեպագրության մեջ թվերը նշվել են երկու կերպ՝ հատուկ սեպագիր-թվանշաններով և վանկանշաններով ղրանց անունները գրելով: Առավել տարածված է առաջին տարբերակը: Սեպագրով թվեր նշելու սկզբունքը ներկայացված է աղ. 2-ում: Ամենափոքր նիշը նախատեսված էր կեսի (0,5), իսկ ամենամեծը 1000-ի համար: Համակարգը հնարավորություն էր տալիս գրելու անսահմանորեն մեծ թվեր. օրինակ՝ երկու «1000» նշանակող սեպանշանները իրար կողքի դնելով՝ ստացվում է մեկ միլիոն ($1000 \times 1000 = 1000000$)[13] ...

0.5	10	100
1	11	200
2	12	300
3	20	1000
4	30	2000
5	50	10000
6	60	14000
7	70	22 000
8	80	1000000
9	90	...

Աղ. 2

Հետաքրքիր է, որ անգամ հաշվարկի վաթսունական համակարգ ունեցող միջագետքյան սեպագրի բարեփոխմամբ ստեղծված Վանի թագավորության սեպագրում ևս կիրառվում է տասնորդական համակարգը, ինչի հետքերը պահպանվել են «60»-ից մինչև «100» թվերի գրության մեջ[14]: Իսկ դա նշանակում է, որ Վանի թագավորությունից շատ առաջ հաշվարկի տասնորդական համակարգը խոր արմատներ ուներ Հայաստանում:

Հունական այբուբենը Հայաստանում լայնորեն օգտագործվել է նաև թվանշման նպատակով: Մասնավորապես, տառերի թվային արժեքով գործածվելը հաճախ է հանդիպում Արտաշեսյանների դրամների վրա. տառերով նշվել է ժամանակի հաշվարկը սելևկյան[15] և փյունիկյան[16] տո-



Նկ. 2

Վերոնշյալով հաշտվում էինք մենք, բայց ոչ ոքի չէր հաջողվում բացատրել, թե ինչու էին հին հայերը այդ թվերը գրում հենց այդպես, այլ ոչ թե ինչ-որ այլ կերպ։ Ամեն ինչ փոխվեց, երբ Մեծն Մեշտոցն ստեղծեց հայոց գրերը։ Նա ոչ միայն ստեղծեց հայոց գրերը, այլև հայերին սովորեցրեց գրել ու կարդալ։ Ինչպես հայտնի է, Մեծն Մեշտոցը ստեղծել է 36 տառ, որոնցից 7-ը ձայնավորներ են, 29-ը՝ բաղաձայներ։ Ավելի ուշ ավելացվեցին ևս երկու տառ՝ Ֆ և Օ։ Ինչպես տեսնում ենք, հայերեն այբուբենը կազմված է 38 տառից։ Ինչո՞ւ հենց 38։ Ինչո՞ւ ոչ 37 կամ 39։ Ինչո՞ւ ոչ 40 կամ 42։ Ինչո՞ւ հենց 38։ Ինչո՞ւ ոչ 36 կամ 37։ Ինչո՞ւ հենց 38։ Ինչո՞ւ ոչ 39 կամ 40։ Ինչո՞ւ հենց 38։ Ինչո՞ւ ոչ 41 կամ 42։ Ինչո՞ւ հենց 38։ Ինչո՞ւ ոչ 43 կամ 44։ Ինչո՞ւ հենց 38։ Ինչո՞ւ ոչ 45 կամ 46։ Ինչո՞ւ հենց 38։ Ինչո՞ւ ոչ 47 կամ 48։ Ինչո՞ւ հենց 38։ Ինչո՞ւ ոչ

Քրիստոնեության պետական կրոն հռչակումով Հայաստանում արգելվեց մեհենագրությունը, բայց չէր կարող վերացվել թվաքանությունը (հաշվահամակարգը), որն ընկած էր կենսական բոլոր պահանջների կատարման հիմքում: Քրիստոնեական եկեղեցին չէր կարող այն վերացնել առավել ևս այն պատճառով, որ Հայաստանում կիրառված թվահաշվարկման համակարգը շատ ավելի կատարյալ էր, քան ներմուծված գրահամակարգերից շատերի հաշվարկման սկզբունքները:

Քննելով մաշտոցյան այբուբենի թվահամակարգի առավելությունները՝ հին և միջնադարյան Հայաստանի մաթեմատիկայի պատմության լավագույն մասնագետներից Գ. Ք. Պետրոսյանը գրում է. «Հավանական պետք է համարել, որ Հայաստանում նախամեսրոպյան ժամանակաշրջանում գոյություն է ունեցել հայերեն լեզվով գրականություն... Մեր կարծիքով, անկասկած պետք է համարել նաև այն, որ Հայաստանում նախամեսրոպյան ժամանակաշրջանում գոյություն է ունեցել թվարկության մի որոշ սիստեմ, հավանական է՝ դա եղել է այբբենական սիստեմ: Սակայն հարցը վերջնականապես ճշտելու համար պակասում են պատմական փաստերը»[21]: Ցավոք, այսօր ևս այս հարցում հավանական եզրահանգում անելուց շատ հեռու չենք կարող գնալ[22]: Դժվար է այսօր պատասխանելը՝ Մեսրոպ Մաշտոցը վերցրել է հռոմեական այբբենական սկզբունքը և կատարելագործել, թե՞ զարգացրել է նախաքրիստոնեական ժամանակներից եկող տեղական թվանշման ավանդույթները:

Այսպիսով՝ տեսնում ենք, որ V դարում Հայաստանում շարունակվում են նախաքրիստոնեական ժամանակաշրջանից եկող թվաբանական ավանդույթները: Ընդ որում, առկա են թվանշման երկու սկզբունքներ: Դրանցից մեկը գալիս է մինչայբբենական ժամանակներից և Հայաստանում անցել է հազարամյակների ճանապարհ: Երկրորդը նման է այսօր հնագույնը համարվող հռոմեական այբբենական թվահամակարգին. հնարավոր է, որ մաշտոցյան այբուբենի թվահաշվարկման սկզբունքը վերցված լինի վերջինից, սակայն չի բացառվում, որ այն լինի տեղական զարգացման արդյունք:

ARTAK MOVSISYAN

THE PRINCIPLES OF MARKING THE NUMERALS IN TIIE PRE-MASHTOTSIAN WRITING SYSTEMS OF ARMENIA AND TIIE NUMERATION SYSTEM OF MESROP MASHTOTS'S ALPHABET

The study of the alphabetic numeral system created by Mesrop Mashtots and its comparison with the principles of numeration of the pre-Mashtotsian writing systems of Armenia shows that they are connected genetically.

In the V century AD the Armenians used two principles of numeration. One of them may be originated from the Greek system, and the second one – from the pre-Mashtotsian native writing systems of Armenia.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ.

1. Այբբենական համակարգերի մասին կա բավականին մեծածավալ գրականություն, տե՛ս, օրինակ, Выгодский М. Я., Арифметика и алгебра в древнем мире, М., 1967, էջ 245-259; Майстеров Л.Е., Роль алфавитных систем нумерации, "Историко-математические исследования", выпуск XIX, М., 1974, էջ 39-49 (նաև հղված գրականությունը):
2. Նագմաճ հարցի քննարկումների մասին տե՛ս Выгодский М. Я., նշվ. աշխ., էջ 250-259:
3. Տարբերակելու համար, որ տվյալ դեպքում տառն ունի թվային արժեք, վերևում դրվում էր հորիզոնական գծիկ կամ սկզբում ու վերջում դրվում էր կետ կամ երկու կետ (նման այսօրվա վերջակետին): Կեսը ուներ հատուկ նշան՝ նման c տառին:
4. Աբրահամյան Ա.Գ., Հայոց գիր և գրչություն, Ե., 1973, էջ 89-96 (հղված աղբյուրներով հանդերձ):
5. Պետրոսյան Գ.Բ., Մեսրոպ Մաշտոցը և թվարկության հայկական համակարգը, Միջնադարյան Հայաստանի մաթեմատիկայի պատմությունից (Հոդվածների ժողովածու), Ե., 1986, էջ 17 (նույն հոդվածը տե՛ս Մեսրոպ Մաշտոց (Հոդվածների ժողովածու), Երևան, 1963, էջ 261-282):
6. Դասական շրջանում հունական տառերի և թվերի համապատասխանության աղյուսակը տե՛ս, օրինակ, Jensen H., Die Schrift in Vergangenheit und Gegenwart, Berlin, 1958, էջ 424, նկ. 443; Friedrich J., Geschichte der Schrift, Heidelberg, 1966, էջ 275, նկ. 182; Фридрих И., История письма, М., 1979, էջ 333, նկ. 182 և այլն:
7. Выгодский М. Я., նշվ. աշխ., էջ 254-256: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հոնիական համակարգում տառերի դիրքի և թվային արժեքների միջև կա անհամապատասխանություն, որը չկան հին արաբականում (չշփոթել «արաբական» անվամբ հայտնի այսօր լայնորեն կիրառվող թվանշանների հետ, որոնք հնդկական ծագում ունեն), հեղինակը ենթադրում է, որ հոնիականը կարող է ծագել հին արաբականից:
8. Մենք առայժմ ստույգ պատկերացումներ չունենք Վանի թագավորությունից առաջ Հայաստանում գործածված թվանշանների համակարգ(եր)ի մասին: Սակայն տեսնելով թվերի կետանշման հայասատանյան առանձնահատկությունը, որը գալիս է նախագրային ժամանակներից (ժայռապատկերներ, գլանազան հնագիտական իրերի վրա կատարված նշումներ) և ժառանգել է Վանի թագավորության մեհենագրությունը, կարելի է ենթադրել, որ վերջինս ժառանգություն է ստացել ոչ միայն թվանշանների արտաքին տեսքը, այլև հաշվահամակարգի սկզբունքները:
9. Տե՛ս Մովսիսյան Ա. Ե., Հայկական մեհենագրություն, Ե., 2003, էջ 23-24, 77-78:

10. Ի դեպ, թեք խաչի նմանվող նշանը. որի համար մենք ենթադրաբար առաջարկում ենք «100» նշանակությունը, տեսքով գրեթե նույնանում է խեթա-լուվիական «100» թվանշանին (Laroche E., Les Hieroglyphes Hittite. I. Paris. 1960, էջ 213, N 399; Дунаевская И.М., Язык хеттских иероглифов, М., 1969, էջ 105; II Geroglifico Anatolico. Sviluppi della ricerca a venti anni dalla sua "ridececiírazione" (a cura di M. Marazzi). Napoli. 1998. էջ 64, 115):
11. Թվանշանները խեթա-լուվիական մեհենագրության նշանացանկերում (Laroche E., նշվ. աշխ.; II Geroglifico Anatolico..., էջ 15-124; հայերեն թարգմանված՝ Մովսիսյան Ա. Ե., Նախամաշտոցյան ..., էջ 282-321), սովորաբար, գետեղվում են 380-400 համարներում:
12. Այս բավականին բարդ համակարգի բացատրությունը կարելի է գտնել բաբելոնյան թվաքանությանը նվիրված բազմաթիվ աշխատանքներում. տե՛ս, օրինակ, Вайман А.А., Шумеро-вавилонская математика, М., 1961; Выгодский М. Я., նշվ. աշխ., էջ 76-233, միայն համակարգի մասին՝ էջ 89-95; Нейгебауер О., Точные науки в древности, М., 1968, էջ 44-82 (հղված գրականությամբ հանդերձ):
13. Քիայնակաս թվանշանները և դրանց տառադարձումը գիտական գրականության մեջ տե՛ս Մովսիսյան Ա.Ե., Նախամաշտոցյան Հայաստանի..., էջ 379-380:
14. Վանի թագավորության սեպագրի թվահամակարգը տասնորդական է (տե՛ս Պետրոսյան Գ.Բ., Թվաքանությունը Ուրարտուում ըստ ուրարտական սեպագիր արձանագրությունների, ՏՀԳ, 1945, թիվ 3-4, էջ 55-72; Պետրոսյան Գ.Բ., Մաթեմատիկան Հայաստանում հին և միջին դարերում, Ե., 1959, էջ 10-29; Исраелян М.А., Уточнения к чтению урартских надписей. Об урартской системе счисления, ДВ, 2, Е., 1976, էջ, 115-117; Варданян Р.О., Асатрян Д.Г., Некоторые замечания по метрологии Урарту, ՊԲՀ, 1980, N 2, էջ 166-178): Համակարգում առկա է մեկ բացառություն: Դա «60»-ից միևյն «100» թվերի գրությունն է: Տասնավորների շարքը չավարտված՝ «60» թիվն ունենում է նոր նշան, և «70»-ը ներկայացվում է «60 + 10», «80»-ը՝ «60 + 20», «90»-ը՝ «60 + 30» բանաձևով (փոխանակ «7 × 10», «8 × 10», «9 × 10»-ի), ինչը միջագետքյան միջավայրում տարածում ունեցած հաշվարկի 60-ական համակարգից պահպանված մնացուկ է: «100»-ը ունենում է նոր նշան, որից հետո ևս շարունակվում է տասնորդական սկզբունքը (տե՛ս աղ. 2):
15. Մուշեղյան Խ.Ա., Դրամական շրջանառությունը Հայաստանում (մ.թ.ա. V դ. – մ.թ. XIV դ.), Ե., 1983, էջ 50-51; Nercessian Y.T., Armenian Numismatic Studies, Los Angeles, 2000, էջ 24, 47; Nercessian Y.T., Silver Coins of Tigranes II of Armenia, "Armenian Numismatic Journal", 2000, vol. XXVI, Nos. 3 & 4, էջ 100 և այլն:
16. Մուշեղյան Խ.Ա., Դրամական ..., էջ 105-124; Nercessian Y.T., Silver ..., էջ 101-102; Nercessian Y.T., Armenian ..., էջ 25, 48-49 (և հղված գրականությունը):
17. Bedoukian P.Z., Coinage of the Artaxiads of Armenia, London, 1978, էջ 26; Մուշեղյան Խ.Ա., Դրամական ..., էջ 56:

18. Օրինակ՝ Տրդատ արքայի Գառնիից գտնված հունագիր արձանագրության մեջ նշվում է, որ ամրոցը կառուցվել է նրա թագավորության 11-րդ տարում. «11» թվանշանը արտահայտված է .ΑΙ. տառերով (արձանագրության մասին եղած հրապարակումների ցանկը տե՛ս Մովսիսյան Ա. Ե., Նախամաշտոցյան ..., էջ 138-139):
19. Տե՛ս Մովսիսյան Ա.Ե., Նախամաշտոցյան ..., էջ 88-110, հատկապես՝ 108-110:
20. Ասորական այբուբենը՝ իր թվահամակարգով, տե՛ս Լոուկոտկա Չ., Գրի զարգացումը, Ե., 1955, էջ 155-157; Jensen H., Նշվ աշխ., էջ 295-301; Brockelmann C., Syrische Grammatik, Leipzig, 1962, էջ 4-12; Дирингер Д., Алфавит, М., 1963, էջ 336-346; Մովսիսյան Ա. Ե., Նախամաշտոցյան ..., էջ 390-391:
21. Պետրոսյան Գ. Ռ., Մաթեմատիկան ..., էջ 37-38:
22. Նախամաշտոցյան գրի ու դպրության մասին մատենագրական տեղեկություններում և քննարկումներում, ելնելով Մովսես Խորենացու հաղորդումից (գիրք Գ, գլ. ԾԳ-), որ տեսիլքի ժամանակ Մեսրոպ Մաշտոցին երևաց յոթ ձայնավորների գրվելը, բազմիցս հայտնվել է այն կարծիքը, թե նախամաշտոցյան այբուբենը (պահպանված ասորի եպիսկոպոս Դանիելի մոտ) ունեցել է 29 տառ (Դանիելի մոտ պահպանված գրահամակարգի նշանների թվի մասին առավել մանրամասն տե՛ս Աճառյան Հր., Հայոց գրերը, Ե., 1984, էջ 441-460, 484-493): Մինչ օրս որևէ նյութական վկայություն չի հայտնաբերվել նախամաշտոցյան 29 տառանոց այբուբենի մասին (մեհենագրությունը ավելի քան 300 նշանից բաղկացած բառավանկային համակարգ էր): Սակայն եթե տեսականորեն ընդունենք, որ մեհենագրության զարգացման ու պարզեցման ճանապարհով կարող էր ստեղծվել 29 տառանոց այբուբեն, կարելի է նաև ենթադրել, որ այն կարող էր ունենալ մինչև «բյուր» հասնող (9 + 9 + 9 +1 + 1) թվահամակարգ, որի 27 տառերով գրվեր մինչև 999-ը ներառյալ, 28-րդը ունենար 1000-ի, 29-րդը՝ 10000-ի արժեք, այսինքն՝ մաշտոցյան այբբենական թվահամակարգի հիմքերը առկա լինեին նրանում:

ԱՐՏԱԿ ՇԱՔԱՐՅԱՆ

ԴԵՎՇԻՐՄԵ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՍԿԶԲՆԱՎՈՐՄԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՋ

Դեվշիրմեն օրինականացված պարտադիր հարկ էր, որով պարբերականորեն 15-17-րդ դարերում Օսմանյան կայսրության քրիստոնյա հպատակներից տղաներ էին հավաքում, որոնք բռնի կերպով մահմեդականացվում էին և շարունակական ազդեցության պայմաններում ամբողջությամբ տարանջատվում էին իրենց ազգային միջավայրից՝ վերջնականորեն դառնալով մահմեդական և ծառայեցվելով օսմանյան իշխանության կարիքներին:

Այս երևույթը ցայժմ հայ գիտնականների կողմից չի արժանացել մանրամասն ուսումնասիրության. առավել հայտնի է միայն ակադեմիկոս Մ. Զուլալյանի հոդվածը պատմա-բանասիրական հանդեսում[1], որը կարելի է համարել սույն հարցի ուսումնասիրության առաջին ու հիմնարար քայլը հայ ժամանակակից օսմանագիտության մեջ: Հայ հեղինակների մոտ այս հարկատեսակը ավելի հաճախ հանդիպում է մանկահափսք, մանկաժողով եզրույթների ներքո[2]: Որոշ արտասահմանյան գիտնականներ, դեվշիրմե համակարգը նկարագրելիս ու նրա զարգացման մասին խոսելիս, հիշատակում են միայն բալկանյան ժողովուրդներին ու չեն նշում, որ դեվշիրմեն կիրառվել է նաև հայերի հանդեպ[3]: Դա թերևս հետևանք է այն բանի, որ նրանց հայտնի չեն հայոց մեջ կատարված այդ հարկումների վերաբերյալ փաստերը, ինչը խոսում է այն մասին, որ հայ հիշատակարանները, որոնք միջնադարյան Արևելքի ուսումնասիրության հարուստ սկզբնաղբյուր են, պատշաճ կերպով ներկայացված չեն գիտական աշխարհի քննությանն ու ուսումնասիրությանը:

Ինչևէ, սույն հոդվածի շրջանակներում մեր առջև խնդիր չենք դրել անդրադառնալ հայոց մեջ դեվշիրմեի անցկացման հարցին: Ստորև փորձ ենք արել միայն ներկայացնել դեվշիրմե համակարգի սկզբնավորման պատմությունը:

Ժամանակակից պատմագիտության մեջ փնտրում են տարբեր բացատրություններ դեվշիրմե համակարգի առաջ գալը բացատրելու համար: Որոշ պատմաբաններ կարծում են, որ այս հարկատեսակը ծագել է

օսմանյան հետևակը բազմամարդ դարձնելու անհրաժեշտությունից, որ զգալիորեն պակասել էր Բայազեդ I-ի որդիների երկապառակության պատճառով: Այլոք դրսև ի հայտ գալը պայմանավորում են օսմանահպատակ քրիստոնյա ժողովուրդներին մահմեդականացնելու օսմանյան պետության նկրտումներով[4]:

Օսմանյան որոշ պատմագիրներ փորձել են դեվշիրմեի սկզբնավորումը ներկայացնել որպես սուլթանի հանճարեղ հորինվածք՝. ինչպես օրինակ Սաադեդդինը՝ կամ «Եղիչերիական կորպուսի օրենքների ծագման պատմության» ձեռագրի անանուն հեղինակը[7]:Իսկ գերմանացի հետազոտող Բ.Պապոյիան դեվշիրմե համակարգի սկզբնավորումը առաջ է բերում վենջիք համակարգից ու վերագրում Օրհան I-ի ժամանակներին[8]: Այս մոտեցումը իրավացիորեն քննադատել է Ս.Վրյոնիսը իր գրախոսականում[9]:

Վենջիք համակարգը Օսմանյան պետությունում գործում էր մանկահավաքից առաջ: Հարկվում էին պատերազմի ժամանակ գերի վերցրած գոյահիրամանատարները և գինվորները. գանձվում էր ռազմագերու արժեքի 1/5-ը[10]: Վենջիքը կիրառվում էր նսև գերի ընկած քրիստոնյա ազգաբնակչության նկատմամբ. գերյալ քրիստոնյաները պարտավոր էին թուրքերին հանձնել կամ իրենց յուրաքանչյուր հինգ հոգուց մեկին՝ թուրքական բանակի շարքերը լրացնելու նպատակով, կամ համապատասխան փրկագին[11]: Այն սկիզբ է առնում Ղուրանից ու շարիաթի հարկային համակարգում մահմեդականներից գանձվող ամենակարևոր հարկերից մեկն էր. «Եվ իմացեք, եթե դուք վերցրել եք ավար, ապա Ալլահինն է հինգերորդ մասը... Այն, ինչ նախատեսված է Ալլահի ու իր մարգարեի համար, ուղղվում է. հասարակական կարիքների բավարարմանը, որոնք ստիմանել է մարգարեն իր կյանքի ընթացքում ու որոնք սահմանում է իմամը նրա մահվանից հետո[12]»:Այսպիսով, սուլթաններն օգտագործում էին այդ իրավունքը ու պահանջում ավարի մեկ հինգերորդ մասը[13]:

Համաձայն օսմանյան պատմագիր Աշըքփաշազադեի՝ վենջիքը Օսմանյան կայսրությունում գործածության մեջ է դրվել Մուրադ I-ի ժամանակ: Նա հիշատակում է մի փաստ, երբ Մուրադի ակնառու զորահրամանատարներից Էվրենոզ բեյին հրաման էր տրվել ասպատակել «անհավատների» երկիրն ու կենդանի ավարի մեկ հինգերորդ մասը հանձնել Մուրադին: Ինչպես հաղորդում է Աշըքփաշազադեն, ռազմագերիներն այնքան շատ էին, որ Չանդարլը Խալիլն առաջարկեց հանձնել վերջիններիս անատոլական թուրքերին, որպեսզի նրանց ուսուցանվի թուրքերեն լեզուն: Գերիները մահմեդականացվում էին և աշխատեցվում, իսկ հետո ուղարկվում Մուրադի մոտ[14]: Այսպես էլ կազմվում է, ըստ Աշըքփաշազադեի, եղիչերիական զորաբանակը:

Փեճջիքով սուլթանին հասած գերիները ոչ միայն համալրում էին ենիչերիական զորաբանակը, այլև դառնում էին սուլթանի անձնական ստրուկները, նրա թիկնազորի անդամները և այլն:

Փեճջիքը, սակայն, չէր բավարարում օսմանցիների մարդկային ռեսուրսների պահանջը[15]: Պատճառն անընդհատ ընդլայնվող զավթումների քաղաքականությունն էր, որը ռազմական ուժի անընդհատ լսճ էր պահանջում: Այդ քաղաքականության մեջ կարճ դադար տեղի ունեցավ միայն 1402 թ. Անկարայի ճակատամարտից հետո[16]: Տասնամյա երկպառակտչական պատերազմներից հետո Սեհմեդ 1-ի օրոք (1413-1421թթ.) շարունակվեցին օսմանյան նվաճումները, սակայն արդեն ներքին այլ պայմաններում: Վաղ ավատատիրական հարաբերությունները վտվռհությունններ էին կրել օսմանյան հասարակությունում. հրաժեշտ էր տրվել զարգացման թե՛ ցեղային, թե՛ սելջուկյան մոդելներից:

Նոր պայմաններում, չնայած օսմանյան անվիճելի հաջողություններին, հնարավոր չէր անսահմանափակ գերել գրավյալ տարածքների ազգաբնակչությանը: Նվաճումը սկսվում էր կիսաքոչվորների ասպատակություններով, որոնց գլխավոր նպատակը կողոպուտն էր ու գերեվարությունը, և վերջ ի վերջո վերափոխվում նոր տարածքների համար պատերազմի: Օսմանյան ագրեսիան, որը տարվում էր «արդար կրոնի տարածման» նշանաբանով, նոր հողեր գրավելու նպատակ էր հետապնդում, որոնք այնուհետև բաժանվում էին որպես պայմանական կամ մշտական տիրույթներ՝ ձևավորելով ավատատիրական նոր դասակարգ: Նոր նվաճված շրջանում ընտրյալները ստանում էին վիթխարի հողային տիրույթներ՝ խասեր՝ կամ մյուլքեր, իսկ սիպահիները, որոնք հիմնական ռազմական ուժն էին հանդիսանում, մասնակցում էին ռազմական գործողություններին համաձայն այն պայմանների, որոնցով նրանց էին տրամադրվել իրենց հողակտորները՝ թիմարները կամ զեւմեթները[17]: Սա բերեց նրան, որ այլևս անհնարին դարձավ զանգվածաբար ստրակցնել գրավյալ տարածքի ժողովրդին այնպես, ինչպես դա անհրաժեշտ էր օսմանյան բանակին իր զավթողագործությունը շարունակելու համար: Դա կնշանակեր ավատատիրական տիրույթները զրկել աշխատավոր ձեռքից, առանց որի դրանք այլևս գոյություն չէին ունենա: Հողերի ամայացումը հակասում էր նաև կենտրոնական իշխանության շահերին: Այդ ժամանակաշրջանում հիմնվում էր վարչական ապարատը, ձևավորվում սուլթանի արքունիքը, որն արդեն մեծապես տարբերվում էր հին ժամանակների բեյլիքի բարբարոսական ճամբարից: Այդքան ծախսերի համար չէր կարող բավարար լինել գերիների վաճառքից եկող ոչ մշտական, անկայուն եկամուտը: Ինչպես և բոլոր պետություն կազմող հասարակություններում, այստեղ ևս պետք էր ապահովել կայուն, մշտական եկամուտ հարկերի միջոցով, որոնք հավաքվելու էին հպատակ ժողովուրդներից: Այսպես, հակառակ ռազմական հաջողութ-

յունների ու տարածքային ընդարձակմանը՝ ռազմագերիների ներհոսքը զգալիորեն պակասեց, ինչի հետևանքով աղքատացավ ռոճիկ ստացող օսմանյան հետևակի համալրումը:

Հրկրորդ գործոնը, որը նույնպես ունի մանրամասն քացատրության կարիք, օսմանյան պետությունում կրոնա-էթնիկական իրավիճակն էր: Այն իր սահմաններում ներառում էր մահմեդականների և քրիստոնյաների, ընդ որում վերջիններիի համամասնությունն ու զանգվածը նորանոր նվաճումների հետևանքով անընդհատ աճում էր, ինչը միջին դարերի համար լուրջ խնդիր էր: Օսմանցիների նախորդները, անկախ այն բանից, թե իրենց պետական կազմավորումը տեղի է ունեցել ըստ եվրոպական մոդելի, ինչպես օրինակ Բյուզանդիան և Բուլղարիան էր, կամ ասիականի՝ ինչպես Իրանը և Սելջուկյան սուլթանատը, համախմբում էին իրենց տարակազմ քնակչությունը համածայն մեկ կրոնի սկզբունքի: Օսմանյան կայսրությունը չէր կարող կիրառել նույն սկզբունքը: Ի հայտ զալով Փոքր Ասիայում՝ այն զարգացրել էր բռնատիրության մի տեսակ, որի պետական կրոնը մահմեդականությունն էր: Սակայն դեպի Բալկաններ տարածվելով՝ այն ներառեց նաև քրիստոնյա ժողովուրդներ, որոնք քանակական առումով գերազանցում էին մահմեդականներին: Եվ նոր նվաճված տարածքներում իշխանությունը պահպանելու համար օսմանյան պետությունը ջանում էր արագ կերպով ավելացնել մահմեդական տարրը: Սակայն դեռ առաջին քայլերը ցույց տվեցին, որ մահմեդականացման դասական միջոցները, որոնք կիրառվում էին այն ժամանակվա մահմեդական հասարակություններում, այստեղ՝ Բալկաններում, այդքան էլ արդյունավետ չեն: Դրա պատճառը մահմեդականության դեմ ներքին դիմադրությունն էր, որը հավանաբար բխում է բալկանյան ժողովուրդների պետականաստեղծ երկար պատմությունից և գյուղատնտեսական հարաբերությունների զարգացված լինելուց[18]: Այնտեղ քրիստոնեությունը հնուց ի վեր հաստատված էր որպես գաղափարախոսություն, որի հետ համապատասխան ստեղծվել էր կենցաղային, իյավական, բարոյական ու ավանդական նորմերի միջավայր: Մահմեդականությունը, որն ի հայտ է եկել քոչվորական կենցաղի արմատներ ունեցող տնտեսություններով հասարակություններում, չէր կարող դյուրությամբ ներմուծվել այստեղ: Փոքր Ասիայից եվրոպական տիրույթներ և կամ այդտեղից Փոքր Ասիա բնակչության տեղափոխումները արագորեն ցույց տվեցին իրենց անարդյունավետությունը[19]: Մահմեդական վերաբնակիչ խմբերը դժվար էին համակերպվում նոր պայմաններին, համածայն որոնց պետք է ընդմիշտ անցնեին նստակյաց կյանքի: Վերաբնակիչների նշանակալի մի մաս, ինչպես օրինակ յուրյուքները, շարունակեցին իրենց քոչվորական կյանքը և 16-րդ դարից հետո[20]: Իսկ բալկանյան ազգաբնակչության բռնագաղթը Փոքր Ասիա չէր կարող լինել անսահմանափակ, քանի որ բեքքատուռ շրջանները կզրկվեին աշխա-

Նվ ամեն անգամ, ամեն նվաճման հետ մեկտեղ կրկնվում էր փենջիքից դեվշիրմե անցման գործընթացը: Այսինքն, սկզբում նվաճված տարածքի բնակիչները համարվում էին ռազմագերի, և նրանցից հավաքում էին փենջիք: Ապա այդ տարածքների ամրագրումից հետո, բնակիչները դառնում էին Օսմանյան կայսրության հպատակներ, ու նրանց հանդեպ արդեն կիրառվում էր դեվշիրմե համակարգը:

Որպես այս մեխանիզմի կիրառման օրինակ կարելի է մատնանշել նաև Հայաստանի դեպքը: Այսպես, Անանուն Սեբաստացու ժամանակագրության մեջ կարդում ենք, թե. «...Ի թվին ՋԿԸ (1519թ.) բարկութիւնն աստուծոյ սաստկացավ և սուլդան Սելիմն տղայ ժողուեց յ քրիստոնէից[25]»: Սելիմ սուլթանին որպես մանկահավաք սահմանող հիշատակում է նաե 17 դարի հեղինակ Վարդան Բաղիշեցին («...ե նստաւ ինքն թագաւոր սուլթան Սէլիմ ամս տասներեք, որ սահմանեաց գտղայքն ժողովել[26]»):

Եթե ընդունենք, որ «մանկահավաք», «մանկաժողով» եզրերը օգտագործում ենք ոչ թե որպես զուտ տղաների հավաքելու երևույթը նկարագրելու, այլ որպես «դեվշիրմե», «արյան հարկ», որը հպատակ քրիստոնյա ազգաբնակչությունից պարբերաբար հարկման ինստիտուտ է, ապա մենք որպես դեվշիրմեի սկիզբ ընդունում ենք 1531 թվականը համաձայն Անանուն Սեբաստացու 16 դարի ժամանակագրության, թե «..Ի թվին ՋՀ (1531) տղայ ժողուեցին ի քրիստոնեից,..[27]», կամ էլ 1531 թվականի մի ձեռագրի հիշատակարանի («Թվին ՋՇ (=1531) Սուլթան Սուլեյմանն.., ենիչէրաց համար տղայ ժողվեց ի հայոց ազգէս..[28]»):

Այսպես, օսմանցիները Հայաստանի տարածք մուտք են գործել 1514թ. Չալդրանի ճակատամարտից հետո ու դեռ երկար տարիներ Հայաստանը եղել է պատերազմական դաշտ Իրանի ու Օսմանյան Կայսրության միջև: Ի նկատի ունենալով այն, որ դեվշիրմեն համարվում է կայսրի հպատակ քրիստոնյաներից հավաքվող հարկ[29], մենք 1519 թվականով թվագրվող մսնեպկահավաքի առաջին նախադեպը չենք կարող համարել դեվշիրմե: Սա փենջիք համակարգի կիրառություն է, քանի որ 1519 թվականին Արևմտյան Հայաստանը օսմանցիների համար ռազմադաշտ էր և հետևաբար հայերը գերված ժողովուրդ էին, որոնց մեկ հինգերորդը պատկանում էր սուլթանին:

Իսկ որ փենջիքը կիրառելով՝ օսմանցիներն այնուամենայնիվ գործում էին ընտրողաբար ու հավաքում էին միայն տղաներ, արդեն խոսում է դեվշիրմեի նրանց հարուստ փորձի մասին, որը նրանք ձեռք էին բերել Բալկանյան թերակղզում: Այդպիսի բան լայնորեն կիրստվել է փենջիքից դեվշիրմե ինստիտուտի անցման փուլում և նախորդ ժամանկներում և վկայված է Լ.Հալքոքոնդիլի կողմից, համաձայն որի Նովո Բոդոյի գրավման ժամանակ 1467թ. օսմանցիները ենիչերի վերցրեցին 320 երեխա, իսկ Պելոպոնեսից՝ 200[30]:

Այն, որ դեվշիրմեն սկզբնական փուլում օգտագործվում էր փենջիքի պակասը լրացնելու համար երևում է նաև Յակով Պլոմոնտորյու ոե Կամպիսի օսմանյան պետության մասին գրվածքից, որը հրապարակվել է 1475թ. և ներառում էր 2-3 տասնամյակ առաջ եղած իրադրությունը: Նա գրում է, որ ենիչերիական զորքը հավաքագրվում էր տարբեր տարածքներից գերված երեխաներից, իսկ երբ գերի չկար, սուլթանը համալրում էր ենիչերիական զորամասերը իր սեփական քրիստոնյա հպատակների երեխաներով[1]: Դե Կամպիսի այս տեղեկություն, որը վերաբերվում է Մուրադ II-ի կառավարման (երբ հավանաբար օրենքի ուժ էր ստացել դեվշիրմեն) և Մեհմեդ II-ի կառավարման սկզբի տարիներին, ցույց է տալիս, որ հիմնական նորակոչիկները փենջիքից էին, սակայն դեվշիրմեն բացառված չէր: Սրա օգտին է խոսում նաև այլ բնույթի մեկ սկզբնաղբյուր՝ թիմարյական տիրույթների 1455թ. ընդարձակ նկարագրությունը (աշխարհագիրը): Թիմարատերերի հետ մեկտեղ գրանցված են և մի քանի ենիչերի, որոնց գրանցել են ամբողջ և ծնված քաղաքով: Այնտեղ հանդիպում ենք ենիչերիներ Ալի Ֆիլիբելի (այսինքն՝ Պլովդիվցի), Յուսուֆ Ստանիմաքլու (այսօրվա Ասենովգրադ), Մուստաֆա Նեգրոպոնտեցի, Յուսուֆ Ռադոմիրցի, Թիմուրթաշ Ստրումիցացի, ինչպես նաև Քարաջա Մաջար, Դուդուս Մաջար և այլն[35]:

Այն ժամանակ, երբ Մաջար անունը, որն անկասկած էթնիկական հատկանիշ է մատնանշում (մաջար-հունգարացի), ցույց է տալիս որ Միջին Եվրոպայում օսմանյան ագրեսիայի ընթացքում ենիչերի են հավաքել փենջիքի միջոցով, օսմանյան տիրույթների կենտրոնական քաղաքներից ծագումը հուշող անունները վկայում են դեվշիրմեով ենիչերիական զորաբանակ մտցված երիտասարդության մասին:

Երկպառակտչական պատերազմները, որոնք տեղի ունեցան 15-րդ դարի առաջին տասնամյակում, էական ճշանակություն ունեցան դեվշիրմեի զարգացման համար: Օսմանյան ժամանակագիրները տեղեկացնում են, որ Մուսայինի զորքում ներառվել էին 7 000 ենիչերի՝ թվաքանակ ինքնին չափազանց մեծ, որ դա հավաքագրված լիներ փենջիքի միջոցով[33]: Շատ հավանական է, որ հենց այդ ժամանակ է սկիզբ առել ոչ մահմեդական երիտասարդության բռնի զանգվածային հավաքագրումը: Չնայած այս դեպքում էլ այս բնակչությունը նույնպես հավաքագրվում էր թերևս որպես ոչ թե հպատակներ, այլ ռազմագերիներ, քանի որ իրենց հողերը դարձել էին պատերազմական գործողությունների թատերաբեմ և պատերազմով կողմերի զինվորները իրենց վերաբերվում էին որպես նոր ձևաճված տարածքների բնակիչների:

Այս ամենը ցույց է տալիս, որ դեվշիրմե համակարգը ամենևին էլ օսմանյան սուլթանների միանվագ հորինվածքը չէ:

Դեվշիրմեի երևան գալն ու գործայությանն մեջ դրվելը պայմանավորված էին պատճառների բարդ համակարգով, որը ծագում էր օսման-

յան պետության հասարակական, կրոնական ու ազգային պայմանների յուրահատկություններից: Այն հակասում էր շարիաթին[34], բայց հաջող կերպով լուծում էր ագրեսիայի ընթացքում բանակում ու ղեկավար ապարատում մարդկային ռեսուրսների տեսակետից անհետաձգելի խնդիրները: Շարիաթը այս անգամ էլ անտեսվեց օսմանյան պետության ուղղակի շահերը բավարարելու համար: Որպես փենջիք համակարգի շարունակություն ղևշիրմեն ըստ էության մահմեդական աշխարհում ստրկական ինստիտուտի[35] նմանօրինակ շարունակությունն էր. կենտրոնական իշխանության կարիքները ապահովելու համար ստրուկների հավաքման ձև, որը տեղի էր ունեցել յուրահատուկ պատմական պարագաներում՝ սկիզբ առնելով Եվրոպայի հարավ-արևելքում 14 դարի վերջին և 15 դարի սկզբին օսմանյան իշխանության հաստատման արդյունքում և ապա տարածվելով քրիստոնյա բոլոր հպատակների վրա:

ARTAK SHAKARYAN

ABOUT THE ISSUES OF THE INCEPTION OF THE DEVSHIRME SYSTEM

The article represents some basic questions regarding the inception of devshirme levy system, periodical hoy-tribute, taken from Christians in the Ottoman Empire in 15th - 16th centuries. Based on facts collected from Armenian medieval manuscripts, Ottoman documents, published in Bulgaria, as well as narrative sources, author analyses some main factors, which influence was crucial for the inception of devshirme. Author concludes that the devshirme system was instituted in the newly occupied territories only after having practiced the pencik system, one-fifth tax, for a while, and that devshirme was not a brand new "invention" of some Ottoman sultans, rather, it was a further development of the pencik system.

ՃԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Զուլալյան, Մ., «Դեվշիրմեն» (մանկահավաքը) օսմանյան կայսրության մեջ ըստ թուրքական և հայկական աղբյուրների, ՊՔՀ, 1959, #2-3, էջ 247-256:
2. Տես՝ Չամչյանց Մ., Հայոց պատմություն (սկզբից մինչև 1784 թվականը), Գ հատոր, Երևան, 1984; Օրմանյան Մ, Ազգապատում, հատոր Բ; Լեո, Երկրների ժողովածու, Երրորդ հատոր, Գիրք առաջին, Երևան, 1969; Մ.Զուլալյան, նշվ.աշխ.:
3. Օրինակ. Gibb H.A.R. & Bowen Harold, Islamic Society and the West, Volume I, Part 1, London, New York, Toronto, 1951, որը համարվում է հիմնարար աշխատություն միջնադարյան Օսմանյան կայսրության պատմության ուսումնասիրման տեսակետից:
4. Георгиева Ц., Еничарите в българските земи, София, 1988, стр 68.

5. Նրանք, ենիչերական զորաբանակի ստեղծման պարագաները նկարագրելիս, տեղեկացնում են, որ յայա զորքը աչքի էր ընկնում իր վերին աստիճանի անկարգապահությամբ, ինչը ստիպեց Սուրադ I-ին կազմավորել նոր բանակ (նրի չերի): Համաձայն հեղինակների բոլոր քաղիներին հրամաններ են ուղարկվում ոչ մահմեդականների միջև պատանիների հավաքի վերաբերյալ: Այսպիսով հավաքվում է հազար հոգի, որոնք էլ կազմում են նոր զորքի կորիզը:
6. Петросян И.Е., К истории создания янычарского корпуса, Тюркологический сборник 1978, М., 1984, стр. 194.
7. Տես. Мебде-и канун-и йеничери оджагы тарихи (История происхождения законов янычарского корпуса), Издание текста, перевод с турецкого, введение, комментарий и указатели Петросян И.Е., Москва, 1987.
8. Papoulia B., Ursprung und Wesen der "Knabenlese" im osmanischen Reich, Munich, 1963, p.71.
9. Ավելի մանրամասն տես. Vryonis S..Review of Upsprung and Wesen by B.Papoulia, Balkan Studies, 5 (1964), p. 145-153.
10. Шамсутдинов А., Проблема становления османского государства по турецким источникам вв., Османская империя: система государственного управления, социальные и этнорелигиозные проблемы, (сборник статей), под ред. Орешковой С., Москва, 1986, стр. 35.
11. Զուլայան Մ., նշվ. աշխ., էջ 248.
12. Толкованние священного корана на арабском и русском языках, Каир, 2000г., Аль Анфаль, 41-42.
13. Vryonis S., Seljuk Gulams and Ottoman Devshirmes, Der Islam, Band 41, 1964, p.227-228.
14. Петросян И., там же, стр. 193.
15. Ercan Y., Devşirme sorunu, Belletten, Aral• k, 1986, s.712.
16. 1402թ. օսմանյան սուլթան Բայազետ I-ը ծանր պարտություն կրեց Լենկ Թեմուրի զորքերից (Uzunçarşılı I.H., Osmanlı Tarih, Ankara, 1947, c.1, 166):
- թիմար – մինչև 20 000 աքչե եկամուտ բերող ավատ;
- զեամեթ – 20 000-ից մինչև 100 000 աքչե եկամուտ բերող ավատ;
- խաս – 100 000-ից ավել եամուտ բերող ավատ;
- մյուլք - ավատ, որի տերն այն կարող է վաճառել, թողնել որպես ժառանգություն կամ նվիրել մեկ այլի;
- սիպահի – օսմանյան զինվորական համակարգում հեծյալ զինվոր, որը ստացած թիմարի դիմաց պարտավոր էր մասնակցել պատերազմների (աղբյուրը՝ Pakalin M.Z., Osmanlı Tarih Deyimleri ve Terimleri Sözlüğü, Milli Eğitim Basımevi, Istanbul, 1971, c.1,2,3):
17. Мутафчиева, В., Аграрните отношения в Османската империя през 15-16в., София, 1962., стр. 33-35.
18. Георгиева, Ц., там же, стр. 69-70.
19. Այս մասին ավելի մանրամասն տես. Тодоров Н., Балканский город 15-19 веков: социально-экономическое и демографическое развитие, Москва, 1976.
20. Երեմեն Դ., Թուրքերի ծագումը, Երևան, 1975, էջ 181-186:

21. Радушев Е., Место вооруженных сил в структуре османской феодальной системы на Балканах, Османская империя: государственная власть и социально-политическая структура, под ред. Орешковой С, (сборник статей), Москва, 1990, стр. 112.
22. Георгиева, Ц., там же, стр. 70.
23. Սկանդերբեգ (Գեորգի Կաստրիոտի, Սկիմներ Իվանովիչ)՝ մոտ 1405-1468, ալբանացի իշխան, թուրք վավթողների դեմ ալբանացի ժողովրդի պայքարի հայտնի ղեկավար: Նա սլատանի հասակից սուլթան Մուրադ I-ի ժամանակ եմիչերի էի վերցվել:
24. Георгиева, Ц., там же, стр. 70.
25. Հակոբյան Վ., Մանր ժամանակագրություններ, հատ. Ա, Երևան, 1951, էջ 169:
26. Աղանյանց Գ., Դիվան հայոց պատմության, գիրք Ժ, էջ 71:
27. Հակոբյան Վ., նշվ.աշխ, էջ 169:
28. Ջուլալյան, Մ., նշվ. աշխ., էջ 251:
29. Pakalin M.Z., ibid., c.I. s.444-448.
30. Георгиева Ц., там же, стр. 74.
31. По следите на насилието, Документи и материали за налагане на исляма, Съставител Петър Петров, Част първа, София, 1987, стр. 216-217.
32. Георгиева Ц., там же, стр. 73.
33. Георгиева, Ц., там же, стр. 71.
34. Wittek P., Devshirme and sharia, BSOAS, 1955. XVII/2, p.271-278; Inalcik H., Studies in Ottoman Social and Economic History, VII, Servile labor in the Ottoman Empire. London, 1985, p. 25-52.
35. Ավելի վաղ ժամանակներում մահմեդական աշխարհում ստրկական ուժի օգտագործման մասին տես, Ն. Հովհաննիսյան, Արաբական երկրների պատմություն, Երևան, 2003; Vryonis S., Seljuk Gulams and …, p.224-252.

ՊԱՎԵԼ ՉՈՔԱՆՅԱՆ

ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ XVIII ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ

XVIII դարի երկրորդ կեսի հայոց ազատագրական ձգտումների համար միավորման առանցք կարող էր ծառայել միայն եկեղեցին, որի հնարավորությունները լիակատար օգտագործելուն ձեռնամուխ եղավ 1763 թ. գահ բարձրացած Սիմեոն Երևանցի Հայոց կաթողիկոսը: Նրա բոլոր ջանքերը ուղղված էին առաջին հերթին Էջմիածնի հեղինակության բարձրացմանը, ժողովրդի կենսունակ ուժերի համախմբման ու պետականության վերականգնման երաշխավոր դարձնելու գործին: Այդ ուղղությամբ Սիմեոն Երևանցու ջանքերը ծրագրված են ու հետևողական: Էջմիածնի վերահսկողությունը պետք է տարածվեր հասարակության բոլոր շերտերի ոլջ գործունեության նկատմամբ և ամենուրեք: Սիմեոն Երևանցին վերստին սահմանում է հայոց ազգային պատկանելության չափանիշը[1], որը պետք է առաջնորդող դառնար կենտրոնացված ուժեղ հավաքականություն ստեղծելու ճանապարհին:

Էջմիածնի Հայոց կաթողիկոսության և Ռուսաստանի փոխհարաբերությունները մինչև 1765 թ. կրում էին գերազանցապես դիվանագիտական բնույթ, թեև հայտնի է նաե, որ 1760 թ. Վրաց Թեյմուրազ թագավորի Ռուսաստան ճանապարհվելու առիթով Հակոբ Շամախեցի կաթողիկոսը հատուկ միջնորդական-հանձնարարական նամակով Ռուսաց արքունիքին առաջարկում էր ընդառաջել Թեյմուրազ Երկրորդի առաքելությանը՝ նրա խնդրանքները ներկայացնելով նաև որպես Հայոց համար ևս օրախնդիր հարցեր: Ինչ-ինչ պատճառներով, սակայն, այդ նամակի բնագիրը մնացել է Էջմիածնում և չի հասել հասցեատիրոջը[2]: 1763 թ. հաջորդելով Հակոբ Շամախեցուն, Սիմեոն Երևանցին կանգնեց մի շարք հրատապ խնդիրների լուծման առաջ: Մահմեդականության տիրապետության պայմաններում Էջմիածինը բազում դժվարությունների էր հանդիպում ոչ միայն մահմեդական իշխանությունների հետ հարաբերություններում, այլև հայ իրականության մեջ առկա բազում տարաձայնությունների ու անհոգությունների պատճառով:

Դեռևս Հակոբ Շամախեցի կաթողիկոսը իր գահակալության ժամանակ, Պալսկաստանում կենտրոնական իշխանության վերացումից և տեղական խաների ինքնիշխան դառնալուց հետո, Էջմիածնի Աթոռի պահանջները (14 կետով) ներկայացրել էր Երևանի խանին (1173=1759թ.) և հաստատել տվել այն: Իններորդ կետի պահանջն էր. «Տաճիկք բռնութեամբ զհայս մի՛ տաճկացուսցեն»: Նույն վեստաքուդքր Սիմեոն Երևանցի կաթողիկոսր հաստատել է տալիս նաև Երևանի Հյուսեյն-ալի խսսինի (1176= 1763թ.)[3]: Նույն թվականին այդ իրավունքները հաստատվում են Իրանի կառավարիչ Քերիմ խանի կողմից:

Կաթողիկոսական Աթոռի և Հայոց եկեղեցու իրավունքները հայրենի երկրում ամրապնդելն ու սրսշտպանելը Սիմեոն Երևանցու համար դառնում են առաջնահերթ խնդիրներ: Նա կազմում է Ջամբռ կոչված ժողովածուն, որ իրավական վավերագրերի հավաքածո և Հայոց եկեղեցու համառոտ պատմությունն է: Սիմէոն Երևանցին գրում է, թե «յուսամք, զի [Աստուած]... այց արասցէ և վերաճորոգեսցէ զհնութիւն խղճալույ ազգիս մերոյ և վանօրէից: Եւ յայնժամ եթէ զշէնս ոչ, գոնէ զաւեր տեղիսն մյքից և զվիճակս իւրեանց ճանաչեսցեն իւրաքանչիւրքն»[4]:

Ոռշակի նպատակադրումով Սիմեոն Երևանցին 1766թ. Պետերբուրգ է ուղարկում մի դեսպանություն՝ Դավիթ վարդապետի գլխավորությամբ[5]: Լուծելիք հարցերից գլխավորն էր Ռուսահայոց թեմը Գանձասարի կաթողիկոսության իրավասությունից Էջմիածնի իրավասությունը փոխանցելը և Ռուսաստանի հայ համայնքի կողմից միայն Էջմիածնի գերագահության ընդունման ապահովումը: Պատվիրակությունը սրտովով կատարեց իր առաքելությունը[6] և 1768թ. վերադարձավ Էջմիածին՝ իր հետ ըերելով Եկատերինա Երկրորդ կայսրուհու հրամանագիրը այն մասին, որ Հայոց եկեղեցու ոչ մի հոգևորականի չի թույլատրվի այլևս մուտք գործել Ռուսաստանի տարածք առանց Էջմիածնի երաշխավորության՛: Այդ առիթով Սիմեոն Երևանցին գրեց Ռուսական կայսրուհուն ձոնված մի աղոթք. որը պետք է մշտապես կատարվեր պատարագի ժամանակ:

1773 թ. Սիմեոն Երևանցին, բնականաբար ոչ առանց նպատակադիր հստակ ցուցումների, Ռուսահայոց թեմի առաջնորդ նշանակեց երիտասարդ եպիսկոպոս Հովսեփ Արղությանին: 1774 թ. Իրանի Ռեշտ նավահանգստից նավով Հովսեփ Արղությանը ժամանեց Աստրախան: Նույն թվականին ավարտվում էր ռուս-թուրքական պատերազմը՝ Քյուչուկ Կայնարջիում կնքված պայմանագրով /1774 թ. հուլիսի 10/, որի հաստատումն ու հրապարակումը տեղի ունեցավ մոտ մեկ տարի անց: Հովսեփ Արղությանը, ձեռք ձգելով հաշտության պայմանագրի տեքստը, այն թարգմանում է հայերենի և առաքում Էջմիածին: Պայմանագրի 7-րդ կետով Կ. Պոլսում Ռուսաստանի դեսպանին իրավունք էր վերապահվում հանդես գալու Օսմանյան տերության մեջ քրիստոնյաների շահերի

պաշտպանությամբ[κ]: Ստորև ներկայացվող նամակը հայերեն բնագրով և ռուսերեն երկու թարգմանությամբ պահպանվել է Մաշտոցի անվան մատենադարանում պահվող Լազարյանների արխիվում: Այն անստորագիր է և անթվական: Ելնելով դեպքերի զարգացման ընթացքից, նամակի որոշ առանձնահատկություններից և համադրելով այլ վավերագրերի հետ, ակնհայտ է դառնում, որ նամակի հեղինակը Սիմեոն Երևանցին է: Պատասխան այդ նամակը պետք է թվագրել 1778-1779թթ., Հենվելով պայմանագրի վերոհիշյալ կետի վրա, Սիմեոն Երևանցին Հ. Արդուբյանին և Լազարյաններին առաջարկում է միջնորդել և հարց հարուցել Ռուսական կառավարության առաջ, որպեսզի Կ. Պոլսի Ռուսական դեսպանին ցուցում տրվի օժանդակելու և հովանավորելու նաև Հայոց եկեղեցա ներկայացուցիչներին: Ստորև բերում ենք այդ շատ արժեքավոր նամակի լրիվ տեքստը, որը մինչև այժմ դուրս է մնացել հետազոտողների ուշադրությունից:

«Զայս ևս գիտացիր, հաշտութեան դաշնագիրն տեսաք և շատ հետաքեցաք: Աստուած միշտ յաղթող և բարձրագլուխ պահեսցէ ի պարծանս ամենայն քրիստոնէից: Բայց թէպէտ այլ քրիստոնէից առուն գոյ ի մէջ նորին, Հայոց առունն բնաւ չկայ: Մանաւանդ մեծ բարերարութիւն Ռուսումելու երկրի քրիստոնէիցն է եղեալ: Իսկ Անատօլու երկրի քրիստոնեայքն ե մանաւանդ՝ Հայքն, խեղճ մնան. թէպէտ գրեալ է, թէ քրիստոնեայքն գինչ ցաւս ունիցին, մեր էչյուն արգ արասցեն, սակայն Անատօլու Հայքն, ի նոցանէ երկնչելով, ոչ կարեն արգ ստնել: Վասն որոյ ընդ օրինեալ իշխանին մերոյ աստուծով զօրացեալ Աղայ Յովհաննիսին խորհրդակցիցիս, եթէ կարելի իցէ, գրել տան մէջ հրամանի ի վերայ Պօլիս նստող էչյուն, թէ՝ Պատրիարգն Հայոց ի չէջմիածնէ, եթէ մէկ խնդիր ինչ արասցէ քեզ վասն հաւատոյ, օրինուց և եկեղեցաց՝ լսող և կատարող լինիցի: Այս է մեծ օգնութիւն և բարերարութիւն խղճալի ազգիս Հայոց և Աթոռոյս և յատկական յիշատակ իւրեան օրինեալ յանուանն: Եթէ պատշաճ տեսցէ, ես արգայ գրեցից օրինեալ մօրն որդրմութեան և կամ մեծ իշխանին: Զայսմանէ խօսեալ՝ մեզ ծանուսցես: Բաւ է»[9]:

Ուշագրավ է այն փաստը, որ ինչպես նամակում է պահանջ դրվում, իրոք նայն բովանդակությամբ մեկ հրամանագիր ռուսական արքունիքը 1781 թ. հունվարի 11-ին[10] ուղարկել է Կ. Պոլսում Ռուսաստանի դեսպան Ստախիևին, երբ արդեն մոտ կես տարի առաջ վախճանվել էր Սիմեոն Երևանցին: Հրովարտակի մեջ Ստախիևը տեղեկացվում է Էջմիածնի կաթողիկոսության և Ռուսական արքունիքի միջև ծավալված փոխհարաբերությունների մասին սկսած 1768 թ.: Ապա հրամանագրում նշվում է, թե Հովսեփ Արդությանը կաթողիկոսի անունից նոր պահանջներ է առաջադրել. մասնավորապես. "чтоб препоручено было вам, как нашему при Порте Оттоманской министру, оказывая со стороны вашей помощь и защищение присылаемым в столицу Турецкую от

патриарха Армянскаго начальникам духовенства при встречающихся для них надобностях"[11]:

Առայժմ մենք չունենք որևէ վկայություն այդ թվականներին Հայաստանում որևէ խնդրի շուրջ Ռուսական դեսպանության կողմից օժանդակություն ստանալու մասին, սակայն այդ հնարավորության հիմքերը արդեն իսկ ստեղծվել էին Սիմեոն Երևանցու և Հովսեփ Արղությանի ջանքերով[12]: Շատով այդ հնարավորությունը օգտագործվեց, սակայն, նախ Հովսեփ Արղությանի կաթողիկոսական թեկնածության առաջադրման, ապա և Դավիթ-Դանիելյան հայտնի հակամարտության բորբոքման նպատակով:

Քերիմ խանի մահը Իրանը նորից կանգնեցրեց քաղաքական փլուզման և իշխանատենչ ուժերի երկարատև բախումների փաստի առաջ: 1779 թվականը ծանր տարի էր բուն Հայաստանի և հատկապես Արարատյան դաշտի բնակչության ու Էջմիածնի կաթողիկոսական Աթոռի համար: Հերթական Երկրորդի արշավանքը մեծ վնասներ էր բերել ոչ միայն տնտեսությանը, ցանքատարածություններին, այլև բնակչության բոնագաղթից հետո սրել հարաբերությունները մահմեդական իշխողների ու հայ բնակչության և, մասնավորապես, Էջմիածնի Աթոռի հետ[13]:

1780 թվականի հունվարի 1-ին անակնկալ Հովհաննես Լազարյանին ու Հովսեփ Արղությանին այցելում է Ի. Պ. Գոլիչը և հայտնում «զգնալն իւրեանց ի վերայ Պարսից առ ի տիրել զծովեզերեայ տեղիսն»[14]: Հովսեփ Արղությանը իր օրագրում պատմում է 1780 թ. հունվարի առաջին երկու շաբաթների անընդմեջ հանդիպումները Ա. Վ. Սուվորովի և Գ. Ա. Պոտյոմկինի հետ[15], որը նոր վալ էր նախանշում հայ-ռուսական հարաբերություններում: Հայոց քաղաքական դիրքորոշման կաբևորությունը Ռուսաստանի համար իր կնիքն է թողնում նաև եկեղեցական-դավանական հարցերի լուծման վրա: Հայ գործիչներն ավելի հաստատակամորեն են պնդում դավանական պատկանելությունն անխաթար պահելու իրենց վճռականությունը և միաժամանակ Ռուսական եկեղեցու հետ հարաբերություններում ստանում հենց ռուսական քաղաքական շրջանների աջակցությունը[16]:

1780-1790-ական թվականներին անընդմեջ ստվարացող ռուսահայ գաղթօջախում ձևավորվող դավանական փոխհարաբերությունները նոր ծեռք են բերում քաղաքական ուղղվածություն: 1779 թ. փետրվար-մարտ ամիսներին Հ. Արղությանը այցելություններ է կատարում Մոսկվայի արքեպիսկոպոս Պլատոնին, որը «բազում խօսակցութիւնս ունար վասն հաւատոյ մերոյ և աւանդութեանց եկեղեցւոյ, և յաղագս գրչարտութեանցն Յունաց առ մեզ, և վասն պէսպէս բաջադմանց Յունաց յաղագս պահոցն սրբոյն Մարգսի, գոյս ամենայն լուծաք. և զտուեալ պատճառսն մեր ողջամիտ վարդապետութեամբ ընկալաւ»[17]: Նույն թվականի մարտի 31-ին «սրբազան Պլատօնն հրաւիրեաց զմեզ գնալ ի սօբօռն և անդ տեսանել

առաջնորդ Ջերսուճու և Նոր Ռուսաց. իջաք ի վրուսնսն, պահեաց զմեզ երկու օր և նցայց զբազմաղիմի մարդասիրութիւնս: Եւ անտի գնացաք առ գուսֆ Պետր Ալէքսսնդր Ռումենցով ֆրթմա/ր/շալն ի գլուղն իւր Վիշինկսյ, որում եղև յուրախութիւն յոյժ, իջոյց զմեզ ի վրանի գեղեցկագունի, զոր ի յՕսմանցւոցն !.ր գերեալ. պահեաց զմեզ չորս օր և յամենայն աւուր՝ առաւոտ և երեկոյի, առ մեզ գայր և զմեզ առեալ տանէր առ ինքն ի ճաշել:... Եւ յետ բազում մարդասիրական պատուոյն կամեցաւ առաքել զմեզ ի Քիով քաղաքն, յորում են բազում վանօրայք և տեղիք սրբոց...Գրեաց գիր յանձնարարական առ սրբազան Գաբրիէլ մետրոպօլիտն ծերունի, առ արքիմանդրիտն Զօսիմէ, և առ կոմենդանտն Իվսն Ստեփանիչ Կուկիսովն՝ ընկալնուլ զմեզ և սլստիւ ցուցանել»: Պէչերսկի վանքում արժանաւորով պատվավոր ընդունելության Զոսիմէ արքիմանդրիտի կողմից, Հ. Աղոթքյանը հրսվիրվել է Գաբրիել մետրոպոլիտի մոտ, որը նս «բազմաղիմի պատիւս և սէրս եցոյց և մանաւանդ առ սուրբ հաւատս մեր, որ զԳանձ արամեանն ունելով ի ձեռին, գովէր ի մէջ հրապարակին, յորում էին հոգևորականքն և երևելի աշխարհականք՝ թէ՝ ճշմարիտ և ուղղափառ հաւատ է Հայոց հաւատն, և այլ այսպիսի բանս համարձակորէն և սա ընկալեալ զմեզ ի սեդանն սուրբ, և յետ արձակման սրբոյ պատարագին, զնշխարս տային մեզ և զգինի: Եւ յելանելն մեր ի յեկեղեցւոյն խառն ի ճաղանճ ամբոխն՝ անցեալ ի վերայ մեր, ամենեքին աջ առեալ՝ զօրհնութիւն խնդրէին»[22]:

Սիմեոն Երևանցուն հաջորդած Դևոկաս Կարնեցու գահակալության տարիներին, օրինակ. կազմված Հայ-ռուսական դաշնագրի նախագծի առաջին իսկ կետը պահանջում էր դավանական խնդիրներում երկուստեք հանդուրժողական վերաբերմունք: Երկրորդ կետով պահանջվում էր «Ձհեստեալս յիւրաքանչիւր ազգացս չընկալնուլ ի հաղորդութիւն իքր զպղտորիչս և խռովարարս սիրոյ և խաղաղութեան», իսկ երրորդ կետով՝ չարգելել մահմեդականների և հեթանոսների կողմից Հայոց դավանանքի ընդունումը: Սրանք հարցեր էին, որոնք իրավական կարգավորում էին պահանջում, հրատապ խնդիրներ էին կենդանի իրականության մեջ, քանզի Հայոց եկեղեցին ստիպվսւծ էր մեծ ճեղքյունների գնով դիմագրավել ռուս հոգևորականության ճնշմանը: Այդ մասին վկայում է 1782 թ. Հովսեփ Աղդոթյանի արձանագրած այն փաստը ևս, թե Մոգդոկի Հայոց եկեղեցին, որ «չարաճճիկ Գորգի ոմն կամեցեալ էր ռուսանալ և զեկեղեցին զայն ևս դարձուցանել, որոյ աղագաւ եպիսկոպոսն Ռուստաց և գուբեռնարն վճիռ էին հաստատեալ՝ հրամանաւ Սինօթին ընկալնուլ, իսկ Մոգդոկու ժողովուրդքն ոչ էին տուեալ առանց մեզ, այլև զգիրս իւրեանց գրեալ էին մեզ: Մեք գրեցաք Հաշտսրխանու գուբեռնաթին, մինչ ոչ ինչ օգտեցաք ի նմանէ. բայց մեր արկաք առ սրբազնասուրբ Սինօթի գահակալ Պետրպօլքու արքեպիսկոպոս Գաբրիէլն, նա յուսադրեալ մեզ, խօսեալ ընդ գահակցացն իւրոց. և ընդ պայծառափայլ քենւագին, մխի-

քարեալ յուսադրեալ մեզ, և առաքեալ առ քեզազն: Քեզազն, որպէս հարկն էր, գրեաց սաստ և յանդիմանութիւն Հաշտարխանու գաւթեռնաթին և եպիսկոպոսին՝ ի քաց թողուլ զեկեղեցին մեր և մի ընդել զմեզ, որ ընդդէմ է կայսերական մեծութեան զթութեանն...Յետ այսորիկ գրգռիչ Գօքկին և ընկերքն զղջացեալ ի յանկատար արարմանց իւրեանց, գիր մեղայական գրեցին մեզ և մեք ընկալաք զնոսա ի հաղորդութիւն եկեղեցւոյ»[23]:

Հայոց եկեղեցու համար դավանակուսը հանդուրժողականության մթնոլորտ ձևավորելու գործում մեծ կարևորություն ուներ Պսկովի Առաջին կայսեր կյանի ուսուցիչ Պլատոն միտրոպոլիտի դիրքորոշումը: Ըստ Հ. Արդությանի վկայության, Պլատոնը քազմիցս սանձել է ռուս ե հույն հոգևորականության հարձակումները Հայոց եկեղեցու և եկեղեցականների դեմ: Որոշակի նպատակադրումով և, ամենայն հավանականությամբ Հ. Արդությանի նախաձեռնությամբ, Պետերբուրգում հայերենի են թարգմանվում Պլատոն միտրոպոլիտի «Քրիստոնեական աստվածաբանությունը», «Քարոզներ» և «Ուղղափառ կրթություն» գրքերը /թարգմանիչ Ստեփանոս Ասլանյան/[24]: Ռուսերենի է թարգմանվում և Պետերբուրգում 1799թ. տպագրվում «Հայոց եկեղեցու դավանանքը»[25] գիրքը, որն այնուհետև Պետերբուրգում Վրաց դեսպանության քարտուղար Գեորգի Ավալիշվիլին ռուսերենից թարգմանում է նաև վրացերենի[26]:

1793 թ. մայիսի 17-ին Աստրոսխանից Հ. Արդությանին գրած նամակում հայտնվում է, թե տեղի ռուս հոգևոր առաջնորդը ոչ միայն մեծ օժանդակություն է ցուցաբերում հայ հոգևորականությանը, այլև պատժում է անգամ այն հայերին, որոնք դավանափոխության նպատակով դիմում են իրեն. «Ծովինարն մէկ տղայով և իւր որդովն գնացեալ էր Ռուս դառնայ, գաներով վսըեալ էր և մեզ կոչեսղ առ ինքն, թէ դու ևս քերել տացես առ քեզ և գանեսցես և հայցցես, թէ վասն ո՞յր թողուն զհաւատս իւրեանց և այսպէս անարգեալ եղեն Ռուստի հաւստ կամեցողքն, և բոլորքն գիտացին, որ արքերէյն[27] գանիւք վարեալ է, վասն այսմ այսուհետև ո՞վ համարձակի գնալն»[28]: Այդ իրավիճակը, սակայն, ամենուր չէ, որ ընթանում էր առանց հակամարտության ու ընդհարումների: Որքան Ռուսական եկեղեցու բարձր աստիճանավորները հանդուրժողական և զուսպ վերաբերմունք էին դրսևորում հայոց նկատմամբ, նույնքան տեղերում ռուս հոգևորականությունը գործում էր առավել թելադրական գործելաոճով: Այդ առանձնապես ակնհայտ դարձավ 1790-ական թվականների կեսերին, երբ աշխարհիկ իշխանությունները ևս ակնհայտորեն սպասողական քաղաքականություն էին որդեգրել Այսրկովկասի նկատմամբ: Հովսեփ Արդությանը արձանագրել է ստեղծված իրավիճակը 1795 թ. մայիսի 20-ին Աստրախանից գրած իր նամակներից մեկում[29]: Հ. Արդությանը ևս հայ-ռուսական հոգևոր-դավանական փոխհարաբերությունները լծորդված ու պայմանավորված է դիտարկում ու ներկայացնում

յան անցնելու առաձիվ փաստերը ևս կանխելու համար Հ. Արղությանը փորձում է ստանալ ռուս հոգևորականության պաշտպանությունը: Նման օրինակներից էր Հնդկաստանում գտնվող տէր Ստեփանի «բէդօվլուսք եղրայրն», որ «ռուսացեալ է, թէ յեղբորէս փող է եկեալ, ինձ չեն տալիս, նորա կինն և փոքրիկ որդին ղօղեալ կան յանկեան, որ բռնութեամբ չռուսացնեն»[34]: Անհրաժեշտ էր հզոր կռվաններով կասեցնել հայոց նկատմամբ գործադրվող դավանական խտրությունները: Հ. Արղությունը հարցադրումը կրկին փոխադրում է հայերի Ռուսաստան փոխադրվելը հարցականի տակ դնելու սպառնալիքի մակարդակ. «Ահա յուսադրութեան պտուղն երկրիս, ո՞ր երեսօք գրեմ ումեք, թէ՝ եկէք և գհանգստութիւն վայելեցէք. ես ճանապարհորդ եմ և ծառայօղ թագաւորութեան հրամանին, և սոքա յայսպիսի բռնութիւն կան, ոչ ուքազի լսեն և ոչ հրովարտակի, ոչ արդարութեան ունկն դնեն և ոչ ճշմարտութեան»: Միակ միջոցը հայ հասարակության անունից հանդես գալու և հիմնավորված պահանջի առաջադրումն էր բարձրագույն հոգևոր ատյանի առաջ: Իր փաստարկումները ներկայացնելով հայազգի գործիչներին, Հ. Արղությանը շեշտելով, թե «քուք ևս ազգ էք Հայոց, օգնեցեք մեր ազգին», պահանջում է նրանցից, գրավոր կերպով դիմել սինոդի գեներալ-պրոկուրոր Ա. Ի. Մուսին Պուշկինին, որ «քարեկամ է, ապա է նա այր բանական և խելօք»: Պարզվում է, որ Հ. Արղությանը տեղյակ էր նաև, թե Աստրախանի ռուսաց հոգևոր առաջնորդը դիմել էր Ա. Ի. Մուսին Պուշկինին՝ Հայոց եկեղեցու գանգերը հնչեցնելու դեմ լինելու պահանջով, սակայն և պատասխան ստացել, թե «լռեա, քոյ բանն չէ»: Ռուսական եկեղեցու առաձին ներկայացուցիչների նկրտումներին դիմագրավելու գործում հայոց համար կարևոր յծակ էր ռուսական աշխարհիկ իշխանությունների կողմից ցուցաբերված օժանդակությունը ստանալու հանգամանքը, մանավանդ որ հետզհետե ավելի էր կարևորվում հայոց դիրքորոշումը Ռուսաստանի արտաքին քաղաքականության իրականացման գործընթացում: Այդ ակնհայտորեն դրսևորվեց 1795 թվականի ընթացքում, երբ Աղա Մահմադ խանի կողմից Թիֆլիսի ավերումից հետո սկսեց քննարկվել ու ծրագրվել Ռուսական քանակը Այսրկովկաս ուղարկելու հարցը: Ինչպես հայտնի է, այդ արշավանքին իր մասնակցությունը բերելուն հրավիրվեց անգամ անձամբ Հովսեփ Արղությանը:

Այլ էր իրավիճակը Ռուսաստանում կաթոլիկ դավանանքի հոգևորականության ներկայացուցիչների հետ հայ հոգևորականության ունեցած փոխհարաբերությունների պարագայում: Ռուսաստանի կաթոլիկ համայնքում մեծ թիվ էին կազմում *հայազգի կաթոլիկները*, որոնց ւսրաջնորդն էր Օնոֆրիուս Օհանջանովը[35]: Տեղի տալով Հ. Արղությանի համառ ջանքերին, Ռուսական կառավարության հանձնարարությամբ 1794 թ. հունիսի 18-ին Մոգիլևի կոնսիստորիան հրամայում է հայ կաթոլիկների առաջնորդ Օ. Օհանջանովին, թե օրենքով արգելվում է քոնի կաթոլիկ

դավանանքի դարձնել որևէ մեկին /տվյալ դեպքում խոսքը առաջին հերթին հայայսվան անձնավորության մասին է/, իսկ հուճաղավան ռուսներին՝ արգելվում է կրոնափոխ անել ընդհանրապես: Հ. Այրոթյանը փորձում է ստանալ ավելին. նա, օգտագործելով պահի կարևորությունը, կառավարությունից պահանջում է թույլատրել կաթոլիկ հայերի վերադարձը հայայսվանության և միաժամանակ սրգելել նաև հայերի անցումը ռուսաղավանության: Ռուսահայոց հսմայնքը XVIII դարի վերջին ռուսական իշխանությունների կողմից ստանում է կարևոր հավաստիացում իր կարգավիճակի ամրապնդման համար:

Պսվել Առաջինի 1799 թ. հոկտեմբերի 28-ի հրամանագրերում շեշտվում է, որ թույլատրվում է ազատորեն դավանել Հայոց դավանանքը, կառուցել եկեղեցիներ և կրոնական հարցերում ենթարկվել միայն Էջմիածնի կաթողիկոսին ու Ռուսահայոց առաջնորդ Հովսեփ Արղությանին: Ավելին. Դուկաս կաթողիկոսի մահից հետո, Ռուսական սղքունիքը պաշտպանում է Հ. Այրոթյանի թեկնածության առաջադրումը Հայոց կաթողիկոսական գահի համար և Ռուսական բանակի Վրաստանում լինելու հանգամանքով թելադրված՝ Հովսեփ Արղությանի միջոցով է 1801 թ. փետրվարին հրապարակում Վրաստանը Ռուսաստանին միացնելու Պսվել Առաջինի հրովարտակը:

Այսպիսով, վերոբերյալից ակնհայտ է, որ հայ-ռուսական եկեղեցական հարաբերությունների ուղղվածությունը XVIII դարի վերջին հիմնականում պայմանավորվում էր քաղաքական հարաբերությունների պահանջով ու մակարդակով:

PAVEL CHOBANYAN

ARMENIAN-RUSSIAN CIIURCII RELATIONS IN THE SECOND HALF OF XVIII CENTURY

In the second half of the XVIII century Armenian population in Russia was increasing. Under more active Russian policy in the East and along with improvement of Armenian-Russian political relations, the Armenian-Russian church relations became closer and more tolerant.

Owing to mediation of political authorities, the Armenian Church in Russia stayed free from religious restrictions, new churches were built and Church Charter of the Armenian Church of Russia was developed.

ՃԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. «Որպէս Քրիստոս, ըստ ամենատեսակ բարերարութեանն, իշխանութիւն ունի ի վերայ հասարակ մարդկայինս բնութեան, նոյնպէս և երկրորդապէս և յետ Քրիստոսի՝ Սուրբն Գրիգոր, ըստ բազմատեսակ բարերարութեանն,

իշխանութիւն ունի ի վերայ յատուկ ազգիս Հայոց. զորմէ բացասօղն պարտի նախապէս զՀայկազնէութենէն և զՔրիստոսական հաւատոյն իրմէ ըլացասել: Քանզի որ Հայկածին է և հաւատացեալ Քրիստոսի, սովաւ և ի ձեռն սորա ունի զհաւատն զայն...» /Սիմէոն Երևանցի, Ճամբո, Վաղարշապատ, 1873, էջ 51/:

2. Նամակը գրված է 1760 թ., իսկ Թեյմուրազ II-ը Վրաստանից ճանապարհվել էր արդեն 1759 թ. վերջերին և արդեն գտնվում էր Ռոսաստանում:
3. Ճամբո, էջ 234:
4. Ճամբո, էջ 271:
5. Դիւան հայոց պատմութեան, գիրք Գ, էջ ճԻԱ-ճլբ: **Г. Эзов**. Начало сношений эчмиадзинского патриаршего престола с русским правительством, Тифлис, 1901.
6. Պատվիրակության հաջողությանը իր օժանդակությամբ նպաստել էր նաև Հովհաննես Լազարյանը և այդ առիթով նամակ գրել Սիմեոն Երևանցուն (տես Վ. Դիլոյան, Լազարյանների հասարակական-քաղաքական գործունեության պատմությունից, էջ 140-141):
7. Армяно-русские отношения в XVIII в., IV, с.76-77.
8. Տեքստը տես **Е. И. Дружинина**. Кючук Кайнарджийский мир. Москва, 1955, с. 352.
9. ՄՄ, Լազարյանների արխիվ, րոլթ. 109, գործ 22, վավ. 24. հայերեն բնագիր:
10. Армяно-русские отношения в XVIII в., IV, с.170-171. Հրովարտակի հայերեն թարգմանությունը տես «Դիւան հայոց պատմութեան», IX, Թիֆլիս, 1911, էջ 49-52: Նման բովանդակությամբ հրահանգ առաքվել է Արտաքին գործերի կոլեգիայից նաև Գ. Ա. Պոտյոմկինին նույն օրը: Տես АВПР, ф. СРА, 100/3, 1764-1800, д. 462, л. 167. копия:
11. Армяно-русские отношения в XVIII в., IV, с.170-171.
12. Հայտնի է միայն, որ 1798 թ. Պավել Առաջինը նս նման հրահանգ ուղարկել էր Կ.Պոլսում ռուսական դեսպան Վ. Տամարային՝ կարգադրելով հնարավոր օգնություն ցույց տալ և պաշտպանել Ղուկաս կաթողիկոսի կողմից ուղարկված հայ հոգևորականներին: ՄՄ, ԿԴ, թղթ. 8, վավ. 15 /պատճե/: Տես նաև Վ. Ռ. Գրիգորյան. Երևանի խանությունը 18-րդ դարի վերջում /1780-1800/. Երևան, 1958, էջ 197:
13. Армяно-русские отношения в XVIII в., IV, с.156. Այս վավերագրում խոսվում է Հերակլի կողմից Արարատյան դաշտի 15 հազար հայերի Թիֆլիս փոխադրման, Երևանի խանի կողմից Էջմիածնի վանքի վեց միաբանների սպանության մասին:
14. Армяно-русские отношения в XVIII в., IV, с.152.
15. «Յունվարի 2. ենարալ պօռոճիկ Ալէքսանդր Վասիլիչ Սուվօրօվն եկն առ մեզ ի տեսութիւն. և մեր ազնիւ աղայ Յովհաննէսն ընդ նմա ի վերայ նոյն նիւթոյն. և ի վերայ երկրացն մերոց բազում հարցմունս արար մինչև ցերկու ժամս»: Տես Армяно-русские отношения в XVIII в., IV, с.152-153:
16. Դիւան հայոց պատմութեան, IX, էջ 45-46:
17. Դիւան հայոց պատմութեան, IX, էջ 16:
18. Դիւան հայոց պատմութեան, IX, էջ 19-20:

19. Ընթերցված քարոզը նախապես թարգմանվել էր ոուսերեն և 500 օրինակ տպագիր ձևով բաժանվել իշխաններին, իսկ գեղեցիկ կազմված մեկ օրինակը Գ. Ա. Պոտյոմկինի միջոցով մատուցվել կայսրուհուն: Օրինակներ էին ուղարկվել գահաժառանգ Պավելին և Մարիա Ֆեոդորովնային, որ Հովհաննես Լազարյանի միջոցով փոխանցվել էին Նիկիտաս Պանինին՝ հանձնելու ըստ պատկանելվույն: Տես Դիւան հայոց պատմութեան, IX, էջ 4, 26-27:
20. Դիւան հայոց պատմութեան, IX, էջ 6:
21. Հովհ. Տէր-Աբրահամեան. Հովսէփ Յորդորդ Երկայնաբազուկ-Արղութեանց, ընդհանրական առաջնորդ ոուսիաբնակ հայոց /1773-1800/, իշխան կայսերութեան Ռուսաց և կարողիկոս ամենայն Հայոց. ՍՊբ, 1881, էջ 6-7:
22. Դիւան հայոց պատմուրեան, IX, էջ 8-9, 42-44:
23. Դիւան հայոց պատմութեան, IX, էջ 46:
24. Ուշագրավ է, որ Պլատոն արքեպիսկոպոսի քարոզների ոուսերենից հայերենի բարգմանությամբ զբաղվել է նաև Հովակիմ Աղազարի Լազարյանը: Տես Վ. Դիլոյան. նշվ. ուշխ., էջ 190:
25. "Вероисповедание Армянской церкви", СПб, 1799.
26. ლია კიკნაძე. გიორგი ავალიშვილის ცხოვრება და შემოქმედება. თბილისი, 1993, გვ. 121.
27. Իմա՝ архиерей.
28. ՄՄ. ԿԴ, թղթ. 6, վավ. 42. քնագիր:
29. Հ. Արղությանը, վճռելով դիմագրավել ռուս հոգեորականության կամայականություններին, Սոսկվայի ու Պետերբուրգի հայ գործիչներին նախապես նամակով տեղեկացնում և պահանջում էր նրանց միջամտությունը՝ արքունիքում և սինոդում հենարան գտնելու համար:
30. Դիւան հայոց պատմութեան, IX, էջ 178:
31. Դիւան հայոց պատմութեան, IX, էջ 178-179:
32. Նույն տեղում:
33. Նույն տեղում:
34. Նույն տեղում:
35. Օ. Օհանջանովի մասին տես მ. თამარაშვილი. ისტორია კათოლიკობისა ქართველთა შორის, თბ., 1901, გვ. 488-490, 823, 833, 835. **Ambrosius Eszer**. Missionen im Halbrund der Länder zwischen Schwarzen Meer. Kaspisee und Persischem Golf: Krim. Kaukasien. Georgien und Persien.- Sacrae Congregationis de Propaganda Fide Memoria rerum. Vol. II, 1700-1815. Herder. Rom-Freiburg-Wien. 1973. S. 448. Պ. Չորանյան, Վրաց ուղեգրությունները.... էջ 116: Ա. Էսցերը, հետևելով Մ. Թամարաշվիլուն, թյուրիմացաբար նրան համարում է վրացի:

ԴԻՄԻՏՐԻ ՍԱՐԳՍՅԱՆ

ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՓՈՒԼԵՐԸ*

Ուրարտական պետության կազմավորումը տեղի է ունեցել երեք փուլերով, որոնցից վերջինը ունեցել է երեք ենթափուլեր:

Ուրարտական պետության կազմավորման առաջին փուլը, որը համընկնում է այդ պետության պաշտերացման առաջին փուլին, վերաբերվել է ուրարտական և հայկական ցեղերի որոշ մասի միավորմանը մի ընդհանուր, կենտրոնական պետության կազմում (հայկական ցեղերը այդ ժամանակ տարածված էին Արամալի վարչական միավորի կազմում, ինչպես նաև նրա հիմքի վրա ձևավորված հետագա Արմարիլի-Արմաթիյալի կամ Արմիրալի մարզում): Այդ փուլում ուրարտական պետության գրաված տարածքը սկսվել է Արածանի գետի միջին ավազանի հարավային սահմաններից, ծգվել Վանա լճի արևելյան երկարությամբ և տարածվել մինչև Ուրմիա լճի արևմտյան կողմերը[1]: Այդ փուլում, ըստ սեպագիր արձանագրությունների տվյալների, ուրարտական պետությունը կազմված էր 4 քաղաք-ամրոցներից և նրանց շրջակայքի բնակավայրերից: Մի քաղաք-ամրոցը իր շրջակայքի բնակավայրերի հետ կազմել էր երկրի մի վարչական միավորը: Այդ վարչական միավորներն էին՝ Արզաշքուն, Արամալին, Զանզիումնան և Սուգունիան: Դրանցից Արզաշքուն տարածված էր երկրի հյուսիսային մասում, մասնավորապես Վանա լճի և Արածանիի միջև ընկած տարածքում, Արամալին՝ Վանա լճի արևելյան մասում, Զանզիումնան՝ այդ լճի հարավ-արևելքում, իսկ նրանից արևելք դեպի Ուրմիա լճի արևմտյան կողմը տարածված էր Սուգունիան[2]: Հյուսիսային կողմում Ուրարտուին սահմանակից են եղել Դայաենի-Դիաուխի, Թումմե, Սուխմու և Էնզիտե երկրները, հարավային և հարավ-արևելյան կողմում՝ Գիլզանի, Խուրուշքիա և Մուծածիր երկրները (նշված երկրներից Դայաենի-Դիաուխին անմիջապես սահմանակից

---

* Հոդվածը հրատարակվում է առանց նրա էության խմբագրության կողմից միջամտության:

մանները հասցնում է մինչև Արաքսի միջին ավազանը և Ուրմիա լճի արևելյան կողմերը[13]:

Մենուան (810-786) իր նվաճումներով Ուրարտուի հյուսիսային սահմանները հասցնում է մինչև Դայաենի-Դիաուխի ընդարձակածավալ պետության կենտրոնական որոշ տարածքները[14], հյուսիս-արևմտյան սահմանները՝ մինչև Ծուպանի (Ծոփք) երկիրը և Խաթե ցեղամիության արևելյան սահմանները (Փոքր Հայքի Մելաս գետի ավազանում), հյուսիս-արևելյան սահմանները՝ մինչև Էրիքուախի երկիրը (Արարատյան դաշտավայրի մատույցներում, Արարատ լեռան ստորոտում)[15], արևմտյան սահմանները՝ մինչև անդրեփրատյան Մելիտեա կամ Մելիդու (Մալաթիա) երկիրը[16], հարավային սահմանները՝ մինչև Ծուբրիա և Ուրմե երկրները (Սասունի լեռնային գանգվածում)[17], հարավ-արևելյան սահմանները՝ մինչև Մանա երկիրը (Ուրմիա լճի արևելքում)[18]:

Արգիշթի I-ը (786-764) իր նվաճումներով Ուրարտուի սահմանները հյուսիսում հասցնում է մինչև Դայաենի-Դիաուխի պետության ծայր հյուսիսային կողմերը (Սև ծովի հարավային ափերին)[19], հյուսիս-արևմտյան սահմանը՝ մինչև Խաթե ցեղամիությունը (Փոքր Հայքում), հյուսիս-արևելյան սահմանները՝ մինչև Էթիունի ցեղամիությունը, մասնավորապես նրա մեջ մտնող Կիեխունի երկիրը (Սևանի ավազանում, իհարկե, ճանապարհին նվաճելով Ազա(հմմտ. Ուազա, Վազա) երկիրը (Արարատյան դաշտավայրում) և Ուլուսունի երկիրը (Կստայքում)[20], հարավ-արևելյան սահմանները՝ մինչև Բալուաթա, Բուշթու և Քաբխիու երկրները (Ուրմիա լճից դեպի հարավ-արևելք[21]):

Սարդուրի II-ը (764-735) իր նվաճումներով Ուրարտուի սահմանները հյուսիսում հասցնում է մինչև Կուլխա (Կուլխիդա) երկիրը (Սև ծովի հարավ-արևելքում)[22], հյուսիս-արևելյան սահմանները՝ մինչև Էթիունի ցեղամիության մասը կազմող Ու(ե)դուրի-Էթիունիի մեջ մտնող Ազախունի, Վելիքունի (Գեղաքունի), Լուերունի, Արքուքինի երկրները (Սևանա լճի ավազանում) և Ուրտեխինի (հմմտ. Արցախ) երկիրը[23], արևմտյան սահմանները՝ մինչև անդրեփրատյան Կումախս (Կոմագենե) երկիրը[24], հարավային սահմանները՝ մինչև Արմե երկիրը (Սասունի լեռնային զանգվածում)[25], նվաճում է նաև Պուլուադի երկրի հարավային կողմերը (ժամանակակից Իրանի հյուսիսային շրջաններում, Արաքսից դեպի հարավ):

Այդ նվաճումների հետևանքով ուրարտական պետությունը հզորանում է, որի շնորհիվ աճում է նրա հեղինակությունը արտաքին աշխարհում, և Առաջավոր Ասիայի ռազմաքաղաքական առաջնությունը Ասորեստանից անցնում է Ուրարտուին:

Սարդուրի II-ը կազմակերպում է նաև հակա-ասորեստանյան կոալիցիա, որի մեջ են մտնում ինչպես հյուսիսային Սիրիայի Քիթ-Ազուսի և Գուրգում, այնպես էլ անդրեփրատյան Կումմուխսու կամ Կումախս (Կո-

մագեենե) և Մելիտեա-Մելիդու (Մալաթիա) երկրները[26]: Սարդուրի II-ի նպատակն էր՝ կոալիցիոն բանակով հարձակվել անմիջապես Ասորեստանի վրա, ծնկի բերել նրան, ընդմիշտ վերացնել հարավից սպառնացող վտանգը: Իբրև դրուս ապացույց պետք է նկատի ունենալ այն փաստը, որ նա մ.թ.ա. 753 թվականին հարձակվում է Ասորեստանի թագավոր Աշշուրնիրարի III-ի (753-746) վրա և պարտության մատնում նրան[27]: Դրանից հետո, ինչպես կհամոզվենք հետագա շարադրանքում, Սարդուրի II-ը իր կոալիցիոն բանակով ամրանում է Քիթ-Ագուսի և Կումմուխու երկրներում՝ անշուշտ Ասորեստանի վրա նոր հարձակումներ կազմակերպելու նպատակով:

Իր կազմավորման երկրորդ փուլում ուրարտական պետությունը նվաճել է շուրջ 130 խոշոր և մանր երկրներ:

Ուրարտական պետության կազմավորման երրորդ փուլը, որը համընկնում է այդ պետության պայթերացման վայրէջքի փուլին, ինչպես ասվել է վերևում, ունեցել է իր երեք ենթափուլերը: Ուրարտական պետության կազմավորման երբորդ փուլի առաջին ենթափուլը սկսվում է Սարդուրի II-ի կառավարման երկրորդ շրջանից: Ասատրական պետությունը, զգալով Ուրարտուի նպատակները, նախապատրաստվում է դիմակայելու նրա հետագա գործողություններին: Դրան հատկապես ձեռնամուխ է լինում ասատրական գահին նոր անցած Թիգլաթպալասար III-ը (745-722), որը իր թագավորության երրորդ տարում՝ մ.թ.ա. 743 թ. հյուսիսային Սիրիայում գտնվող Քիթ-Ագուսի երկրի Արպադ քաղաքի մոտ, որտեղ արդեն թափանցել էր Ուրարտուն, մարտեր մղելով Սարդուրի II-ի դեմ, հաղթանակի է հասնում[28]: Հետագայում լարվածությունը ավելի է սրվում Ասորեստանի և Ուրարտուի միջև, որը ավարտվում է մ.թ.ա. 735 թվականին Կումմուխու (Կոմմագենե) երկրի Կիշքեսը և Խալպու մարզերի սրանքում, մասնավորապես Կիշքեսը քաղաքի մոտ տեղի ունեցող ճակատամարտով, որի ընթացքում հալթանակը դարձյալ ուղեկցում է Թիգլաթպալասար III-ին: Դրանից հետո նա մտնում է Ուրարտու, պաշարում նրա արքայական Տուշպա (Տուլուշպա) քաղաքը, ուր փակված էր Սարդուրի II-ը և ասպատակում երկրիը[29]: Դրա հետևանքով քայքայվում է ուրարտական պետության կողմից ստեղծված հակա-ասորեստուսյան կոալիցիան: Թիգլաթպալասար III-ը Ուրարտուից խլում է նրա հարավում գտնվող Ուլլուբա երկիրը, Սասունի լեռնային զանգվածի հարավային մասում գտնվող Շուբրիա երկրի Քուլլիմմերի (Քղիմար) մարզը (Քայլամա կամ Քալիրթ գետի ավագանում) և նրա շրջակայքում գտնվող մի շարք բնակավայրերը, այդ թվում Քենզու, Անգանու և Սարուսուրի քաղաքները. իրեն հարկատու է դարձնում մինչ այդ Ուրարտուի գերիշխանության տակ գտնվող Քիթ-Ագուսի, Գուրգում(ու), Մելիտեա կամ Մելիդու (Մալաթիա), Կումմուխու կամ Կումախա (Կոմագենի) երկրները[30]: Արտաքին աշխարհում Ուրարտուն կորցնում է իր քաղաքական

հեղինակությունը, ե Առաջավոր Ասիայում առաջնությունը կրկին անցնում է Ասորեստանին: Ուրարտական պետությունը բռնում է վայրէջքի ճանապարհ:

Ուրարտական պետության կազմավորման երրորդ փուլի երկրորդ ենթափուլը համընկել է Ռուսա I-ի կառավարման ժամանակաշրջանի հետ: Սարդուրի II-ին հաջորդող Ռուսա I-ը փորձում է փրկել արտաքին աշխարհում իր երկրի կորցրած հեղինակությունը և Ասորեստանից ետ խլել Առաջավոր Ասիայի առաջնությունը: Դրա համար անհրաժեշտ էին տնտեսական նոր աղբյուրներ: Սակայն Ասորեստանի ագդեցությունը հնարավորություն չէր տալիս նրան անմիջապես դիմել արշավանքների հարավում գտնվող հարուստ երկրների վրա, նրանցից ծեռք բերել ավար, ռազմագերիներ, հարկ ու տուրք: Ռուսա I-ին միայն հաջողվում է Մանա երկրից խլել նրա Ույնշդիշ մարգը և միացնել Ուրարտուին[31]: Ուրարտուի թիրախում մնում են հիմնականում հյուսիսի երկրները, որոնք այնքան էլ հարուստ չէին: Նա ևվածում է Սևանա լճից այն կողմ, բարձր լեռների վրա (Փոքր Կովկասում) գտնվող 19 երկրները[32], բայց այդտեղից ռազմավար ծեռք չի բերում: Ռուսա I-ը ստիպված նյութական միջոցներ է փնտրում սեփական երկրի ներսում՝ զարգացնելով նրա տնտեսության ճյուղերը: Այդ ասպարեզում նա հասնում է որոշ հաջողության[33]: Դրանից ոգևորված նա հարավ-արևելքում ստեղծում է հակա-ասսուրական երկրների կոալիցիա, որի մեջ են մտնում մերձկասպյան Անդիս և մերձուրմյան Զիկիրթու, Արդինի-Մուծածիր ու Նաիրի-Խուբուշքիա երկրները[34]: Նա մարտեր է մղում Ասորեստանի դեմ նրա հյուսիսային լեռներում[35]:

Ռուսա I-ի այս ռազմական պլաններին ուշիուշով հետևում է Ասորեստանի թագավոր Սարգոն II-ը (722-705): Նա, զգալով Ուրարտուից սպասվող վտանգը, ինքն է նախահարձակ լինում, արշավում Ուրարտուի վրա նրա հարավ-արևելյան կողմից և Ուրմիա լճի հյուսիս-արևելքում գտնվող Ուառուշ լեռան ասոյտտում տեղի ունեցող ճակատամարտում հաղթանակ տանում Ռուսա I-ի կոալիցիոն բանակի նկատմամբ, կողոպտում ու ավերում երկրի կենտրոնական մարգերը[36]: Ռուսա I-ի հույսերը չեն արդարանում: Ռուսա I-ից Սարգոն II-ը խլում է Մանա երկրից ևվածված ու ուրարտական կենտրոնական մարզերի շարքում մտցված Ույնշդիշ մարգը[37]: Նա իրեն է ենթարկում ամբողջ Մանա երկիրը, որը մինչ այդ գտնվում էր Ուրարտուի ազդեցության տակ: Սարդուրիին հարկատու են դառնում Նաիրի-Խուբուշքիա, Արդինի-Մուծածիր, Զիկիրթու և Անդիս երկրները: Շարունակում են Ասորեստանին հարկ վճարել Մելիդուն, Կումմուխուն, Գուրգումը, Քիթ-Ագուսին: Ուրարտուից անկախանում է Շուբրիա երկիրը[38]:

Փաստորեն Ռուսա I-ի գործողությունները ոչնչով չնպաստեցին Ուրարտուի վերելքին: Ընդհակառակը, այդ գործողություններից հետո ուրարտական պետության վայրէջքը ավելի է խորանում: Բայց, այնուամե-

նայնիով, նա նվաճելով Փոքր Կովկասում գտնվող 19 երկրները՝ որոշ չափով նսլսստ է բերել իր պետության կազմավորման գործին:

Ուրարտական պետության կազմավորման երրորդ փուլի երրորդ ենթափուլը համընկնում է Արգիշթի II-ի և Ռուսա II-ի կառավարման ժամանակաշրջանի հետ: Այս ենթափուլում Ուրարտուի հիշյալ թագավորները իրենց զգուշավոր քաղաքականությամբ հնարավորություն չեն տալիս Ասորեստանին նոր արշավանքներ գործել իրենց երկրի վրա, ավերածություններ կատարել այնտեղ և նոր երկրներ անջատել նրանից:

Ռուսա I-ին հաջորդող Արգիշթի II-ը (713-685) զբաղվում է Սարգոն II-ի կողմից ավերված երկրի վերակառուցման աշխատանքներով: Նրան միայն հաջողվում է նվաճումներ կատարել Ասորեստանից հեռու, Ուրմիա լճի հյուսիս-արևելքում (ժամանակակից Թասվրիզի ու Արդեբիլի շրջաններում): Նա նվաճում է այնտեղ գտնվող 6 երկրները, դնում հարկի տակ[39], բայց նրանցից կողոպուտ և ռազմագերիներ ձեռք բերել չի կարողանում: Նա նվաճում է նաև երկրի հյուսիս-արևելքում, մասնավորապես ժամանակակից Սյունիքում գտնվող Ծուլուկու (Ծղուկ) երկիրը[40], բայց նրանից ևս կողոպուտ ու ռազմագերիներ ձեռք բերել չի կարողանում, ինչպես նաև չի կարողանում այդ երկիրը դնել հարկի տակ:

Արգիշթի II-ի հաջորդող Ռուսա II-ը (685-645) նույնպես զբաղվում է երկրի ներսում շինարարական աշխատանքներով: Նրան հաջողվում է նաև արշավանքներ կազմակերպել Ասորեստանից շատ հեռու, Փոքր Ասիայում գտնվող Մուշքինի (Փռյուգիա), Խալիտու (Խաղտիք) երկրների և Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևմտյան մասում, մասնավորապես Փոքր Հայքում գտնվող Խաթե երկրի (ավելի ճիշտ Խաթե ցեղամիության) վրա[41], որը վաղուց էր նվաճվել Ուրարտուի կողմից: Նրան չի հաջողվում այդ երկրներից ռազմավար ձեռք բերել: Նա բավարարվում է նրանով, որ այդ երկրներից ձեռք է բերում որոշ քանակությամբ կին գերիներ: Ռուսա II-ը վարձում է գրավել երկրի հարավում, Ասորեստանի սահմանի մոտ գտնվող անկախ Շուբրիա երկիրը՝ պատրվակ դարձնելով այդ երկրում ասսուրական փախստականների հետ ապաստան գտած ուրարտական փախստականներին բռնելը: Սակայն Ասորեստանի թագավոր Ասարխադդոնը (680-669), իմանալով Ռուսա II-ի այդ մտադրության մասին, ինքը նախահարձակ է լինում, գրավում Շուբրիա երկիրը[42] և մոտենում անմիջապես Ուրարտուի հարավային սահմանին: Ուրարտուն տեսնում է դա, բայց լռում է և չի հանդգնում պայքարի ելնել հզոր Ասորեստանի դեմ:

Այսպիսով, Արգիշթի II-ը և Ռուսա II-ը թեև 9 նոր երկրներ են նվաճում ու նպաստ բերում ուրարտական պետության կազմավորման գործին, բայց դրանով նրանք չեն կարողանում կանխել այդ պետության վայրէջքը և բացել նրա վերելքի ճանապարհը: Ուրարտական պետության վարչքը շարունակվում է մինչև մթա 585թ., որից հետո սկսվում է այդ պե-

տության անկման փուլը: Ռուսա II-ից հետո վայրէջքի փուլում թագավորել են Սարդուրի III-ը (645-635) և Սարդուրի IV-Պարույրը (635-585): Վերջիններս ընդհանրապես նվաճողական արշավանքների չեն դիմում և, հետևաբար, նոր երկրներ չեն նվաճում ու ոչնչով չեն նպաստում իրենց պետության կազմավորման գործին:

Սկսած մթա 585 թվականից, երբ վայրէջքի փուլին հաջորդում է Ուրարտու կամ Արմենիա պետության պարբերացման անկման փուլը, այդ պետությունը անցնում է, նախ՝ Մեդիայի, ապա՝ Պարսկաստանի գերիշխանության տակ: Այդ գործընթացը ավարտվում է նրանով, որ Ուրարտուն կամ Արմենիան մթա 522թ. գրկվում է իր պետականությունից և վերածվում պարսկական սատրապության: Այդ փուլում Ուրսպտու կամ Արմենիա պետության նոր կազմավորման մասին խոսելն ավելորդ է:

Ուրարտական պետության կազմավորման մասին տեղեկություններ ենք քաղում այդ պետության թագավորների տիտղոսաշարերից, որոնք գրվել են ինչպես ուրարտերեն, այնպես էլ ասսուրերեն լեզուներով: Ուրարտերեն լեզվով գրած տիտղոսաշարերում Ուրարտուի թագավորները իրենց անվանել են «թագավոր երկիր շուբելիի (^{kl} ^{R}šureli), թագավոր երկիր Քիախինիլիի[43]», իսկ ասսուրերեն լեզվով գրած տիտղոսաշարերում նրանք իրենց անվանել են «թագավոր քիշշաթիի (kiššati), թագավոր Նաիրի երկրի[44]»: Սրանցից «Նաիրի երկիրի» փոխարեն Ռուսա I-ի երկլեզվյան արձանագրության ասսուրերեն տարբերակում հիշատակվում է «Ուրարտու երկիրը»[45]:

Ակներև է, որ Նաիրի և Ուրարտու անվանումները տրվել են բուն երկրին: Նրանց՝ երկուսին փոխարինել է Քիախինիլի տերմինը, որն ունի հավաքական, հոգնակիության իմաստ (այն զուրկ է էթնիկական իմաստից, քանի որ նրա անունով ցեղ կամ ցեղամիություն չի հիշատակվել, ավելի շուտ այն ուներ տեղի իմաստ: Իսկ ինչ վերաբերում է տիտղոսաշարերի ասսուրերեն տարբերակի «քիշշաթի» և ուրարտերեն տարբերակի «երկիր շուբելի» հասկացություններին, ապա դրանցից առաջինը՝ «քիշշաթին», ասսուրերեն բառ է, որը նշանակում է «տիեզերք», «աշխարհ», ինչպես նաև «բազում»[46]: Ուրարտական թագավորների տիտղոսաշարերում այդ բառը օգտագործվել է իր վերջին իմաստով՝ «բազում» իմաստով[47]: Հետևաբար Ուրարտուի թագավորների ասսուրերեն տիտղոսաշարերի «թագավոր քիշշուսքի» նշանակում է «թագավոր բազմաց» կամ «թագավոր բազում երկրների»: Այդ իմաստն է պարունակում նաև ուրարտական թագավորների տիտղոսաշարերի «թագավոր երկիր շուբելիի» տիտղոսի «երկիր շուբելի» բաղադրամասը[48]: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ «երկիր շուբելի» (^{KUR}šureli) տերմինի KUR.KUR$^{MI.\check{S}49}$ և $^{L:1}$KUR.KUR$^{MI.\check{S}50}$ գաղափարագրերից առաջինը նշանակում է «բազում երկրներ», իսկ երկրորդը, որը LՅ «մարդ» սահմանիչի շնորհիվ ստացել է նաև «բնակիչներ» իմաստը, նշանակում է «բազում երկրների բնակիչ-

ներ[51]»: Այս փաստերը իրենց հերթին հաստատում են, որ «երկիր շուրելի» տիտղոսը լրացք նշանակում է «բազում երկրներ»: Տիտղոսաշարերում այդ «երկիր բազմացը» կամ «բազում երկրները» ($^{KL\,R}$sureli), որոնք ենթարկվել են ուրարտական թագավորներին, տարբերվել են այդ թագավորների բուն երկրից (Նաիրիից, Ուրարտուից): Այդ «երկիր բազմացը» կամ «բազում երկրները», բնականաբար, վերաբերել են ուրարտական թագավորներին հպատակ, նրանց կողմից նվաճված երկրներին[52]:

Փաստորեն տիտղոսաշարերը ցույց են տալիս, որ ուրարտական պետության կազմավորման հիմքում ընկած են եղել ինչպես բուն երկիրը, այնպես էլ հպատակ (այդ թվում նվաճված) երկրները:

Այսպիսով, ուրարտական պետությունը կազմավորման երկրորդ փուլում նվաճել է շուրջ 130 երկրներ, իսկ երրորդ փուլում՝ ես 28 երկրներ: Այդ 158 երկրները տարածված են եղել Ուրարտուի շրջակայքում: Ասորեստանից կրած պարտությունների հետևանքով Ուրարտուի հարավում, հարավ-արևելքում և հարավ-արևմուտքում նվաճված երկրների մեծ մասը անջատվել է նրանից: Մնացած երկրների շնորհիվ կազմավորվել է ուրարտական պետությունը: Այդ կազմավորումը տեղի է ունեցել 3 գլխավոր փուլերով:

DIMITRI SARKISYAN

THE MAIN STAGES OF FORMATION OF THE URARTIAN STATE

The formation of the state of Urartu has gone 3 main stages, the last of which has 3 understages. The first stage coincided with the political appearance Urartu, when those state was busy uniting its native territories and population. At that time the heard of the country were the kings Arame (859-832) and Sarduri I (832-822). The second stage coincided with the progress of Urartu, when the state conquered about 130 countries nearly and took the hegemony of Progressive Asia. At that stages great changes hade occurred in the territory and its population. At that time head of the state were the kings the Ishpuini (822-810), Menua (810-786), Argishti I (786-764) and Sarduri II (764-735). The first understage of third stages coincided with the last period of the Sarduri II kingdom, when king of Assiria Tiglatpalasar III (745-727) inwaded Urartu, defeated the country, as a result of which the stage in southern, south-estarn, south-western countries were seperated. The second understage of third stages coincided with the period of Rusa I (735-713) kingdom, when Urartu occupy 19 countries in the Small Caucas, but with a last period of Rusa I kingdom king of Assiria Sargom II (722-705) inwaded Urartu, defeated the country, as a result of which the second understage in southern countries were separeted. The third understage of the third stage coincided with the time kingdom of Urartu kings Argishti II (713-685) and Rusa II (685-645), when the above mentioned kings conquered almost 9 countries in the northern, north-eastern, north-western parts

Urartu and make new changes in the formation of their country. The next kings don't conquer any territories, and any new countries are not seperated from Urartu.

ՃԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. АВИИУ, №27.
2. АВИИУ, №27 (I-23; II-45, 54).
3. АВИИУ, №№27, 28 (35), 31, 32, 33.
4. АВИИУ, №27 (II-45).
5. АВИИУ, №27 (I-23).
6. АВИИУ, №№27 (II-45), 28 (35).
7. АВИИУ, №№27, 28 (35, 141).
8. АВИИУ, №27 (141).
9. УКН, №№28 (лиц. стор. стк. 5-7); 39 (стк. 7-9), 127 (стк. 5-24, 32-37), 128, A2 (стк. 15-22), 278 (стк.1-6).
10. УКН, №№20, 127, II (стк. 25-31), V (стк. II-13, 49), 128, A2 (стк. 1-23), 130, 131, 155, A (стк. 13-21), C (стк. 49-53), F (стк. 6, II-32).
11. УКН, №№36-37, 127, I (стк. 1-22), 128, A1, B1).
12. УКН, №№20-23.
13. Վ.Ա. Իգումնով, Հ.Հ. Կարապետյան, Ս.Գ. Հմայակյան, Օձասարի սեպագիր արձանագրությունը (ՊԲՀ, 1997, №1), էջ 193-202; Ն.Վ. Հարությունյան, Նոր ընթերցումներ և մեկնաբանություններ Նախիջևանի սեպագրում (ՊԲՀ, 2000, №2), էջ 196-212; УКН, №24.
14. УКН, №№36,37.
15. УКН, №№30-34.
16. УКН, №39.
17. Д.Н. Саркисян, Страна Шубриа, стр. 5.
18. УКН, №№28-29.
19. УКН, №№127, I (стк. 1-22), 128, A1, B1.
20. УКН, №№127. III (стк. 26-30), IV (стк. 70-74), 128, B2 (стк. 40-42), A2 (стк. 4-11), 134 (стк. 3), 142.
21. УКН, №№127 III (стк. 10-71), IV (стк. 44-53), V (стк. 25), 128, B2 (стк. 15-24), 155, A (стк.4-12). (Այս երկրներից Բաբիլում, ըստ Ի.Մ.Դյակոնովի կարծիքի, համապատասխանում է ոչ թե անմիջապես Բաբելոնին, այլ Դիյալա գետի ավազանում գտնվող Նամռու երկրին, որը այդ ժամանակ գտնվում էր Բաբելոնի գերիշխանության տակ, խիստ բաբելոնացված էր, որի պատճառով էլ ուրարտացիները կոչում են նրա անունով) (АВИИУ, №49, прим.14):
22. УКН, №155, D, (стк. 1-15).
23. УКН, №161.
24. УКН, №155, E, (стк. 36-57).
25. УКН, №156, DI+DII (DI, стк. 11-16).
26. УКН, №156, DI+DII (DI, стк. 8-10).
27. АВИИУ, №№41 (59), 42 (20), 44 (43, об. стор. 7).
28. АВИИУ, №41 (59, 83).
29. АВИИУ, №42 (20).
30. АВИИУ, №40 (43, об. стор. 7), 42 (28).

31. АВИИУ, №49 (156).
32. АВИИУ, №266, (стк. 6-19).
33. АВИИУ, №49(156-297).
34. АВИИУ, №№49 (79-91, 125-156), 54 (28-112).
35. УКН, №264 урарт. текст, стк. 17-19, ассир. текст, стк. 16-18.
36. АВИИУ, №49
37. АВИИУ, №46 (109).
38. Д.Н. Саркисян, Страна Шубриа, стр. 42-57.
39. УКН, №№445-446.
40. Н.В. Арутюнян, Новая урартская надпись из Сисиана (Древний Восток, №4, 1983), стр. 195-220.
41. УКН, №278, стк. 1-6.
42. АВИИУ, №67; Д.Н. Саркисян, Страна Шубриа, стр. 42-57.
43. УКН, №№19, стк. 3; 364, стк. 29 (срав. 128, А4, стк. 4; 276, лиц. стор., стк. 30 и т.д.).
44. УКН, №№1-3, 319-325, стк. 1-2.
45. УКН, №264, ассир. текст, стк. 27 (срав. урарт. текст, стк. 4).
46. Л.А. Липин, Аккадский (вавилоно-ассирийский язык), словарь, вып. II, Л., 1957, стр. 105.
47. Դ.Ն. Սարգսյան, Սոցիալ-տնտեսական կյանքը ուրարտական Ռուսախինիլի քաղաքում (ՊԲՀ, 1998, հ. 3), էջ 167, նրա՝ Ուրարտական համայնական և գինվորական խավերի փոխհարաբերությունները (ԼՀԳ, 1999, հ. 1), էջ 117-124:
48 Դ.Ն.Սարգսյան, Ուրարտական համայնական և գինվորական խավերի փոխհարաբերությունները (ԼՀԳ, 1999, հ. 1), էջ 117-124:
49 УКН, №№155, Е, стк. 7, 47; 164, стк. 10; 165, стк. 10; 172, стк. 8; 278, стк. 11; 280, стк. 14; 417, стк. 10; 418, стк. 11; 446, стк. 8.
50 УКН, №286, лиц. стор., стк. 15.
51 Դ.Ն. Սարգսյան, Սոցիալ-տնտեսական կյանքը ուրարտական Ռուսախինիլի քաղաքում (ՊԲՀ, 1998, հ. 3), էջ 167:
52 Դ.Ն. Սարգսյան, նշվ. աշխ., էջ 167:

ԱՐԱՄ ՔՈՍՅԱՆ

ԽԵԹԱԿԱՆ KUB XXVI 62 ՍԵՊԱԳԻՐ ՏԵՔՍՏԸ ԵՎ ՎԵՐԻՆ ԵՓՐԱՏԻ ԱՎԱԶԱՆԻ ՊԱՏՄԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Հայկական լեռնաշխարհի քաղաքական պատմության, անվանաբանության, տեղագրության և հարակից խնդիրների ուսումնասիրության համար կարևոր նշանակություն ունի մ.թ.ա.XV դարի վերջերով կամ XIV դարի սկզբներով թվագրվող մի խեթական սեպագիր տեքստ[1], որն առ այսօր ինչպես հարկն է չի մեկնաբանվել հայագետների կողմից[2]: Պատճառը, թերևս, այն է, որ այստեղ անվանապես չեն հիշատակվում մ.թ.ա.II հազարամյակում Հայկական լեռնաշխարհի մեզ հայտնի երկրները կամ դրանց տարածքում գտնվող բնակավայրերը, ինչպես նաև այն հանգամանքը, որ խեթագիտական հրատարակություններում, մինչև վերջին շրջանը, մեր տեքստում վկայված տեղանունների մի հատվածը, որը, ինչպես կտեսնենք ստորև, գտնվել է վերինեվրատյան գոտում, որևէ կերպ չէր տեղադրվում:

Քննարկվող տեքստը իրենից ներկայացնում է միջին խեթական դարաշրջանի արքա Թուդխալիյաս I(II)-ի կամ նրա հաջորդ Առնուվանդաս I-ի օրոք խեթական տերության քաղաքական ազդեցության հյուսիս-արևելյան գոտում գտնվող շրջանների բնակավայրերի հետ զինծառայության մասին կնքված մի վաստաթուղթ: Ծառայության վերցվող զինվորները թվարկվում են անվանապես և ըստ բնակավայրերի: Դժբախտաբար, այս ընդարձակ տեքստից պահպանվել է միայն I և IV սյունակների առաջին կեսը: Այնուամենայնիվ, այս պահպանվածն էլ բավարար է մեզ հետաքրքրող խնդրի լուսաբանման համար:

Ստորև ներկայացնում ենք տեքստի IV սյունակի (հակառակ կողմ) վերջին չորս պարբերությունները:

ՀԿ IV

26') 50 ERIN$^{MEŠ\ URU}$Mu-ut-ḫa-l[i?....
27') 50 ERIN$^{MEŠ\ URU}$Ta-at-t[a?-...

28') *ŠU-ŠI* ERIN$^{MEŠ\ URU}$Ki-i[l-....
29') 1 *ME* ERIN$^{MEŠ\ URU}$Ta-x[.....
30') 10 ERIN$^{MEŠ\ URU}$Aš-du-ḫe-e-r[a(-)...
31') ŠU.NIGIN 60 *ME* 35 ERIN^{MEŠ} KUR ^{UR}[^{U}.....

32') ^{m}Wa-al-ta-ḫi-iš LÚ ^{URU}Ḫa-x[.....
33') ^{m}Ku-u-wa-aš LÚ ^{URU}Ša-a-la n[u-za? li-in-ki-ya- .....
34') LU ^{URU}E-er-ḫi-ta nu-za li-in-k[i-ya(-) ...
35') LÚ ^{URU}Li-it-ta nu-za li-in-ki-[ya(-) ...
36') ^{m}Ḫ[i]-i-n[i]-iš LÚ ^{URU}Te-mi-ya *Ú-U*[*L* ....
37') ^{I}[^{U}]DUB.SAR *I-NA* ^{URU}Ḫa-at-ti

38') ^{m}Ka-a-si-ya-ra DUMU ^{m}Ta-ra-aš-ku-il DUMU ^{m}A?-[....
39') ^{m}Pát-tal-li-ya DUMU ^{m}U-ra-wa-al-ku-i(-)[....
40') DUMU ^{m}Pa-a-ta ^{m}Kal-ma-ḫa-zi-ti DUM[U ....
41') ^{m}Tar-ḫu-un-da-zi-ti DUMU ^{m}Ku-uk-ku(-)[...

42') x[....
43') S[U.NIG]IN 6+[x ....
.....

ՀԿ IV
26') «50 գլխվոր Մուտխալ[ի՞(-)] քաղաքից, [.....
27') 20 գլխվոր Տատտ[ա՞(-)] քաղաքից, [.....
28') 60 գլխվոր Կիլ[ի՞(-)] քաղաքից, [.....
29') 100 գլխվոր Ta-x[.....] քաղաքից, [.....
30') 10 գլխվոր Ասուխելա(-)՞ քաղաքից, [.....
31') Ընդամենը՝ [..... երկրի] 635 գլխվոր:

32') Ha-x[.....] քաղաքից Վաղտախխոր, [..... X քաղաքից, X-ը],
33') Սալա քաղաքից Կուվասը: Եվ [նա երդում տվեց՞: X-ը]
34') Էյխխետա քաղաքից: Եվ [նա] երդ[ում տվեց՞: X-ը]
35') Լիտտա քաղաքից: Նա երդու[մ տվեց՞:]
36') Խիճ[ի]սը Տեմիյա քաղաքից չ[ի երդվել/չերդվեց: .....]
37') [Դ-]րինչը Խաբթուսասում:

38') Կասիյարաձ՝ Տարասկուիլիի որդին, Ա-[.....]-ի որդին, [.....
39') Պատտալլիյան՝ Ուրավալկուի[ս]ի որդին, [.....
40') Պատայի որդին, Կալմախացիտիճ՝ [.....]-ի որդի[ն, ...

41') Թարիաուձդացիտին՝ Կուկկու(-)[...]-ի որդին, [.....

42') ...

43') Ը[ձդամե]ձը 6[... զինվոր]»:

Զինվորների ցուցակը կազմված է երեք տարբեր սկզբունքներով.

1) 26'-31':

Տեքստի այս հատվածում զինվորները թվարկվում են ոչ անվանապես, այլ ըստ բնակավայրերի: Արդյունքում նշված 635 թիվը, ակնհայտորեն, ընդգրկում է նաև տեքստի կորսված հատվածում և նախորդ տողերում հիշատակվող զինվորների ընդհանուր քանակը:

2) 32'-37':

Այստեղ արդեն ցուցակն ընթանում է անվանապես: Վերջին տողում նշվող «գրիչը» կարող էր լինել մայրաքաղաք Խաթթուսասում այս ցուցակն արձանագրողը (հնարավոր է նաև այլ բացատրություն):

3) 38'-41':

Այս հատվածում թվարկումը կատարվում է այլ սկզբունքով՝ զինվորն ըստ հայրանվան:

Առաջին և երրորդ ցուցակները գրեթե հնարավորություն չեն ընձեռում որևէ պատկերացում կազմելու զորահավաքի աշխարհագրության վերաբերյալ: Առաջին ցուցակում հիշատակվող բնակավայրերը խեթական մյուս տեքստերում այլևս վկայված չեն: Ինչ վերաբերում է երրորդին, ապա անձնանունների առկայությունը կարող է վկայել միայն տվյալ տարածքի էթնիկական բովանդակության մասին (այդ մասին ևս վելի ուշ):

Երկրորդ ցուցակի տեղանունները հինգն են, որոնցից ամբողջությամբ պահպանվել են չորսը, իսկ մեկից՝ առաջին նշանը և երկրորդ սեպախմբի սկիզբը (երկու հորիզոնական սեպեր):

Ha-x[.....]
Šala
Erḫita
Litta
Temiya

Սրանցից Litta-ն վկայված չէ այլ տեքստերում, իսկ վնասված տեղանվան մասին դժվար է որևէ հետևություն անել, քանի որ խեթական սեպագիր նշանների ցանկում երկու հորիզոնականով սկսվող շատ վանկային նշաններ կան: Ինչ վերաբերում է մյուս երեքին, ապա սրանց խնդիրը այլ է:

Erḫita.

Դեռ 1931թ. Է.Ֆոռերն իրավացիորեն առաջարկել էր Erḫita-ն նույնացնել խեթական երկու այլ տեքստերում վկայված ^{URU}Arḫita-ի հետ[3]. այս համաղությունը այսօր ընդունվում է բոլոր մասնագետների կողմից:

Այսպես, Arḫita-ն հայտնի է վերինեփրատյան երկրների հետ կնքված պայմանագրից՝ որպես հակախեթական ապստամբության մասնակից շրջան[4]: Խեթա-հայասական հնչ-որ պայմանագրի բեկոր հանդիսացող KUB XXVI 39-ում (թերևս, Սուպպիլուլիումաս II-ի և Հայասայի արքա Անդիյասի պայմանագիրը) Արխիտայի Ամպրոպի աստվածը (^{d}U takšannaš) հիշատակվում է որպես հայասական կողմից պայմանագրի կնքմանը վկա աստվածություն. այսինքն, Արխիտան ավյալ պահին հանդիսացել է Հայասայի քաղաք:

Šala.

Է.Ֆոռերի և Գ.Լ.Հևսվանցյանի մոտ սխալմամբ գրված է Šalati...: Այս քաղաքը, բացի մեր տեքստից, հանդես է գալիս ընդամենը մեկ անգամ՝ խեթական օրենքներում, որպես քաղաք, որը ի թիվս մի շարք արևելյան, հյուսիս-արևելյան քաղաքների, ազատված էր պարտականներից (saḫḫan և luzzi)[5]: Առավելագույնը, որ ճշում են մասնագետները, այն է, որ Սալան պետք է գտնվեր Խեթական տերության քաղաքական ազդեցության ոլորտի ծայրամասային գոտիներից մեկում, թերևս, հյուսիս-արևելքում[6]:

Temiya.

^{URU}Timmiya քաղաքը հիշատակվում է արդեն վերը նշված KUB XXIII 72-ում որպես հակախեթական ապստամբության մասնակիցների (Պախխուվա և Արխիտա) ասպատակություններից տուժած քաղաք: Ապստամբների հարձակումների մյուս ուղղությունը Խսուվան էր:

Նմանահունչ մեկ այլ տեղանուն (^{URU}Tim(im)na կամ Timmina) հիշատակվում է խեթական արքա Սուպպիլուլիումաս I-ի և Միտաննիի կախյալ արքա Շուստիվազայի միջև կնքված պայմանագրի պատմական ներածականում: Այս քաղաքը ներկայացված է որպես մեկը այն շրջաններից, որոնց քնակչությունը Սուպպիլուլիումաս I-ի արևելյան արշավանքից հնչ-որ ժամանակ անց փախել և ապաստան էր գտել Խսուվասյում[7]:

Կարելի է միայն ենթադրել, որ խոսքը կամ այս շրջաններից Խաթթի հարկադիր կերպով տարված վերաբնակիչների կամ զինծառայողների մասին է (երկրորդ բացատրությունը ավելի քիչ է հավանական):

Վերոհիշյալ տեքստերում հիշատակվող Տիմմիյա և Տիմմինաս տեղանունները իրոք կարող են նույնացվել մեր տեքստի ^{URU}Temiya-յի հետ, քանի որ երկուսն էլ, բացի հնչյունական ակնհայտ նմանությունից, գտնվել են Խսուվայի մերձակցությամբ: Այդպես է վարվել իտալացի Մ.-

Խսրլանինին, որը Տեմիյա-Տիմմիյան (բայց ոչ Սուպպիլուլիումաս I-ի տեքստում հիշատակվող Տիմմինուան) համադրում է Երզնկայից ոչ հեռու գտնվող, Վերին Եփրատի ակունքների շրջանում բյուզանդական աղբյուրներում հիշատակվող Ցիմեենոնի հետ (ժաման. Ջիմին)[8]:

Litta.

Սա խեթական տեքստերում այս տեղանվան թերևս միակ վկայությունն է, եթե առայժմ ձեռնպահ մնանք բեկորային վիճակում պահպանված մի տեքստում այս նույն տեղանունը վերականգնելուց[9]: Էրխիտա-Արխիտայի և Տեմիյա-Տիմմիյայի հետ միևնույն ենթատեքստում հիշատակվելու փաստը կարող է վկայել դրա՝ միևնույն աշխարհագրական գոտում գտնվելու օգտին:

Լիտտա քաղաքի մոտավոր տեղադրության հարցում, թերևս, օգտակար կլինի համարել ուշ ժամանակներում այս տարածաշրջանում վկայված տեղանվանաբանական նյութերի ուսումնասիրությունը:

Այսպես, հռոմեական դարաշրջանից մեզ հասած աղբյուրներում («Անտոնինոս կայսեր երթուղին»)[10], որպես Նիկոպոլիս (ժաման. Փյուռք՝ Շապին-Կարահիսարի մոտ) – Սատալա (հայկ. Սատաղ) ճանապարհի երկրորդ կայան նշված է Olotoedariza-ն (տարածությունը՝ 24 հռոմ. մղոն = կմ): Այս բնակավայրի անվանումն ունի մի շարք տարընթերցումներ՝ Aladolearіza, Aladadearіza, Aladaleariza և Lytararizon[11], և Հ.Տաշյանի կողմից համադրվել է Շապին-Կարահիսարի մոտ հիշատակվող հայկ. Լթառիճի հետ[12]: Լթառիճը կազմված է հայկ. *-առիս* տեղանվանակերտ վերջածանցով, որը, անհրաժեշտ է նշել, լայնորեն տարածված է եղել հենց ուսումնասիրվող տարածաշրջանում և դրա հարևանությամբ[13]: Մեզ հետաքրքրող տեղանվան տարընթերցումներից վերջինը (Lytararizon), վերջածանցի առանձնացումից հետո կստանանք Lyta(ra)-, որը միանգամայն համադրելի է հայկ. Լթառիճի հետ:

Ha-x-[.....].

Պահպանված առաջին նշանի հիման վրա հնարավոր չէ որևէ համադրում առաջարկել: Այնուամենայնիվ, որպես աշխատանքային վարկած կարելի է նկատի ունենալ վերոհիշյալ «Անտոնինոս կայսեր երթուղում» Սատալա-Սատաղին նախորդող Haza բնակավայրը (առաջինից 26 մղոնի վրա), որին Պետինգեբյան քարտեզում համապատասխանում է Hassis-ը[14]:

Հայկական լեռնաշխարհի արևմտյան շրջանների այն հատվածը, որն ընկած է Եփրատի ադրանի հյուսիսակողմում, ընդհուպ մինչև ակունքները և որը հետագայի հայկական աղբյուրներում բաժանված էր Ծարձր և Փոքր Հայքերի միջև, կարևորագույն նշանակություն ունի խեթա-հայասական և խեթա-իսուվական փոխհարաբերությունների ճիշտ ընկալման, ինչպես նաև Հայասայի տեղադրման տեսանկյունից: Այս խնդիրը մասնագետների կողմից արծարծվում է ավելի քան 70 տարի և առ այսօր տարաձայնությունները գերակշռում են[15]:

Այսօր խեթագիտության մեջ արմատացած է այն տեսակետը, որ առնվազն Սուպպիլուլիումաս I-ի և Հայասայի արքա Խուկկանայի միջև կնքված պայմանագրի[16] ժամանակներից, Հայասան և Ազզին կազմել են մեկ քաղաքական միավոր, ընդ որում Ազզին գտնվել է Խաթթիից ավելի մոտ, այն է՝ Հայասայի արևմտյան մասը[17]:

Այս տեսակետը դժվար է վիճարկել, քանի որ բոլոր առկա սկզբնաղբյուրներում խեթա-հայասական ընդհարումները սկսվում են Ազզիի հիշատակությունից[18]: Իսկ մ.թ.ա.XIII դարում, երբ Խաթթիի քաղաքական ազդեցությունը արևելքում սահմանափակվում էր միայն Խուվայով, Հայասան ամենևին այլևս չի հիշատակվում. այս շրջանի տեքստերում հանդես է գալիս միայն Ազզին, այն էլ որպես Խաթթիին թշնամի երկիր[19]: Թե մինչև երբ կարող էին Հայասան և Ազզին մնալ որպես այս ենթադրյալ կայծային քաղաքական միավորի բաղադրիչներ, պարզ չէ:

Ազզիի մերձպոնտական տեղադրության մասին օտարալեզու գրականության մեջ մինչև վերջերս գերիշխող տեսակետը, որի համար հիմք էր ծառայում Ազզիի Ալիպասս քաղաքի՝ «ծովի մեջ» գտնվելու մասին վկայությունը (Սուրսիլիս II-ի տարեգրություններում), որևէ կերպ չէր տեղավորվում հյուսիս-արևելյան Փոքր Ասիայի և Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևմտյան շրջանների ֆիզիկական քարտեզի, ինչպես նաև Խաթթիի արևելյան քաղաքականության համատեքստի մեջ: Հիմնական բանավեճը հետևյալն էր:

